Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

[illegible]

[illegible]

ԸՆԹԵՐՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ»
1989

ԳՄԴ 84.27—4
Ս 365

ОБЛАСТ

Սեկոյան Ա. Վ.

Ս 365 Զնհան։ Վիպակներ և նովելներ / Անահիտ Սեկոյան։— Եր.։ Սովետ. գրող 1989.—432 էջ։

Ներկա ժողովածուն ամփոփում է հեղինակի վերջին տարիներին մամուլում տպագրած, ինչպես նաև անտիպ վիպակներն ու նովելները։ Գրքում կան նաև հիշողություններ՝ իր ժամանակի մի քանի ականավոր գրողների և արտիստների մասին, որոնց հետ աշխատանքի բերումով շփվել կամ առնչվել է գրողը։ Ինչպես նախորդ երկերի, այնպես էլ այս ժողովածուի բոլոր կերպարները մեր օրերի մարդիկ են իրենց հոգեբանական լուծումի դրսևորումներով։

Ս $\frac{4702080201\ (25)}{705\ (01)\ 89}$ 21.89 ԳՄԴ 8427—4

ISBN 5—550—00246—9

© «Սովետգրող» գրական հրատարակչություն, 1989

ՎԻՊԱԿՆԵՐ

Ո՞Վ Է ՄԵՂԱՎՈՐ

Ուսուցիչ՝ Նշան Մուրադյանի

Ա.

Մեծ հարգանք էր սպասվում Եղիշե Ռուբենիչ Մարջանյանի տանը։ Վերջապես կատարվելու էր նրա փայփայած երազանքը. քիչ հետո այցելելու էին Ծղոյանները՝ խնդրելու Սոնայի ձեռքը։ Վերջին երկու տարում Մարջանյանը կարգը կարգին նախապատրաստվել էր այդ օրվա համար։ Նրա արտակարգ ուշադրության շնորհիվ Ծղոյանները ոչ միայն իրենց տուն էին հրավիրում Մարջանյաններին, այլև իրենք էին փոխայցելությամբ պատասխանում նրանց։ Բախտն այնքան էր բերել այդ երկու տնտանիքներին, որ նրանց որդիները համակուրսեցիներ էին համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ Եվ ահա Սուրենը հանախելով ընկերոջը՝ Ռուբենին, Սոնային լրջորեն սիրաշահվել էր։ Իսկ մի օր էլ Ծղոյանի կինը՝ տիկին Ջուլիկը կարդորոշ հայտարարեց, որ շատ կցանկանար Սոնայի նման պարկեշտ ու գեղեցկուհի հարս ունենալ։ Այս խոսքից հետո նրան կրկնապատկվել փոխադարձ այցելությունները։ Այս պարագան մտածել էր տալիս Մարջանյանին, որ խիստ նպաստավոր պայմաններ էին ստեղծվում իրենց կյանքի երկրորդ դեմքի համար, և իր պաշտոնի բարձրացման հեռանկարն ավելի էր շոշափելի դառնում։ Ճիշտ է, Սոնան Սուրենին վերաբերվում էր այնպես, ինչպես եղբոր մյուս ընկերներին,

առանձին ոչ մի բանով ցույց չէր տալիս ապագա սկեսրոջ ցանկությունը թեավորելու, ամրապնդելու հարցում, բայց չխուսափելն էլ բավական էր հորը, որպեսզի սա համոզվի իր պլանների իսկության մեջ։ Դե, աղջիկ է, զուսպ բնավորությամբ, հո չի՞ մատնելու իր զգացումները։ Սոնան նույնիսկ ծնողների գուրգուրանքին նույն կերպ չի պատասխանում։

Մարջանյանի միտքը կանգ առավ. իսկ ինքն իրեն՝ իր սերը ցույց է տվել դստերիկի նկատմամբ։ Մի՞ թե Ռուբենիկը ոչ մեկի նկատմամբ ցույց չի տվել իր սերը։ Միշտ մտածելով, թե դիմացինը կարող է չարաշահել իր թույլությունը։ Նա սերը թույլություն էր համարում։ Իսկ կնոջն ու զավակներին սիրում էր գաղտնի, ինքն իր մեջ։ Նա համոզված էր, որ իր առաջարկությունները ու որոշումները պետք է լինեն տանեցիների համար ու դրանից էլ ելնելով՝ սկսեր անանուն հիմնովին վերանայումը։ Եղոյանները հենց դրանով էր զարմացնում Մարջանյանը։ Իսկն ասած՝ դա շատ ավելի նոր տուն կառուցել էր։ Հաշվենք քարե պատերի գոյությունը։ Մեկ ամսում անհնարելի դարձավ չորս սենյականոց բնակարանը նախ նրանով, որ հանվեց երկու սենյակներն իրարից անջատող մի նապատը։ Ոչ ոք չհետաքրքրվեց, թե որտեղից ու ինչ ճանապարհով Մարջանյանն այնպիսի պատասխաններ բերեց, որանցով պատերը ծածկելուց և դիպսե մանրաքանդակ եզրագծերի մեջ առնելուց հետո, երբ տիկին Վանուհին հյուրասիրահ մտավ, փափկիկ ձեռքերն իրար դարձրեց, սև ու խոշոր աչքերը փայլեցնելով ցայտականչեց.

— Ո՜ւժ մո՛ղ, իսկապես էրմիտա՜ժ։ Եղիշե ջան, հիշո՞ւմ ես նկատեցինա նրկրորդի սենյակները...

— Պատ՞մահղ, իսկ մենք ինչո՞վ ենք պակաս նրանից։ Ռուբենիս սենյակն ավելի շքեղ եմ դարձնելու։ Թող գան նրանք ու մոլորվեն։ Ամբողջ քաղաքն է խոսելու իմ մասին։

Չեխական բյուրեղապակե վիթխարի ջահերը սենյակներ իսկապես դարձրին արքայական, իսկ արտասահմանյան վի

մագուլրներն ու անկողնակալներն ուղղակի համերաշխ լեզու էին գտել պատատառների ու կահույքի հետ։

— Հիմա արդեն արժե գեներալնի դիրեկտոր դառնալ,— ասաց կատակով, բայց հոգում փայփայած երազանքն ասաց Մարջանյանը՝ ձեռքերը շփելով։

— Իսկ ինչո՞ւ չդառնալ։ Եղոյաններն էսպես հեշտ ու հանգիստ կարո՞ղ էին Սոնայի նման անարատ հրեշտակ ճարել,— իր կողմից հաստատեց Վանուհին։

Մարջանյանը ձեռքը կնոջ ուսով գցեց ու քաշեց իրեն.

— Լա՛վ կլանք է սկսվում մեզ համար, տիկին Վանուհի։

Կինը բախտավոր զգաց իրեն։ Եղիշեն հազվադեպ էր իրեն այդպիսի արարք թույլ տալիս։

Եվ դարձյալ Մարջանյանին ծածուկ մի հարց էր մտահոգում. ինչո՞ւ Սոնան չի ապրում այն ոգևորությամբ, ինչով լցված է այդ նորացած բնակարանը ծայրից-ծայր։ Այնքան անտարբեր է, ասես չի էլ կռահում, թե ինչն ինչոց է։ Այն պարագաներին, երբ Սոնան չէր ուզում ընդունել հոր որևէ առաջարկը և առանձնանալով՝ արտասվում էր, այսքան չէր մտահոգում Մարջանյանին, որքան վերջին շաբաթների նրա լռությունը, ինքնամփոփ ու անդրադարձակից դառնալը։

Իսկ այդ աղջիկը երբևիցե բացվե՞լ էր ծնողների առջև, որեն հուզող որևէ խնդրի մասնակից դարձրե՞լ էր նրանց։

Եղիշեն շփեց ծնոտն ու տարուբերեց գլուխը. նա չէր հիշում։ Ուրեմն հիմա ինչո՞ւ պետք է մատներ իր հոգում կատարվածը, երբ ավելի շատ էր պտրպտում, հաճախ գնում էր զրադարան և միավանկ պատասխաններ էր տալիս իրեն ուղղված հարցերին...

Մեկ շաբաթ առաջ Վանուհին խոսել էր դստեր հետ, հայտնել էր իրենց կամքը ու երևակյան մի անորոշ պատասխան էր բերել նրանից. «Հայրիկիս ասա, որ ես Եղիշե Մարջանյանի զավակն եմ»...

Պատասխանն ավելի էր մտահոգել հորը, սակայն վերջինիս թույլ չէր տվել խրվելու մոր և աղջկա միջև տեղի ունեցած զրույցի մանրամասնությունների մեջ ու սկսել էր իր հյուրերին ընդունելու արարողությունները։

Տանտիրուհուն օգնելու համար եկել էին Եղիշեի երկու քույրերը, որոնք դեռևս վերանորոգման շաբաթներին էին ներկայացել, տարել էին նախկինում օգտագործված ջահերը, վարագույրները, կահույքը։

Փառք աստծո, Վանուհին երբեք չէր խոսում այդպիսի բաների վրա։ Վերջապես, եթե ավելի լավն ու նորածները կաբ, ինչի՞ն էին պետք հները։ Ամառանոցում էլ տեղ չկար դնելու։ Միաժամանակ ովքե՞ր կարող էին այդքան սրտով ու հմտորեն օգնել իրեն բոլոր հարցերում, ինչպես տալերը։ Եվ Վանուհու մասին ողջ բարեկամության մեջ խոսում էին որպես հնազանդ, բարի, առատաձեռն, կամեցող հարսի։

Դռան ճեղքից նկատելով գստերը, որ գրասեղանին հակված՝ ինչ-որ գրում էր, Մարջանյանն առանձնացավ իրեն մտահոգող հարցերով. արդյո՞ք Սոնան երջանիկ կլինի այդ ընտանիքում։ Եվ ինչո՞ւ է այդ հարցը հիմա՝ տալիս։ Արդյո՞ք ոչ այն պատճառով, որ վերջին օրերին Սոնայի աչքերը երբեմն բորբոքված էին երևում, ոչ ոքի չէր նայում ճաշելիս, հաճախ էր փակվում իր սենյակում... Եվ, այնուամենայնիվ, ի՞նչ է նշանակում մորը տված պատասխանը, մի՞թե դա այն խոսքն է, որի վրա հիմնելու է աղջկա ընտանիքը...

Մարջանյանը ծխում էր ու ետ ու առաջ քայլում դորգ վրայով. ինչո՞ւ ինքը՝ Եղիշե Ռուբենիչը, որից քաշվում, ետ կյուղում են բոլոր մերձավորները, այժմ չի համարձակվում մտնել աղջկա մոտ ու առերես պարզել ամեն ինչ։ Ինչո՞ւ նա կարողանում իրենից վանել ներքին այն անհանգստությունը որ դանդաղորեն, գողեգող, բայց հաստատուն համակում է իրեն... Երբ մարդ վախենում է որոշակի ինչ-որ բանից կամ ինչ-որ մեկից, դա այնքան սարսափելի չէ, որքան անախորժ է այն վախը, որը հետադարձ հասցե չունի։ Բայց չէ՞ որ խաբված ու արհամարհված հայրերի և երես առած ու բռնակալ զավակների հարաբերության այս ժամանակահատվածում Մարջանյանն իրավունք չունի դժգոհելու. իր երեխաները մինչև վերջ հլու նվիրված ու հնազանդ են իրեն...

Եվ ինչո՞ւ պիտի Սոնան ուրախությամբ չընդունի Սուրենի առաջարկը։ Ինչո՞վ է վատ այդ տղան. արտաքինը (մի քիչ նվազ է, դա էլ տարիների հետ կփոխվի), կրթությո՞ւնը, ապագա՞ն, ընտանի՞քը, թե՞ անհատնում ունեցվածքը...

Եվ դարձյալ քայլերը Մարջանյանին բերեցին գստեր սենյակի դռանը.

— Սո՛նա, Սո՛նա...

— Գնաց վարսավիրանոց,— խոհանոցից առաջացավ Վանուհին։— Հազիվ հասցնի։

— Բայց ե՞րբ գնաց, չիմացա,— ներքին ոչ լավ կանխազգացումով հարցրեց ամուսինը։— Քիչ առաջ սենյակում էր։

— Կուրսայինն էր գրում երևի։ Երկու ժամից շուտ չեն գալ։ Զորիկին կանչի՝ խորոված ածուխն իջեցնի ցած։

— Քուֆթան լավ կստացվի՞։

— Էն էլ ո՞նց, ախպեր ջան,— ծոր տվեց կողքից շտապ անցնող մեծ քույրը։

Եղիշեն կողքանց նայեց քրոջ լխտիկ ու բաց թևերին, որոնք ասես քուֆթա շփելու համար էին։ Չէ՛, Մարոյի քուֆթան ասելիք էր Մարջանյանի ընկերական շրջանում։

Մյուս քույրը խաշլամային էր հետևում։ Սրա հասուն աղջիկները սեղանն էին զարդարում։

— Մենա՞կ գնաց։

— Ո՞վ,— չհասկացավ Վանուհին։

— Սոնա՛ն, էլ ո՞վ,— զուսպ զայրացավ Մարջանյանը։

— Իսկ ո՞ւմ հետ պիտի գնար։ Առաջին անգա՞մն է, ինչ է։

— Հենց քե՛զ հետ։ Այսօր պիտի հետը լիներիր։

— Դա՞ ինչ նորություն է։ Չեմ հասկանում, թե ինչո՞ւ ես անհանգստանում։ Հարսանիքի ժամանակ քավորկինը կգնա։ Չէ, կհասցնի։

Իսկապես, ինչո՞ւ է անհանգստանում։ Մարջանյանը մտավ դահլիճ։ Եվ ինչո՞ւ չի կարողանում ուրախանալ։ Սկսեց ուշադիր տնտղել երեք պատերի տակ դրված սեղանները։ Մի գդալի տեղ անգամ չէր մնացել և էլի ինչ-որ ուտեստների, խորտիկների ափսեներ էին խրվում արանքները։

— Նե՛ղ են, նե՛ղ հիմիկվա սեղանները,— դժգոհեց տանտերը։

— Ուտելիքներն են շատ, չա՞նս,— մեղմորեն արձագանքեց փոքր քույրը՝ վարդերի փունջը տեղավորելով խոշոր ծաղկամանում։

Մի քանի տեսակ տաք կերակուրների համախառն բուրմունքը ժայթքում էր դուռ ու պատուհաններից։ Մեքենաների նման, իրար չխանգարելով՝ քույրերն ու սրանց աղջիկները իրենց գործն էին կատարում։ Նրանք օգտվում էին նաև հարևանների գազօջախներից ու սառնարաններից։ Չէ՞, հարեվաններից էլ էր գոհ Մարշանյանը. ամեն բոպե պատրաստ էին օգնելու։

Որպիսզի ժամանակի դանդաղ ընթացքը հոգի չհանի, Մարշանյանը միացրեց գունավոր հեռուստացույցը։ Մոսկվայի գեղեցիկ հաղորդավարն ինչ-որ բան էր ասում Լիբանանի մասին, հետո զինվորները սկսեցին կրակել տների վրա։ Մարշանյանն անջատեց հեռուստացույցն ու մոտեցավ հայելուն, որ կախված էր միջանցքի պատին։ Վերև սանրած հարթ մազերի մեջ՝ քունքերի մոտ սպիտակ էր հայտնվել։ Ասես սրանց հարևանությամբ էին ավելի խորաթափանց դարձել հազվադեպ ժպտացող աչքերը։ Փոքր սև ընչացքի տակ սեղմվել էր ոչ լիաշուրթ բերանը, սա էլ ընդգծում էր ծնոտի կապտավուն երանգ ամփոփող փոսիկը։ Մնոտն ուժեղ էր ու թվում էր մատների տակ քարի ամրություն պիտի ունենար։ Անկանիս էր երեսն ու Ամանն։ Ուսերը հիմա այնքան լայն չէին երևում հավանորեն քիչ առաջացած փորի պատճառով, որ հիմա համեստ էր, շագանակագույն ընտիր կոստյումի տակ։ Ճիշ հերմակ օձիքից իջնող բաց շագանակագույն փողկապը ներդաշնակ էր ողջ արտաքինի հետ։

Որդին մի քիչ բարձր էր հորից, թեև վերջինս նույնիսկ բարձր էր միջահասակից ու համապատասխան կնոջը։ Սոնան մոր ցահելությունն էր հիշեցնում, միայն ավելի ազնվական մազիով, շարժումներով, խոսելաձևով, նույնիսկ կանգնելու դիրքով, ուրիշի խոսքը լսելիս։ Այդպես է արդեն, գնալով փոխվում. գեղեցկանում է սերունդը։ Մի՞թե մի երկու

տասնամյակ առաջ հայ աղջիկներն ու կանայք այսպիսի ոտքեր ու քայլվածք ունեին։ Ամեն անգամ Սոնային նայելիս եղիշեին թվում էր, թե ահա ուր-որ է պարելով հեռանալու է նա...

Եղիշեն չուզեց Սոնային պարելիս պատկերացնել ու թափահարեց գլուխը։

Առևտրական տեխնիկումը նոր էր ավարտել Մարշանյանը, երբ հանդիպեց դպրոցական նստարանը նոր թողած Վանուհուն։ Տեսավ, հավանեց ու ամեն հնարավորություն գործադրելով տուն բերեց նրան։ Եվ մինչև հիմա, քսաներեք տարիների միջոցում չկարողացավ հասկանալ, թե Վանուհին իր էությա՞մբ էր այսպես խոնարհ, նվիրված ու պարկեշտ, թե՞ իր անկոտրում, կամային բնավորությունն էր նրան այդպիսին դարձրել։ Բոլոր դեպքերում, Եղիշեն իրեն բախտավոր մարդ էր համարում։

Բայց ինչո՞ւ այսօր կաղ ուրախությամբ էր լցված հոգին։

Մարշանյանը նորից մտավ դահլիճ, որտեղ վերջին կարգադրություններն էր անում Վանուհին։

— Ռուբենն ո՞ւր է։

— Բակում Ջորիկի հետ փայտ է կոտրատում։

— Կանչի՛ր թող գա։ Դու գիտե՞ս, թե որ վարսավիրանոցն է գնացել։

— Հինգ բոպեի ճանապարհ է։ Ուղղակի շաբաթ օր է, հերթ է երևի։

— Իսկ ինչո՞ւ առավոտյան չգնաց։

— Չգիտեմ, առավոտից փակված իր սենյակում՝ գրում էր։

Վանուհին կանչեց աղջային։

— Էս բոպեին վազիր քրոջդ ետևից, մայրդ կասի որտեղ է։ Եթե չի վերջացրել, կսպասես։ Սպասիր, մեքենայի բանալին մո՞տդ է։ Դե գնա՛։

Տղան գուրս թռավ։

Քիչ հետո մեքենաների ձայները լցվեցին բակ։

— Սամսոնն եկավ Բելլայի հետ,— պատուհանից նայելով՝ ասաց Վանուհին։

— Իսկ աղջիկդ տանը չի։ Վրայիցդ դե՛ն նետիր գոգնոցդ

ու գնա դիմավորելու։ Չէ՞, ինչ-ինչ, Սամսոնն իսկական քավոր է։

Վերջապես հաղթականորեն ներս մտավ բարձրահասակ, խոշոր դիմագծերով, կուշտ, բայց էլի ինչ-որ բան փնտրող հայացքով մի տղամարդ՝ նախօրոք ներս թողնելով ոչ պակաս հաղթանդամ, կապույտ պոմբարխատե հագուստով կնոջը։ Խնամի երկու ընտանիքներին էլ մոտ էր Սամսոնը, այդ պատճառով էլ նրան էր ընտրել իր որդու քավոր։ Ընդհանուր ծանոթներից շատերն էին հիշում նախորդ քեֆերից մեկը, որի ժամանակ այդ կնոջ պարելու պահին փոխգնդապետ Սամսոն Լալայանը չօգտագործված քսանհինգանոցի մի տուփ ցրեց պարի հրապարակով մեկ։ Սափահարությունն ու «բրավոն» թնդացրին օդը։ Ոչ մի պարող իրեն թույլ չտվեց կռանալ ու հավաքել դրամը։ Հավաքեցին նվագողները կատակախառն ծիծաղով։ Իսկ մի ուրիշ երիտասարդ գեղեցկուհու պարելու ժամանակ հարյուրանոցներ էր գնում նրա մատների մեջ։ Ինքնագոհությունից ու հպարտությունից շողշողում էր տիկին Բելլան։

— Բարո՞վ եք եկել,— նրանց ողջունեց տանտերը։— Համեցե՛ք, խնդրե՛մ։

Տիկին Բելլան ադամանդե այնպիսի մի մեդալիոն էր կախել պարանոցից, որ մեծ համարձակություն էր պետք առանց ամուսնու կամ. որևէ տղամարդու հսկողության դրաեով դուրս գալ տանից։

«Լավ է, որ կնոջդ ես բերել»,— հայացքով ասաց Եղիշեն։

«Ես գիտեմ, թե ուր ում հետ եմ գնում»,— ինքնագոհ ժպտաց միլիցիայի փոխգնդապետը։

Ո՞ւմ հայտնի չէր, որ ծալ-ծալ կզակով, հաստափոր, ոտքերը փառիկ գցող Սամսոն Լալայանը որոշ հրավերների ներկայանում էր սիրուհու հետ։ Վերջինս, որ իր անպատկառ գեղեցկությամբ շատերին էր հանում հավասարակշռությունից, երեսունն էլ չէր լրացրել։ Հագնվում էր աչք ծակող շքեղությամբ։ Դեռ ոչ ոք չէր տեսել նրան երկրորդ անգամ նույն հագուստով։ Հաջորդ ձմռանը չէր հագնում նույն մուշտակը կամ վերարկուն։ Նրա ճերմակ ու երկար պարանոցին այնպիսի մարգարտաշար էր փաթաթված, որպիսին ոչ ոք չէր

տեսել։ Ցուրաքանչյուր երեկոյի կամ հրավերքի հագած շքեղաշղգեստն իր համապատասխան զարդերն ու սանրվածքն ուներ, որոնք և մատնում էին նրա թեթևաբարո բնավորությունն ու եսապաշտությունը։ Բամբասանքները համոզում էին միմյանց, որ այդ բոլորին տեղյակ էր Սամսոնի կինը, սակայն չիմանալու էր տալիս, լսելիս էլ հերքում էր՝ դրանով պահպանելով իր օրինական ընտանիքի անունն ու կայունությունը։

Մարջանյանը ներքին հակակրանք ուներ Սամսոնի նկատմամբ. ընտանեկան պատիվը նրա համար ամեն ինչից էր թանկ։ Այդ բոլորով հանդերձ նա չէր կարող Սամսոնին չընդունել իր տանը. ավելին, նա համաձայնեց Եղոյանի հետ նրա քավորության հարցում։ Մարդիկ կան, որոնցից ինչքան էլ խուսափեն, իրենք են նեռվում նրա կողմը, ինչպես նապաստակն է կուլ գնում կոբրային։

Ներս հրավիրելով խնամիներին՝ փոխգնդապետը սարդի խուզարկու հայացքով այնպես էր նայում ներկաներին, ասես ուր-որ է որևէ մեկին իր ոստայնն էր գցելու։

— Բարո՞վ եք եկել, հաղա՞ր բարի, Մամբրե Տիգրանիչ,— սրտաբաց ողջունեց տանտերը։

Նկողը շատ սովորական արտաքինով մի տղամարդ էր՝ մանր-մունր դիմագծերով, նույնիսկ խեղճ թվացող արտահայտությամբ։ Միջինից ցածր հասակը նրան աննկատելի էր դարձնում։ Թերևս դրա համար էր գլուխը բարձր պահում։ Եվ այդպես էլ կողմ քաշվեց՝ առաջանալու տեղ տալով փարթամ կրծքով, մինչև ատամները պճնված, շողշողացող զարդերով փափլիկ մի կնոջ։ Լայն ժպիտը կլոր երեսին՝ նա խուսուն գտավ տանտիրուհուն, ճերմակ մեխակների մի վիթխարի փունջ մեկնելով նրան։ Փնջի հոտանու տակ նա կլոր երեսը դեմ տվեց Վանուհուն։

— Իսկ ո՞ւր է մեր գեղեցկուհին,— ասաց նա։— Թերևք համբուրեմ։

— Հիմա կգա, Ջուլիկ ջան,— ասաց Վանուհին՝ չնայելով Եղիշեի կողմը. հանկարծ ու ուշանա Սոնան...

Ջուլիկը կողմ քաշվեց՝ առաջ մղելով սպիտակ ընտիր կոստյումով, վարսավիրանոցից նոր հլած որդուն.

— Սուրեն ջան, ի՞նչ ես քաշվել, առաջին անգա՞մ ես այս տունը մտնում։

Թեթև շառագունելով՝ նորափեսան ընդունեց ապագա զոքանչի ու աներոջ համբույրները և ծածկվեց մոր հաղթանդամ թիկունքում։

— Ինչ եմ տեսնո՞ւմ,— առաջանալով, ապշեց տիկին Ջուլիկը։— Մի՞թե ձեզ մոտ ենք գտնվում, խնամի Մարջանյաններ։ Կներեք, որ շտապում եմ, բայց ես ձեզ վաղուց եմ մեր խնամին համարում։ Աստվա՛ծ վկա, չեմ հավատում աչքերիս։— Նա մոտավ բոլոր սենյակները՝ բավականություն պատճառելով տանտիրուհուն։— Մեկ ամիս կա՞, որ եկանք Ռուբենիս ծնունդին։ Ա՛յ շի՛կ, ա՛յ, սյուրպրի՛զ... Կեցցե՛ք Տիսնո՞ւմ ես, Մամբրե Տիգրանիչ, թե ինչպես են դիմավորում խնամիներին...

— Մենք ավելի լավ կդիմավորենք, կնիկ ջան, դարդ մի անի։ Մենք միշտ էլ այն կարծիքին ենք, որ Եղիշե Մարջանյանը, եթե ցանկանա, հրաշքներ կարող է գործել։

Ահա ներս մտավ գեղեցկադեմ, բարձրահասակ, ներկայանալի արտաքինով, քառասունի մոտ մի տղամարդ։ Սրա ինքնության, ընտանեկան վիճակի, մասնագիտության մասին, կարելի է ասել, ոչ ոք ոչինչ չգիտեր և ոչ մեկի մտքով չէր էլ անցնում նրանից որևէ բան իմանալ։ Գիտեին միայն, որ նա կարող էր մեծ դեր խաղալ ուզած մարդուն նոր աշխատանքի տեղավորե՞լն կամ հեռացման, բարեխոսելու կամ չարախոսելու հարցում։ Հավատացնում էին, որ նրա համար ոչ մի փակ դուռ գոյություն չունի։ Այնպես որ և զգուշանում էին նրանից, և ցանկալի հյուր էր բոլոր նման հանդիսավոր հավաքույթներին։ Հագնվում էր բարձր ճաշակով, իրեն պահում էր ազատ, որպես թե այդ տան ամենամոտ մարդն է, չէր քաշվում խորհուրդներ տալուց, իր օգնությունն էր առաջարկում, պատմում ամենաթարմ անեկդոտներ և պարում գեղեցիկ օրիորդների ու տիկինների հետ՝ չխախտելով պարկեշտության նորմաները։ Խոսում էր բոլոր տիպի թեմաներից՝ ղրույցը համեմելով այնպիսի հանճարների ասույթներով, ինչպիսիք են Միքելանջելո, Բեթհովեն, Նարեկացի, Բալզակ, Ռուզվելտ, Նապոլեոն և էլի այնպիսի անուններ, որոնք անծանոթ էին ներկաներին։ Եվ ոչ ոքի մտքով չէր անցնում կասկածել նրա

խոսքին։ Զտարյուն դիպլոմատ՝ մեր օրերի համար։ Նա նաև ուշադիր լսել գիտեր, որպեսզի հետո առարկեր, ապա ժրխտեր դիմացինի համոզումն ու ավելի առեղծվածային ու հարգարժան դառնար։ Ինչէ, ամեն տեղ ուշադրության կենտրոնում էր Ժորան, որի ազգանունը ես հայտնի չէր։

— Վերև՝ անցեք, սիրելի Ժորա,— նրա արմունկը շոշափելով՝ առաջարկեց տանտերը։— Ձեր տեղը վերևում է։

Հենց այդպես էլ դիմում էին նրան՝ «Ժորա»՝ «դուք»-ն ու «դուն»-ն խառնելով իրար։

Գլխի թեթև խոնարհումով Ժորան շնորհակալություն հայտնեց ու, ձեռքի ծխախոտը ցույց տալով, գնաց դեպի պատշգամբ։

— Արդեն երկու ժամ է՝ Սոնան չկա,— իրեն ուտում էր Մարջանյանը։

— Մի պատուհանից նայի՛ր, տես երևո՞ւմ են,— կամաց ասաց Վանուհին և ընդառաջեց նոր հյուրերին։

Բոլորը ներկայանում էին ճիշտ ժամանակին։ Բակում բռնկվում էր խորոված ի կրակը։

— Ռուբենն էլ լուր չբերեց,— ինքն իրեն մրթմրթում էր Մարջանյանը։

— Նե՛րս անցեք, հարազատներս։ Սուրե՞ն, ինչու՞ ես այդտեղ մնացել, հիմա Ռուբենն ու Սոնան կգան։ Քեզ հյուրի պես ես պահում, վերև անցիր։

Իսկապես, երբեք այդքան ընկճված չէր եղել այդ երիտասարդը։ Նա այնպես էր կանգնել դռան մոտ, ասես հարմար պահի էր սպասում՝ դուրս թռչելու համար։

Իսկ տիկին Ջուլիկը շարունակում էր շրջել սենյակներում, հիացական բացականչություններ արձակել, մի քանի անգամ կիսագրկելով տանտիրուհուն։

— Ափսոս աղջիկս շատ փոքր է, թե չէ ուրախությամբ հարս կուզարկեի այստեղ,— չգիտես կատակով, թե ներքին ցանկությամբ ասաց տիկին Ջուլիկը։— Մեր խնամությունը կրկնակի կլիներ...

— Հայ քրիստոնյան էդպիսի բան չի անի, Ջուլիկ Երվանդովնա։ Լավ է մի կապ լինի, բայց ամուր լինի։

— Ջանի՞կս, կատակ եմ անում։

— Նստե՛ք, նստե՛ք, որպեսզի տեսնենք՝ ով է ուշանում,—

խնդրում էր Մարջանյանը։— Ժորա ջան, դու տեղ գտիր ընկեր Եղոյանի կողքը։— Հետո ժամացույցին նայելով՝ տնհանգիստ դարձավ կնոջը։— Շատ են ուշանում...

Այժմ դատեր համար Մարջանյանը մտահոգվում էր այնպես, ինչպես վաճառականը՝ փոթորկված ծովին հաձնած իր նավի համար։

Հյուրերը տեղավորվում էին։

Հեռախոսի զանգը լռեցրեց բոլորին։ Մոտեցավ Վանուհին.

— Այո՛, ես եմ, Ռուբեն... Դու բոլո՞ր վարչավիրանոցներն ես նայել... Բա ո՞ւր կարող է լինել... Լսի՛ր, Արագիլի տակն էլ մտիր,— արդեն վախեցած՝ կարգադրում էր մայրը ճնշող լռության մեջ— Հետո զանգահարի... Մի փորձանք պատահած չլինի՞...

Հեռախոսափողը տեղը դնելով՝ նա անճարակ նայեց մոտեցող ամուսնուն. սրա նիհարավուն այտերին ալիքներ էին տալիս ատամների սեղմումը։

— Եղիշե, ա՛հ ընկավ սիրտս, ի՞նչ կարող է պատահած լինել երեխային,— ինքնապաշտպան ձայնով մրմնջաց Վանուհին՝ ընկնելու նման նստելով մոտակա աթոռին։

— Ի՞նչ պիտի լինի,— զուսպ բարկացավ Մարջանյանը ու դարձավ հյուրերին։— Լցրե՛ք բաժակները, այսօր մի լավ ուրախանալու ենք։ Մեր հանդիպման կենա՛ցը...

Պայթելու նման լսվեց ուռան։ Պայթեց և շամպանսկին ու փրփուրը բերանին բաժակից-բաժակ էր թափում գլուխը։ Արանքում տիկին Ջուլիկը աննկատ դարձավ ամուսնուն.

— Մամբրե ջան, ի՞նչ հարսանիք պիտի անենք, որ գերազանցենք սրանց։

Ամուսինը պատասխանեց գրեթե փակ բերանով։

— «Դվին» ռեստորանում։ Հինգ հարյուր հոգուց պակաս չպիտի լինի Սուրենիս հարսանիքին, Ջուլիկ խանում։ Տղա՞ս, ի՞նչ ես շվարել, վերցրու բաժակը։

Փեսացուն անվստահ նայեց կողքի դատարկ աթոռին ու ակամա բաժակը երկարեց առաջ։

— Տրամադրությունդ մի՛ գցիր,— լիքը բաժակն առած՝ մոտեցավ Մարջանյանը և հայրաբար սաստեց նրան։ «Ինչ որ Սոնան շատ լինի սրա համար,— մտածեց Մարջանյանը։— Մի քիչ տեսքով լինեիր, տնաշեն, հենց պիտի հո՞րդ քա-

շեիր»,— Գլուխդ բա՛րձր պահիր։ Հենց ներս մտնի, պատժելու եմ մեզ անհանգստացնելու համար։

— Պետք չի՞, Եղիշե Ռուբենիչ,— միջամտեց տիկին Ջուլիկը։— Իմ հարսի խաթրին չկպչեք։

Մարջանյանի արտաքին խստությունն ու հանդիսավոր տահելակերպը հիանալիորեն համաձայնվում էին ներքին ճկունության և հեռատեսության հետ։ Այնպես էր թվում, թե նրա սթափ միտքը երբեք չէր հանգստանում։ Երբ նա մի թեթև ժպտում էր, ներկաները դդաստանում էին. տեսնես ում էր դիտողություն անելու։ Եվ նրա գունատ երեսի մշտական անբավարարված արտահայտությունը ավելի խիստ չէր, քան բերնակողերի փակագծերի միջի հազիվ նկատելի ժպիտը։ Այդ երեկո այդպիսի մի ժպիտ էր ուզում հաստատվել նրա սեղմված շրթունքներին։

Ահա թե ինչու Մամբրե Տիգրանիչը հյուրերի տրամադրությունը բարձր պահելու հոգսի մի մասն իր վրա էր վերցրել։ Փոքրամարմին, պեպենոտ ու մանր դիմագծերով այս մարդը ակնածանք կամ խոնարհություն էր ներշնչում ոչ այնքան իր, որքան իր հովանավորյալների նկատմամբ։ Թերևս ինքն էլ կռահում էր, որ իրեն ուղղված շողոքորթ, կեղծավոր, երեսպաշտ խոսքերը հասցեագրված էին նրանց, ում շնորհիվ ինքը զբաղեցնում էր մի կարևոր աթոռ։ Նա հաճախ էր հիշում մի քանի տարի առաջ կատարված այն ավտովթարը, որի պատճառով ընտանիքով տեղափոխվեցին հիվանդանոց։ Մեկ ժամ չանցած՝ թե ինչ էր կատարվում հիվանդանոցի միջանցքներում, դժվար էր պատկերացնել։ Արտասահմանյան հյուրերով, մրգերով տրաքվող պայուսակներ ու արկղեր էին, որ բերվում էին իրենց սենյակը։

— Տեղ չկա՞, ընկերներ, խնդրո՛ւմ եմ, դուրս եկեք,— աղաչում էր հերթապահ բժիշկը։— Հիվանդները ծանր են, ուզեցի ցնցում են ստացել։ Քրոջը ճանապարհ տվեք մոտենա սրսկելու...

Բայց ո՞վ էր լսողը։ Մրգերով լի արկղները, իրար վրա դարսվելով, առաստաղին էին հասնում։ Բուժքույրը չէր կարողանում ոտքի համար տեղ գտնել առաջանալու։ Եվ որտեղի՞ց էին իմացել բոլոր ենթակաները, որ իրենց շեֆի հետ փորձանք է պատահել։ Ի՞նչ նշանակություն ուներ պահակին

նախազգուշացնելը. փորձված ձեռքերը խրվում էին նրա խորը գրպանը և նույն ձեռքերն էլ կրնկի վրա բացում էին դուռը։

— Չի՛ կարելի, քաղաքացի,— բղավում էր հերթապահ բույրը։— Նրանց մոտ մտնելն արգելվում է։

— Ինդրո՛ւմ եմ, ցա՛վդ տանեմ,— աղաչում էր մի տղամարդ միջանցքում։— Այս պայուսակները հասցնեմ իրենց ու հետ դառնամ։ Չե՛մ խոսեցնի։

— Չի՛ կարելի, հասկացի՛ք...

— Մի՛ բոպե միայն, շա՛տ եմ խնդրում, հենց դռնից հետ կդառնամ...

Սրա երե՞սն էր պինդ, թե՞ բազուկները, որ հեռցով հասավ սենյակի շեմին։ Ո՞վ էր այդ հաղթանդամ երիտասարդը, Եղոյանը չկարողացավ որոշել, չկարողացավ պատասխանել նրա գլուխխոնարհումին։ Տղամարդը նույնիսկ թաշկինակն աչքերին տարավ, երկու վիթխարի պայուսակները մի կերպ խցկեց դռնից ներս ու բժշկուհու հրավերով հեռացավ... Սենյակը փոխվում էր հազվագյուտ մրգերի ու հյութերի պահեստի։

Այդ օրերին Եղոյանը գիտեր, որ հիվանդանոցի բակը լցված էր իրեն այլի եկող ենթակաների մեքենաներով։ Թեև իրենք ոչինչ չէին կարողանում ուտել, խեղդվում էին փչացող մրգերի հոտից, բայց էլի բերում էին։ Հիմա արդեն Եղոյանը հաստատ համոզվեց, որ ցուցադրական այդ ուշադրությունը հօդս կցնդեր այն պահից, երբ ինքը կամ մահանար, կամ զրկվեր աթոռից...

Նա հասկացավ և որոշեց վայելել այն ամենը, ինչ իր պաշտոնին էր հասցեագրված, ինչ մի օր կորցնելու էր վայելում էր, սակայն չէր ուրախանում։ Այն անտուն մարդու երջանկությունն էր վայելում, որը կարող էր վայելել շքեղ մի հյուրանոցում ապրելով։

Մամբրե Տիգրանիչին սթափեցրեց կնոջ արմունկի սեղմումը. նայեց կողմ, սփռոցի տակ կիսաբացված կնոջ պայուսակին, որ լի էր թանկարժեք զարդերով։ Բայց ի՞նչ դրա ժամանակն էր, երբ թափուր էր Սուրենի կողքի բազկաթոռը։

— Ծողովո՞ւրդ,— տեղից ելնելով՝ բաժակը բարձրացրեց Եղոյանը։— Եկեք այս բաժակով շնորհավորենք Մարջանյան-

ներին այս գեղեցիկ բնակարանի համար։ Թող մեր ոտքը խերով լինի, Եղիշե Ռուբենիչ, ինչ նպատակով հավաքվել ենք, ասված բարեհաջող ավարտի։ Խմե՛նք, ընկերներ, խմենք մեր թանկագին ընկերոջ կենացը, շնորհավորենք այս տուն ու տեղը։ Ուռա՛, ընկերներ։

Մոլեգին երաժշտության տակ խլացավ բյուրեղապակե բաժակների զրնգոցը։

— Բոա՛վո, շնորհավոր...

— Հալա՛լ է քեզ, Եղիշե Ռուբենիչ...

— Ուռա՛...

Այս ընդհանուր գոռումգոչյունի մեջ միայն տանտերը լսեց հեռախոսի զանգը։ Այս անգամ արդեն Մարջանյանը վերցրեց լսափողը. ժամանակը չէր ձևականությունների։

— Սոնա՛,— ոչ թե հարցրեց նա, այլ այնպես գոռաց, որ քար լռություն տիրեց ողջ բնակարանում։ Այդ ձայնն էլ մատնեց տիրող խռովքի խորությունը։ Նա արագ անցավ միջանցքի պատին փակցված ջահի տակ։ Այդ պահին սավերը վիթխարիացավ ու բռնեց ամբողջ միջանցքը։— Որտեղի՞ց ես խոսում... Ո՞նց թե... Նորի՞ց ասա, չհասկացա...

Ակնթարթաբար երկարեց ու ճերմակեց տանտիրոջ երեսը, դարձավ դիմակ։ Լսափողը ցնցվում էր մատների մեջ։ Կինն առաջ նետվեց.

— Ի՞նչ է պատահել, Եղիշե...

— Շա՛ն լակոտ, ես քեզ կսպանե՛մ,— իրենից ելած՝ գոռաց Մարջանյանը՝ մոռանալով ստեղծված վիճակը։— Ես կմորթե՛մ այդ լակոտին, ով էլ լինի... Տե՛ղդ ասա... Տե՛ղդ ասա...

Նրա բերանից զայրույթի խոսքերն այնպես էին հորդում, ինչպես գարնան կարկտախառն անձրևը ջրհորդանից։

Լսափողի տու-տուն արձագանքվում էր պատերի մեջ։ Մեկը վերցրեց օդում ճոճվող ընկալուչն ու տեղը դրեց։ Մարջանյանը շտկվեց, դառնացած ու նվաստացած նայեց շուրջը ու հազիվ մրմնջաց.

— Էս ի՞նչ եղավ... Ա՛խ, Սոնա, Սոնա...

«Արածդ ի՞նչ հարմար թիրախ է չկամներիս համար...»։

— Ի՞նչ է եղել Եղիշե, խոսի՛ր,— վատ բան կասհելով՝ անհամբեր մոտեցավ Եղոյանը։

ԱՊՍ Ա. Ի. ... ԳՐԱԴԱՐԱՆ

Իսկությունը չիմանալով, բայց անմարսելի ինչ-որ բան կռահելով՝ տիկին Ջուլիկը թաշկինակը բերանին էր տարել։ Անճարացած նորափեսան, մորը կպած՝ մոլորվել էր։

— Հարսնացուդ այլևս տուն չի գալու, Սուրեն ջան,— հեվոցով մի կերպ արտաբերեց Մարջանյանը։

Միաժամանակ նա վայրկենաբար ուզում էր որոշել՝ գնա՞լ մինչև վերջ, թե՞ ինչ-որ ճողոպրել... Բայց հավաքվածները, ամեն մեկը մի յուրատիպ բանդակ դարձած՝ խոսքի շարունակությանն էին սպասում։ Վանուհին, այլևս ամեն պատշաճություն կորած դրած, թափահարեց ամուսնուն.

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, ո՞նց թե տուն չի գալու... «Էլ ի՞նչ թաքցնել, հարկավոր էր վերջացնել այս ներկայացումը»։

— Շատ պարզ... ասաց, որ ամուսնանում է մի երիտասարդի հետ, որին սիրում է, հասկացա՞ր...

— Վա՛յ, տունս քանդվեց,— մի կերպ արտաբերեց Վանուհին և այնպես ընկավ հետևում կանգնած ապագա խնամու թևերի մեջ, ասես ուժգնորեն հետ տարան ոտքի տակի ուղեգորգը։

— Ջո՛ւր բերեք, շո՛ւտ...

Գիտակցությունը կորցնելուց առաջ Վանուհու կոպերի տակ մնացին փոխգնդապետ Սամսոնի խոշորացած աչքերը, որոնք այնպես էին դուրս պրծել, ասես ոսկոր էր մնացել կոկորդում։ Ականջների մեջ ցավակցական խոսքեր էին խշշում...

— Իսկ որտեղի՞ց էր խոսում,— կերկեր հարցրեց սկնոբոչական շեմից ոտքը հետ դրած տիկին Ջուլիկը։

Մի բոպե միայն Վանուհին բացեց աչքերը ու այդ ժամանակ էլ մշուշի միջից իր շուրջը համախմբված մարդկանց տեսավ, որոնք անբնական ձևով սկսեցին փոքրանա՛լ, փոքրանալ այնքան, մինչև դարձան խնձորի չափ, հետո գնդասեղի գլխիկի փոխվեցին ու վերացան։

— Նաշատիրնի սպիրտ չունե՞ք,— ջղային հարցնում էր մեկը։

Այդ բոպեին էլ ներս ընկավ Ռուբենը մեղավոր հայացքով.

— Չկա, ոչ մի վարսավիրանոցում էլ չի եղել։

— Դո՛ւրս կորի, շան լակոտ,— ատամների միջից նետեց Մարջանյանը։ Այդ պահին նա ավելի անճանաչելի էր ու սահարկու, քան քիչ առաջ, երբ գոռում էր։ Հետո նա դանդաղորեն ու խոյընթաց գնաց դեպի որդին։ Սա այնպես կծկվեց, որ ներկաները վախեցան, թե նա կարող էր նաև վերանալ հոր մագնիսական հայացքի տակ։— Ո՞վ է Վարդանը, ասա՛... Նրա հետ է փախել... Հավաքի՛ր ընկերներիդ, ովքեր մեքենա ունեն, փակեք Երևանից ելնող բոլոր ճանապարհները...

— Սպասի՛ր, եղիշե,— արագ առաջացավ Սամսոնը՝ ձեռքը վեր բարձրացնելով. եկել էր հարմար առիթն իր նվիրվածությունն ու պատրաստակամությունը ցույց տալու։— Հիմի ամեն ինչ կկարգավորեմ։

Եվ հեռախոսն առնելով՝ նա մտավ Սոնայի սենյակն ու սկսեց կարգադրություններ անել՝ թելադրելով աղջկա տարիքը, արտաքինը, հագուստը...

Իսկ տանտերը ,որ միշտ էլ զարմացրել էր իր ինքնիշխանությամբ, ափ նետված ձկան նման շորացող շրթունքներն էր իրարից անջատում։ Քույրը ջուր տվեց՝ գոգնոցն աչքերին տանելով։

— Էս ինչ խայտառակություն էր, էս ինչ զուլո՞ւմ էր...

— Նրան խաբե՞լ են, նրան համոզե՞լ են,— մռնչում էր Մարջանյանը՝ ոչ ոքի չնայելով։— Նա այդպիսի բան չէր անի... Ո՞վ է այդ Վարդանը, ախր ես նրան կտոր-կտոր կանեմ... Ես նրան քշե՞լ կտամ... Որտե՞ղ է ապրում...

Նրա ձեռքերն այնպես էին բռնցքվել փոքր սեղանի վրա, որ հոդերը սպիտակել էին։ Ասես դաշույն էր տաքանում ափի մեջ։ Նա գլուխը հենեց պատին. ուղեղը ձգտում էր դուրս թափվել։ Մարջանյանը վախեցավ, թե կարող է ինքն էլ գիտակցությունը կորցնել կնոջ նման ու գլուխը թափահարեց.

— Սոնան ասաց, որ իմ զավակն է և Մարջանյան ազգանունն է կրում... Ջգիտեմ, թե էլի ինչ ասաց արյան խշշոցը խանգարում էր լսել...

Այդ բոպեին նա մեռածի տպավորություն էր թողնում՝ միայն կանգնած վիճակում։

Ոմանք դուրս շտապեցին։

— Գտե՛ք, գտեք աղջկաս ու տուն բերեք,— աղերսելով հրամայում էր նա։

Մինչ իրար խառնված հյուրերի մեքենաները կսուրային տարբեր ուղղություններով, մի քիչ սթափված Վանուհին ննջարանում ծնկած, ջղաձիգ հեկեկոցով աղոթում էր Աստվածածնի պատկերի առջև.

— Ողորմա՛ Աստված, թող ոչ ոք չգտնի բալային...

Նա համոզված էր, որ ամուսինը կսպանի նրանց։

Բ

Չորրորդ օրն էր, ինչ որոնման ելած տասից ավելի ավտոմեքենաներ ոչ մի լուր չէին բերում փախստականներից։ Մարջանյանը պնդում էր, որ Սոնային առևանգել են, ուստի և հայտնաբերելու դեպքում հանցավորին հարկավոր էր պատժել օրենքի ողջ խստությամբ։ Ինչ-ինչ, ինքը լավ է ճանաչում իր դստերը։ Ճշտ է, վերջին ժամանակներս ինչ-որ փոխվել էր, պատասխանում էր միայն իրեն ուղղված հարցերին, համարյա չէր արձագանքում ընտանեկան զրույցներին, բայց նույն հնազանդ, պարկեշտ աղջիկն էր մնում։

Ռուբենի օգնությամբ հաջողվել էր գտնել այդ Վարդան կոչեցյալի հորը՝ պատմաբան Սմբատ Շամիլյանին։ Սա քննիչին պատասխանել էր, թե միանգամայն անտեղյակ է որդու արարքին ու խստագույնս դատապարտում է նրան։ Աշխատել էր հավատացնել նաև, որ իր զավակն այնպիսի դաստիարակություն չի ստացել, որ խոպա աղջկա պատվի հետ։ Ինչքան իրեն է հայտնի, երիտասարդները միմյանց են ձրգտում մաքուր և բարձր սիրով։

Վերջին արտահայտությունը խոցել էր Մարջանյանի հոգին. այդ ինչպե՞ս է, որ ինքը նոր է իմանում ինչ-որ Վարդանի մասին, իսկ սրա հայրը նրանց սիրո տեսակին էլ է տեղյակ...

Բոլոր դեպքերում Մարջանյանը դեռևս չէր ուզում երես առ երես հանդիպել պատմաբան Շամիլյանին։

— Նրանք շուտով կհայտնվեն,— եղրափակել էր դատախազը։— Պետք է միայն չհաբեկել նրանց։ Սոնան բյուրեղյա աղջիկ է, և ինքն էլ է պատասխանատու նրա պատվի համար։

Մարջանյանն աշխատանքի էլ չէր գնում։ Գործընկերները գալիս էին տուն, զեկուցում էին ինչ հարկն էր ու հեռանում էին հանձնարարությունն ստացած։

Չորս օր էր բարեկամ բժշկուհին չէր հեռանում Վանուհու մոտից. խեղդող լացը նրան հաճախ հասցնում էր անզգայության։

Տեղեկանալով Շամիլյանի բացատրությանը՝ Վանուհին փոքր ինչ հուսադրված՝ սկսեց աղջկա սենյակը կարգավորել, գրասեղանի թղթերը հավաքեց ու այդ պահին էլ աչքովն ընկավ մի ծրար, որի երեսին խոշոր տառերով գրված էր. «Հայրիկիս»։

— Եղիշե՛, Եղիշե՛,— անորոշ մի կանխազգացումից վախեցած՝ ձայնեց Վանուհին։— Եկ այստե՛ղ... Նայի՛ր, Սոնայի ձեռագիրն է... Քե՛զ է թողել...

Կնոջ անսովոր ճիչի վրա ներս ընկած Մարջանյանն ուղղակի խլեց բավական հաստ ծրարը, բացեց, ընդհանուր հայացք գցեց վրան, ապա նստելով՝ սկսեց կարդալ.

«Թանկագին հայրիկ,

Հեռանալուց առաջ որոշեցի թողնել այս նամակը, որպեսզի շատ վատ չմտածես իմ մասին։ Այստեղ գրում եմ այն, ինչ տանջել է ինձ երկար ժամանակ, որի մասին չեմ համարձակվել նույնիսկ մայրիկիս հետ խոսել։

Այն օրից, երբ իմացա, որ պատրաստվում եք ինձ ամուսնացնել Մամբրե Եղոյանի որդու հետ, կորցրի հանգիստս։ Իհարկե, ինձ չեք ասել, որ մեծ երազանքներ եք կապում այդ ամուսնության հետ, որ դու, հայրիկ, վերջապես կստանաս քո երազած աթոռը, որ թոռից-թոռ ապահովված ենք լինելու։ Հավատացեք, ինձ ոչ այնքան այդ մտադրությունն է վիրավորել, որքան դրա քողարկումը, որքան այն բանը, որ որևէ մեկիդ մտքով չի անցել հարցնել ինձ, թե ես՝ երրորդ կուրսի ուսանողուհիս, համաձա՞յն եմ այդ ամուսնությանը, թե՞ կա մեկը, որին ես սիրում եմ։ Չէ՞ որ սրանք այն պարտադիր հարցերն են, որոնց պատասխաններով հետաքրքրվում են բոլոր ծնողները, որոնք իսկապես ապրում են իրենց զավակների բախտով։ Այս մասին ես ոչ ոքի չեմ ասի, քանի որ ոչ ոք չի հավատա, որ այս լուսավոր դարում ոչ մի ծնող բռնի չի ամուսնացնի իր հասուն աղջկան։

Ես այս քայլին չէի դիմի, եթե համոզված լինեի, հայրիկ, որ իմ արցունքները որևէ նշանակություն կարող են ունենալ քեզ համար։

Տարիների ընթացքում ինձ աղջկանից դարձրեցիք տիկնիկ։ Այո՛, տիկնիկ եմ թանկագին ծնողներիս համար։ Բայց ես այն մարդը չեմ, որ թույլ տամ այդպես վիրավորել ինձ։ Ես պիտի պաշտպանեմ իմ իրավունքները։ Չէ՞ որ ես քո հարազատ աղջիկն եմ, սիրելի հայրիկ, և չէի կարող այլ կերպ վարվել։

Այս բոլորից ավելի ես ուզում եմ ինձ համար մի հարց պարզել. իմ ծնողներն ինչպե՞ս հասան այն մտածելակերպին, որ որոշեցին ծնողական զգացումները զոհաբերել շահին։ Այո, շահին, որ ժանտախտի պես մտել է մեր տունը և խժռում է մնացած բոլոր զգացումները։

Ահա այս հարցն է հետաքրքրում ինձ։

Մի երկու ժամից կգան նրանք, ովքեր առաջինը մեր օջախը բերեցին «լեհ», «տակից», «դասավորել» և էլի նման շատ բառեր։ Գիտեմ, առաջինը խնամիների հետ կգա փոխգնդապետ Սամսոն Լալայանը իր անճաշակ պճնված ճարպոտ կնոջ հետ։ Առաջին անգամ «լեհ» բառը նրանից եմ լսել։ Ես գիտեմ, որ նա՝ այդ Սամսոնը, որին նայելիս սրտխառնուք եմ զգում, արտասահմանյան շրջագայության է գնում սիրուհու հետ։ Բայց մեր տուն կբերի կնոջը։ Հայրիկ, ես խոնարհվում եմ քո բարոյականության առաջ, բայց դու ինչպե՞ս ես ընկերություն անում տառուզ գրպաններով, յուղոտ բերանով այդ ֆալստաֆի հետ։ Դու է՞լ ես չտեսնելու տալիս նրա արարքները, ինչպես կինը՝ ամուսնու սիրուհու գոյությունը...

Երբ այդ մարդիկ հավաքվում են ու նարդի շրխկացնում՝ զրուցելով միայն ավելին ունենալու մասին, ես շնչահեղձ եմ լինում։ Հիշո՞ւմ ես, հայրիկ, մի տասը տարի առաջ բոլորովին ուրիշ նյութերի մասին էին խոսում մեր տանը և ուրիշ մարդիկ էին մեզ մոտ գալիս։ Նրանք խոսում էին մեր քաղաքի շինարարության աշխատանքի մեջ թույլ տրված անփութության հարցերի, փոխադարձ սիրո, գալիք սերունդի նկատմամբ փայփայած ձեր երազանքների մասին, չէիք ուզում հաշտվել այն մտքին, որ հնարավոր է երեխային փողով ինստիտուտ խցկել։ Դու պատկերացնո՞ւմ էիր, որ ընդամենը մի

քանի տարի անց քո որդուն և աղջկան այդ ճանապարհով ես քո ցանկացած ֆակուլտետում տեղավորելու։ Եվ ի՞նչ ստացվեց. երկուսով էլ սովորում ենք մի կերպ, քանի որ ոչ մեկս էլ չենք ցանկանում իրավաբան դառնալ։ Դուք շատ լավ գիտեիք, որ Ռուբենը շատ էր սիրում արձանիկներ պատրաստել, իսկ իմ երազանքն էր պարուհի դառնալ։ Արգելեցի՞ք պարի ուսումնարան գնալ, ես էլ մտածում էի բանասիրականում սովորել, քանի որ առանց գրականության ոչինչ եմ համարում կյանքը։ Ահա թե ինչու հաճախ դասերից փախչում էի ու մտնում այն լսարանները, որտեղ դասախոսություն էր գնում գրականության մասին։ Եվ ահա գրական մի երեկոյի էլ լսեցի Վարդան Շամիլյանի խորունկ ու գեղեցիկ ելույթը հայ միջնադարյան պոեզիայի մասին։ Լսեցի ու մինչև երեկոյի վերջն արդեն սիրահարված էի։ Ես մի քանի հարց տվեցի, որոնց պատասխանները հիացրեցին բոլորիս, իսկ երբ ընկերուհիս երկտող ուղարկեց, որտեղ գրված էր, թե բանաստեղծն ինչի մեջ է տեսնում երջանկությունը, նա պատասխանեց, հիշելով Էնգելսի խոսքը Ժենի Մարքսի գերեզմանին ասված. «Եթե կինը երջանիկ է նրանով, որ կարողանում է բախտավորեցնել իր մերձավորներին, ապա հանգուցյալը լիովին կարող է հանգիստ լինել»։ Այս պատասխանից ես հասկացա, որ Վարդան Շամիլյանը հենց այն երիտասարդն է, որին երազել եմ իմ հասունացման տարիներին։

Երեկոյից հետո մենք միասին դուրս ելանք ու երկար ժամանակ չէինք կարողանում բաժանվել իրարից. կարծես վաղուցվա ծանոթներ լինեինք։ Մենք խոսում էինք գրականությունից, երաժշտությունից և ընկատելով էլ բացահայտում էինք միմյանց։ Այդ երեկո մենք համարյա ճանաչեցինք իրար։ Հետո էլի հանդիպեցինք, հանդիպեցինք այնքան, որ մի օր էլ եկանք այն գիտակցության, որ առանց մեկս մյուսի չենք կարող ապրել։ Մինչև հիմա սիրո ոչ մի խոսք չենք ասել, բայց սիրում ենք ավելի, քան հազար ու մի ապացույց կամ խոստում տվողները։ Մենք որոշել էինք ամուսնանալ իմ ավարտելուց հետո, բայց դուք արագացրիք։

Սուրենի մասին ոչ մի վատ բան չեմ կարող ասել, բայց ես նրան չեմ հարգում (էլ չեմ խոսում սիրո մասին) և չեմ կարող նրա կինը լինել։ Ինչպե՞ս կարող եմ հարգել մի երի-

տասարդի, որի համար հոր պատգամներից զատ ոչինչ չկա։ Պարզ չէ՞, որ հետագայում նրանից միայն մի նոր եղոյան կստացվի։ Երբ ես տեսնում եմ նրան մոզեսի նման պատերին քսվելով ման գալիս, ասես վախենալով սեփական ծանրությունը նույն մարմնի ոտքերին հանձնել, տհաճություն եմ զգում։ Ես ուզում եմ մոտավորապես այնպիսի ընտանիք ստեղծել, ինչպես մերն էր մի տասը տարի առաջ, ինչպես Շաֆիլլաններինն է հիմա։ Ես չեմ կարող մայրիկիս նման կամակատար լինել, որը մեկ կամք ունի՝ ամուսնու կամքը։ Ես չեմ ցանկանա, որ իմ երեխան այն տեսնի ու լսի, ինչ մեր տանն է. մատաղ ծառի կեղևի վրա թողած դանակի հետքը մնում է մինչև ծառի չորանալը։ Վարդանին հանդիպելով եկա այն համոզման, որ գերագույն երջանկությունն այն է, որ քո երազանքները զուգադիպեն քեզ բաժին ընկած բախտին։ Մեր տանը ես ծանր հիասթափություն եմ ապրում։ Տեղին է հիշել Վ. Հյուգոյի այն խոսքը, թե մարդկային սիրտը կարող է պարունակել հուսահատության որոշ քանակություն միայն։ Երբ սպունգը ներծծվել է ջրով, ծովն էլ վրայից անցնի, չի կարող անգամ մի կաթիլ մտցնել նրա մեջ։

Ես իմ սփոփանքը գտնում եմ Վարդանենց տանը, նրա և հոր հետ զրուցելիս։ Խոստովանությունս չի նշանակում, թե քեզ պակաս եմ սիրում։ Մի քանի ժամից, երբ ձեզ տառապանք եմ պատճառելու, ձեզ ավելի եմ սիրելու։ Հայրիկ, ես քեզ կսիրեի, եթե անգամ հայրս չլիներիր, քանի որ քեզ ավելի հաճախ (սրանից հետո մանավանդ) հիշում եմ քո բարեմասնություններով, քան՝ արատներով, որոնք ձեռք ես բերել փոխգնդապետի, եղոյանի ու մյուսների միջոցով։

Գիտե՞ս ինչ, սիրելի հայրիկ, մի միտք է հուսադրում ինձ, եթե մեր երկիրն առողջ օրգանիզմ է, պիտի որ հաղթահարի այնպիսի մի հիվանդություն, ինչպիսին ընչաքաղցությունն է։ Հարստություն կուտակելը, որ տենդի է նման, շահագործում չէ, այլ՝ թալան, կողոպուտ, բռնի կորզում, գողություն՝ բաց աչքերով։ Ահավորն այն է, որ նման մարդիկ չեն թաքնվում իրենց դարից, չեն զգում (թե՞ չեն ընդունում), որ իրենք ավազակ են։ Ո՛չ, սա չի կարող երկար շարունակվել, այլապես երկիրը (ասել է թե՝ մարդկությունը) ձեռքից կգնա։ Իմ խոսքերը ճառ չեն, այլ վերջին տարիների մտածումների եզրակացություն։

թյուն։ Անկեղծությունը ոչ մի տեղ այնքան անհրաժեշտ չէ, որքան այնտեղ, որտեղ այդ մասին ամենից ավելի են խոսում։ Ես ուզում եմ մինչև վերջ անկեղծ լինել։ Եթե հենց սկզբից ինձ դաստիարակեիք այսօրվա ոգով, երևի թե այս ողբերգությունը չպատահեր։ Ահա իմ և քո ըմբռնումները կյանքի երկու ծայրերում են գտնվում։ Ես քեզ չեմ հավատում։ Քո աշխարհը խորթ է ինձ համար։ Ես չեմ կարողանում քո դասը որոշել հասարակության մեջ։ Գուցե դա էլ նո՞ր դաս է, մեր ժամանակի ծնունդ։ Բոլոր դեպքերում ես մերժում եմ այդ դասը։ Եվ ամենամեծ թշնամին մեր հասարակության համար անտարբերությունն է այդ դասի նկատմամբ։

Սիրելի հայրիկ, անքուն գիշերներից հետո եկա այն համոզման, որ այս բոլորից հետո կամ ինքնասպան պիտի լինեմ, կամ փախչեմ հայրենական տանից։ Չուզեցի ձեզ և նոր բարեկամներիս վշտացնել ու ընտրեցի երկրորդը։ Փայփայում եմ այն միտքը, որ ետ դառնալու կամուրջները դեռ չեն այրվել ու մի օր բախտավոր մի զգացումով կգրկես քո Սոնային։

Ավարտելուց առաջ ուզում եմ մի հարց տալ. այն ո՞ր օրն էր, երբ իմ մաքուր, աղնիվ հայրն ընդունեց անմաքուր ճանապարհով ստացված դրամի առաջին կապուկը։ Ես այն հաճույքով կայրեի, վրեժով կնայեի նրա կապտավուն աչքերին։ Ես անիծո՞ւմ եմ այդ օրը, քանի որ այդ պահից նա մասամաս ինձանից խլեց հորս։

Իսկ իմ մասին չմտածեք, ես Եղիշե Մարջանյանի դուստրն եմ։ Գրկում, համբուրում եմ բոլորիդ։ Մնաք բարով։ Ձեր Սոնան։

9

Նամակն ավարտելուց հետո Մարջանյանը երկար ժամանակ բացակա հայացքը թողել էր դորգի խայտաբղետության մեջ։ Նա կարող էր ամեն ինչ սպասել աղջկանից, բայց ոչ այդպիսի մեղադրական մի նամակ։ Նա ցնցված էր գրավոր այդ խոստովանությունից։ Եվ մի՞թե այդ մեղադրական եզրակացությունը պատկանում է իր խոնարհ, հոր հետ խոսելիս շառագունող Սոնային։ Վերջինս ակամա գարձել էր հոր

երկրորդ կեսը։ Արդյո՞ք նույն այդ հարցերի մասին ինքը չէր մտածել մի տասը տարի առաջ, այն ժամանակ, երբ Սոնայի ասելով՝ իր շեմից ներս էր մտել անմաքուր ճանապարհով ստացված դրամի առաջին տրցակը։

Հիմա էլ վանուհին էր առել աղջկա նամակն ու առանձնացել։

Մարջանյանը ներսից փակեց դուռը՝ կնոջը նախօրոք պատվիրելով, որ բոլոր հարցնողների համար ինքը տանը չէ։ Օ՜, նա այնպիսի հարված չի ստացել, որպեսզի հեշտությամբ ուշքի գա և հետո էլ բառ փոխանակի որևէ մեկի հետ։ Այդ նամակը, սակայն, նաև սթափեցնող հարված էր։

Եվ աղջկա վերջին խոսքից մի փոքր խաղաղված՝ Մարջանյանը սկսեց մտովի փնտրել հիշատակված դրամի առաջին կապուկը։ Ո՜չ, փնտրելու հարկ չկար, ինչպես չեն փնտրում առաջին ապտակը, առաջին հարազատի կորուստը։

Նոր էր Մարջանյանը նշանակվել մայրաքաղաքի լավագույն ռեստորաններից մեկի դիրեկտոր, երբ շեֆ-խոհարարը եկավ տուն, մի փաթեթ դրեց սեղանին, որի մեջ մի քանի փոքր տուփ խավիար էր դասավորված, ասպարինա և էլի ինչ-որ բաներ։ Ապա այդ վարպետ Թաթոսը մի կողմ տարավ Մարջանյանին, կարծես սենյակում ուրիշներն էլ կային և մի տուռզ ծրար դրեց սեղանին.

— Ամեն ամիս այսքան՝ իմ կողմից։

Եվ այնպիսի ինքնավստահ քայլերով դուրս ելավ, ինչպես պարտքը ժամանակից շուտ մարող ամեն ոք։

Ներհարարի հեռանալուց մի քանի րոպե հետո միայն Մարջանյանը կարողացավ բացել ծրարը։ Մի կապ հարյուրանոց կար այնտեղ։ Դա ոչ թե սոսկ հարյուրանոցներ էին, այլև հարյուրավոր դոլներ բացելու ոսկե բանալի։ Ա՜յ քեզ բան։ Հենց առաջին օրերին, առանց շարշարվելու, առանց քրտինք թափելու ամիսն այդքան դրամ... Ի՞նչ է նշանակում դա։ Արդյոք դրա մեջ չի՞ գտնվում բաժինն այն վերադասի, որի շնորհիվ ստացել է այդ պաշտոնը։ Հավանորեն։ Հակառակ պարագայում դժվար չէ մի թեթև հարվածով դուրս շպրտվել խաղից։ Այո, սա խաղ է՝ լցված հրապուրանքով ու վտանգներով...

Ամբողջ այդ գիշեր աչք չփակեց Մարջանյանը։ Անկողնում, թիկունքով դեպի կինը, ափերի մեջ էր առել փողի տրցակն ու զրուցում էր դրա հետ. ուրեմն սա այն դրամն է, որի դիմաց չի ստորագրում, որից կուսանդամավճար չի պահվում ու ոչ ոք չգիտե այդ մասին։ Բայց, իսկապես, քանի՞ հատ են հարյուրանոցները։ Նախապաշարված՝ որոշեց չմանել դրա չափը։ Եթե հաշվեր, կարող էր այլևս այդպիսի գումար չմտներ իր տունը։ Բայց հետո, հետաքրքրությունից մղված՝ սկսեց տենդագին հաշվել ու հաշվել սահուն, երևի դեռևս չօգտագործված հարյուրանոցները։

Քանի՞ րոպե, գուցե և ժա՞մ տևեց հաշվելը։ Հաճախ սխալվում էր, դողացող մատների միջից սահում, դուրս էին թռչում կամ իրար էին կպչում թղթադրամները։ Հիշում էր նաև, որ այդ ընթացքում մտածում էր դրամի թղթի որակի, թողարկման մեքենայի մասին, այն մասին նաև, որ երկրի հարյուրանոցների մեծ մասն առանձին մարդկանց ձեռքում էր գտնվում...

— Ինչո՞ւ չես քնում,— շուռումուռ գալով հարցնում էր կինը։

— Սուրճ շատ եմ խմել։ Ոչինչ, դու քնիր։

Քնած կնոջ ներկայությունն էլ էր խանգարում Մարջանյանին, որպեսզի սա ճիշտ որոշեր գումարի չափը, որպեսզի խորքից վայելեր անքրտինք ներս սողոսկած դրամի ներկայությունը։

Հետո ի՞նչ արեց ինքը, բացի հաշվելուց. դրամի յուրահատուկ բուրմունքն ըմբոշխնեց։ Հիշում էր, որ այդպես էլ չիմացավ, թե քանի հատ էին հարյուրանոցները, քանի որ միտքը միայն հաշվելու վրա չէր կենտրոնանում։ Այդքան դրամ միանգամից առաջին անգամ էր տեսնում։ Հիշում էր նաև, որ ոչ մի անգամ չմտածեց այդ փողը հետ մղելու մասին, շեֆ-խոհարարին չսաստեց՝ հաջորդ անգամ նման քան կրկնելու դեպքում հեռանալ աշխատանքից։ Ոչ, այդ օրից շատ ծրարներ մտան իր տունը և դրանք էլ ոչ թե սողոսկում էին, այլ հաղթականորեն շքամուտքից ներս մտնում, ինչպես մտնում է բաղձալի հյուրը երկար սպասել տալուց հետո։ Հիշում էր նաև, որ շատ դեպքերում ինքն այլևս չէր հաշվում դրամը։ Այնպես, անփութորեն նետում էր գրպանն

ու շարունակում կիսաա թողած անկարևոր զրույցը։ Հետո այդ զրույցն իր կարևոր նյութը գտավ, որը պտտվեց ոսկու, ազամանդի, կուտակումի շուրջ։ Զգաստը դարձավ ապարանջան, ականջող, դրամարկղի դրքույկներ, մեքենա, ամառանոց՝ նաև որդու համար...

Առաջին հարյուրանոցները խնամքով, գուրգուրանքով տեղավորելիս Մարջանյանը լուսամուտից նկատեց երկու հարևաններին՝ կողքի մուտքից։ Մեկն ինչ-որ գիտնական էր (այդպես էլ ժամանակ չեղավ իմանալու, թե ինչ գծով էր գիտնական), մյուսը դերասանի նման մի բան էր։ Ասում էին, թե տիկնիկներ է խաղացնում։ Հիսունի շուրջ մանր-մունր մարդ էր, վախկոտ հայացքով և ոչ մի հարգանք չուներ Մարջանյանի աչքում։ Հանդիպելիս էլ այնպես էր նայում այդ անշուք մարդուն, ինչպես կնայեին դենը գցած մաշված մի աթոռի կամ զամբյուղի։ Արդ ի՞նչ մարդ է այդ Պանտոսը, թե՞ Պալտոսը (պետք էլ չէր անունը ճշտել։ Երևի մարդու անուն էլ չէր, այլ ինչ-որ իրի, մաշված իրի)։ Ամբողջ օրը մանկապարտեզներն է շրջում իր սարքած անճոռնի տիկնիկներով՝ մի քանի կոպեկ վաստակելու համար։ Հագի կոստյումն անհարմար էր նույնիսկ մուրացիկի տալ։ Իսկ կա՞ր այդպիսի մուրացիկներ։ Եթե կային, միայն փող կարող էին վերցնել։ Ա՛յ, եթե այս հարյուրանոցներից մեկը տա այդ Պալտոսին, թե՝ Պանտոսին (և որտեղի՞ց է վերցրել այդ հիմար անունը), տա նրան։ Մարջանյանը պատկերացնում էր, թե ինչպես կուղղվեր մինչև մի ուսին թեքված նրա գլուխը, վախվորած դեմքին ինչ արտահայտություն կհայտնվեր։ Սկզբում այդ Պանտոսը երևի ետ մղեր փողը՝ շմատնելով, որ հարյուրանոց է։ Տեսնես այդ Պանտոսի նման շա՞տ մարդիկ կան, որոնք ապրում են մի ամբողջ կյանք ու դեռ հարյուրանոց չեն տեսել... Մարջանյանը հո չէ՞ր կարող բոլորին օգնել։ Այ, եթե միլիոներ ունենար, ուրիշ հարց, կարելի էր մի քանիսին ձեռք մեկնել։ Սակայն այդպես մտածել է Մարջանյանը միայն առաջին օրերին։

Հապա այդ գիտնականը... Քանի՞ պյուտ պիտի անի, որ դրանց գիմաց մի կարգին փող ստանա։ Ասում են մեզ մոտ շատ էժան են գյուտերը, դրա համար էլ երիտասարդության մեջ սեր չկա սովորելու... Եվ ի՞նչ է կպել հարևաններից. յուրաքանչյուրը կյանքից ստանում է այն, ինչի արժանի է, ինչ կարող է։ Մինչև հիմա ո՞վ է մտածել իր մասին։ Ո՛չ ոք։ Այս դումարն էլ բերեցին ոչ թե իր մասին մտածելուց, այլ իրենց վաղվա մտահոգությունից։ Նրանք՝ այդ բերողներն ապահովում են իրենց վաղը, իրենց երեխաների ու չծնված թոռների վաղը։

Հետո Մարջանյանը հիշեց, որ վաղուց էր, ինչ ինքը չէր ասում՝ այսքան փո՞ղ։ Այդ խոսքը մտքում ասել է միայն առաջին օրը։ Այնուհետև նա ասում էր՝ ընդամենը այսքա՞ն։

Իսկ ինչպե՞ս դուրս եկավ առաջին օրը. տանից ելավ գլուխը բարձր, մի քիչ ավելի բարձր սովորականից, մի քիչ ուրախ սովորականից։ Աշխատավայր հասնելով շեֆ-խոհարարն զգացե՞լ էր Մարջանյանի ձեռքի սովորականից ուժեղ սեղմումը, զգացե՞լ էր առհասարակ իր վերադասի ներքին ուժը։ Հավանորեն՝ այո։ Հենց այդ խոհարարն էր առաջինը ցիմենտել այն պատվանդանը, որի վրա Մարջանյանն էր կանգնելու։

Այդ օրից Եղիշե Ռուբենիչն սկսեց ուրիշ հայացքով նայել շուրջը, ուրիշ կերպ մեկնաբանել մարդկանց իրար հետ կապող ուժերը։ Նա տեսնում էր փոքրիկ շատ ուժեր, որ խմբավորվում էին իրենցից մեծ ուժերի շուրջ՝ սրան պահելու, սրանով պահվելու համար։ Այդ մեծ ուժերն իրենց հերթին խմբվում էին ավելի մեծ ուժերի շուրջ, սա էլ՝ մեծագույնի։ Աշխարհը դառնում էր բազմաբջիջ մի օրգանիզմ ու այդ օրգանիզմում ամենաճարպիկներն իսկույն որոշում էին իրենց տեղը։ Մարջանյանը որոշել էր իր տեղը, օգնել էին որոշելու։

Եվ հիմա, դատեր նամակը կարդալուց հետո, վերջին տասը տարվա ընթացքում առաջին անգամ սկսեց քննել հարազատության զգացումը, որդիական, ծնողական զգացումը։ Եվ զարմացավ. դրա միջից բացակայում էր ամենամեծ զգացումը՝ վերաբերմունքը, ապրումը։ Այժմ, այս ծանր ժամերին նա եկել էր այն եզրակացության, որ հենց զգացումով էր կապ-

ված ունեցվածքին, որի հետևանքով էլ գրվել էր այդ նամակը։ Ո՞ւմ հաշվից խնայված, պոկած զգացումն էր բաշխվել հարստությանը։ Հիմա, երբ շուրջը ոչ ոք չկար, աչքերը փակ կարող էր Մարջանյանն անսխալ պատասխանել, իր կնոջ, զավակների նկատմամբ ունեցած զգացումից էր դողացել ինքը։ Առանձնապես դստերը հասանելիք սիրուց էր հափշտակել, քանի որ նրա միջոցով էր ուզում ավելին կուտակել։

Իսկ ի՞նչ է արել ինքն այսքան ունեցվածք ձեռք բերելու համար. միայն չտեսնելու է տվել ստորադրյալների արարքները։ Եվ այդքան եկամուտ դրա համար։ Մարջանյանն այնքան միամիտ չէր, որպեսզի չհասկանար, որ նման գործերը վաղ թե ուշ բացվում են։ Բայց ահա ինքը հենց այն անհատներից է, որոնց կարող են տեղափոխել այլ աշխատանքի (ընդ որում՝ իր դիմումի համաձայն)՝ մեղադրելով ամենաշատը անփութության մեջ։ Սա նոր առաջացող այլասերվածություն չէ՞։ Նա դեռ հետո պիտի հասկանար, որ այլասերվածների բանակում ինքն ընդամենը սկսնակ էր։ Այս գաղափարին հասնելուց հետո Մարջանյանը սկսեց նորմալ քնել։

Արդյոք, հենց իր այդ հանգիստ քնելուց հետո չէ՞ր, որ Սոնան փոխվեց օտարանալու չափ։ Քանի՞-քանի անգամ է նա հարցական հայացքով նայել իրենց տուն մտնող որևէ թանկարժեք իրի։ Այժմ էր Մարջանյանը հասկանում, որ Սոնան այնքան հիմար չէր, որ չկռահեր, թե ինչ ճանապարհներով էին այդ իրերն իրենց տուն գալիս, բայց միաժամանակ այնքան տակտ ուներ, որ թույլ չէր տվել իրեն բացատրություն պահանջելու հորից։ Եվ ինչպե՞ս կարող էր թույլ տալ, երբ կինն անգամ չէր համարձակվել խոսել այդ նյութի շուրջ։ Իսկ եթե Սոնան հարցներ, ի՞նչ էր պատասխանելու ինքը...

Մարջանյանը մտովի շնորհակալություն հայտնեց աղջկան՝ իրեն ստախոսության չմղելու համար։

Եվ մի՞թե իր մեջ կատարված կտրուկ փոփոխությունը չէր հասունացրել Սոնային, հասունացում, որի տեսակի չափին դեռևս անտեղյակ էր Մարջանյանը...

Նա ձեռքը սրտին տարավ. ինչ-որ խառնաշփոթություն էր սկսվել այնտեղ։ Իսկ այդպիսի մի նամակ կարո՞ղ է ինֆարկտ առաջացնել,— լրջորեն անհանգստացավ Մարջանյանը։

Դ

Առանձնացած ննջարանում՝ Վանուհին մի քանի անգամ անդրադարձավ դստեր նամակին։ Առաջին զգացումն այն էր, որ Սոնան գրել էր ուրիշի թելադրանքով. Սոնան երեխա է, միամիտ, ծնողների նկատմամբ պաշտամունք ունի և չի համարձակվի այդպիսի եզրակացություններ անել։ Նամակի թերթիկները դողում էին մատների մեջ։ Եթե կատարվածը փոթորկված ծով էր նրա համար, ապա ի՞նչ գետեր էին լցվել այդ ծովը, ի՞նչ առվակներից էին սկիզբ առել այդ գետերը, ո՞րն էր ակունքն այդ փոթորկված ծովի։

Ու գնաց Վանուհին, գնաց գտնելու իրենց ողբերգության ակունքը։ Հիմա նրան այլևս չէր մտահոգում այն վարկաբեկիչ տեսարանը, որ կատարեց Սոնայի վերջին զանգը։ Այն հանգամանքը, որ որևէ վտանգ չէր սպառնում աղջկա կյանքին, փոքր ինչ խաղաղված՝ նա ուզեց որոշ պատառիկներ մատաբերել այդ երեկոյից։

Ո՞վ էր ջուր լցնում իր երեսին...

Չգիտեմ։ Կարևոր չէ։ Սթափվելուց հետո հիշում է փոխգնդապետ Սամսոնի կնոջը, որ վիթխարի մարմինը փոխադրել էր այս սենյակը, հաստլիկ մատներով թաշկինակն էր հաճախ աչքերին տանում ու մրմնջում.

— Խե՜ղճ Վանուհի, էս ինչ սարսափելի բան պատահեց... Սամսոնն ամեն ինչ կանի, ոռվիսկ կտան...

Բայց սա ոչ թե ակունքը, այլ հենց փոթորկված ծովն էր։ Ակունքը գտնելու համար հարկավոր է հիշողությունից ջնջել բոլոր հավաքվածներին։ Սրանք չկային այն ժամանակ։

Եվ էլի գնաց Վանուհին, թափառեց դպրոցի շուրջը, մինչև վերջին զանգը խփեց, ու երեխաները դուրս թափվեցին։

— Սո՜նա,— ձայնեց Վանուհին՝ մի խումբ երեխաների մեջ նկատելով ամենասիրունիկին, թիթեռնիկին, որ ամեն պահ թվում էր, թե պիտի թռչեր ու հալվեր արևի շողերի մեջ։

Երեխայի երեսն այրվում էր ներքին կրակից։

— Ես պիտի իսկական պարուհի դառնամ, ընկեր Սարգսյանն ասաց։

— Բայց մեր պայմանը մնում է ուժի մեջ, չէ՞, բալիկս։

— Ո՛չ մի խոսք հայրիկին,— զգաստացավ երեխան— Հենց իմանա, ինձ կհանի պարի դպրոցից։

— Ճիշտ է,— թառամեց մայրը։

— Բայց երբ համերգ տանք, հայրիկը չի գալո՞ւ

— Չգիտեմ, աղջիկս։ Մինչև այդ օրը երևի մի բան կմոռանան։

Ահա ակունքներից ակունքը. երեխան պարի ուսումնարան էր հաճախում հորից ծածուկ... Սա հենց այն սայթաքումն էր, որից հետո այլևս անհնար է ուղիղ քայլել գահավիժող ճանապարհին։

Հետո Վանուհին կտրեց-անցավ շատ երկար ճանապարհ՝ որ լի էր խութերով ու քարակույտերով, եկավ ու կանգնեց դստեր սենյակի առջև և չէր համարձակվում ներս մտնել։ Այնտեղ Սոնան էր, որ լուսամփոփի լույսի տակ ինչ-որ գրում էր։ Հավանորեն այդ նամակն էր սկսել երկու օր առաջ ...Վանուհին չէր կարող ներս չմտնել. ամուսինը պատասխանի էր սպասում։

Սոնան արագ ոտքի կլավ՝ մի գիրք աննկատելիորեն դնելով գրածի վրա։ Թարեձև էր աղջիկը կատարելության չափ։ Հարուստ ու մուգ մազերի մի մասը թիկունքին էր իջել, մյուսը մեջտեղից ճեղքվելով՝ ավելի էր ընդգծում երեսի ձվաձևությունը։ Քսանմեկ տարեկան աղջկա դեմքն ավելի մանկական էր ենթադրվում ձեռք չտված հոնքերի շնորհիվ։ Մի՞թե ճիշտ էին նկատում հարազատները, ասելով, թե Սոնան մոր ջահելությունն է...

— Ի՞նչ կա, մամ, քեզ հայրի՞կն է ուղարկել,— մոր աչքերին նայելով՝ զուսպ հարցրեց Սոնան, այդ պահին իրոք քսանմեկ տարեկան հրեշտակով։

Մի՞թե նա նկատեց, որ մոր համար դժվար էր խոսք սկսելը, որ առաջինն ինքը դիմեց։ Եվ որտեղի՞ց կռահեց, որ հայրն էր ուղարկել...

— Դու գիտե՞ս, Սոնա, որ այսպես պատրաստում ենք քո նշանադրության համար,— միանգամից Վանուհին ասաց առավոտից անգիր արած նախադասությունը։

— Իսկապե՞ս,— անկեղծ զարմացավ աղջիկը։— Եվ ո՞ւմ հետ...

Նրա ձայնի միջի հեգնանքը մատնեց, որ զարմացումն անկեղծ չէր։

— Ինչպե՞ս թե։ Ուրեմն Սուրենի մասին դու ոչինչ չգիտե՞ս,— շփոթվեց Վանուհին։

— Նոյա՞ն Սուրենի,— նորից կարծես թե անկեղծ զարմացավ աղջիկը։

— Այո՛, այո՛, էլ ո՞ւմ,— վիրավորանքը չկարողացավ թաքցնել մայրը։

Մի՞թե իսկապես Սոնան ձեռք էր առնում իրեն։ Մայրը չուզեց հավատալ։

— Բայց իմ համաձայնությունն առե՞լ եք,— Սոնան չուզեց էլ վիրավորանքը թաքցնել։— Դա երևի հայրիկի՞ սրոշումն է։

— Դե... այու։ Նա համոզված է, որ դու դեմ չես լինի։

— Այսինքն՝ իր կամքը նաև իմ ցանկությունը պիտի լինի, այո՞,— ներքին զսպվածությունը չխախտելով՝ ավելացրեց Սոնան։— Համենայն դեպս հետաքրքրվում է իմ կարծիքով։ Շնորհակալ եմ։

— Սոնա՛, ես քեզ չեմ ճանաչում...

— Բայց ես ոչ մի անտակտ խոսք չեմ ասել։

Լուսամփոփի լույսը կիսել էր Սոնայի երեսը՝ մոդեռն տեսք տալով նրան։ Լուսավորված պարանոցի վրա կապույտին տվող մի երակ տրոփում էր լիցքավորված։ Գրասեղանին մնացած ձեռքի մեջ դող կար։ Բայց դեմքն ինչքա՜ն խաղաղ էր։

— Ես դեռևս երրորդ կուրսում եմ և ոչ մի ցանկություն չունեմ ամուսնանալու... Ես սովորելու եմ...

— Բայց դու չէիր ուզում իրավաբան դառնալ...

— Այո՛, իրավաբան դառնալն էլ է հորս ցանկությունը... Ես երազում էի պարուհի դառնալ։ Հիշո՞ւմ ես, ամեն երեկո նստում էիք հյուրասենյակում, հայրիկը երաժշտություն էր դնում, ու ես պարում էի։

— Մի՞թե դու էլ ես հիշում,— վախեցած հարցրեց մայրը և նստեց մոտի բազկաթոռին։

— Ես ոչի՛նչ չեմ մոռացել։ Չէ՞ որ դրանք իմ կյանքի ամենաերջանիկ օրերն են եղել։— Սոնան էլ նստեց, և այս անգամ լուսամփոփի լույսն ընկավ նրա վրա դեմից, բացեց երկարուկ աչքերի մգությունը, ճակատի ուռուցիկությունը շեշտեց, ցայտուն դարձրեց համաչափ բերանի եզրագծերը, ծնոտի փոսիկը, որ հորից էր գալիս, փոքրացրեց, իսկ հարթ մազերին կապտավուն երանգ սփռեց։— Բայց դու ինձ պարի դպրոց տարար գաղտնի։ Հիշո՞ւմ ես, ծնողական ժողովին բոլոր ուսուցիչներն իմ մասին էին խոսում...

Սոնան ախուր հայացքը թողեց իրար վրա գցված իր երկար ոտքերին, ասես ծանոթ հանգուցյալի նայելիս լիներ։

— Բայց մի օր էլ պարիս մաշիկները մոռացել էի պատուհանին։— Վանուհին ձեռքի շարժումով ուզեց ընդհատել զրույցը։ Սոնան շնկատելու ավելց։— Երբ ներս մտա վերցնելու, հայրիկն այլայլված ինձ էր նայում մաշիկներս ձեռքին։ «Ո՞ւմն են սրանք»,— հարցրեց առաջանալով։ Չգիտեմ, դու հիշո՞ւմ ես նրա դեմքի արտահայտությունն այդ րոպեին։ «Իմը»,— հազիվ մրմնջացի ես։ «Իսկ որտե՞ղ ես սրանցով պարել»— ավելի առաջանալով, ավելի ճերմակելով հարցրեց նա։ «Դպրոցում»,— մի կերպ արտարերեցի ես ու չգիտեմ ինչպես ընկա քո գիրկը։ Իմ ամբողջ կյանքում հայրիկին այդքան դժան չեմ տեսել։ Մաշիկներս բարձրացնելով ուզեց հարվածել ինձ, բայց դու այնպե՛ս ճչացիր, որ նա միայն ասաց. «Իմ աղջիկը ուրիշների համար չպետք է պարի, չպետք է ուրիշներին զվարճացնի, հասկացա՞ր...»։ Ինչպե՞ս ինձ բերեցիր այս սենյակը, դողդողալով ինչպե՞ս ինձ անկողին դրիր, չեմ հիշում։ Հիշում եմ միայն, որ առավոտյան բժիշկ հրավիրեցիր ու դպրոց գնացիր մենակ... Հետո իմացա, որ այնտեղ այլևս ոտք չեմ դնելու...

— Բավակա՛ն է, Սոնա, չեմ դիմանում,— թաշկինակն

աչքերին տանելով՝ փղձկաց Վանուհին։— Այդ ի՞նչ հիշողություն ունես...

Սոնան չհասկացավ, գո՞հ էր մայրն իր հիշողությունից, թե՞ զժգոհ։

— Այդ օրից ոչ միայն ուրիշների, այլև մեզ համար չպարեցի։ Հայրիկն ինձ հասկացրեց, որ պարել նշանակում է հաճույք պատճառել ուրիշների։ Ես չհասկացա և չեմ ընդունում մի բան, իսկ ի՞նչ վատ բան կա դրանում... Ինչևէ, հայրիկն այդպես էր ցանկանում, իսկ նրա բոլոր ցանկություններն օրենք են այս տանը։

Սոնան ելավ տեղից, մոտեցավ թափանցիկ վարագույրին, որից այն կողմ գաղալամպերն էին պատռտում դրսի մութը։ Վանուհին սրտատրոփ սպասում էր զսատեր խոսքին։

— Հիմա, ուրեմն, նա որոշել է ամուսնացնել մի երիտասարդի հետ, որին չեմ հարգում, որի նկատմամբ ոչ մի զգացում չունեմ...

— Բայց էսպիսի բախտ հազարից մի աղջկա չի հանդիպի, բալիկ ջան։ Ամուսնությունից հետո կսկսես սիրել... Սուրենն արժանավոր տղա է, լավ ապագա ունի։ Նկող տարի ավարտում է, հայրն էլ մի լավ տեղ նշանակել կտա։ Թոռից-թոռ ապահովված կլինեք...

Սոնայի գեղեցիկ շրթունքները ծռվեցին հեգնոտ մի ժպիտից.

— Իսկ մարդն ինչրա՞ն պիտի ունենա, որպեսզի իրեն ապահովված համարի և ասի՝ բավակա՛ն է... Օրինակ... Դու, որ ամուսնացել ես առանց սիրելու, երբևիցե քեզ երջանիկ համարե՞լ ես...

— Բայց ես հիմա սիրում եմ հորդ...

— Ո՞չ, դու ուղղակի սովորել ես նրան։

Վանուհին շրջվեց հեռանալու. այդպիսի բաց խոսք նա չէր սպասում Սոնայից, բայց հիշելով գալու նպատակը, հետ դարձավ.

— Համենայն դեպս, քիչ ընտանիքներ կան մերի նման օրինավոր, խաղաղ։

— Բայց դա ոչ մի կապ չունի երջանկության հետ։ Իսկ ապահովությո՞ւնը։ Դու զժգո՞հ ես մեր ունեցածից,— չէր նահանջում Սոնան։

Ինչքան էլ Վանուհին վիրավորված էր աղջկա հարցաքննությունից, էլի որոշեց չհեռանալ.

— Դե, ինչ ասեմ, վատ չէ... Բայց ձեր ամուսնությունից հետո...

— Ավելի՞ շատ կունենանք, այո՞,— հոր նման թեթև ճերմակեց Սոնան ու առանց ընկրկելու շիփ-շիտակ նայեց մոր աչքերին— Ավելի լավից գերազույնը կա, հետո չպատկերացրածը, անսահմանը, խելագարությունը... Իսկ մի՞թե կյանքի նպատակն ունենալու, հավաքելու, կուտակելու մեջ է։ Ինչո՞ւ մի անգամ չես մտածել, որ ես ոչ մի անգամ քո սրտաբուխ ծիծաղը չեմ լսել, ոչ մի անգամ հայրս չի կատակել, չի հարբել, ոչ մի անգամ անհոգ չեմ տեսել ձեզ։ Միշտ լարված եք, կասկածոտ, անհանգիստ, թերահավատ, սպասողական։ Ես դիտեմ, որ հայրս բարոյական մարդ է ու ոչ մի անգամ չի զավաճանել քեզ։ Բայց չեմ հասկանում, թե նա ինչպե՞ս է քեզ սիրում, երբևիցե խոսել է հետդ իր զգացումների մասին...

— Սոնա՛,— ձեռքը գրասեղանին խփեց մայրը— Բավա՛կան է։

— Գիտե՛մ, գիտե՛մ, անսովոր են իմ խոսքերը։ Բայց սրանք եղել են, հավաքվել են ու ես չեմ կարող չազատվել սրանցից։ Ինչքա՞ն կարելի է աչք փակել եղածի առջև— Նա նորից նստեց, տխուր նայեց զինաթափված մորն ու ձեռքն առնելով մոր ափը՝ դրեց իր այտին— Մամ ջան, երանի՞ այն ժամանակ, երբ ձեռքիցս բռնած՝ դպրոց էիր տանում։ Ողջ ճանապարհին խոսում էիր այն մասին, որ գեղեցիկ մարդը նա է, ով ագահ չէ, չի սուտ, հարգում է մեծերին, ուրիշի ունեցածի վրա աչք չի տնկում, ով օգնում է թշվառներին և հույսը միայն իր աշխատանքի վրա է դնում... ով պիտանի քաղաքացի է դառնում իր շրջապատի ու հայրենիքի համար... Իմ անո՞ւշ մամա, որտեղի՞ց էիր սովորել այդ խորհուրդները, քո մայրիկի՞ց... Չէ՞ որ հետո քեզ ուրիշ բանի են վարժեցրել...

Պատից կախված ձվաձև հայելու մեջ Վանուհին հանկարծ տեսավ քիչ վախեցած, ընկճված, կամակատար մի գեղեցիկ կնոջ, որին էլի մի քանի խոսք էլ ասելիս, նորից պիտի արտասվեր։ Վանուհին շրջվեց՝ զավակի ներկայությամբ իրեն

այդքան խեղճ չտեսնելու համար։ Նայեց Սոնային. հիմա էլ ներքին կրակից այնպես էր շառագունել, ասես ուր-որ է պիտի բռնկվեր։ Նրա վիճակն էլ մխիթարական չէր։ Ի վերջո, ինչքան էլ քնքուշ, զուսպ ձայնով էր խոսում աղջիկը, բառերի իմաստը դիտողություն էր, մեղադրանք։

— Ո՞ւր թռան քո այն խոսքերը, մամ ջան,— կրկին ձեռքը խլելով՝ խոսքը շարունակեց Սոնան։— Ա՞յն ժամանակ էիր հավատում ասածիդ, թե՞ հիմա։ Գիտե՞ս, երբեմն գնում եմ ու շրջում դպրոցիս բոլորը քո խոսքերի արձագանքը գտնելու համար... Հաճախ ձեռքս քսում եմ դպրոցի շքամուտքին... Ինձ թվում է, թե շատ մայրերի խրատական խոսքերն են քարերին կպած մնացել...

Վանուհին այլևս չէր կարողանում թաշկինակն աչքերից հեռացնել։ Այդ ե՞րբ մեծացավ իր դստրիկը... Այս ինչե՞ր է ասում... Ո՞վ նրան այսպիսին դարձրեց։ Համենայն դեպս, իրենցից ոչ մեկը։ Եվ իր բալի՞կն է եկել բացելու իր աչքերը...

— Երանի հա՛յրդ էլ ներկա լիներ այս զրույցին,— կերկեր արտաբերեց Վանուհին— Թող նա էլ ճանաչեր քեզ նշանելուց առաջ... Ա՜խ, բալաս, երանի՞ այսքան զգայուն, այսքան խելացի չլինեիր...

— Այդ դուք եք ինձ այսպիսին դարձրել,— ելնելով՝ կըռնակը մորը դարձրեց Սոնան. նա չէր ուզում թուլանալ ծնողի ներկայությամբ— Ինձ այնպես է թվում երբեմն, թե քեզ էլ եմ կորցրել դպրոցիս ճանապարհին... Հայրիկն ուրիշ ճանապարհներով տարավ քեզ... Իր կամակատարը դարձրեց...

Դա արդեն չէր կարելի հանգիստ լսել։ Այդ զրույցը հորից էր ժառանգել հավանաբար։ Այնպես էր խոսում Սոնան, ասես իրենց վիրջին զրույցն էր լինելու և չէին հանդիպելու այնուհետև...

— Նա քեզ վրա նայում է սեփականատիրական հայացքով։ Գիտեմ, դու ուզում ես ասել, թե բոլորիս վրա է այդպես նայում։ Այդպես է։ Բայց ես չեմ ընդունում այդ հայացքը։ Ես սիրում եմ հայրիկիս, բայց թույլ չեմ տա կարգավորել իմ զգացումները։ Ես չե՞մ ուզում այդ թանկարժեք զարդերով, որ դու տանն էլ ես կրում, խեղճացնել, նվաստացնել ինձ... Երբեմն ես մտածում եմ, թե այդ խոշոր մարգարիտների հյուսքը կարող է խեղդել քեզ...

— Բավակա՛ն է, ես քեզ չեմ ճանաչում,— լդիմանալով այլևս՝ սաստեց մայրը։— Ասա, ի՞նչ պատասխան տանեմ հորդ։

Սոնան ուղղվեց, դառնացած խոր շունչ առավ ու հատ-հատ արտաբերեց.

— Ասա հայրիկիս, որ ես Եղիշե Մարջանյանի դուստրն եմ։

— Հենց այդքա՞ն։

— Միայն այսքա՛ն։

Վանուհուն դուրս բերեցին իրավունքից զրկված ոտքերը։ Նրան հիշողություններից կարեց հեռախոսի զանգը։ Դուրս թռչելով սենյակից՝ տանտերն ուղղակի խլեց լսափողը։

— Այո՛... Ի՞նչ... Որտեղի՞ց,— նրա դեմքն անհամբերություն ու զայրույթ էր արտահայտում։— Շա՛տ լավ, գալիս եմ։

Նա համարյա շպրտեց ընկալուչը ու կախիչից վերցրեց գլխարկը։

— Ի՞նչ է պատահել, Եղիշե,— հետևից վազեց Վանուհին։

— Դաե՛լ են... Միլիցիայում են... Սամսոնն էր...

— Ե՞ս էլ եմ գալիս, սպասիր,— ամուսնական ողջ կյանքում իր պահանջը թելադրեց Վանուհին ու դուրս թռավ։

Ի՞նչ տոնով ասաց նա, որ ամուսինը չմտածեց էլ առարկել։

Ցածում սպասում էր Սամսոնի մեքենան։

Ե

Երբ կնոջ հետ Մարջանյանը մտավ միլիցիայի վարչության պետի առանձնասենյակը՝ մկնահոտ առավ։ Ակամա թափահարեց գլուխը ու նոր միայն լուսարձակի նման բաց թողնց հայացքը սենյակով մեկ։ Առաջինը նկատեց փոխգնդապետ Սամսոնին։ Սա, ոտքերը լայն դրած, մսոտ ձեռքերը ծնկներին, նստել էր Սոնայի կողքը։ Սրան հարևան էր հավանորեն այն երիտասարդը, որին Մարջանյանը երբեք չէր ցանկանա տեսնել։ Թեև Մարջանյանը չնայեց Սոնային, բայց ընկալեց, որ այդ Վարդան կոչեցյալի ու Սամսոնի մեջտեղում նա պիտի լիներ։ Ցիմացավ՝ Սոնան իրեն նայեց, թե ոչ, բայց նրա ձեռքը գնաց երիտասարդի կողմը։ Վերջում նկատվեց առաջացած տարիքով, սակայն անխորշոմ, բարեհամբույր

մի տղամարդ, որ վարչության պետը պիտի լիներ, քանի որ ոտքի ելավ ու պատի տակ շարված աթոռներն առաջարկեց։ Մարջանյանն զգաց, որ երեսը սառչում է, բերնակողերը գալիս են ջղաձգաբար և, առհասարակ, անհանդարտություն կար ողջ էության մեջ։ Նա ձեռքը ժիլետի գրպանը տարավ դեղահաբ հանելու, սակայն ձեռքն իսկույն էլ հետ քաշեց. հարկավոր չէր մատնել հոգու խռովքը, ինքնատիրապետմամբ հարկավոր էր թաքցնել ամեն ինչ։ Երբ նա մոլորված ձեռքը սեղանին դրեց, զգաց, որ կնոջ ծունկը թմբկահարում է իրենց խոսք, իր ներկայությունն էր վանուհուն տեղում պահում։ Մարջանյանը չնայեց կնոջը, որպեսզի սա հայացքը չփախցնի Սոնայից, որպեսզի նա էլ հավաքի իրեն։

Մարջանյանը զայրույթով էր լցվում իր դեմ. այդ ինչպե՞ս է, որ մինչև տեղ հասնելը մտածում էր ամենափուլ փոքրիկ բարձրացնել այդ լակոտի գլխին, հիմա այնպես է թուլացել, մարել, ինչպես խոնավ լուցկին կրակի ներկայությամբ։

«Ես քեզ նստացնելու եմ, շան լակոտ, ինչքան էլ գեղեցիկ լիներն պոչով աչքերդ, ինչքան էլ կիրթ լինի կերպարանքդ»,— մտքում կոիվ էր տալիս Մարջանյանը։ Բայց ինքը ե՞րբ նկատեց, որ այդ Վարդան կոչեցյալը, որ տղեկ էր երևում ամուսնության համար, որ արծվատունգ քիթ ուներ, որը և առնական ու աղնվական կերպարանք էր տալիս նրան, թախծոտ ու հմայիչ էին աչքերը։ Իսկ ի՞նչ էր մտածում ճանապարհին, ինչո՞ւ իր մեջ հանկարծ երևաց ցասումի այն զգացումը, որ կուտակվել էր չորս օրվա ընթացքում հենց այդ տղայի նկատմամբ...

— Ձեր աղջի՞կն է, ընկեր Մարջանյան,— քաջ լռության մեջ լսվեց պետի ձայնը։

Մարջանյանը մի ակնթարթ նայեց Սոնային, հպանցիկ մտածելով, թե կարո՞ղ էր ուրիշը լիներ դստեր փոխարեն, ու դժգոհ ասաց.

— Այո... Իմն է...

«Ես չգիտեի, որ այսքան սիրում եմ քեզ,— մտածում էր Մարջանյանը՝ հիշողության մեջ դաջելով դստեր տխուր ու աղերսող հայացքը։ Բայց ինչպիսի՞ հաստատակամություն կար այդ հայացքի մեջ— Ա՞յդ բնավորությունն է թել։ դրել

ասելու մորդ, թե դու Եղիշե Մարջանյանի զավակն ես... Միևնույն է, մինչև կյանքիս վերջը չեմ ներելու քեզ, չեմ մոռանա քո հասցրած վիրավորանքը... Իսկ կողքիդ լակոտին տասնչորս տարով քշել եմ տալու...»։

— Թբիլիսիից ենք բերել,— լսվեց Սամսոնի ձայնը։

Մարջանյանը ծխախոտ վառեց կնոջ խեղդվող հառաչանքը չլսելու համար։ Եվ ինչո՞ւ թույլ տվեց գալու։

— Ես պահանջո՞ւմ եմ անմիջապես դատական բժշկի մոտ ուղարկել և գործ կազմել,— ոտքի ելնելով՝ խիստ առաջարկեց Մարջանյանը։

— Բայց ընկեր...,— ցանկացավ ընդմիջել պետը։

— Ո՛չ մի բայց. այս սրիկան առանգել է իմ երեխային, արատավորել նրա պատիվը,— վեհանձն զայրույթով կըտրեց Մարջանյանը։

— Հայրի՛կ,— անծանոթ ձայնով համարյա ճչաց այն աղջիկը, որ պիտի Սոնան լիներ։

— Ես գիտեմ ինչ ես ասելու,— պատվաստված ատելությամբ կանխեց հայրը՝ այդպես էլ չնայելով գստեր կողմը։— Ասելու ես, որ դու քո կամքով ես գնացել և հիմա էլ ամուսնանում եք... Ձեր նմաններին պիտի կոխկրտել, ոչնչացնել, որ այսպես չարատավորեք մեր կյանքը... Սա ի՞նչ սերունդ է, չեմ հասկանում։ Մեր ժամանակ ծնողի սերն ու գուրգուրանքը տոկոսներով էինք վերադարձնում, դեռ վերադիրն էլ հետը...

— Հայրի՛կ, սխալվում ես,— կիսաձայնելով՝ ձեռքերն առաջ մեկնեց Սոնան։— Ես միշտ էլ սիրել եմ ձեզ... Ես ուզում եմ քո հայրական օրհնանքը ստանալուց հետո ամուսնանալ Վարդանի հետ... Ես... Ես...

Նրա հոգեպարար ձայնը թափանցում էր հոր էության մեջ, ձայն, որ անկեղծ էր, բայց ոչ անպարկեշտ։

«Ինչ էլ խոսք գտար, անպիտան,— մտովի իրը կատաղեց Մարջանյանը։— Միևնույն է, չես կոտրի իմ որոշումը... Ի՞նչ անեմ, կո՞ւլ տամ դեղահաբը...»։ Մարջանյանն զգում էր, որ սառչող մատները ծակծկվում էին, անջատվում իրենից, օտարանում։

— Իմ պատիվը նույնքան մաքուր է, ինչքան քո տանը, հայրիկ, հավատա...

Ինչքան էլ լացակումած՝ արդեն Սոնայի ձայնով էին հընչում բառերը։

Հավանորեն այլևս անկոր իրեն տիրապետելու՝ Վանուհին փղձկաց թաշկինակի մեջ։ Մարջանյանը լսաստեց։ Ընդհակառակը, տուն վերադառնալուց հետո առաջին անգամ շնորհակալական զգացումով կդրկի կնոջը, որ այդպես կարողացավ տիրապետել իրեն։

Դրսում անսպասելի շառաչում էր անձրևը։ Անձրևի կաթիլները տափակելով ապակիների վրա՝ ձեռք էին մեկնում իրար, շատանում էին ու առվակներով ցած իջնում։ Քիչ հետո մեծակալյակ անձրևը սկսեց լվանալ պատուհանները։ Մարջանյանը շունչ առնելու համար մոտեցավ պատուհանին։ դրսում գիսախոտի մի ուռենի գլուխը խոնարհում էր արհեստական առվի վրա։ Սրա մեջ անձրևաջուրն իր մոլեգնությունն էր ցուցադրում։ Քիչ այն կողմ միավորիկ մի բարդենի, թևերը հավաքած՝ միտք էր անում շուրջը կատարվածի վրա։

— Գուցե կցանկանայիք ձեր աղջկա հետ առանձին խոսե՞լ,— Մարջանյանին դռնից ներս բերեց պետը։

— Ես նրա հետ կխոսեմ միայն ի՛մ հարկի տակ,— կըտրուկ ու անթերթ հայտարարեց Մարջանյանը։— Այդ... այդ երիտասարդի գործը դատարան հանձնելուց առաջ։

— Բայց Սոնան ասում է, որ տղան չի արատավորել իր պատիվը,— միջամտեց Սամսոնը, որ տարօրինակ կերպով շփոթվել էր այդ օրը։

— Ո՞վ ասաց՝ չի արատավորել,— արդեն բռնկվեց Մարջանյանը։— Դո՞ւ էլ ես այդ կարծիքին։ Չորս օր է ամբողջ քաղաքն այս մասին է խոսում... Մայրը խելագարի նման կորցրել է գլուխը, ես աշխատանքի էլ չեմ գնում... Եթե այս բոլորից հետո նա իրեն անպատվված չի համարում, ուրեմն իմ աղջիկը չէ՛...

— Հայրի՛կ...

— Ես աղջիկ չունե՛մ...

— Եղիշե՛,— հեկեկոցով թախանձեց Վանուհին։— Աղաչո՛ւմ եմ...

— Լռի՛ր,— ներից տեղից ելավ Մարջանյանը՝ սաստիկ

կարմրած,— Եվ դու մա՛յր ես... Ավելի վատ, եթե իր համաձայնությամբ է փախել... Ես չեմ կարող աչքերս հանել սրանց չտեսնելու համար, չնայած վաղուց արդեն Սոնա չկա ինձ համար...

Մարջանյանը վախեցավ, որ կարող է վայր ընկնել, որ սպառվում է իրեն հասանելիք ժամանակը։

— Ներեցեք, ես մի բոպեով...

Եվ դուրս նետվելով՝ նա մի դեղահաբ կուլ տվեց. հանկարծ ու իր մերժված, անձուկ վիճակը խղճահարություն առաջացներ։ Այն պահին, երբ գրպանում թաքցնում էր սրբվակը, մի դողահար ձեռք բռնեց թևը.

— Հայրի՛կ, աղաչո՛ւմ եմ։— Մարջանյանը շեղ նայեց նրան։— Աններող հայացքով այդպես մի նայիր... Գիտեմ, որ հոգիդ ուրիշ է... Դու իմ հայրի՛կն ես...

Մարջանյանը կարուկ ետ դարձավ՝ խլելով թևը։ Նա մտապահեց աղջկա դունատ երեսը և նրա տաք ձեռքի հպումը, որ դեռ երկար էր մնալու իր բազկի վրա։ Սոնան հոգնած էր ու մի քիչ նիհարած։

— Ես պիտի խոսեմ քեզ հետ, հայրիկ, բայց ոչ մեր տանը...

— Միա՛յն մեր տանը...

— Մեր տուն կգամ միայն Վարդանի հետ,— անզիջում պատասխանեց Մարջանյանի աղջիկը՝ շիտակ նայելով հորը։

Նրա խիտ արտեւանունքների մեջ խորվիչ դող կար։ Ասես որանք ամեն ճիգով ուզում էին պահել արցունքի ճանապարհը։ Մարջանյանը մտածեց, բայց չասաց, որ նրանց հեռանալն ուղեկցությամբ է, որ Սոնան չի դիմանա սպասվելիք պայմաններին։ Հենց չասելով էլ ուզեց պատժել աղջկան։

Դուրս եկավ նաև Վանուհին ու սկսեց տագնապահար մերթ ամուսնուն նայել, մերթ՝ աղջկան։

— Հենց հիմա գնում ենք տուն,— ցածր ու խիստ պահանջեց Մարջանյանը։— Կնկրե՛մ, եթե հիմա գաս, Սոնա, բա՛ս...

Սոնան ետ դրեց ոտքը՝ հայացքը չպոկելով մոտեցող հոր խեղճացած կերպարանքից։ Նա վախեցավ այն բանից, թե ծնողները կարող էին բռնի տուն տանել իրեն։ Միջանցք եկավ փոխգնդապետ Սամսոնը, ապա այն երիտասարդը, որին կիրթ

տեսք էր տալիս հավանորեն դեռաբուսիկ մորուքը։ Մարջանյանը չէր կարող չխոստովանել, որ ընտրության հարցում այս տեղ Սուրենը քննություն չէր բռնելու։ Նա շատ կցանկանար, որպեսզի Եղոյանի որդին այս Վարդանը լիներ։ Բայց մեր օրերում խելացի ո՞ր աղջիկը կամուսնանա դատարկ գրպանով երիտասարդի հետ՝ ինչքան էլ սա գեղեցիկ ու խելացի լինի։

— Վարդա՛ն, գալիս եմ քե՛զ հետ,— վճռական տղային դարձավ Սոնան։

Նրա բերանի բազմախոս դողը մատնում էր հոգու խռովքը։

Տղան թևերի մեջ առավ նրան՝ ասես պաշտպանելու հզոր մարդկանց հարձակումներից։

— Սոնա՛, մատաղ քեզ,— հեկեկոցով ուղեց նրան պոկել մայրը։

— Վանուհի՛,— անզուսպ նետեց Մարջանյանը։ Դուրս գալով նաև վարչության պետը։— Ընկեր փոխգնդապետ, համարեք, որ ես աղջիկ չունեմ... Նա չի փախել տանից, նա մեռե՛լ է չորս օր առաջ, հանկարծ... վթարից։ Սրա ապագան այլևս ինձ չի հետաքրքրում... Կներեք այսքան հոգս պատճառելու համար... Գնացի՛նք։

Եվ կնոջ թևն առնելով՝ դուրս եկան փողոց։ Ոչ, անձրևի շառաչից չէր վանուհին ցնցվում։ Մարջանյանը, որ տարիներ շարունակ բռնադատել էր նրան իր կարգադրություններն ու պահանջները կատարելու, այժմ նա ինքն էր օգնության կարոտ... Թեկուզ կնոջ օգնության...

Հենց աստիճանների մոտ կանգնած մի ավտոմեքենա դրոնակը բացեց նրանց առջև։ Հոգի, թաց կանաչի բուրմունքն անզոր էր Մարջանյանին ուշքի բերելու։ Երբ սա քարի պես ծանրացած ու ջախջախված մարմինը նետեց նստատեղին, նոր նկատեց, որ դեկի առջև իր որդին էր։ Միահեծան ընավորությունից ոչինչ չէր մնացել Մարջանյանի մեջ ու դրանից էլ ամաչում էր։

— Տո՛ւն,— հազիվ արտաբերեց նա։

Նա զգաց, որ խելագար շտապումով կարոտում է դատարկին, որի գունատված ու հուսահատված կերպարանքը կանգնում էր աչքի առջև։

— Տո՛ւն,— պատկերից փախչելու համար կրկնեց Մար-

ջանյանը, երբ մեքենան վաղուց բռնել էր տան ճանապարհը։
Նրա ուսին հենված՝ Վանուհին այլևս չէր մտածում հեկեկոցը թաքցնելու մասին։

Զ

Օգտվելով ամուսնու բացակայությունից, երկար ծանր ու թեթև անելուց հետո Վանուհին զանգահարեց Սուսաննային՝ Մարջանյանի հեռավոր ազգականուհուն, որին չէր ուզում տեսնել հենց ինքը՝ Մարջանյանը. սրա հոգուն հակամետ էր այդ աղջկա բարոյական նկարագիրը։ Իսկ Վանուհին այրվում էր հետաքրքրությունից իմանալու վերջին ամսում կուտակված բամբասանքները, որ պտտվելիս պիտի լինեին առանձնապես Սոնայի ձախողված նշանդրեքի շուրջ։ Անհնար էր, որ այդ բոլորին տեղյակ չլիներ քարտուղարուհի Սուսաննան։

Վանուհին զանգահարեց, հարցրեց նրա որպիսությունը (հազվագյուտ բան) և հրավիրեց նախաճաշի։ Աղջիկն անմիջապես խոստացավ գալ։ Մինչ այդ Վանուհին զանգահարեց Սոնային։ Սա լաց եղավ հեռախոսի մեջ. շատ էր կարոտել ծնողներին, եղբորը, բայց գիտե նաև, որ հայրը երդվել է երբեք չհանդիպել իրեն։ Նրա երդումն օրենքի ուժ ուներ։ Սոնան համոզված էր, որ եթե ինքը զանգահարի, հայրը ոչ միայն կնեղի հեռախոսափողը, այլև ահարկու մի տեսարան կարքի մոր գլխին։ Ո՛չ, մայրն իզուր է այդքան մտահոգվում. ինքը երջանիկ է, որ այդպիսի ընտանիք է ընկել։ Այո, չի՛ զղջում։ Վարդանի գործերը շատ լավ են, բանաստեղծությունների առաջին գրքույկն է լույս տեսել, ինքը ոչ մի բանի կարիք չի զգում, ապահովված է ավելի, քան իրենց տանը։ Ո՛չ, մի գրքի համար շատ մեծ հոնորար են տալիս։ Սկեսրայրն էլ դոցենտ է, քիչ չի ստանում. նա ուզղակի իր անունով է երդվում և թույլ չի տալիս տան գործերի մեջ մոլորվել։ Իհարկե, եթե սկեսուր ունենար, շատ լավ կլիներ։ Ինչ արած, այդ մի հարցում բախտը չի բերել։ Իսկ մայրը ի՞նչ կարող է իր հաղուստներն ուղարկել Ռուբենի միջոցով։ Իսկ հայրիկի զայրույթը բոլորովի՞ն չի իջնում։ Շատ ցավալի է։ Նշանակում է մայրը նրա գործուղման մեջ գանվելու օրերին կարող է իրեն զանգահարել։ Շատ լավ, Սոնան հասկանում է և ինքն էլ կաշխատի այդպիսի օրերի կապվել մոր հետ... Ոչի՞նչ, իրենք էլ համեղ կերակուրներ, թխվածքներ են պատրաստում։ Ա՛խ, մայրը չի՞ պատկերացնում, որ աղամարդը կարող է տնտեսական, խոհանոցային գործերով զբաղվել... Եթե մի երկու անգամ այցելի իրենց, կտեսնի, թե աղամարդն ինչեր կարող է անել... Ո՛չ, ո՛չ մի կոշմնակի եկամուտ չունեն, եղածն էլ լիովին բավարարում է իրենց...

Լսելով դռան զանգը՝ Վանուհին լսափողը համարյա նետեց տեղն ու առաջացավ։ Եկողից առաջ, փակ դռան անտեսանելի ճեղքերից «Մաժենուարի» բուրմունքը ներս լցվեց։

Շեմքում կանգնած էր Սուսաննան՝ բաց կանաչ մետաքսի շորով։ Հագուստն ասես նրա համար էր՝ վզի բաց կտրվածքով, որպեսզի ճերմակ ու կարճ պարանոցից ազատորեն իջներ մեդալիոնն ու կախվեր փարթամ կրծքի ձյունափրփուր փոսիկի վրայով։ Մազերի սանրվածքն ավելի էր խոշորացնում գլուխը, թափանցիկության հասնող ճերմակ ու լիքը այտերը հուրհրում էին նկատելի քսած կարմիրից։ Աչքերի շուրջը կանաչ սավեր էր բռնել։ Թարթիչները ծանրացել էին սև սուշից։ Մսոտ շրթունքներն ալ կարմիր էին ու այդ բոլորը գունավոր ֆիլմի տպավորություն էր թողնում։ Եթե աղջկան խորհրդավորություն ու գեղեցկություն է տալիս թախիծը, ապա Սուսաննան շատ էր տուժում դրա բացակայությունից։ Նրա մշտական արտահայտությունը լիաբերան ժպիտն էր, որը և խոսում էր մակերեսային ընավորությունից։ Գոտին ոչ թե նեղացնում էր մեջքը կամ ընդգծում, այլ մարմինն ուղղակի բաժանում էր երկու հավասար մասի, թեև անպայման սեղմիրան պիտի կրելիս լիներ։ Այն հանգամանքը, որ այդ աղջիկը միշտ աչք ծակող վառվռուն շորեր էր հագնում և կրում էր ամենատարբեր զարդեր, զրկվում էր խոհեմությունից ու կասկածի տակ էր առնվում վարքագիծը։

Վանուհին վերից վար նայեց նրան, մտքում ասաց. «Երանի ոչ ոք չտեսնի քո այստեղ գալը», նկատեց կանաչ բոկոտիկներից երևացող լաքապատ եղունգներն ու կիսաժպիտ ներս հրավիրեց.

— Համեցիր։ Գնալով գեղեցկանում ես։

— «Ինչքան դժվար է ժպտալ, երբ այն հոգուց չի գալիս»,— այս էլ իր համար ասաց Վանուհին։

Ներս մտնելով՝ Սուսաննան թմփլիկ այտը դեմ արեց տանտիրուհուն, ինքն էլ օդից երևակայական մի համբույր խլեց ու լիաշուրթ ծիծաղելով առաջացավ։ Կլոր, փոփուշավոր խոշոր աչքերը լայն բացած՝ զարմանքով բոլորտիքը նայելով՝ սենյակից-սենյակ անցավ։ Հիացավ ու ձեռքերը լայն տարածեց.

— Բռա՜վո, Վանուհի, ա՛յ քեզ տուն... Բարով վայելեք։ Ասում էին, չէի պատկերացնում։

Օծանելիքի թանձր բուրմունքն ալեկոծում էր ողջ բնակարանի բարկ մթնոլորտը։

— Ո՞վ էր ասում,— հեռաքրքրվեց Վանուհին, թեև ձայնի մեջ հարանորոգ հառաչանք կար։

— Ջուլիկը։ Հիմի էլ իրենք են խրվել։ Ուզում են հարս բերելուց առաջ ամեն ինչ վերջացնել։

Փաղաքշված փիսիկի նազանքով էր Սուսաննան սենյակից-սենյակ անցնում՝ հաճախ պտտվելով տանտիրուհու շուրջը։

Մտան խոհանոց։ Անկախ գիրությանը Սուսաննայի բնությունը թեթևոտն էր, որը և չահելության երանգ էր տալիս նրա երեսնամյա հասակին։

— Էստեղ էլ նստենք, Վանուհի ջան։ Մեկ էլ ենդություն մի քաշի։ Ձեր խոհանոցը հիմիկվա հաշասենյակներից մեծ է։

— Ասում ես՝ հարս ե՞ն բերում,— չկարողացավ չհետաքրքրվել տանտիրուհին. չէ՞ որ Սուսաննային կանչել էր հենց այդպիսի ասեկոսեներ իմանալու։ Սոնայի փախուստը պիտի որ հարուստ նյութ լցրած լիներ բամբասանքների բերանը։— Եվ ի՞նչ աղջիկ է, ովքե՞ր են ծնողները...

Սուսաննան ծիծաղելով հետ բնկավ աթոռին. Վանուհին գգաստացավ. մի՞թե իր հետաքրքրասիրությանն էր ուղղված այդ ծիծաղը։

— Մինիսար խանոյանի աղջիկն է...

— Ինչ ես ասո՞ւմ,— ափ ի բերան զարմացավ Վանուհին։— Տե՛ս է, որտեղից են բռնացրել։ Հետո՞, դեղեցի՞կ է աղջիկը...

— Մի իսկական կապիկ։ Վրան չես նայի՝ թե փողոցում հանդիպես։ Ասված անպայման ուրիշներից տարբերելու համար է էդքան ապեղ ստեղծել։ Մի քնձոտ ձի։ Երկու շոր տախտակ իրար կպցրած։ Ոչ կուրծք, ոչ՝ քամակ։ Ճիշտ է, լավ է հագնվում, բայց ոնց որ շարժական վեշնկա։ Սուրենից մի երկու տարով էլ մեծ է...

— Ի՞նչ ես ասո՞ւմ,— ներքին ուրախությունը երես չհանեց Վանուհին ու առաջ տարավ զրույցը։— Բա դրա ի՞նչն են հավանել։

— Է՛, հիմի ո՞վ է նայում արտաքինին,— կարճաշունչ տխրությամբ հառաչեց Սուսաննան ու պայուսակից հայելի հանելով՝ տնտղեց իրեն։— Հոր պաշտոնի՛ հետ են ամուսնանում, հարսիկ ջան, հոր անվա՛ն հետ... Քի՞չ բան է մինիսար խնամի ունենալը։ Ճիշտ է, չեմ լսել, որ խանոյանը սրանից-նրանից բան վերցնի։ Դե, դա էլ մի ուրիշ տեսակ խորամանկություն է, բայց դրամարկղում մեծ գումար կունենա հավաքած։

— Եթե չի վերցնում, որտեղի՞ց հավաքի,— կիսատարակուսեց Վանուհին՝ ձեռքերն իրար ագուցելով։

— Ի՞նչ իմանամ։ Որ ասեմ մենակ աշխատավարձի հույսին է, կհավատա՞ս։ Ինչե՞ր չի անի այդ շոր ու ցամաք աղջրկան ամուսնացնելու համար, որի հոգսը եղել է միայն ծերվելը։ Էս ինչ համով կոֆե է, հարսիկ ջան։

— Իսկ Սուրե՞ն ինչ դիրք է բռնել։

— Նրա դի՞րքը որն է. ծնողները որ կողմը հրեն, էն կողմն էլ կգնա։ Երկու ոտանի էշ է։ Հա, Եղոյաններն անցյալ օրը Լյուդովիկոս տատնշորսերորդ բերեցին։

— Ո՞ւմ բերեցին։

— Լյուդովիկոս ենջարան։ Հիմի դա է մոդա։ Քաղաքում գեռ երկու հոգի են առել։

— Ինչ-որ չեմ լսել,— մի քիչ շիվար ասաց Վանուհին։

— Լյուդովիկոսի՞ մասին,— ամեն բան իմացողի հեգնանքով հարցրեց Սուսաննան՝ մատները ստեղնաշարելով սեղանին։

— Չէ՛, կահույքի,— ավելի ընկճվեց Վանուհին։

— Լյուդովիկոսը Ֆրանսիայի թագավորն է եղել ու աշխարհին զարմացրել է իր ճոխ մերելով։ Դե մեզ մոտ էլ շատերն են ուզում նրան նմանվել։

— Թագավոր լինելո՞վ։

— Մեբելո՜վ, հարսիկ ջան, մեբելո՜վ։ Որ տեսնես, ուշքդ կգնա...

— Լյուդովիկոսի՞ն,— ասաց ու փոշմանեց Վանուհին՝ հաստատ իմանալով, որ Սուսաննան քաղաքի բերանն է գցելու իր միամտությունը։

Իսկ Սուսաննան ծիծաղից թուլացած՝ անձեռոցիկով զգուշորեն մաքրում էր ներկոտ աչքերը։

— Մեբելը, հարսիկ ջան, մեբելը։ Ջյունի նման սպիտակ է ու ի՞նչ ձեռքի աշխատանք։ Պատկերացնո՞ւմ ես, ինչ գույնի վարագույր կախես, այդ երանգն էլ մեբելն է առնում... Մի խոսքով, զամբյուղում է խնամուն զարմացնել... Բա, հե՞շտ բան է մինիատորի աղջիկ տուն բերել...

— Վա՛յ, խե՞ղճ,— ակամա շշնջաց Վանուհին— Նապոլեոն վերցրու, երեկ եմ թխել։

— Ո՞վ է խեղճ։

— Առաջինը՝ այդ աղջիկը, հետո՝ Սուրենը, հետո՝ Եղոյանը, հետո էլ այդ մինիատորը...

— Դրա՞ն ինչ։ Մինչև հիմի երևի աղջկան ուզող չի եղել, էսօր էդպիսի տուն է մտնում։ Լսի՛ր, էս ինչ լավ է նապոլեոնը։ Աղջի՛, էս Ֆրանսիան էլ որ չիներ, ոչ նապոլեոն ու ժոզեֆինա կուտեինք, ոչ բեղե, ոչ էլ լյուդովիկոս ենչարան կունենայինք։ Այ, դրա համար Փարիզը Եվրոպայի մայրաքաղաք է համարվել, բա՛...

Ու ծիծաղելով՝ փարթամ կրծքի վրայից նապոլեոնի փրշրանքները թափ տվեց։

— Ես չեմ կարդացել, բայց լսել եմ, որ առաջներում հայ հին հարուստներն են էսպես խնամիացել՝ կոչումներ ու հողեր ձեռք բերելու համար...

— Իրը հիմի՞ ինչի համար են անում։

Ու մտքում շարունակեց. «Մի՞թե մենք էլ Սոնային այդ նպատակով չէինք ուզում ամուսնացնել...»։

— Ձեր Սոնան մարալ է Ռիտայի համեմատությամբ։

— Ռիտա՞ն ով է։

— Դե, Եղոյանի ապագա հարսը։ Հիմնարկի աշխատողները էլ են իրար խառնվել։ Ուզում են արժանի նվեր ուղարկել հարսանիքին։

— Ո՞նց թե՝ ուղարկեն։

— Բա ո՞վ ռիսկ կանի զամի տունը գնալ։ Երևի իմ միջոցով ուղարկեն։ Քիթ-քթի տված՝ ցուցակ էին կազմում։

— Ասավա՛ծ ջան, ամեն ինչ հարամվեց,— տխուր արտաբերեց Վանուհին։— Նշանակում է՝ ամեն ինչ կա, բացի սիրուց։

— Ի՞նչ սեր...

— Չէ՛, իմ Սոնան մեզնից խելոք գտնվեց։ Է՛, աղջի՛կն ինչ է անում։

— Ասպիրանտուրայում է, դիսերտացիա է գրում։ Ասում են՝ շատ խելոք է։ Օտար լեզուների ինստիտուտն է ավարտել։

— Ուրեմն, Ջուլիկը ձեռքից կգնա. էդքան խելոք հարսի հետ մի քիչ դժվար է...

— Քոնը պակա՞ս խելոք է, դեռ սիրունությունն էլ վրան։ Ասենք, ով էլ այդ տունը հարս գա, Ջուլիկից խելոք կլինի։— Եվ նորից Սուսաննան զգուշորեն մաքրեց սև ու կանաչ արցունքները։— Էս աչքերս էլ որ քսում եմ, չեմ կարողանում մի կարգին ծիծաղել։ Լացի մասին էլ չեմ ասում։ Է՛, հարսիկ ջան, էս աշխարհը փչացել է նրա համար, որ ոչ ոք իր վերմակի չափով ոտքերը չի մեկնում։ Տասներկու տարի է Եղոյանի քարտուղարուհին եմ, ես գիտեմ, թե ինչքան չուզողներ ունի էդ մարդը։ Հետևից հազար բան են ասում, տեսնելիս իրարից առաջ ընկնելով են երկուտակվում բարևելու համար։ Ո՞նց են ժպտում, առողջությունից հարցնում։ Ձեռներից գա՝ պպզած ման կգան՝ նրանից բարձր չերևալու համար։ Տնաշենը գոնե մի քիչ բոյ ունենար։ Ախր՝ սկի զամի նման չի. մարդու ծաղր է, ցեխն ընկած մուկ՝ մկան քիթ ու բերանով, մկան մանր ու վազվզող աչքերով։ Սուրենը, ոչինչ, մի քիչ բոյով է։ Իսկ Մառան մոր փարթամությունն ունի։ Հենց ուզող հայտնվի, Եղոյանը մի կվարտիրա հետը կտա, դաչան էլ հետը, լյուդովիկոսն էլ ավելացրած։ Բայց միամիտ երեխա է։ Է՛, ասված ինքն էլ չգիտի ինչ է անում...

Լսում էր Վանուհին ու պատկերացնում, թե ժամանակը հիմա բամբասանքի քանի՞ տեսակ կծիկներ էր գլորում Երևանի փողոցներով... Եվ զղջաց Սուսաննային տուն կանչելու համար։

— Իսկ քո՛ գործերն ինչպես են։ Կյանքդ նույն ձևով էլ շարունակո՞ւմ ես։

— Ուրիշ ի՞նչ պիտի անեմ։ Այդ մարդուց անհնար է ազատվել։ Տասը անգամ բաժանվել եմ, էլի եկել-ոտքերս է ընկել։ Եղբայրներս մեռան իրենց տանել-բերելով։ Ես էլ պայման եմ դրել. կամ ես, կամ՝ երեխաներդ։ Երեխի համար գլուխն իրենը չի։ Դե, ես էլ որոշեցի երեխա ունենալ։

— Անօրինակա՞ն։

— Էդ էր պակաս. եղբայրներս ծեծելով զգաս կտանեն։ Մի թող կնոջից ապահարզան ստանա։ Ա՛յ մարդ, զոռով ամուսին պահել կլինի՞։ Աբոն ասում է, որ երբեք չի սիրել այդ կնոջը։ Ուղղակի նույն գյուղից են, ծնողները գնալ-գալ են ունեցել, ամուսնացրել են։ Կնոջը որ տեսնես... Քառասուներ-բեք կիլո հազիվ լինի, թուխ, անշնորհք, փնթի։ Քանի անգամ Աբոյի սառոշկեն ես եմ լվացել...

Վանուհին չուզեց ասել, որ ինքը հաստատ աղբյուրից գիտե, որ Ալբերտի կինը և՛ դեղեցիկ է, և՛ մաքրասեր, և՛ սիրով են նրանք ամուսնացել։ Նրանց հարաբերությունները վատացել են Սուսաննայի հայտնվելուց հետո։

— Ուղղակի Աբոն խղճում է ու չի կարողանում միանգամից հեռանալ։

Չէ՛, Սուսաննայի հետ զգույշ պիտի վարվել. մեկ էլ տեսար տանդ գաղտնիքը աշխարհով մեկ արեց։ Շատ տներ մրտնելով, իր քաղցր (դուցե և կեղծավոր) լեզվով սեփականել է բազում բարեկամների, ծանոթների ու գործընկերների ընտանեկան գաղտնիքներ՝ իրավունք ձեռք բերելով շատ հարցերում իր կամքը թելադրելու նրանց։ Մի ուրիշ աղբյուրից էլ է օգտվում իմանալու համար այն մարդկանց ծածուկ ելուզմուտները, որտեղ չի կարողանում թափանցել. մտերիմ է ձևվանում սրանց վարորդների հետ։ Իսկ ինչո՞ւ չգիտեն ծառայողական մեքենաների վարորդները...

Երկար ատրինների քարտուղար լինելը Սուսաննային ինչպիսի՞ հնարավորություններ է տվել բազմաթիվ գործեր կարգավորել, լավ կամ վատ վերաբերմունք ստեղծել ցանկացած մարդու նկատմամբ։ Մի խոսքով, քիչ չեն այն խնդրարկուները, որոնք տեղակալի մոտ մտնելուց առաջ նրա խորհուրդն են հարցնում։

Ահա թե ինչու Սուսաննային կոչում էին նաև Ջամիղամ,

այսինքն՝ տեղակալի տեղակալ և առանց քաշվելու, իհարկե, մոտիկ մարդիկ, մոտենալով նրան, հարցնում էին.

— Ջամիղամ, մոտը մարդ կա՞։

— Հա՛, ջանիկս, հիմի ես կմտնեմ ու էդ մարդուն չը՛ը՛Ն։— և ծիծաղում էր իր մատների շարժման վրա։

Մարդո՞ւն էլ երկու մատով դուրս վանգեն։

Մարջանյանն ասում էր, որ այդ կեղծավոր լեզուն Սուսաննան իր մորից էր վերցրել, այդ պատճառով էլ ոչ իր հեռավոր բարեկամուհուն էր ուզում տեսնել, ոչ էլ նրա աղջկանը։

— Մարդ պիտի բա՛խտ ունենա, բա՛խտ, Վանուհի ջան։

Վանուհին շատ լավ գիտեր, որ Սուսաննան հեռակայում է տնտեսագիտականում և կուրսից-կուրս է փոխադրվում մի-այն բաժնի վարիչ Աբոյի ջանքերով։ Շատ դեպքերում ատեստատների գրքույկը նրա գրպանում էր լինում։

— Բախտ որ ունենալի, բարձրագույն կրթությամբ քարտուղարուհի՞ կաշխատեի։ Տեսնենք, Աբոն ուզում է մի ուրիշ բաժնի վարիչ դասավորել։

— Բայց հիմա գործդ թեթև է, չէ՞։

— Բան չունեմ ասելու։ Երբ ուզում եմ, տուն եմ գնում։ Աբոյի Ջուլիկը, զանգահարում է մարդուն, թե իմ կարիքն ունի։ Ես էլ Աբոյիս հետ կամ ռեստորան եմ գնում, կամ քաղաքից դուրս։ Աղջի՛, ռեստորան շատ եմ սիրում. դա էլ իմ թույլ տեղն է։

— Բա Ջուլի՞ին ինչ օգտակար ունի։

— Հե՛չ, մեկ-մեկ գնում եմ, խմորեղեն եմ թխում։ Տղայի հարսանիքի թխվածքներն ո՞վ է անելու։ Ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես։ Ես համ ձեռքերս եմ լվանում, համ՝ երեսս։ Շնորհքի հարց է, Վանուհի ջան։ Դե, Սոնայից ասա, տեսնո՞ւմ ես, թե չէ։ Շատ եմ կարոտել։

— Որտեղի՞ց,— տխուր հառաչեց Վանուհին։— Միայն երազում եմ տեսնում, ամեն գիշեր։ Եղիշեն արգելել է։

— Իսկ դու ինչի՞ ես լսում։ Թաքուն գնա։

— Ո՞նց կլինի։ Չէ՛, իսկույն կրոնվեմ։

— Ուզո՞ւմ ես այնպես անեմ, որ Եղիշեն գլխի չընկնի։

— Չէ՛, չէ՛։ Թող մի քիչ էլ ժամանակ անցնի, դուցե խաղաղվի։ Վերջերս շատ է ինքն իր հետ մնում։ Ամբողջ օրը երկու բառ չի փոխանակում հետս։

— Գլխի եմ ընկնում, որովհետև Եղոյանն էլ առաջվանը չի։ Նշանդրեքի քանդվելը սառնություն է մտցրել երկուսի միջև։ Առաջվա նման Մարջանյանը ոչիսկով չի մտնում մոտը, Եղոյանն ամեն բոպե չի կանչում...

— Որ էդպես շարունակվի, Եղիշեն դուրս կգա... Նա շատ վեհանձն հոգի ունի։

— Գիտե՞մ, գիտե՞մ։ Երկար նստեցի, հարսիկ ջան, զանգեմ. թող մեքենան գա։

— Այդ ինչքա՞ն հեռու ես, որ մեքենայով ես գնում։

— Արոս է սովորեցրել,— ծիծաղեց Սուսաննան։— Չեմ հիշում, թե արանգաբա էրը եմ նստել։ Աղջի՛, մինչև հիմի մեարքն էլ չեմ տեսել։

Վերցրեց լսափողը, ծիծաղելով խոսեց Ալբերտի վարորդի հետ.

— Գաղո ջան, արի էնտեղ, որտեղ թողեցիր ինձ։ Զուշանետ— Հետո դարձավ տանտիրուհուն— Տեսնեմ, գուցե կարողանամ շնֆիս ու Եղիշեի հարաբերությունը լավացնել։ Իշուր էլ էգքան ծախս արեցիք, դեռ խոսակցությունն էլ վրան։

— Ի՞նչ խոսակցություն,— անհանգստացավ Վանուհին ու թեև հիշեց, որ հենց այդ խոսակցությունը լսելու համար էր կանչել ամուսնու բարեկամուհուն, որոշեց անտարբեր ձևանալ։

— Դե, Սոնայի ու Սուրենի սարքովի ամուսնության։

— Նրանք չեն ամուսնացել... Ի՞նչ է պատահել, էնքա՞ն մարդիկ են նշանը ետ տալիս։ Բա խոսք ուղելը կամ նշանդրեքն ինչի՞ համար են. որ իրար ճանաչեն... Աղջիկս նրան գնաց, ում սիրում էր։ Իսկ մենք չգիտենինք այդ մասին։ Նա հիմա շատ բախտավոր է ու կարգին էլ ընտանիք է ընկել։ Ամեն ինչ փողով չեն չափում։ Էդ խոսողները թող իրենց մասին մտածեն...

— Մի՛ ջղայնացիր, հարսիկ ջան, էդ ամեն մեկի կեղտը ե՞ս պիտի։ Տեղը որ գա, բերանս էնպես բաց կանեմ, որ աշխարհով մեկ խայտառակ կլինեն։ Բոլորի դոների բանալիներն իմ ձեռքում են։ Կարևորը Սոնայիս երջանկությունն է։ Ջառ՛...

Եվ թեթևաթայլ դուրս եկավ այն աղջիկը, որ շատ ու շատ դոների բանալիներ էր պահում իր ձեռքում և տեղին էր օգտագործում դրանք։

Վանուհին աղջկան տեսության գնաց միայն ամուսնու թույլտվությամբ։ Ավելի ճիշտ՝ ամուսնու հանձնարարությամբ։ Գնաց նորից համոզելու Սոնային տուն դառնալ։ Երկու ամիս էր անցել ամուսնությունից, բայց Եղիշեն դեռ խնդրում էր դստրիկին վերադառնալ հորենական տուն. հայրը պատրաստ է ներել նրան, մոռանալ կատարվածը, միայն թե ետ գա, միայն թե հայրը նրան ամուսնացնի այնպիսի մարդու հետ, որին ի՛նքը կցանկանա։ Եթե հիմա չի ուզում ամուսնանալ, թող չմտածի. թող առայժմ հանգիստ ապրի իր մոտ։

Ինչքան Մարջանյանին էր հաջողվել ամենազգույշ ձևով իմանալ, այդ Շամիլյաններն ապրում էին ամենահամեստ միջոցներով։ Վարդանը նոր-նոր սկսել էր դասախոսել համալսարանում, հայրն էլ արդեն թոշակի էր անցել, քանի որ մասնակցել էր հայրենականին բոլորովին պատանի հասակում ու վիրավորվել էր մի քանի տեղից։ Իրենց պահած-դուրգուրած Սոնան հազիվ թե այդ պայմաններում երջանիկ զգա իրեն։ Կարիքը կշարդի բոլոր տեսակի երազանքների ողնաշարը, կյանքը շիփշիտակ, աններող տեսքով կկանգնի նրանց առջև, հուսախաբությունը կխեղդի Սոնային, ու սա կզգա, կնկատի ամուսնու անճարակությունն այսօրվա թոհուբոհի մեջ ու կձրգտի ժամ առաջ փախչել այդ տանից, սակայն արդեն ուշ կլինի։ Ինչքան էլ զայրույթով լցված աղջկա նկատմամբ՝ Եղիշե Մարջանյանը չի ցանկանա, որպեսզի նա մոտիկից ճաշակի կարիքի համն ու հոտը։ Չէ՛, հայրն այնպիսի սիրով չի լցված Սոնայի նկատմամբ, որպեսզի թույլ տա այդքան հեռու գնա սխալված երեխան։

— Իսկ եթե այսքանից հետո մերժի իմ խոսքը, երդվում եմ իր արևով, այլևս աղջիկ չունեմ,— հանգիստ թվացող ձայնով, սակայն ներքին երիաթե անդիջում որոշումով հայտարարեց Մարջանյանը։— Դո՛ւ էլ չես հանդիպելու նրան, եղբա՛յրն էլ, հարազատնե՛րս էլ։ Գնա՛, Մենա՛կ չվերադառնաս։

Եվ գնում էր Վանուհին ահը սրտում, աղջկան վերադարձնելու կամ հավերժ կորցնելու պայմանով։ Նա լավ գիտեր, որ ամուսինն իրեն ոչ թե առաջին օրերին, այլ երկու-երեք ամիս

հետո է ուղարկում, որպեսզի այդ միջոցում Սոնան հասցրած լինի իր համար անպատկերացնելի կյանքը ճաշակել։ Այդ ամիսներին կարիք ասած ճիվաղն իր կապտականաչ կերպարանքը արդեն ցույց տված կլինի։ Այդ պատկերն ավելի վաղ, ավելի սոսկալի է երևում ամբողջ կյանքն ապահովության մեջ ապրածի համար։ Եթե Վանուհուն իսկապես հաջողվի ետ բերել աղջկան, Եղիշեն ինչ-ը չի տնի նրա համար։ Ահա այդ անելիքն էլ այն մագնիսը կլինի, որն իրեն կձգի ամենահաջող, ապահովված փեսացուներին։ Թող ընտրի Սոնան ում ցանկանում է։ Իսկ ինչ ամուսնացած լինելուն է վերաբերում, ապա դա հիմա դատարկ բան է համարվում։ Ո՞վ է այսօր ուշադրություն դարձնում այն բանին, թե աղջիկն ամուսնացած եղե՞լ է, թե՞ պահպանվել է յոթ դռների ետևում։ Ասենք հիմա ո՞ւր է դռների ետևում պահված աղջիկ։

Վանուհին ուշքի եկավ այն ժամանակ, երբ բարձրացել էր երկրորդ հարկ ու կանգնել մի դռան առջև, որի վրա գրված էր Շամիլյան ազգանունը։ Սիրտն ուղղակի դուրս էր թռչում տեղից։ Սպասեց մի բոպե, շունչ առավ, մաքրեց ճակատի խոնավությունն ու սեղմեց զանգը։ Դուռն էլ մի շատ սովորական, սպիտակ նեկով ծածկված դուռ էր։ Դռնե դիմացինի նման մանրատախտակ ձողիկներով պատած լիներ։ Միայն մաքուր էր։ Իսկ այդպիսի զանգի ձայն Վանուհին մի քսան տարի առաջ էր լսել։

Ոտնաձայն մոտեցավ ու շեմքում երևաց այն երիտասարդը, որին Վանուհին տեսել էր միլիցիայի բաժանմունքում։ Ընկալելով տեսածը՝ արյան հոսքից ակնթարթաբար շիկնեց երիտասարդը, շփոթությունից չհասցրեց ժպտալ (կամ չցանկացավ), կողմ քաշվեց ու հազիվ ասաց.

— Բարև ձեզ, համեցե՛ք... խնդրե՛մ...

Վանուհին չհիշեց, ինքը բարևե՞լ էր, թե ոչ, միայն գլխի թեթև շարժումով իբր պատասխանեց բարևին ու ներս մտավ։ Ներկը մաշված պատին կախիչ էր փակցված, վրայից կախված էր Սոնայի գարնանային վերարկուն, որի տանելը Վանուհին չկիսեր։

— Սոնա՛,— դեպի հյուրասենյակ շրջվելով՝ ձայնեց Վարդանը։— Մամադ է։

— Ի՞նչ,— ներսից լսվեց Սոնայի ձայնը։— Ո՞վ է...

Վանուհին հենվեց կախիչի պատին. ուրեմն իսկապես իր աղջիկն այդ տանն է ապրում, այդ խեղճ տանը, ինչպիսին պատկերացնում էր ամուսինը։

— Մամա՛դ...

Վայրկենաբար հայտնվեց Սոնան, ո՛չ, Սոնայի նման մի աղջիկ, որ նկատելով ներս մտածին, ճիչով ընկավ նրա տարածած ձեռքերի մեջ.

— Մա՛մա... մա՛մա...

— Աղջի՛կս... ցավդ տանե՛մ, այս ի՞նչ ես դառել...

Շվարած նորափեսան ընկրկեց՝ նրանց չխանգարելու համար։ Վանուհին համբուրում էր դստրիկի այտերը, ճակատը, աչքերը, քթիկը, ձեռքերը, ուր պատահեր։ Հետո ետ էր քաշվում, աղահաբար ու թափանցող հայացքով նայում էր անուշիկ կերպարանքին ու նորից համբույրի տարափ տեղում վրան։

— Ո՞նց եմ դիմացել... Ո՞նց եմ ապրել... Ո՞նց եմ կարոտել... Չէ՞, չես նիհարել, չե՛ս փոխվել... Սկզբում այդպես երևաց...

— Նե՛րս մտեք,— անվստահ առաջարկեց Վարդանը։

Մի վայրկյան Վանուհին նայեց նրան. ուրեմն այս խարտյաշ մորուքով, խաժ աչքերով, որոնց մեջ առայժմ միայն թախիծ կար, ապնվական արտահայտությամբ տղան իր Սոնայի ամուսի՞նն է... Վանուհին դժկամությամբ համաձայնեց, որ իր դուստրը հազիվ թե զմբախտ լիներ նրա հետ... Ինչևէ, Սոնային պետք է անպայմա՛ն տուն տանել...

Այդպես գրկված էլ նրանք սենյակ մտան։ Վանուհին ապշահար շուրջը նայեց ու անհարմար զգաց այդտեղ գտնվելու համար. այդ ի՞նչ ողորմելի կահավորություն է։ Այդպիսի բնակարանում Վանուհին երբեք չէր եղել։ Միակ շքեղությունը, որ աչքի էր ընկնում, ամբողջ պատը բռնած մի հայակապ գորգ էր, որի նմանը ոչ մի տեղ չէր հանդիպել։ Այս ու այնտեղ, հասարակ ծաղկամաններով վարդեր կային, որոնց բուրմունքով էր լցված տունը։ Սակայն ո՛չ այդ ծաղիկները և ո՛չ էլ հազվագյուտ գեղեցիկ գորգը ասացին, որ Սոնան իրոք երջանիկ է։ Սոնայի բախտավորությունը մատնեցին հենց նրա աչքերի տակայծումը, ինչքան էլ խոնավ էին դրանք

քիչ առաջվա հանդիպումից։ Այդ էլ Վանուհին չուզելով ընդունեց։

Մայր ու աղջիկ նստեցին բազմոցին։ «Մի՞թե ձեռնունայն եմ վերադառնալու»,— Սոնայի մազերը շոյելով՝ մտածում էր Վանուհին։

— Մի բաժակ ջուր կարելի՞ է,— շվար կանգնած փեսային դարձավ Վանուհին։

Վարդանն խոհանոց գնաց։ Արևի վերջին շողերը մի անթերի կիսադեմ էին նկարում ներկը խունացած պատին։ Սոնայի դեմքն էր իր անհյութեղեն, քնքուշ մաշկով։ Նրա թանձր թարթիչներն անգամ ուժ չունեին տակից ճառագայթող երջանկությունը թաքցնելու։

— Իրո՞ք բախտավոր ես, բալա,— կարծես դժգոհ հարցրեց մայրը։

— Հա՞ տ... Ավելին չեմ պատկերացնում։

Վանուհին ուշադիր նայեց աղջկա հագուստներին։

— Շորերդ կուղարկեմ... Ռուբենը կբերի... Ես էլ քեզ կգանգահարեմ։

— Հայրիկից ծածո՞ւկ ես եկել,— ինչ-որ կանխազգալով՝ հարցրեց Սոնան։

— Նա ինքն է ուղարկել իմանալու, թե ինչպես ես։

Վանուհին թաքցրեց նպատակը։

— Ես գիտեի, որ նա բարի սիրտ ունի,— հուզմունքը ծածկեց Սոնան։

Վարդանը սպասում էր նա տանելու բաժակը։

— Շնորհակալ եմ, տղաս,— չկարողացավ շոսել Վանուհին։

— Վարդան ջան, կարո՞ղ ես սուրճ դնել։

— Դե, իհարկե,— ուշքի եկավ երիտասարդը։— Ներեցեք, ամեն ինչ այնքան անսպասելի էր...

Սոնան ուղիղ նայեց մորը.

— Դե ասա, մամ ջան, ձեզ շա՞տ տանջեցի... Նիհարել ես... Նամակս կարդացի՞ք...

Վանուհին գլխով արեց, նորից նայեց ու ցածր հարցրեց։

— Քո սենյակն ունե՞ս։

— Իհարկե։ Վարդանը շուտով վերանորոգելու է տունը։ Մինչև իմ գալն էր անելու, բայց այնպես ստացվեց...

— Ի՞նքն է անելու,— զարմացավ մայրը։

— Ինչո՞ւ մենակ ինքը։ Մենք՝ երեքով։

Վանուհին ձեռքը սրտին տարավ.

— Խե՜ղճ երեխաս... Այս ո՞ւր ես ընկել... Ես չե՛մ դիմանա...

— Ի՞նչ կա չդիմանալու, մամ ջան։ Ես քեզ այնքա՞ն բան ունեմ ասելու։

— Ես գրադարան պիտի գնամ,— սուրճը սեղանին դնելով՝ ասաց Վարդանը։— Կներեք...

— Հասկացող տղա է,— շշնջացրեց Վանուհին։— Բայց ի՞նչ անեմ, որ հայրդ... Գիտե՞ս, որ Սուրենն ամուսնանում է։

Սոնան չհարցրեց, թե ում հետ։ Նա ասաց.

— Քող բախտավոր լինի։ Մեղք է։ Ես նրան չեմ սիրել, ի՞նչ անեմ։ Սերը, մամ ջան, գեղեցիկ զգացում է, սերը ոոոր մությամբ չեն տալիս...

— Իսկ հայրն ո՞ւր է։

— Գնացել է Ջերմուկ հանգստանալու։ Որ իմանաս ի՞նչ մարդ է, ի՞նչ բանիմաց, ինչքա՞ն խելացի ու նրբանկատ, ինչքա՞ն կարդացած։ Աշխարհի գրականությունն ու պատմությունը գիտի։ Ի՞նչ զրույցներ ենք ունենում երեկոները, թեյի սեղանի շուրջ։ Լսելուց չեմ հագենում։ Տասնվեց տարեկան կամավոր է գնացել, հասել է մինչև Բեռլին։ Ուշ է վերադարձել, ուշ էլ ամուսնացել է... Գնանք մեր սենյակը ցույց տամ։ Առաջ հայրիկի սենյակը։ Տեսնո՞ւմ ես, այս ամբողջ գրքերը հայր ու տղա կարդացել են։ Վարդանն այստեղ է պարապում։— Նա պահարանից մի գրքույկ հանեց ու մեկնեց մորը։— Սա Վարդանի առաջին գրքույկն է։ Ասում են, որ տաղանդավոր բանաստեղծ է։ Ես էլ եմ տեսնում։ Մեծ ապագա ունի։ Նա այստեղ է պարապում։

Բացի գրադարակներից, որ բռնել էին ամբողջ պատը, մի գրասեղանից, մի հասարակ մահճակալից ու աթոռից ոչինչ չկար այդ ընդարձակ սենյակում։ Վարագույրն էլ էժանագին նայլոնից էր։ Գրասեղանի վերևում երիտասարդ մի գեղեցիկ կնոջ նկար էր կախված։

— Ե՞րբ է մահացել,— հիասթափությունը չմատնելու համար հարցրեց Վանուհին՝ հայացքը չկարելով կնոջ երկնա-

գույն աչքերից, ուր ծովի խոնավություն, ծովի խորություն կար։— Վարդանը մոր նման է։

— Հորն ավելի է նման։ Վարդանը երեք տարեկան է եղել...

— Խե՜ղճ...

— Ո՞վ է խեղճը։

— Երկուսն էլ... Երեքն էլ։ Մեծացել է առանց մոր խնամքի։ Իսկ ինչո՞ւ հայրը չի ամուսնացել։

— Չի ուզեցել երեխային խորթ մոր ձեռք տալ... Եվ դիտե՞ս, մամ, հայրիկն այս ամբողջ տարիներին նրա հետ է խոսել, խորհրդակցել է կնոջ հետ։ Միշտ մտածել է, որ երբ ինքը այս սենյակում է եղել, կինը խոհանոցում է գտնվել, որ ինքը խանութ է գնացել, որովհետև կինը լվացք անելիս է եղել... Եվ այսպես՝ տարիներ։ Նա հիմա էլ է կնոջ հետ։ Ուղղակի պաշտել են իրար։ Սրանից հետո կարո՞ղ էր ամուսնանալ։ Հազվագյուտ բախտավոր ամուսիններ են եղել...

— Եվ կնոջ ոչ մի թերությունը չի՞ հիշել։

— Երբ ես էլ մի անգամ հարցրեցի, նա ասաց, որ սիրած մարդուն գնահատելիս, մանավանդ որ նա այլևս չկա, պետք է մոլորվել միայն նրա թերությունները հիշելիս։

— Լավ է ասել։ Իսկ ինչի՞ց է մահացել։

— Սրտից։ Ցերեկով քնել է՝ գլուխն ամուսնու ծնկանն ու չի արթնացել...

— Բախտավո՞ր մահ,— սրտանց արձագանքեց Վանուհին։

— Իտալական մեծ նկարիչ Ռաֆայելը նույնպես մահացել է սիրած կնոջ գրկում։

— Մեռնելիս էլ մարդ պիտ բախտ ունենա։

Երբ մտան նորապսակների սենյակը, Վանուհին հապիվ պահեց փղձկոցը.

— Բա դու սրա՞ն ես արժանի... Հայրդ մի լավ կահույք կուղարկի։

— Ոչի՛նչ պետք չէ, մամ ջան, ամեն ինչ Վարդանը կառնի իր աշխատանքով։ Սա ինձ համար ամենագեղեցիկ դղյակն է...

Ամեն տեղ շրջելուց հետո Վանուհին մտքում խոստովանեց, որ այդ բնակարանը ողողված էր լույսով, արևով, այդ-

տեղ սրտաբացություն կար, ու ոչ ոք չէր համարձակվի ճղճիմ հարցերի շուրջ զրույց բացել այդ տանը։

— Դու նրան հայրի՞կ ես ասում։

Վանուհին ներքին խանդից այդ հարցը չտվեց։ Վարդանի հայրն արդեն անծանոթ հարազատի էր նման։

— Առաջին օրից։ Կներես, մամ ջան, բայց երբեմն այնպես է թվում, թե ես այս տանն եմ ծնվել կամ այստեղ պիտի ծնված լինեի։ Ճիշտ է, դուք իմ ծնողներն եք, բայց իմ մանկությունն անցել է այս տանը։ Այդ ծանրաբարո ու պատկառելի մարդը նաև իմ հայրն է։ Ինձ միայն «աղջիկս» է կանչում։ Եկածս օրից առանց ծաղիկների տուն չի մտել։ Նա ասում է, որ ես իրենց տոնական օրն եմ։ Ո՛չ, այս ծաղիկներն արդեն Վարդանն է բերել։ Այդպիսի հոր զավակն ուրիշ կերպ չի կարող լինել... Երբ հայրիկը որևէ բան է պատմում, հնարավոր չէ մի բոպե թեկուզ կտրվել, կամ անփույթ նստել, կամ ուշադրությունը շեղել ուրիշ բանի վրա... Ուրիշ են մեր երեկոները...

Վանուհին առաջին անգամ կյանքում (կամ վերջին տասնրհինգ տարում) զգաց այն հարգանքը, որ շուրջը կարող էր ստեղծել տանտերն իր պարզակենցաղ կյանքով, բարքերով, իր անցած ամբողջ ճանապարհով։

Նորից մտան հյուրասենյակ։ Վանուհին նորից շուրջն էր նայում. մայիսի ձյան պես հալվում, մաշվում էր հոգում նստած թշնամանքն այդ մարդկանց նկատմամբ։

— Ճաշ ո՞վ է պատրաստում։

— Մինչև Ջերմուկ գնալը՝ հայրիկը։ Հիմա Վարդանի օգնությամբ ես եմ պատրաստում։

— Ուրեմն դու կարողանո՞ւմ ես։

— Մարդ ի՞նչ չի կարող անել, եթե ցանկանա։ Նայիր այս փայտյա արձանիկներին. Վարդանն է պատրաստել։ Նա ավարտել է նաև նկարչական ուսումնարանը։ Սպասքի այս պահարանը՝ հայրիկը։ Վարագույրներն էլ է հայրիկը կարել։ Նույնիսկ թխվածքներ է պատրաստում...

— Բայց այս գորգի լվանալը շատ դժվար կլինի։

— Մենք սա չենք լվանում։

Եվ Սոնան այնպիսի քրքիջ բարձրացրեց, որ Վանուհին վախեցած նայեց նրան.

— Սոնա՞, ի՞նչ պատահեց։

— Այս գորգը... այս գորգը...

— Ձերը չի՞,— սառած նկատեց Վանուհին։

— Մերն է,— ծիծաղի միջից հազիվ ասաց Սոնան։— Բայց սա չի կարելի լվանալ։

— Ինչո՞ւ։

— Տո՛ւր ձեռքդ, մի՛ վախեցիր, մո՛տ եկ, շոշափի՛ր։

Գորգին կպչող մատները Վանուհին այնպես փախցրեց, ինչպես էլեկտրական հոսանքից։ Հետո ինքը մոտեցրեց, շոյեց ողորկ երեսը, ապշած նայեց...

— Չեմ հասկանում... Սա ի՞նչ է... Տեր աստվա՞ծ, չի կարող պատահել... Մի՞թե...

Նա քայլը ետ դրեց, նայեց ուշադիր, նորից մոտեցավ, շոշափեց կրկին ու թուլացած ընկավ բազմոցին՝ աղջկա կլանող հայացքի տակ։

— Տեսնո՞ւմ ես, թե ինչ շնորհք ունի Վարդանը։ Մի անգամ, զրույցի ժամանակ հենց այնպես ասացի, թե ես գորգ շատ եմ սիրում։ Եվ ի՞նչ է արել. ճարտարապետ ընկերներից ռուլոնով ընտիր թուղթ է բերել, փռել է հատակին իր ուզածի չափ, կպցրել իրար, Իշևանից բերել է վերջին նմուշը և հատակին փռված՝ օրեր շարունակ նկարել է այս գորգը։ Իմ գալուց մի երկու օր առաջ է վերջացրել ու հայրիկի հետ կախել պատից։ Երբ առաջին անգամ տեսա, իմացա, թե նոր են գնել։ Իսկ երբ մոտեցա ու շոշափեցի, հիշա՞ ք օրն ընկա, իսկ Վարդանն ու հայրիկը երկար ժամանակ չէին կարողանում հանգստանալ ծիծաղից։ «Սա իմ առաջին նվերն է քեզ»,— ասաց Վարդանը։ Իսկ ես ասացի, որ սա չեմ փոխի իսպանական ամենաթանկ, ոսկեթել գորգելենի հետ...

Վանուհին չէր էլ նկատում այտերից իջնող արցունքները.

— Այս ի՞նչ ամուսին ես ընտրել, աղջի՛կս... էլ ի՞նչ խոսեմ։— Հետո նա երեսն առավ ափերի մեջ ու հազիվ մրմնջաց։— Ուրեմն ես մենա՞կ եմ տուն դառնալու... Ո՞նց եմ հորդ հասկացնելու, որ դու ամենաերջանիկ կանանցից մեկն ես աշխարհում... Որ մենք ոչ մի հիմք չունենք այս աղալին մեղադրելու...

Սոնան նստել էր մոր կողքին ու շոյում, փաղաքշում էր նրան։

— Դու հայրիկիս ասա, որ ինքը վաղուց է, ինչ մարդկանց տեսնում, ճանաչում է ոչ թե այնպես, ինչպես նրանք կան, այլ այնպես, ինչպես ինքն է պատկերացնում։ Դու նրան պատմիր հենց թեկուզ այս գորգի մասին, այս արձանիկների, այս ծաղիկների մասին, ասա, որ ամեն երեկո մեր զրույցներով գնում-թափառում ենք աշխարհի դեղեցիկ, անցյալ ունեցող քաղաքները, նայում ենք հազվագյուտ հուշարձաններին։ Մի օր Հռոմում ենք լինում՝ վեր ու վար անելով Կոլիզեի հաստաբետ աստիճաններով, մի օր շրջում ենք Աղթամարի վանքի բոլորը, մի օր Աստվածամոր տաճարն ենք մըտնում որպես նորապսակներ, երբեմն գիշերները Նեապոլի ջրերում ենք լողում՝ ականջներս գոնդոլավարների նեոպոլիտանական երգերին... Երեկ Մալթայի փոքրիկ, շատ փոքրիկ այդիներում էինք մեռ գալիս... Ասեմ նաև, որ Վարդանը երեք ամսում է դրամ հավաքել ինձ վերարկու գնելու համար...

— Վա՛յ ինձ, իսկ քո վերարկուները պահարանում են։

— Ոչի՞նչ։ Ասա հայրիկին, որ քնելուց առաջ ամեն երեկո ես աղոթում եմ, ասելով՝ ասված, ներիր իմ երջանկությունը, որը ուրիշ հասցեով ես ուղարկել, բայց պատահաբար ստացել եմ ես...

Իսկ Վանուհին այլևս չէր լսում. ցնցված մինչև հոգու խորքը՝ պիտակակ իր գնալիք ճանապարհի մասին էր խորհում։ Նա դստրիկից բաժանվեց միանգամայն փոխված, ասես հոգից կտրված, անէացած... Շատ լավ գիտեր, որ այդ ամենը լսելով՝ ամուսինը մի հարց էր տալու, թե ինչքա՞ն եկամուտ է մտնում այդ տունը։

— Այդ հարցն արդեն չէր կարելի տալ,— կպատասխանի Վանուհին։

Ը

Ամեն ինչ տակնուվրա եղավ Մամբրե Եղոյանի տանը, ամեն ինչ շառավիղից դուրս թռավ այն օրից, երբ շքեղ ու ասելիք դարձած հարսանիքից հետո տուն բերեցին Ռիտային։ Ճիշտ է, և՛ Մամբրե Տիգրանիչը, և՛ տիկին Ջուլիկը առանձնապես չէին հավանում Գրիգոր Մարտինիչ Խանոյանի դատերը, բայց դե հարյուր անգամ չափ ու կշեռք անելուց հետո

ևկել էին այն եզրակացության, որ մեր օրերում քիչ բան չէ մինիստր խնամի ունենալը։ Աշխարհի ծայրը երկար է, իրենք էլ՝ հասարակ մահկանացու։ Մինիստրները, համենայն դեպս, հասարակ մահկանացու չեն։ Մի՞թե հոր թևերով չէ Ռիտան թևկնածուականի վրա աշխատում։ Ինչ խոսք, այդ աղջիկը հմայք չունի, բայց եթե լավ հոգի ունենա, տարիների ընթացքում կդառնա սիրելի (ամուսնու համար)։ Հենց այդպես էլ բացատրում էին Սուրենին։ Սա լուռ լսում էր ու ոչ մի խոսք չէր գտնում հակադրվելու։ Իսկապես, եթե նա որևէ մեկի սիրեր, կառարկեր, բայց Սոնան ամուսնացել է ու աշխարհի բոլոր աղջիկները միևնույն են նրա համար։ Եթե ծնողները շտապում են այդ հարցում, թող լուծեն, ինչպես իրենք են ցանկանում։ Գուցե իսկապե՞ս նրանք իրավացի են. մի՞թե քիչ են այն ընտանիքները, որոնք ստեղծվել են ոչ փոխադարձ սիրո վրա։ Առաջներում ամուսնացողները նույնիսկ հարսանիքի ժամանակ էին իրար տեսնում։ Դե, իհարկե, մի հարյուր տարի առաջ երևի։ Մի՞թե այսօրվա պապերն ու տատերը նրանց զավակները չեն։ Եվ ամուսնալուծություն էլ այսքան չի եղել։ Համենայն դեպս, Ռիտան շատ ու շատ աղջիկներից է արժանավոր (սա, արդեն Ջուլիկը որդու ականջն էր լցնում ամեն օր) և նրա հետ ամուսինը չի ամաչի հասարակության մեջ երևալիս։ Ճիշտ է, փայտի վրա էլ նման շորեր որ հագցնեն, դեղեցիկ կերևա (սա Ջուլիկը մտքում էր խոստովանում), բայց ամուսնանալուց ու երեխա ունենալուց հետո կլցվի, շենք ու շնորհք կգա վրան։ Եթե Ռիտան բոյով մի քիչ բարձր է, ապա մնացը Սուրենինն է, որ հորն է քաշել։ Երբ Ջուլիկն ամուսնացավ, Սոզոյանի բոյը չտեսա՞վ։ Բոյից առաջ նրա գնալիք ճանապարհը, ապագա շրջապատը, միջոցները տեսավ Ջուլիկը... Հազար ու մի հարցեր կան, որ ջահելները չեն ուզում ճաշվի առնել (այս մասն էլ մայրը որդուն էր ասում)։ Գրիգոր Մարտինիչը մինիստր է, բայց ո՞ր մի մինիստրը նրան կհասնի իր հեղինակությամբ, միջավայրով, անունով, կարողությամբ։ Չէ՞, խոսքն ունեցվածքին չի վերաբերում, այլ այն հնարավորություններին, որից կարող են փեսան, և ինչո՞ւ չէ, նաև խնամին օգտվել։ Սուրենի առջև բոլոր դռներն են կրնկի վրա բացվելու (սա էլ էր Ջուլիկը տղային

ասում)։ Եթե որդին ցանկանա, կարող է դիսերտացիա էլ պաշտպանել։

Իսկ առանձին եղած ժամերին մայրը մտովի պատկերացնում էր նիհար ու բարձրահասակ, դեղին ու հարթ մազերով (հիմա ի՞նչ գույնի ու ձևի մազեր ասես, որ չկան), մանր ու կապույտ աչքերով (եթե վարպետորեն ներկի, գույնն հետաքրքիր դառնա, բայց այդ աղջիկը, կարծես դիտավորյալ, ոչ մի շպար չի օգտագործում։ Մի անգամ Սուսաննան ասաց, որ հիմա Եվրոպայում չեն քսվում, բայց ինքն էլ իր առանց այն էլ խոշոր աչքերն այնպես էր ներկում, որ լուսարձակների տպավորություն էին թողնում), նայում էր ցամաք շրթունքներով, տափակ կրծքով, նեղ կոնքերով Ռիտային, խղճում էր Սուրենին ու քիչ էր մնում խոսքը նա առներ։ Սակայն անմիջապես էլ մեջտեղ էր բերում խելոքությունը, լիզուների իմացությունը, ընտանիքի բարի համբավը, հա՛յրը—մխիթարվում էր։ Ախր Ռիտայից էլ տգեղ ու հիմար աղջիկներ կան, որոնք այնպիսի բախտի են արժանացել, որ մարդ պայթում է զայրույթից։ Ի՞նչ է, այդ տղաները կո՞ւյր են, թե՞ տղուշ։ Չէ՞, Սուրենը կերջանկանա, ու Սոնան իր աչքով պիտի տեսնի այդ երջանկությունը։ Միայն թե Սուրենը դիմանա ու համակերպվի առաջին ամիսներին, առաջին տարին։

Կհամակերպվի։ Պիտի՞ համակերպվի։

Եվ Սուրենին տարան նշանելու։ Առաջին արարողությունը վճռական նշանակություն պիտի ունենար հաջորդ քայլի համար։ Ամեն ինչ այնպես պիտի կարգավորվեր, որ խանդոյանը ոչ մի հետին միտք չտեսներ այդտեղ։

Ու սկսեցին դասավորել տանելիք նվերները։

Եկավ քավորը թարմ մեխակներից հյուսված այնպիսի մի զամբյուղով, որի նմանը Ջուլիկը ոչ մի նշանադրության կամ հարսանիքի չէր տեսել։ Նախօրոք զամբյուղի մեջ էր դրվել բյուրեղապակե մի չքնաղ գրաֆին՝ մեջը լցված ընտիր կոնյակ։ Սրա բոլորն ընտրանի բոմբոնիերկաներ, որոնք զարդարված էին խաղողի ողկույզներով, դեղձով։ Կոնյակի ոտքերի առաջ զարդեղենի հարգարժան տուփերը տեղ գտան, շորացուները, արտասահմանյան ներքնազգեստը, պայուսակը, ֆրանսիական օծանելիքը։ Երբ Ջուլիկը դիտեց, թե այսպիսի պարունակությամբ զամբյուղ ատանում են հարսանիքին, քա-

վորկինը վերևից արձագանքից, թե դրա հոակին են տանելու հարսանյաց հանդեսին։

Վերջում պարզվեց, որ այդ անսովոր զամբյուղը ոչ մի մեքենայի դռնից ներս չէր մտնելու Ինչ անել։ Միաքները շարչրկելուց հետո որոշեցին զամբյուղ-ցուցասրահը երկու տղամարդկանցով տանել՝ ձեռքներին բռնած։ Մեքենաները դանդաղ հետևեցին զամբյուղին։

Ջուլիկը հանկարծ ուշքի եկավ՝ զամբյուղը նմանեցնելով հանգուցյալի ետևից տարվող խոշոր ծաղկեպսակի։ Պակասում էր միայն փողային նվագախումբը։

— Վայ, էս ի՞նչ արեցինք, այ մարդ,— ծնկներին տվեց ապագա սկեսուրը— Նայի՛ր, անցորդներից մեկը գլխարկը հանեց...

— Լա՛վ, հանգստացիր,— ըստ երևույթին նման մի բան էլ Եղոյանի մտքով էր անցել— Աստված վերջը բարին անի։

Մինչև տեղ կհասնեին, Եղոյանների միջից խսպառ հոգս ցնդեց ուրախությունը։

Գուցե հենց այդ զամբյուղի պատճառո՞վ էին խանոյանները անժպիտ, սառը։ Նրանք առանց ոգևորության էլ ընդունեցին խնամիներին։ Ոչ մեկը չզարմացավ տարած նվերների վրա ու այնպիսի սեղան էին պատրաստել, որի տասնապատիկ պատասխանը Եղոյանի համար դաստարկ բան էր։ Տիկին Ջուլիկը դա վերագրեց անշնորհքության, ամուսինը՝ դիտավորության։ Ռիտան հագել էր իր եղած զգեստներից մեկը ու ոչ մի շանք չէր թափել մի քիչ հետաքրքիր երևալու։ Գուցե և թափե՞լ էր, ո՞վ գիտե։

Այս անգամ Սուրենը սև կոստյումով էր՝ արտաստահմանյան ժաբոյով. այդ օրն ավելի փոքրամարմին էր երևում։ Հարմենայն դեպս, այն տպավորությունն էր ստացվում, թե նշանադրությունը միայն Սուրենին էր վերաբերում։ Ռիտան կողքին էր, բայց էլի նա մենակ էր երևում։ Հարսը շատ ավելի ընկերուհիների հետ էր խոսք փոխանակում, քան՝ փեսայի։ Ջուլիկն ուզղակի եփվում էր մեջը. ախր իր տղան ո՞ւմ էր քաշել այդքան անհամարձակ, անվստահ, անճար...

Տանտերը շատ կարճ խոսքով բարի մաղթեց հյուրերի գալուստը, շնորհավորեց երիտասարդ զույգին, կինն էլ զգույշ ու չափված մի համբույր տվեց փեսայի ճակատին, աղջկան դրդ-

ելց ու հետացավ՝ երևի ամեն ինչ ավարտված համարելով։ Հավաքույթի ոգին մնացին Սամսոն Երեմիչն ու սիրուհին։ Հարսի հարազատները շատ քիչ էին, եղածներից ոչ մեկն էլ չէր խոսում սահեղծվելիք ընտանիքի մասին։ Երկրի վրա հայտնված ինչ-որ թռչող ափսեի շուրջն էին վիճում, կարծես գիտական ժողովում լինեին։

— Որ չամալեի, տարածս կվերցնեի, կթքի ու դուրս կգալի,— վերադառնալիս մեքենայի մեջ՝ արցունքներին հանձնված՝ գանգատվում էր տիկին Ջուլիկը— Պրոֆեսոր էին դառել գլխներիս։ Մի ուրախ երես չտեսա...

— Կարող է մարդկանց բան էր պատահել,— արդարացման եզրեր էր փնտրում Եղոյանը։ Բայց երբեմն ափերի մեջ էր առնում գլուխը՝ ասես մատների տակ հաշվելով քներակների զարկերի քանակը— Ես էլ նկատեցի, որ խնամիները չէին կարողանում ոչ կարդին ուրախանալ, ոչ կարգին խոսել։

— Ինչի՞։ Թռչող ափսեի մասին լավ էլ վառված կարող էին խոսել։ Կարծես դրա համար էինք հավաքվել։ Սամսոնը լիներ, սգի սեղան կգառնար։ Ոչ թե նշանդրեքի սեղան էր, այլ մեռելահաց էին դրել մեր առաջ։ Ախր սիրտս վկայում էր. էդ անտեր զամբյուղը, էն անցորդի գլխարկ հանելը... Ա՛յ մարդ, կարող է՞ սիրտները կախ էին, չէին ուզում։

— Չէին ուզում, թող չհամաձայնեին, սեղան չգցեին։ Դա էլ հո վիրևից չէի՞ն հուպ տվել,— պոռթկաց Մամբրե Տիգրանիչը՝ փոքր մարմինն ավելի խրելով փափուկ նստարանի մեջ— Մեկ մտածում եմ, թե կարո՞ղ է մեր զավակի հանդիպումն իր ճակատագրի հետ զոռով արագացնում ենք մեր ձեռքով։ Մի՞շտ ենք վարվում այս քայլն անելիս։ Գլուխս պայթում է մտքերից։

— Է՛, ի՞նչ իմանանք որտեղ է բախտը, որտեղ՝ դժբախտությունը։ Իսկի ասված ինքն էլ չգիտի,— հառաչելով եզրափակեց տիկին Ջուլիկը— Չէ՛, էլի հույսներս աստծուն սիրտի թողնենք։

— Կամաց քշիր, բալաս, խելքս գլուխս հավաքեմ։

— Տեսա՞ր, որ հենց մենք վեր կացանք, մեզնից շուտ դուռանը մոտեցան։ Մի բերան չասեցին, թե ինչո՞ւ ենք շտապում...

— Ա՛յ կնիկ, մեկ էլ մտածում եմ, թե Սամսոնի պատճառով էին քթները կախել։

— Որ սիրուհու հետ էր եկե՞լ։ Ախր կնիկը տեղ տանելո՞ւ բան է։

— Կնոջը շատ են տեսե՞լ, որ իմանան, թե սիրուհին է։

— Չեն տեսել, բայց գլխի ընկած կլինեն։

— Բա որ հարցնեին, ի՞նչ էիր պատասխանելու։

— Կասեի՝ երկրորդ կինն է։ Պատասխանատու աշխատողներից շատերը երկրորդ անգամ են ամուսնացել։ Առաջինի ժամանակ հասնում են այն բարձունքին, որտեղ կինը չի կարողանում հլնել, մի տեսակ՝ համապատասխան չի այլևս ամուսնուն։ Դե, ամուսիններն էլ ամուսնանում են երկրորդ անգամ...

Ջուլիկը ինքնավստահ նայեց ամուսնուն, որին ինքը դեռևս համապատասխան էր համարում։

— Պաշտոնավորի կին ես ու մինչև հիմի գլխի չե՞ս, որ ոչ բոլոր հարցերին են, որ ճիշտ են պատասխանում։— Եղոյանն ուզեց ծխել, մեկ էլ բավարարվեց հառաչելով։— Չէ՛, երևի գլխի ընկան. ախր անասովածը շատ էր սիրուհու նման։

— Բա կինն էդպե՞ս կլինի. էդքան ջահե՞լ, էդքան անդա՞րդ, էդքան գիսկա՞...

— Ի՞նչ։

— Դիսկա՛, է՛լի, չես իմանո՞ւմ։ Այսինքն՝ շատ ժամանակակից, շատ եվրոպական, էստրադային, դիսկոտեկ։ Բերանը մինչև ականջներն էր բացում ծիծաղելիս։ Տեսա՞ր, աչքն էլ ծորայից չէր կտրում։ Դրա պարի՞լը, հագուստը։ Փաստորեն՝ կիսահագնված էր։ Իրը քիչ էր բաց, ծոծկատեղերն էլ տյուլ էր, իրը մոդա է, հա՛ղս գլխիդ...

— Արեւ վկա, հենց դրա պատճառով էին մոայլվել։

— Բայց հենց սկզբից էին անարամադիր։ Սեղանը գցելիս շատ գիտեի՞ն, որ Սամսոնը սիրուհու հետ է ներկայանալու։

— Դե թող Մարջանյանի տուն էլ տաներ, կհամարձակվե՞ր,— հանկարծ պայթացավ Եղոյանը։

— Նա գիտի՝ ում որտեղ է տանում։

— Չէ՛, մեծ սխալ գործեցինք։ Ախր ինչո՞ւ տարանք. ի՞մ եղբայրն է, թե՝ քո։ Ո՞վ է այդ Սամսոնը, որտեղից է մեզնից։

— Ա՛յ մարդ, նա՞ է կպել։ Ցուցակը կազմելիս ամենից առաջ նրա անունը գրեցիր։

— Ճիշտ ես ասում, ճիշտ։ Ինչի՞ եմ կպել դրանից, ի՞նչ ունեմ հետը,— նորից վրդովվեց Եղոյանը։— Ասենք, ես մենա՞կ եմ կպել։ Նա ու ծորան բոլոր հավաքույթներում են, բոլոր հարսանիքներում ու մեռելատներում։ Մտածում եմ, մտածում, ու ոչինչ չեմ հասկանում։ Լա՛վ, էլ չենք խոսում. հարսանիքը կարագայնենք։ Էնպիսի՛ մի ուրախություն սարքեմ, որ Սամսոնին էլ մոռանան, սիրուհուն էլ վրան։

— Հարսանիքին էլ ես կանչելո՞ւ,— վեր ցատկեց տիկին Ջուլիկը։

— Չեմ կարող չկանչել, հասկացի՛ր։ Հարսանիքին երևի կնոջ հետ գա։

— Ի՞նչ ես ասում։ Ասենք՝ կնոջ հետ էլ գա, վայ է, սիրուհու հետ էլ։ Դրանից փրկություն չկա։

— Ասածած երևի մի դուռ կբացի մեր առաջ։

— Դուռն էն կլինի, որ երկուսով էլ հիվանդանան. բարդությունը լիքը վիրուսային դրիպ,— խոսքն ավարտեց տիկին Ջուլիկը՝ ինքնագոհ թաթերն իրար վրա դնելով։

Միայն Սուրենն էր անմասնակից այս զրույցին։ Նա կարծես մտահոգված էր միայն հարազատներին անփորձանք տեղ հասցնելով։ Ի՞նչ խոսեր մի երիտասարդ, որին վերաբերող բոլոր հարցերն ու պատասխանները ծնողներն էին առաջարկում։

Մի երկու օրից մոր խորհրդով Սուրենը ծաղիկներ վերցրեց ու այցելեց Ռիտային, առաջարկեց միասին կինո գնալ, կամ քաղաքից դուրս գալ, բայց աղջիկը շատ քաղաքավարի պատասխանեց, որ ինքը համարյա ճանաչում է Սուրենին և հարկ չկա տանից դուրս գալու, որ ինքն այն տարիքում չէ, որ կինո գնալու վրա ժամանակ կորցնի։

Մամբրե Տիգրանիչ Եղոյանը հարսանիքը կատարեց իր որոշմանը հավատարիմ։ Մասնակցող հեռու և մոտ հարազատները, ընկերներն ու գործընկերները գլուխ էին պայթեցնում գտնելու համար այն գաղտնիքը, որը Եղոյանին մղում էր նման ձեռնաբացության։ Եղոյանների փայփայած գաղտնիքը ոչ միայն անիմաստ դարձավ, այլև սրբեց ու տարավ եղած ուրախությունն էլ այն օրից, երբ նորահարսը այդ տու-

նը ոտք դնելուն պես՝ փակվեց իր ննջարանում։ Հենց սկզբից իր վարվելակերպով հասկացրեց տանեցիներին, որ նրանց վարքն ու բարքը, հետաքրքրությունների աշխարհը, նիստ ու կացը բնավ չի հետաքրքրում իրեն։ Այնպես որ, լավ կլինի, եթե քիչ խանգարեն, քանի որ մի քանի ամսից պիտի ավարտի իր դիսերտացիան։ Իհարկե, հենց այդպես՝ շիտ-շիտակ բառերով չասաց. ուղղակի նրբանկատորեն հասկացրեց, որ ինքը զբաղված է լուրջ գործով։

Առաջվա նման Սուրենը նորից մենակ մնաց և մի տեսակ ամայում էր դրանից։ Իսկ երբ մի անգամ տիկին Ջուլիկը տեսավ, թե իր տղան ինչպես մտավ իր ննջարանը, ձեռքը սրտին տարավ. Սուրենը դուռը զգուշորեն թակելուց հետո սպասեց պատասխանի ու ներս մտավ միայն նրանից թույլտվություն ստանալուց հետո։

— Մեղա՛, քեզ ասված, դո՛ւ փրկես երեխայիս։ Եվրոպացի էլ դառանք...

Ռիտայի գալուց հետո եղբայրները ճաշում էին հյուրասենյակում։ Եվ Ռիտան միայն այդ ժամանակ էր հայտնվում տանեցիներին։ Իսկ որպեսզի հեռուստացույցից էլ չշգռվի, իր համար վիդեո էր բերել ու դրել ննջարանում։ Դրանից ոչ ոք չէր օգտվում, քանի որ Ռիտան ոչ ոքի չէր հրավիրում։ Հեռախոսի մի սարք էր դրել ննջարանում և զանգահարում էր ում ուզում էր, երբ ուզում էր։ Նրան այցելում էին ընկերուհիները, սուրճ էին խմում, զրուցում էին։ Իսկ երբ Սուրենի 'քույրը՝ Նանան որևէ պատրվակով մտնում էր այնտեղ, զրույցը շարունակվում էր անգլերեն։ Նանան առանձնանում էր ու լաց լինում վիրավորանքից։

Չէ՛, արդյունքը չարժեր թափած ատոապատքին։

Այս մտածումներով էր տարված տիկին Ջուլիկը, երբ անձրևից լրիվ թրջված Նանան ներս մտավ։ Մայրն արագ-արագ հագուստներ տվեց փոխելու նա մի թառանչ արձակեց՝ աղջկա գիրուկ ու փարթամ կազմվածքին նայելով։ Հագուստն ինչ-որ չափով հավաք էր դարձնում նրան։ «Ասված սրա չաղությունից գոնե մի քիչ տա դրանց»,— մտածեց մայրը՝ հայացքի պոչը քսելով ննջարանի փակ դռանը։ Այդ պահին ո՞ւմ համար էր ավելի մտահոգված, դժվար էր ասել։ Հետո նա

բարկացած մտավ խոհանոց ու պատուհանից բակ նայեց. տեղատարածքը, ինչպես երևում էր, որոշել էր որևէ խարխլված տուն դնել ու վրեժը նրանից հանել։

— Սրանց հետ է զնում։

— Բա ե՞րբ ենք գնալու սպեկուլյանտ Ռոզայի մոտ,— հարցրեց Նանան՝ շորացնելով հարթ ու կոշտ մազերը։ «Դիմագծերը լավն են, միայն այդ չաղությունը... Խեղճ երեխան կարգին չի էլ ուտում»,— մտքում վշշշում էր տիկին Ջուլիկը։

— Մոտացա ասեմ, որ Սուսաննան է գալու։ Ավելի լավ է՝ զանգ տուր, թող Ռոզան գա։ Ինչ ունի, թող հետը բերի։

— Ամեն փալաս-փուլուս հո չի՞ քարշ տա։

— Նա գիտի, թե մեզ ինչն է ձեռք տալիս,— պատասխանեց մայրը։

Ռոզայի հետ պայմանավորվելուց հետո Նանան խոհանոց մտավ։

— Այդքան երկար տևե՞ց խոսքդ Ռոզայի հետ։

— Չէ՛, ի՛նքն էր ընկերուհու հետ խոսում։

— Հետո՞, ի՞նչ էր ասում։

— Անգլերեն էին խոսում։

— Անգլիական թեքումով դպրոց ես ավարտել, բա մի երկու խոսք էլ չհասկացա՞ր,— նախաճաշը սեղանին դնելով՝ նախատեց մայրը։

— Կարո՞ղ է նրանք գրատախտակի, սեղանի, կավիճի, թանաքամանի կամ գրիչի ու մատիտի մասին են խոսում,— նեղսրտեց Նանան՝ ձեռքը խմորեղենին տանելով։ Մայրը խփեց ձեռքին։

— Չես տեսնո՞ւմ, ինչ ես գառել։ Դե լա՛վ, քիթդ մի՛ կախիր, քեզ էլ բան ասել չի լինում։ Կեր ինչքան ուզում ես։ Բայց դուք, ինչքան հիշում եմ, գրատախտակի, սեղանի մասին առաջին դասարանում եք անցել։ Բա տասը տարի դրանց վրա էլ կանգնած մնացե՞լ եք։ Էլ չեմ ասում, որ շարաթը երկու անգամ դասատու է տուն գալիս, ժամը հինգ ռուբլով անգլերեն է պարապում հետդ...

— Ի՞նչ ես ուզում, ա՛յ կնիկ,— վրդովվեց աղջիկը՝ թքելածքը տեղը նետելով։— Հարամ ես անում ամեն ինչ։ Ես քեզ հարյուր անգամ ասել եմ, որ աշխարհի բոլոր երգիչների անգլերենը հասկանում եմ, իսկ սրանց խոսակցությունը՝ ոչ։

— Դե լա՛վ, ձայնդ մի՛ բարձրացրու, խայտառակ չեսա՛ խսի՛ր, կարո՞ղ է անգլերենն էլ գրաբար ունի։ Էլի՞ ուսերդ վեր քաշեցիր։ Դպրոցդ վերջացրու, գնում ես Բրյուսով։

— Իյա՛... Բա մինչև հիմի ուզում՝ էիք բժշկական ընդունել տալ,— տարակուսեց աղջիկը։

— Քեզ համար միևնույն չի՞, թե որտեղ կընդունվեսա։ Մեկ է՝ ոչ մի տեղ էլ չես սովորելու։ Հայրդ է դասախոսներին գանգահարելու։ Դրանից հետո թե ինչ կգառնաս, չեմ պատկերացնում։ Բրյուսով ավարտելուց հետո գոնե պետք կգաս...

— Իրենց լսելո՞ւ խելո՞ք, մինչև ես սովորեմ, նրանք ուրիշ լեզվով կսկսեն խոսել։

— Ո՞նց թե։

— Հենց էդպես։ Քանի՞ անգամ եմ լսել, որ ֆրանսերեն էլ են խոսում։

— Ի՞նչ ես ասում։ Դե ասա՝ տուններս քանդվեց։ Շատ էլ լա՛վ կանի, քեզ նման աչքն էլ կհանի,— իրեն կորցրեց տիկին Ջուլիկը։— Չէ, ձեզ նման երեխաներ չդառաք, պատիժ դառաք ինձ համար։ Չէ՞, դա իտալերեն էլ կխոսի, արաբերեն էլ։— Վերջին բառերն արդեն արտասվելով էր արտաբերում։— Ա՛յ, սրա՛ նման սովորեք, թաղեմ ձեզ։ Ռոզային զանգահարի, ասա, որ չգա։ Հիմի հավես չունեմ բան առնելու, գլխիս ցավը բռնեց։ Դե, աչքերդ մի լցրու, հացդ կեր։ Ի՞նչ անեմ, մոլորվել եմ։ Սուրենն էլ առանց ուտելու դուրս գնաց։

Դռան զանգը կտրեց խոսակցությունը։

— Ռոզան է,— աշխույժ վրա բերեց Նանան։

— Տե՛ղդ նստիր, Սուսաննան է։ Էնպես ես ուրախանում, կարծես տկլոր ես մնացել։ Թե էդ փորով ոնց ես ջինսի շալվար հագնելու, չեմ հասկանում։

Տիկին Ջուլիկը գնաց բացելու դուռը։

Դրսում կտրվել էր անձրևը, աշնանային անձրևը։

Թ

— Եկա՞ր, Սուսաննա ջան։ Ինչի՞ չասեցիր՝ մեքենա ուղարկեմ։

— Չլինի՞ կարծում ես, թե մեքենայի պակասություն եմ զգում,— ծիծաղելով դիտեց Սուսաննան՝ առուզ այտը դեմ

անելով տանտիրուհուն։— Չեմ ուզում քեզ ներկելու էս ի՞նչ է, էլի լա՞ց ես եղել։

Նրա գինեկարմիր ներկված մատա շրթունքների շրշանակը, ճերմակ ու մի քիչ խոշոր ատամնաշարը գիշատչի տպավորություն էին տալիս նրան։ Ամեն անգամ իր գունավոր հագուստներով ու շպարով նման էր գրգռիչ գույներով այն ծաղիկներին, որոնց շուրջը հաճախ է հայտնվում մեղուների պարսը։

— Գիտեմ, որ շատ մեքենաներ են պատրաստ քեզ համար,— դուռը փակելով՝ ասաց տիկին Ջուլիկը։ Ամեն անգամ հանդիպելիս նա չէր կարողանում չնայել Սուսաննայի ականջներին, որոնք ասես սրվել էին շատ ավելի ծածուկ ասված խոսակցություն լսելուց։ Եվ ոչ մի թանկարժեք ականջող ուժ չուներ մեղմելու այդ տպավորությունը։

— Գիտեմ, որ անտարբեր չես իմ օղերի նկատմամբ, դրա համար էլ միշտ նոր օղերով եմ գալիս քեզ մոտ, չանի՞կս,— կիսափարվեց տանտիրուհուն հյուրը։

— Ինչ լավ ես նկատել,— արձագանքեց տիկին Ջուլիկը։

Հավանորեն դիտավորյալ էր Սուսաննան այդպես արհեստական ու յուղոտ շրթներկ օգտագործում՝ ապահովելու համար իր չհամբուրելը։

— Ե՞րբ պիտի հոնքդ բացվի,— սիրալիր դիտեց նա։

— Վերջացավ իմ ուրախությունը։

— Էլի՞,— հայացքը նեղարանի փակ դռանն ուղղեց հյուրը։

— Բա ի՞նչ,— շշնջաց տիկին Ջուլիկը, թեև այդ կողմից կարծես երաժշտություն էր լսվում։— Վիդյոն է միացրել։ Ոնց էլ դիմանում է էդ օդին, դուռն երեսին փակած։

— Է՛, Ջուլիկ ջան, Սուրենի ամուսնության հարցում բախտներդ չբերեց։

Մինչև խոհանոց հասնելը հյուրը հպանցիկ մի հայացքով դիտեց դռները բաց սենյակները՝ իմանալու համար, թե ինչ էր ավելացել իր վերջին այցելությունից հետո։ Ո՛չ, դարձյալ նույն նրբատաշ բյուրեղապակե խոշոր սկահակներն էին շողշողում ինքնափառաբանությամբ։

— Մենակ դարդերս ավելացավ,— հյուրի հայացքը կարդալով՝ վրա բերեց տիկին Ջուլիկը։— Աչքս էլ ոչ մի բանի չի կպչում։

Մտան խոհանոց։

— Գիտեմ, որ նախաճաշած չես լինի։ Դեռ կես ժամ կա ձեր ընդմիջմանը։

— Սուրճը ես կդնեմ, մի քիչ հանգստացիր,— հոգատար ճողոպրեց Սուսաննան և տանու մարդու նման պահարանից հանեց սրճեփը։— Մամբրե Տիգրանիչն իմացավ, որ այստեղ եմ գալիս, մեքենա ավեց։ Երկու բաժի՞ն դնեմ։ Բարև, Նանա ջան, աչքիս նիհարել ես։

— Ո՞ւր է, է՞, խեղճ երեխաս սովամահության է մատնված։ Սա է՞, որ ինչքան ուտի, նույն չոր չոփն է (նա հայացքը ենչարանին հառեց)։ Կարծես իրա փոխարեն մենք ենք ուտում։

— Է՞, ափսո՞ս, ափսո՞ս,— այնպես ցավագին հառաչեց Սուսաննան, ասես խոսքն իր մի հատիկ եղբոր դժբախտ ամուսնությանն էր վերաբերում։— Բա էս տուն ու տեղը սա պիտի վայելի՞։

Ջուլիկն, իհարկե, համոզված էր, որ նա կեղծավորում էր, բայց էլի չէր կարողանում չխոսել իր տառապանքների մասին։

— Աստված վայելում համարի։

Մի անգամ Եղոյանը Նանայի ներկայությամբ ասել էր Սուսաննայի երեսպաշտության, ծծող բնավորության ու կեղծավորության մասին և դարձյալ չէր կարողանում նրան կտրել իր ընտանիքից։ Դե, Ջուլիկին երևի հարկավոր էր այդպիսի մի լրաբեր։ Բայց Նանան տհաճությամբ էր տանում նրա ներկայությունը։

— Չէ՛, Նանաս նիհարել է,—նորից սկնարկից հյուրը՝ նկատելով աղջկա մռայլ կերպարանքը։— Ավելի ես գեղեցկացել, աղի՛ զ ջան։

— Եթե քեզ հավատայի, հիմա մեր հարսից էլ բարակ պիտի լինեի ու գեղեցկության մրցանակն էլ ես պիտի ստանայի,— չոր պատասխանեց Նանան ու ափսեն ետ հրելով՝ ելավ խոհանոցից։

Եթե մի քիչ ուշանար, Սուսաննան հուզիչ գորովանքով պիտի շոյեր նրա մազերը, ասելով, թե այդպիսի կախարդիչ փայլ ոչ մեկի մազերին չի տեսել։

— Ի միջի այլոց, անցյալ օրը Սոնային տեսա,— անհարմար վիճակից դուրս գալու համար հանկարծ հիշեց Սուսաննան։ Տիկին Ջուլիկը շնորհակալական զգացումով նրան նայեց։

— Հետո՞, խոսեցի՞ր, շատ է փոխվե՞լ։

— Ավելի է գեղեցկացել։ Մենակ լիներ, կմոտենայի։ Ամուսինը հետն էր։ Ինքն էր ամուսնուն թևանցուկ արել,— խոսքը շարունակեց ամենատեղյակը։— Կիրթ տղա է երևում։ Սիրունիկն է, բայց երևի հյուր գնալիս երեք հատ մեխակ կտանի։

— Ջհասկացա։

— Դե, կարգին տղամարդը «Նաիրի» կամ «Հորելյանական» կոնյակ կտանի բոմբոնիերկայի ու ինչից ավելի ծաղիկների հետ։ Ալբերտս միշտ էդպես է գնում։

— Մի խոսքով, մարդիկ կատեգորիաների են բաժանված,— կիսածիծաղեց տիկին Ջուլիկը՝ սուրճն առաջ քաշելով։

— Հիմի ամեն ինչն է կատեգորիաներով, ջանի՛կս։ Հենց դրանք խառնվում են, դժբախտությունը սկսվում է։

— Հիմի քո կարծիքով, մենք կատեգորիաները խախտել ե՞նք։ Ա՛խ, Սոնա՛, Սոնա՛, ո՞նց ձեռքներիցս թռար։ Ա՛յ, նա էր մեր կատեգորիայի աղջիկը։ Խեղճ երեխաս հիմի չգիտի՝ ընտանիք ունի, թե՝ չէ։

— Եթե նույն կատեգորիայի լինեիք, գործն էսպես չէր վերջանա։

Ջուլիկը չհասկացավ, թե Սուսաննան ո՞ւմ էր ուզում առաջնություն տալ։ Է՛հ, բաներ կան, որ պետք էլ չի փորփրել։

— Սուրենս սկսել է ուշ-ուշ տուն գալ, իսկ կնոջ պետքն էլ չի։ Ասում եմ, գուցե երեխից հետո փափկի, մարդ դառնա։ Իսկական ռոբոտ։ Ջայնն էլ է ռոբոտի, ոչ մի զգացմունք չկա մեջը։

Սուսաննան մոտեցավ լուսամուտին։ Անձրևից հետո օդը մերկացել էր։ Նա խոր շունչ քաշեց, ապա շրջվեց։

— Ե՞րբ է ազատվում։

— Դեռ շատ կա։ Ասում եմ՝ կարո՞ղ է երեխան սեր առաջացնի մեջը։

— Ի՞նչ իմանամ, ջանիկս։ Հիշում եմ, որ գովում էիր, գովում ու վերջն էլ ավելացնում, թե սիրունությունը չեն դնում հացի մեջ, ուտում։ Մարդը պիտի հոգով գեղեցիկ լինի։

Սուսաննան խոսում էր մեծ պաշտոնավորի ծայրահեղ լրջությամբ, որը դուր չէր գալիս տանտիրուհուն եվ այնուամենայնիվ.

— Ճիշտ ես։ Ի՞նչ իմանամ։ Ես էլ կրկնե՞մ պապերից եկած խոսքը, թե՝ աղջիկն անկարել ձմերուկ է։ Հիմի սրա ոչ հագին է մի բան, ոչ՝ մարմինը։ Հույսներս երեխան է մնացել։

— Ինչ համով կոֆե է։ Երեխայի զորությունը մեծ է, իհարկե, բայց որ ամուսինները սերով լիղան, հազար երեխա լինի, փրկություն չկա,— փափուկ-փափուկ իր տեսակետն էր զարգացնում Սուսաննան, նա, որ դեռ ընտանիք չէր ստեղծել, դեռ երեխա չուներ— Օրինակ իմ Ալբերտը. երկու երեխա ունի՝ տղա ու աղջիկ, ինքն էլ գժվում է նրանց համար, բայց որ կնոջ երեսը չի ուզում տեսնել, երկաթե սեյֆում էլ պահեն, կփախչի,— հաղթողի տիրական տոնով շարունակում էր Սուսաննան։

Իսկ տիկին Ջուլիկի կարծիքով Սուսաննան խարուսիկ երջանկություն էր ապրում, ինչքան էլ սիրատոչոր հայացքով նայելիս լիներ այդ նույն Ալբերտին, ինչքան էլ կնոջ ցանկակարոտ գուրգուրանքով պաշարած լիներ նրան։

Լսում էր տիկին Ջուլիկն ու մտածում, որ միայն պետերի նախատենյակների դռների հետևում ծվարած կինը կարող է այսքան ինքնավստահ լինել, համոզված կարծիքներ հայտնել և այսպիսի խորհուրդներ տալ իր կրկնակի տարիքն ունեցող կնոջը։ Եթե հնար լիներ հերձել սրա ուղեղը, ինչե՞ր էր բացահայտվի բոլոր այն զեկավարների վերաբերյալ, որոնց հետ շփվել է, որոնց մասին լսել է, որոնց զուգահեռ հեռախոսային սարքերից է օգտվել ու որոնց բնակարաններն է ազատորեն ել ու մուտ ունեցել այս կինը։

Եվ դարձյալ ոչ ոք նրանցից չի էլ մտածում (թե՞ չեն կարող) հեռանալ սրանից, ինչպես չեն կտրվում Սամսոնից կամ Ժորայից։

— Ճիշտ ես ասում, Սուսաննա ջան,— իր մտքերը բոխչա-կապոց անելով՝ խոսքը շարունակեց տիկին Ջուլիկը— Գիտի ամուսիններով իրար հասկանան։ Ի՞նչ իմանամ, դա շատ բարդ հարց է։ Քո թխած միկադոյից է մնացել, վերցրու։ Տեսնես Սոնան հերանց տուն գնո՞ւմ է։

— Ի՞նչ ես ասում, Եղիշե Ռուբենիչը երդվել է մինչև մահ ու գիրեղման աղջկան տուն չընդունել։

— Համա կող է, հա՛։ Հավատում եմ, նրա ասածն ասած է։

— Վանուհին է մեկ-մեկ գաղտնի գնում կամ էլ Հարևանի տանից զանգահարում աղջկան— Ալ կարմիր լաքի հարևանությամբ նրա կանացի փոքր ձեռքերն անկենդան էին երևում թափանցիկության հասնող մաշկի հետևանքով։— Մեկ մտածում եմ, թե շատ բանից զրկվեց այդ աղջիկը, մեկ էլ խելքի եմ գալիս, որ իր հորանց տանն էլ պակաս չէր ապրում։ Փաստորեն ինքն իրեն զրկեց։ Հիմի մոր տարած շորերն է հագնում։

— Դժվար է ասել՝ զրկե՞ց, թե՞ գտավ։ Նրա համար հագուստն ու փարթամ կյանքը միշտ էլ կողմնակի հարցեր են եղել։

— Հա՛, քիչ մնաց մոռանայի,— աշխուժով նոր թեմայի անցավ Սուսաննան— Իմացա՞ր, որ Եղիշե Ռուբենիչը դիմում է ներկայացրել Մամբրե Տիգրանիչին։

— Ի՞նչ դիմում։

— Իրեն աշխատանքից ազատելու,— ներքին բավականությամբ հայտարարեց Սուսաննան, բավականություն ոչ այնքան դիմումի բովանդակությունից, որքան առաջինը պետի կնոջը հայտնելու մտքից։ Առհասարակ Սուսաննան ուրախանում էր որևէ լուր (լավ, թե վատ) առաջինը հայտնելուց։

— Ինչ ես ասո՞ւմ... Շատ ինքնասերն է։ Աղջկա արարքից չգիտի ուր փախչի։

— Էլ առաջվա մոտիկությունը չկա նրա ու Մամբրե Տիգրանիչի միջև։ Ծիծաղ հո բոլորովին չկա երեսին։ Ասենք, առաջ էլ մի ժպտերեսը չէր։ Նիհարել է, ինչ որ շաքարախտ ունենա։

— Կարող է պատահել։ Նրա համար մեծ հարված էր Սոնայի արածը։ Հետո՞։ Մամբրե Տիգրանիչն ինձ ոչինչ չի ասել դիմումի մասին։

— Երևի իր համար էլ դժվար է նրանից բաժանվելը։ Գուցե Մարջանյանին ուրիշ տեղ կտանեն։

— Հա, նա վաղուց է նամենկլատուրայի մեջ։ Ա՜հ, մեջ-

տեղը տղան անբախտացավ։ Մտածում էի, թե դեսերտացիա կպաշտպանի։

— Հա՞րսդ։

— Տղա՜ս Հարսս վիրջացնելու է այս տարի։

— Իսկ Սուրենը գրո՞ւմ է։

— Դրա գրե՞լն ինչ է։ Թիկո՜ւնք է պետք, թիկո՜ւնք։

— Բա ձեր խնամին... Ասածս թիկնապահ է երևակայում իրեն։

— Թող իրա աղջկա թիկունքը պաշտպանի։ Սկի աղջկան չի էլ դանդաղեցնում։ Մենակ սա է օրը մի երկու անգամ կապվում տան հետ։ Մի անգամ էդ տնաշենները չեն հետաքրքրվում, թե ինչ է անում իրենց աղջիկը։ Կարծես իրենց հոգսը սրանից բաժանվելն էր։ Էդ, Սուսաննա ջան, էդ տեսակ ծնողներին ավելի շատ են հարգում զավակները։ Մի մտիր ննջարանը. սիրտդ կպայթի. չորս բոլորը գրքեր են ու թղթեր։ Էն իմ զարդարած ննջարանից բան չի մնացել, դարձել է իսկական գրադարան։ Չեմ հասկանում, մի՞թե ամուսնու համար նվիրված կին լինելը քիչ բան է։ Ինքն էլ էնքա՜ն է բարակել, քիչ է մնում փշրվի-թափվի։

Աշնան ճանճի նման տզզում-բոզոզում էր տանտիրուհին, ճանճ, որ գիրացել է ու ծանրացել ու էլի տզզում է։

Սուսաննան ձեռքի մի շարժում արեց, ասես տզզոցն ականջի տակից հեռացնելու։ Տիկին Ջուլիկը շուրջը նայեց։

— Չէ՜, ճանճ չկա, էնպե՜ս եմ սատկացնում աներեսներին։

— Հիմա նիհարն է մոդա, Ջուլիկ ջան,— ծիծաղեց Սուսաննան, բայց իսկույն էլ ձեռքը բերանին տարավ՝ ննջարանի դռանը նայելով։

— Նիհարի մոդա՞ն որն է, չորությունից քիչ է մնում ճաքճքի։ Ազնվական է դառել գլխներիս։ Տղես դուռը ծեծում է, նոր ներս մտնում... Վաղը մյուս օրը չի թողնի թոռանս լողացնեմ։ Վա՛յ, բիրդիդ տունը քանդվի, ոնց որ մեր տունը քանդեցիր...

— Հա՛, Ջուլիկ ջան, ի՞նչ ես ուզում թխել,— տեղից ելնելով՝ գոգնոցը կապեց Սուսաննան։— Ո՞ւմ եք հրավիրում։

— Սրա սգվոր ծնողներին։ Խնամականչին էլ չպատասխանեցին։ Ի՞նչ անենք։ Ասում եմ՝ հրավիրենք, մի բան հասկանենք։ Էս տեսակ աղջիկ են դաստիարակո՞ւմ։ Ճնալին կապանք է՞, թե՝ նախլեբնիկ։ Տղաս ձեռքից գնում է։ Մեկ էլ տնաբոր թողեց ու գնաց Ռուսաստան։

— Ռուսաստանո՞ւմ ինչ գործ ունի։

— Իսկ էստե՞ղ ինչ է անում։ Դժբախտացածներից քչե՞ր են գնում Ռուսաստան։ Ասում են՝ ռուսները լավ են հասկանում տղամարդու արժեքը։ Այսինքն՝ մեր տղամարդկանցը։ Նշարել եմ, էս ի՞նչ զուլումի մեջ ընկանք։ Ինչ ուզում ես՝ թիթիր, քեզ եմ թողնում։ Սալաթներն էլ դու կդատարաստես։ Պիտի խոսեմ, ոնց որ պետքն է։

Մեկ ժամից ավելի էր, ինչ Եղոյանը համոզում էր Մարջանյանին՝ ետ առնելու իր դիմումը։

— Ես հասկանում եմ քեզ, Եղիշե ջան (նա երբեք Մարջանյանին այդպես չէր դիմել), հասկանում եմ, թե ինչու ես ուզում հեռանալ մեղանից։ Բայց դու մի բան չես ուզում հասկանալ. այն, ինչ տեղի է ունեցել, ոչ մի կապ չունի ոչ միայն մեր աշխատանքի, այլև իմ ու քո հարաբերությունների հետ։ Այո՛, այո՛, նույնիսկ իմ և քո հետ։ Եվ դիտե՞ս ինչ, ախպերս, Սոնան ավելի խելոք գտնվեց։

«Այս ի՞նչ եմ լսում,— չէր կարողանում ուշքի գալ Մարջանյանը։— Դու, որ բնավ զուրկ չես եղել հեռատեսությունից ու հաշվենկատությունից, ինչո՞ւ հանկարծ այս տոնով սկսեցիր խոսքդ։ Իսկապե՞ս նաև հանձնվելու կարողություն ունեսս։

— Չփորձե՞ս ընդհատել ասելիքս, որովհետև ես շատ անքուն գիշերներ եմ անցկացրել մեր այս հանդիպման համար։ Դե, լսի՛ր, քո Սոնան բոլորիցս խելոք գտնվեց։ Ամենից առաջ իմ որդուց այնքանով խելոք եղավ, որ կարողացավ իր ցանկությունը, ապա և իր կամքը թելադրել քեզ, քե՛զ, որին հակադրվելն այնքան էլ հեշտ չէ։ Ա՛յ, եթե իմ աղան թեկուզ մի կնարերան առարկեր, ասեր, որ այս աղջիկն իր սրտովը չէ, այսինքն՝ մեր հարսը, ես բախտավոր կլինեի։ Ես կտեսնեի, որ նա էլ ոչ միայն ցանկություն ունի, այլև՝ բնավորություն, կա՛մ, թող որ նաև համառություն։ Բայց ի՞նչ դուրս

եկավ. սիրտս կտոր-կտոր է լինում ամեն անգամ վրան նայելիս։ Մենք կարծում էինք թե մի սովորական նորմալ ընտանիք ենք ստեղծելու։ Բայց ի՞նչ ստացվեց. աղջիկը հարյուր անգամ տղամարդ դուրս եկավ, անում է այն, ինչ հարմար է իրեն։ Այո՛, նա ապացուցում է, որ իրավունքը ոչ թե նվիրում են, այլ ձեռք են բերում, նաև խլում են։ Եվ ոչ միայն ինքն է իր ուզածն անում, այլև լուռ, առանց խոսքի թելադրում է իր ողորմելի ամուսնուն անելու այն, ինչ ինքն է ցանկանում, ինչ կարող էր ցանկալի լինել։

— Իսկ ի՞նչ է, ընտանիքի համար անվայել, անընդունելի բանե՞ր է թելադրում։ Ների՞ր, իհարկե, հեռաբրբրությունը,— վերջապես խոսեց Մարջանյանը, քանի որ անհարմար էր միայն լսող լինել։

Միաժամանակ նա չէր կարողանում սթափվել այն մըտքից, թե իր պետն ինչի՞ համար էր այդպես բացվում իր առջև։ Ախր նա նույնիսկ բոլոր գործերին չէ, որ տեղյակ է պահել իրեն։ Միշտ ինչ-որ հեռավորություն է պահպանել իրենց միջև։

«Երևի ուզում ես համոզել, թե ոչ մի թշնամություն չունես իմ դեմ, որ ինձ ներում ես։ Բայց, հարգելիս, ես ի՞նքս չեմ կարող ներել ինձ։ Ինչպես տեսնում ես, դու, բոլոր դեպքերում, ավելի մեծահոգի ես։ Եթե բաժանվելու էլ լինենք, չես ուզում թշնամաբար բաժանվենք։ Բայց ես խուսափում եմ քեզնից հենց ա՛յն պատճառով, որ աղջիկս քո ներկայությամբ է ստորացրել, ոչնչացրել ինձ»։

— Ո՛չ, ո՛չ մի անվայել արարք չենք նկատել։ Սուրենի հետ ոչ մի անգամ չի վիճել. ուղղակի մարդու տեղ չի դնում նրան։ Բայց չէ՞ որ դա ավելի վիրավորական է։ Ըստ երևույթին արագ թափանցել է ամուսնու ներքնաշխարհը, ոչինչ հետաքրքիր չի գտել իր համար և, խնդրեմ, դու քեզ համար, ես՝ ինձ։ Օտարներ են նույն հարկի տակ։

«Մի՞թե դու էլ որոշ ժամանակ չես արհամարհել ինձ։ Այ, դրա՞ համար չեմ ուզում քեզ մոտ մնալ»։

— Բայց այդ աղջիկը կարող էր մինչև ամուսնանալն էլ ճանաչել Սուրենին,— արդեն ոչ անտարբեր դիտեց Մարջանյանը։

— Ամենայն հավանականությամբ՝ ճանաչել է։

— Բա էլ ինչո՞ւ էր ամուսնանում։

— Միայն ամուսնանալու համար։ Այո՛, այո՛, որպեսզի չասեն՝ տանն է մնացել։ Ախր նա Սուրենից մի քանի տարով մեծ է, հետո արտաքինն էլ հաշող չի։ Ա՛խ, Սոնա, Սոնա, ո՞նց կոտրեցիր մեր մեջքը։

Վերջին խոսքն ինչքան էլ բարձրաձայն՝ Մարջանյանի համար չէր ասված։

— Չէ՛, Եղիշե ջան, ես նրան չեմ մեղադրում։ Ասացի, որ Սոնան շատ ճիշտ է վարվել։ Ես հիմա չեմ խոսում որպես Սուրենի հայր։ Հիմա ես քո ընկերն եմ, կողքից եմ նայում այս հարցին, այսինքն՝ օբյեկտիվորեն։ Սոնան միանգամայն ճիշտ է վարվել բոլորիս և առանձնապես ձեզ ու իր համար։ Ի՞նչ իմանամ, թե սրա փոխարեն որ նա՛ մտներ մեր տունը, նորից չէր հիասթափվի Սուրենից, նա էլ ենչարանի դուրը չէր ծածկելու ամուսնու երեսին։ Ասենք նա արդեն հիասթափված էր և ժամանակին ետ կանգնեց։

Վերջին ամիսների տառապանքի գերկուտակումը քայքայել էր Մարջանյանի հպարտությունը, այլապես այդքան հանդիսատ չէր լսի Եղոյանին։

— Եղիշե ջան, ես տեսնում եմ, որ դու չես ուզում համաձայնել իմ խոսքին, սակայն ազատ իմն է, ե՛ս գիտեմ նրա պատճառությունը։ Չէ՛, Սոնան բոլորովին նրա զույգը չէր։ Գիտե՞ս ինչ, Սուրենին մեր Նանայի նման մի աղջիկ էր հարկավոր, դպրոցը մի կերպ ավարտած աղջիկ, քաղքենի մի աղջիկ։ Նրան Սուրենը լավ կհագցներ (իմ ուժերով, իհարկե), կապահովեր բոլոր տեսակետներից, ու նրա աչքում էլ ամենալավ ամուսինը կերևար։ Իսկ Սոնայի աշխարհն ուրի՞շ է։ Նրա համար փողը կոպեկ չարժի։ Չէ, Եղիշե ջան, այդ ե՛ս պիտի ամաչեմ քեզանից, ե՛ս պիտի ընդանից փախչեմ, քանի որ փուչ դավակ ունեմ...

— Շատ ես չափազանցնում, Մամբրե Տիդրանիչ, խղճիդ դեմ ես գնում,— փորձեց ընդմիջել Մարջանյանը՝ մոռացած արդեն և՛ իր դիմումի, և՛ այն նոր պաշտոնի մասին, որի թափուր աթոռն իրեն էր սպասում։— Սուրենը խելոք, տան տղա է...

— Ինչ չափազանցնել, ա՛յ Եղիշե։ Վաթսունս անց է, գո-

նե մեկ անգամ կյանքում իրավունք ունե՞մ խոստովանելու։ Ազնի՛վ խոսք, ես անպե՛տք հայր եմ, ես սխալ եմ մեծացրել երեխաներիս։ Հիշո՞ւմ ես, Սուրենին բանակ տանելու պատմությունը։ Ես և՛ ուզում էի, որ գնա, և՛ տանջվում էի, թե կարող էր որևէ փորձանքի գալ։ Մտածում էի. թող տանեն, որ մի քիչ ուրիշ կողմից նայի կյանքին, տեսնի, որ դժվարություն էլ գոյություն ունի, թող մի քիչ կոպտանա, նեղություն քաշի, ենթարկվի ռեժիմի։ Ախր այսպես փափկասուն մեծանալով ո՞ւմ է պետք գալու։ Մեկ էլ վախենում էի. կկոտրվի միանգամից, գլուխը կկորցնի, այս տնաբույսը չի դիմանա բաց օդին, արևին, քամուն, էլ չեմ խոսում անձրևի ու կարկուտի մասին։ Ու քանի տեղ չդնելով մոր արցունքները՝ թույլ տվեցի, որ տանեն։ Բայց ո՞ւր։ Կովկասից ոչ հեռու, որպեսզի մարդ ու կին ամիսը երկու անգամ բեռովբարձով տեսակցության գնանք։ Ցանկանայի՝ Լենինականում կտեղավորեի, բայց գիտեի, որ օրը մեջ տուն էր գալու, մայրը լողացնելու էր, փափուկ սպիտակեղեն էր հագցնելու, մեկը մեկից համեղ կերակուրներ էր դնելու առաջը։ Ո՛չ, Լենինականը շատ էր մոտիկ։ Եվ տարա Հյուսիսային Կովկաս, բայց... ա՛խ, այդ բայցը, որ հիշում եմ, ամոթից ուզում եմ մեռնել։ Գլուխդ կախում ես, չէ՞, հիմի կասես, որ ոչինչ էլ չես հիշում...

Եղոյանը փոքր բռունցքը ճոճեց գլխավերևը, ապա սեղանին զարկեց։ Հետո այնպես մոլոր նայեց կողմ, ասես հիմա մատուցողը կոնյակ էր դնելու առջևը. կխմի ինքն ու ավելի համարձակորեն կշարունակի անսովոր զրույցը։ Չէ՛, ներսն այնպես էր փոթորկվել, որ առանց խմիչքի էլ հնարավոր չէր կանգ առնել։ Եվ նա անխում հարբածի հայացքն ընկերոջը հառեց։

— Մեքենա առա ու տարա. իրենց վաշտից երկու կիլոմետր հեռու գտնվող մի տանը պահ տվեցի, կանչեցի տղային, ծանոթացրի տանտիրոջ հետ։ Երբ ցանկանաս, բալաս, կգաս կվերցնես ու ման կգաս քեզ համար,— մեղավոր տոնով ասացի նրան։— Մենակ թե մտքովդ չանցնի ներսան գալ։ Ճիշտ է, ներսան չեկավ, բայց դա ի՞նչ զինվորական ծառայություն էր։— Իսկապես որ Մամբրե Տիգրանիչի ինքնախաբազանման ժամանակն էր եկել, և ոչ ոք ու ոչինչ չէր կարող

նա պահել նրան։— Հրացան էլ չի բռնել ձեռքը, համարյա ամեն երեկո ինչ-որ տղաների հետ քաղաք է եկել կաֆեներում։ Դե, պարզ է, խմիչք, աղջիկներ։ Մի խոսքով, բանակին էլ խաբեցի, տղայիս էլ, ինձ էլ— Լավայի նման զայրույթն ու ինքնախաղաղանգումը դուրս էին ժայթքում նրա բերանից, աչքերից, ամբողջ կերպարանքից— Եվ ի՞նչ, ո՞չ կոպտացավ, ո՞չ կյանքի դժվարությանը ծանոթացավ, ո՞չ էլ կարգին տղամարդ դարձավ։ Եվ այս բոլորն իմ մեղքով— Շարունակում էր նա եռանդով մեջտեղ հանել իր, որդու, ընտանիքի արատները— Ճիշտ է, գող կամ խուլիգան չդարձավ, առաջինի համար պայմաններ չէի ստեղծել, միշտ էլ գրպանում փող կար։ Երկրորդի համար՝ համարձակություն չուներ։ Բայց մա՛րդ էլ չի, Եղիշե՛ ջան, հեղհեղո՛ւկ, խե՛ղճ, անողնաշա՛ր, անկա՛մք, անկարծի՛ք արարած։ Սարսափելի է, չէ՞. մարդ ապրի քսանյոթ տարի, շրջապատ ունենա ու ոչ մի կարծիք չունենա։

Չնայած արտաքնապես նիհար էր Եղոյանը, փոքրամարմին, շատերին էր, սակայն, գրգռում իր նախանձելի առողջությամբ։ Այդ օրը Մարջանյանը հավատացած չէր դրանում։ Պետի երեսը երկարած էր թվում, այտերը՝ ներս ընկած, գույնն էլ՝ անորոշ։ Ինչ-որ չբավարարված գորշ արտահայտություն էր դեմքին։ Հավանորեն դա էլ վշտի կեղևի փոխված, թերթիկ-թերթիկ պիտի բացվեր։

Եղոյանը ծխախոտ վառեց, դժգոհ-դժգոհ մի կում ներս քաշեց դառը ծուխը, ապա մոխրամանը նետեց գլանակը։ Մարջանյանն առաջ էլ էր նկատել, որ հենց Մամբրե Տիգրանիչը բերանը ծխախոտ էր առնում, շատ էր նմանվում փաստաբանի։ Նրա սև ու հարթ մազերն, ըստ երևույթին, դեռ երբեմն տարիներ ոչ ճերմակելու էին։ Հակառակը։ Բոլոր զեկավարների ժամանակ նա իր պաշտոնում մնացել էր անփոփոխ. միշտ էլ մինիստրների խորհրդում հրավիրվում էր կարևոր հյուրերի հետ, շքանշանի էր արժանանում, թեև նրա որևէ աչքի ընկնող գեր ոչ մեկը չէր հիշում։ Եվ հայտնի չէր, թե ով էր նրան պարգևների ներկայացնում, ո՞ւմ ձեռքն էր նրա թիկունքին։ Իր փափուկ քայլերով բոլոր ժամանակներում քայլեց զեկավարների կողքից այնպես, որ միշտ կես քայլ ետ մնա։ Ու մարդկանց հիշո-

զությանմեջ Եղոյանը մնացել էր փափուկ ափերն իրար քսելիս, միշտ մի քիչ թեքված իրենից բարձր տիտղոսավորի կողմը, որ հանկարծ չլինի՞ թե նրա մի բառն իսկ չհասնի իր ականջին։ Եվ իր խաղաղ պահպանողականությամբ մնում էր իր տեղում։ Ըստ երևույթին այդպիսի ահեղականների կարիք հաճախ են զգացել զինվորականները։ Նրա ծայրահեղ զգուշավորությունից Մարջանյանը միշտ էլ խուսափել էր։ Երևի այդ զգուշավորությունն էր թելադրում Եղոյանին գրույցն այն շավիղներով տանել, որտեղ վերադասի ցանկություններն էին թափառում։ Նա միշտ էլ գործում էր տնաղմուկ, ավելի ճիշտ՝ արարքի մասին խմացվում էր կատարվելուց հետո։ Նա իր ողջ կյանքի համար ընտրել էր ոսկի միջակությունը։ Եվ ահա հանկարծ, ասես պատյանից դուրս պրծած, ուզում էր ազատվել իրենից, ինչպես օձը հին մաշկից։

— Սրա ստեղծողի էլ հե՛րն եմ անիծել։ Պակաս անկումքը ե՞ս եմ. հարյուր անգամ որոշել եմ թողնել ու չեմ կարողացել։— Զանգով կանչեց քարտուղարուհուն։— Եթե սպասող կա, մինիստրություն եմ գնացել։

Սուսաննան այնպես վրա պրծած բարևեց Մարջանյանին, ասես վաղուց նրա գալուն էր սպասում։ Մարջանյանը ներս մտնելիս նրան չէր տեսել ու բարևը չընդունելու նման ընդունեց։ Սուսաննան մարեց աչքերի ճառագայթները. նա լավ գիտեր Մարջանյանի հակակրանքն իր նկատմամբ, բայց ձեռնքաշ չհամարձակվեց ցույց տալ՝ թեթև ժպտաց։ Այդպես էլ կիսաժպտալով շրջվեց ու հեռացավ՝ ելակի քնքուշ բուրմունք լցնելով ընդունարանը։ Ինչի՞ց ասեք օծանելիք չեն պատրաստում այդ ֆրանսիացիք։

— Գիտեմ, որ սրան տանել չես կարողանում, բայց էլի դժվար է ազատվելը,— հավանորեն Մարջանյանը մատնվել էր սեփական դեմքի արտահայտությունից։— Մի մարդ է սա, Եղիշե ջան, որ ուրիշների ձախորդություններով ու դժբախտություններով ավելի է հետաքրքրվում, քան՝ իր։ Ամեն ծակուծուկի տեղյակ է, ո՞վ է իմանում... (Նա չասաց, թե կարող է ամեն տեղ շաղ տալ տարիներով հավաքածը նաև իրենց մասին)։ Հետո մեկ-մեկ պետք է գալիս Զուլիկին։ Է՛, ինչ ասեմ, անմաքուր բամբասանքներն էլ իրենցով հետաքրքրվողներն ունեն...

— Սրանց նմաններն են վերադասի բացահայտ սիրուհին լինելուց հետո ստորադասի գաղտնի սիրուհին դառնում,— դիտեց Մարջանյանը և այնպիսի շարժում արեց, որով ուզեց հասկացնել, թե նրա մասին այլևս չարժե խոսել, և որ դրանք Եղոյանին չեն վերաբերում։

Պատերին, առաստաղին սովերների արշավանք էր սկսվել։ Օրը շատ էր կարճացել, չսկսած՝ ավարտվում էր։ Եղոյանը նայեց ու վառեց լույսը։ Բայց չնստեց, փութկոտ քայլերը հասցե էին փնտրում։ Վերջապես կտրուկ ետ դարձավ գրասեղանին չհասած, շրջանցեց ու նստեց Մարջանյանի կողքը՝ երևի պաշտոնական մթնոլորտը իսպառ վերացնելու միտումով։

— Մեկ-մեկ մտածում եմ, Եղիշե ջան, թե ինչ դիտի ուզաս, ի՞նչ հակումներ ունի, ո՞ր ասպարեզին կարող է ինչոր չափով պիտանի լինել ու չեմ գտնում։ Հոգուդ մատաղ, չեմ գտնում։ Այ, սա՛ է ողբերգությունը։ Իսկ մայրը դա չի հասկանում ու երազում է որդուն մի բարձր պաշտոնում տեսնել։ Բայց այդ անտեր պաշտոնի համար էլ է խելք պետք, չէ՞։ Եվ ամբողջ օրը հարսին է անիծում։ Հա՞բոն ինչ անի. նրան երեխա էր հարկավոր և կունենա։ Ի՞նչ խոսք, ուրախ կլիներ, եթե կարգին ամուսին ունենար։ Չեմ կասկածում, որ նա ոչ միայն կսիրեր, այլև կհարգեր խելացի ամուսնուն։ Բայց որ այդ հարցում բախտը չի բերել, կբավարարվի միայն երեխա ունենալով։ Ես արդեն պարզորոշ տեսնում եմ նրա վաղը. երեխան կունենա, մի քիչ էլ կդիմանա, հետո կառնի երեխային ու կհեռանա։ Այո՛, այո՛, նա՛ պիտի դիմանա մեր տան դատարկությանը...

Եղոյանն ինքնադատապարտման մեջ էր առանց տատանումների։ Թերևս համոզվելով, որ այլևս ոչ մի պաշտոնականություն չէր կարող ծնվել իր ու խոսակցի միջև, նա ելավ։ Մի քանի քայլից հետո նորից նստեց զրասեղանի հետևը։ Սովորություն էր։

— Չես կարող, չէ՞, որևէ խոսք ասել։ Եվ ի՞նչ ասես։ Աչքը մենք այդ աղջկան ուղեցինք իր խելքի, մակարդակի, դաս-

տիարակության, ապագայի բարոյականության համար։ Մտածեցինք, թե մեր տղային կանի թևերի տակ, աղղություն ցույց կտա, ամուսին կդարձնի։ Այսինքն, մեր շարածը նրանից էինք սպասում։ Բայց մի անգամ հաշիվ չտվեցինք մեզ, թե լա՛վ, բա այդ աղջկա՞ ինչ էր կապելու մեր տան հետ։ Այստեղ արդեն չմտածեցինք նրա խելքի մասին։ Մի անգամ մեզ չհարցրեցինք, թե մեր տղա՞ն ինչով էր պատասխանելու հիշածս առավելություններին, նրանք՝ երկուսով ինչի՞ մասին էին զրուցելու իրար հետ, Սուրենը կկարողանա՞ր կնոջ որևէ հետաքրքրությունը բավարարել... Ամո՛թ մեզ, հազա՛ր ամոթ։ Ա՛յ, հիշածս ողջ պատմությունն էր այսպիսի հետևանք ծնելու։

Եղոյանը ելավ, պահարանից «Ջերմուկ» հանեց, բացեց ու բաժակների մեջ լցնելով՝ ասաց.

— Խմի՛ր...

Կարո՞ղ է նա նկատել էր Մարջանյանի ջրթունքների լռությունը։

— Եղիշե ջան, խոստովանե՛մ նաև, որ հույսներս այդ աղջկա անհաջող արտաքինն էր։ Ամաչում եմ, բայց պիտի ասեմ, որ մտածում էինք, թե այդպիսի ոչ գեղեցիկ ինչն այնքա՞ն ուշադիր պիտի լինի ամուսնու նկատմամբ, որ սրա աչքը դրսում չլինի։ Հեչ մտքներովս չանցավ, որ ամենագեղեցիկ մարդուց էլ կարելի է հիասթափվել, եթե նրա հոգին գատարկ է, եթե նրա հոգին է տգեղ։ Ավելին, շատ տգեղներ են հմայիչ դարձել իրենց բովանդակ աշխարհի ու անկեղծ հոգու շնորհիվ։ Եվ, պատկերացրո՛ւ, հիասթափվողը ո՛չ թե Սուրենը, այլ Ռիտա՛ն եղավ։ Ա՛յ թե որն է կյանքի ճշմարտությունը։

Լսում էր Մարջանյանը և մտածում. արդյոք, Եղոյանին շատ չէ՞ր խանգարում որդու մասին ունեցած կանխակալությունը։

— Արհամարհողը Ռիտան եղավ, նա՛ եղավ վիրևից նայողը։ Միայն մարմնի և հոգու միաձուլությունն է մարդուն ամբողջական դարձնում,— չէր հանգստանում Եղոյանը։— Հանի՛ր դրանցից որևէ մեկը, և քո առջև ավերակ կմնա։ Իսկ Ջուլիկը չի պատկերացնում, թե ինչպես կարող է հարսը զուտն ամուսնու երեսին ծածկել, չի ուզում հասկանալ, որ այո՛, այդ սիրուն ամուսինը անպայման անհամարձակ պիտի ծնվի զուտը և նրա պիտի մտնի միայն կնոջ թույլտվությունից հետո։ Ա՛յ աղջիկ, ա՛յ բնավորություն...

Վախեցնելու չափ ճշմարտացի էր Մամբրե Տիգրանիչը։ Մարջանյանը զգում էր, թե ինչպես իր հոգում մի նոր երևույթ էր գլուխ բարձրացնում պիտի նկատմամբ. դա հարգանքի զգացում էր, որ զգուշություն էր պահանջելու իրենից՝ Մարջանյանից։

— Երևի չհավատաս, Եղիշե ջան, եթե ասեմ, որ հարգում եմ այդ աղջկան. երանի՜ դրա հորը, որին երես չունեմ հանդիպելու։ Անցյալ օրը հրավիրել էինք և ոչինչ չկարողացանք խոսել։ Ցեցը մե՛ր միջից է, ախպերս։ Կներես երկար խոսքիս համար։ Այս բոլորն ասացի, որ հասկանաս Սոնայի իրավացի լինելը։

— Է՛, Սոնան կոտրե՛ց ինձ...

— Մի ասա, Եղիշե, մի ասա։ Սոնան բնավորություն ունի, ու դու հպարտ պիտի լինես նրա համար։ Բայց ի՞նչ ես արել. կապդ կտրել ես նրանից։ Դու պատկերացնո՞ւմ ես՝ ինչ էր ստացվելու, եթե չփախչեր. այդ դեպքում և՛ հարս կկորցնեինք, և՛ ընկեր։ Իսկ ես չեմ ուզում քեզ կորցնել, հավատա. դու և՛ լավ աշխատող ես, և՛ լավ մարդ։

«Ինչպես տեսնում եմ՝ միտքդ քեզնից արագ է վազում,— մտածում էր Մարջանյանը։— Տեսնենք որտե՞ղ ես հանգրվանելու»։

Իսկ հանգրվանը դեռ չէր երևում։

— Կտեսնես, ժամանակ կգա, երբ ես ու դու շնորհակալություն պիտի հայտնենք Սոնային,— մեծ որոշման պատասխանատվությամբ հայտարարեց Եղոյանը՝ մատներն արձակելով իրարից։— Մի թող երեխա՝ ունենա։ Ջհակառակե՛ս, ո՛չ մի օգուտ չկա խոովելուց։ Ի միջի այլոց, Սոնայիդ դրկից հարևանն իմ հին ընկերներից է։ Պատահաբար իմացա, որ աղջիկդ իր հարևանի հարսն է։ Ե՞ռ լավ է խոսում խնամուդ մասին։ Ասում է, որ Վարդանին,— տեսնո՞ւմ ես, փիսայիդ անունն էլ գիտեմ,— որ Վարդանին առանց մոր է մեծացրել։ Իսկ փեսայիդ երկինք է հանում. խելացի է, կրթված, աշխի, ծնողաբեր։ Հայր ու տղա պատուր են ջալիս աղջկան բոլորը։ Սոնան էլ շատ պատվական հարս է, տաքացրեց այդ

մարդկանց օշախը։ Ա՜յ, ընտանի՜ք... Հավատա, սիրտս փուլ եկավ ուրախությունից, երբ իմացա, որ Սոնադ պատրաստվում է մայրանալու։

«Այս ի՞նչ է, որոշել ես այսօր չափել իմ դիմացկունությունը... Ի՞նչ անեմ, եթե մի հար կուլ տամ, պիտի մտածի, թե ծնկի եմ գալիս ծնողական զգացումի առաջ։ Չէ՛, դուրս գնալուց հետո»։

— Իսկ երբ իմացա, որ Սոնային, գնալուց հետո չես տեսել, լեռներցի քեզ։ Աղջիկդ մենակ դրա համար է տանջվում։ Չեմ հասկանում, երևույթից հրաժարվե՞լը որն է։ Եթե նա անգամ սխալ քայլ կատարեր, էլի ձեռք պիտի մեկնեիր, օգնեիր նրան։ Իսկ նա շա՛տ ճիշտ է վարվել... Կներես, որ այսպիսի խորհուրդ եմ տալիս, բայց ախր Սոնան այն աղջիկը չէ, որի հետ իրավունք ունենաս այսքան դաժան վարվելու։ Նորից կներես, որ սիրտս բացեցի։ Այս դիմումդ էլ վերցրու ու քո ձեռքով պատռիր։ Վաղվանից աշխատանքի կգաս բարձրը տրամադրությամբ։ Այնքան հարուստ չենք լավ ընկերներով, որ այսքան անփույթ լինենք նրանց կորցնելու հարցում։ Այստեղ են ասել՝ չկա շարիք, առանց բարիքի։ Այս գեպքում բարիքը շատ մեծ է, մանավանդ ձեզ համար։

Եղոյանն ընկերոջը ուղեկցեց մինչև դուռը՝ ձեռքը նրա ուսին դրած, թեև ինքը բավականին ցածր էր նրանից։ Երկուստեք լուռ համերաշխությունը գերազանցեցին պառակտումից։

Առաջին անգամ Մարջանյանը դուրս եկավ պետի մոտից ոչ մի առարկություն չունենալով նրա խոսքի դիմաց։ Ավելին, նա չէր կարողանում հաշիվ տալ իրեն, թե Եղոյանը ե՞րբ էր այսքան խոսել, այն էլ այս ատամնանի խելոք ու անկեղծ։

Քայլում էր Մարջանյանը՝ գրպանում ճմռելով իր դիմումը։ Օրն այնպես միանգամից էր վերջացել, որ անթափանց խավարի մեջ նա մի պահ չկարողացավ որոշել որ կողմ գնալը։ Տենդային մի խառնաշփոթություն էր ընկել մեջը։ Հիշեց. ծոցագրպանից հանեց փոքրիկ սրվակը և մի դեղահաբ հանելով՝ կուլ տվեց։

Խավարը ձյութի տպավորություն էր թողնում։ Մի լուսավորված տեղ ընկնելով՝ նա ձեռքը երեսին տարավ, ասես ստուգելու՝ հո ձյութ չէր քսվել վրան։ Խանութների ճակատին թարթվող լույսերը բոցի լեզուներով կարծես ծակծկում էին

թանձր խավարը։ Մայթեզրերի խոնավ ծառերը սառց գիշեր էին խմում։

Մարջանյանը քայլերն ուղղեց մետրոյի կայարանի կողմը. վաղուց հասարակական տրանսպորտից չէր օգտվել։ Նա ուզում էր երկար մնալ դրսում՝ սթափվելու, կատարվածի շուրջ կարգին խորհելու համար։

Մի՞թե երկար տարիների համատեղ աշխատանքը, փոխադարձ այցելությունները քիչ էին մարդուն ճանաչելու համար։ Եթե պատահականորեն տեղի չունենար այս զրույցը, Մարջանյանը հրաժեշտ էր տալու իր ճանաչած Մամբրե Տիգրանիչին՝ նրան վերագրելով լոկ նյութապաշտությունը, փառասիրությունը, մեծամտությունը, եսասիրությունը և... չփայլող դատողությունը։ Քիչ առաջվա Եղոյանն ախր ոչ մի կապ չուներ մինչև հիմա եղածի հետ։ Ի՞նչ էր դուրս գալիս. տասնյակ տարիների շփումը ոչի՞նչ էր վերջին մեկ ժամվա համեմատությամբ։ Դա ի՞նչ մեկ ժամ էր, որ շարդ ու փշուր արեց մինչև հիմա եղածն ու Մարջանյանին նոր ընկեր պարգևեց։ Դա ի՞նչ մեկ ժամ էր, որ մի հարվածով պատռեց Մարջանյանի աչքերի մշուշը ու ցույց տվեց միանգամայն այլ մարդու։ Իսկ սա՝ այս մեկն ինչպե՞ս է ամբողջ կյանքում տեղավորվել մինչև հիմա Մարջանյանի ճանաչած կաղապարում։ Ի՞նչ է դուրս գալիս. ուրեմն պաշտոնը, փողը, նյութականը, շրջապատը մինչև վերջ չե՞ն արատավորել նրա հոգին։ Ո՛չ, արատավորե՛լ են, այլապես նա տղայի համար մեքենա չէր հասցնի Հյուսիսային Կովկաս։ Արատավորել են այնքանով, որ մի շատ փոքր անկյուն մնա քիչ առաջվա խոստովանության համար։

Տեղահան եղած փեթակի պես մտքերը խուճապահար իրար էին խառնվել։ Ըստ երևույթին մաքուր ուղեղը կարող էր կարգավորել այդ մտքերը։ Իսկ դուցե Մարջանյա՞նն էլ շատ էր առաջ գնացել, որպեսզի չհասկանար հազվագեպ լսվող անկեղծ խոսքը...

Ինչպես երևում է, ամեն ոք, թեկուզ մինչև ուղն ու ծուծը փչացած մարդն էլ կարիք ունի կյանքում մեկ անգամ խոստովանելու, այլապես կարող է պայթել։

Եղոյանի ամբողջ զրույցն ապացուցեց նախ և առաջ այն, որ նա իրեն թուլություններից զերծ մարդ չէր համարում։

Ահա թե ինչու առանց քաշվելու իր արատներն էր մեկ-մեկ հրամցնում՝ երբեք չմտածելով, թե դա ինչ տպավորություն կարող էր թողնել ստորագրյալի վրա։

Ահա և մետրոյի կայարանը, որի կամարամուտքը դուրս էր թափում շտապող մարդկանց։ Մետրոն նոր տեմպ մտցրեց երևանցու քայլքի, տեմպի մեջ։ Մետրոն իր ընթացքով քաղաքացի էր սարքում Երևանի բնակչին...

Բայց ո՞չ, Մարջանյանի մտքերը դեռևս այնտեղ էին, այսպես ասած՝ խոստովանատանը։

Իսկ ինքը՝ Մարջանյանը ընդունա՞կ է նման մի խոստովանության։ Եվ ո՞ւմ կարող է պատմել հոգում հավաքած տարիների կուտակումը։ Վերջապես ո՞ւմ կարող է ասել այն մասին, որ ինքն իրոք դաժան է իր դստեր նկատմամբ, որին հաճախ հիշում է փոքր հասակում։

Մի ձայն լսվեց ետևից, այնքա՜ն ծանոթ ձայն, ասես իրենը լիներ։ Ետ նայեց. ոչ ոք չկար։ Ի՞նչ պիտի ասեր այդ ձայնը, եթե ինքը ետ չնայեր. «Կարո՞ղ ես այսպես քայլելով գնալ ու ծեծել Սոնայի դուռը... Կարո՞ղ ես նրա առաջ կատարել քո կյանքի միակ խոստովանությունը...»։

Նա ձեռքը կրծքին տարավ. ասես դեղահաբը չէր էլ ընդունել ու ետ կանգնեց առաջադրված խնդրից։ Ինչի՞ց վախեցավ. նվաստացումի՞ց։

Ո՞չ։ Սրտի՜ց։ Միայն նա՛ կարող էր դավաճանել։

ԺԱ

Մանր ու երկարաշունչ ձմեռը վերջապես հեռացել էր՝ խոնավ դոները լայն բացելով գարնան առաջ։ Դարանակալած գարունը, ասես դրան սպասելով, կրակված մտնում էր բոլոր պուճախները՝ վռնդելու համար մեծամիտ ձմռան լաստերին։ Գարնան հարսնացու զարձած արևը ոսկե դրամներ էր շարել ճակատին։

Մարջանյանի աչքերը խափտ եկան այդ դրամներից։ Նա փախցրեց հայացքը՝ զարմանալով, թե ինչո՞ւ հանկարծ ցանկացավ շիփ-շիտակ նայել արևին։

Մամբրե Տիգրանիչի հետ ունեցած անձնական միակ զրույցից հետո Մարջանյանի հոգում ինչ-որ բան էր կատարվում. նման զգացում ունենում են որևէ լավ բան դտնողը կամ կորցնողը։ Իսկ ո՞ր մարդկանց թվին էր պատկանում Սեդրակ Ռուբենիչը։ Ինչ էլ լիներ, նա այլևս ինքը չէր, նա Մարջանյանի հարազատն է, եղբայրը, համախոհը նույնիսկ, բայց ոչ ինքը։ Եվ հազար ու մի տեսակ հարցեր էր տալիս այդ նոր Մարջանյանին՝ նրա էսկուիյությունը պարզելու համար։ Իհարկե, հարցերից շատերին էր կարողանում պատասխանել, բայց մնացածներն անպատասխան էին մնում, այդպես էլ քողի տակ պահելով այդ նոր հայտնվածին։ Սա էլ ժամանակի վրա գցեց՝ կյանքը կպատասխանի, ասելով։ Բայց էլի փորփրում էր հիշողությունը՝ գտնելու համար այն օրը, երբվանից սկսել էր ինքնաճանաչման հարցեր տալ իրեն։ Ո՞չ, Մարջանյանի կարծիք, անսասան բնավորությունը սկսել էր խարխլվել ավելի վաղ։ Եվ խարխլողն էլ եղել էր ընդամենը հարազատ երեխայի նամակը։ Ինչքան էլ երեխայի տեղ դնի Սոնային, դարձյալ չի կարող հաշվի չնստել նրա գրած նամակի հետ. դա, թերևս, ամենաճիշտ, ամենաանկեղծ ու մերկացնող խոսքն էր երբևիցե Մարջանյանի հասցեին ասված։ Այդ նամակն այնպես էր ցնցել հորը, որ սա այսուհետև չէր կարողանում անտարբեր պատասխանել իրեն ուղղված կամ իր առջև ծառացած որևէ հարցի։ Իսկ հարցը, մեծ մասամբ, ինքըն էր իրեն տալիս։ Մինչ այդ չէր մտածել որևէ արարքի հետևանքի ու սրա արդյունքի մասին։ Սակայն այդ ապտակից հետո (Մարջանյանը Սոնայի նամակն ապտակ էր համարում, այն էլ շոնդալից) նա գնում էր հարցերի խորքը, փնտրում սրանց դրդապատճառները և ամեն ճիգով աշխատում գտնել ինքնաարդարացման պատասխանները։ Սակայն հետո ուշքի էր գալիս այն մտքից, որ այդ ընթացքում ինքը զայրույթով էր լցվում ոչ այնքան աղջկա համարձակ քայլի, որքան իր անճարակ, օրի մեջ կախված պատասխանների վրա։ Ի վերջո, հարազատ երեխայի գրածն ի՞նչ դարձավ, որ ինքն ամեն օր, ամեն ժամ ձգտում է արդարացնել իրեն։ Վերջապես, բացի իր ընտանիքից, էլի ո՞վ գիտե այդ նամակի մասին։ Բայց մի՞թե իրենք քիչ են։ Գուցե շատերը գիտեն ու լռում են՝ մտածելով, թե էրե՞նց գործն է։ Սակայն դարձյալ հարցերի հարցը. ինչո՞ւ առաջվա նման ինքնամեծար, ամենախելոք հայացքով չի կարողանում նայել նույնիսկ կնոջը։ Ինչ՞ ը-

Վանուհին առաջին իսկ օրից իր կամակատարն է եղել, ոչ մի քայլ չի արել նախօրոք չխորհրդակցելով իր հետ, իսկ սենեակց հետո երկյուղած է սպասել իր վերաբերմունքին։

Սոնայի հեռանալուց հետո, երբեմն Մարջանյանն է հիշում, կինը ոչ մի հարց չի տվել իրենց։ Բայց նա գործել է։ Նա չի վերցրել ամուսնու թույլտվությունը, սակայն հաստատ համոզված է, որ գնում է աղջկան տեսնելու։ Գնում է՝ իմանալով, որ հարցնելու դեպքում արգելելու է ինքը։ Այդպես լուռ գործում էր առաջին ամիսներին։ Իսկ հիմա կնոջ շարժումներից, որևէ հարցի պատասխանելու եղանակից, ամբողջ օրվա պահելակերպից Մարջանյանը նոր գծեր էր նկատում նրա մեջ. դա ընդվզելու, հակադրվելու, սեփական կարծիքով շարժվելու համոզվածությունն է։ Հանդամանք, որ երբեք չի եղել մինչև Սոնայի հեռանալը, մինչև շարաբաստիկ նամակը։ Նշանակում է, Սոնան ցնցել է նաև մորը, և սա անում է երևի աղջկա թելադրանքով։ Մարջանյանը մտքում փառաբանում էր կնոջ վերափոխվելը։ Իհարկե, նա կփոխվի, քանի որ այդպես են պահանջում իր շահերը։ Իսկ նա երբևէ նկատե՞լ է իր սեփական շահերը...

Մարջանյանը շատ լավ է զգում, թե երբ է Վանուհին հանդիպում աղջկան. այդ օրը պակասում են հառաչանքները, տխրությամբ լցված աչքերում կյանքի փայլ է նկատվում, ձայնն էլ դառնում է ինքնահաստատող...

Իսկ ի՞նքը։ Մի՞թե իսկապես անտարբեր է դարձել կնոջ արարքների նկատմամբ։ Ո՞չ, անտարբերությունն անծանոթ է նրա էությանը։ Մարջանյանն ուղղակի չի ուզում ցույց տալ, թե տեսնում է կնոջ երբեմն բացակայելը, հաճախ ենթարանում փակված հեռախոսով խոսելը։ Հեռախոսի երկու սարք կա բնակարանում, սակայն Մարջանյանի մտքով իսկ չի անցել մեկ անգամ գոնե հետևել կնոջ խոսակցությանը։ Իհարկե, աղջկա հետ է խոսում։ Զարմանալի էր, որ Մարջանյանի սրտով էր զրույցի երկարատևությունը։ Նա նույնիսկ չհարցրեց կնոջը, թե ինչու է որդու հետ Մոսկվա գնում։ Հանկարծ ու պատասխանի ճշտությունը։ Ո՞չ, Մարջանյանը չգիտե, չի կռահում, որ Վանուհին Սոնայի համար է մեկնում։ Նա միայն հարցրեց, թե քանի օրով են գնում և ինչքան դրամ է հարկավոր։ Մի բան էլ ավել տվեց ու փակված համարեց

զրույցը։ Նա շատ շնորհակալ է Վանուհուց, որ չասաց գնալու պատճառը...

Մարջանյանի հոգին տակնուվրա եղավ այն պահից, երբ մի օր, աշխատանքից տուն գալով՝ դաշնամուրի վրա պատահաբար մոռացված տեսավ բրդե երկնագույն թելից հյուսված շատ փոքրիկ փափուշներ։ Սրանք Մարջանյանին հիշողությամբ ետ տարան մեկ ու կես տասնամյակ, մի ուրիշ փոքրիկ մաշիկների մոտ՝ լուսամուտագոգին մոռացված։ Սոնայի պարի մաշիկներն էին, որ Վանուհին չէր հասցրել թաքցնել...

Մարջանյանն այնպես թափահարեց գլուխը, ասես ցանկացավ ուղեղից դեն շպրտել, ջնջել այն դիպվածը, որը տարիների հետ եկած՝ մեղքերի շղթայի առաջին օղակն էր հանդիսանում...

Հիմա նայում էր նա անսովոր փոքրիկ ու գեղեցիկ փափուշներին, որոնց ներգործության ուժը ոչ մի տղամարդ չէր կարող ունենալ և ոչ մի տղամարդ չէր կարող տանել։ Նայեց ուշադիր ,ապա հավաստիանալով, որ տանը մենակ է, երկյուղորեն վերցրեց փետուրե քաշ ունեցող փափուշները, տարավ երեսին, զգաց դրանց փափկությունը, հետո ռունգերին տարավ ու հարբեց բուրմունքից։ Գիտեր, դրանք դեռևս օգտագործված չեն, բայց արդեն նորածնի խենթացնող բուրմունք ունեն իրենց մեջ։ Նա փակեց աչքերն ու այդպես վայելեց մի քանի վայրկյան։ Սիրտը փուլ էր գալիս՝ փոխվելով այն հեզեզին, որ մի քանի օր առաջ, լեռներից իջնելով՝ իր հետ սրբեց ու տարավ ձմռան ծանր շունչը...

Եվ ինչո՞ւ Վանուհին պիտի թաքցներ դրանք, ումի՞ց էր թաքցնելու...

Արդյոք, իր լռության գոյությամբ չէ՞ր կինն այդպիսին դարձել... Մի՞թե ինքնաբուխ բնավորությունը, որ երբևէ չէր լրում Մարջանյանին, իր որոշիչ դերը չուներ այս հարաբերությունների հարցում...

Օ՜, Մարջանյանը շատ բան է նկատում, որ նորություն է կնոջ մեջ. սա զարդեր չի կրում, բացի ամուսնական մատանուց, ոչ մի պճնանք, միշտ մուգ գույնի զգեստով, որ համախոս է սև մազերի հետ, բայց առավել ևս գեմքի արտահայտությանն է սազում։ Մի խոսքով, օտար, բայց նրբակիրթ տրամադրություն էր իշխում այդ տանը։ Այս տրամադրու-

թյամբ էին երկխոսում պատերին թափառող որվայտակերները, ասել է թե՝ իրենց սովերները։

Հեռվից հեռու Մարջանյանն ի վերջո այն եզրահանգման էր գալիս, որ իր եսակենտրոն ու ինքնամփոփ բնավորության պատճառով շատ մերձավորների էր կորցրել...

Դռան ձայնն առնելով՝ նա վախեցած (այս, վախեցած) աչքը դրեց փափուշներին ու հեռացավ. ո՞չ, ինքը ոչինչ չի տեսել ու ոչ մի հեղեղ էլ կապ չունի իր հոգու հետ։ Ուղղակի վերջերս, շատ բնականորեն, սկսել է անհանգստանալ Սոնայի համար. արդյո՞ք աղջիկը կդիմանա երկունքին, որևէ դժբախտություն չի՞ պատահի նրան... Ի՞նչ բարդություններ կարող են սպառնալ աղջիկ կյանքին... Ա՛յ քեզ նորություն. ինչքան Մարջանյանն է հիշում, նման հարցեր երբեք չեն անհանգստացրել, կամ համարյա չեն անհանգստացրել Վանուհուն ծննդաբերն առնելիս...

Ներս մտնողը Վանուհին էր, որ վարթեթներ գրկած՝ մտավ ենչարան։ Ըստ երևույթին դնված փարիթների պարունակությունը փափուշների տիրոջն էին պատկանում։ Վանուհին երկար ժամանակ դրանք դասավորում էր։ Եվ այս բոլոր վայելչություններից Մարջանյանն է զրկել իրեն, ուրիշ ոչ ոք։

Ինչքան էլ վայրկենական, Մարջանյանի աչքից չվրիպեց կնոջ փառահեղորեն հպարտ ընթացքը...

Մարջանյանի հայացքը նորից դուշամուրի վրա էր։ Փոքրիկին դեռ չի տեսել, նա դեռ չկա ու հայտնի չէ՝ ինքն իրավունք կունենա՞ գիրկն առնելու նրան...

Նա մոտեցավ միջանցքի հայելուն ու տեսավ, որ ծանոթ կերպարանքով մեկն իրեն է նայում ո՞չ իր ցանկացած տեսքով։ Այդ մեկը նման էր բազալտե այն արձաններին, որոնք ստեղծվում են փող աշխատող արհեստավորների ձեռքով՝ անարտահայտիչ մի լուսանկարի օգնությամբ։ Մահու գունատություն ու անկենդանություն կար այդ դեմքին։ Կարծես այդ դեմքը զմրսել էին աշխարհին հրաժեշտ տալու պահին։ Այդ դեմքը նաև վախեցնող մոխրագույն էր, որ այրվել-վերջացել էր վերջին ամիսների սեփական տառապանքների բոցից։

Նա արագ մտավ հյուրասենյակ ու սկսեց աննպատակ այս ու այն կողմ դեգերել. ի՞նչ բան է կյանքը, մարդը, սերունդը։ Մինչև հիմա Մարջանյանը լոկ հայր է և ամուսին, Վանուհին՝ կին է և մայր, Սոնան՝ կին և զավակ, Վարդանը՝ զավակ և ամուսին, փեսա, սրա հայրը՝ հայր, սկեսրայր և ուրիշ ոչինչ։ Բայց ահա շուտով, հավանորեն շատ շուտով

աշխարհ կգա այս փափուշների օրինական տերը՝ նոր ու նոր կոչումներ բաշխելով մերձավորներին։ Մեկ րոպեում Սոնան կդառնա նաև մայր, Վանուհին՝ տատիկ, ինքը՝ պապիկ... Ուզես թե չուզես, կրելու ես այս տիտղոսները...

Մարջանյանն արագ մտավ պատշգամբ, բացեց փեղկերը. օդը չէր բավարարում։ Ամեն ինչ մոայլ ու հարցական էր անատոմ ու անլուսին երկնքի պես։ Ներսուդուրսը լուռ տղմակ կար, որ սարսափելի էր հենց անլսելի լինելով։ Նա նորից ետ դարձավ մոլոր այն մարդու նման, որ չգիտե իր ար գնալը։

Սվ իրենք՝ ամուսիններով էին ծնել այս անորոշ լռությունը, ասես ներքին համաձայնությամբ գրաղ էին եկել Սոնայի մասին առաջինը չխոսելու որոշմամբ։ Բայց տանեցիներից ի՞նքն էր զուրս մնացել ուշադրությունից, որը և սպանում էր Մարջանյանին... Ինչքա՞ն կարելի է ապրել մարդախույս այսպիսի տրամադրությամբ։ Այս հարցն էր տրոփում նրա քնքրակների մեջ։ Բայց ինչպե՞ս պատահեց, որ առանց իր համաձայնության, տեղափոխվեցին իր և Վանուհու սովորությունները, ինչո՞ւ չէ՝ նաև բնավորությունը։ Ինչպե՞ս է, որ հիմա ինքն է երկյուղած հետևում կնոջ արարքներին՝ չհամարձակվելով որևէ հարց տալ։ Սա՞ է այն մենամարտը, որ վարում էին իր մեջ նյութապաշտությունը և սրա դառն հետևանքները, ասել է թե՝ ներքին ընդվզումները։

Նոր բազկաթոռին ընկողմանած Մարջանյանը ճակատն էր շփում, ասես մտքերի հետապնդումից ազատվելու համար, երբ հեռախոսի զանգը ոչ միայն վեր թռցրեց նրան, այլև անցավ ուղեղի միջով, հասավ ոտքերին ու թափանցեց ցած՝ փակ շղթա կսկմելով։

Մինչև նա կարողներ վերցնել լսափողը, ենչարանից դուրս թռավ Վանուհին, ուղղակի խլեց այն.

— Լսում եմ... Ի՞նչ... Սրբին սկսվի՞լ են... Գալիս եմ, վարդան ջան։

Լսափողը տեղը նետելով՝ նա շտապ ենչարան մտավ, հագնվելուն հավաքեց նախօրոք պատրաստած ու դուրս կլանվ։ Նրա բոլոր շարժումներից, բայց և ամենայնիվ դեմքի խստաշունչ արտահայտությունից երևում էր, որ նա ոչ ամուսնու բրիկ հարցին էր սպասում, ոչ էլ մտածում էր դրա պատասխանի մասին։

— Ի՞նչ է եղել, Վանուհի,— սանդղահարթակից վերջապես ձայն տվեց Մարջանյանը՝ միանգամայն ուրիշի ձայնով։— Ի՞նչ է պատահել, սպասի՛ր...

Հարց տվողն իր մեջ հայտնվածն էր, թեև այս մյուսը շատ լավ դիտեր, թե ինչը կարող էր կնոջն այդպես տագնապահար դուրս շպրտել։ Մարջանյանը նույնիսկ շարժում արեց կնոջ ետևից վազելու, քանի որ վերջապես բարեբաստիկ պայմաններ էին ստեղծվել իր համար մշտական կաղապարից բենեֆիցիարիվելու համար, բայց հին Մարջանյանը ետ պահեց նրան։

— Վանուհի՛, սպասիր մեքենա կանչեմ...

Կանչում էր նոր Մարջանյանը՝ թափառելով հնի ձեռքերի մեջ։

Վանուհին այլևս չէր երևում։ Լռությունն էր մուտքում շռինդով զարկվում պատերին։ Կույրի նման մթությունը շոշափելով՝ Մարջանյանը ներս մտավ, ընկավ բազմոցին՝ ձեռքը ճակատին հենարան դարձնելով. սրիկա՜, սրիկա՜, ո՞ւմ վրա ես քիթդ ցցում, չէ՞ որ քո երեխայի ապրել-չապրելու հարցն է որոշվելու...

Ո՞ւմ դիմել, ի՞նչ անել...

Հազար ու մի անհայտներով լի գիշերը սողեսող հիմա կլցվեր տունը։ Իսկ այդ հազար ու մեկն էլ միայն Սոնային էր վերաբերում։

Քաղաքը մութ դիմակ էր հագնում մինչև լուսաբաց անվիշում պահելու որոշումով։

ԺԹ

Երբ Վանուհին ներս մտավ, Սոնան պատից-պատ էր գնում՝ դեմքին վախեցած ու խեղճացած մի արտահայտություն։ Այդտեղ էր դրացի գինեկոլոգ հարևանուհին, որ աշխատում էր սիրտ տալ, հանգստացնել Սոնային։ Սրա թևը բռնած, ոչ պակաս անհանգիստ ու շփոթված՝ ետ ու առաջ էր անում Վարդանը։

— Դեռ շուտ է, բալիկ ջան,— քնքշանքով խոսում էր հարևանուհին։— Տիկին Վանուհի, դուք հասուն կին եք, պիտի հասկացնեք Սոնային, որ ամեն ինչ նորմալ է իր մոտ և վախենալու ոչինչ չկա։ Շտապ օգնություն կիանչենք, երբ ցավերը հինգ բոպեն մեկ բռնեն։ Իսկ մինչ այդ, տրամադրությունը պիտի բարձր պահել, չհուզվել, չվախենալ։ Դուք էլ այդպես տագնապած մի նայեք։

— Ինչի՞ց պիտի վախենամ,— լարվածությունից ուզեց ազատվել Վանուհին։— Նորությո՞ւն է, ինչ է։ Ի վերջո ես էլ մայր եմ ու ապրել եմ այդ բոլորը։

Նա նույնիսկ ժպտաց, որը ոչ մի ընդհանրություն չուներ աչքերի անհանգիստ արտահայտության հետ։

— Դե լա՛վ, ես գնամ։ Վարդանի հայրիկն էլ մեր տանն է։ Իբր նարդի են խաղում։ Դեսից դենից են խոսում։ Բայց ոչ խաղն է խաղի նման, ոչ զրույցը՝ զրույցի։ Ի՞նչ են դառել այսօրվա ծնողները. երեխաների հետ դասարանից-դասարան են փոխադրվում, նրանց հետ էլ ծննդաբերում են՝ տղամարդ, թե կին։

Ու ծիծաղելով դուրս ելավ բժշկուհին։

Սոնան կարմրեց ու դարձավ ամուսնուն.

— Վարդան ջան, կարող ես արդեն հանգիստ լինել, մաման մոտս է։ Ուզո՞ւմ ես պատշգամբ գնա ծխիր, շատ տանջվեցիր...

— Հա, գնամ,— սթափվեց Վարդանը ու սեղանից ծխախոտատուփն առնելով՝ անցավ պատշգամբ։

— Բախտավո՞ր եմ, մամ ջան,— երանավետ մի հայացք թողնելով պատշգամբին, ասաց Սոնան։— Առավոտից ուզում է ծխել, բայց դսպում է իրեն։ Մի տասը անգամ ձեռքը ծխախոտին գնաց ու տասը անգամ ետ փախցրեց... Լա՞վն է...

— Ուրախ եմ, աղջի՛կս։ Տեսնում եմ, ամեն ինչ եմ տեսնում։ Իսկ դու մի՛ հուզվիր...

— Ես ուզղակի շնորհակալ եմ իմ ճակատագրից... Սխալ կարող էի, չէ՞, Վարդանին երբեք չհանդիպել։ Հիմա լավ եմ, կարծես ոչինչ էլ չկա։ Նստենք։ Առավոտից մտածում էի քեզ մի բան պատմել, որպեսզի դու էլ համոզվես, որ քո աղջիկը չի սխալվել ամուսին ընտրելու հարցում։ Դու ժամացույցին նայիր։ Մի բոպե անցել է արդեն։ Տեսնենք մինչև նոր ցավերի բռնելը կավարտե՞մ ասելիքս։

Ժպտաց Սոնան նորահայտ իմաստուն մի հմայքով, որ

երևի մայրությունն էր պարգևել նրան։ Հիմա ի՞նչ է, այդ պատմությամբ Սոնան ուզում էր ժամանակի ընթացքը թեթևացնել, թե՞ խնայելիս ուզում էր ամուսնուն մի այլ կողմից էլ ներկայացնել մորը։ Նա նստեց աթոռին՝ մեջքը թիկնակին հենելով, ձեռքի կանացի շարժումով, թեթև ուռուցիկ ճակատից ետ տարավ հարթ մազերը, խոր շունչ առավ ու նայեց մորը։

— Այսպես հանդիստ եմ և ոչինչ էլ չեմ զգում։ Հա՛ ուշիմն, մի տասը օր առաջ, հաղթանակի օրվա կապակցությամբ, Վարդանը մեզ ռեստորան հրավիրեց։ Գնացինք երեքով, թեև տանն ամեն ինչ էլ պատրաստել էինք հայրիկի հետ։ «Արմենիա» ռեստորանի առջև անսպասելի հերթ կար։ Բարապանը, որ շքեղ արտահագուստով ու պատկառելի տեսքով շատ նման էր Մոսկվայի հյուրանոցների բարապաններին, համոզում էր հավաքվածներին հանդիստ սպասել. նրանք հերթով ներս կմտնեն այն ժամանակ միայն, երբ ներսից այցելուներ դուրս գան, այսինքն՝ երբ սեղան ազատվի։ Համենայն դեպս, Վարդանն առաջացավ։ Նկատելով նրան՝ բարապանն այնպիսի՛ մի խոնարհումով բարևեց, որ հավաքվածները զարմանքով նայեցին Վարդանին։ Իսկ բարապանը, առանց ուղղվելու, գլուխն այդպես խոնարհած՝ ձեռքով բաց դուռը ցույց տվեց.

— Խնդրե՛մ, համեցե՛ք...

Վարդանը շատ ինքնավստահ հայացքով մեզ առաջ թողեց ու մտավ մեզնից հետո։

Դրսում հավանորեն դժգոհ շշուկներ եղան, որ բարապանն ասաց.

— Չտեսա՞ք, երիտասարդ կնոջը։

Երևի համակերպվեցին։

Մենք բարձրացանք վերև. իրոք, բոլոր սեղաններն էին զբաղված։ Բայց ահա մի մատուցող տղամարդ արագ մոտեցավ, խորին հարգանքով բարևեց Վարդանին, մեզ էլ ողջունեց գլխի թեթև հակումով, ինչպես ապպետն է կնոջը պարի հրավիրում։

— Մի րոպե սպասեք, հիմա ձեզ կնստեցնեմ,— կամացուկ ասաց նա ու հեռացավ։

Հայրիկն ու ես տարակուսած իրար նայեցինք ու մինչև կհասցնեինք օրիորդ բառ փոխանակել, նորից հայտնվեց նույն մատուցողը ու մեզ ուղեկցեց մի շատ հարմարավետ անկյուն, բառ երևույթին՝ կարևոր հյուրերին պատկանող տեղերից մեկը։ Ճաշացուցակը դնելով մեր առաջ, այսինքն՝ իմ առջև, հոտակացրեց, որ ամեն ինչ կարող ենք պատվիրել, չնայելով թե տեսականիներից որի դիմաց ինչ նշան է արված։

— Վարդա՞ն,— վերջապես խոսեց հայրիկը, երբ մատուցողը հեռացել էր,— սա ի՞նչ է նշանակում։ Ես չեմ կարծում, թե քո գրպանը կարող է թույլ տված լինել սրանց ամենօրյա հաճախորդը լինելու։ Մասնագիտությունդ էլ սրանցից այնքա՞ն է հեռու, ինչքան ասղերը՝ երկրից...

Վարդանը հազիվ էր պահում ծիծաղը։

— Սոնան կարող է վկայել, որ մեր հանդիպման օրից ի՛նչա՛ սանն եմ ճաշել։ Հնարավորություններս էլ հայտնի են լինում։

— Բայց այս բոլորը... բարապանի խոնարհվելը... մատուցողի պատրաստակամությունը... Իսկ դրսում քիչ չէին սուտ գրպաններով ուտող-խմողները...

Վարդանն ազատություն տվեց ծիծաղին։

— Դե, խոսի՛ր,— անհանգստացած պահանջեցի ես։

— Ի՞նչ ասեմ, ձեզնից ոչինչ չունեմ թաքցնելու։ Ուսանողությանս տարիներին, երբեմն գալիս էի այստեղ ճաշելու։ Գալիս էի այն օրերին, երբ դու, հայրիկ, բացակայում էիր քաղաքից։ Այս նույն բարապանն այնպիսի արհամարհանքով էր դուռը երեսիս ծածկում, որ վիրավորանքից ուզում էի չարդել դրան։ Այս նույն մատուցողն էլ պակաս հեգնանքով չէր մոտենում ինձ, քանի որ պահանջածս մի ափսե տաք կերակուր էր՝ առանց խմիչքի, մի գավաթ սուրճի հետ։ Ինձնից միայն մի քանի կոպեկ էր մնում իրեն։ Հետո դադարեցի այստեղ գալ։ Անցյալ օրը, երբ հոնորար ստացա, ուզիղ եկա այստեղ։ Հիսուն ռուբլի տվեցի բարապանին՝ պատվիրելով, որ ինչքան ես մոտենամ, պիտի խոնարհվելով բարևի ինձ ու ներս հրավիրի, անկախ այն բանից՝ սպասողներ կլինեն, թե՝ ոչ։ Հիսուն ռուբլի էլ այս մատուցողին տվեցի՝ պատվիրելով, այն, ինչ տեսաք քիչ առաջ։ Ճիշտն ասած՝ տալուց հետո առաջին անգամ եմ հանդիպում սրանց։ Այսօր էլ հրավիրեցի ձեզ,

որպեսզի ձեր ներկայությամբ վրեժս առնեմ... Թեև... ես սառում եմ սրանց և պատրաստ եմ ամեն եղանակով խոնարհեցնել իմ առջև։ Մի տեսեք, թե ինչպե՞ս է մեզ մոտենում մատուցողը։ Փորձված հաճախորդները նկատում են այս բոլորը ու երևի ջլփչում իրար մեջ, թե ովքեր ենք մենք...

Իսկապես, հարսի սինին էլ այդպես չեն տանում. գլխից վեր պահած ուտելիքներով ծանրաբեռնված սկուտեղը՝ մատուցողը ճկուն ընթացքով առաջանում էր, ասես թագ էր բերում նորընծա իշխանի գլխին դնելու։ Համպանսկու շիշը վերևից էր հսկում ցածում դասավորված ուտեստներին։

— Կներեք, փոքր ինչ ուշացրի,— հասնելով մեզ՝ պատրաստ ժպիտով ասաց նա ու սկսեց թեթև շարժումներով և ամենաբծախնդիր կարգուկանոնով բերածը մեր սեղանին տեղափոխել։— Նորոշածը թարմ մսից է, խավիարն էլ այսօր ենք ստացել։ Բարիախորժակ...

Ու հեռացավ իր դերը ճշտորեն կատարած դերասանի նման։

Սոնան ընդհատեց պատմությունը՝ ձեռքը մեջքին տանելով։ Վանուհին ոտքի ելավ։ Սոնան ժամացույցին նայեց։

— Գեռ ուշ բոպե է լինում ընդմիջումը,— կիսածիծաղ ասաց նա։ Մի քիչ սպասեց, խաղաղվեց ու ձեռքով հասակացրեց մորը նստել։— Հա՛, հետո, չգիտեմ Վարդանն ինչքան վճարեց, բայց երբ մատուցողը հարգանքով մեզ ուղեկցեց մինչև դուռը՝ շատերն իրենց հետաքրքրությունից այլվող հայացքները չէին պոկում մեզանից։ Երբ մենակ էինք, Վարդանը խոր շունչ առավ ու նայեց հայրիկին։— Ինչո՞ւ է տրամադրությունդ ընկել, չէ՞ որ ես վրեժս առա...

— Բայց ի՞նչ գնով, տղաս։ Դու վճարել ես դրա համար։ Ո՞ւմ է պետք վճարովի հարգանքը,— դառնացած պատասխանեց հայրիկը։— Դա սուտ հարգանք է, դա քե՛զ չի վերաբերում...

— Իսկ երբ իրենց վերադասներն են մտնում, անկե՞ղծ են երկուսակվում,— վրդովվեց Վարդանը՝ շատ լավ զգալով հայրիկի իրավացի լինելը։— Նրանք համոզված են, որ եթե չխոնարհվեն, դուրս կշպրտվեն այստեղից...

— Չգիտեմ, տղաս, ոչ մեկն էլ բանի նման չէ։ Բայց որքան ուզեցել ես որևէ ձևով վրեժ առնել, մխիթարվիր, որ առել ես։ Մ՛յ, երբ հայտնի բանաստեղծ կլինես ու նույն խոնարհությամբ դոնները կբացեն քո առաջ, դա արդեն քեզ կուղղվի...

— Ես ուզում եմ ոչ այնքան սրանց գլուխը խոնարհել, որքան փրկել իմ արժանապատվությունը,— ընկճված պատասխանեց Վարդանը։

Համենայն դեպս, մենք որոշեցինք այլևս ռեստորան չգընալ. տանն ամեն ինչ և՛ անկեղծ է, և՛ համեղ, և՛ հարազատ։

Սոնայի դեմքը նորից ցավ արտահայտեց։

— Կարծես արագանում է, մամ։ Բոլոր դեպքերում Վարդանը հոյակապ մարդ է։ Ես ուզում եմ, որ իմ հայրիկը նրան լավ ճանաչի։ Վարդա՛ն,— հանկարծ բարձր կանչեց Սոնան։ Ամուսինն արագ ներս ընկավ։— Վարդան ջան, կարծում եմ ժամանակն է շտապ օգնության։

Մինչ Վարդանը զանգահարում էր, Վանուհին շորերն էր կարգավորում։ Նա մտածում էր, որ փեսան, բոլոր դեպքերում, կհասնի իր նպատակին. նա հարգանքով կշրջապատի իրեն սեփական տաղանդով։ Իսկ Սոնան այդ պատմությունն արեց մորը զբաղեցնելու համար։

— Ինչ լավ է, տղաս էլ եկավ,— շեմքում որդուն տեսնելով՝ ուրախացավ Վանուհին։— Դե՛, երկուսիցդ մեկը իշեք մեքենան՝ դիմավորելու։

Քիչ հետո շտապ օգնության մեքենան հեռացավ՝ մուտքի տոչի հավաքված դրիից հարևանների բարի մաղթող հայացքների ուղեկցությամբ։

ԺԳ

Մարջանյանը ոչ շորերը հանեց, ոչ էլ պառկեց։ Մոտ էր կեսգիշերը։ Տղան էլ չէր երևում. ըստ երևույթին մոր հետ էր։ Դրսում այնպիսի լռություն էր, ինչպես կարող է լինել կախարդի հրամանով քարացած քաղաքում։ Պարտեզին նայող պատուհանները բաց էր թողել, որպեսզի իրեն հասներ թաղամերձ յուրաքանչյուր ձայն։ Հակառակ կողմի լուսամուտները փակ էին փողոցի դլուխ պտտեցնող աղմուկի առաջ։ Հիմա ոչ մի աղմուկ չկար։ Դիշերը, երբ լռում էին մարդիկ և տեխնիկան, արթնանում, տիրություն էր անում լռությունը։

Մարջանյանը մոտեցավ հենց փողոցին հարևան լուսամուտներից մեկին ու ակամա ուշադրություն դարձրեց դիմացի տան լուսավորված պատուհանին։ Նա հետո գլխի ընկավ, որ այնտեղ, լուսավորված այդ բնակարանում ինչ-որ բուռն վեճ էր գնում՝ հավանորեն շահել ամուսինների միջև։ Իհարկե ոչ մի ձայն չէր լսվում, բայց, ինչպես համր կինոնկարի էկրանի վրա, քաշքշոց էր գնում։ Կինը խուսափում էր տղամարդուց, իսկ սա հասնում-բռնում էր նրան ու հարվածում։ Մի՞թե այդ տանն ուրիշ ոչ ոք չկար։ Կինը նորից փախավ, բայց չհասցրեց դուրս գալ. տղամարդը կրկին հասավ ու բռնեց նրա ուսերին շաղ եկած մազերից։ Մնկած վիճակում կինն ըստ երևույթին աղերսում էր չխփել իրեն։ Տղամարդը հիմա չէր երևում. պատի վրա մի ձեռքի ստվեր էր ցցվել՝ բռան մեջ դանակ։ Մի՞թե իսկապես նրանց ձայները ոչ ոք չէր լսում։ Բայց ոչ, ահա մի երեխա, երևի մի հինգ տարեկան, մտավ ներս գիշերազգեստով ու փորձեց կախվել դանակ կրող ձեռքից։ Տղամարդն աջացիով դեն շպրտեց երեխային ու նորից բռնեց ոտքի ելած կնոջը...

Մարջանյանը չգիտեր անելիքը։ Այդ մարդն ամեն րոպե կարող էր խփել կնոջը... Ահա նա ձեռքերի մեջ առավ կնոջ մազերը ու քաշեց իրեն... Երեխան նորից մոտեցավ...

Մարջանյանը շտապ վերցրեց լսափողն ու հավաքեց հերթապահ միլիցիայի համարը։ Նա բացատրեց, ինչ տեսնում էր.

— Խնդրո՛ւմ եմ. միայն արագացրեք... Նա կարող է սպանե՛լ... Գուցե սպանել է արդեն... Երևի տասնչորս համարն է, քանի որ մեր տան դիմաց է գտնվում... Այո՛, այո՛ հագուստեղենի խանութի վերևում, երրորդ հարկում...

Մարջանյանը նորից պատուհանին մոտեցավ. տղամարդը կնոջը բարշ էր տալիս դեպի սենյակի խորքը՝ ձեռքին փաթաթած պահելով նրա մազերը։ Նա անպայման հայհոյանք էր թքում շորս բոլորը։ Դաշունահարե՞լ էր կնոջը, որ սա այլևս չէր դիմադրում, թե՞ արդեն հանձնվել էր տղամարդու հարվածներին... Բայց ահա նա թողեց կնոջը, վազելով մոտեցավ լուսամուտին ու թափով բացեց փեղկերը։ Մի՞թե ուզում էր դուրս նետվել... Ո՞չ, կռանալով՝ նա վերցրեց ու գլխից վեր բարձրացրեց երեխայի մի մահճակալ ու շպրտեց փողոց։ Էլի իրեր շպրտեց։ Սակայն հանգստանալու փոխարեն նա վրա ընկավ կնոջը, պոկեց նրանից երեխային ու մոտեցավ բաց պատուհանին...

Սարսափած Մարջանյանը բացեց պատուհանը ու ամբողջ կոկորդով մեկ գոռաց.

— Կանգնի՛ր, սրիկա, հեռացի՛ր լուսամուտից...

Մարդը մի պահ կանգ առավ։ Մարջանյանին թվաց, թե վայրկենաբար բացեցին իր փակ ականջները ու երեխայի անարնկված ճիչը կտրատեց փողոցի պինդ մթությունը։

— Ձդցե՛ս երեխային, սրիկա՛,— նորից բղավեց Մարջանյանը։

Մարջանյանը չէր հիշում, որ այդպիսի ձայն հանած լիներ կյանքում։ Ահա վառվեցին այդ բնակարանի ցածի պատուհանները. մի՞թե հիմա՛ միայն նրանք գլխի ընկան, որ իրենց գլխավերևում մի ահավոր բան էր կատարվում։

Կինը չէր երևում։ Տղամարդը ետ քաշվեց։ Թափահարվող երեխան դուրս պրծավ նրա ձեռքերից։ Այդ րոպեին էլ միլիցիայի մեքենան կանգնեց մուտքի առջև, ու մի քանի հոգի արագ վեր ելան։ Մարջանյանը ետ քաշվեց պատուհանից այն ժամանակ միայն, երբ միլիցիայի աշխատողները լցվեցին այդ բնակարանը։

Նա թաշկինակը ճակատին տարավ ու հոգոց հանելով՝ թուլացած ընկավ մոտակա բազկաթոռին։ Իսկ եթե ինքն ուշացներ դանդաղարելը, կամ գոռալը, ի՞նչ պատասխան էր տալու մնացած կյանքում երբեք չլռող խղճի ձայնին...

Բակի կողմից մեքենայի արգելակող ձայնը տեղից վեր հանեց Մարջանյանին. վանուհին էր երևի՝ Ռուբենի հետ։ Հասկանալի էր, թե որտեղից էին գալիս։

Երևկոյան, վանուհու տանից շտապ հեռանալուց հետո, Մարջանյանը զանգահարելով իմացել էր, թե որ ծննդատունն էր հերթապահում այդ դիշեր։ Բայց ինչպե՞ս գնալ, ե՞րբ գնալ, որ չնկատվեր ինքը և միաժամանակ հասցներ որևէ լուր առնել Սոնայից։

Մարջանյանը չզգաց, թե ինչպես հայտնվեց ինքը երկրորդ ծննդատանը հարող պարտեզում։ Սկսեց թափառել ծառուղիներում՝ միաժամանակ այնպես նայելով մթությանը, որից ասես գնդիկներ էր սարքելու այնքան, մինչև կարողանար դուրս գալ միջից։ Երբեմն շտապ օգնության մեքենա էր գա-

ցիս։ դուրս էին ելնում անծանոթ մարդիկ ու որևէ ջահել կնոջ ղղուշորեն ներս տանում։ Բոլորն էլ մտահոգված ու զուրգուրանքով էին ուղեկցում հազիվ քայլող կնոջը։ Ահա նորից մի չտապ օդնության մեքենա երևաց, որը վարժ շրջադարձ կատարելով՝ կանգնեց ընդունարանի առջև։ Երկու կանացի ու երկու տղամարդկանց ֆիգուրներ առաջացան։ Բացվող սպասարանի դռնից դուրս նետվող լույսի հորձանքի մեջ Մարջանյանը ճանաչեց Վանուհուն, որ կիսագրկած Սոնային՝ մտավ ընդունարան։ Երկու երիտասարդները, որոնցից մեկը Ռուբենն էր, հետևեցին նրանց։ Դուռը կրկին ծածկվեց։ Մարջանյանց չգիտեր անելիքը։ Նա տրորեց նախորդ օրը սափրած փշփշոտ ծնոտը, մոնչաց. ուրեմն ամեն ոք կարող է հետևել Սոնային, բռնել ձեռքը, խոսել հետը, բացի իրենից։

Անհանգստությունը տանջում էր Մարջանյանին. նա մեկ ուզեց փախչել այդտեղից, մեկ մոռանալ սեփական վիրավորված արժանապատվությունն ու մտնել ընդունարան, որևէ տեղեկություն իմանալ... Սակայն այդ ի՞նչ անտեսանելի, չկտրվող թելեր էին, որ փաթաթվում էին ոտքերին, գամում էին տեղում, պատնեշ էին կանգնեցնում առջևը, բթացնում ծնողական ամենազոր զգացումները։ Ի՞նչ էին դրանք, այդ թելերը...

Ընդունարանի բացվող դուռը նրան հետ հրեց։ Բայց ինչքա՞ն է նա հաստաբուն ծառեր որոնելու՝ դրանց ստվերում թաքնվելու համար, ինչքա՞ն է անորոշության մեջ մնալու, ինչքա՞ն է նախանձելու Վանուհուն, որը ծնողական իրավունքով չի պոկվում երեխայից։ Ո՞վ է ինքը, օտար մի մա՞րդ։ Ավելի օտար, քան այդ երիտասա՞րդը, որ հիմա սպասարանում կանգնած՝ լուրի է սպասում... Մի՞թե մարդն ինքն իրեն չի որոշում սեփական տեղը ահա այս մարդկանց մեջ։ Ի՞նչ էր ասում Եղոյանը ամիսներ առաջ... Եվ ինչո՞ւ պետք է ուրիշն ասի...

Նա ոտքն առաջ դրեց սպասարան ուղղվելու համար, բայց այդ վայրկյանին էլ դուռը լայն բացվեց ու լույսի շեղբի մեջ երևացին երկու երիտասարդներ՝ թևանցուկ եղած Վանուհուն։ Մի երիտասարդի ձեռքին հավանորեն Սոնայի հագուստներն էին...

Ճմլվում էր Մարջանյանի հոգին, անիծում էր իրեն, իր

համառությունն ու նյութ փնտրում անորոշությունից դուրս գալու։

Երիտասարդներն ու Վանուհին դանդաղ անցան կենտրոնական ծառուղիով. նշանակում է դեռևս ոչինչ չկար ու ժամանակ էին տրորում իրենց ընթացքով։

Մի ուրիշ խումբ էլ ելավ ընդունարանից։ Մի կին ախուվախ էր անում.

— Մենակ բալաս փրկվի, աստվա՞ծ ջան։— Հետո նա թեը խլեց ուղեկցող կնոջից ու ետ դառավ։— Չէ՞, ես ո՞չ մի տեղ չեմ գնա, մինչև մի բան չիմանամ, մինչև չհամոզվեմ, որ երեխաս կպրծնի...

— Ի՞նչ ես վախենում, այ քույր, բոլորն են ասում, որ ոսկի ձեռքեր ունի այդ գինեկոլոգը,— հանգստացնում էր ուղեկցող կինը՝ հետևելով նրան։— Ամբողջ քաղաքն է Զեփյուռին ճանաչում։ Հազարավոր կյանքեր է փրկել։ Կեսարյան հատումը նրա համար կույրաղիք հեռացնելու նման մի բան է։

— Արևը երկա՞ր լինի։ Բայց ես չե՞մ հեռանա այստեղից։

Եվ նա, կտրուկ շրջվելով, մտավ ընդունարան՝ մյուսներին տանելով իր ետևից։

Մարջանյանը սավիրի պես սվաղվեց մի հաստենու. սավիրը կպել էր սավիրին։ Վերևում մի լամպ վառվեց ու Մարջանյանի ոտքերի առաջ երկու ստվեր նետեց։ Նա սկսեց տրորել ստվերներից մեկը՝ դժգույնը։ Ա՛յ, հենց այդ երկրորդ ստվերն է խանգարում Մարջանյանին, արգելում որևէ քայլ կատարել...

Կարո՞ղ է Սոնայի վիճակն էլ է անմիջապես... Հազիվ թե։ Եթե այդպես լիներ, Վանուհին դրսում չէր մնա, այդքան դանդաղ չէր քայլի։ Իսկ եթե ինքը հիմա ներս գնա, ինչո՞վ կարող է օգնել Սոնային։ Ի՞նչ իմանա, որտեղ են բժիշկները, ինչպե՞ս կարելի է նրանց հանդիպել, ի՞նչ ասի, հիշեցնի նրանց պարտականությո՞ւնը...

Խումբը հետ էր դառնում տրտաքնապես հանգիստ, ներքուստ հավանորեն լարված մի ընթացքով։ Մարջանյանը նորից խորքն անցավ։

— Ամեն ինչ նորմալ է և իզուր եք անհանգստանում...

Մարջանյանը չէր հիշում, թե այդ խոսքերն ում բերանով արտասանվեցին։

— Մի ժամից շուտ չի ազատվի,— փեսան էր, որ բռնել էր Վանուհու թևը։ Սա ուզեց ընդունարան մտնել, փեսան նա պահեց։— Մամա, եկեք մի անգամ էլ գնանք մինչև դարպասը, որ ժամանակ անցնի։

Վանուհին դժկամորեն հնազանդվեց։ Ուրեմն Վարդանը մայր է անվանում Վանուհուն։ Եղոյանն ասաց, որ անմայր է մեծացել ու հիմա Վանուհուն է մայր անվանում։ Ախր ի՞նչ իմանար Մարջանյանը, ինչպե՞ս վստահեր իր քսանմեկամյա երեխային, ինչպե՞ս համոզվեր նրա անսխալության մեջ։ Ի վերջո ինքը որտեղի՞ց իմանար, որ Սոնան սիրում է այդպիսի մի արժանավոր տղայի։ Իսկ կա՞ն հայրեր, որոնք տեղյակ են իրենց դստերիկների հոգեկան աշխարհին։ Մինչև հիմա Մարջանյանը չի պատկերացնում այդպիսի կապ հոր և դստեր միջև։ Ի՞նչ արժանապատվություն պիտի ունենա հայրը, որ թույլ տա իրեն թափանցելու աղջկա մտածումների մեջ։ Կամ ինչ համարձակություն պիտի ունենա այդ աղջիկը, որպեսզի հորը մասնակից դարձնի իր անձնական ապրումներին։ Վերջապես դա մո՞րն է վերաբերում։ Իսկ այսքան տարիներ Մարջանյանը Վանուհուն այնպե՞ս է դաստիարակել, որպեսզի սա տեղյակ լինի աղջկա հոգեկան ապրումներին... Երևի՝ ոչ։ Ըստ երևույթին, ընտանիքում երեխաներ հայտնվելուց առաջ ամուսիններով այդ հարցը պիտի կարգավորեն։

— Միայն թե ամեն ինչ բարեհաջող վերջանա,— քիչ առաջվա կեղծ խոսքերն էր Վանուհին երկինք ուղարկում։

Թերևս բոլոր մայրերն են այսպիսի պահերի նույն աղոթքն ուղարկում առ աստված։ Իսկ հայրե՞րը...

Մարջանյանը էլի տեղը փոխեց ու նոր միայն նկատեց իրենից շորս-հինգ քայլ հեռու գտնվող մի տղամարդու, որ հառաչանքներ էր դուրս մղում ծխախոտի ծխի հետ։

— Մենակ թե փրկվի բալաս... Մի հատի՞կս, թա՞նգս...

Սա էլ հայրը, որ դեն նետելով ծխախոտը, անհանգիստ, վազդաչառն քայլերով իրեն ընդունարան նետեց։ Նրան հետևեց և Մարջանյանը։ Ի՞նչ իմանա, թե Սոնան հոր աղոթքին չի սպասում։ Չէ՞ որ սա այն պահն է, երբ ամենալավատես ծնողներն էլ չեն կարող որևէ լավ բան երաշխավորել...

Ներսում, փոքր պատուհանն էին խցկվել մի քանի գլուխ։

— Ո՞վ է Սոնա Մարջանյանի ծնողը,— դուռը բացեց սպիտակ խալաթավոր շատ սովորական մի կին։

— Ի՞նչ է պատահել,— վրա պրծավ Մարջանյանը իրեն կորցրած։

— Ի՞նչ ես վախենում, ախպեր, աղջիկդ բարեհաջող աղատվել է...

— Աղատվե՞լ է... Փա՞ռք քեզ... Աղջկաս ոչ մի վատանգ չկա՞...

— Չկա՛, չկա՛...

Մարջանյանն ինչ-որ թղթադրամ խոթեց լրաբերի գրպանն ու դուրս թռավ։ Վանուհին որդու և փեսայի հետ ետ էր գալիս։ Մարջանյանը պարտեզ նետվեց. այդտեղ՝ մոտակայքում կարծես թե ցայտաղբյուր պիտի լիներ։ Գտավ։ Մի դեղահաբ հանելով դցեց բերանը։ Խոր շունչ առավ ու մտավ փողոց։ Ուրեմն, ամեն ինչ անփորձանք է անցել... Իսկ ինքն աղոթե՞լ էր Սոնայի համար... Երևի... Նա հրեկոյից է աղոթում... Ո՞չ, անպայման հա՛յրն էլ պիտի աղոթի, ասում են՝ նրա ձայնն ավելի շուտ է աստծուն հասնում...

Մարջանյանը կարծես նոր էր ըմբռնում իր անչափելի սերը Սոնայի նկատմամբ, նոր էր միայն համոզվում, որ եթե նրան մի բան պատահեր, ինքը պարտեղում ընկած կմնար...

Թաքուն մտահոգող լուսարացը խավարից սկսել էր շերտիկներ պատրաստել։ Դեռ ոչ մի մեքենա չէր երևում։ Երբեմն Մարջանյանին թվում էր, թե այդ ամբողջ միջադեպերին ինքը ոչ թե մասնակցում է, այլ ականատես է միայն։

Նա առն հասավ շրջանից քաղաք մտած պատահական մի վիլիսով։ Տուն մտնելուց հետո միայն գլխի ընկավ, որ չէր իմացել մի շատ կարևոր բան ևս. ի՞նչ էր ունեցել Սոնան։

Սանդուղքներով քայլեր էին բարձրանում։ Հարկավոր էր

հետևել տանեցիների զրույցին ու որոշել իրեն հետաքրքրող հարցի պատասխանը։

Որդին ու կինը մտան խոհանոց։ Փեսան չէր եկել. ի՞նչ իմանար նա, թե աներն ինչպես կընդուներ իրեն։ Ա՛խ, իր այդ կոշտությունը...

— Մի բաժակ թեյ խմիր, նոր քնի,— ասաց Վանուհին։

— Դու էլ քնիր, մամ, հիմա հո հանդիստ ես։

— Է՛, տղաս, մինչև դուրս չգրվի, փորձանքով լի է ճանապարհը։

Բազկաթոռի մեջ խրված Մարջանյանը՝ չգիտեր ինչպես դրսևորեր իրեն։ Այլևս շնչահեղձ էր լինում։ Թալավ, մոռեցավ փողոց նայող պատուհանին. դիմացի լույսերը մարել էին։ Հավանորեն խաղաղվել էին նաև ցածի բնակիչները։ Իսկ ինչո՞վ էր վերջացել այն խառնաշփոթությունը։ Միլիցիան տարե՞լ էր տղամարդուն, կինն անվնա՞ս էր մնացել, ու միլիցիան խաղաղեցրել էր մթնոլորտը։ Թվացյալ խաղաղություն։ Նրանց լուսամուտը դեռևս բաց էր, ու ոչ ոք չէր մտածում հավաքել մայթի վրա փշրված մահճակալը։ Փշրված մանկություն կար այդ կտորտանքի մեջ։ Հավանորեն ճիշտ է եղել այն սովորությունը, որ ունեցել են վաղ միջնադարի հայաստանցիները. չարագործի տունն ավերելուց հետո աղ են ցանել նրա շեմին, որպեսզի ոչինչ չաճի այնտեղ։ Է՛հ, ի՞նչ իմանաս, թե այդ փակ պատուհանների հետևում ինչեր են կատարվում։ Գուցե մեկը մահամերձ հիվանդ ունի և հույսը կորցրած է սպասում լուսաբացին։ Մյուսի ներսում բախտավոր ամուսիններն են իրենց գալիքի մասին քշփշում, երրորդը վախով դռան զանգի է սպասում, քանի որ ցիբեկվա արածն անմարսելի խարդախություն է եղել, մի ուրիշը հեռու տեղ մեկնած զավակին է սպասում... Վարագույրնե՞ր, թափանցիկ ու թա՞նձր վարագույրներ, ինչքա՞ն դաղտնիքներ ունեք ձեր ծալքերում... Ամեն մեկը մի անհայտ աշխարհ, մարդուն կպած, մարդուն մերձեցած անբաժանելի աշխարհ... Ո՞վ գիտե, թե ինչքան տառապանքներ է կրել այն կինը, որին այդպես էլ չտեսավ Մարջանյանը... Այսուհետև ի՞նչ երա-

զանքներ պիտի գային փոխարինելու քիչ առաջ կատարվածին, որպեսզի այդ հուսախաբված կինը ուժ ունենար իրեն մարդ զգալու...

Մարջանյանը մտավ խոհանոց ու կյանքում առաջին անգամ, կնոջ ներկայությամբ, թեյ լցրեց իր համար։ Վանուհին չդարմացավ այդ սարքից։ Ուրեմն գնաց քնելու։ Վանուհին անշտապ լվանում էր ամբողջ օրը հավաքված ամանեղենը։ Հետո ընկույզի մուրաբա դրեց սեղանին։

— Հետո՞,— ոչ թե գլուխը, այլ հայացքը բարձրացնելով կնոջ վրա՝ զուսպ գայթույթով հարցրեց Մարջանյանը։— Որոշել ես համբերությունից հանե՞լ ինձ... խոսելո՞ւ ես, թե ոչ։

Ոչ թե վախեցած, այլ տարակուսած նայեց Վանուհին ամուսնուն, վարսակալներից ազատեց մազերը, որոնք շքեղորեն թափվեցին ուսերին։ Բաց մնացած լանջի սառնությունը (Մարջանյանին այդպես թվաց) մարմարե կիսանդրու տպավորություն էր տալիս։

— Ի՞նչ ասեմ։ Իմ կարծիքով՝ մենք այն գիտենք, ինչ՝ դու,— հմայիչ խաղաղությամբ ու երկիմաստ երանգով ասաց կինը։

— Իսկ ես ի՞նչ գիտեմ, որտեղի՞ց գիտեմ...

«Մի՞թե տեսել եք ինձ»։

Կարճատև լռության մեջ Մարջանյանի շնչառությունը լսելի էր, մի բան, որ չէր ցանկանա տղամարդը։

— Ինձ թվում է, թե դու...

Չշարունակեց Վանուհին, բայց հեռվից-հեռու կարծես ուզում էր ասել, թե ամուսնուն նկատել են ծենդատան շուրջը թափառելիս։ Թերևս այդ էր պատճառը, որ տղամարդու հայացքի մեջ շոշափելի վիրավորվածություն կար, իսկ մարմնի բոլոր մասերն անօգնական էին թվում։

— Ես՝ ի՞նչ, Վանուհի, ասա՛, ձեռքիցս հո՞ռ եմ քաշել...

Ո՞ւր էր կորել Մարջանյանի նախկին ծանրակշիռ, ինքնիշխան խոսելաձևը։ Եվ ինչպե՞ս կարող է Վանուհին չնկատել այդ փոփոխությունը։ Եվ ինչ զիրքով էլ նստեր ամուսինը, միևնույն է, Վանուհու հայացքն իրեն էր ձգում նրա ակնարկը։

Գազօջախի վրա թեյնիկի կափարիչն այլևս չէր կարողանում դիմանալ գոլորշու ճնշմանը։

Մարջանյանն ընդոստ ելավ տեղից, ավելի բացեց պատուհանի փեղկերը։

— Հոտ չէ, բայց երևի զանգահարած կլինես հերթապահ ծննդատուն...

Իր անշտապ խոսելաձևով ու շարժումներով Վանուհին համբերությունից հանում էր ամուսնուն։ Նրա համար այդ լոպեներին ամեն տեսակ գործ կարծես ավելի կարևոր էր, քան կարգին պատասխաններն այն հարցերի, որոնք ուտում էին Մարջանյանին։

— Եվ հետո դու...

— Հետո՝ ի՞նչ, ինչո՞ւ ես հարցականներով խոսում... Ինչո՞ւ չես ավարտում խոսքդ...

«Ոչ, ինձ ոչ մի տեղ էլ չեք տեսել, նմանեցրել եք... Եթե եկած լինեի ծննդատուն, ամեն ինչ կիմանայի...

Մի երկու վայրկյան ամուսիններով անվստահ հայացքներ փոխանակեցին։

— Ես ոչինչ չգիտեմ... Տանը փակված՝ ի՞նչ պիտի իմանայի... Կամ եթե գիտեմ, ինչո՞ւ եմ քո խոսքին սպասում,— անկեղծ զայրացավ Մարջանյանը։— Դե, խոսի՛ր, ասա՛...

Մարջանյանի համար չափազանց թանկ էր այն լուրը, որ պիտի լսեր կնոջ բերանից։ Վանուհին ալքը պահել էր ամուսնու այրվող, մոխրացող հայացքի վրա՝ ասես իսկապես չափելու համար դրա տիրոջ համբերության սահմանը։

— Դե, եթե ոչինչ չգիտես, ալքդ լույս, Սոնան տղա է ունեցել,— հուզմունքը թաքցնելով և դժվարությամբ ասաց Վանուհին։ Ապա խոր շունչ առավ ու ավելացրեց։— Փոքրիկ Եղիշեի պապիկ...

— Եղիշե՞...

— Սոնան է այդպես ցանկացել... Ուրախ չե՞ս...

— Ի՞նչ ես խոսում,— էլ չդիմանալով՝ Մարջանյանը խոսեց այն ձայնով, ինչ ձայնով առաջին անգամ Վանուհուն խոստովանել էր իր սերը։ Նա ետ հրեց ձեռք չտված թեյի բաժակը։ Ուզեց բորբոքվել կնոջ վերջին խոսքի վրա, սակայն

վիճելու ցանկությունը կուլ գնաց՝ տեղը թողնելով իրեն կորցրած, նոր անուն գտած մի մարդու, որն ուզում էր պատեպատ զարկվել անհասկանալի մի զգացումից։— Ջե՛մ հասկանում՝ ինչի՞ տեղ ես գրել ինձ...

— Երեք ֆլլո յոթ հարյուր գրամ է երեխան, հիսունեկուսանտիմետր բոյով...

Մարջանյանը չգիտե, թե ո՞ր քաշն ու ո՞ր բոյն է նորմալը, սակայն համոզված է, որ իր թոռնիկն աշխարհի ամենանորմալ երեխան է...

— Ափսոս, որ պորտալարը փաթաթված է եղել խեղճ երեխայի վզին։ Ելի փորձառու գինեկոլոգի ջանքերի շնորհիվ կյանք առավ երեխան... Արհեստական քնչառություն են տվել...

— Ուրեմն՝ կարող էր Սոնային որևէ բա՞ն պատահել,— ահռելիորեն ետ գնաց Մարջանյանը։

— Փոքրիկի՛ կյանքն էր Հարցվածքի տակ։ Բա՞ց ասա՛ծ, ամեն ինչ լավ վերջացավ։

Իսկ ինչպե՞ս էր, որ Մարջանյանն այդքան տագնապած չէր ծննդատան պատահարում։

Մի բան նրանց երկար ժամանակվա խառն հայացքներ էր բաց մեհամաբուերքին, որն ավարտվեց ոչոքիով։ Վանուհին ջարտեանից անընդհատ գործ գտնել ձեռքերի համար։ Մարջանյանը ծխախոտ վառեց ու մտահոգով պատուհանին նայում էր դուրս։ Ոչինչ չտեսնող հայացքով։ Միայն փնտրել էր վերջին տարում էքսոմեքը անցած ոտքերի հետքեր։ Բարդ հարցավոր էր ձեռքից բաց թողնել ամեն այս բաներից, երբ հարմար ապրի էր նեղ ամեն տեսակ հարցեր տալու։ Այդ հարց-պատասխանը պիտի հեղեղի պես քանդեր ու տաներ խառվությունն, ամեն ապրումների պատնեշները, նա արդեն բացեր այն դուռքի գուռը, որին ամբողջ անհամբեր սպասում էր Մարջանյանը։

Երբ Վանուհին կիսաթեթևվեց, ամուսնից ամաչեց խոստովանել, որ երբեք իր կինն այդքան հմայիչ չէր եղել ու ինքն էլ այդքան կարոտած չէր եղել նրանց։ Ինչպիսի՞ մի տարվա կյանքն էլ կարող է այդքան փոխել մարդուն։ Եվ գարձ-

Յալ Վանուհու ողջ կեցվածքը զգուշություն էր թելադրում։

— Պետք է տեսնեիր, թե մի կին ինչպես էր համբուրում այդ գինեկոլոգ Զեփյուռի ձեռքերը...

«Կեցցեք, կանայք, էլի դուք եք կարողանում մի ելք գտնել փակ դռների առջև... Դա երևի իմ տեսած կինն է եղել...»։

— Ցտեսնված բժշկուհի է այդ Զեփյուռը։ Ջահել կանանց ասվածն է։ Այո, մարդիկ կան, որ մտածում են թե ինչքան շատ մարդ սպանեն, մարդիկ էլ կան, որ հազարավոր կյանքեր են փրկում։ Գինեկոլոգը միանգամից փրկում է երկու կյանք...

Մարջանյանը կնոջը չէր հիշում այդքան շատախոսելիս ու երբեք այդքան անհրաժեշտ չէր եղել նրա շատախոսությունը։ Նա նաև կարծիք է հայտնում, հայտնածն էլ հաստատում է...

Մարջանյանը մտավ լողասենյակ, լվացվեց սառը ջրով, լվացվեց կատաղած, երեսը ծեծելով, որպեսզի կարողանա սթափվել ու այսպես լսել կնոջը։ Նա նորից շտապ խոհանոց մտավ, վախենալով, թե Վանուհին կարող էր սպասված համարել զրույցը։ Իսկ ո՞ւր էին այն հարցերը, որ վերջին ամիսներին տանջում էին Մարջանյանին։ Ինչ հարց էլ տար, երևի Վանուհին կարողանար պատասխանել... Չկային այդ հարցերը. դրանք թաքնվել էին ամանների արանքները, Վանուհու ղեղեցիկ ու թաց ձեռքերի մեջ, սեղանին թողած ծխախոտատուփի տակ...

Մարջանյանը նախանձեց այն աղամարդկանց, որոնք այդպիսի պահերի կարողանում են սեփական կնոջն ասել.

— Կարոտե՞լ էի, անո՞ւշս... Ինչքա՞ն լավն ես... Քսաներեք տարում ես քեզ ոչ մի անգամ այսպիսի խոսքեր չեմ ասել...

— Ի՞նչ...— կիսաշրջվեց Վանուհին,— դու բա՞ն ասացիր...

Այդ բոպեին նրա ձվաձև, թիրամաշկ երեսն այլանդակ պիտի լիներ, քանի որ բոցկլտում էր երևի ներքին կրակից։ Նրա շատ տխուր աչքերը, որ մի քիչ ուրախություն էին փոխառել, նմանեցնում էին նրան Աստվածամորը... Ո՜չ, Աստվածամայրը հիմա Սոնան էր իր զավակով...

— Ասեցի, թե քո ձայնը լսեցի,— շարունակեց կինը։— Բայց բերանդ փակ է...

— Իսկ ի՞նչ պիտի ասեի,— զգուշացավ ամուսինը՝ ձեռքը նա քաշելով ծխախոտատուփից։

Մի՞թե ինքն իսկապես բարձրաձայն էր խոստովանել, որ երբեք Վանուհին այսպես անհվաճելի մնա, ամուսինը կկորցնի իրեն։ Նրան թվաց նույնիսկ, թե իր ներսում կուտակված սիրո առատությունը կարող է նաև շնչահեղձ անել իրեն։

— Ուզում էի ասել, թե Սոնան ե՞րբ է դուրս գրվելու...

«Ա՜խ, իմ հիվանդագին ինքնասիրություն, ինչքա՞ն ես խանգարում ինձ նորմալ մարդ լինելու հարցում»։

— Եթե երկուսն էլ լավ զգան, երևի՝ մեկ շաբաթից։

Մարջանյանը պատուհանի մոտ խոր շունչ առավ ու բարկացած վրա բերեց.

— Իսկ... Իսկ հնարավոր չի՞ ուղիղ մեզ մոտ բերել...

Վանուհին կտրեց ծորակը՝ հավանորեն ավելի լավ լսելու անպատկերացնելի խոսքը։

— Այնտեղ ո՞վ է խնամելու երեխաներին...

Վանուհին շտկվեց ու երես առ երես դարձավ ամուսնուն. մինչ այդ կրած հոգեկան տառապանքների հետքերն էին խանգարում նրա լիարժեք ժպիտին։ Անհնարելի կնճիռները նորահայտ մի արամադրություն էին նկարում նրա երեսին։ Ահա թե ինչու ամուսնու համար դժվար էր որոշել միանգամից հայտնված արցունքների պատճառը. ուրախությո՞ւնն էր դուրս մղել նրանց, թե՞ տխրությունը։

— Դու ուզում ես, որ նրանք այստե՞ղ գան...

— Դե, ուրիշ ի՞նչ կարող է լինել...

Մարջանյանն ուժով պոկեց հայացքը կնոջից, սեղանից մի գլանակ վերցրեց ու շրջվեց պարտեզի կողմը։ Անհամբեր սպասումը գիշերը հանձնում էր լուսաբացին։ Երրորդ գրուցակիցը, որ ոչ միայն համերաշխ էր երկուսի հետ, այլև աշխատում էր հաշտեցնել ամուսիններին, դրսի գեռևս չաղավաղված լռությունն էր։ Բայց ո՜չ, հեռվից մի երեխայի լաց զոլեր գցեց նեղնված լռության մեջ։ Պարտեզում գլուխներն իրար խոնարհած ակացիաներն էին իրենց սպիտակ ողկույզ-

ների բուրմունքը ցրում չորս դին։ Այդ ողկույզներից ամենամոտիկը հանկարծ այնպե՛ս ցնցվեց, ասես մեկը փորձում էր դանակով խփել նրան... Գիշերը կնոջը սարսափեցրած աղամարդու ձեռքն էր երևի...

Երբ Մարջանյանը շրջվեց, Վանուհին հեռացել էր։ Ընդարանի դռան ճեղքից մահճակալն էր երևում, որի վրա մի գեղեցիկ կին էր թեքվել։ Թեև մաղերը ծածկում էին նրա դեմքը, Մարջանյանը տեսավ, որ նա լաց էր լինում։ Իսկ ինքն իրեն վազուց էր ղրկել լիաբուռն ծիծաղելու և այդպես սրտանց արտասվելու հաճույքից...

Մարջանյանը ներս մտավ, մոտեցավ անկողնուն ու անհնազանդ մատներն ղգուշորեն խրեց կնոջ հրաշք մաղերի մեջ։ Ապա երկյուղածորեն նա քաշեց. ո՞վ գիտե, հանկարծ ու իր մատների տակ փլվեր կռացած այդ քնքուշ մարմինը...

1935

ԼՈՎԱՆԸ

Մատաղաջիճ

Ա

Երբ Մարիամն ավտոբուս բարձրացավ, ոչ մի ծանոթ կերպարանքի չհանդիպեց։ Տեղ դատարկ վերջում, մաղ-մսրուքի մեջ կորած մի աղամարդու կողքին՝ անցնելով բանջարեղենով տաղած խոնավ պարկի վրայով։

Ասենք՝ որտեղի՞ց ծանոթ երևար, երբ հազիվ մի տարի էր անցել այն օրից, երբ մթնով ոտք դրեց այդ շրջանի ծայրում դանվող գյուղի վարորդ Լեպոյի տունը։ Իսկ այդ ընթացքում համարյա ոչ ոքի չէր տեսել։

Գեղի Երևան ուղղություն վերցրած ավտոբուսը հետապատ վազում էր աշնանացած դյուղերի կողքով։ Աշո՞ւն էր, այն էլ ի՞նչ աշուն։ Ուրիշ այդպիսի օրերի Մարիամը մտնում էր իրենց այգին ու մոլորվում դոյլերի ու բույրերի մեջ։ Երբեմն մոտանում էր դեղձ հավաքելն ու շվար թայլերով ծառից-ծառ էր քշվում, ձեռքը քսում էր կարմրլիկ ծառերի շեկլոտ բներին, ապշում կանաչից բոց-գրակ հասունացում գնացող երկարուկ ու կեռվող տերևներից։ Պատահում էր նույնպես, որ աղջիկն ուղղակի ընկնում էր որևէ հողաթմբի ու երկար ժամանակ ականջը չէր կարողանում պոկել կողքից դլորվող առվակի անուշ երգից։

— Աղջի Մարիա՞մ, ի՞նչ եղավ քեզ, էլի ընեցի՞ր,— պատշգամբ տանող աստիճաններից ձայնում էր մայրը— Հիմի հերդ կգա, դեղձը շուկա պիտի հասցնես։

Սթափվում էր Մարիամն ու շարունակում բերքահավաքը։ Երբեմն մոր չոր տոնը ստիպում էր աղջկան հավանական համարելու այն ասեկոսեները, թե իբր Մարիամը վերցնելի

Ներեխա՛ Ի՛հարկն, եթե աղջիկն այդքան նման չլիներ մորը, իրոք կհավատար այն պարզ պատճառաբանությամբ, որ մեծ էին մոր սիրտ, վերաբերմունքի չափն ու տեսակը, որ ուղղվում էր դստեր և երկու որդիների նկատմամբ։ Մանավանդ որ մայրը միամտաբար մի երկու անգամ խոստովանել էր.

— Հենց ասեցին աղջիկ եմ ունենալ, թևերս թուլացան։ Ամբողջ օրն արցունք թափեցի։ Կուրծք էլ չեմ ուզում տալ։ Ինչ մեղքս թաքցնեմ, մի կին էլ հույսը կտրել էր երեխա ունենալուց, շատ խնդրեց, որ քեզ իրեն տամ,— ծիծաղելով պատմում էր մայրը։— Հերդ խանգարեց, ասեց՝ ամոթ է, ի՞նչ կասեն մարդիկ, ուզում ես գյուղում ասելիք դառնա՞նք։ Ախր, Մարիամ ջան, աղջիկն ի՞նչ է, անբախտ արարած։ Ամբողջ կյանքում տրորվում է, տրորվում ու գնահատող չկա։ Ես ի՞նչ եմ արել իմ ծնողների համար, որ դու անես։ Տանջանքով մեծացնում ենք, որ գնա ուրիշի տունը շենացնի, նրանց հոգսը քաշի։ Ի՞նչ ասեմ, աղջիկը որ ծնվում է, սև բախտն էլ հետն է ծնվում։

Այդ խոսակցությունն էլ բավական էր, որպեսզի Մարիամն այն եզրահանգման գար, որ եթե ինքը վերցնովի էլ չէ, ապա այնքան հարազատ ու կապված չեն իրենք, ինչպես մայր ու աղջիկ են լինում ընդհանրապես։

Այդ զրույցի ամբողջ պիշերն աչք չփակեց Մարիամը, անիծեց իր ծնունդը, կռիվ տվեց բարձի հետ, պատատիպանի սպասեց ու մնաց անելք, չգիտեր դուռ առաջ չլվար։ Ի՞նչ էր դուրս գալիս. իրեն պահել էին ամոթի՞ց, ասել է թե՝ հարկադրվա՞ծ։ Բայց չէ՞ որ մայրը հրրեմն քաղցր, խսկական մայրաբար էր խոսում նաև իր հետ, մատհոգվում էր իր բախտով։ Եվ, այնուամենայնիվ, որքա՞ն նման էին մայր ու աղջիկ. նույն թուխ ու կլոր երեսը, թեև Մարիամի ծնոտի սրությունը մի քիչ ձվաձևության պատրանք էր տալիս զեմքին։ Նույն խաղող, սև ու դեղեցիկ աչքերը՝ խիտ ու էլեռ թարթիչներով շրջանակված։ Միայն եթե մոր աչքերում հաճախ խստություն կամ զայրույթ էին հայտնվում, Մարիամի աչքերը լեցուն էին անտակ թախիծով։ Նույն փոքր քիթը, աջ այտին ծվարած նույն փոսիկը, որ հազվագեպ էր իրեն զգալ տալիս. փոսիկը հայտնվում է ժպիտից։ Եթե մոր մազերը

գունդուր էին կարակուլի նման, Մարիամինն ալիք էին տալիս։ Ջահել տարիների նկարներում մայրն էլ էր դստեր նման նրբակազմ։ Վերջին տարիներին թե ոնց այդպես լցվեց, կերցրեց մարմնի ձևերը, դժվար էր հասկանալ։

Երբ մի անգամ Մարիամն անկեղծորեն հարցրեց մորը իր նկատմամբ նրա ցուցաբերած ուռը վերաբերմունքի մասին, նա էլ հանգիստ բացատրեց, որ աղջկան չդիտի երես տալ, կատարել նրա քմահաճույքները, գորգարել, որպեսզի նա չսովորի այդ ամենին և ամուսնանալով՝ նույնը չպահանջի ամուսնուց, որա ծնողներից, որպեսզի հարենական տան նիստ ու կացը հիշելով՝ այնքան էլ դժբախտ չզգա իրենն։

Բայց ասի տես, որ նույն ծնողները միանգամայն այլ վերաբերմունք ունեին որդիների նկատմամբ։ Նրանց յուրաքանչյուր խնդրանք (ո՞չ, նրանք խնդրանք չունեին), պահանջ կատարում էին հոժարությամբ, դրա-հնազանդ։ Երկհարկանի մենատունը կառուցել էին հենց նրանց համար։ Ըստ երևույթին դա էլ քիչ էին համարում և մտածում էին երկրորդ այդպիսի տուն ունենալու մասին. ինչքանո՞վ է հարմար երկու եղբոր ընտանիքների կեցությունը նույն շենքում, թեկուզ և առանձին մուտքերով։

Մարիամի ավագ եղբայր Վալոզը, ուսեբորդ դասարանը մի կերպ ավարտելուց հետո սովորելու մասին (թեկուզ տրեխ տրնեա) չէր էլ ուզում լսել։ Երրորդ տարին էր, ինչ մի շինարարական մեջ ձեռնարկված էր որպես բանվոր և օրան դրամում էին միայն այն բանի համար, որ սատարում էր իր անվանի ատատորեն դուրս գրված աշխատավարձի շնորհիվ և լինդամենը մի խղճուկ գումար էր վերցնում իրենն։ Ամբողջ օրը թափառում էր իր նման տնբանների հետ, արեւլածոգնի տեսք էր չլինում կամ էլ անկուշտ քնում էր կարտեռատածի բազմոցին։ Ինչ՞ը չարեցին ծնողները նրան զինծառայությունից ազատելու համար։ Եվ ասեցին. մեր ավիզ պահած բալեն չի զինվոր բանակում։

Փոքր եղբայրը՝ Կարոն, որ իններորդ դասարանում էր սովորում, կատարյալ բռնակալ էր այդ տանը։ Ամեն ինչ պիտի համաձայնեցնեին Կարոյի հետ, քանի որ սա լավ էր սովորում և նույնիսկ մեդալի թեկնածու էին համարում։ Վերջին տարվա այդու ոչ եկամտան էլ ավելցին մի «ժիրգուլի» տան, որի զեկի ետևից Կարոյի քիթն է չէր երևում։ Բա-

ղի տղաները հանում էին մեքենայի հոդին։ Մի անգամ էլ տարել-խփել էին մի բեռնատարի ու հաղիվ ազատվել մահից։ Իմանալով կատարվածը՝ հայրն ապտակել էր Կարոյին։ Սա վիրավորանքից քանի օր թողել-փախել էր տանից։ Մնողները վշտից խելագարվում էին։ Երբ հայտնվեց որդին, զգաստությունից խոշտանգված հայրը լաց լինելով համբուրեց տղային՝ վավերացնելով սրա տիրակալության հզորությունը։

Սակայն Մարիամին ամենից ավելի խորշանք էր պատճառում ծնողների գեպի փողը նստվածք տված պաշտամունքը։ Բանն այնտեղ էր հասել, որ տանեցիները չգրված մի օրենքով պիտի ուտեին միայն ծառերի տակ թափված, ոչն էլ փչացող միրգը։ Ամեն ինչ հաշվված էր այգում՝ որ միրգը երբ և քանիսով պիտի վաճառվեր։ Հայրը նույնիսկ մի երկու թաղաշար խաղող հանեց շարքից՝ չարչարանքը չատ, եկամուտը՝ հե՛չ. երկու կիլո խաղողին մի հատ մեխակ էլ չէին տալիս։ Եվ տեղը չերմոց դցեց մեխակի ու պղպեղի համար։

— Մարիա՜մ,— ձայնում էր մայրը աստիճանների վրայից։— Ինչի՞ ես կանգնել, անասվա՜ծ, գոնե մեխակ քաղի։ Հինգ հատ երկու ռուբլով թոցնում են։ Ուստա աքա, ուր էր՝ հերդ կգա տանելու...

Եվ Մարիամը պոկելով մեխակի երկար ու նիգ ցողունները, մտքում հաշվում էր՝ երկու ռուբլի, չորս ռուբլի, վեց, ութ, տասը... Առես ոչ թե ծաղիկ, երկու ռուբլիանոցներ էր պոկում ու ճաթուր-հաթուր ռուբլիանոց սրբակներ ասրքում, որոնք ոչ բուրմունք ունեին, ոչ՝ հմայք։

Մարիամի երազանքն էր մանկաբույժ դառնալ։ Եթե ի գրականություն չատ էր սիրում, գասերից ու գործից դուրս ժամերին կարդում էր անընդհատ, բայց որոշել էր անպայման դառնալ մանկաբույժ։ Իսկ երբ գիշերը լուսացնում էր ընթերցանությամբ, մայրը բարկանում էր.

— Էդ գրքերը քեզ հաց ու գուր չեն տալ։ Ծեռնում ես՝ երկու տարի իրար վրա գիմում ես բժշկական ինստիտուտ ու չես ընդունվում։ Գե՛ն գցիր ամեն ինչ, օգնիր մեզ, մինչև բախտիդ զոնները բացվեն։ Քո ընկերուհիներին նայիր, ասա ուզո՞ւմ են չուկայից տուն գալ։ Մի տարում իրենց բաժինը գրեցին։

— Ես ոչ շուկա կգնամ, ոչ էլ քաղհան կանեմ,— կտրուկ վրա բերեց Մարիամը։— Կարի ֆաբրիկայում կաշխատեմ այնտեղ, մինչև կամ ընդունվեմ, կամ էլ... Ես չեմ էլ ուզում ամուսնանալ...

— Ո՞նց թե նզբայրներիդ վզին ե՞ս ուզում մնալ։ Ո՞ր ուղիկը հարս կդա, իմանալով, որ տանը մնացած աղջիկ ունենք։

— Երկու հերթ կաշխատեմ, սենյակ կվարձեմ...

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ, ինչ օրի հասանք։ Ազապ աղջիկն էլ տուն ու տեղը թողած գնա բրեհո՞վ ապրի...

— Այս տարի էլ կգրվեմ, եթե չընդունվեցի, ուստմնարան կգնամ, պա՞րզ է։

— Էդ քանի՞ տարեկան կդառնաս,— արդեն լացակումած նեղանում էր մայրը։

— Ես ասացի, որ չե՞մ ուզում ամուսնանալ։

Այս խոսքով էլ Մարիամն աշխատում էր վերջ դնել ամենօրյա հոգեմաշ խոսակցությանը։

Մարիամին տանջում էր նաև մի այլ հանգամանք։ Ընտանի իրենց պահարանները ալյթում էին արտասահմանյան բեռիր սպասքով, տարբեր չափերի բյուրեղապակի բաժակներով ու սկահակներով, դարձյալ իրենք ճաշում էին, թեյում խոհանոցում ու չգիտես որ դարից մնացած կոշտ ու կոպիտ, գունաթափ ու հաստաբետ ամաններով։ Մի օր էլ, հենց առաջին աշխատավարձը ստանալով՝ նա տուն բերեց տեղական, բայց նորմալ տեսքով ափսեներ։

— Վե՛րջ, սրանից հետո սրանք ենք օգտագործելու,— ասաց նա ու հավաքելով հները՝ ուզեց տղամանը նետել։

— Չհամարձակվե՛ս,— ճչաց մայրը խլելով ամանները։— Սրանք մորս հիշատակն են։ Եթե դու լայաղ չես անում, մեզ ձեռ է տալի...

Եվ իսկապես, տանեցիներից ոչ մեկը չնայեց Մարիամի բերածներին։

— Կարևորն ուտելիքն է, աղջիկ ջան,— լրացրեց հայրը,— թե չէ ամանը...

Բայց ահա մի օր էլ Մարիամն աշխատանքից տուն գալով շատ լուրջ հայտարարեց, թե ուր-որ է իրենց տուն են գալու գպրոցի դիրեկտորն ու Կարոյի մի քանի ուսուցիչներ։

— Ինչի՞ համար,— տարակուսեց մայրը։

— Չգիտեմ, ինձ չասացին։ Երևի մեղալի հարցով... Հա՛, գուցե մեզ մոտ էլ ճաշեն։

Մինչ հայրը մոքի մեջ կընկեր, թե այդ հինգ-վեց հոգին ինչու պիտի իրենց տուն գային, Վարդանուշը կարգադրեց սեղանը բացել, հանել սպիտակ սփռոցը և շաբաթագործված սպասքը ողողել-սրբել ու շարել սեղանին, անձնուրացիկների հետ զանակ-պատառաքաղներն էլ բռնեցին իրենց արժանավոր տեղերը։ Տարբեր չափերի բաժակները ևս զարդարեցին սեղանը։ Հայրը այգուց բնաբեր միրգ հավաքեց, լվաց ծորակի տակ ու ավեց Մարիամին։ Սա գեղեցիկ դասավորեց սկահակների մեջ։ Վարդանուշը ջուր ցանեց ասֆիճաններին ու բակը, ավլեց, ինքն էլ լվացվեց։

— Վրայիդ խալաթը հանի,— պատվիրեց Մարիամը։

Մայրը ենթարկվեց։ Մազերը հարդարեց, հոգաթափերը փոխարինեց գուրս գալու կիսակոշիկներով։ Հայրն ու եղբայրներն էլ կարգի բերեցին իրենց։ Մարիամը նույնիսկ մի քանի մեխակ քաղեց ու գեղեցիկ ծաղկամանով դրեց պահարանին։

— Մենակ ճաշը քիչ չի՞,— հարցրեց մայրը։

— Ես հիմա սալաթներ էլ կսարքեմ,— աշխույժ վրա բերեց Մարիամը։

— Ջմերուկ եմ դրել սառը ջրի տակ,— կողքից նկատեց հայրը։— Տեսնես՝ ե՞րբ կգան։

— Հենց ամեն ինչ պատրաստենք, կգան,— վրա բերեց Մարիամը։ Բայց տեսնելով, որ հայրն ուզում է սովորականի պես ուտելուց առաջ մի բաժակ օղի խմել, կանխեց։— Երբ նստենք, մյուսների հետ դու էլ կխմես։

Մարիամը նույնիսկ քաղցր հյութ լցրեց գրաֆինն ու դրեց սեղանին։

— Դե՛, խնդրում եմ նստեք,— հանդիսավոր հայտարարեց Մարիամը։— Սրանից հետո այսպես ենք ճաշելու։

— Ո՞նց թե։ Բա հյուրե՞րը,— ափսոսանքով բարկացավ մայրը։

— Ոչ մի հյուր էլ չի գալու,— կտրուկ ասաց աղջիկը։— Հասկացեք, տներ կան, որ ամեն օր են այսպես ճաշում։

Լ[illegible]մեն հյուրերի դեպքում ե՞նք մեզ մարդ համարելու։ Նրանք և վերջ։

— Լավը, դու մեզ ձեռ ես առնո՞ւմ,— չէր հանգստանում մայրը։— Դու մեզ ինչի՞ տեղ ես դրել։

— Իսկական մարդու տեղ և ուզում եմ ամենից առաջ մենք հարգենք մեզ։ Արդեն հիսուն տարեկան եք, էլ ո՞ր տարիքի համար եք պահել մարդավարի ապրելը...

— Չէ՛, սա մեզ ձեռ է առել,— չէր հանգստանում մայրը։ Նա նույնիսկ շարժում արեց եղած-չեղածը հավաքելու։

— Լա՛վ, Վարդանուշ,— կանխեց ամուսինը։— Ճիշտ է ասում Մարիամը։ Թող մի անգամ էլ մենք մարդ դառնք մեզ։ Ամբողջ օրը հո երեսներս հոգին ու աչքներս փոքրին չի՞ լինելու։

Եղբայրները ծիծաղում էին քթերի տակ։

Այդ միակ օրը ճաշն անցավ բարձր մակարդակով։

— Կարծես նշանդրեքի սեղան լինի,— այնուամենայնիվ հեգնանքով ակնարկեց մայրը։— Ես էլ կարծեցի, թե...

Նա չշարունակեց։ Մարիամն էլ լավ հասկացավ չասվածը, բանի որ մոր մտահոգությունն իր ամուսնությունն էր։

— Իմացա՞ր, ձեր դասարանցի Շուշանը տղա է ունեցել,— համենայն դեպս չասվածը չկարողացավ պահել մայրը։ Հետո տխուր ավելացրեց։— Բոլորն էլ ամուսնացան, բոլորն էլ տղա երեխա ունեցան...

Մարիամը չուզեց ճշտել, որ իր համադասարանցիներից ընդամենը վեցն էին ամուսնացել և երկուսն էին տղա զավակ ունեցել։ Հարկավոր չէր, առանց այն էլ ամեն նման խոստակցություն ավելացնում էր մոր և դստեր միջև եղած տարանջատումը։ Եվ Մարիամն իր սփոփանքը գտնում էր գրքերը կարդալու մեջ։

— Ի՞նչ ես ամբողջ գիշեր լույսը վառ պահում,— դիտում էր մայրը։— Եթե մենակ դասերիդ վրա պարապես, ուրիշ հարց։

— Եթե էներգիան ես ափսոսում, ջերմոցից վառարանները հանիր,— հանգիստ առաջարկում էր աղջիկը։

— Դրանց հոսանքը շլոտչիկի միջով չի անցնում։

— Բա էլ ո՞ւր ես ափսոսում մի լամպը։

— Քնելս եմ ափսոսում, դո՛ւ ես մեղք, որ ամբողջ գիշեր

աչք չեմ փակում, առավոտները Հարբաթի նման ես գործի գնում, տուն դառնալուց հետո էլ ոչ այդի ես մտնում, ոչ՝ օգնում։ Ամեն ինչ ինձ վրա ես թողել, խիղճ չունես։

— Դուք էլ քիչ կուտակեք, մարդավարի ապրելու մասին մտածեք։

Եվ այսպես, մոր և դստեր միջև համարյա ոչ մի գրություն չէր ստացվում։

«Դու էլ ավելի լավ է մարդու ընելու մասին մտածիր,— ամեն օր աշխատանքի գնալիս ու գալիս մոր հիշեցումները էին Մարիամի ականջներում։— Քո ընկերուհիները, որ բարձրագույն չունեն, պակա՞ս տուն ու տեղի տեր են դառել։ Իսկ Մարիամը բնավ չէր ուզում մտածել այդ մասին, քանի որ չէր հայտնվել այն երիտասարդը, որի հետ կկարողանար իր կյանքը շարունակել։

Եվ հանկարծ...

Աշխարհում այնքա՞ն աղջիկներ կան, տեր ասված, որտեղի՞ց այդ երես առած Լիպոն գտավ իրեն։ Ամեն օր գալիս էր իրենց տան առաջին հարկի կենվորներին տեսնելու։ Տանտիրուհին էլ տեղի-անտեղի իրենց մոտ էր կանչում Մարիամին, խոսեցնում, այդ Լիպոյի բարեմասնությունների վրա էր բևեռում Մարիամի ուշադրությունը. հարևան շրջանի ուսումնարանի դիրեկտորի վարորդն է, ճարպիկ, աշխատող, մեծ միջավայրի տեր, ընտանիքի համար էլ խելքը գնում է։

Ինչքան էլ Մարիամը ցույց էր տալիս, թե չի նկատում սեղանի պլխավերևում նստած վառվռուն վերնաշապիկով, ընդգծված ուսերով երիտասարդին, կլի զգում էր Լիպոյի կրակված հայացքն իր վրա։ Կարծես աշխարհի աղջիկներին բաժանել էին, ու Մարիամն էլ նրան էր հասել։

Երևի թե մի քանի տարեկան կլիներ, խոշոր քթով, իրար մոտիկ լայն աչքերով, տափակ ճակատով ու առատ գանգուր մազերով, արմունկները տիրաբար սեղանին դրած այդ երիտասարդը, որ մոխրամանի մեջ էր նետում ծխախոտի մոխիրը։

— Ինչ ասես ձեռքից գալիս է.— Մարիամի լսելիքին էր հասցնում հարևանուհին։— Դասախոսների հետ է նստում-վեր կենում։

Պարզ է, որ այս ամենը չէր կարող վրիպել Վարդանուշի

ամենատես հայացքից։ Անմիջապես կռահել էր, որ իր աղջկա համար էր կենվորի տանն ամեն օր հայտնվում այդ տղան։ Մածուկ, միայն իրեն հայտնի ճանապարհներով նա տեղեկություններ էր հավաքել Լիպոյի ու նրա ծնողների մասին ու այդ բոլորով էլ խուժել էր կենվորի սենյակը.

— Կամ ձեր էդ տղայի ոտը կտրեք էստեղից, կամ էլ ձեզ համար նոր տուն ճարեք։

— Ի՞նչ ես ասում, ա՛յ Վարդանուշ. Լիպոն շատ լավ տղա է ու սրտով էլ կպել է ձեր Մարիամին։

— Դու ո՞նց ես երաշխավորում մի տղայի, որ բացի դիրեկտորին պագավատ տալուց ոչ մի բանով չի զբաղվում։ Մայրն էլ անեծքի տոպրակը դռշից կախած է ման գալիս։ Հերն էլ ճենճոտ սառոշկայով է պտտում։ Դրանք հարգ կդահե՞ն։ Պուտը ծառից հեռու չի ընկնի։ Էնպես որ էդ լավ[illegible] հասկացրեք, որ մեկ էլ էս կողմերը չերևա, թե չէ միլիցիա[illegible] կկանչեմ...

— Հոգուդ մեղք ես անում, Վարդանուշ։ Ես դրանց տակ գլուխ գիտեմ...

— Դու էն չգիտես, ինչ ես եմ իմացել։ Կարճ. ես աղջիկ չունե՛մ դրանց տալու։

Դուռը շրմփացնելով՝ Վարդանուշը շտապել էր վեր՝ մի ապտակ հասցնելով աղջկան.

— Ուշքդ գնո՞ւմ է մարդ առնելու համար։ Էդ տղի ինչի՞ն ես հավանել... Գլուխգովան շան որդի... Դրա լեզվին չհավատա[illegible]ես չէ տանից դուրս կանեմ։

Մարիամը ոչ մի կերպ չէր կարողացել համոզել մորը, որ ինքը միանգամայն անտարբեր է նրա նկատմամբ, որ ինքն առհասարակ ոչ մի մտադրություն չունի ամուսնանալու...

— Ի՞նչ ես հիմար-հիմար դուրս տալիս։ Թող մի կարգին տղա հանդիպի, տեսնեմ ո՞նց չես գնա,— զայրույթով եզրափակել էր մայրը։

— Իսկ ես ի՞նչ միջավայր ունեմ, որ լավ տղա հանդիպի,— չէր նահանջել Մարիամը։— Բոլորը կանայք են։

— Կարգին աղջկան պահած տեղից էլ կհանեն,— չէր խնայել մայրը։— Ընկերուհիներիդ ո՞նց տարան։

Կենվորի տուն այցելությունները դադարեցնելու փոխա-

բին Լիպոն ներկայացավ ծնողների հետ՝ Մարիամից խոսք առնելու։

— Ես համաձայն չեմ,— մանդամից կարեց Վարդանուշը։— Թե աղջիկս ուզում է, իր գործն է։— Ապա նա դարձավ մի կողմ քաշված Մարիամին։— Մի խոսք ասա, ուզո՞ւմ ես տղին։

— Չե՛մ ուզում,— նեռեց աղջիկն ու դուրս նետվեց։

Խնամիներին ձեռնառնալ ճանապարհելուց հետո Վարդանուշը մոտեցավ պատշգամբում կանգնած Մարիամին.

— Տես, հետո չմղկտաս, թե քեզ գցեցինք բախտիդ վրա։ Ես կարգին հարց ու փորձ եմ արել։ Եթե շնորհքով մարդ լինեին, կտայի։ Աղջիկ ջան, եթե դու քո գինը չիմանաս, ուրիշը հել չի իմանա։ Իսկ դրանք ամենահեռին մարդն են և ուրիշների էլ բանի տեղ չեն գնում։ Ո՞վ է տեսել, որ տան միջի լաթերով գան աղջիկ ուզելու։ Հերն էլ ասց որ ջուր առած լիներ բերանը։ Ասում են՝ բացի հայհոյանքից ոչ մի ուրիշ խոսք չի դուրս գալիս դրա բերանից.

Մարիամը լուռ լսում էր։ Նա համաձայն էր մոր հետ։ Իսկապես, եթե ընտանիքը մի քիչ մակարդակ ունենար, Լիպոն արտաքնապես վատը չէր։ Կգնար Մարիամն ու կապրեր ամեն խոսք ու զրույցից։

Մոր հեռանալուց հետո Մարիամը մնաց էլ բաց պատշգամբի սյանը հենված։ Այդ ե՞րբ էր ծաղկել պարտեզը։ Ասես աշխարհում ոչ մի վատ բան չէր պատահել։ Գարունն իր աղջկային նազանքով ողողել էր ամբողջ պարտեզը։ Ծաղկած եղբևանիները մի-մի հարսնացած աղջիկ էին դարձել, սպիտակ քող էին գցել գլխներին, որոնք մեղմ ծածանվում էին սյուքի հետ։

Զնախատեսված խնամիները հեռացել էին այն սպառնալիքով, թե միևնույն է, Մարիամն իրենցն է լինելու։

Իսկապես, դրանից հետո Լիպոն ամեն օր ժամը հինգից կանգնում էր ֆարրիկայի դիմացի ակացիայի տակ։ Այդ կողմերում պարապ-սարապ ջահելների կիսուկ ինչքան ասեսս։ Հենց Մարիամը դուրս էր գալիս, աղաներին թողած՝ Լիպոն այնպիսի վստահ քայլերով էր ուղղվում, ասես աղջկա խոսքն արդեն առած լիներ։ Մոտենում էր Մարիամին ու կողքից քայլում։

— Ես լեղ սիրում եմ, Մարիամ, թե չէ ինչ գործ ունեի էս կողմերը։ Ինձ դուր ես եկել առաջին օրից, ու մեջս երդվել եմ ամուսնանալ հետդ։ Արի կարգին հասկանանք իրար։ Կարծում ես չգիտե՞մ, որ ծնողներդ դիտմամբ են դեմ։ Հա՛, հա՛, որպեսզի նշանդրեք ու հարսանիք չանեն։ Արևս վկա, նրանք ավելի գոհ կլինեն, որ մենք հենց էսպես քայլերով ուշիկ մեր տուն գնանք։

Տղայի խոսքերը տակնուվրա էին անում Մարիամի հոգին։ Սիրո այդ Լիպոն որտեղի՞ց դիտեր իր ծնողների անսրտությունը։ Կարող է կենվո՞ւն է ասել։ Բայց Մարիամը նաև մոր աչքունքներն է տեսել իր բախտի փակ դռների մասին խոսելիս... Գուցե Լիպոն ճի՞շտ է ասում, գուցե իրո՞ք ծնողները չեն ուզում ծախսի տակ ընկնել... Ի՞նչ անել, ո՞նց իմանալ իսկությունը։ Հո մորից չի՞ կարող բացատրություն պահանջել։ Ա՛յ, եթե ուրիշ ծնողների ու աղջիկների նման իրենք էլ մտերիմ լիներին, Մարիամն անկեղծորեն կբացեր սիրտը ու մոր խորհրդով կշարժվեր։ Բայց ի՞նչ մտերմության մասին կարող էր խոսք լինել, երբ նույնիսկ չէին վստահում միմյանց, մեկի արածը մյուսի սրտովը չէր։ Այ, սա՛ էր դժբախտությունը։

Թեև Մարիամը ոչ մի խոսքով չէր պատասխանում Լիպոնին և աշխատում էր հետու քայլել նրանից, էլի այդ հանդիպումների լուրն իրենից շուտ էր տուն հասնում։ Մայրն անմիջապես ելնում էր դիմը.

— Թե սրտովդ էր, ինչի՞ մերժեցիր։ Բա դու ամոթ չունե՞ս, բա դու քո եղբայրների պատվի մասին չես մտածո՞ւմ... Էդ ի՞նչ օջախի ծնունդ է, որ քարշ ես գալի հետը։ Ինչի՞ ես եղբարներիդ արունքի տակ ընկնում...

Հիմա աշուն էր։ Ավտոբուսի կողքով հետ էին վազում աշնանացած գյուղերը, փողոցները, տները, մարդիկ։ Այնպես արագ էին վազում, որ խանգարում էին Մարիամին մի եղրահանգման, մի որոշման գալ։

Որտե՞ղ մնաց միտքը։ Ո՞ր ճանապարհին թողեց կյանքի ջարդված սայլակը։ Հա, հենց այդ օրն էր, որ հայրը պարզ ու որոշ հայտարարեց.

— Եթե մեկ էլ էդ լակոտի հետ քայլափոխ արիր, էլ դու իմ աղջիկը չես։

— Ես ի՞նչ անեմ, որ գալիս է,— լացակումած ասաբերեց Մարիամը։

— Որ քեզ նամուսով պահես, չի՞ դա,— կարմրատակեց մայրը։— Ամեն ինչ աղջկանից է կախված, թույլ ես տալիս, գալիս է։ Պատվով աղջկան փողոցում չեն խոսեցնում։

— Մարիամ աղջիկ, ես քեզ հասատատ եմ ասում,— շրջելով սեղմելով ասաց հայրը։ Նա այդպես էր անում ամենազայրացած պահին։ Մարիամը շունչը պահեց ամենադաժան վճիռը լսելու— Եթե հանկարծ, առանց մեզ ասելու, սուսուփուս գնաս էդ ոդի հետ, ոտքդ էլ էս շեմը չտեսնի, հասկացա՞ր Ուրեմն իմացիր, դրանից հետո դու մեռած ես մեզ համար։

Հետո էլի ի՞նչ եղավ։

Հետո կատարվեց ամենաանակատագրականը։

Հաջորդ օրը Լիպոն էլի հայտնվեց, այս անգամ ավելի վճռական քայլերով, հաստատ որոշում հանած։ Սափրվել էր, դեղին վերնաշապիկ էր հագել, տարատը արդուկած էր, մազերը խնամքով սանրած։

— Մարիամ, եթե հենց հիմի չգաս հետս, փոշմանելու ես, արևս վկա։ Քեզ տունը սոդոմ-գոմոր կսարքեմ, չնայած ամեն օր էլ կռիվ-զալմազալ է։ Ես գիտեմ, որ դու ուզում ես բժշկական ինստիտուտ ընդունվել։ Դրանց դասախոսներին բոլորին էլ լավ եմ ճանաչում, ինչ որ պետքն է, ես կանեմ, կընդունվես։ Ի՞նչ կյանք է քո կյանքը։ Կատանեմ, խանումի պես կպահեմ։ Վաղվանից էլ գործի չես գնա։ Ճիշտ է, ծնողներիս փատարին դուրս արիք,- բայց մենք կույ ավելցինք էդ բոլորը, քանի որ բոլորիս սիրան էլ քեզ է կպել։ Հավատա, մերս ամեն օր քեզ է սպասում։ Վարդի պես կնայի քեզ, ոչ թե քո ծնողների նման... Ամեն օր... Լա՛վ, լա՛վ, չեմ ուզում ձեր հաշիվների մեջ մտնել։ Կապրենք միասին, կարգին ընտանիք կստեղծենք, ձերոնք էլ կտեսնեն, որ բախտավոր ենք, որ սիրալը իրենք են, ամեն ինչ կմոռանան, կհաշտվեն։ Քիչ է պատահո՞ւմ...

Մարիամը երբեմն նրան էր նայում և ուզում էր հավատալ լուծին։

Իրիկնաժամ էր արդեն։ Նրանք հասել էին այն խաչմերուկին, որի ճյուղերը գնում էին դեպի Մարիամենց տուն,

մեկը՝ շրջկենտրոն, երրորդը դեպի այգիները, չորրորդը...

Լակ էլի Մարիամն այս բոպեից խալ քաշի ամեն ինչի վրա։ Իրոպես դնա այս աղայի հետ ու այլևս չտեսնի իրենց տան հոգի հանող ահաբանները։ Գուցե դա՞ է ճիշտը, գուցե միակ փրկությունը գնա՞լն է։ Միևնույն է, այսօր արդեն հարենական դուռը փակ է իր առջև։ Եթե տուն էլ մտնի, ավելի պիսի վարկաբեկված լինի։ Եվ ինչպե՞ս գնա, ո՞վ է այնտեղ սպասում իրեն։ Եվ ի՞նչ հեղինակություն ունի Մարիամը հարազատների մեջ։ Ի՞նչ է մնում անել։ Կամ ընդունել Լիպոյի առաջարկը, կամ՝ ինքնասպան լինել։ Թե չէ այսպես ապրելը մեռնելուց վատ է։ Գնա՝ ու բոլորին ազատի մղձավանջից։ Գնա՝ ու այլևս տանը մնացած չհամարվի։ Գնա՝ ու ճանապարհ բաց անի եկող հարսների համար...

— Իմացիր, Մարիամ, ես խոսքիս տեր աղամարդ եմ։ Կտեսնես, որ ամեն ինչ լավ կլինի։ Ճիշտ է, բժշկականում ընդունվելու համար հիմի քառասուն հազար են պահանջում, բայց ես էնպիսի ընկերներ ունեմ, որ պատրաստ են ամեն ինչում օգնել ինձ։ Քեզ էլ ի՞նչ է պետք՝ սովորել ու խաղաղ ապրել։ Մերս էլ կհանգստանա, ես էլ չեմ թափառի ձեր ֆաբրիկայի մոտերքը։ Գնա՛նք, Մարիամ ջան, գնանք, ինձ էլ ազատի էս վիճակից, քեզ էլ...

Մոլոր հայացքով կանգնած Մարիամը չգիտեր անելիքը։

— Դե՞, Մարիամ, խնդրում եմ։

Մարիամը հիշում է, որ աջ ոտքը գնաց Լիպոյի կողմը, հետո քայլերը միակամ տարան նրան, տարան անհայտ մի ուղղությամբ։

Վե՛րջ։ Այլևս չի հանդիպելու իր հարազատներին, ինքն էլ գոյություն չունի նրանց համար։ Մարիամը մեռած է։ Անհայտ է նրա գերեզմանը...

Նրանք քայլում էին մոմի խորդուբորդություններով։ Թվում էր, թե սև մթության մեջ սև բլուրներ էին հայտնվում իրենց առջև։ Տղայի ձեռքն ամուր կպած էր Մարիամի արմնկածալին։ Մառեերն այնպես էին աքցանվել, ասես թոլանալու դեպքում աղջիկը կարող էր անհայտանալ անեզրագիծ խավարում, հոնավ գետինն անաղմուկ ծծում էր նրանց ոտնաձայները։

Ոչ մի լուսավոր կետ չէր երևում։

Աշնանամուտ գյուղերը պոչ-պոչի բռնած, գնացք խաղացող երեխաների պես ետ-ետ էին սուրում՝ պո՛ւ-պո՛ւ։ Հիմա սրանք այնքան մանր էին, ուղղակի մանկապարտեզ գյուղեր։

Հետո՞ ինչ եղավ, որ Մարիամը նորից ընկավ հուսահատության մեջ։

Մեկ շաբաթ թույլ չտվեց Լիպոյին մոտենալու իրեն, չնայած սկեսրոջ անհանգստությունն արդեն վատ բան էր գուշակում։ Մարիամը վանում էր Լիպոյին՝ հոգու խորքում մի անհայտ ակնկալիք փայփայելով. գուցե, այնուամենայնիվ, ծնողները գային իր ետևից։ Ջեկան։ Ընդհակառակը, չգիտես մայրն ինչպես էր իմացել Լիպոյենց հեռախոսի համարը և զանգահարեց.

— Դո՛ւ, Մարիամ աղջիկ, լավ խայտառակեցիր մեզ աղդով-տակով։ Հերդ կանչեց իմ ու իր բոլոր հարազատներին և ասեց, որ մենք էլ աղջիկ չունենք, որ եթե մեկն ու մեկը տուն թողնի քեզ, էլ մեզ հետ կապ չունենա... Էնպես որ մեր անունը չտաս։ Որ գլխիդ քար էլ մաղեն, ձեն չդիտի հանես։ Ինչ որ արել ես, էնպես էլ քաշի։ Ամո՛թ քեզ, բան չունեմ ասելու...

Եվ առանց պատասխանի սպասելու տեղն էր դրել լսափողը։

Ահա այս միակ հեռախոսազանգից հետո Մարիամը հասկացել էր, որ աշխարհում իրոք մենակ էր և որ լավ ու վատ՝ էլի Լիպոն էր լինելու ու նրա ծնողները։ Նշանակում է ինքը պիտի հարմարվեր սրանց, շարժվեր սրանց սրտով, ամեն ինչ աներ, միայն թե ցույց չտային իրենց ետևը գուրը։

— Ոչինչ, որ կով ու ոչխար կթել չես իմանում,— հանդգնացնում էր սկեսուրը։— Կսովորես։ Մարդ անելով է սովորում։ Դու սենյակները մաքրի, լվացքն ու արդուկն արա, մեկ-մեկ էլ հաշ եփի, հերիք է։ Աղջիկներս գոլորշ են գնում, հենց սվարտեն, կօգնեն քեզ։

Եվ Մարիամը սովորում էր։ Այդ տարի ինստիտուտ ընդունվելու մասին չէր էլ կարող խոսք լինել, քանի որ ուշ էր արդեն։ Մնում էր վարժվեր և աներ այն ամենը, ինչից խուսափում էր իրենց տանը։ Նրա սպասարկումը կամ ներկված լինելին, մաքրությունն ու դասավորությունը կերևար։ Լվացքն ու արդուկն ամեն օր կար։ Ինչ ճաշերին էր վերաբերում, այնքան էլ համեղ չէին ստացվում, քանի որ չէր կարողանում համաձակորեն օգտագործել յուղն ու բանջարեղենը։ Ճաշ եփելիս անպայման հայտնվում էր սկեսրայրը ու ոտքը գետնին խփելով՝ բղավում. «Յուղը քի՛չ թալ։ Ապատ վաճառ չի, որ առնենք։ Բիբար էլ քիչ պոկի, հիմի շուկայում երկուսը մի ռուբլի արժի։ Ամեն մեկի վրա մե վեդրո բրտինք եմ թափե։ Էսպես որ շարժվես, մեր տունը կավիրես։ Հաղար ու մի ծակուծուկի տեր ենք։ Մեշոկով փող է հարկավոր, մեշոկով։ Մարդ էլ մի կարգին փող չի քերում, մնացել եք իմ վզին»։ Այդ ժամանակ վրա էր հասնում սկեսուրը՝ «Ա՛յ տնաքանդ, ասենաս սովի տարի ըլի։ Տղամարդու աչքն էլ յուղի պուտուկի վրա՞ լինի»։ Սակայն սկեսրայրը հետո էլ շորերը արդուկելու վրա էր խոսում. «Էսա՛ բս, շորիր արդուկեսեն, փող հո երկնքից չի՞ թափվելի։ Մե քիչ քսի էսա անտեր»։

Սկեսուրը կովի շարունակությունը քթի տակ էր անում. «Մեկ է, չի փոխվի։ «Կաթի հետ մտածը, հոգու հետ տուրս կգա...»։

Այս բոլորը Մարիամը մի կերպ տանում էր, քանի որ իրենց տանը սրանց մեղմ տեսակը տեսել էր արդեն։ Բայց որ կես տարին հազիվ լրացրած՝ Լիպոն սկսեց ուշ գալ տուն, գալուց հետո էլ մի տեսակ անտարբեր էր դարձել իր նկատմամբ, դա արդեն հուսահատեցնում էր աղջկան։ Էլ ի՞նչ ինստիտուտ ընդունվելու մասին կարող էր խոսք լինել, երբ ոչ միայն հնարավորություն չուներ պարապելու, այլև հագի շորերն էին մաշվել, ու ոչ մեկը չէր մտածում մի զգեստ կամ մի զույգ կոշիկ առնել իր համար։

Մի օր էլ, չդիմանալով այլևս, Մարիամը խեղդելով վիրավորանքը՝ ասաց.

— Լիպո ջան, ախր ես ամաչում եմ ջրի գնալիս։ Ոչ ոք չի հավատում, թե ես ամուսնացած եմ օրինական, ծիծաղելով են նայում ձեռքերիս՝ էգ ո՞նց է, որ մի մատանի էլ չեն տվել։ Գեռ չգիտեն էլ, որ մինչև հիմա զգաս էլ չենք դնացել... Ուրիշները զարդերի մեջ կորած են, իմ մեղքը ո՞րն է...

Հաջորդ երեկո, երբ տանեցիները նստել էին թեյի սեղանի շուրջ, սկեսուրը գրպանից օգտագործված երկու մատանի հանեց ու դրեց Մարիամի առաջ.

— Վերցրու, էս է մեր ունեցածը։ Ինչ ունենք, էն եմ տալի։ Որ ծնողներդ խոսք տալին, մարդավարի նշանդրեք կանենք, հարսանիքիդ էլ մի փեշ մատանի ու զուլսենեն կըստանայիր։ Բայց որ սուս ու փուս, քո ոտով ես եկել, ծնողներդ էլ հրաժարվել են քիզանից, դի մենք էլ...

Էլ ի՞նչ շարունակեր, երբ հիմնականն ասել էր արդեն։ Մարիամը ոչ մի իրավունք չուներ զժգոհելու։ Սակայն ամուսնուն մատանին շատ մեծ դուրս եկավ ու հարմարվեց Լիպոյի ճկույթին, մարգարիտե ակովն էլ ուժերդ դասաբանցի տալոջ մատին հարմարվեց։ Դրանով էլ ավարտվեց նվիրատվությունը։

— Ես ի՞նչ մեղավոր եմ, երեխի ձեռքեր են։ Իսկական ես ուզում էի մի թափով, ջանով, անող-դնող, Լիպոյին հարմարատասիան հարս ունենալ։ Բայց որ... Իսկ զագսի մասին ինչի՞ ես մտածում։ Հենց երեխա ունենաս, կարձանագրվեք։ Հիմի քո ինչի՞ն է պետք զագսը, տանից հո դուրս չե՞նք անում, որ բաժին պահանջես։ Մեր երեխի նման պահում ենք, էլի...

Իսկ երեխա չկար։ Տասը ամիս էր անցել և ոչ մի նշան։ Հենց այս պարագայից ելնելով էլ տանեցիները մի տեսակ շրջվել էին։ Առաջվա նման սկեսուրն այլևս չնկատելու չէր տալիս հարսի թերությունները. ճաշը կամ աղի էր թվում, կամ անալի, կամ՝ կծու, տակն առած։ Լվացքն էլ այն չէր, գիշերները շատ էր կարդում, բիթը կախ էր։ Երբեմն էլ Մարիամի համար լսելի, սկեսուրը վշվշում էր՝ վայ թե աղաս անժառանգ մնա։ Սակայն Մարիամին զարմացնում էր Լիպոյի անտարբերությունը երեխա ունենալու կամ չունենալու վերաբերյալ։

Մարիամը ճարահատյալ հեռախոսով կապվեց հորաքրոջ հետ.

— Հորքուր ջան, խնդրում եմ, գնա մեր տուն, մերոնցից ծածուկ իմ շորերից ու կոշիկներից մի ձեռք բեր ձեր տուն, ես կգամ, կվերցնեմ։ Գիտեմ, հասկանում եմ, որ վատ բան եմ արել, բայց հո տակդր չե՞մ մնալու...

— Քոռանամ ես, ուրեմն մինչև հիմա մի շոր ու կոշիկ էլ չեն տե՞ր։ Վա՛յ, թաղեմ դրանց։ Դե լա՛վ, լա՛վ, էլ լաց մի՛ լինի։ Հենց էսօր կգնամ մի բան կանեմ։ Ախր տեղ չես թողել խոսելու, ա՛յ անբախտ... Ինքնագլուխ գնացիր, ամոթից չենք կարողանում մարդկանց երեսի նայել... Լա՛վ, լա՛վ հանգստացիր։ Վաղը կգաս մեր տուն։ Մենակ թե հորդ ու մորդ աչքին չերևաս...

Հաջորդ օրը, սկեսուրից թույլտվություն խնդրելով, Մարիամն ավտոբուսով մեկնեց հորաքրոջ մոտ, որ Արտաշատի շրջանում էր ապրում։

— Էս ի՞նչ ես դառել, ա՛յ ջրատար,— հղբոր աղջկան դիրքն առնելով՝ լաց եղավ հորաքույրը— խայտառակություն՝ խայտառակություն, բա հաց էլ չեն տալի՞։ Էս ի՞նչ լաթ վիճակը, կաշիդ ու ոսկորդ են մնացել... Շորերդ կընկնեն վրայիցդ...

Եվ ինչ պատմեր Մարիամը, ինչպե՞ս արդարանար, եթե պատմեր էլ, ի՞նչ պիտի փոխվեր դրանից, լավանալո՞ւ էր իր գրությունը։ Չէ՛, ամեն ինչ կորած էր նրա համար, երբ այս մարդաշատ աշխարհում նա մենակ էր, բոլորովին մենակ, երբ նրա ապրել-չապրելը միևնույն էր հարազատների ու հենց Լիպոյինց համար...

— Ա՛յ, դրանց ոտը կոտրվեր, որ չհանդիպեին քեզ։ Բա թասիբի կտոր էլ չունե՞ն, հիմի, էս բոլ աշխարհում, ո՞վ է էսպես հարս պահում։ Սոված կլինես, Մարիամ ջան, ճաշը տաք է, մի աման լցնեմ՝ կեր, նոր գնա։ Շորերդ կապոց եմ արել։

— Չէ՛, հորքուր ջան, շնորհակալ եմ, կուշանամ,— ասաց ելավ Մարիամը, թեև կարոտել էր փոքր հորաքրոջ ճաշերը։

— Կուշանա՞մ, էլ ո՞նց կլիներ։ Մի քիչ պակաս գործ կանես։ Նստի՛ր, հիմի կբերեմ։ Քոռանայի, քեզ էսպես չտեսնեի...

Կաղամբով տոլմայի բուրմունքը Մարիամը բակ մտնելիս էր առել։ Հորաքույրը ճաշով լի ափսեն նոր էր դրել սեղանին, երբ հայացքը լուսամուտին մեխվեց.

— Ամա՞ն, Մարիամ ջան, հերն ու մերդ մեր տունն են

գալի... վա՜յ, ի՞նչ անեմ, որտե՞ղ թաքցնեմ քեզ... Որ իմա-
ցել են, ձեռքներից չեմ պրծնի...

Սարսափած Մարիամը պատեպատ զարկվեց։ Զորս կող-
մը նայելով ոչ մի ելք չգտավ փախչելու։

— Գարդիրոպը մտի, շո՛ւտ...

— Սոկված կմնամ, մենակ թե չիմանան,— արագ նե-
տեց Մարիամն ու իր նոսկից վրա բերեց պահարանի դռ-
ները։

Հորաքույրը հարազատներին ընդունեց հարեան սենյա-
կում։

— Գնում ենք մեր քավորենց տուն,— զվարթ ձայնով
ասաց մայրը։— Ասի մտնենք Փառոյի մոտ։ Մի բաժակ սա-
ռը ջուր տուր, սիրտս վառվում է։ Լսիր, Փառո ջան, էս տա-
րի դեղձդ լավ է երևում։ Հասցնո՞ւմ ես շուկա տանել։

— Մի կերպ, ճաքելով։ Շաբաթը մեկի ավտոն եմ խնդ-
րում։

— Օիա՜յ, էս ինչ լավ է ձեր ջուրը։ Ի՞նչ անեմ, Փառո
ջան, մեր Կարոյին չենք կարողանում համոզել, որ գոնե մեկ-
մեկ գա քեզ օգնելու։

— Իրը մեկը շատ է տանո՞ւմ,— լսվեց հոր ձայնը։— Ապ-
բանքը փչանում է, չգիտենք՝ հավաքե՞նք, թե՞ շուկա հաս-
ցրնենք։

— Հա, էս տարի ձեզ համար դժվար կլինի։

— Բա ինչ։ էն խայտառակը որ տանն էր, էլի մի բիչ օգ-
նում էր։ Ի՞նչ անեմ, անունը կտրվի, որ էս զուլումը չրիներ
գլխներիս։ Դե՛, Փառո ջան, մենք գնանք, ձեռից բաց չթող-
նենք թավորին, մեր Վոլոդի համար ապրիկ ենք ճարել։

Հավանորեն հայրը դուրս էր եկել, որ հորաքույրը կամա-
ցուկ ասաց։

— Վարդանուշ ջան, բա Մարիամի մասին ի՞նչ ենք մտա-
ծում։ Էգպես անտեր-անտիրական...

— Մենք ապրիկ չունե՛նք, մեռա՛լ է, թագե՛լ ենք,— կտրուկ
ու լացակումած նետեց մայրը։— Երանի՜ մեռած լիներ։ Էն
խեղճ երեխեքս չեն կարողանում մեկի դեմ բերան բացել,
իսկույն բրոջ արածն են երեսով տալի...

— Լա՛վ, էլի, Վարդանուշ, ախր քիթը երեսից վեր չի գա։
Մենակ հո ձեզանով չի, քանի-քանիսն են էդպես ամուս-

նացել։ Էդ խնամի չեղածն էլ ձեր երեսին է նայում։ Դուք որ
Ձեր ապրանքից ձեռք եք քաշել, օտա՞րն ինչ կանի։

Օտարն էլ մի օր հեռախոսով ինձ ասաց, թե ձեր մի-
օր մեր պղնձի մեջ է, ինչքան ուզենք, էնքան կեփենք։ Հո-
գեմ գրանց գլուխը։ Ականջովս է ընկել, որ էդ Լիպո չեղածը
կապված է մի աղջկա, սա էլ երեխով է։ Բա՜։ Էդ լակոտն էլ
ասել է, որ իրան տուն է տանելու...

— Ո՞նց թե։ Բա Մարիա՞մը...

— Նրան էլ, թե որ դուրս չանեն, ուրեմն քոծի տեղ կպա-
հեն։ Դրա համար էլ ոչինչ հեռը դրաց չի գնում։ Մարդիկ
Երևան են ուզում։ Համբերություն չունեն սպասելու մի տա-
րի վառվում եմ, Փառո ջան, ձեն չեմ կարողանում հանել։
Ախր, Մարիա՞մին հաղար ասի, որ դրանք մարդ չեն, ո՞ւր է
Լանից վազում։ Էն օր էլ ախպերդ գիտե՞ս ինչ ասեց. հենց
Մարիամը եկա գա, թողնելու եմ գնամ Ռուսաստան... Տես-
նո՞ւմ ես, իմ տունն էլ էդտեղ կքանդվի, աշխարհով մեկ
կթայտառակվեմ, իրը քիչ եմ խայտառակվել։ Չեմ իմանում,
ինչ ասեմ. հիմի գա ոչ աղջիկ է՝ աղջկա նման, ոչ կին, կնոջ
նման։ Թե որ դուրս էլ անեն, էլ ո՞վ դրա երեսին մտիկ
կանա... Վա՜յ, անիծվեր իմ ծնունդը...

Եվ քիթն աղմուկով մաքրելով մայրը հեռացավ։ Երբ քար
լռության մեջ հորաքույրը բացեց զգեստապահարանի դուռը,
պատին իր շորերի կապոցին գրած՝ Մարիամը խեղդվելով
լաց էր լինում...

— Երանի՜, երանի ծնված չլինեի... Կամ էլ... կամ էլ
որևէ մեկը որդեգրած լիներ ինձ...

Սառած ճաշն այդպես էլ մոռացված մնաց սեղանին։

Կապոցը ձեռքն առած, շվար, բացակա քայլերով Մա-
րիամը փողոց ելավ։ Մի «Ժիգուլի» տհաճ ճռինչով փախավ
աղջկանից։

— Սիրահա՞րված ես,— պատուհանից գոռաց Հարոր-
դը։— Թե՞ տեղդ ես կորցրել...

Միանգամայն անզգա կատարվածի նկատմամբ՝ Մարիա-
մը մոլոր հեռացավ խճուղուց։ Եվ ինչո՞ւ հեռացավ, լավ էլ
ժամանակն էր մեռնելու... Բայց վարո՞ղն ինչ մեղք ուներ...

Հետո՞, հետո ինչ եղավ, ինչով վերջացավ այն քառսը,
որի վերջը պիտի գա շուտով։ Հետո, մի թեթև վեճի

ժամանակ Լիպոն ասաց, որ առանց երեխայի ընտանիք չկա։ Հետո տանեցիք ուղղակի սկսեցին չխոսել Մարիամի հետ։ Հետո, երեի օր առաջ լվացվելուց հետո թասի ջուրը թափելիս նա գետնին ընկնելիս տեսավ այն մատանին, որ իրենց պիտի լիներ, սակայն Լիպոն իր ճկույթին էր կրում։ Վերցրեց, լվաց ու գրպանը դրեց. երևի լվացվելուց էր ընկել։

Երեք օր հետո, հենց այդ առավոտ սկեսուրը կանգնեցրեց Մարիամին.

— Աղջի՛, Լիպոյի մատնիքը տեսե՞լ ես։

Արդեն քանի ամիս էր, ինչ ոչ մեկը նրան անունով չէր դիմում։

— Տեսել եմ։ Խալաթիս գրպանն եմ դրել։

— Դե գնա բեր, ինչի՞ ես պահել։

Մարիամը գնաց, բայց չբերեց։ Տեղում չէր։ Փնտրեց իր քունջ ու պուճախը, ամեն տեղ ու չգտավ։

— Ո՞նց թե՝ չկա,— միանգամից անճանաչելի դարձավ սկեսուրը։

Այս կնոջը Մարիամն արդեն առաջին անգամ էր տեսնում։

— Ի՞նչ ես պելվել, գնա բեր։ Ինքդ լավ գիտես, թե որտեղ ես դրել։ Խեղճ երեխես սիրտը կոտրեցիր, տուն էլ չի ուզում մտնել, հիմի էլ մատնի՞ք ես ուզում տակով անել։ Ի՞նչ աղջիկներ կան, հենց պիտի քո փեշից բռնե՞ր։ Քաչալենց Շմոն աղջկա հետ մի տուն էլ է տալի, իսկ Զարչի Նորիկը ամբողջ մի բաղ է խոստանում։ Է՛, Լիպոյի խելքն ասա։ Քո հերն ու մերը շատ խորամանկ են. դիտավորյալ մերժեցին, որ աղջիկն տկլոր ուղարկեն։ Դրանց սատանա հերը թաղեմ։ Եթե դու էլ հիվանդ էիր, ասեիր։ Կրուժվեիր, նոր կամուսնանայիր, ուրիշի բախտին քար չէիր գցի։ Ի՞նչ վեր կացար ու վազեցիր տղիս եռևից. կարմիր խնձոր էի՞նք ուղարկել...

Մարիամը վազեց իր սենյակը, դուռը փակեց ու ծնկելով՝ արցունքոտ աչքերը առաստաղին, սկսեց ջերմեռանդորեն աղոթել իր փրկության համար։ Աղոթում էր՝ չորս պատն իրեն եկեղեցի դարձրած։ Եվ ի՞նչ նշանակություն ունի, թե որտեղ ես աղոթում, երբ քո ասվածը քեզ հետ է։

— Թույլ տվեք գնամ աշխատեմ, ձեր մատանու փողը բերեմ,— մոտենալով սկեսրոջը՝ խնդրեց Մարիամը։

— Օյինները մի սարքի։ Ինքդ լավ գիտես որտեղ է, գնա՝ բեր...

Մարիամին թվում էր, թե ինքը վատուց մեռել է, և իր ուրվականն է կանգնել սկեսրոջ առաջ։ Իսկ ուրվականը կարո՞ղ է խոսել... Ո՞չ, այլևս անհնար էր այդտեղ ապրել, մնալ այդ մարդկանց մեջ, որոնք իր չինելուն են սպասում... Ինչո՞ւ թույլ տալ առավել նվաստանալ...

Վերադառնալով իր սենյակը՝ նա հագավ հորաքրոջ բերած շորերն ու կոշիկները, փաստաթղթերով պայուսակը վերցրեց ու դուրս եկավ տանից։

Ոչ ոք ձայն չտվեց նրա հետևից։

Փողոցում մի պահ կանգ առավ. իսկ ո՞ւր գնալ, չէ՞ որ բոլոր հարազատների դռներն էին ծնողները փակել իր առջև...

Դեմից Հարևանի հարսն էր գալիս զուգված, զարդարված, հպարտ քայլերով։ Սա էլ էր նույն թաղում ապրում։ Չորի համփին մի երկու անգամ հանդիպել էր նրան. բայց վախենում էր խոսել. հանկարծ ու լուրը տանեցիներին հասներ։ Այս հարսն էր մի օր ասել Մարիամին, թե մի՞թե մի մատանի էլ շատ էին համարել նվիրել իրեն...

— Մարիա՞մ,— մոտեցավ հարևանուհին,— էս ինչի՞ ես լաց եղել։ Հոգիդ ուտում են երևի...

Մարիամն ափերով ծածկեց երեսն ու հեկեկաց։

— Խե՜ղճ աղջիկ... Ուրեմն ճիշտ է՞, որ Լիպոն մեկի հետ...

— Սեդա՛,— կանչեց Մարիամը,— խնդրում եմ երեք ռուբլի տաս... Ես փոստով կուղարկեմ... Հորաքրոջս մոտ եմ գնում, ավտոբուսի փող չունեմ... էլ չեմ դիմանում...

Հարևանուհին պայուսակից մի երեքանոց հանեց ու դրեց Մարիամի բուռը.

— Վերցրու, չվերադարձնես, ամոթ է, մի մեծ բան չի։ Լավ ես անում, որ գնում ես, էդ տունը մնալու տուն չի, Մարիամ ջան, գնա, հոգիդ ազատի։ Բայց իմացիր, որ ծնողներդ են մեղավոր։ Շատ էլ՝ փախել էիր... Գնա, գնա, ասվածդ քեզ հետ...

— Շնորհակալ եմ, Սեդա ջան, քո լավությունը չեմ մո-

ռանա,— մի կերպ արտաբերեց Մարիամն ու վազքախառն ընթացքով հեռացավ՝ չհամարձակվելով լիաշունչ նայել երջանիկ հաստակակցին։

Գնում էր աղջիկը՝ չհավատալով, թե երբևիցե մի ճանապարհ կարող էր բացվել իր առջև։ Բացվեր, թե չբացվեր, միևնույն է, լուսնի և արևի պարտաճանաչ հերթափոխությունն դեռ շատ պիտի լիներ այս բարդ, անհասկանալի ու խորթացած երկրի վրա։

Գ. Ա. Ա.

Շուտով, շատ շուտով կերևար հորաքրոջ դյուղը։ Ի՞նչ պիտի ասի նրան։ Ո՞ւր է ընկնելու, լաց լինելով աղերսելո՞ւ է, որ ժամանակավոր մի անկյուն տա իրեն։ Իսկ նա չի՞ մերժի եղբոր աչքից չընկնելու համար... Կամ ասենք՝ ընդունեց, Լիպոյենք իր ծնողներին չե՞ն հայտնի այս փախուստի մասին։ Իսկ իր ծնողները չե՞ն փնտրի իրեն, չե՞ն թափվի հորաքրոջ տուն (չէ՞ որ Սեդալին ինքն ասաց իր գնալու տեղը), չե՞ն սկսի աշխարհի կեղտաջրերն իր գլխին ածել...

Անպայմա՞ն կանեն։

Եվ մեկը մյուսից սահավոր տեսարաններ էին երևում Մարիամի աչքին։ Նա ավելի ու ավելի էր համոզվում, որ ինքն ավելորդ է, լքված, ոչ ոքի պետք չի, որ դեռ էլի սառաջումներ են սպասում իրեն։

Ահա և հորաքրոջ տունը՝ կտրին թեքված թթենիով։

— Ջրահովիտ իջնողներ...

Հորաքույրը դեղձ էր փռում կտրանը չլանու համար։ Ասես ոչինչ էլ չէր եղել կամ չէր լինելու և բծախնդրորեն կդասավորեր դեղձերը, եթե ինքն այս մեքենայի բաց դռնից ցած նետեր իրեն...

Դռներն այնպես շրխկոցով փակվեցին, ասես ապտակեցին Մարիամին ուշքի բերելու համար։ Մեքենան պոկվեց տեղից ու շարունակեց վազել դեպի Երևան։ Հենց այդ պահին Մարիամը հիշեց երեք տարի առաջվա այն օրը, երբ հոր հետ քաղաք էր եկել իր համար վերարկու գնելու։ Հաղուստի խանութից երկուսով դուրս եկան և քայլեցին դեպի Կիևյան

փողոցի վերջը։ Հանկարծ ինչ-որ ձայներ եկան, այս ու այն կողմից ջահելներ վազեցին կամուրջի կողմը։

— Մի աղջիկ իրեն կամուրջից նետե՞ց,— շատ որոշ օրը հնդրեց մի պատանու ձայն։

Շտապեցին նաև Մարիամն ու հայրը։ Կամրջի բազրիքի մոտ մարդիկ էին կուտակվում։ Բոլորի դեմքերին հետաքրքրության զգացումը շաղախվում էր վախի արտահայտության հետ։ Ու մինչ հազար ու մի կռահումներ կձևավորվեին մի ընդհանուր հայտարարի գալու համար, տեսածը կլանող հայացքները ակնապիշ սուզվում էին դեպի ձորը, թափառում Հրազդանի կողերի քարակույտերի մեջ։ Վերջապես գետակի անհավասար քարակիտուկների արանքում էլ նշմարվեց մի չոմեջաթափված աղջկա մարմին, որի շրջազգեստի փեշերը ծածկել էին գլուխը՝ ի ցույց դնելով ջարդված ու մերկ սրունքները։

— Վա՜յ, մամա ջան,— ակամա ճչաց Մարիամը՝ փակելով աչքերը։

— Դցել են երևի...

— Չէ՛, ինքը նետվեց,— հաստատ ասաց մի աղջիկ։— Ի՞նչ տեսա...

Մոտիկ գտնվողներն իսկույն շրջապատեցին սկզբնաղբյուրին։

— Բա բռնող չեղա՞վ...

— Մինչև հասանք, արդեն բազրիքի մյուս կողմում էր։ Ընկնելիս մի ճիչ արձակեց...

— Մենա՞կ էր։

— Մենակ։

— Տեսնես ի՞նչ է եղել։

— Պարզ չի՞. պատվազրկել են երևի, թե չէ...

— Քանի՞ տարեկան կլիներ։

— Երևի՝ քսան։

— Խե՞ղճ աղջիկ...

— Վա՜յ դրա ծնողներին։

— Հեռացե՛ք, հեռացե՛ք։

Սա արդեն վրա հասած միլիցիոներն էր։ Մի քանիսը արդեն վազքով ձորն էին իջնում։ Մի քանի տղաներ էլ՝ միլիցիոներների ետևից։

— Չեմ պատկերացնում, որ նորմալ մարդը նման բան գույլ տա իրեն,— ապշանք էր արտահայտում սառը դեմքով մի կին։

— Նրա տարիքում որ լիներիք, և կյանքն էլ ստիպեր, կպատկերացնեիք։

— Դարդը որ կալմեջ է անում, դատողությունը ցնդում է։ Ո՞վ գիտի, գուցե էս աղջիկը մահն ավելի լավ է համարել իրեն բաժին ընկած կյանքից։

Սա էլ մի հատուն, խելոք ու տխուր աչքերով տարիքով մի տղամարդ էր։

Հետո՞, հետո էլի ի՞նչ եղավ,— արագ-արագ հիշողությունն էր պեղում Մարիամը՝ մինչև Երևան հասնելը մի որոշման հանգելու համար։

Հետո էլ ոչինչ չի ուզում հիշել։ Նրա մեջ հավատն ու հույսը մեռել էին իր ծննդից էլ առաջ։ Եվ, այնուամենայնիվ, մտովի նա շարունակում էր կպած մնալ կամուրջի բազրիքին՝ հայացքը թողած իրար հրմշտող միլիցիոներներին, սրանց մեջ ընկած աղջկան։ Մեկը նույնիսկ լոք տվեց ու թռավ աղջկա մյուս կողմը, ինչպես թռչում են քարի կամ առվի վրայից՝ օբյեկտիվի մեջ առնելով աղջկա մարմինը տարբեր կողմերից։ Եթե այդքան, միայն այդքան ուշադիր լիներին ինքնասպանի նկատմամբ, վերջինս հաղիվ թե այդտեղ հասներ...

Մարիամը հիմա չէր էլ հասկանում, թե ե՞րբ էր այդ աղջկա օրինակին հետևելու որոշմանը հանգել։ Գուցե շատ ավելի վաղ, քան այդ դեպքը հիշելը։ Թերևս Հորաքրոջը կտրանը տեսնելու պահի՞ց։ Իրո՞ք, մի՞թե իր կրած տառապանքներն այնքան քիչ էին, որպեսզի ինքն իրավունք չունենա վերջակետելու իր անփառունակ կյանքը։ Իսկապես, ի՞նչ կյանք է սա, երբ այն ոչ ոքի պետք չէ, իրեն՝ առավելապես։ Չէ՞ որ մարդն ապրում է ոչ միայն իր համար։ Կա՞ ավելի անտանելի, հուսահատեցնող վիճակ, քան մենակությունն է։ Ախր կյանքը գեղեցիկ է, իմաստուն Հենց սիրելով ու սիրվելով, մխիթարելով ու փաղաքշելով, մեկը մյուսի անհրաժեշտությունը զգալով։ Կյանքը կյանք է նաև կարոտի զգացումով։ Իսկ կա՞ մեկը, որ կարոտի իրեն, կամ ո՞ւմ կարող է ինքը կարոտել...

Չկա այդպիսին, ուրեմն չկա և ինքը։

Կոպած ավտոբուսի ապակուն, ոչինչ չտեսնող հայացքն անորոշության մեջ, այլևս շարատավելով՝ նա հարց-պատասխան էր անում իրեն հարևան մահվան հետ։

Կոպասի, մինչև մութը կընկնի, որպեսզի իր վրա էլ այնքան մարդիկ չհավաքվեն։

Երևանում մորաքույր ունի, քեռի, բայց արդյո՞ք իրավունք ունի նրանց դուռը թակելու։ Չէ՞ որ հայրը բոլորին է պատվիրել տուն չանել Մարիամին։ Իսկ մինչև մութն ընկնելը հո չի՞ թափառելու։ Եթե կասկածելի տպաներ էլ չմոտենան, միլիցիոները կա ու կա։ Իր պատմությունն իմանալուց հետո պիտի իրեն տուն տանեն, հանդիպեցնեն ծնողներին և արդեն պատրաստ է կանխատեսված ու սարսափելի տեսարանը...

Ո՛չ, հազար անգամ ո՛չ։ Միայն մեռնել։ Քաղաքում ո՞վ է հանդիպում իրեն։ Գտնելուց հետո ինչքա՞ն պիտի թողնեն առանց թաղելու։ Նախօրոք կայրի փաստաթղթերը, որպեսզի ոչ մի հետք չմնա։ Ո՞վ պիտի իմանա, որ քսան տարեկան մի աղջիկ ապրեց երեսի զոռով ու մահը գերադասեց կյանքից...

Տեսնես էլի կա՞ն իր նմանները։ Կամ կա՞ն այնպիսի աղջիկներ, որ դեռ պիտի խաբվեն տղայի խոստումներից։ Եթե Մարիամը հանդիպի այդպիսի մեկի, կրնի նրա ձեռքը, կդպչի, կբացատրի, որ նրանով հմայված երիտասարդը պատրաստ է նրա տարիքն իսկ լիզելու մինչև առաջին ամիսները, որպեսզի հետո երեսով տա առանց հարսանեկան ծեսի ու ծախսի իր հետ ամուսնանալը... էլ ո՞ւր մնաց սովորելը... Տղաները, եթե չեն էլ սիրում, գոնե հարգում են դժվարությամբ ձեռք բերած աղջկան։ Նրանք փնտրում են հարուստ օժիտով, հարուստ ծնողների զավակի, որպեսզի իրենք էլ ապրեն նրա բերածով, իրենց երեխաներն ու թոռներն էլ հետը...

Տղամարդու բարոյականը շատ է խեղվել։ Սկսվել է պորտարույծների մի ժամանակաշրջան։ Վա՛յ հետո եկողներին։

Բայց ո՞ւմ ասել այս բոլորը, ինչպե՞ս ասել, որպեսզի շատերն իմանան։ Ո՞ւմ պատմել այս ամենը, ո՞ւմ զգուշացնել, ինչպե՞ս զգուշացնել, հետո հեռանալ։ Այո՛, այո՛, եթե իրեն ոչ ոք չփորձեց փրկել, նա պատրաստ է բոլոր նման աղջիկների ձեռք մեկնել։

Ավտոբուսը փոխվել էր ինքնաթափի՝ վեր-վեր թոցնելով ստկավացած ուղևորներին։ Քաղաքամերձ գյուղերն ուզղակի սրընթաց էին փախչում։ Այդիները հետզհետե դառնում էին պարտեզ, բայց էլի ծանրացել էին հաղար բարիքով։ Հողի կենսունակությունն ու ճարտարությունը բնությանն էր հայտնի,— ասում է փորձված գյուղացին։

Իսկ մարդկային հոգու անբնակրկելի աշխարհը։

Ա՛յ, եթե հնարավորություն կամ շնորհք ունենար գրելու իր հետ կատարվածի մասին... Իսկ եթե մեկ ուրիշը գրի։ Ինքը պատմի և նա գրի։ Իսկ ո՞վ, ում է ճանաչում Մարիամը... Եթե «Ավանդարդին» դիմի՞։ Քի՞չ նման հարցեր է բարձրացնում այդ թերթը։ Հենց թեկուզ վերջին համարը։ Մարիամին կյանքի հետ կապող, մի բիչ տեղից շարժող այդ թերթը, որը ոչ ոք չէր կարդում այդ տանն իրենից բացի։ Այո՛, այո՛, այդ լրագրում հաճախ հանդես եկող պրոֆեսոր Աշրինեին Մարիամը մտովի ինչքան է բողոքել, բացել իր սիրտը։ Հենց վերջին հոդվածում չէ՞ր միթե պրոֆեսորը խոսում սիրո, նվիրվածության, հիասթափության, ամուսնալուծության մասին։

Երբ ավտոբուսը թոքին տալով շունչ առավ քաղաքի ավտոկայանի հրապարակում, Մարիամի միտքն ասես որոնածը գտնում էր արդեն։

Ուղևորները գործնական ընթացքով, իրար անհամբեր հրհրելով շարժվում էին դեպի դուռը։ Ե՞րբ էր իջել բեղ-մորուքով այն տղամարդը, որ խոնավ պարկի մեջ բանջարեղեն էր տանում ծախելու։

Վերջում Մարիամն իջավ, ու քաղաքի ժխորը միանգամից կպավ նրա լսելիքին։ Կողմ քաշվելով՝ նա մոլոր կանգնեց։ Մի լքված ու մազաթափ շնիկ կիսաքանդ պատի ետևից մուրը ցցած՝ կաղկանձում էր։ Ցեխաջրով ներկված կողերը դեմ էր տվել արևին ու ապշած՝ անցորդներին էր նայում։ Նա վախենում էր բոլորից, թեև ոչ մեկն ուշադրություն չէր էլ դարձնում վրան։ Ուրիշ թաղից էր հավանորեն ընկել այդ կողմերը։

Իսկ եթե Մարիամը հենց հիմա դնա «Ավանդարդի» խմբագրություն և իմանա պրոֆեսորի հասցեն կամ հեռախո-

սը... Միայն թե քաղաքում լինի և առողջ, ոտքի վրա։ Ո՞վ գիտե, ասում են՝ քաղաքացիները շուտ-շուտ են հիվանդանում։ Երևի օդից է։ Մի խոսքով, չհետաձգվի հանդիպումը, բանի որ ինքն այլևս օր չունի։ Ընդհանրապես չունի։

— Ինչ սիրուն ես,— ասաց մի տղա՝ հավանորեն նոր իջած որևէ շրջանային ավտոբուսից։ Առանց քաշվելու նա չափեց Մարիամին։— Տեղ չունե՞ս գնալու, արի հետս, ուր ուզում ես, տանեմ։

Մարիամը զզվանքից ցնցվեց։ Լիպոյի նման մի տղա էր։ Դեռ քաղաքացի տղաների մասին են խոսում։ Այժմ արդեն Մարիամի աչքին բոլոր տղաները նման էին երևում նրան։

— Ներեցեք, չե՞ք կարող ասել, թե ոնց պիտի գնալ «Ավանդարդի» խմբագրություն,— մի կերթ կնոջ մոտենալով՝ հարցրեց Մարիամը։

Ոչ, նա տեղը չգիտեր, բայց ահա կարելի է նստել կենտրոն տանող այս ավտոբուսը, գնալ մի չորս կանգառ և հարցնել։

Մարիամն ավելի էր պնդում այն որոշումը, որ անպայման պիտի հանդիպի պրոֆեսորին և անպայման պիտի պատմի ամեն ինչ։ Նա հոգեբան է, փիլիսոփա, Մարիամի նման հարյուրավոր աղջիկների հետ կարող է զրուցած լինել... Թող հենց նրանց համար էլ օգտագործի Մարիամի կյանքի պատմությունը և փակի կամուրջ տանող նրանց ճանապարհը...

Շատ չարչարվեց Մարիամը. գտավ խմբագրությունը։ Նամակների բաժնում Ագրինեի հեռախոսի համարը տվեցին։ Հենց այդտեղից էլ Մարիամը զանգահարեց։

Զեռքերը դողում էին. իսկ կընդունի՞ իրեն այդ դասախոսը, չի՞ պատճառաբանի, թե այնքան էլ ժամանակ չունի, որպեսզի Մարիամի նման աղջիկների կյանքի պատմությունը լսի առանձին-առանձին, որ դասախոսության է շտապում...

Ամենակարևորն անհայտ էր մնացել. ինչպիսի՞ մարդ է այդ պրոֆեսորը։ Կարող է լավ դասախոս է, գերազանց հրապարակախոս, բայց... Ո՞չ, նա ամենից առաջ հոգեբան է։

Արդեն հավաքել էր համարը, և զանգը լսվում էր որոշ երանի շպատասխանի, եթե ստորացնող է լինելու այդ պատասխանը։

— Լսո՛ւմ եմ... Այո՛, լսո՛ւմ եմ,— պահանջեցին ընկալուչի մյուս ծայրից։

— Ներեցեք... Ես պրոֆեսոր Աղրինեին եմ խնդրում։

— Ես լսում եմ ձեզ... Խոսե՛ք։

— Բարև ձեզ... Գուցե ինձ չեք ճանաչում... Ես ձեր ընթերցողներից եմ, ձեր երկրպագուներից... Շատ եմ ուզում հանդիպել ձեզ մի կարևոր հարցով... Խնդրում եմ...

— Ի՞նչ հարցով։

— Անձնական... Շատ չեմ զբաղեցնի... Հեռու տեղից եմ եկել... Խնդրում եմ...

Գուցե Մարիամի տո՞նն ստիպեց, որպեսզի պրոֆեսորը չառարկի։ Նա մինչև իսկ հասցեն բացատրեց, ինչ մեքենայով գնալը նույնպես։ Աղջիկը լսափողը տեղը դրեց մի քիչ շոյված։ Հիմա նա միայն զղջում էր իր արժանապատվության վերջին փշրանքների վրա, որոնք և ոտքի էին պահում նրան։ Պրոֆեսորի ձայնը մեղմ էր, թավշե ու հարազատության երանգ էր կրում։ Այո, Մարիամը կաշխատի հնարավորին չափ համառոտել իր պատմությունը... Միայն թե մարդիկ իմանան, իմանան ամեն ինչ առանց իր անուն-ազգանվան...

Փողոց ելնելով հիշեց, որ պրոֆեսորի վերջին հոդվածը կարդալիս մեջը ցանկություն առաջացավ ծաղիկներ նվիրել նրան։

Ծաղիկնե՞ր։ Իսկապես, առանց ծաղիկների ինչպե՞ս կարելի է այդպիսի կնոջ մոտ գնալ։

Ափի մեջ երկու ռուբլի էր խոնավանում, որ ավտոբուսի վարորդն էր տվել։ Քանի՞ հատ ծաղիկ կտային դրան։

Մոտիկ գտնվող հասատափոր ծաղկավաճառ տղամարդը, որպես լավություն, երեք հատ մեխակ փաթաթեց ցելոֆանի մեջ ու մեկնեց նրան։ Քիչ էր ծաղիկը, շա՞տ քիչ իր ցանկացածի համեմատությամբ։ Ի՞նչ կարող էր անել։ Բացի այդ...

— Քեռի հինգ կոպեկ կարո՞ղ եք տալ ավտոբուսի համար...

— Հինգ կոպե՞կ,— այնպես զարմացավ ծաղկավաճառը, ասես այդ չափի դրամի մասին առաջին անգամ էր լսում։ Գրպանից մանրադրամ հանելով գտավ մի հինգկոպեկանոց ու տվեց աղջկան։

Նրանց։ Մի պահ Մարիամին այնպես թվաց, թե նա հարցնում։ Գտնում արցունքները։ Ո՛չ, չկարողացավ պահել։

Հոգեբանական տեղից ու շուտով վերադարձավ՝ թաշկինին բերել-կանգնեցրեցնում։ Ամենայն հավանականությամբ հարկում գտնվող մի սովորական կապվի միլիցիայի հետ, կբացրված սև ապակուն դրված էր՝ «Պրոֆեսորներին՝ իրենց ազգանունը ցնցումներով մատը ելավ ու զգույշ սեղմեց կոճակը։

Դ

Շեմքում հայտնվեց քառասունհինգի շուրջ, ալեխառն մազերը մոդայիկ հարդարած, հմայիչ դիմագծերով, դարբնագույն շրջազգեստի վրա փոքրիկ գոգնոց կապած, վայելուչ կեցվածքով մի տիկին։ Եթե մի այլ տեղ Մարիամը հանդիպեր նրան, դարձյալ պիտի ճանաչեր։ Նույնիսկ հիմա ավելի համակրելի էր, առինքնող, քան թերթում տպագրված լուսանկարն էր։ Գուցե մոխրագույն աչքերի փափուկ ու թափանցող արտահայտությունն էր այդպիսի տպավորություն առաջացնում։ Ինչիէ, նա կլսեր Մարիամին։

— Քիչ առաջ դո՞ւ զանգահարեցիր,— նա գոգնոցն արձակեց ու մեկնեց կողքին հայտնված բարձր դասարանցի մի դպրոցականի, որի երեսին ճիշտ մոր աչքերն էին տեղադրված։— Ներս եկ։

Ջիռսելու պահին էլ չափազանց արտահայտիչ ու խոսուն շրթունքներ ուներ տանտիրուհին։

Այո, հենց այսպիսի անձնավորությունը կարող է այնպիսի խոր հոգեբանական հոդվածներով հանդես գալ, որոնց շուրջ Մարիամը երկար է խորհել։

— Այս սենյակը գնանք,— առաջարկեց նա՝ նկատելով Մարիամի վարանումը։

Աղջիկը հեռացավ։ Նրանք մտան մի ընդարձակ սենյակ, որի պատերը միայն գրադարակներով էին ծածկված։ Մարիամը կռացավ կոշիկները հանելու, տանտիրուհին կարուկ կանխեց։

— Պետք չէ։ Անունդ ի՞նչ է։

— Մարիամ։

— Նստիր, Մարիամ։

— Լսո՛ւմ եմ... Այո՛, լսո՛ւմ եմ,— պահանջեցին ընդ-
լուրի մյուս ծայրից։

— Ներեցեք... Ես պրոֆեսոր Ադրինեին եմ խնդրել հեռախոսով։

— Ես լսում եմ ձեզ... Խոսե՛ք։

— Բարև ձեզ... Դուք ինձ չեք ճանաչում, որը չգիտեր
ցողներից եմ, ձեր երկրպագո՛ղը։

դիպել ձեզ մի կարևոր բան էր այդ ձայնը, դարձյալ աներևույթ թելերով իրար էին կարել Մարիամի շրթունքները։

— Այս ծաղիկներն ի՞նձ համար ես բերել։ Շնորհակալ եմ։ Գեղեցիկ են։ Դնենք սեղանին, որ չխանգարի։ Դե՛, լսում եմ։ Դու եկել ես հավանորեն ինչ-որ բա՞ն ասելու։

Մարիամն ավելի հակեց գլուխը։ ո՞ւր էին անհետացել խոսքերը, այն խոսքերը, որոնք կրկնվում էին մտքում վերջին րոպեներին։

— Եթե ոչինչ չասես, չիմանամ, թե ինչի համար ես եկել, ես ի՞նչ կարող եմ ասել։ Որևէ բա՞ն է պատահել քեզ։

— Ես մենակ եմ, ընկեր Ադրինե,— հոգոցով արտաբերեց Մարիամը՝ ամենակարևոր ասելիքից ազատվելու համար։

— Ինչպե՞ս թե։ Ծնողներ, հարազատներ չունե՞ս։

— Ունեմ, ամեն ինչ ունեմ՝ հայր, մայր, եղբայրներ, քույրիներ, հորաքույրիր ու մորաքույրներ... Բայց ես մենակ եմ... Պարզապես՝ մենակ։

Եվ որտեղի՞ց թափվեցին այդ արցունքները, որոնց մոտենալը չէր զգացել Մարիամը... Ախր ամբողջ ճանապարհին զրանք ցամաքած պիտի լինեին...

— Տուն էլ ունենք, երկու հարկանի, բայց ես...

Տանտիրուհին գնաց խոհանոց ու ջուր բերեց։

— Խմիր։ Խոսիր, երբ կհանգստանաս։

Ամբողջ կյանքում Մարիամն առաջին անգամ էր այդպիսի հոգատար ձայն լսում, որից ավելի էր փլվում ներսում կուտակվածը։ «Ախր ես աշխարհի բոլոր ծաղիկները պիտի բերեի ձեզ... Հիմա, հիմա շունչ առնեմ ու պատմեմ ամեն ինչ...»։

Մարիամը հենց այնտեղից սկսեց, երբ ծնվել էր ոչ ցանկալի երեխա և որ իրեն ուրախությամբ ուրիշի տված կլինեին ծնողները, եթե չվախենային վարկաբեկվելուց։

Պրոֆեսորը լսում էր կենտրոնացած, հարցեր էր տալիս

հոգվոգելով։ Մի պահ Մարիամին այնպես թվաց, թե նա հագիվ էր պահում արցունքները։ Ո՛չ, չկարողացավ պահել։ Մխիթարմամբ ելավ տեղից ու շուտով վերադարձավ՝ թաշկինակը պահելով գրպանում։ Ամենայն հավանականությամբ պատմությունը լսելուց հետո կկապվի միլիցիայի հետ, կբացատրի եղածը և կխնդրի միջնորդել ծնողներին՝ իրենց աղջկան տուն առնելու... Առանց այն էլ շնորհակալ է այդպես պատաղավորին իրեն լսելու համար...

Այդ պահին Մարիամը շատ նման էր պառավ գնչուհու, որ հայացքն ափի մեջ՝ փորձում էր տեսնել իր գնալիք ճանապարհը, իրեն սպասող վերջի մասին... Բայց գուցե պրոֆեսորը չի՞ հավատում, կասկածո՞ւմ է իրեն...

Մարիամը պայուսակից հանեց իր բոլոր փաստաթղթերը, որոնց մեջ էին ատեստատը, բնութագիրը ինստիտուտ ներկայացնելու համար, ու լցրեց ցածրավոտ սեղանին։

Ադրինեն ձեռքով եռ մղեց դրանք առանց վրան նայելու։

— Ընկեր Ադրինե, սրանք էլ եղբայրներս են...

— Ես քեզ հավատում եմ։ Դրանք ինձ պետք չեն... Ես քո աչքերին եմ հավատում։

— Շնորհակալ եմ,— մրմնջաց Մարիամը ոտքի ելնելով։— Ներեցեք, շատ զրաղեցրի... Հիմա թույլ տվեք գնամ...

— Այս ծաղիկներն ինչո՞ւ ես գնել, երբ մոտդ կոպեկ չկա։

— Ինձ փող հարկավոր չի...

Այդ խոսքն էլ սթափեցրեց պրոֆեսորին.

— Նստիր մի րոպե։ Հիմա ո՞ւր ես գնում։

Մարիամն ուսերը վեր ձգեց մեռնելու իրավունք ձեռք բերածի նման։

— Ո՞վ ունես քաղաքում։ Կարծեմ ասացիր...

— Ո՛չ ոք չունեմ,— արագ վրա բերեց աղջիկը։

— Սպասիր, հիմա գալիս եմ։

Տանտիրուհին մոտավ հարևան սենյակը, թե՞ խոհանոցը, որտեղ քշփշոցով ինչ-որ բան էր ասում հավանորեն իր աղջկան։ Հետո աղջիկը կիսաձայն սկսեց խնդրել։ Գուցե այդ ջահելի սրտով չէ՞ր իր այցելությունը, կարո՞ղ է ինքը ինչ-որ փչացրեց... Էլ ո՞ւր է սպասում, չէ՞ որ ամեն ինչ ստացվեց այնպես, ինչպես ինքն էր երազում։ Էլի մնալ, նշանակում է էլի ստորանալ, էլի ապրել՝ ճանկերով կյանքից կառչելով։

Չէ՞ որ հետագա իր անելիքը այլևս ոչ մի վտանգ չէր ներկայացնում։

Մարիամն անաղմուկ հասել էր միջանցքի վերջը ու ձեռքը դռանն էր երկարել, երբ լսվեց տանտիրուհու բարկացած ձայնը.

— Կա՛ց։ Ո՛չ մի տեղ չես գնում։ Ե՛տ դարձիր։ Պայուսակդ դիր այս պահարանին։— Ինչքան էլ ձայնը խիստ էր հնչում, էլի մեջը Մարիամին օգնելու բարի ցանկության երանգ էր զգացվում։ Բայց ինչո՞վ կարող էր օգնել։— Եկ նստիր։ Մենք որոշեցինք, որ դու մի քանի օր պիտի մնաս մեզ մոտ։ Տանը երիտասարդ ենք աղջկաս հետ։ Ես կհեռաբերբերվեմ, կիմանամ, թե որ գործարանը կամ ֆաբրիկան հանրակացարան ունի։ Կոգնեմ, աշխատանքի կանցնես, կապրես բոլորից հեռու, ոչ մեկի կարիքը չես զգա։ Կմնաս այստեղ, մինչև աշխատավարձդ ստանալը։ Ամեն ինչ լավ կլինի։ Մոռացիր, ինչ եղել է քեզ հետ։

Մարիամն ապուշ կտրած՝ խոսակցին էր նայում. ի՞նչ է ասում այս կինը այն ժամանակ, երբ ինքը ոչ մի օգնության կարիք չունի այլևս, երբ գտնվում է արդեն կոմուրջի բազրիքի այն կողմը...

— Միտք չունի, ընկեր Ադրինե, իզուր նեղություն մի կրեք, առանց այն էլ...

— Ո՛չ մի նեղություն։ Աննա՛, աղջիկս, եկ այստեղ,— դստերիկն այնպես արագորեն հայանվից, ասես դռան հետևը մոր կանչին սպասելիս լիներ։— Մանոթացիր։ Համարյա հասակակիցներ եք։ Նույն սենյակում կքնեք։

Այդ անհավատալի խոսքերը կյանքի տաք շունչ հաստրին Մարիամին։ Հիմա այդ տաքությունն այնքան էլ հաճելի չթվաց նրան, քանի որ ուրիշ էր նրա սպասելիքը։

— Ժամանակավոր մնա մեզ մոտ,— ժպիտով առաջարկեց Աննան, որ մոր նմանակն էր ասես։— Միասին ընկերություն կանենք։

— Աննա, տար քո սենյակը ցույց տուր, հետո լվացվիր։ Ես սեղանը կպատրաստեմ, նախաճաշի ժամ է։

Այնպիսի զվարթ ու մտերմիկ տոնով էին խոսում մայր ու աղջիկ, կարծես իրենց վաղեմի բարեկամին էին գտել։

— Դնացի՛նք, Մարիամ։

Եվ Մարիամի ձեռքը բռնելով՝ Աննան իր ետեից քաշեց կեցի լուսասենյակ։

Անասվոր նախաճաշը սկսված էր։

Ե

Տոթ օր էր անցել ու հինգշաբթի էր նորից։

Տիկին Ադրինեն անհանգիստ էր, թեև այդ շաբաթում Մարիամն իրեն ավելի լավ էր զգացել բոլոր կողմերից, քան կարող էր տանտիրուհին պատկերացնել։ Ամենից վատ էր արթնանում, մանր-մունր գործեր էր անում, չնայած առավոտվա համար մայր ու աղջիկ ոչինչ չէին թողնում անելու։ Մարիամը լվացվում էր, հարդարում իրեն։ Օտարություն ցույց չէր տալիս։ Դիտողությունները, որ արվում էին նրան նկատորին, հիվանդագին չէր ընդունում, ձգտում էր ամեն ինչում հաճելի լինել տանեցիներին։ Ազատ ժամերին կարդում էր օրվա լրագրերը և «Հայր Գորիոն», որ հանձնարարել էր տիկին Ադրինեն։ Երկու անգամ Աննայի հետ դուրս էր եկել զբոսանքի։ Քանի որ Աննան և Մարիամը նույն չափերն ունեին, Մարիամը նրա շորերից ու կոշիկներից էր հագնում։ Մոր ու աղջկա զրույցներին չէր խառնվում ու կարծիք էր հայտնում միայն այն ժամանակ, երբ իրեն էին դիմում։

Ադրինեն տեսնում էր այն վիրափոխումը թե՛ վարվելակերպի, թե՛ կեցվածքի ու դեմքի արտահայտության, որ արտադրեն կատարվում էր Մարիամի մեջ։ Բոլոր տեսակետից այդ աղջիկը հակված էր ընդօրինակելու խելացին ու գեղեցիկը։ Միայն թե այդքան օրեր չէր ժպտացել։ Եթե ժպտար էլ, աչքերի խորքում այնքան թախիծ կար, որ ոչինչ չէր կարող ազդել դրա վրա։

Սակայն ուրիշ հարց էր մտահոգում տիկին Ադրինեին. դուցե փնտրո՞ւմ էին այդ աղջկան, Բերլին միլիցիան հայտարարություն էր տվել նրա կորստի մասին։

— Մարիամ,— հենց հինգշաբթի օրը ասաց տիկին Ադրինեն։— Լսի՛ր, Մարիամ։ Մենք ուրախ ենք, որ դու ապրում ես մեր տանը, բայց, այնուամենայնիվ, հետաքրքիր է իմանալ՝ քո հարազատները փնտրո՞ւմ են քեզ այսքան օրեր։ Մի

մասունու համար չարգելեցին քեզ հեռանալ տանից, իսկ երբ ի՞նքդ ես կորչում։ Ճիշտ է, ես որոշել էի այս կիրակի գնալ ծնողներիդ մոտ, խոսել հետներդ, իմանալ, թե ինչ են մտածում քո մասին, ուզո՞ւմ են կարգավորել քո հետագա կյանքը, թե՞ բացարձակապես հրաժարվում են քեզանից։ Ես կարծում եմ՝ մինչև կիրակի ուշ կլինի։ Մի՛ վախեցիր, եթե հրաժարվեն էլ, ես ամեն ինչ կանեմ քեզ համար։ Բայց քանի որ ոչ ոք չգիտե քո այստեղ գտնվելը, ու կարող է միլիցիան էլ փնտրում է քեզ, ես իրավունք չունեմ չհայտնելու նրանց։ Բացվելու դեպքում կարող են մեղադրել ինձ։

Մարիամն աշխատում էր ծածուկ կոտրատել մատները, մի կերպ տեղը բերել շնչառությունը։ Բայց ծնկան միջի մատները դողը, որ էլեկտրական հոսանքի էր նման, նորից իրեն զգալ էր տալիս։

— Հանգստացիր, Մարիամ, ոչ մի բանից չվախենաս։ Ո՛չ ոք չի կարող քեզ նեղացնել, երբ այստեղ ես գտնվում։ Ուզակի ուզում եմ իմանալ, թե ինչ է կատարվում քո անվան շուրջը։ Դու կարո՞ղ ես այնպիսի մարդու հեռախոսի համար տալ, որին զանգահարելով հնարավոր լինի տեղեկանալ այն ամենին, ինչ ինձ է հետաքրքրում։ Իմացիր, դու այստեղ կմընաս այնքան, ինչքան ինքդ կցանկանաս։ Հապա՞, ո՞ւմ կարելի է զանգահարել։

— Այն հարսին, որից երեք ռուբլի եմ վերցրել,— քիչ լարված մտածելուց հետո ասաց Մարիամը։— Կեսրանցս հարեվանի հարսն է Սեդան... Երկու փոքր երեխա ունի... Լավ ժողովուրդ են, հարսին հարգում են աղջկա պես...

«Հայր Գորիոն» շարունակում էր ցնցվել Մարիամի ձեռքում։ Տիկին Ադրինեն վերցրեց այն ու դրեց պահարանին, ինչպես առաջին օրը՝ ծաղիկները։

Միջքաղաքայինով պատվիրելուց հետո, անսպասելիորեն շատ շուտ ներս լցվեց անհամբեր ու շնչակտուր զանգը։

— Ո՞վ է լսում։ Դո՞ւ ես, Սեդա։ Ուրախ եմ, աղջիկս։ Սա Երևանից է։ Դու ձեր հարևանի հարսին՝ Մարիամին ճանաչո՞ւմ ես։ Այո՛, ավելի լավ։ Քեզնից երեք ռուբլի վերցնելուց հետո ավտոբուսով եկել է քաղաք ու գտել ինձ։ Այդ օրից մեր տանն է, հիմա էլ իմ կողքին է կանգնած... Ճի՞շտ չէ։

Նա ոչ մի տղայի հետ էլ չի փախել։ Իզուր է սկեսուրն անվանարկում աղջկան։ Ո՛չ, նա իրենցի՛ց է փախել։ Ես միայն ուզում եմ իմանալ՝ նրան փնտրո՞ւմ են... Այո՛... Ի՞նչ, այդ մա՞յրն է աղջկա համար մազերը պոկում։ Ուրեմն նրա՞նք էլ են անհանգստանում... Շատ լավ, Սեդա, ես հիմա ծնողներին էլ կզանգահարեմ...

Լսափողը տեղը դնելով՝ տիկին Ադրինեն նայեց վախից դողահար Մարիամին.

— Տեսնո՞ւմ ես, մայրդ նույնիսկ ուշաթափվել է, մազերն է պոկում, հորդ հետ միլիցիա են տարել կեսրանցդ տուն, քո նկարն են վերցրել հայտարարություն տալու համար։ Տարածել են, թե իբր քեզ սպանած պիտի լինեն ու մարմինդ են որոնում... Զարմանալի է։ Ինձ ամենից ավելի ապշեցնում է մայրիկդ։ Ինչ-որ իրար չեն բռնում նրա արարքները։ Բոլոր դեպքերում լավ է, որ իրար են խառնվել։ Հավանորեն վախենում են, թե դատական գործ կբացվի ու բոլորն էլ կկանգնեն պատասխանատվության առաջ։

Նորից միջքաղաքային անընդմեջ զանգ։ Տիկին Ադրինեն վեցերեց ընկալուցը կարծելով, թե հետաքրքրվում են՝ վերջացա՞վ զրույցը։

— Ընկեր Ադրինե,— լսվեց հեռախոսավարուհու ձայնը։— Հիմա էլ որտե՞ղ եք ուզում միացնեմ։

Ուրեմն իրենց խոսակցությունը լսել էին։

— Այդ աղջիկը դեռ ձեզ մո՞տ է,— հարցնում էր հեռախոսավարուհին։

— Այո։ Մարիամ, ձեր տան համարն ասա։

— Լսափողը ցած չդնեք,— նորից միջամտեց հեռախոսավարուհին։— Մի րոպե, հիմա կմիացնեմ։

Միացվեց։

Այն կողմից մի տղամարդու ձայն հարցրեց.

— Ո՞ւմ եք ուզում։

— Վարդանուշին,— պահանջեց տիկին Ադրինեն։

— Ո՞վ է,— այս անգամ հարցրեց կնոջ ձայնը։

— Սա Երևանից է։ Ուզում եմ հայտնել, որ ուզիղ մեկ շաբաթ է, ինչ ձեր աղջիկը՝ Մարիամը մեր տանն է։ Պրոֆեսոր Ադրինեի անունը լսե՞լ եք։ Ես եմ։ Ձեր աղջիկը մեր տանն է գտնվում։

— Ի՞նչ, ինչ ասեցի՞ր... Մարիամս սա՞ղ է։ Վա՛յ, վա՛յ, հոգուդ մեռնեմ, էդ ինչ ասեցիր, աշխարհի չափ շնորհակալ ենք... Ո՞նց պտի լավությանդ տակից դուրս գանք, ապիզ ջան, մինչև ասածու ոտը շնորհակալ ենք։ Մենակ հասցե՛ղ ասա, հասցե՛դ...

— Վաղը կգաք մեր տուն, հետներդ խոսելիք ունեմ,— հասցեն հայտնելուց հետո չոր եղանակով ասաց տիկին Ադրինեն։

— Վո՛ւյ, ի՞նչ ես ասում, մենք հենց հիմի կգանք... Վա՛յ, վա՛յ, վա՛յ, էս ինչ իմացանք... Վայ, բալա ջան, էլ տեղ չմնաց, որ ման չեկանք... Ա՛յ մարդ, մեր երեխեն սաղ է...

— Տեսա՞ր Մարիամ ջան, ինչպես խառնվեցին իրար։ Իսկ դու վախենում էիր, թե քեզ կսպանեն։ Այստեղից մինչև ձեր գյուղը քանի՞ կիլոմետր է։

— Մի ռուբլի ենք տալիս ավտոբուսին։ Երևի՝ մի յոթանասուն։

— Դուք հիմա մեքենա ունե՞ք։

— Եթե եղբայրս չի շարդել, ուրեմն...

— Դե՛ լավ։ Լսի՛ր։ Աննայի հետ դու կփակվես սենյակում, մինչև ես դրանց հետ խոսեմ։ Կգաս միայն իմ կանչելուց հետո, հասկացա՞ր։ Շատ զարմանալի է, որ ծնողներդ այդպես անհանգստացած են։

— Իրենց ու եղբայրներիս անվան համար են գլուխները կորցրել...

— Ինչնէ, ես կասեմ այն, ինչ տանջել է ինձ այսքան օրեր։ Լուսամուտից հաճախ նայեք։ Հենց երևան, կթաքնվեք։

Մնում էր սպասել։ Մարիամի դողը սաստկանում էր։ Համաչափ շրթունքները անընդհատ շորանում էին, կրծոտվում էին արյունոտվելու չափ։ Բեկբեկվում էր շնչառությունը։

— Հիմա ժամը տասնմեկն է։ Մինչև գան տասներկուսը կլինի լավագույն դեպքում։ Ուրեմն շհամբերեցին մինչև առավոտ։ Լա՛վ, Մարիամ, առայժմ ամեն ինչ լավ է ընթանում։

Զ

Ճիշտ ժամը 12-ին էլ բակ մտավ մի «Ժիգուլի»։ Մարիամը դուրս նայեց։

— Անծանոթ են... Չեմ ճանաչում...

Դռան զանգը լսվեց տհաճորեն։ Շեմքում հայտնվեց քաղաքում ապրող գյուղացի մի կին, որ առայժմ սանրվածքով էր ձգտում քաղաքացի երևալ։

— Մարիամն էստե՞ղ է։

— Ներս եկեք,— առաջարկեց տանտիրուհին։ Կինը ներս մտավ՝ հետը մի երիտասարդ կնոջ և երկու ջահել տղամարդկանց բերելով։— Դուք ո՞վ եք։

— Ես տղի հորքուրն եմ,— ներկայացավ տարեց կինը։ Տիկին Ադրինեն սառը չափեց նրան։— Այսինքն՝ Լիպոյի հորքուրը։ Սա իմ հարսն է, սրանք էլ՝ տղերքս։ Մենք Երևանում ենք ապրում։

— Բայց ես ձեզ չե՞մ կանչել։

— Ինչի՞ պիտի կանչեիք։ Ինձ եղբայրս է ուղարկել,— ավելի առաջանալով՝ հորաքույրը նստելու տեղ փնտրեց։ Տղաներից հավանորեն ավագը, նա, որ կշտությունից բում հայացք ուներ, հետևեց մորը։— Երբ դուք զանգահարել եք Մարիամի ծնողներին, սրանք էլ իսկույն կապվել են եղբորս հետ, ասել են, իբր Մարիամը ոչ թե փախել է մի տղի հետ, այլ տնից հեռանալու օրից ձեզ մոտ է գտնվում։ Հարսս էլ ինձ զանգահարեց, ասեց ,որ գամ ու իմ աչքով տեսնեմ։ Բա ո՞ւր է Մարիամը։

Եվ նա հետախուզող հայացքով շուրջը նայեց։

— Ոչ թե իբր, այլ Մարիամն իսկապես մեր տանն է ուղիղ մեկ շաբաթ,— չարացավ տիկին Ադրինեն։— Բայց նրան կտեսնեք, երբ ժամանակը գա։ Ես ծնողներին եմ սպասում։ Իսկական գերմանական դետեկտիվ։ Շատ ճշտապահ եք երևում։ Եթե մի քիչ այն ժամանակ ուշադիր լինեիք, հիմա ստիպված չէիք լինի կեսգիշերին այստեղ գալ։

— Դե, մեր պարտքն է,— ձեռքերը փորին դարսեց հորաքույրը։

— Լավ, նստեք, հավանորեն նրանք էլ շուտով գան...

Դռան զանգը համառոտեց խոսքը։ Ցորս անծանոթ տղամարդիկ հայտնվեցին։

— Ներողություն, էստե՞ղ է...

— Այո՛, այո՛, ներս եկեք։

Բոլորն էլ նույն ուշագրավ, հետախուզող հայացքները սենյակով մեկ պտտելուց հետո դարձան հարցական ու կանգ առան տանտիրուհու վրա։

— Նստե՛ք, նստե՛ք, ձեզ հուսախափ չեմ անի։

Հենց այդ պահին էլ, բաց դուռ տեսնելով՝ գնդակի պես ներս ընկավ կլորիկ, Մարիամի դեմքով, բայց ոչ նրա կուսական կողերն ունեցող մի կին։

— Ո՞ւր է Մարիամս... Ո՞ւր է աղջիկս,— ճչալով կանչեց նա՝ բորբոքված աչքերը հեռացնելով տարեց կնոջից։ Հետո ծնկները թակեց, խառնեց խռիվ մազերն ու արագ-արագ սկսեց պտտվել սեղանի շուրջը։— Ո՞ւր է երեխես...

— Նստեք և չփորձեք տեսարան սարքել,— խիստ հայտարարեց տիկին Աղրինեն։ Կնոջ ետևից ներս էր մտել բարձրահասակ, երկարուկ երեսով, ճաղատ գլխով, մոնղոլական երկարուկ աչքերի տակի պարկերով, հիսունի շուրջ մի տղամարդ։ Առանց գլուխը թեքելու, միայն խոնավ աչքերը շրջելով՝ մնաց սենյակի կենտրոնում։— Նստեք և համբերություն ունեցեք լսելու ինձ։

— Էս ի՞նչ զուլում էր... Ախր ո՞ւր է Մարիամս,— դեռ ինքնքիայով շարունակում էր մայրը, որ ծաղկավոր վիլվետե խալաթով էր ու հոգաթափերով։ Դա չէր խանգարում, որպեսզի ներկաների համար շոայլորեն զգացումներ սփռեր։

— Էլ մարդ չի՞ գալու,— հարցրեց տիկին Աղրինեն՝ նայելով սեղանի շուրջ նստած տասներկու հոգուն։ Բոլորն էլ նույն մակարդակի, նույն հոգուց ծնված, նույն միջավայրից, ինչքան էլ տարբեր լիներ նրանց պահելակերպը։— Հավանորեն Մարիամի հարազատներն եք։

— Էս երկուսն իմ եղբայրներն են,— վրա բերեց վարդանուշը՝ ցույց տալով վերջում ներս մտնողներին։— Էս մեկը մեր քավորն է, սա՝ տալոջս ամուսինը, էս ջահելներն էլ քավորիս տղերքը։

Նա արդեն դագաղել էր լաց լինելուց ու թանձր թարթիչներով խոշոր աչքերը հառել էր տանտիրուհուն։ Սա էլ նըստ-

տեց վերևում՝ արմունկները՝ սեղանին հենելով։ Նորից նայեց բոլորին, ապա հայացքը վերջակետեց մոր վրա։

— Ուրեմն, այսպես։ Ուղիղ մեկ շաբաթ առաջ, ցերեկվա ժամը մեկին հանկարծ ինձ զանգահարեցին...

Եվ նա հանգիստ, հերթականությունը չխախտելով պատմեց կատարվածը՝ սկսած Մարիամի ինստիտուտ չընդունվելուց մինչև տվյալ պահը։ Պատմելու միջոցին հետևում էր ներկաների ամենատարբեր արտահայտություններով երեսներին։ Հոր աչքերի մեջ հավաքված արցունքները դողում էին, սակայն ուժ չունեին դուրս գալու։ Մեկը լարված էր, մյուսը՝ հետաքրքրված, ասես հեքիաթ լսելիս լիներ, չորրորդը հանգիստ, ասես մի շատ սովորական պատմություն էին անում իրեն...

— Երեկ, այո, երեկ Մարիամին հարցրեցի,— շունչ առնելով ավելացրեց տիկին Աղրինեն։ Մայրը հայացքը կախ, սփռոցը հարդարող իր կոշտացած ձեռքերին էր նայում, որի մատների ծայրերը ճաքճքած էին ու սևացած։— Ասացի, Մարիամ, եթե ես այնպես ընդունեի քեզ, ինչպես կընդունեին բոլորը։ Այսինքն՝ քո պատմությունը լսելուց հետո, լավագույն դեպքում առաջարկեի վերադառնալ ծնողներիդ կամ որևէ հարազատիդ մոտ, կամ հաջորդ օրը միասին գնայինք, ինքս խոսեի ծնողներիդ հետ, խնդրեի բարեհոգաբար վարվիլ քեզ հետ, ի՞նչ կանեիր։ Նա շատ հանգիստ պատասխանեց. նախքան ձեզ մոտ գալը ես արդեն այդպես էլ պատկերացնում էի ու որոշել էի իմ անելիքը. այստեղից գնալու էի ուղիղ Կիևյան կամուրջ։— Մայրը, որ մինչ այդ աշխատում էր իրեն այնպես պահել, ինչքան թույլ կտար հեռատեսությունը, վերջին խոսքը լսելիս ուժեղ ապտակեց իրեն մի երկու անգամ։— Դրա փոխարեն, տիկին Վարդանուշ, մեկ անգամ գոնե կգայիք ձեր աղջկա ետևից. չէ՞ որ ամբողջ մեկ շաբաթ նա ձեզ է սպասել։ Կամ էլ կհետաքրքրվեիք, թե օտար միջավայրում ինչպե՞ս է ապրում ձեր քսան տարեկան աղջիկը, ինչպես են վարվում հետը։ Փոխարենը հեռախոսով ընդամենը մեկ անգամ եք զանգահարել անիծելու, պարսավելու, ձեր պատիվը տրորելու մասին հիշեցնելու համար։— Մոր փախչող, այս ու այն կողմ պատսպարվող հայացքը չէր խոստանում մի տեղ հանգրվանել։— Իզուր եք

վախեցել, թե Մարիամի ետ գալու պատճառով ձեր ամուսինը կարող էր լքել ձեզ։ Բավականին փորձառու կին եք, երբևիցե տեսե՞լ եք մի տղամարդու, որ կնոջը թողնի երեխայի պատճառով, ինչքան էլ անհաջող լինի այդ երեխան։ Նույնիսկ բաժանվելու դեպքում էլ ձեր գալիք կյանքը չպետք է կերաղասեիք աղջկաղ սպասող ճակատագրից։ Ի վերջո ո՞րն է ծնողի դերը։ Մենք, հասուն մարդիկս քի՞չ ենք սխալվում,— շարունակում էր տիկին Ադրինեն՝ աշխատելով ներքնախույզ հայացքով մինչև վերջ պեղել այդ մոր առեղծվածային հոգին։— Միաժամանակ պիտի ավելացնեմ, որ Մարիամը բնավ էլ սխալ քայլ չի կատարել։ Այո՛, այո՛, մի զարմացեք. եթե նա հայրական տանն իրեն լավ զգար, հազիվ թե գնար։ Սակայն նա ձեզանից հեռացել է ձեր տան խաղաղության համար։ Ի միջի այլոց, քանի՞ տարեկան է Մարիամը, որ հաճախ արժանացել է ձեր հիշեցման, նախատինքին տանը մնալու համար, իսկ ա՛յ, իր ընկերուհիներն արդեն մի-մի արու զավակ ունեն։ Ես զարմանում եմ, որ դուք տարբերություն եք դնում տղա և աղջիկ երեխաների միջև։ Չէ՞ որ երկուսն էլ ձեր հարազատ երեխաներն են...

— Ի՞նչ անենք, որ ես տղա ավելի եմ սիրում,— ակամա դուրս թռավ Վարդանուշի բերանից։

— Իսկ ինչո՞վ եք համոզված, որ Մարիամն ավելի արժանի չէ իր ծնողներին և որ ձեր ծանր օրերին նա՛ չի մխիթարելու ձեզ...

Հայրն ավելի էր գունատվել։ Այտի վրայից վերջապես պլորված արցունքի հետքն անհետանում էր։ Դարձյալ ճոճանակի նման երբեմն աչքերն էին աջ ու ձախ դառնում, առանց պլուխը շարժելու։ Գմբեթարդ ճակատը բնավորության համառությունն էր շեշտում։ Մի երկուսը հառաչանքով խոր արտաշնչեցին։ Լիպոյի հորաքույրը լսում էր՝ բռունցքն այտին հենած, աչքերը միշտ կկոցած։ Հենց դրանով էլ հասատատ կասկած էր արտահայտում։

— Մարդիկ անտարբեր են դառնում ուրիշի բախտի, ապրումների ու տառապանքների նկատմամբ միայն անմարդկային զգացումից, էլ չեմ խոսում այն մասին, որ Մարիամը ոչ թե ուրիշ, այլ ձեր հարազատ երեխան է։— Տիկին Ադրինեն դարձավ հենց այդ հորաքրոջը, որի շրթունքներին հանելուկային մի ժպիտ էր տրորվում։ Իսկ սրա փոքր որդին անուշ-անուշ հորանջում էր՝ չմտածելով բերանը փակելու մասին։ Կարծես ոչինչ չէր լսել։ Ադրինեն մտածեց, որ այդպիսի պատմություն այդպես անտարբեր կերպարանքով կարող են լսել միայն իրապաշտ, անհարազատ մարդիկ։— Իսկ ձեր հարսը, որ կարողացել է մեր հեռախոսային դժվարին պայմաններում այսպիսի ճշտությամբ ձեզ այստեղ ուղարկել, տիկին, ստուգելու համար անցանկալի եղելությունը, լավ չէ՞ր լինի մի քիչ մարդավարի վարվեր ծնողներից լքված այդ աղջկա հետ և ոչ թե պատահ-անպատահ երևսով տար սեփական ոտքով հարս գնալը...

Հորաքույրը շրթունքներից ներս տարավ չարշարված ժպիտը ու կուլ տվեց։ Հետո կոպերը բացեց, որից մեղմացավ կասկածը։

— Օ՛ֆ, օ՛ֆ, ես ինչ գիտեմ, ինչ ասեմ։ Թող ծնողները մտածեն իրանց աղջկա մասին։ Չգիտե՞ն, որ բերանը բաց ամանից շուն էլ կլակի, կատուն էլ,— ձեռքերը փորին դարսելով, հոգոցով իր հաշիվներն այդ ամբողջ եղածի հետ փակեց նա։

Մյուս որդին լռության մեջ Հեռքի հոդերն էր ճրթճրթացնում։

— Ուրեմն այսպես,— մեծ ճիգով իրեն զսպելով՝ ներկաներին դարձավ տիկին Ադրինեն։— Եթե եկել եք այդ աղջկան կախ սրտով տանելու և տանելուց հետո էլ երեսին եք խփելու այս ամենը, դուք չեք տանի նրան։ Ես մի աղջիկ ունեմ, թող լինի երկուսը։ Վեր կացեք ու գնացեք։ Իսկ եթե ձեր մեջ, այնուամենայնիվ, ինչ-որ չափով ծնողական գութ է մնացել և իսկապես չեք ուզում բաժանվել նրանից, տարեք ձեր երեխային։ Ոչ ոք իրավունք չունի խլելու նրան ձեզանից։

Ներկաներն իրար նայեցին համաձայնությամբ մի արտահայտությամբ. մեկի խոսքը բոլորի խոսքը պիտի հասկացվեր։

— Վա՛յ, ինչ եք ասում, մենք շատ շնորհակալ ենք,— ոտքի ելավ հայրը՝ մաքրելով արդեն ցամաքած աչքերը։ Նրա երեսն ավելի էր երկարել։— Դուք փրկել եք մեր երեխային, հիմի էլ...

— Էլ տեղ չենք թողել, որ ման չենք եկել,— վրա բերեց մայրը միանգամայն հանգստացած։— Արդեն մեիդն էինք

ման գալի։ Ասում եմ, Սաքո ջան, որ Մարիամին գտնենք մեր գյուղում թաղե՞նք, թե՞ տանենք մորդ մոտ... Դե՛, փառք աստծո, մի նոր խայտառակությունից պրծանք... Լավ է, որ էսպես է եղել պատմությունը։ Որ իմանաք, թե հիմի ինչեր են ասում աղջկաս մասին։ Ամոթից չեմ կարողանում տանից դուրս գալ... Խեղճ երեխես...

Աղրինեն չկարողացավ համբերել.

— Ա՛խ, դուք դարձյալ ձեր պատվի մասին եք մտածում։ Ես համոզվեցի, որ Մարիամի արած ողջ պատմությունը ճիշտ է եղել։

— Չէ՛, հոգի ունեմ տալու, իմ աղջիկը սուտ չի խոսում։ Հա՛, ես նամուսի մեռած եմ,— հաստատեց մայրը շփոթված հպարտությամբ։— Մեր ամբողջ ազգն ու տակն է պատվով, հարգանքով։

Իսկ ինչո՞ւ տիկին Աղրինեն համոզված էր, որ այդ կնոջ անուշ բերանից միայն բարի խոսքեր պիտի լսվեին...

— Ձե՛մ հասկանում, էլ ինչո՞ւ եք եկել տանելու մի աղջկա, որ ձեր պատիվը գետնով է տվել,— նկատեց Աղրինեն՝ ինքն էլ ելնելով տեղից։— Ինչո՞ւ էիք փնտրում, լաց ու կոծ անում, միլիցիային հայտնում...

— Մեր երեխեն է, փնտրել ենք,— վրա բերեց հայրը կարծես թե վիրավորված։— Հիմի ո՞ւր է Մարիամը։

— Հա՛, ո՞ւր է մեր երեխեն...

— Խնդրեմ։ Մարիամ, ե՛կ այստեղ։

Օդը լարվեց, դարձավ սպասում։

Մարիամը հայտնվեց անձայն, այնպիսի ահաբեկված կերպարանքով, ասես տանելու էին իրեն գատապարտելու։ Ներկաները զգաստացան։ Աղջիկը հպանցիկ նայեց ներկաներին, ընկալեց տիկին Աղրինեի խրախուսող հայացքը ու ոտքն առաջ դրեց դեպի մայրը։ Երևում էր, որ սրա բարի, ներող մի խոսքի համար Մարիամը պատրաստ էր կյանքը տալու։ Ու դրա բացակայությամբ էլ, արյան բնազդով այնուամենայնիվ գնաց մոր կողմը, ընկավ նրա ակամա բացված գիրկը ու ջղաձիգ գալարումով հեկեկաց։ Մայրն օղակեց ձեռքերը նրա ուսերով ու ողբ բարձրացրեց.

— Էս ի՞նչ զուլում բերիր գլխներիս, ա՛յ անբախտ բալա, ա՛յ տանջված բալա,... Ի՞նչ ուզողներ ունեիր, ինչի՞ փա-

խար էդ խուժանի հետ, որ հիմի էլ դոնեղուն ես ընկել... Ախր ես դրանց քոքը լավ եմ ճանաչում... Էս ինչ անհամուսություն էր, որ դու արիր, վա՛յ գլխիս...

Ներկաները սպասեցին, մինչև մայրն ավարտեց սուգը ու ապրկան հեռացնելով՝ նոր միայն կարգին նայեց վրան.

— Էս ի՞նչ ես դառել, աղջի՛, աչքերդ բաց մնալ ես... Մեռնեի՛, քեզ էսպես չտեսնեի։ Բա հաց էլ չեն տվե՞լ էդ անասուածները...

— Մի շաբաթ առաջ ավելի վատ էր,— այնպես ասաց տիկին Աղրինեն, կարծես ուզում էր արդարանալ, որ ավելի արագ չէր վերականգնվել Մարիամը։

Աղջիկն ավելի ընկճվեց մոր խոսքերից, բայց իսկույն էլ հավաքեց իրեն։ Ինչ-որ տեղ ամենախեղճն էլ իր վեհությունն ունի։ Մարիամի համար հիմա ամենաանտանելին իր նկատմամբ ցուցադրվող խղճահարությունն էր, մանավանդ որ այնքան էլ անկեղծ չէր գտնում այն։

— Դեռ մի քիչ խաղաղվել է, գույն է եկել երեսին,— իր խոսքը չէր կարողանում ընդհատել տանտիրուհին։— Այս մեկ շաբաթվա ընթացքում մենք տեսանք, թե ինչքա՞ն լավ աղջիկ է Մարիամը։ Միայն տեր չունի, միայն ոչ ոք չի ուզում տեսնել նրա առաքինությունները, շնորհքը, բարոյական նկարագիրը։ Մեծ սեր ունի դեպի գիրքը, անմիջապես լավն է ընդօրինակում։

Հայրը լուռ աչքերն էր մաքրում։

— Լավ է, որ էդ լակոտի հորքուրն իր աչքով տեսավ ու իր ականջներով լսեց էս բոլորը,— կատաղած հայացքը տարեց կնոջն ուղղեց մայրը։— Կգնա՞ս, կպատմե՞ս տեսածդ, ախպորդ կնկան էլ կասե՞ս, որ բերանը քի՛չ շաղ տա շրջանով մեկ ու քիչ վարկաբեկի մարդկանց։ Ա՛յ, վարկաբեկված թաղեմ դրանց...

Հոր գրկում Մարիամն ավելի սաստկացրեց լացը։

— Դե լավ, հերիք է, անցավ, ամեն ինչ անցավ,— մատներն աղջկա մազերի մեջ խրած՝ աշխատում էր զսպակին միխիթարել հայրը։— Աստծուց էր, որ էսպիսի մարդկանց ես հանդիպել... Չէ՛, ուրեմն դու խելոք աղջիկ ես, բալա ջան։

— Բա էս եղբայրնե՞րս ինչ են քաշել. մի շաբաթվա մեջ քանի հազար կիլոմետր են քշել մեքենաները։ Իրենք էլ չէին

հավատում, որ ձեզ մոտ է Մարիամը... Լավ է, եկաք-տեսաք։ Երևանում էլ քույր ունեմ...

— Եվ դարձյալ ոչ մեկի դուռը չի թակել նա,— նկատեց տիկին Ադրինեն՝ չուզենալով կարգին նայել մեկ շաբաթում մեքենան քանի հազար կիլոմետր քշած քեռիներին։— Կանայ հասակում թողնել հողմի բերան, չեմ հասկանում...

— Բա է՛դ ասա, քույր ջան,— վրա բերեց մայրը՝ հավանորեն իր համար ձեռնտու ինչ-որ բան հասկանալով։— Երևանում հորաքույրեր էլ ունի Մարիամը... Մենք հո անտեր մարդիկ չենք։

— Իսկ առաջին օրն ինձ ասաց, որ այստեղ ոչ ոք չունի։

— Ո՞նց թե, աղջի՛,— աղջկան դարձավ Վարդանուշը՝ չգիտես ուր կորցնելով քիչ առաջվա գթառատ մորը։

— Տիկի՛ն, նա շատ ճիշտ է ասել։ Եթե որևէ ցավոտ հարցատ ունենար, հիմա այստեղ չէր գտնվի։ Եվ հետո ինչպե՞ս գնար, երբ բոլորին հավաքել եք և պատվիրել դուռ չբացել Մարիամի առաջ, քանի որ նա այլևս ձեր աղջիկը չէ...

— Մենք չենք հրաժարվում մեր աղջկանից,— հանկարծ զգաստացավ հայրը։— Զայրացած եմ եղել, մի բան եմ ասել... Մարիա՞մ, գալի՞ս ես գնանք։ Հոր տունն ի՞նչ է, քանդվե՞լ է։ Գնա՛նք, բալես։ Հը՞, գալիս ե՞ս։

— Բա ի՞նչ պիտի անի,— ավելացրեց մայրը։

Մարիամը ոչինչ չհասկացող հայացքով նայեց նրան.

— Տանո՞ւմ եք։

Հիմա էր երևում, որ անհատնում տառապանքները ջլատել էին նրա ողջ էությունը։

— Եթե ընկեր Ադրինեն դեմ չի,— տանտիրուհուն նայելով ասաց հայրը։— Մեր երեխան ես, քեզ ո՞վ է դուրս արել քո հոր տնից... Մենք քո վատը չենք ուզել, ինչ արել ենք, քո ապագայի համար ենք արել...

Իսկ տիկին Ադրինեն մտածում էր, թե արդարացման ի՞նչ եզրեր պիտի գտնեին այդ մարդիկ։

— Ես ի՞նչ իրավունք ունեմ զրկելու ձեզ ձեր երեխայից։ Միայն, կրկնում եմ, տարեք, եթե ծնողական մաքուր խղճմտանքով եք տանում։ Իսկ եթե տանելուց հետո նույն վիճակն է ստեղծվելու, դուք գնացեք առանց Մարիամի։

Աղջկա թևից բռնելով հայրը միջանցք տարավ, ինչ-որ

բան խոսեց հետը։ Մարիամն ուսերը վեր ձգեց։ Հայրը դարձավ տիկին Ադրինեին.

— Ներողություն, մի խնդիրք ունեմ։ Ճիշտ է, Մարիամին հանձնեք ենք ծնել, բայց երկրորդ անգամ դո՛ւք եք կյանք տվել... Եթե ձեզ չհանդիպեր... Ես ուզում եմ կիրակի օրը մի լավ ուրախություն սարքել մեր երեխին ողջ և անփորձանք դարձնելու համար։ Շատ ենք խնդրում, որ դուք էլ գաք ու մասնակցեք էդ ուրախությանը... Ցմերժե՛ք, խնդրո՛ւմ եմ, թե չէ ոչ ոք չի հավատա էս պատմությանը... Մենք մեքենայով կգանք ձեր ետևից...

— Ընկեր Ադրինե,— անսովոր համարձակ դիմեց Մարիամը՝ տեսնելով, որ մյուսները պատրաստվում են դուրս գալ։— Խնդրում եմ այս մարդկանց ասեք, որ ձեր տանը ոչ ոք չի ապրում ձեզանից և Աննայից բացի...

— Չեմ հասկանում, դա՞ ինչի համար է։

— Շատ կարևոր է, ընկեր Ադրինե։ Ասացեք, որ իսկապես ձեր տանը այս շաբաթվա ընթացքում որևէ տղամարդ չի եղել։ Այս խոսքն արդեն ուղղեց ամուսնու հորաքրոջը։— Ես գիտեմ այս մարդկանց... Սրանք խիղճ չունեն...

— Աղջի՛կս,— նոր միայն գլխի ընկնելով տխուր արձագանքեց տիկին Ադրինեն։— Վարկաբեկել ցանկացողի համար ո՛չ մի նշանակություն չունի հանդամանքը։ Բայց ի՞նչ արած, ստիպված եմ հայտարարել, որ այս յոթ օրվա ընթացքում ոչ մի տղամարդ չի այցելել մեզ, թեև այստեղ միշտ էլ կարող են նաև տղամարդիկ գալ... Բավարարվա՞ծ եք։

Ոմանք խոր շունչ առան։

— Ուրեմն գալի՞ս եք կիրակի օրը,— նորից խնդրեց հայրը։— Մեծ լավություն արած կլինեք, ընկեր Ադրինե։

— Լավ, այն ժամանակ Մարիամին հիմա մի տարեք։ Թող այս երեք օրն էլ մնա, մի քիչ հանգստանա, ոչ մի գիշեր կարգին չի քնել։ Երբեմն վեր է թռչում, վատ է ուտում։ Մենք նրան մեզ հետ կբերենք։

— Շատ լավ։ Մինչև ասածու ոտը շնորհակալ ենք։ Կիրակի, ժամը չորսին կգանք ձեր ետևից։

— Դուք էլ գնացեք, միլիցիային հայտնեք այս բոլորը, թող որոնումները դադարեցնեն։ Հետո աշխատեք փակել բամբասողների բերանը...

— Վա՜յ, ընկեր Ադրինե ջան, աշխարհի չափ շնորհակալ ենք,— տանտիրուհու ձեռքը սեղմելիս ասաց հայրը։— Սրանից հետո էս տունը մեր վանքն է, մեր մատուռը։ Որ թույլ տաք, մեկ-մեկ կգանք մոմ վառելու, արևս վկա։ Համ մեր երեխին փրկեցիք, համ՝ բոլորիս... Աստված ձեր մի հատիկը պահպանի, սուրբ մարդ եք, աղնիվ խոսք։

Եվ օրհնելով ու բարի մաղթելով՝ հավաքվածներն իրար նեռից դուրս եկան նախօրոք տանտիրուհու և աղջիկների ձեռքը սեղմելով։

Մարիամը ճանապարհեց նրանց կիսաերերուն քայլերով։ Սև սուտակե գիշեր էր դրսում։

Միջանցքի պատին կպած Մարիամը երկար ժամանակ չէր կարողանում ուշքի գալ։ Լռված գիշերն ասես ոռնաձայներին էր հեռանում։ Խաբված լուսինը միամիտ հայացքով նայում էր վերևից։

«Ի՞նչ պտուղ կարող է տալ երկրորդ անգամ ծաղկած ծառը, երբ նախորդը կարկտահարված է լինում»,— անկողնում շուռումուռ գալով մտածում էր տիկին Ադրինեն։

Է

Կիրակին շատ շուտ եկավ։ Ինչքան էլ Մարիամը տագնապաթափ էր եղել, դարձյալ լիակատար չէր խաղաղվել։ Նա չէր ապրում այն ուրախությունը, ինչ ծնողներից այդքան ժամանակ հեռացածն ու հիմա նրանց մոտ վերադարձող աղջիկը կարող է ապրել։ Վերջին մեկ տարին տառապանքն այնպես էր խարանվել նրա հոգու վրա, որ գուցե և ամբողջ կյանքում չանցներ այդ դաջվածքը։ Տիկին Ադրինեն հուսադրվում էր այն մտայնությամբ, որ այս բոլորից հետո Մարիամի հարազատները, առանձնապես՝ տանեցիներն այնպես կվերաբերվեն նրա հետ, որ սա կամաց-կամաց կբեռնաթափվի տագավորություններից։

Ճիշտ ժամը չորսին երկու «Ժիգուլի» կանգնեցին բակում։ Մարիամի հայրն ու քեռին եկել էին նրանց տանելու։

Քիչ հետո մեքենաները ուղղություն վերցրին դեպի Հարավ։ Երկրորդ մեքենան այդպես էլ դատարկ հետևեց մյուսին։ Երբ մոտենում էին Կիևյան փողոցի վերջին, Մարիամը հրվեց Ադրինեին ու հազիվ լսելի շշնջաց.

— Կամո՜ւրջը...

— Այո՛, Մարիամ ջան, սա այն կամուրջն է, որի վրայից դու արդեն անցար։

Տիկին Ադրինեն սեղմեց նրա ձեռքը, որից շատ բան պիտի հասկանար աղջիկը։

Քիչ առաջ անձրև էր եկել։ Օդը լողացել էր։ Երբ քաղաքը հետ մնաց, հեռու-հեռվում, ինչ-որ մեկի այգու մեջ ծիածանն էր իր գլուխը կամրջել։ Կամարի տակից անարգել ու հեշտ աղջիկ քամիներն էին վազում տղա դառնալու ակնկալությամբ։ Մի ձորակից քիչ վերև, բլրալանջին թզուկ տնակներ էին ծվարել։ Ոսկեդեղին աշնանային հրավառությունն էր շրջակա այգիներում։

Մինչև տեղ հասնելը ոչ մի զրույց չստացվեց։ Ամեն մեկն իր մտքի հետ էր։

Վերջապես մեքենաները շունչ առան երկհարկանի մի մեծատան առջևի հրապարակում, որտեղ հարյուրից ավելի մարդիկ էին հավաքվել։

— Էս բոլորը մեր բարեկամներն են,— տիկին Ադրինեին կամացուկ ասաց Մարիամը։

Նա ելավ մեքենայից առանց ժպիտի, իրենից հրաժարված քայլերով առաջացավ, մինչև հավաքվածների միջից դուրս եկան մի երկու կանայք ու սկսեցին ողջույն համբուրել ու իրար փոխանցել կորած ու անսպասելի հայտնված բարեկամուհուն։

Տպավորիչ հուզականություն կար նրանց ձայների մեջ։

— Կորա՜ծ բալա, սպասի մի լավ մտիկ տամ...

— Քոռանա՜ն աչքերս, բա ախպորս երեխին էսպես պիտի տեսնեի՞...

— Արի՛, արի՛ քեռին էլ պաչի...

— Էլ տեղ չմնաց, որ ման չգանք...

Բայց այս նույն քեռին երեք օր առաջ արդեն տեսել էր Մարիամին։

— Հազար բան էր անցնում մտքներովս, Մարիամ ջան...

— Արի՛, արի՛, մորքուրդ քոռանա...

— Վա՜յ, բալա ջան, ամեն ինչ իմացել ենք... Ի՞նչ խելոք բան ես արել...

Մի ծերունի հետևում էր զգուշորեն կոկոցով առաջացող սեփական ձեռնափայտին։

— Ո՞ւր է Մարիամս...

— Պապիկս է, կիրակվանից է եկել,— տիկին Աղրինեին հասցրեց Մարիամը ու պապին մոտենալով՝ գգվեց նրան։

— Պապի ջա՛ն...

Պապը լուռ ու դողդողացող ձեռքերով շոյեց նրա գլուխը՝ ինչ-որ բան մրմնջալով։

Մի կին թույլ չտվեց Մարիամին սթափվելու։

— Էս ինչ օրն ես ընկել, Մարիամ ջան, կեսդ էլ չի մնացել...

Մարիամը լաց էր լինում՝ չիմանալով, թե ում գրկում էր գտնվում։

— Դե լա՛վ, էգքան մի մոմռա,— կողքից մխիթարում էր զարդեղենի մեջ կորած մի հարս։— Սրանից հետո գլուխդ կախ չոլա պիտի գնաս։

Հրգեհված հայացքներն այրում էին միմյանց։

— Շնորհակալ եղիր էս մարդկանցից...

Այս ասողն էլ էր մերձավոր։

Այնպես էր երևում, թե ամեն մոտեցող իր համբույրը թանկ նվերի նման էր տալիս Մարիամին։ Թանկ-էժան՝ պիտի ընդուներ Մարիամը։

— Հույսներս կորցրել էինք, թե քեզ կգտնենք...

— Փառքդ շա՛տ, առավոտ...

Սա արդեն մայրն էր։

Սկսվել էր հովանավորողների մրցության շրջանը։ Բոլոր դեպքերում տիկին Աղրինեի համար անտանելի էին զգացումների այդ ցուցադրումները։ Ո՞ւմ էին ուզում ցույց տալ, հավատացնել, թե Մարիամի կորուստը մեծ վիշտ պիտի պատճառեր իրենց։ Չէ՞ որ այս մարդիկ իրար լավ էին ճանաչում։ Այստեղ օտարն Աղրինեն էր ու Աննան, որոնց համատարած սիրալիրության երեսակալով էին նայում։

Վերջապես մտան բակ-պարտեզը։ Հավանորեն խորովածի համար վառած կրակն էր բռնկվել, որի բազմալեզու բոցը ճարճատյունով սպառնում էր խժռել մոտակա ծառերի ճյուղերը։ Մի քանի ջահելներ մսով, լոլիկով, բաղրիջանով ու պղպեղով շարված շամփուրներն էին իջեցնում ցած։

— Սպասե՛ք մի բոպի,— հյուրերին կանգնեցրեց տանտերը, երբ սրանք մոտեցել էին սանդուղքներին։

Մի ողամարդ մատաղացու մի սպիտակ ոչխար քարշ տալով բերեց ու վիզն ոլորելով՝ փռեց հյուրերի ոտքերի առջև։ Խոշոր գանակը տեսնելով՝ Աննան ճչաց ու մի կողմ դարձավ։ Աղրինեն սարսափած փակեց աչքերը։

Ինչի՞ եք վախենում, Մարիամիս գտնվելու առթիվ մատաղ էի խոստացել,— հպարտ-հպարտ ասաց տանտերը՝ սենյակի մեջ սեղմելով արդեն ցնցվող կենդանուն։— Առավոտ մեզանից վանք ենք տարել ու յոթ անգամ պտտել ենք բոլորը, ոտքերն էլ կարել ենք։

Տիկին Աղրինեն աչքերը բացեց այն ժամանակ, երբ պիտի օր ամեն ինչ վերջացրած լիներին։ Մորը կպած Աննան ոնգում էր։ Մի կին ծիծաղելով ջուր բերեց։

Վերցրու, աղջիկ ջան, խմիր, քաղաքում փափուկ մեծացած երեխա ես...

Փարթամահասակ ու լավ հագնված մի ողամարդ հավանորեն շատ էր շփվել ինտելիգենցիայի հետ, որ մոտեցավ ու խոնարհումով առավ տիկին Աղրինեի ձեռքը ու համբուրեց։

— Մեզ համար մեծ պատիվ է, պրոֆեսոր, ձեզ նման հյուր ունենալը։

Ասաց, ու կարծես մեկի կողմից տրված հանձնարարությունն ավարտած՝ կողմ քաշվեց, ներս թողնելով հյուրերին։

Տիկին Աղրինեն նախատում էր իրեն, որ ոչինչ անկեղծ չէր զգալում ինքը։

Ընդարձակ հյուրասենյակի երեք պատերի ողջ երկայնքով ստենդերի սեղան էր գցված, որ կարող էր առնվազն երկու հարսանիքի բավարարել։ Դուռն մոտ եռանդով երկու տղամարդիկ նարդի էին խաղում՝ զառերը նետելու հետ հառաչելով ու քարերը շրխկացնելով մեխում իրենց տեղերը։ Հյուրերի մտնելու հետ նրանք անմիջապես ելան, հավաքեցին ամեն ինչ ու մի տեսակ մեղավոր ժպիտով դուրս ելան։

Այդ սենյակում հավաքվածներն էլ, որ միմյանց որպիսությունն էին տեղեկանում, մեկ-մեկ մոտեցան, սրտալի բարի գալուստ մաղթեցին ու համբուրեցին Մարիամին։ Տանտերը բոլորին վերև էր հրավիրում։ Եկածները հավանորեն այն մարդիկ էին, որոնք Մարիամի մարմինը գտնելով՝ մասնակցելու էին հուղարկավորությանը։

Տիկին Աղրինեն տեսնում էր, որ այդ օրվա ամենացան-

կալի հյուրերն իրենք էին, ու այդտեղ հավաքվածները եկել էին թերևս շատ ավելի իրե՛նց տեսնելու։ Ամենավերևում զբաղված երեք աթոռներն իրենց էին սպասում։

— Խնդրե՛մ, ընկեր Ադրինե, ահա այստեղ նստեք,— հենց այդ աթոռներն էր մատնացույց անում տանտերը։

Նայում էր Ադրինեն բերներերևան լցված սեղաններին և ապշում. երկու օրվա ընթացքում այս մարդիկ ինչպե՞ս էին հասցրել այսպիսի պատրաստություն տեսնել։ Ո՞չ, այս տաներերն ավելի վաղ և ուրիշ նպատակով էին այս բոլորը ձեռք բերել։ Շամպանսկին և ընտիր կոնյակներն առատ էին հանքային ջրի պես։ Հապա թանկարժեք սպա՞սքը, բյուրեղապակե տարբեր չափերի բաժակները, գունավոր անձեռոցիկնե՞րը։ Եթե հավաքվածները հանկարծ բացակայեին, տիկին Ադրինեն պիտի համոզվեր, թե իրենք գտնվում են մայրաքաղաքի ունևոր ու բարձրաճաշակ մի ընտանիքում։ Բայց երբ զուգուկն ու կլառնետը դհոլի ուղեկցությամբ ներս խուժեցին, ամեն ինչ ընկավ իր տեղը։ Պակասում էին միայն նորապսակները և սեղանի գլխավերևի պատից կախված այն գորգը, որի վրա բամբակե քուլաներով պիտի գրված լիներ՝ «Երջանկություն նորապսակներին»։

Աշխույժ տրամադրության մեջ էին բոլորը։ Ոմանք, ամենայն հավանականությամբ, շատ վաղուց չէին հանդիպել միմյանց ու հիմա յոթը պորտից էին հետաքրքրվում, տնից, մեքենաներից, մեծացած զավակներից ու թոռներից։ Ոմանք սեղանի պակաս-պռատն էին ձգտում լրացնել, եթե, իհարկե, տեղ էին գտնում ամանների արանքներում։ Մանրամասմին, մկան նման մի կին այս ու այն կողմ էր վազվզում, ասես թաքնվելու մի ծակ գտնելու համար։ Վարդանուշը բալի գույնի կրեպլինե մի շոր էր հագել, որը շնորհքով ծածկում էր նրա մարմնի ավելորդությունները։ Նա ժպտում էր զուսպ, հարցերին պատասխանում էր ցածրաձայն, կարծես ամաչելով։

— Էն լակոտի հորքուրի հարսին էլ եմ կանչել,— անցնելու պահին աղջկան լսելի ասաց մայրը։— Թող էս էլ տեսնի ու գնա պատմի աննամուսներին։

Մարիամը ոչ մի վերաբերմունք ցույց չէր տալիս, ասես այդ բոլորի մեջ ինքը ոչ մի կապ չուներ։ Ավելին, մոր վերջին հայտնածն այնքան էլ նրա սրտովը չէր։ Մարիամի տրամադրությունը գնալով ոչ թե բարձրանում, այլ ընկնում էր։ Այնպես էր թվում, թե հավաքվածներից ոչ մեկին նա չէր ուզում ճանաչել։ Թվում էր, թե ինքն էլ էր հյուր, այն էլ՝ անկոչ։ Ջեռին ճար լիներ կփախչեր այս բոլորից, կվազեր այդի, կընկներ մի հողաթմբի՝ սեփական գերեզման՝ դարձրած ու սրտալի կողքար անտեր-անտիրական, լքված մի աղջրկա համար։

— Մարիամ,— գլուխն իջեցնելով՝ ցածր ասաց տիկին Ադրինեն։— Եթե չես ուզում այստեղ մնալ, գնանք մեզ հետ։

Աղջիկը տխուր նայեց վեր. աչքերի անհատնում թախիծն խոկուն արցունքներ դառավ։

— Շնորհակալ եմ, ընկեր Ադրինե, ձեզանից շատ շնորհակալ եմ։ Առանց այն էլ շատ նեղություն պատճառեցի ձեզ։ Պարզապես այս բոլորն ինձ ներկայացում է թվում։ Գիտեմ, վաղվանից նույն կյանքն է շարունակվելու։

Տիկին Ադրինեն չասաց.

— Ինձ էլ է այդպես թվում։

Նա ասաց.

— Քեզ պահիր, ամեն ինչ լավ կլինի։ Ես կհետևեմ քո յուրաքանչյուր քայլին։

Ո՞վ էր Մարիամին մի հատիկ քրիզանթեմ ավել, որ հիմա սա այնպես էր դողում մատների մեջ, ասես գլխավերևը գազրուն կաթ կախված։

— Մեր թանկագին հյուրեր,— լիքը բաժակն առնելով՝ տանտերը ընդունված ձևով «հյուր» բառը «հույր» արտասանեց,— խնդրում եմ լցրեք բաժակները և առաջին բաժակով խմենք մեր բոլորի բարի գալուստին։ Բարո՛վ եք եկել, իմ հարազատներ։

Լցված բաժակները հանդիսավորությամբ բարձրացան, սեղանի աջ ու ձախ կողմերից իրար հասան, զարկվեցին։ Ամենասրտաբուխ խոսքերն այս ու այն կողմ ուղարկվեցին։

Սեղանակիցները բոլորն էլ հագնվել էին, հարդարվել տոնականորեն։ Նույնիսկ միջին տարիքի կանայք չէին մոռացել իրենց հարստանիքին ստացած զարդերը կրելու ականջներին, մատներին, պարանոցին։ Ում զարդերն ավելի թանկարժեք էին ու շատ, նրանք ավելի ազատ էին զգում իրենց։

Երաժշտությունն ուժեղացուցիչների բերանից դուրս թռչելով՝ սպառնում էր պատուհանների ապակիները կոտրել, եթե չէր կարող քանդել պատերը։ Ադրինեն ցնցվեց ջղային ու ականջները փակելու համար բարձրացրեց ձեռքերը, սակայն իսկույն էլ իջեցրեց էտիկայի կանոնների համաձայն. դուցե ներկաներն այդպես էին ըմբռնում երաժշտությունը։ Ի՞նչ ծաղր. նույն երաժշտությունը և՛ թաղման, և՛ ուրախության ծեսերին։ Այս սեղանն իր բովանդակությամբ և՛ հոգեհաց է լինում, և՛ հարսանիքների համար նախապատրաստված։ Մարիամին շատ ավելի սեփական հոգեհաց էր հիշեցնում։

Ներկա գտնվողները, ինչքան էլ տարբեր հարդարանքով ու հագուստ կապուտաչով (զարդերը համարյա նույնն էին) շատ էին իրար նման իրենց ոճով։ Այս բոլոր հարսները, կանայք, աղջիկները բարոյական էին, մաքուր, սուրբ, այդ պատճառով էլ իրավունք ունեին մի տեսակ ներողամիտ, հանդուրժող ժպիտով նայելու Մարիամին։ Ի՞նչ ազատ էին ծիծաղում, հյուրասիրում իրար, սեղանի մի կողմից մյուսը համեղ խորտիկներ ուղարկում՝ արանքում հասցնելով միմյանց որպիսությունն իմանալ։ Իհարկե, Մարիամին էլ էին հյուրասիրում, որից ավելի էր խեղճանում, նվաստանում նա։ Մատուցված ուտելիքներին Մարիամն այնպես էր նայում, ասես բոլորը պիտի թունավորված լինեին կամ ինքը արժանի չէր դրանց։

Շեմքում երկու կանայք քիթ-քթի տված՝ հերթական բամբասանքի կծիկն էին արձակում, ուրիշներին թողնելով կծկելու դժվարին պարտականությունը։

Ոտքի ելած տանտերը ձեռքի մի շարժումով կտրեց և՛ երաժշտությունը, և՛ բոլոր զրույցները։

— Թանկագին հարազատներ, ես շատ շնորհակալ եմ, որ էսօր հավաքվել եք իմ ամենամեծ ուրախությանը մասնակցելու։ Ինչպես գիտեք, էս ուրախությունը մեր երեխին ողջ և անվնաս գտնելու առթիվ է։ Բոլորիդ էլ հայտնի է, թե ինչ ենք քաշել մի շաբաթ... Փա՜ռք աստծո, իմ աղջիկը փախել էր անվնասիբ, աննամուս ու անխիղճ մարդկանցից։ Փախել է ու էնքան խելոք է եղել, որ պատսպարվել է մեր բոլորի, ամբողջ մեր Հայաստանի կողմից հարգված ու ճանաչված պրոֆիսոր ընկեր Ադրինեի հարկի տակ։ Եկեք խմենք էն մարդու կենացը, որ փրկել, պահել է մեր երեխին... Ձե՛ր կենացը, ընկեր Ադրինե, շա՛տ ողջ լինեք...

Բոլորը պարտ համարեցին մոտենալ ու բաժակը խփել հյուրի բաժակին։

— Ես խնդրում եմ Մարիամի կենացն էլ միացնել մերին,— առաջարկեց Ադրինեն։

Սիրով համաձայնեցին։

— Մարիամն արդեն ձեր աղջիկն է,— կիսաձիծաղ ասաց վարդանուշը։— Որ ուզենանք էլ զոռով չենք կարող պոկել ձեզանից։

Ծիծաղելով էլ խփեց հյուրի բաժակին։

— Իմ այգին ձեզ,— ժպիտը երեսին մոտեցավ ծանոթ մի կերպարանք՝ մաքրելով արցունքները։— Երբ ուզեք, ինչքան ուզեք իմ այգին ձեր տրամադրության տակ եմ դնում։

— Հիշեցի՞ք, մեծ քեռիս է,— կամացուկ ասաց Մարիամը։— Ձեր տուն էր եկել։ Աղքատին երկու գեղձ չի տա։

Մեկի մարմրոտ ծիծաղը կորավ բեղ-մորուքի մեջ չգիտես որ խոսքի հետ։

— Ամեն աշունքին այդպես ձեզ, պատվովս եմ երդվում,— ջռայլ նվիրատվությունն էր շարունակում մեծ քեռին։

— Սա իմ հեռախոսի համարը,— անձեռոցիկի մի կտորի վրա ինչ-որ համար գրելով՝ բաժակը բաժակին խփելուց հետո, Ադրինեին մեկնեց փոքր քեռին, վաղամամ ճերմակած, սակայն գեղեցիկ դիմագծերով մի երիտասարդ։— Երբ ցանկանաք, զանգահարեք, Քսանչորսս ձեր տրամադրության տակ կդնեմ։

Իսկ մեծ քեռին, ոգևորությունից լիցքաթափված, նստել էր բաց արած ափը բերանին դրած, որ հենարան էր դարձել ականջին և այդպես էլ մնացել էր։ Գուցե արդե՞ն զղջացել էր իր չմտածված ու անհեռանկար նվիրատվության համար։ «Աշնանն իմ այգին քեզ»,— հավանորեն կրկնում էր մտքում և ուշքի չէր գալիս կյանքում առաջին անգամ թույլ տված այդ շռայլ խոստման համար։

Քեռու կողքին մի երիտասարդ մաքրում էր ինչ աչքին էր երևում սեղանին։ Նրա մսոտ շրթունքներին պիտի որ միշտ

վերջին յուղոտ պատառի համը մնացած լիներ։ Առհասարակ, բոլորն էլ ուտում էին նախանձելի ախորժակով։ Առայժմ ուտում էին թանկագին հյուրերի պատվին մատուցված խորտիկները։

Նիհար ու բարձրահասակ մի կին մոտեցավ աչքերը մաքրելով։ Բաժակը երկարեց.

— Աղիզ ջան, քո ու բալիկիդ կենացը, որ պահպանել ես ախպորս երեխին...

— Այս հորաքրոջս պահարանում էի թաքնվել,— անձայն ասաց Մարիամը։— Վերջին օրն ուզում էի իրենց տուն գնալ, բայց...

Ինչքան էլ թանձրամարմին էր Վարդանուշը, էլի կարողացավ ճապուկ շարժումներով, սրան-նրան հրելով մոտենալ.

— Աշխարհի չափ գոհ ենք, որ էսօր մեր տանն եք... Աչքիս վրա եք եկել, շատ շնորհակալ եմ... Աղջիկ ջան, շատ խելոք ես եղել, որ էս պատվական մարդուն ես հանդիպել...

Երբ Աղրինեն ելավ պատասխանելու, մի քանիսը միանգամից ձեռքները վեր տնկեցին.

— Սպասեք, ձեր պատվին։

Եվ պարեղանակը հաղթականորեն պայթեց, որից քիչ էր մնում Աղրինեն խելագարվեր։ Անկասկած նրանք ուզում էին ողջ գյուղին տեղյակ պահել այդ հավաքույթի մասին։ Առաջինը պարելու ելան տանտերերը, գտնված երեխայի ծնողները։ Պարում էին համարյա նույն տեղում՝ նեղվածք լինելու պատճառով։ Սակայն պարում էին հաճույքով, ինչպես հարսանիքում կարելի է պարել։ Ապա սկսեցին պարելու քաշել մուսիկներին։ Լավ էր, որ Աղրինեն նստել էր սեղանի մյուս կողմում, այլապես նրան էլ անպայման կպարեցնեին։ Ինչքան բորբոքվում էր երաժշտությունը, այնքան շատանում էին օդում ռիթմիկ ճոճվող, թափահարվող ձեռքերը։

Մարիամը ոչ ոքի չէր նայում։ Կախված հայացքը մնացել էր ձեռքի թատամող քրիզանթեմին։ Երբեմն խեղճացած, նվաստացած հայացքը գցում էր Աղրինեի վրա։ Սա հասկացնում էր համբերել։

Մի երկուսը երգեցին անմոռանալի մայրիկի, անփոխարինելի հայրիկի ու սիրո մասին՝ ծաղկացնելով հյուրերի կենացը։

Վերջապես տեղից ելավ Աղրինեն.

— Ուրախ եմ, որ Մարիամն այսքան հարազատներ ունի, որոնք կարող են նրա գտնվելու առթիվ այսպես ուրախանալ։ Ես չէի ասի, թե Մարիամը երջանիկ լինելու նպատակով է հեռացել այս տանից, կամ անմաքուր ձգտումների համար է լրիվ ամուսնու տունը։ Եթե առաջին քայլն արել է իր հարազատների խաղաղության, եղբայրների կյանքը չպղտորելու, ամեն օր չպարսավվելու համար, ապա երկրորդ քայլը՝ իր կյանքն ու պատիվը, կանացի արժանապատվությունը մի կերպ փրկելու համար։

Մեծ քեռին լուրջ խոսքը հասկացողի նման գլխով հավանություն էր տալիս։ Փոքրն այնպես էր լսում, ասես անծանոթ մեկի մասին էր գնում խոսքը։ Նկատելով Լիպոյի հորաքրոջ հարսին՝ Աղրինեն որոշեց ամբողջ պատմությունը նրան ուղղել, թեև նա արդեն լսել էր ողջ եղելությունը։ Ընդհանուր առմամբ լսում էին լարված, ինչպես մի արկածային պատմություն կարող էին լսել։ Մի երկուսը նույնիսկ թաշկինակն աչքերին տարան։

— Այնպես որ, հարգելի բարեկամներ, Մարիամի ողջ մնալը միայն պատահականություն պիտի համարել։ Ա՛յ, դուք բոլորդ ուրախանում եք, ուտում, խմում, պարում եք, երգում, բայց այս երեխան, որ ամբողջ օրը սեղանին չի մոտեցել, հիմա էլ հոր տանը նստել է քար լռությամբ և իր շուրջը կատարվածն է ծանր ու թեթև անում։ Միակ մարդը, որ այստեղ ոչնչով չի ուրախանում, Մարիամն է։ Այս բոլորից հետո ես չեմ ուզում հավատալ, թե այսուհետև դուք՝ հարազատներդ ուշադիր ու հոգատար չեք լինի նրա նկատմամբ։ Ես ուզում եմ հավատալ, որ դուք այնպես կվերաբերվեք, որ նա չմտածի, թե մի նոր օտար միջավայր է ընկել։ Կրկնում եմ, այս մեկ շաբաթվա ընթացքում մենք բավականին մտերմացանք ու սիրեցինք իրեն, քանի որ նա արժանի է դրան։ Ոչ մի բանով չզգացինք, թե նա ուրիշ միջավայրում է մեծացել։ Իսկ եթե պատահի, որ նորից լարված մթնոլորտ ստեղծվի, նա կարող է տեղափոխվել Երևան, որտեղ և հարազատներ ունի, և ծածկ իր գլխավերևում։ Ես կհո-

գամ նրա ապագայի մասին։ Ուրեմն, մենք Մարիամին, այսպես ասած, որպես պատանդ ենք թողնում... Ո՛ղջ լինեք, շնորհակալություն կենացի համար։ Իսկ ինչ իմ արածին է վերաբերում, ապա ամեն մի քիչ թե շատ խղճի տեր մարդ այդպես կվարվեր։

— Տա՜ւշ,— գոռաց մեկը։

Ավելի զորեղ գոռաց կլարնեանը։ Ադրինեն զղջաց իր խոսքի, իր ապրումների համար, որոնք հավանորեն այնքան էլ տեղ չէին հասել։ Ինչպես երևում էր ոչ ոք իր խոսքից չէր վիրավորվել։ Սակայն չասել էլ չէր կարող, քանի որ դրա համար էր եկել, դրա համար էին իրեն հրավիրել. հարկավոր էր Մարիամին վերաբերող, օր-օրի ծավալվող բամբասանքի ճանապարհը փակել, հարկավոր էր աղջկան փրկել նաև բարոյապես։

Քեռիները պատվերներ էին ուղարկում ու այնպես էին նայում հյուրերին, որպես թե ասելիս լինեին. «Ձեզ համար մենք պատրաստ ենք ամեն ինչ անելու»։

Մուքն ընկնում էր, երբ տղամարդիկ գլխներից վեր պահած՝ հանդիսավոր ընթացքով բերեցին խորոված։

Մարիամի ավագ եղբայրը խիստ նիհար ու բարձրահասակ մի երիտասարդ էր, արտաքինով բավականին նման հորը և ոչ մի բանով աչքի չէր ընկնում։ Հենց նա էլ ձեռքի մատուցարանը աշխատեց տեղավորել Ադրինեի առջև։ Փոքր եղբայրը, որ անընդհատ երաժիշտների հետ էր, ավելի գեղեցիկ էր, ինքնիշխան, համարյա չէր ժպտում և ոչ մեկի հետ չէր խոսում։ Հարազատներն իրենք էին մոտենում ու մեկերկու բառով իմանում նրա որպիսությունը։ Եղբայրները ոչ մի տեղամ չմոտեցան ու չխոսեցին իրենց քրոջ հետ։ Զգացվում էր, որ այդ ջահելները ոչ մի գաղափար չունեին կարիքի, հոգսի, մանավանդ հոգեկան տվայտանքների մասին։ Երկուսն էլ իրենց պահում էին որպես այդ տան տեր ու տիրական։

«Ինչքան համեստ է լինում մարդու մտային պաշարը, այնքան մեծ է լինում նրա հանդգնությունը»,— նրանց նայելով՝ ցավով մտածում էր Ադրինեն։

— Մեր երեխան է, մենք էլ կպահենք ոնց կարողանանք,— Ադրինեի վաղուց ասած խոսքին էր պատասխանում հայրը՝ հյուրերից մեկին գիմելով։

— Էլի հազար բերան շնորհակալ ենք, որ մեր երեխին ոչ ոչ անվնաս մեզ է հասցրել,— կողքինին էր պատասխանում մայրը՝ Ադրինեի համար լսելի ձայնով։— Ոչի՞նչ, էլի կառնեմ կարի ֆաբրիկա, աշխատանքի կտեղավորեմ։ Ի՞նչ անենք, սրա բախտն էլ էսպես ստացվեց։

Ադրինեին թույլ չտվեցին նույն օրը քաղաք վերադառնալ, այդ պատճառով էլ մնաց մինչև խնջույքի վերջը, մինչև կեսգիշեր։

Է

Մի ընդարձակ ննջարան, ուր երեք փայտյա մահճակալներ էին դրված իրենց ընտիր ու փարթամ անկողիններով, հատկացվեցին հյուրերին։

Երեքով էլ լուռ հանվեցին ու անկողին մտան։ Սառն էր վերմակի տակը։ Մարիամը կորավ մթության մեջ։ Երևանի լապտերները գյուղ էր հասել և պատուհանից-պատուհան անցնելով՝ Ադրինեենց էր փնտրում։ Լուսարձակների նման շողերը ներս ուղղեց ու կանգնեց նախ Մարիամի վրա, որ Դիանայի աղեղի պես կեռված՝ ասես ծածուկ աղոթում էր։ Լուսաշողերն այնքան թեթև էին, որ երևալ էին ենթադրվում։ Հավանորեն Մարիամն այլևս ոչ թե խնդրում, այլ օգնություն էր պահանջում աստծուց։ Երբ մարդիկ չեն լինում, դիմում են աստծուն։ Աստված էլ միշտ հաշտարարի դեր է կատարում։ Մարիամը լուռ աղոթքն էր ուղարկում առ աստված։ Նա էլ կարծես շողերի նման քաշ չուներ։ Ախր այս տարիքում նա միայն գունավոր երազներ սիրի տեսներ...

Աննան քնել էր արդեն։

Այնպիսի քար լռություն էր տիրում շարքը, ասես մի ժամ առաջ հարյուր հոգի օդ պատող երաժշտության տակ չէին ուրախանում։

Թեև շատ ուշ քներ Ադրինեն, գարձյալ լույսը չբացված՝ հաղնվեց ու պատշգամբ ելավ։ Այստեղ անձրև չէր եկել։ Լուսաբացը քնքշորեն փռվում էր արդեն ճաքճքած հողին, խոնավ համբույրով զովացնում նրա պապակ շունչը։ Երբ Ադ-

րինեն սենյակ մտավ Աննային արթնացնելու, Մարիամը դուրս էր եկել։ Աննան դժվարությամբ ելավ տեղից։ Օգն այնքան ջինջ էր, որ ամենաանբռնելի ձայնն անգամ երկար պիտի արձագանքվեր այստեղ։

Հյուրասենյակում, մոր հետ Մարիամը նախաճաշի սեղան էր պատրաստում։ Այդ ժամանակ էլ եկավ թաղային միլիցիոները լսածն ստուգելու։ Երբ Աղրինեն մանրամասնորեն պատմեց եղելությունը, միջահասակ այդ տղամարդն ամաչեց արցունքներից ու տեղից ելնելով՝ փակեց թղթապանակը.

— Այս գործն ավարտված եմ համարում։ Շատ շնորհակալ ենք ձեր մարդկային վերաբերմունքի համար։ Երանի սրա հարազատներից ոմանք ձեզ նման լիներին։ Ես այդ տղայի տունն էլ եմ գնացել, խոսել եմ Հարևանների հետ։ Հավատացեք, բոլորն էլ ափսոսում էին այս աղջկան։ Մի խոսքով, Մարիամն իր տեղում չէ։ Ես հավասարապես մեղադրում եմ երկուսի ծնողներին։

Քիչ հեռվում դյուրահավատ նստած Մարիամը զրույցին հետևում էր ամեն ինչ կորցրածի հուսալքությամբ։ Անընդմեջ անհաջողությունները բրիչի նման հղկել, կոկել էին նրա զգայուն անկյունները, և հիմա նոր տհաճությունները, զարկվելով բիրացած զգայարաններին, սահում, հեռանում էին առանց նոր ցավ պատճառելու։

Նախաճաշելուց հետո բոլորով փողոց ելան։ Աղրինեն հրաժեշտ տվեց տանտերերին՝ մի բիչ դրկում ավելի պահելով Մարիամին։

— Զմռսանաս մեզ... Կզանգահարես...

Երբ մեքենա նստեցին, Աղրինեն մի անգամ էլ նայեց կողմ քաշված Մարիամին, որ գլխի խոնարհ ու տխրաղոք թեքումով պատասխանում էր իր բարերարի ձեռքի թափահարումներին։ Մայրը մոտեցավ ու ձեռքը դրեց աղջկա ուսին՝ հեռացողներին ժպտալով։

Այդ պահին Մարիամը գերեզմանից հեռացողի կերպարանք ուներ։

Ամբողջ ճանապարհին ոչ մի բառ չփոխանակեցին մայրը ու աղջիկը։ Իսկ երբ նեռս մտան, Աղրինեն տխուր հառաչեց.

— Ես չհավատացի դրանց ուրախությանը։

— Իզուր դնացինք,— ավելացրեց Աննան՝ դժվելով մորը։ — Նա այնտեղ չի դիմանա։

Ը

Աղրինեն հոգով այնքանով էր թեթևացել, որ բաց օդի մաքրած մի աղջիկ ապաստան էր գտել հոր տանը, թեև այնպան վստահ չէր նրա ոչ միայն երջանկությանը, այլև՝ խաղաղությանը։ Ամեն օր մայրը ու աղջիկը հիշում էին Մարիամին, խոսում էին նրա մասին. ինչպիսի՞ն էր նրա վիճակը հիմա, ի՞նչ էր սպասում նրան վաղը։ Հետաքրքրությունն օր ստ օր փոխվում էր անհանգստության։

— Գոնե զանգահարեն։

— Իսկ ինչու դո՞ւ չես կապվում, մամ։ Ով գիտե, գուցե անհարմար են զգում զանգահարել, կամ չեն պատկերացնում, թե իրենց զանգին ենք սպասում։

Կարծես դատեր այդ մի հատիկ խոսքին էր սպասում Աղրինեն, որպեսզի անմիջապես կապվեր դյուղի հետ։ Հայրը վերցրեց լսափողը։ Ուրախացավ, որ իրենց հիշում են։

— Իսկ Մարիա՞մն ինչպես է։ Արդեն կարոտել ենք։ Տասնմեկ օր է անցել։

— Նա էլ ձեզ է կարոտել...

— Դե, ուրեմն թող գա՝ տեսնենք։ Իսկ տրամադրությո՞ւնն ինչպես է։

— Ոչինչ... Չէի ասի, թե շատ լավ է... Նա առհասարակ ուրախանալ չգիտի։

Մի՞թե հշվում էր կանխազգացումը։

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել... Հո չե՞ք նեղացնում...

— Դե, ինչ ասեմ... Հարմար չի հեռախոսով...

— Վաղը կարո՞ղ է գալ,— ավելին կոահելով՝ հարցրեց Աղրինեն։— Դուք էլ եկեք, կխոսենք, կմտածենք, թե ինչ կարելի է անել։

— Շնորհակալ ենք... Կգանք...

Լռություն։ Աղրինեն մի պահ մնաց տեղում՝ ասես ինչոր որոշում հանելու համար։

— Դե՛,— անհամբեր հարցրեց Աննան։

— Ինչպես երևում է, այդ աղջիկը միանգամայն օտար մարդ է դրանց մեջ։ Հավանորեն վաղը գան։

Տարօրինակն այն էր, որ հաջորդ օրն ամուսինները եկան առանց Մարիամի։

— Հապա Մարիա՞մը,— վրա ընկավ Աննան։

— Կգա, աղջիկ ջան, կգա,— ուզեց հանգստացնել հայրը՝ խաղողով լի դույլը ցած դնելով։— Սա ձեզ համար։ Մարիամն է քաղել։

— Ինչ նեղություն,— վրա բերեց Ադրինեն՝ ցույց տալով խոհանոցը։ Սաքոն դույլը տարավ այնտեղ։— Երևանում խաղող չկա՞, ինչ է։

— Տեսնում եմ, տեսնում,— թասերի միջի ընտիր խաղողը նկատելով՝ արձագանքեց Սաքոն։— Ձերը, ինչ խոսք, ավելի լավն է։ Շուկայից եք առել երկու ռուբլով։

— Կարծում եմ, մյուս անգամ այսպիսի բան չեք անի,— փափուկ-փափուկ զգուշացրեց տանտիրուհին։— Մեր շուկայում ամեն ինչ լցված է։

— Գիտեմ, բայց ինչի՞ թանկ ու կրակ առնեք... Համ էլ մերը տնական է։

Միծաղեցին. ամեն ինչի տնական լինելու մասին լսել էին, բայց մրգի՞ տնականի...

Մտան հյուրասենյակ։ Արդեն նստած իր տեղը՝ Վարդանուշը շաղևիկ ձեռքն էր քսում սեղանին։ Չէր նայում ոչ ոքի. խոռվածի նման շրթունքներն էր կրծոտում։ Նայելով նրա կլոր երեսին, խոշոր ու արտահայտիչ աչքերին՝ Ադրինեն աշխատում էր այդ կնոջ հոգին ավելի վաղ կարդալ, քան նա կհասցներ առաջին խոսքն ասել։ Վարդանուշը սեղմեց շրթունքները հենց առաջին խոսքի մենաշնորհն ամուսնուն թողնելով։

Ադրինեն առաջին անգամ էր ուշադիր նայում այդ կնոջը։ Քիթը փոքր էր և սրա ու վերին շրթունքի միջև մուգ աղվամազե բեղիկներ կային։ Կլոր ծնոտը, որ սովորաբար մեղմ ոչ բարի բնավորության նշան է, թյուրիմացաբար համառության ու խստության դեր էր վերցրել իր վրա ու հենարան էր դառել կլոր ու լիքը, վառվռուն այտերին։ Սփոռցի վրա անհանգիստ շարժվող ձեռքերը հողագործի էին, ինչքան էլ բալա-

պույն լաքը ուզում էր թաքցնել մատանիներով բեռնավորված գրանց աշխատավոր լինելը։

— Դե, խոսե՛ք տեսնեմ, էլի ի՞նչ է պատահել, ինչո՞ւ Մարիամին էլ չեք բերել... Գուցե խուսափո՞ւմ է մեզանից,— սկսեց Ադրինեն, տեսնելով, որ իր հարցին են սպասում։

— Ինչ եք ասո՞ւմ,— վրա բերեց հայրը, որ նույն արտահայտությունն ուներ, ինչ առաջին օրը՝ զգուշավորություն։— Մի ժամ չի լինում, որ ձեզ չհիշի... Էնպիսի բան չեք արել, որ մոռանա։ Չէ՛, Մարիամը ձեզ ասածո տեղ է դնում։

— Չենք բերել, որ առանց իրան խոսանք։

— Այսի՞նքն։

— Դե, ո՞նց ասեմ, ընկեր Ադրինե,— լարվեց տղամարդը՝ հայացքի պոչը կնոջն ուղղելով։— Հետը յոլա չի գնում...

— Մա՞յրը,— ապշեց Ադրինեն, թեև արդեն դրա նման մի խոսքի էր սպասում՝ չմոռանալով և Մարիամի պատմածը, և իր ստացած տպավորությունը։

— Հա՛, ընկեր Ադրինե, հենց մերը,— միանգամից քարտերը բացեց Սաքոն։— Եկած օրվանից գզվռտոցի մեջ են։

— Ձեմ հասկանում... Մարիամն էլի որևէ բա՞ն է արել։

— Իրը արածը քիչ է՞ր,— քթի տակ այնպես դժգոհեց Վարդանուշը, ասես իր վրա գցված մի օտար աղջկա մասին էր խոսքը։ Հանկարծ Ադրինեն որտեղի՞ց հիշեց այն խոսքը, թե անհաշտ բնավորություններ կան, որոնք, եթե կարողանան, արևի վրա էլ ցեխ կշպրտեն։— Էլ մարդկանց երեսի չեմ կարողանում մտիկ տալ... Նրա արածները չեմ կարողանում մոռանալ։ Անուններս հողին հավասարեցրեց։ Ախր ում հանդիպում եմ, նույն հարցն են տալի. էդ խեղճ ու կրակ, անլեզու Մարիամը էդ ո՞նց գտավ էդ պրոֆեսորին, տեղավորվեց մոտը... Ինչի պրոֆեսորն էդքան միամի՞տ է, որ օտար, երկու տնից փախած աղջկան տեղ տա... Մեջտեղն ի՞նչ ունի...

— Իսկ իրենց կարծիքով այդ անլեզու, խեղճ ու կրակ աղջիկը տասը օր ի՞նչ է արել,— մի կերպ իրեն իշխելով՝ հանգիստ արտասանեց Ադրինեն։

— Եսիմ։ Ասում են երևի սկեսուրը ճիշտ է՝ փախել է սիրածի հետ, մի քանի օր հետը քեֆ քաշել, հետո էլ տղեն լքել է, դե նա էլ վերջին օրը ձեզ մոտ է եկել...

— Բավակա՞ն է,— խիստ ընդհատեց Ադրինեն։— Տիկին Վարդանուշ, դուք ինձ էլ եք վիրավորում։ Ստացվում է, որ այս ամբողջ պատմությունը ես հորինել եմ... Հապա խնդրում եմ ձեր հարազատների արցունքներն ու շնորհակալական կենացը, խոստումները, որոնց չէի էլ հավատում... Ո՞րն է դրանցից ճիշտը։ Նշանակում է այդ խեղճ ու կրակ աղջիկը կարող է սիրած ունենալ այդ թշվառ պայմաններում և հետն էլ փախչել, բայց չի կարող մեկի մոտ պատսպարվե՞լ։ Սակայն ինձ ամենից առաջ հետաքրքրում է ձե՛ր կարծիքը, դո՞ւք ինչ եք մտածում այս բոլորի մասին... Ինձ անհասկանալի է ձեր դիրքորոշումը...

— Ես համաձայն եմ քեզ հետ, ընկեր Ադրինե, բայց ես ո՞ր մեկի բերանը կարող եմ փակել։ Ամբողջ շրջանում ասելիք ենք դառել, մատով են ցույց տալի, արժող-չարժող մի մեռոր լեզու է բացում մեզ վրա,— աշխատում էր արդարանալ մայրը։— Հենց երեկ փոքր ախպերը երեսին շպրտեց՝ դու էլ ես խոսո՞ւմ, գնացած՝ ետ եկած... Էլ ինչ ասես, որ չեն ասում։ Ես էլ մեր եմ, հո քար չեմ։ Մարիամն էլ խեղճանում, մի քունջ է մտնում ու լաց լինում։ Չեմ դիմանում, տանջվում եմ... Ինչ ասեմ, մարդ որ էդքան անբախտ պիտի լինի, լավ է ծնված չլինի...

Եվ նա ափով մաքրեց արցունքները։

— Իսկ եթե ծնվե՞լ է։ Ես միայն չեմ հասկանում, տիկին, թե ինչի՞ համար էր ձեր այսքան հավաքվելը։ Մեզ տանելը, այդքան ծախսն ու խնջույքը,— հոգմունքից դողում էր Ադրինեն։ Աննան գնաց ու փակվեց իր սենյակում։— Այդքան մարդ ինչո՞ւ էիք հավաքել... Ինչո՞ւ ստիպեցիք, որ ես նրանց համար անեմ ամբողջ պատմությունը...

— Նամուսի՛ համար, ընկեր Ադրինե ջան, ցավդ տանեմ, ուզում էինք, որ բամբասանքին վերջ տրվեր... Ախր ձեր խոսքն ուրիշ է...

— Եվ այնուամենայնիվ, չհասա՞ք դրան։ Լա՛վ, վերջացնե՛նք։ Հիմա ի՞նչ եք ուզում անել այդ երեխային։

— Ես գիտե՞մ որ,— նորից մայրը պատրաստվեց լաց լինել։— Նա մեր գյուղում մնալ չի կարող։ Տեղից վեր կենողը երեսով է տալու արածները... Բամբասանքով աչքերը կհանեն... Եղբայրների բախտի վրա էլ քար գցեց։ Էլ մեկ

ո՞վ ազջիկ կտա... Չէ՞, ախպերները կուտեն նրան... Ես չե՞մ դիմանա...

Եվ լաց եղավ։

— Ախր որ ասեմ, թե Մարիամը մորը կամ եղբայրներին մի պատասխան է տալի, խղճիս դեմ գնացած կլինեմ,— լրացրեց հայրը։

— Ուրեմն հլա պատասխան էլ պիտի տա՞...

— Սպասե՛ք, սպասե՛ք։ Իմ համոզմամբ, ծնողը հենց նրա համար է, որ բռնի մոլորված, կործանվող զավակի ձեռքը, ուղիղ ճանապարհի դնի... Չնայած Մարիամին ես կորած չեմ համարում։ Ես տեսնում եմ, որ դուք ձեր ամբողջ ուշադրությունը ձեր որդիներին եք նվիրել և այդ վերաբերմունքն էլ լեզու է դրել նրանց բերանը...

— Է՛, ընկեր Ադրինե, բա եղա՞վ, բա աղջիկը տղայի տեղը կրոնի՞,— ավելի անկեղծացավ Վարդանուշը։— Տղի խեր ու բարաքայթին մեռնեմ։ Տղեն է տան տերը, տուն շենացնողը, օջախի կրակը պահողը... Աղջիկը տանջվելու համար է...

— Հարյուր տարվա խոսքեր,— ընդմիջեց Ադրինեն՝ լավ դիտակցելով, որ իր կարծիքը հազիվ թե նրանց վրա որևէ ազդեցություն թողնի։ Քառասունհինգ-հիսուն տարում կարծրացած տեսակետը հազիվ թե հնարավոր լինի տեղից շարժել։— Այսօր աղջիկն էլ է տան սյուն, ընտանիք ու ծնող պահող։ Ասենք հիմա քիչ են այն ծնողները, որոնք մտահոգվում են, թե իրենց ծանր օրերին որ զավակի խնամքին են մնալու կամ որի հարգանքին են արժանանալու։ Իհարկե, բարեգութ որդիներ էլ շատ կան, բայց ծնողները, մինչև նրանց հույսին մնալը, արդեն ապահովում են իրենց ծերության օրերը։ Այսօր ծնողները մտածում են շատ ավելի տալու, թողնելու, զավակներին ու թոռներին ապահովելու մասին, քան ուշադրության արժանանալու, որը ես խիստ սխալ եմ համարում։ Լավ, սա մի օրվա զրույց չի, յուրաքանչյուրն իր կարծիքն ու վերաբերմունքն ունի կյանքի, ծնող-զավակ հարաբերության մասին։ Ավելի լավ է խոսենք Մարիամի շուրջ։ Ուրեմն, ձեր կարծիքով, նա այլևս չի՞ կարող ձեզ մոտ ապրել։ Ես ճի՞շտ հասկացա։

— Շատ ճիշտ, ընկեր Ադրինե,— հաստատեց Վարդա-

նուշը։— Էդ երեխեն երես չունի մեր գյուղում ապրելու... Թե մի բան անեք, ամբողջ կյանքում պարտական կմնանք... Մեղք է։ Վախենում եմ գլխին մի փորձանք բերի...

— Թող վաղն ևեթ տեղափոխվի մեզ մոտ։

— Վա՛յ, վա՛յ, ես քու ցավը տանեմ, ընկեր Ադրինե ջան, շա՛տ շնորհակալ ենք,— առատորեն ավարտված համարեց Վարդանուշը, աշխարհի միակողմանի առատուրներից մեկը։— Ուղղակի իմացեք, որ փրկում եք մեզ...

— Իմ կարծիքով՝ Մարիամն է փրկվում։

— Հա՛, ճիշտ ես ասում։ Դու ծնող ես նրա համար։ Քեզնից հետո մենք հեչ... Քո մի մազը մեր գլխի հետ չի փոխում...

✓ Նլան տեղից մեկնելու Սակայն մի պահ կանգ առան միջանցքում բազմանշանակ հայացքներ փոխանակեցին։

— Ընկեր Ադրինե, բա մենք ինչո՞վ պիտի պատասխանենք։ Էսպես հո չի՞ լինի, մենք էլ մեր վերաբերմունքը պիտի ցույց տանք, չէ՞։ Ձեռքներս շոր քարի տակ չեն... Վերջի վերջո՝ ծնող ենք...

Ադրինեի մեջքով մրջյուններ վազեցին. ի՞նչ պիտի հասկանար այդ «վերաբերմունք» բառի տակ. որքա՞ն։ Դե, Ադրինե, զսպիր քեզ, քանի որ բոլոր մարդիկ են մահկանացու։

— Ոչինչ հարկավոր չէ։ Գնացեք և վաղն իսկ Մարիամին ուղարկեք մեզ մոտ։

Վարդանուշը նորից մի խորամանկ ժպիտ հասցեագրեց ամուսնուն.

— Ասե՞նք։

— Ի՞նչ կա,— անհանգստացավ Ադրինեն։

— Ես սուտ խոսել չեմ կարող... Մարիամը դրսում է, ձեր մուտքում...

— Ինչպե՞ս թե... Խելագարվե՞լ եք, ինչ է։ Այս եղանակի՞ն...

— Լա՜վ, բան չի պատահի,— ժպիտով ուղեց հանգստացնել Վարդանուշը։— Գյուղում մեծացած աղջիկ է։ Հարկավոր չի էդքան վրեն դողալ, փիս կսովորի։ Մի քիչ քամոտ անձրև է։ Հիմի կիջնենք, իրան կուղարկենք վերև։

— Աննա՛, Աննա՛, աղջիկս, անմիջապես իջիր ցած, Մարիամը դրսում է...

Աննան դուրս թռավ։

— Վա՛յ, ընկեր Ադրինե, վա՛յ,— ծիծաղեց Վարդանուշը։— Ա՛յ, դրանով ես գժվացրել Մարիամին, որ հիմի ոչ մեկիս չի հավանում... Երեկ էր, չէ՞, Սաքո, որ ասեց ընկեր Ադրինեն աշխարհի չափ սիրտ ունի։

— Ընկեր Ադրինե, համենայն դեպս, ինչի կարիք որ կունենաք, խնդրում եմ Մարիամի միջոցով հայտնեք մեզ... Մենք էլ մարդ ենք... Դե, ներողություն ենք խնդրում էս բոլոր նեղության համար... Ձեր արածը մենք հուր հավիտյան չենք մոռանա...

— Հա՛, մի բան էլ ասեմ, ընկեր Ադրինե ջան, Մարիամը շատ շնորհքով աղջիկ է, ոնց որ քաղաքում մեծացած, օդնական կլինի քեզ՝ անող-դնող, եփող-թափող, չի թողնի որ մազդ ծռվի... Չէ՞, չես փոշմանի քո արած լավության համար... Շատ քաղաքավարի է Մարիամս...

Հանկարծ Ադրինեին թվաց, թե ներսում օդը պակասեց։ Միայն թե շուտ գնային...

Վերջապես ելան սանդղահարթակ։ Այդ պահին էլ Աննան քաշելով բերում էր ցրտից սառած, ներքին տվայտանքներից դողահար Մարիամին։

— Էլ լաց մի՛ լինիր, աղջիկս,— նրան համբուրելով ասաց մայրը։— Հիմի արդեն մորդ փորն ընկար։ Դե՛, քեզ տեսնեմ, ամոթով չանես, խոսքներից դուրս չգաս... Մեզ էլ հեռախոսով կասես, թե ինչի կարիք ունես... Հոգիդ ազատվեց։ Հիմի՛ տեսնեմ, թե ինչ են ասելու...

Երեքով լուռ ու լսելված հետևում էին հեռացող ոտնաձայներին։

Մաս երկրորդ

Ա.

Անցել էր երեք տարի։ Կյանքում ոչ մի տեղ ու ոչ մի ժամանակ Մարիամն այդպես չէր ապրել։ Այդ միջոցում բժշկական ուսումնարանն էր ավարտել և Ադրինեի միջոցով աշխատանքի էր անցել հանրապետական հիվանդանոցում որպես վիրահատարանի քույր։ Երբեմն նա չէր պատկերացրել, որ ինքը ոչ միայն ներկա էր գտնվելու, այլև մասնակցելու էր վիրահատության։

Ադրինեն արգելել էր նրան գնալ և վարձով ապրել։ Իր անվերապահ նվիրվածությամբ ու անսեթևեթ բնավորությամբ կարճ ժամանակամիջոցում Մարիամը նվաճել էր իր հետ աշխատողների՝ հավաքարարներից մինչև բաժնի վարիչի համակրանքը։ Վերջինս Ադրինեից էր տեղեկացել Մարիամի կյանքի կարճառոտ պատմությանը և ահա նրա միջնորդությամբ էլ բնակարան տալու կապակցությամբ հաշվառման էին վերցրել նաև Մարիամի դիմումը։ Ադրիկը հաճախ հերթապահում էր, որպեսզի ինչքան հնարավոր է քիչ հոգս պատճառի Ադրինեին և մի քիչ դրամ հավաքի հետագայի համար։

Եվ դարձյալ ընդհանուր զրույցի ժամանակ նույնիսկ Մարիամը մնում էր նույն մտամփոփ, ինքն իրեն հաշիվ տվող աղջիկը։ Նա նոր մեկանց գալիս էր այն համոզման, որ Լիպոյենց տանը զայրույթով էին լցվում իր պահվածքի, գրական լեզվով խոսելու, սեղանը ճաշակով դասավորելու, անձեռոցիկ, պատառաքաղ գնելու, հացը բարակ շերտերով կտրելու դեմ։

— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, գլխներիս ֆրանսիացի է դառել։

Իսկ ահա այս ընտանիքը սիրով էր հետևում իր շարժուձևին, խրախուսում էին իր պահելակերպը։ Այստեղ համարյա դիտողություն չէին անում։ Ավելի ճիշտ, դիտողություններն այնքան նրբանկատորեն էին արվում, որ Մարիամը դրանք չէր կարող որպես դիտողություն ընդունել։ Ահա թե ինչու համեմատաբար կարճ ժամանակահատվածում Մարիամն

այնքան մշակվեց, հղկվեց ինչպես արտաքինով, այնպես էլ ներքին կուլտուրայով, երևույթների ընկալմամբ, որ պրոֆեսորը խոսք չէր գտնում ասելու։ Ահա թե ինչու շատ դեպքերում, երբ Աննան դասերով էր զբաղված լինում, Ադրինեն նրան էր վստահում հյուրերի համար սեղան գցելը։ Այդ պարագան հաճույքով էր լցնում Մարիամի հոգին, շոյում նրա արժանապատվությունը։ Իր տեսակետի համոզիչ սպառումով Ադրինեն Մարիամին դարձնում էր այնպիսին, ինչպիսին ինքը էր ցանկանում։ Ինչ վերաբերում էր Աննային, սա գրկաբաց էր ընդունել Մարիամին, որի մտերմությունն ու անկեղծությունը հասել էին հարազատության։ Ինչքան էլ Աննան իր նորածին զգացումները բաժանում էր մոր հետ, դարձյալ իրեն հասակակից մեկի պահանջը վաղուց էր զգում։ Եվ այդ մեկը եղավ Մարիամը, որը ոչ միայն լիովին հասկանում էր նրան, այլև իր դառը փորձից ելնելով (չէ՞ որ տարիքը ոչ այնքան իր երկարությամբ, որքան խորությամբ ու տարողությամբ է չափվում), երբեմն էլ խորհուրդներ էր տալիս Աննային։

Երբ հարց էր լինում ծնող-զավակ հարաբերության, փոխադարձ վստահության մասին ու Մարիամն այստեղ կանգ էր առնում իր կասկածը չարտահայտելու համար, Աննան առանձին զորովով ու փաղաքշանքով էր լցվում մոր նկատմամբ։ Ո՞ւմ կասկածել, մո՞րը, այնպիսի՞ մոր, որ վաղաժամ այրիանալով՝ ողջ էությունը դրել էր միակ դստրիկի կյանքն ուղիղ ճանապարհով տանելու վրա։

Իսկապես, Ադրինեն շատ հաճույքներից ու վայելքներից էր զրկել իրեն, հրաժարվել էր անգամ անձնական երջանկությունից՝ միշտ զգուշանալով, թե հանկարծ որևէ քայլով կգավաճանի երեխային։ Ու երբեք չէր դավաճանել։ Ոչ, Աննան իրավունք չունի կասկածելու իր ծնողի զգացումներին։ Ահա թե ինչու Մարիամի սերը նույնպես նրա նկատմամբ փոխվել էր պաշտամունքի։ Եթե ծիծաղելի չթվար, ինքը ամեն երեկո, քնելուց առաջ կնոջ կվառեր նրա ոտքերի տակ։

Ո՞վ էր վերջապես այդ Ադրինեն, ի՞նչ մարդ էր նա, ինչո՞ւ էր այդքան ուշադիր Մարիամի նկատմամբ։ Չէ՞ որ արյան ոչ մի կապ չկար նրանց միջև։ Նա ճանաչված հոգեբան

էր, պրոֆեսոր, ուսանողների սիրելին և այդքանով էլ պիտի բավարարվեր։ Մարիամն այդ համոզման էր։ Բայց ո՞չ, Ադրինեն նաև լիարժեք մայր էր, տանտիկին, տնտեսուհի։ Իր ձեռքով էր պատրաստում ոչ միայն օրվա կերակուրներն ու թխվածքները, այլև ամբողջ ձմռան ուտելիքներն էր եփում, փակում, չորացնում։ Ոչ մի գործից չէր տրտնջում։ Եթե Մարիամն ու Աննան թույլ տային, բնակարանն էլ կմաքրեր։ Ոչ, այդպիսի գործերը երկու աղջիկները բաժանում էին միմյանց միջև։ Մարիամը պատրաստ էր առավոտից մինչև ուշ երեկո ամեն տեսակ ֆիզիկական գործ կատարել, միայն թե երկար տպահովեր հոգու այն խաղաղությունը, որ վայելում էր վերջին երեք տարում։

Անհնարին էր, որ Ադրինեն որևէ հարցում տարբերություն դներ աղջիկների միջև։ Ավելին, երբեմն աշխատանքից տուն գալով որևէ փոքր նվեր կամ գիրք էր բերում Մարիամին։ Ահա թե ինչու սա անմնացորդ իրեն դրել էր տանտիրուհու տրամադրության տակ։

Մարիամն ինչպե՞ս կարող էր մոռանալ այդտեղ տեղափոխվելու առաջին տարվա այն օրը, երբ Ադրինեն ասաց, թե հյուրեր են գալու և աղջիկների հետ շուկա գնաց, մինչև երեկո պատրաստեց ամեն ինչ։ Երեկոյան հավաքվեցին հարազատները, Մարգարիտ Տիգրանովնան ու շրջապատեցին լիքը ու ընտիր սեղանը։ Ադրինեն, թե՞ Աննան մարեցին լույսը։ Տանտիրուհին անսպասելի, այրվող մոմերը վրան մի խոշոր տորթ բերեց ու գլխից վեր պահած՝ հանդիսավոր դրեց սեղանին։

— Սիրելիներս, եկեք շնորհավորենք մեր Մարիամի բանմեկ տարին, որ լրանում է այսօր։

Կարկամած Մարիամը չգիտեր անելիքը. ինչպե՞ս թե, ուրեմն ի՞նքն էլ է ծննդյան օր ունեցել, որը հիշվում է առաջին անգամ, այն էլ այս տանը...

— Դե, փչի՛ր, Մարիամ, ուժե՛ղ փչիր,— ճչում էր Աննան ոգևորված ծափ տալով։

Ո՞չ, Մարիամը մի հատիկ իսկ մոմ փչելու ուժ չուներ այդ պահին։ Եվ մոմերը հանգցրեց Աննայի օգնությամբ։

Իրեն միանգամայն կորցրած՝ Մարիամը չգիտեր իր հաջորդ արարքը։ Իսկ արարքը ընդամենը իր ափսեի մեջ այն

մսի կտոր դնելն էր, որ ընդհանուր ամանից առաջ էր հրում Ադրինեն։ Դրեց Աննան։ Հետո նա միացրեց ձայնարկիչը։ Ադրինեն գնաց իր աշխատասենյակը ու վերադարձավ կոշիկի մի տուփ ձեռքին։

— Հապա փորձի՛ր, Մարիամ, կարծում եմ քո չափսին եմ վերցրել...

Արտասահմանյան գեղեցիկ բոկոտիկներ էին։ Հուզմունքից Մարիամը չէր կարողանում հագնել։ Հագավ դարձյալ Աննայի օգնությամբ։ Ճիշտ և ճիշտ Մարիամի ոտքով էին և շատ էին սազում։

— Շնորհավո՛ր լինի,— բացականչեցին բոլորը։

Մարիամը չէր կարողանում պոկվել Ադրինեի անուշադիր ու հարազատ գրկից։

Ամեն անգամ այդ կինն ապշեցնում էր Մարիամին իր մտքի անսպասելիություններով։ Այդ ե՞րբ էր Մարիամի անձնագիրը վերցրել, ճշտել ծննդյան օրը (հավանորեն գրանցելու ժամանակ) ու այդ հավաքույթը սարքել։ Իսկ ի՞նչ կպակասեր նրանից, եթե չաներ այդ բանը։ Ոչինչ էլ չէր պակասի, բայց դրանից հետո շատ բան ավելացավ նրա աստվածային խառնվածքին։

Այդ երեք տարիներին Մարիամը շատ անգամ էր անդրադարձել իր հետ կատարվածներին։ Չէր էլ կարող չանդրադառնալ, քանի որ միտքն ու երևակայությունն անընդհատ վազքի մեջ էին, հանգիստ չէին տալիս նրան։ Եվ ի՞նչ նշանակություն ուներ, թե վերջին տարիներին որտեղ էր ապրում ինքը, երբ մտքերն իր գլխում էին։ Երեք տարվա ընթացքում մի քանի անգամ եկան ծնողները՝ մի դույլ խաղող, լոլիկ կամ վարունգ բերելով ու կամաց-կամաց դադարեցրին այցելությունները։ Ահա թե ինչու, հետապնդված այս մտատանջությամբ՝ Մարիամը չէր կարողանում միտքն այլ ուղղությամբ շեղել։ Գիտեր այնքան, որ ավագ եղբայրն ամուսնացել էր, ու մայրն էլ պատրաստվում էր տատիկի պարտականությունների մեջ մտնել։

— Էնպես որ, աղջիկ ջան, իմ վիճակը պիտի հասկանաս,— վերջին այցելությանն ասել էր մայրը։— Չեմ կարող շուտ-շուտ գալ։ Կարոյի համար էլ ուզում ենք տուն կառուցել, ընկել ենք շինանյութերի հետևից։ Ո՞վ է տեսել, որ հի-

մի ամուսնացած երկու երեխաներ մի տան մեջ ապրեն, եղբ հերդ ամբողջ օրը վառվում է արևի տակ աշխատելով։ Փող է հարկավոր։ Հեշտ չի տուն շինելը...

Ահա թե ինչու իրեն հասանելիք ծնողական գորովանքը Մարիամը ձգտում էր Ադրինեից ստանալ։ Եվ ստանում էր՝ այն էլ ինչպե՞ս։

Որևէ գիրք Մարիամին հանձնարարելուց հետո Ադրինեն պահանջում էր, որպեսզի նա իր տպավորությունն ու կարծիքը գրավոր հայանի իրեն։ Այո, հենց նամակով։ Ենթադրենք հեռու են ապրում իրարից։ Եվ ինչքան հնարավոր է, թող երկար գրի, շեղումներով, մեջբերումներով նաև։ Ի՞նչ կա որ, եթե կարող է, թող նաև գեղարվեստական շունչ տա գրածին։ Պրոֆեսորը ձգտում էր Մարիամին դրագետ դարձնել բառիս ճշմարիտ իմաստով։ Եվ ահա մի քանի տասնյակի էին հասնում այդ նամակները։ Եթե ամսաթիվ էլ չուններին, մակարդակով կարելի էր դրանց հերթականությունը որոշել։

— Եվ ոչ միայն դրագետ պիտի լինես, այլև պիտի գրես գեղեցիկ։ Ո՞վ գիտե, գուցե վաղը, մյուս օրը մի երիտասարդի ես հանդիպում, որի առաջարկությանը ստիպված ես լինելու նամակով պատասխանել։ Թեև հիմա միմյանցից հեռու ապրող հարազատներն անգամ նամակով չեն կապվում։ Հեռախոսը վերջ տվեց նամակագրությանը։ Ափսո՞ս։ Այնուամենայնիվ, դու ոչ մի բանով չպիտի հիասթափեցնես այդ երիտասարդին, և նա էլ արժանի պետք է լինի քո զգացումներին։

Մարիամն արդեն գրում էր շեղումներով, նույնիսկ տեղուտեղ պատկերավոր էպիտետներ, համեմատություններ էր օգտագործում։ Գրում էր՝ ամենատարբեր հարցեր պարզաբանելով։ Նա չէր գրում միայն առինքնող արտաքինով այն երիտասարդի մասին, որ հենց սկզբից, աշխատավայրում գրավել էր իր ուշադրությունը։ Սասուն էր անունն այն բուժակի, որ Մարիամի հետ նույն վիրահատարանում էր աշխատում։ Երկու ամիս էր, ինչ այդ Սասունը Մարիամի վրայից հեշտությամբ չէր կարողանում պոկել իր հայացքը։ Մարիամն իր նամակներում հո չէ՞ր խոստովանելու, որ եթե վերջին շաբաթներին ինքը մի քիչ ավելի է ուշադիր սեփա-

կան հարդարանքի նկատմամբ,— Սասունն է մեղավոր։ Չէ՞ որ գեղեցիկը, հաճելին մենակ չի ընկալվում, այն հետաքրքիր ու պատճառաբանված է լինում, երբ ուրիշն էլ է նկատում։

Չնայած երկուսաթեք ոչ մի մտերմիկ բառ չէին փոխանակիլ, երկուսով էլ նկատում էին գործիքներին մոտեցող իրենց ձեռքերը, որ վիրահատության ժամանակ բժշկին հանելուց առաջ մի քանի ակնթարթ մոլորվում էին, դժվարությամբ էին հեռանում միմյանցից։

Անտարակույս, երիտասարդը Մարիամի հենց խուսափող հայացքում էր կարդացել իր տվայտանքներին տեղյակ լինելը։ Հավանորեն այդ աղջկան հայտնի էր, որ Սասունի կինը մահացել էր երկրորդ երեխային ծննդաբերելիս՝ անմայր թողնելով երկու տարեկան դստրիկին։ Սա հիմա չորս տարեկան էր, պահվում, խնամվում էր լիարժեք, քանի որ Սասունն իր վրա էր վերցրել նաև մոր պարտականությունները։ Ուրեմն, շատ էին բարեգութ ծնողները երկիր-մոլորակի վրա։

Մարիամը չէր ուզում այս նոր աշխարհին պատկանող իր պատկերացումները պղտորեն հաճախ հիշողության մեջ խլրտկվող դեպքերն ու իրադարձությունները։ Նա մտովի հաճախ էր խոսում Սասունի հետ, այդ պատճառով էլ չէր նայում նրան, վախենալով, թե երիտասարդն իր ներքին զրույցի հետքերը կարող է նշմարել իր երեսին։ Մարիամը շատ ծանոթ, անձնական ասում էր Սասունին. քեզ համար կյանքի ընկեր ընտրելը շատ դժվար է, քանի որ երեխա կա մեջտեղը, դու էլ խոկական հայր ես ու չես ուզում խաթարել անմեղ, ոչինչ չհասկացող, կյանքի բարդություններին անտեղյակ երեխայի հոգին։ Իսկ դու կարծում ես ինձ համար հե՞շտ է հավատալ մարդկանց, հավատալ սիրո խոսքերի... Սասուն, ես գիտեմ, որ դու երեխայիդ մայր ես փնտրում, ոչ թե խորթ, այլ հարազատ մայր, որի համար ոչ մի նշանակություն չպիտի ունենա, թե ումից է ծնվել նա։ Երբ այդպես թափանցող, խուզարկու հայացքով երբեմն ինձ ես նայում, ես հասկանում եմ, որ դու հենց այդ մասին ես մտածում։ Մի՞թե քո վեցերորդ զգայարանը քեզ չի հուշում, որ այդ հարազատ մայրը միայն ե՛ս կարող եմ լինել։ Այո՛, այո՛, ես, որ քսան տարի ծնողի ոչ մի գուրգուրանք չեմ տեսել ու մինչև մրու-

ը ապրել եմ դրա պակասը... Չէ՞, Սասուն, երևի ծնողների առկայությամբ էլի որքեր կան...

Ու թեև այս բոլորի մասին որևէ տեղ չէր գրում Մարիամը ու բարձրաձայն ոչ մի բառ չէր արտաբերել դրա շուրջը, միևնույն է, առավոտները Աղրինեն այնպիսի հայացքով էր նայում նրան, որը եթե ձայնի վերածեին, ուրախաձայն մի աղաղակ պիտի դառնար. ես զգում եմ, որ քո մեջ մի բան է կատարվում, Մարիամ, լավ բան, գեղեցիկ բան, որը մինչև հիմա անհայտ է եղել քո հոգուն։

— Բոլոր դեպքերում զգույշ եղիր, աղջիկս,— սա արդեն գործի արանքում, ի միջի այլոց թվացող տոնով, մի անգամ ասաց Աղրինեն։ Նա ոչ մի անուն չտվեց, բայց ասաց.— Ինչպես տեսար, կյանքը շատ դաժան է ու չի ներում, երբ սայթաքում են, երբ մատների արանքով են նայում իրեն, ինչպես հարկն է՝ ծանր ու թեթև չեն անում երևույթները...

Ոչինչ չպատասխանելով՝ Մարիամը երկար ժամանակ խորհում էր ասվածի շուրջը, մտորում էր իր գնալիք ճանապարհի մասին։

— Մարիա՛մ,— մի օր էլ հիվանդանոցից դուրս գալուց առաջ բուժքրոջը դիմեց Սասունը.— Եթե խնդրեմ, դեղատան բանալին չե՞ս վերցնի։

Մարիամը սառը հայացքով նայեց երիտասարդին. մի՞թե այդ սովորական խոսքն այդպես շփոթված են արտաբերում։ Ճիշտ է, այդ օրը Սասունն էլ իր հերթին էր խուսափում Մարիամից ու գուցե դրա՞ համար էր շիկնել այժմ, ու շիկնանքն էլ ալիք էր տալիս նրա թուխ դեմքին...

— Կարող է վաղը մի քիչ ուշանամ... Երեխաս վատ է զգում... Մանկապարտեզից զանգահարեցին... Ուզում եմ հիմա գնալ...

— Ի՞նչ է պատահել,— այս հարցն արդեն Մարիամը չէր կարող անհանգստացած չտալ։

«Ուզում ես շփոթվիր, ուզում ես առավոտյան ուշ եկ, ինձ երեխայի վիճակն է հետաքրքրում»,— սա արդեն մտքում ասաց Մարիամը։

— Առավոտյան հազում էր։ Այդպես էլ տարա, ի՞նչ անեի...

Սասունի ձախ այտի մկանունքը մանրիկ ցնցվում էր։

Մարիամն առաջին անգամ էր այդ բանը նկատում։ Այսինքն, ո՞րը էր լիաշք նայել նրան, որ որևէ բան նկատեր։

Մարիամն ակամա վերցրեց բանալին ու անզգայաբար Սասունի հետ շարժվեց դեպի շքամուտքը։

Այստեղ պահակը խոժոռ ակնարկով նայում էր հիվանդասենյակի եկածներին ու շարունակում էր իր ավարը։ Քառորդ ժամ էր մնացել մինչև օրինական ձևով ներս մտնելը, ոսկայն օգտվելով հավաքվածների անհամբերությունից՝ առանց քաշվելու ասում էր պահակը.

— Շնորհքներդ ցույց տվեք ու գնացեք։

Եվ մարդիկ ցույց էին տալիս ռուբլիանոցները, որոնք բամբիլոնի լեզվի արագությամբ կլանում էր նա ու տանում դրպանի խորխորատը։

— Պրոֆեսորից շատ փող է ձեռք բերում,— ցավով դիտեց Սասունը։— Զզվելի է։ Ով բուժի և ով կուտակի։ Ամեն անգամ դրա անտաշ ու անկուշտ կերպարանքին նայելիս ուզում եմ ապտակել։

Պահակն իր սպառնալից պահելակերպով տիրացուական դերակատարումով շարունակում էր խաչմամբույր հավաքել։

— Այս մեր այլանգակված բարքերի վերջը ո՞ր սերնդին կհաջողվի տեսնել, չեմ պատկերացնում,— արդեն շենքից դուրս իր վրդովմունքը չէր կարողանում ի չիք դարձնել Սասունը։

Ըստ երևույթին նա նաև գոհ էր, որ առաջին բոպեների համար զրույցի նյութ էր գտել։ Սասունը չէր պատկերացնում, որ մի շատ սովորական աղջկա հետ խոսելիս ներքուստ այդպես կորցնելու էր իրեն։

— Իմ կարծիքով, դու վաղուց պիտի սովորած լիներիր այդ մարդու պահելակերպին,— արձագանքեց Մարիամը։ Նա էլ էր գոհ, որ ուրիշ թեմայով չէր գնում իրենց խոսակցությունը, ինչքան էլ տհաճ էր այդ նյութը։— Մի՞թե ամեն քայլափոխի չես հանդիպում դրա նման մուրացկանների։ Մեր սանիտարների մեջ քի՞չ կան։ Այնքան թալանչիներ ունենք, որոնց սկիզբն ու վերջը չի երևում։ Բժիշկներ էլ կան։ Հիշո՞ւմ ես այն կնոջը, որ ասրդանցից մեռած երեխային քանի օր չէին հեռացնում, մինչև տիրոջը պլխի գցեցին, որ հարկավոր էր դրա համար վճարել...

Չէ, բոլորովին հարմար հարցեր չէին շոշափում առաջին զրույցի համար։

— Գուցե երեխայիդ կուրծքն ու թիկունքը յուղով մի լավ շփե՞ս։

Իսկապես, ի՞նչ կարիք կար փչացնելու իրենց անդրանիկ զրույցը։

— Արել եմ։ Կակաոյի յուղ էլ եմ խմեցրել կաթի հետ։ Մի խոսքով, երևի հարկավոր է մի երկու օր տան պայմաններում պահել, մանավանդ, որ մինչև ուրբաթ վիրահատություն չկա։

— Իսկ տատիկ չունի՞։

— Ո՞վ։

— Երեխան։

— Մնողները Թալինի հեռավոր գյուղերից մեկում են ապրում։ Մայրս վատառողջ է։ Շատ խնդրեց երեխային իրենց մոտ թողնեմ, չհամաձայնեցի։

— Հիմա գնում ես երեխային վերցնելո՞ւ։

— Այո։

— Ուշադիր հայր ես։

— Բնական է։ Բայց միևնույն է, մոր տեղը չեմ կարող բռնել։ Մերոնք կամ կնոջս հարազատները երբեմն հասնում են, բայց մայրն ուրիշ է,— Սասունը նույնիսկ փորձեց ծիծաղել՝ ինչ-որ հիշելով։— Վերջերս, ամեն առավոտ ու քնելուց առաջ երեխաս հարցնում է, թե ինչո՞ւ ինքը մայր չունի։ Իրենց խմբում բոլորն ունեն, իսկ ինքը չունի... «Բա մեղք չե՞մ»,— մեծի պես հանդիմանեց ինձ։

— Հավանորեն ամենադժվար հարցի պատասխանը դա է...

Մարիամը երեսը շրջեց, քանի որ վերջին բառն արտասանեց մի կերպ։

— Ես էլ եմ կարծում,— իր համար շարունակեց Սասունը։— Ես էլ այս քանի օրը ասում եմ, որ շուտով գնալու եմ հեռու մի քաղաք, որտեղ շատ մայրիկներ կան։ «Շատ»,— ուրախացած վեր-վեր թռավ երեխան։ «Այո, շատ։ Իսկ դու քանի՞ մամա ես ուզում բերեմ»։ Երեխան մի բոպե լռեցավ, ապա ցուցամատը վեր տնկեց՝ մի՛ հատ, հայրիկ ջան, մի՛ հատ։ Այսինքն՝ ուզածս ընդամենը մի հատ է, հո շատ չե՞մ

ուզում, որ դժվար լինի ճարելը։ Դե՛, կարելի՞ է հանգիստ պատասխանել երեխայի արդարացի ու անմեղ այս պահանջին։

Մարիամը Սասունին նայեց շատ ուշ, երբ աչքերում արագորեն կուտակված լճակները ետ էին գնացել արդեն։

— Ես ճի՞շտ եմ պատասխանել երեխային, Մարիամ,— հիմա էլ հայրն էր իր անմեղ հարցով նեղը գցել Մարիամին։— Եթե սխալ եմ, սովորեցրու, թե ինչպես վարվեմ։

Մարիամը գլխով արեց։ Ամեն հարցի հո խոսքով չե՞ն պատասխանում։ Նրա հայացքի մեջ շրջապատի կանաչն էր։ Եթե Սասունը ցանկանա, մի այնպիսի հարց էլ կտա, որ Մարիամը միանգամից երեխա կդառնա, դասը լավ չսովորած երեխա։

— Ի՞նչ է անունը։

Ի վերջո մի բան պիտի խոսեի՞ն։ Իհարկե, անունն այնքան էլ կարևոր չէ, կարևորը երեխան է։

— Վարսենիկ։ Մարս անունն եմ դրել...

— Գեղեցիկ անուն է, բայց երեխային չեմ պատկերացնում այդ անունով։

— Ես Նանար եմ ասում,— արդարացավ Սասունը։

— Նանարը լավ է։ Դե, Սասուն, կներես, շտապում եմ,— ու առանց խոսակցի երեսին իսկ նայելու պոկվեց տեղից, ասես մեկին պիտի փրկեր մեքենայի տակ ընկնելուց...

Իսկապես, մի ավտոմեքենա կտրուկ արգելակեց ու անախորժ ճռինչով լցրեց փողոցը։ Երանի՞ Սասունը չնկատեր այդ վիճակը։ Միևնույն է, Մարիամը շարունակում էր վազել, քանի որ միտքը հետապնդում էր իրեն վազքով։

Ահա և իրենց մուտքը։ Սանդուղքները ելավ մի շնչով, դուռը բացեց իր բանալիով ու, թեև տանը ոչ ոք չկար, փակվեց ննջարանում։

Ո՞ւմ համար էր այդպես երկար մորմոքվում, երեխայի՞, Սասունի՞, թե՞ իր... Հիմա նրանք այնքան նման էին իրար։ Եվ շա՞տ կային Նանարի նման երեխաներ... Չէ՛, Մարիամը ճիշտ չէր ընտրել մասնագիտությունը։ Նա պետք է մանկավարժական ինստիտուտի նախադպրոցականն ավարտեր, գործի մտներ որևէ մանկատուն ու փայփայեր, խնամեր ան-

մայր մնացած բոլոր երեխաներին։ Գուրգուրեր ու հանգըստանար։

Ամբողջ գիշեր Մարիամը նրանց հետ էր։ Հավատա՞ր, որ բացվելու էր իր կյանքի փոքր գարունը։ Իսկ ինքն իսկապե՞ս մի ժամանակ հրազում էր մեռնել։ Ե՞րբ էր դա, երե՞ք, թե՞ երեք հարյուր տարի առաջ։

Ի՜նչ անհեթեթություն. ախր մահը, որքան էլ անհրաժեշտ ու փրկարար ենթադրվի, աշխարհից մարդ է կողոպտում։

Բ

Հաջորդ օրը հիվանդանոցի ելքի մոտ Սասունը բռնեց Մարիամի թևը.

— Միասին դուրս գանք... Բան ունեմ ասելու...

Իսկ Մարիամը մտածում էր, թե իրենք այլևս չէին խոսելու, քանի որ աշխատանքային ամբողջ օրվա ընթացքում Սասունը ոչնչով ցույց չէր տալիս, թե նախորդ օրը ինչ-որ բան էր կատարվել իրենց միջև... Մարիամը գիտեր, որ երեխան լավ էր, որ հայրը եկել էր աշխատանքի։

— Ուզում եմ միասին գնանք մանկապարտեզ... Երեխային խոստացել եմ...

— Միասի՞ն։

— Առավոտյան եմ խոստացել։

Մարիամը չուզեց իմանալ, թե ինչ էր խոստացել հայրը, քանի որ իմանալուց հետո ավելի էր ծանրանալու իր վիճակը. կամ պիտի թողներ ու հենց հիմա հեռանար՝ այլևս երբեք Սասունին չհանդիպելու պայմանով, կամ բացեբաց պիտի ցույց տար, թե ինքը համաձայն էր։

Ամեն դեպքում հուզիչ անհանգստություն էր ապրում Մարիամը։ Ախր հիվանդանոցում բոլորն էին Սասունին հավանում։ Նույնիսկ ջահել բժշկուհի պրակտիկանտներից երկուսը շատ էին պտտվում նրա շուրջը. սուրճ խմելու էին հրավիրում, ծիծաղում էին հետը, փորձում էին ժամադրել։ Իսկ բաժնի վարիչ Մարգարիտ Տիգրանովնան հարազատի նման էր վերաբերվում նրան, միշտ երեխայից էր հարցնում, ցնդառաջում էր փոքրիկի հետ կապված հարցերում։ Մարիամը քանի

անգամ է նկատել, թե ինչպես բժշկուհին թղթի մեջ ինչ-որ թիմածք փաթաթած՝ ստիպելով ավել է Սասունին.

— Քեզ համար չի, վերցրու, Նանարի համար եմ բերել։

Բավականին հեռացել էին հիվանդանոցից։ Մի բեռնատար այնպես սուրաց նրանց կողքից, որ խճուղու եղած փոշին մայթ շպրտեց։

Մայրկավաճառին հասնելով՝ Սասունը մի քանի հատ կակաչ գնեց ու մեկնեց Մարիամին.

— Խնդրե՛մ։ Ներիր, ուշացումով իմացա, որ երկու օր առաջ ծննդյանդ օրն է եղել։ Շնորհավորում եմ։

Կարո՞ղ է Մարգարիտ Տիգրանովնան էր ասել, այլապես սա որտեղի՞ց պիտի իմանար... Իսկ ինչո՞ւ է ասել... Որևէ բա՞ն է կռահել... Չէ, աշխարհն իրոք նաև գեղեցիկ է։ Իսկ մի՞շտ է գեղեցիկ եղել։ Ո՞վ գիտե, թերևս աշխարհը միշտ էլ նույնն է եղել, մարդիկ են այն գեղեցիկ կամ խեղված ընկալել...

— Ինչպես երևում է՝ այսօրը մեզ համար ճակատագրական նշանակություն ունի։ Ճիշտ եմ ասում, այդպես զարմացած մի նայիր... Ամբողջ գիշեր եմ մտածել այդ մասին...

Իսկ ի՞նչ է մտածել Սասունը։

Երբ մտան մանկապարտեզի միջանցք, այնպիսի աղմկոտ խառնաշփոթ էր տիրում, ինչպես մայրամուտին մայրերի վրա թողնված դառները կարող են անել։ Մայրե՞ր, մայրե՞ր, որոնք հակված՝ գրկելով, համբուրելով հագցնում էին երեխաներին ու դաստիարակչուհուն հրաժեշտ տալով՝ դուրս ելնում։ Այդ անհանգիստ երեխաներից դուրս, պատի տակ մի աղջնակ էր կանգնած՝ սևաչվի, նիհարուկ, կլանող հայացքը երեխաներին գուրգուրող մայրերին... «Նա էլ,— հաստատ որոշեց Մարիամը։

— Հայրի՛կ,— բացականչեց հենց այդ երեխան ու վազելով՝ ընկավ Սասունի գիրկը։

Ամեն օր ինչպե՞ս էր դիմացել այդ երեխան նույն հոգեհան տեսարանին։

Մինչ Սասունը կհամբուրեր Նանարին, սա պլշած աչիկներով, որոնց մեջ ուզում էր ժպիտ ծնվել, նայեց Մարիամին։ Հետո գրկելով հոր գլուխը՝ ինչ-որ բան քշփշաց նրա ականջին։ Սասունը գլխով արեց, բայց ձեռքի նշանով հասկացրեց

առայժմ համբերել։ Դուրս գալիս Մարիամն իր ետևից տա-
ղավ դաստիարակչուհու հետախուզող հայացքը։

— Դե՛, ծանոթացեք։ Նանար ջան, սա էլ քո մամա՝...

Դժվար է ասել, թե երկուսից՝ Նանարից և Մարիամից որ
մեկը ցնցումով ընդունեց այդ հայտարարությունը։

— Իմ մամա՞ն,— զրնգուն հարցրեց երեխան։— Ինքնա-
թիռո՞վ ես բերել...

Առանց իր հարցի պատասխանն առնելու, դողահար երե-
խան նետվեց Մարիամի գիրկը։ Սա կռացավ անմիջապես,
որպեսզի լավ գրկեն իրար։ Մարիամը հազիվ թե շուտ ուշ-
քի գար, քանի որ երեխան կարոտով համբուրում էր նրա
երեսը, ձեռքերը, հագուստը...

— Աշխատանքից հետո՞ ես գնացել բերել, հայրիկ ջան,—
ուզում էր հավատացնել փոքրիկը։— Երեկ ա՞յս մամայի
մասին էիր պատմում, այո՞... Ես շուտ ճանաչեցի, չէ՞...

Մարիամն ուժ էր հավաքում սթափվելու. այս ի՞նչ կա-
տարվեց, ինչպե՞ս է դուրս գալու այս անպատկերացնելի
դրությունից։

Թե նա ինչ էր ուզում ասել, ինչպես էր պատասխանում
մորը հազիվ գտած փոքրիկի խելակորույս գգվանքներին,
համբույրին,— դժվար թե սթափվելուց հետո էլ կարողանար
մտաբերել։ Հիմա երեխան էր զեկավարում Մարիամին։

Վերջապես մի քիչ խաղաղվելուց հետո Նանարը նրա ափի
մեջ խրեց իր փոքրիկ բռունցքը ու քայլեց նրա հետ։

— Մամա, ինչո՞ւ շուտ չէիր գալիս,— սկսեցին Մարիա-
մին նայելով՝ այս էր հարցնում երեխան։— Ինքնաթիռ չկա՞ր։

Լավ է, զարմանալ չսկսեց պատասխանի։ Պահանջեց, որ
Մարիամն էլի կոանա, իսկ ինքը թաթիկները խրեց նրա մա-
զերի մեջ, հետո շոյեց ձեռքերը, հագուստը։ Նա ուզում էր
նեբ մենակնց հավատանալ, որ տեսածն ու լսածն իրական
էին։

— Դե ասա՛, ինչո՞ւ այսքան ուշացար, ասա՛, ասա՛...

Երեխան չէր ուզում լաց լինել, չնայած մայրն այդքան
ուշացել էր։

— Մենակ վախենում էի ինքնաթիռով թռչելուց,— մի
կերպ պատասխանեց Մարիամը՝ գրկելով երեխային։

Այ, այդպես, Մարիամ, նորից գրկիր, զգա փոքրիկի բուր-

մունքը, գուրգուրանքը, որպեսզի սովորես, թե չէ երեխան
անմիջապես կարող է զգալ քո կեղծ վիճակը։

Զգուշորեն իրենից մայր էր պատրաստում Մարիամը։

Բայց այս ի՞նչ արեց Սասունը։ Դրա՞ համար է հիմա
ավելի խուսափում Մարիամից։ Հավանորեն հասկանում է,
որ ամենածանր հոգեվիճակը նրանն է։ Երիտասարդը պար-
զապես իրեն փաստի առջև կանգնեցրեց, որից անհնար էր
հա կանգնել։

Ահա անցան Ադրինեենց տունը, իսկ երեխայի բռունցքն
ավելի հիմնավոր էր տեղավորվում Մարիամի բռան մեջ...
Իսկ ինչպե՞ս էր լինելու իրենց բաժանումը, ի՞նչ է ասելու
երեխային։ Այդ պատասխանի մասին Սասունը մտածե՞լ է...

— Սասուն, փրկի՛ր ինձ,— մի կերպ շշնջաց Մարիամը։—
Չեմ հասկանում, դու մտածվա՞ծ արեցիր այս բոլորը... Դու
չե՞ս պատկերացրել հետևանքները։ Երեխան ցնցում կապրի...

Մարիամն ուղղակի չէր կարողանում լիաթոք շնչել։ Ի
լրումն անցյալ բոլոր անակնկալների՝ այս էլ պատահեց։ Բայց
եթե նախորդների մեջ միայն ինքն էր տառապողը, այս դեպ-
քում մեղքն ընկնում էր երկուսի վրա հավասարապես։

— Ների՛ր, Մարիամ, ես մեղավոր եմ երկուսիդ առաջ,—
ամոթահար գլուխն էր իջեցրել Սասունը, որ տեղ չէր գտնում
իրեն։— Հասկացիր ինձ վերջապես. առավոտ, երեկո նույն
հարցը, նույն պահանջը, խելագարվում եմ... Ուրիշ հեք չու-
նեի։ Ամեն օր մտքում հանում եմ իմ ու ձեր տան միջև
ընկած տարածությունն ու դու այնքա՞ն էիր մոտենում, որ
համոզվում էի, որ այսպիսի պարագայում չես լքի ինձ...

Սասունի վիճակն էլ բանի նման չէր։ Թաշկինակը հա-
հաբ ճակատին էր տանում, այրվող երեսն էր մաքրում ու
հանցավոր տղեկի նման չգիտեր անելիքը։

— Ես տեսնում եմ, որ սխալ բան եմ արել, որ դու հի-
մա կարող ես թողնել ու հեռանալ, և ես ոչ մի իրավունք չու-
նեմ քեզ պահելու... Բայց ամեն ինչ հո իրավո՞ւնքը չի որո-
շում... Ես մտածում էի նաև, որ միայն դո՛ւ, դո՛ւ կհասկա-
նաս ինձ...

Մարիամը կարծես թե զգաստանում էր. չէ՞ որ ինքն էլ էր
այդպես մտածել։ Հենց նախորդ գիշեր մի՞թե մտովի չէր

հակվել Նանարի մահճակալին ու մի չեղած հեքիաթ չէ՞ր հորինել, որպեսզի նա աչքերը փակի...

Նրանց երկխոսությունն ընթանում էր խարխափելով, զգուշորեն՝ միայն ավարտվելիս մի կերպ ձև ու իմաստ առնելով։ Սասունի ծանր ու դանդաղ քայլքի մեջ կամաց-կամաց վրճռականություն էր մտնում։

Երեխան շարունակում էր ինչ-որ խոսել, քայլում էր, թռչկոտում, հարցեր էր տալիս, որոնց պատասխանների ուշացման համար զայրանում էր։ Երկու մեծերն ամեն ինչ թողել էին նրա վրա։ Գուցե միամտորեն, բնության թելադրանքով նա մի ելք գտներ այս հայրիկի ու նորահայտ մայրիկի համար...

— Ե՛ս էլ մամա ունեմ, ե՛ս էլ մամա ունեմ, ե՛ս էլ մամա ունեմ,— բարձրաձայն կանչում էր երեխան ամեն ցատկի հետ— Ե՛ս էլ եմ մամա ստացել...

Ընկալելով երեխայի խոսքը (հավանորեն մանկապարտեզային խոսք է «ստացելը») Մարիամը նորից զինաթափվեց։ Դե, իհարկե, այս երեխան իրեն հաստատապես մայր է ընդունել... Առավոտյան ողջ մանկապարտեզին տեղյակ կպահի այս մասին։

Այսպիսի անելանելիություն էլ է լինում։

— Մամա, տես ինչ լավ հոտ ունի,— նորից Մարիամին կռացնելով՝ երեխան կակաչները մոտեցրեց նրա քթին։

— Շատ անուշ բուրմունք ունի, բալի՛կս...

Այո՝ բալիկս, հենց այդպես։ Տեսնո՞ւմ ես, երեխան ամեն խոսքի հետ ինչպես է շեշտում «մամա» բառը։ Նա կրկնում է, որպեսզի սովորի, իրենը դարձնի բառը կրողին, որպեսզի հաշտվի դրան։ Դու էլ պիտի սովորես։ Դե ասա՛, դիմիր երեխային.

— Նանար ջան, բալի՛կս, զգույշ, վայր կընկնես...

Սասունը շնորհակալությամբ սեղմեց Մարիամի ձեռքը։ Սկսվել էր համբ երկխոսության շրջանը, որն ամենախոս էր ամեն տեսակ զրույցների համեմատությամբ։ Կյանքը բաղմապատասխան խնդիր էր դրել անփորձ ծնողների առաջ և ճիշտ լուծում էր պահանջում։

Նանարը վազեց ցայտաղբյուրի կողմը։ Մարիամը շատ-

պիտ նրա հետևից, գրկեց, որպեսզի երեխայի բերանը հասնի ջրին։

— Շատ չխմես, բալի՛կ ջան, թե չէ կոկորդդ կցավի։ Չէ՞ որ հազում ես,— արագ-արագ ասաց նա, քանի դեռ Սասունը չէր մոտեցել։

— Դու գիտե՞ր, որ հազում եմ, մամա ջան։

— Իհարկե, բալիկս։ Ինչքան էլ մայրիկը հեռու լինի, կըզգա իր բալիկի վիճակը։

Հիմա արդեն թող Սասունը իր մասին մտածի. նրանք երկուսով կարծես ազատվում էին կեղծ վիճակից։

— Կգնանք մեզ մոտ՝ տուն ու մի բան կմտածենք,— վախենալով, թե Մարիամն ուր-որ է հրաժեշտ կտա իրենց ու կմեռնա, շշնջաց Սասունը...— Հիմա՞ր եմ, հիմա՞ր... Ի՞նչ եմ անելու, չգիտեմ... Չե՞մ պատկերացնում...

Տեսա՞ր, Մարիամ, ինչպես փոխվեց վիճակը։ Կարո՞ղ ես՝ ում գտիր մեջդ այդ խեղճացած տղամարդուն որևէ խոսքով մխիթարելու համար։

Նանարն իր փոքրիկ բռունցքի ուժով Մարիամին իր հետևից քարշ տվեց տուն։

Մի սենյականոց բնակարան էր։ Ժպիտի տակ ծվարած դարմացումով Մարիամը բոլորտիքն էր նայում։ Արևահայաց պատուհանը ոչ մեծ ննջարանի պարտավորություն էր վերցրել իր վրա։ Թվում էր, թե տանտիրուհին գուցե առաջ մաքրել, կարգի էր բերել տունը, փոխել էր սրբիչները, հավանորեն նաև անկողնու սպիտակեղենը, օգանցքն էր բաց թողել, որպեսզի իր հետ դժբախտություն պատահելու դեպքում նույնիսկ ամոթով չմնա հավաքված մերձավորների, բարեկամների մոտ։

Մարիամին ու Սասունին մնում էր ինքնօգնությամբ մի ելք գտնել։

— Մամա ջան, դու հո չե՞ս գնալու։ Ինչո՞ւ չես նստում։ Տե՛ս, մատս չանկովել է,— ու երեխան սկսեց թնկթնկալ վաղուց վնասած մատի համար։

Նման դեպքերում ի՞նչ են անում իսկական մայրերը։

Նանարը ելքը գտավ ու մատը մատնացուցեց Մարիամի շրթունքներին։

Ա՛խ, հա՛... Նա համբուրեց մատիկը։ Կեղծ լացին վերջ տվեց բնական ուրախությունը։

— Հայրի՛կ, մաման էլի գնալո՞ւ է,— զարմացա՞վ, թե՞ վախեցավ երեխան։

— Ո՛չ, նա ուղղակի նոր է եկել մեզ մոտ ու չգիտի... Նա ոչ մի բանի տեղ չգիտի սեղան պատրաստելու համար... Դու կարո՞ղ ես ցույց տալ։

— Ես մամայիս օգնականն եմ, ես մամայիս օգնականն եմ,— նորից գտած ուրախությանն անցավ Նանարը՝ հանած կոշիկները փոխարինելով հողաթափերի։

— Մարիամ, ինձ թվում է, թե տունս լցվեց,— հարմար վայրկյան գտնելով մի կերպ ասաց Սասունը։

Պարզ զգացվում էր, որ նա շատ ծանր էր տարել ներամփոփ մենակությունը։ Եթե հնար լիներ, Մարիամը կպատառոտեր այս սգավոր մենակության կուրծքը։

— Դու ամենասիրուն մաման ես, հայրիկս է ասել... Առավոտյան դու կոտանես ինձ մանկապարտեզ, որ մեր երեխաները տեսնեն քեզ։ Ընկեր Գոհարն էլ կտեսնի, չէ՞, մամ ջան։

— Նանար, բալիկս, ես այնքան շտապ եկա, որ հագուստներս մոռացա։ Քեզ կքնեցնեմ ու կգնամ ճամպրուկս բերելու։

— Չէ՛, չէ՛, չէ՛, մի՛ գնա,— կարծես հոր կողմից էլ էր պահանջում երեխան։ Նրա աչքերը վայրկենապես արցունքոտվեցին— Մի գնա, ես գիտեմ, որ գնաս, էլ չես գա...

— Կգնամ, մի քանի օրից հետո կգամ,— երեխային փաղաքշելով աշխատում էր համոզել Մարիամը։

— Թող հայրի՛կը գնա բերի։

— Հայրիկն իմ հագուստների տեղը չգիտի։

— Որ քնեմ, վեր կենամ, կգա՞ս,— թշիկների վրայի արցունքները ափով մաքրելով՝ թախանձում էր երեխան։

— Ոչ։ Մի քանի անգամ պիտի քնես ու վեր կենաս... Չէ՞ որ հեռու տեղ եմ դնալու։

— Չէ՛, չե՛մ ուզում։

— Նանար ջան, հենց մաման ուշանա, միասին կգնանք ու կբերենք,— երեխային էր ուզում համոզացնել Սասունը։ Բուժակը նշտարակը դրել էր ճիշտ վերքի վրայ։

— Երեխային տված խոստումը պետք է կատարել,— փոքրիկին քնեցնելուց հետո ասաց Սասունը շփոթված։

Ինչ էլ լիներ, միանգամայն անխարդախ էր նրա նպատակը։ Եվ Մարիամը չէր կարող չենթարկվել նրան։

— Ամեն ինչ լավ ստացվեց, Մարիամ ջան,— աղջկա ձեռքը բռնելով՝ ասաց Սասունը։— Չես պատկերացնի, թե ինչքան եմ տանջվել այն մտքից, թե ինչպես էի առաջարկություն անելու քեզ... Այդ շափազանց լուրջ ու պատասխանատու արարքն իր վրա վերցրեց Նանարս։ Գուցե դա՞ էր ճիշտը։ Մի քանի օրից կգամ տիկին Աղրինեի մոտ։ Դեմ չե՞ս։ Դե լավ, այդպես կշտամբող հայացքով մի նայիր, առանց այն էլ ոնց որ օդի մեջ լինեմ...

— Թող գնամ, մի քիչ խելքս գլուխս հավաքեմ... Դուրս մի արի, երեխան հանկարծ կարթնանա, կվախենա...

Փողոցում Մարիամը քայլում էր հարբածի նման։ Հիշեց Աղրինեի վերջին զրույցներից մեկի ժամանակ ասված այն միտքը, թե աշխարհը, բնությունը, ամեն ինչ մարդու մեջ է և նրա արտացոլանքն ենք ընկալում մենք։

Տուն հասնելով՝ Մարիամը գիտեր, որ անփակ աչքերի դիշեր էր սպասում իրեն, անատավոտ ու աներազ մի գիշեր։

9

Այդ առավոտ Մարիամն աշխատանքի էր գնում թեթևոտն, անսովոր բարձր տրամադրությամբ, որպիսին չէր ունեցել երբեք. շուտով բնակարան էր ստանալու։ Ուրախությունը, սակայն, գալիս էր մի քիչ ավելի խորքից։ Երեք օր առաջ իրենց բաժնի վարիչ Մարգարիտ Տիգրանովնայի հետ Մարիամի ձեռքը խնդրելու համար Աղրինեին էր այցելել Սասունը։ Ինչպես նկատել էր Մարիամը, բաժնի վարիչը նախօրոք ինչ-որ բան զգուշացրել էր ընկերուհուն, որ սա Մարիամին առաջարկեց միասին շուկա գնալ, սովորականից ավելի գնումներ կատարել։ Տուն դառնալով՝ գոգնոցը կապեց Աղրինեն ու գործի անցավ։ Բայց Մարիամը նրան ասել էր, որ միայն Սասունն էր գալու, այն էլ Աղրինեին ծանոթանալու համար։

Աննայի ոգևորությանը չափ չկար. խառնվել էր գործին

մորից առաջ ընկած՝ ձեռքն այս կամ այն մթերքին գցելով։

— Ավելի լավ է ես սալաթները սարքեմ,— առարկություն չվերցնող տոնով ասաց Աննան ու ամբողջ սեղանը գրավեց իրեն անհրաժեշտ բանջարեղենով։

Ադրինեն, սակայն, ըստ երևույթին մտածում էր շատ ավելին անել, քան հարկավոր էր չորս հոգու համար, երբ այն բացվելու էր ընդամենը ծանոթանալու նպատակով։ Մինչ Ադրինեի ձեռքերն իրենց գործը կանեին, սրանց տերը հպանցիկ հարցրեց.

— Ձերոնց չկանչե՞նք...

Մարիամի ձեռքը կանգ առավ օդում։

— Նրանք փաստորեն հրաժարվել են ինձանից... վաղուց են հրաժարվել...

— Այո, բայց... Գիտե՞ս, որ մի ամիս առաջ մայրդ եկավ ինչ-որ հարցով, ուզում էր օգնեի իրեն։ Ջանգահարեցի ում պետքն էր, գնաց։ Ջիմացա, որևէ բան ստացվե՞ց...

— Եթե չստացվեր, նորից կգար... Ասում եք՝ մեկ ամիս առա՞ջ։

— Մոտավորապես։ Ճիշտ ասած՝ չէի ուզում տեղյակ պահել քեզ։ Դժգոհում էր, որ չես գնում վարձով ապրելու, իրը նեղություն ես տալիս մեզ։ Ես էլ պատասխանեցի, որ մենք ուրիշ չենք և որ ինքս թույլ չեմ տալիս քեզ գնալ այստեղից։ Մանավանդ, ասացի, շտապով բնակարան ես ստանալու,— նկատելով Մարիամի անհանգստությունը՝ ավելացրեց։— Շատ ուրախացավ ու իսկույն էլ գնաց։

— Իսկ որևէ խնդիրքով ձեզ դիմելը նեղություն պատճառել չի՞ համարում։ Այդ ժամանակ դուք ուրիշ էի՞ք։ Ո՛չ, տիկին Ադրինե, իմ կարծիքով հարկ չկա, որ իմացվի այսօրվա հանդիպումը, թե չէ, ով գիտե, գուցե ամեն ինչ փչանա,— կտրականապես մերժեց Մարիամը։— Ասում եք՝ ուրախացա՞վ։ Զարմանալի է։

— Ասաց, որ եթե իրենք բնակարան ունենան քաղաքում, ավելի հաճախ կգան...

— Ունենա՞ն... Ահա թե ինչի է ուրախացել։

— Դե լա՛վ, սիրտդ մի կտրի,— Ադրինեն փորձեց շեղել դրույցի թեման՝ Մարիամին դուրս բերելու համար անախորժ տրամադրությունից։— Ի միջի այլոց, Մարգարիտ Տիգրանովնան շատ է հավանում Սասունին։ Ասում է՝ վերին աստիճանի առաքինի, ազնիվ զգացումների տեր, զարգացած երիտասարդ է, չնայած ընդամենն ուսումնարան է ավարտել։ Հա, երեսունմեկ տարեկան է, ուրեմն ինչ-որ չափով արդեն նստած տղամարդ է,— նորից Մարիամի միտքն էր ուզում շեղել Ադրինեն։— Նշանակում է քեզնից մոտ ութ տարի է մեծ։ Բայց չի նկատվում, գիտե՞ս։

— Դուք որտեղի՞ց եք իմանում այդ բոլորը,— զգաստացավ Մարիամը։— Ուրեմն նրան տեսել եք։

— Մի անգամ Մարգարիտ Տիգրանովնան է ցույց տվել։ Այնպես... պատահականորեն,— փոքրիկ շփոթմունքով վրա բերեց պրոֆեսորը։ Ինչպես այդ հմուտ հոգեբանը չէր կարողանում կարգին թաքցնել հոգում եղածը։

— Նշանակում է՝ Մարգարիտ Տիգրանովնա՞ն էլ գիտի, որ Սասունը...

— Մի թեթև նկատել է։ Իսկ երբ Սասունը խոստովանել է, Մարգարիտը շատ բարձր է գնահատել քեզ... Ես այս բոլորն ասացի, որ դու չանհանգստանաս, որ իմանաս՝ Մարգարիտը իմ վաղեմի ընկերուհին է։ Սասունն էլ բոլոր քարտերը բացել է նրա առաջ։ Եվ ճիշտ է արել։ Աղջիկ ուզելու համար սովորաբար տանում են իրենց ծնողներին, քույրերին, եղբայրներին։ Բան չունեմ ասելու, լավ են անում, քանի որ աղջիկը նրանց հետ է ապրելու, ամբողջ կյանքում շփվելու է նրանց հետ։ Սակայն, իմ կարծիքով, պակաս կարևոր չէ նաև աշխատանքային ընկերոջ կարծիքը։ Չէ՞ որ այդ նորափնան օրվա մեծ մասն աշխատավայրում է անցկացնում։ Երբեմն այդ ընկերներն ավելի որոշ են տեսնում նրա այս կամ այն առավելությունն ու թերությունը։ Ասենք, նրանք էլ չեն կարող հարյուր տոկոսով ճանաչել ու երաշխավորել։ մարդը կարող է տանը, տնտեսության մեջ, հարազատների միջավայրում մի կերպ դրսևորել իրեն, աշխատանքում՝ այլ կերպ։ Դժվար է, Մարիամ, շատ դժվար այսօր մարդ ճանաչելը, հիմա, երբ նրա հոգին հազարածալ է, ու արտաքին աշխարհն էլ նոր ծալեր է ավելացնում։ Կազմերը տուր։ Աղն էլ։ Բայց դու մի՛ ընկճվիր, Մարգարիտ Տիգրանովնան նրա տանն էլ է եղել մի անգամ՝ երեխայի հիվանդության կապակցությամբ։ Ասում է՝ իսկական ընտանիքի ազատարդ է,

լավ տնտեսվար, դաստիարակված, սքանչելի հայր է։ Գիտե՞ս, Մարիամ, գիտությունը կրթությամբ են ձեռք բերում, ծնվում են մարդկային արժանիքներով կամ արատներով։ Միծաղս գալիս է, երբ հիշում եմ մի շատ կարևոր հարց, որ տվեցի Մարգարիտ Տիգրանովնային. հո ժլատ չի՞, հաշվենկատ, որը, ի դեպ, տղամարդու համար ամենամերժելի կողմն եմ համարում։ «Երբե՞ք,— կտրուկ պատասխանեց նա։— Ամեն մարտի ութի ծաղիկներ է բերում մեր բաժնի բոլոր աղջիկներին ու կանանց։ Քանի անգամ է պատահել, որ ընդմիջմանը հյուրասիրել է մեզ։ Հիշում եմ,— ասում է,— թե ինչպես երեխայի տարեդարձի առթիվ մի գեղեցիկ սեղան բացեց իմ աշխատասենյակում։ Չէ՞,— ասում է,— ոչ մի ուժերում կողմ մինչև հիմա չենք նկատել նրա բնավորության մեջ։ Ահա թե ինչու վերջին երկու տարում չի շտապել, աշխատել է իրեն համապատասխան ընկերուհի գտնել։ Եվ նա,— ասում է,— գտել է ձեր Մարիամին։ Ուրեմն, այս հարցում, աղջիկս, բախտդ բերել է։

Այդ ինչքա՞ն բան էր հասցրել իմանալ Աղրինեն, ինչքան բան, որ հետագայում առնչվելու էր Մարիամի հետ։ Իսկ աղջիկն ինչպե՞ս է արգարացնելու նրա հույսերը, պատկերացումները, որ այնքան գեղեցիկ է հյուսել բժշկուհին իր շուրջը։ Ահա թե ինչու էր Աղրինեն ամենայն ուշադրությամբ կրթում ու դաստիարակում Մարիամին։ Ուրեմն, այդ բոլորն անում էր, որպեսզի Մարիամն արժանի՞ լինի Սասունի նման մի երիտասարդի։ Եթե այժմ աղջկան հարցնեն, թե ինչ է սովորել, հավատորին հպարտությամբ պետք է պատասխանի՝ «Պրոֆեսոր Աղրինեի դպրոցը։ Դեռ պիտի նրա համալսարանն էլ ավարտի՝ թեկուզ հեռակայելով։

Երեկոյան ժամը յոթին, երբ խոհանոցային գործերը վերջացրել էին, Աննայի անմիջական մասնակցությամբ հարստարվել էր Մարիամը, Բրաշուշանների ջանասիրությամբ հայանվեցին Մարգարիտ Տիգրանովնան և Սասունը։ Երկու ընկերուհիները ներքին խառնվածքով երկվորյակներ էին կարծես։ Տեսնես Մարիամի նման մի աղջիկ էլ չէ՞ր թակել նրա դուռը, հիմա էլ չէ՞ր սովորում Մարգարիտ Տիգրանովնայի համալսարանում...

Նոր կոստյումով և ընդհանրապես իր հարդարվածքով,

թայլ առավելապես նորահայտ արտահայտությամբ Սասունն ուրիշ էր դարձել։ Մարիամը նոր էր նկատում, որ նա բավականին բարձրահասակ էր իրենից։

Աղրինեն այնպես հարազատի ուրախությամբ դիմավորեց նրանց, ինչպես դիմավորում են ամենացանկալի հյուրին։ Բրաշուշանները հանդիսավոր դարձրին հյուրասենյակը։ Հակառակ Մարիամի սպասածի, երկու ընկերուհիներով, դեռ Սասունն էլ մյուս կողմից, համարյա լխոսեցին այդ փոքրիկ հավաքույթի բուն նպատակի մասին, ինչպես և նոր ընտանիքի պարտավորությունների մասին։ Այդ տրամադրությունը միայն դեղկում էր շարժանիթի արվարձաններում։ Անկարևոր մի շնչով Մարգարիտ Տիգրանովնան հիշեց, որ Սասունը երեխային մինչև հիմա ցույց չի տվել մոր լուսանկարը, որպեսզի հետագայում հակադրություն չտեսնի իր պատկերացրած և իրական մոր միջև։ Մի քիչ ավելի ուշ երեխան կիմանա պատմության ճշտությունը։ Իսկ վերջին ամիսներին Սասունը փոքրիկին նկարագրել է Մարիամի արտաքինը, բնավորության փափկությունը, հմայքը, նույնիսկ հագուստները։ Այնպես որ, առաջին իսկ հայացքից նանարը ճանաչել է իր մորը։

— Ես չեմ կարող մի դիպված էլ չհիշել, որ տանջում է ինձ մինչև հիմա,— շարունակեց Մարգարիտ Տիգրանովնան— խնդրում եմ, Սասուն, չմիջամտես։ Պիտի անպայման պատմեմ։ Դեռ երեք տարեկան չկար Նանարը, երբ սկսեց հորից մայր պահանջել։ Բնական է, շատ երեխաների մասուր-մանկապարտեզ են տանում-բերում մայրերը, իսկ իրեն՝ միայն հայրը։ Որ շատ է Սասունի հոգին ուտում, սա էլ մի մեծ բրդոտ արջուկ խաղալիք է բերում ու տալիս երեխային։ Վերցրու,— ասում է,— Նանար ջան, սա էլ քո մաման է։ Պատկերացրեք, երեխան վերցնում է արջուկը, նայում է ուշադիր, համբուրում է ու գրկին սեղմում, գնում է անկողնու մեջ ու փաթաթվելով կամացուկ ասում. «Դու իմ մաման ես, հա՞, արջուկ։ Իսկ ինչո՞ւ չէիր գալիս, ո՞ւր էիր կորել, հը՞, արջուկ մամա... Անտառ էիր գնացե՞լ... Եվ այսպես, շուրջ մեկ տարի երեխան զբաղվում է «արջուկ-մամայով»։ Իսկ երբ հեռուստացույցով կամ պատկերազարդ գրքերում արջ է տեսնում, իսկույն բացականչում է՝ արջուկ մամա՞ս... Մի

անգամ էլ այդ նույն բանն ասել է կենդանաբանական այգում արջ տեսնելիս։ Սասունը կամաց-կամաց, մեծ դժվարությամբ սկսում է հասկացնել, համոզել երեխային, որ նանարի մաման իսկական մարդ է, մյուս մամաների նման, որ նա միայն շատ հեռու է գտնվում, և որ հայրը շուտով կգնա ու կբերի նրան։

Բոլորի համար էլ հասկանալի էր այդ պատմությունը, առավել ևս՝ Մարիամի և շատ սրտամտիկ։

Մեկնելուց առաջ Մարգարիտ Տիգրանովնան ակնարկեց, որ նրանք կարող են իրենց մեկ սենյականոց բնակարանները հանձնել՝ փոխարենը երկու սենյականոց բնակարան ստանալ։ Որպես բնակարան բաշխող հանձնաժողովի նախագահ այդ հարցն ինքը շատ հեշտությամբ կարող է կարգավորել, քանի որ հիմնարկությունը ոչ թե կորցնում, այլ շահում է մի բնակարան։

Առաջարկությունն ընդունվեց միաձայն։

Ահա թե ինչու, առաջին անգամ լինելով, Մարիամն այդքան նազանքով, սեփական գեղեցկությունը վայելողի նման էր գնում աշխատանքի։ Չէ՞ որ վերջին օրերին Սասունի հետ էր գնում մանկապարտեզ երեխային վերցնելու։ Սա, ամեն Մարիամին տեսնելիս, այնպես էր ճչում՝ մամաս եկավ, որ դաստիարակչուհին այլևս կասկածանքով չէր նայում Մարիամին։ Նա նույնիսկ տեղեկացնում էր, թե օրվա ընթացքում երեխան ինչպես էր պահել իրեն, որ ճաշից էր հրաժարվել, կամ լա՞վ էր քնել ցերեկը։ Երեկոյան բաժանվելիս Մարիամն աշխատում էր բացատրել երեխային, որ շուտով իրենք նոր բնակարան են տեղափոխվելու՝ ու այլևս չեն բաժանվի միմյանցից։

Մարիամն ապշեց հիվանդանոցի շքամուտքի մոտ տեսնելով մորը։

— Բա՛րև, աղջիկ ջան, ո՞նց ես, ի՞նչ նորություն կա...

Որքան Մարիամը հիշում էր իրին, առաջին անգամ էր մայրն այդպես հետաքրքրված դիմում իրեն։

— Լավ եմ, ամեն ինչ լավ է։

— Շատ ուրախ եմ։ Լսել եմ, որ բնակարան ես ստանում։ Ձայն էլ չես հանում։ Վախենում ես չօգնե՞նք քեզ։ Նոր տունը հազար ու մի պակասություն է ունենում։ Ծղբայրներդ կգան, կարքեն պակաս-պռատը։ Ա՛յ բալա, միսը եղունգից չին պոկի...

Մարիամը զգաստացավ՝ չհավատալով ականջներին. մի՞թե իսկապես այդքան մտածում են իր մասին։

— Իսկ ինչո՞ւ ես այստեղ եկել։

— Բա որտե՞ղ գամ։ Էդ քո պաշտելի տիկին Ադրինեն ինչպես չընդունեց, որ մեկ էլ ոտս իրա դռնից ներս դնեմ։ Ի՞նչ է, իմ գալու մասին քեզ ոչինչ չի ասե՞լ։

— Ասել է։

— Ու դու էլ չես հետաքրքրվել, ինքն էլ չի ասել, որ բիրտությունը հաղիվ էր բացում հետս խոսելու համար։ Ես հո իրենից հաց ու ջուր չէի ուզում։ Ուզղակի մեկին պիտի զանգ տար, ասեց։

— Հետո՞, հաջողվե՞ց ինչ ուզում էիր,— զուսպ հարցրեց Մարիամը։

— Հա։ Ուզում էի քեռուդ տղին մի կարգին դասախոս տուգեր, տեսներ պատրաստ է...

— Ստուգե՞ց։

— Հա։ Իրը թե։ Մի երկու հարց տվեց ու միանգամից թե՝ դեռ պատրաստ չես, գնա ու մի լավ պարապի։ Հասկացանք միաբը՝ փող է հարկավոր։ Դե որ պատրաստ չի, թող հերն էլ փող դնի մեջտեղը։ Ամեն տարի հազարներ են ստանում այգուց, իրենք էլ ոչ կարգին ուտում են, ոչ էլ կարգին հագնվում։ Ամա՞ն, իրենց գործն է։ Հա, տիկին Ադրինեն ասեց, որ շուտով տուն ես ստանալու, ուրախացա։ Բայց ինձ էնպես երևաց, թե իր սրտովը չէր իմ ուրախությունը։— Էդ տունը,— ասում է,— Մարիամին են տալի, որ նախ սրա-նրա հույսին չմնա և հետո էլ կարող է ամուսնանում է... Էնպես էր խոսում, կարծես ինքն է հարաղատ ծնողը ու էդ տունն էլ ինքն է քեզ նվիրում։ Երևի մտածեց, թե էդ տունն ուզում ենք խլել քեզանից։ Էդպիսի բան մենք չենք էլ մտածում։ Բայց ես չէ՝ դու, հարմա՞ր է, որ ջահել, անմարդ կինն առանձին տարի էն էլ քաղաքում։ Հազար ու մի անուն կկպցնեն քեզ, առանց էն էլ եղածներից չենք կարողանում ազատվել,— կամաց-կամաց հիմնականին էր անցնում մայրը։— Եթե տիկին Ադրինեի համար դժվար է, վեր կաց գյուղ արի։ Շրջկենտրոնի հիվանդանոցում կտեղավորենք քեզ, աչքներիս առաջ կլի-

նեաւ էդ քո տունն էլ, որ ձեռքից չգնա, կտանք Կարոյին, թեկուզ ժամանակավոր, մենք էլ կազատվենք տուն կառուցելու հոգսից։ Ի՞նչ գործ ունես քաղաքի փողոցներում։ Ինչ եղել-եղել է, հո քեզնից չե՞նք հրաժարվում, մեր երեխան ես, հարբդ տունը քի՞չ է...

Մարիամին թվում էր, թե քրտինքի սառը կաթիլներ էին իջնում մեջքով։ Սիրան այնպես էր սեղմվում, որ ակամա ձեռքը կրծքին տարավ։ Ճակատը թաց էր արդեն։

— Հետո՞,— ճիգով իրեն զսպելով հարցրեց Մարիամը՝ թույլ տալով մորն ավելի առաջ գնալու։

— Հետո էլ ի՞նչ։ Կարոն որ չիմացա՞վ բնակարան ես ստանում, աշխարհով մեկ եղավ։ Գիտես՝ նրա խելքը գնում է քաղաքում ապրելու համար։ Կգա էստեղ, մի գործի կմբտնի, ընտանիք կկազմի, ամբողջ կյանքում շնորհակալ կլինի քեզանից, դու էլ, եթե ցանկանաս, իր մոտ կմնաս։ Մի խոսքով, երկու տուն կունենաս։ Ախր ի՞նչ գործ ունես էստեղ, ա՛յ բալա։ Կարոն ճիշտ է ասում՝ փոխանակ ինձ օգնելու, ուրիշներին ես ծառայություն անում... Եղբայրը է, նամուսը թույլ չի տալի...

Մայրն այնքան համոզված էր խոսում, որ բոլոր հնարավորությունները նրա համար իրականություն էին ենթադրվում, ձգտումները՝ փաստեր։ Մարիամը մտածում էր, թե փաստերի այդ հրատապ կուտակումն, ի վերջո, ինչ որոշակի եզրահանգման էր մղելու մորը։

— Չէ՛, եղբայրներդ շատ են մտածում իմ մասին։ Դե, իրենց աչքով են տեսնում, որ առավոտից կռացած, մեջքս կոտրելով էդ բախչեն եմ բեջարում, որ մի բան հասցնեմ շուկա։ Հազար կտոր հո չե՞մ լինի։ Գիտես, հարսն էլ օտարի աղջիկ է, հո չի՞մ ստիպի քաղհան անի։ Իսկ որ տեղափոխվես մեզ մոտ, համ քեզ ձեռնտու կլինի, համ՝ մեզ։ Վրեդ բամբասանք չի գա, տիրություն կանենք։ Օտար մարդիկ ինչքա՞ն լաբող են յալա տանել քեզ...

Միանգամայն պարզ էր եղրակացությունը։

— Իսկ այն ժամանակ, երբ բոլոր դռները փակել էիք իմ առաջ, ինչո՞ւ չէիք մտածում իմ ուր գնալու մասին։ Եթե տիկին Աղրինեն չլիներ, ես հիմա կենդանի կլինեի՞...

Մարիամն աշխատում էր ամեն գնով պահել հավասարակշռությունը, չգրավել աշխատանքի եկողների ուշադրությունը։

— Է՛, աղջիկ ջան, խե՞լք էր մնացել գլխիս, մեր բաժին աշխարհը փուլ էր եկել, ուզում էի քո տեղը ես մեռնեմ-պրծնեմ... Դե՛, փառք աստծո, ամեն փորձանք անցավ։ Մենք էլ հիշտ չենք վարվել, ես հասկանում եմ քեզ... Բայց հո մինչև վերջ թշնամի չե՞նք մնալու։ Հա՛, բալա ջան, մի շաբաթից հետո օրդերները բաժանելու են։ Կարոյի հետ կգանք...

— Իսկ դու որտեղի՞ց գիտես, թե մի շաբաթից...

— Ախր ես երեկ էլ եմ եկել, գտա ձեր նախագահին։ Հենց նրանից էլ իմացա։

— Մարգարիտ Տիգրանո՞վնայից,— քար կտրած՝ մի կերպ արտաբերեց Մարիամը։

— Ի՞նչ իմանամ, հետը չեմ նստել-վեր կացել։ Միամիտ, միամիտ ընկա մտքը, ուղիղ իրա սենյակը։ Սիրուն-սիրուն, մազերը ներկած, քսված մի կնիկ էր։ Դրանց չահելն ու ահելը չեմ տաբբերում, բոլորն էլ ներկվում են։ Հա, երեսին էլ մի խալ կար...

— Լավ, լավ, հասկացա,— հատ-հատ արտասանեց Մարիամը՝ շունչը տեղը բերելով։— Դու հիմա գնա, ես ուշանում եմ։ Գործից հետո կհանդիպենք, կխոսենք։

— Իյա՛։ Բա ի՞նչ անեմ էդքան ժամանակ։ Ուզո՞ւմ ես գնամ էդ քո...

— Ո՛չ,— կտրեց Մարիամը։— Այդ տունն այլևս չգնաս։

— Դուրս ես անո՞ւմ,— աչքերը լայն բացեց մայրը։

— Տանը ոչ ոք չկա... Դե, ես ուշացա...

— Աղջի, բա էդպես ո՞նց կլինի...

— Շատ էլ լավ կլինի։

Եվ Մարիամը վերջին աշխատողների հետ հիվանդանոցի շքամուտքից ներս գցեց իրեն։

Ամբողջ օրը նա չկարողացավ հանգստանալ. խեղդվում էր մտածումների խորխորատներում։ Ահա թե տիկին Աղրինեն ինչին չէր դիմացել ու սառն էր ընդունել մորը։ Իհարկե, նույն խոսքերն անպայման Աղրինեին էր ասել... Ուրեմն ամեն ինչ ուզում են մոռացության տալ, ի վերջո ուզում են «տերել» իրեն, որպեսզի ինքը գյուղ գնա, իրեն հովանի լինեն, իսկ Կարոն էլ կտեղափոխվի քաղաք, մնչտեղից դուրս մնա նոր տուն կառուցելու հարցը, որպեսզի ինքն էլ կապվի

հողին, ամբողջ հոգսը վերցնի իր վրա, որպեսզի երբ ցանկանան երեսով տան անցյալը... Նշանակում է հիմա Կարոն այդքան մտահոգ է քրոջ պատվի համար... տանջվում են մոր չարշարանքը տեսնելով... Միայն տեսնելով...

Մի՞թե աստված սիրտ է տվել նրանց նաև, ովքեր պարզապես չեն կարող առանց սրտի ապրել. չէ՞ որ սիրտն է արյուն հասցնում մարմնի բոլոր մասերին...

Մարիամը շատ ուշ նկատեց, որ Սասունը գործի չէր եկել։ Ի՞նչ էր պատահել։ Հավանորեն դարձյալ Նանարը հիվանդացել էր։ Տեսնես այս երկու օրը քանի՞ անգամ էր երեխան իրեն կանչել...

Մարիամը նորից անդրադարձավ իր և մոր հանդիպմանը։ Մի՞թե իրենց տանեցիներից բոլո՞րն էին այդ որոշումը հանել։ Ո՞չ մեկի մտքով չէր անցել, որ Մարիամն էլ կարող էր ցանկություն, կամք, իրավունք ունենալ։

Աշխատանքը դեռ չէր ավարտվել, երբ Մարիամին հեռախոսի մոտ կանչեցին։

Սասունն էր։

— Մարիամ, երեխայի ջերմությունը չի իջնում... Անընդհատ քեզ է ուզում... Ոչինչ չի ուտում...

— Ես իսկույն կգամ... Թույլտվություն կխնդրեմ ու կգամ։ Ի՞նչ բերեմ, Սասուն, երեխայի համար։

— Միայն քե՛զ բեր։ Տանն ամեն ինչ կա։ Նանարս ասում է, որ գո՛ւ պիտի իրեն կերակրես...

— Գալի՛ս եմ։

Երբ հիվանդանոցից դուրս եկավ, մայրը նորից կարեց ճանապարհը. մի՞թե այդքան ժամանակ սպասել էր։

— Հիմա ոչինչ չեմ կարող ասել,— արագ վրա տվեց Մարիամը։— Շտապում եմ, սպասո՛ղ կա...

— Սպասի՛ր, սպասի՛ր, էդ ի՞նչ ձևով ես մարդ հետ խոսում,— զարմացավ ու վիրավորվեց Վարդանուշը։— Էդպե՞ս է քեզ դաստիարակել քո...

— Նրա անունը չտաս... Նրանից բացի ես ոչ մի հարազատ չունեմ։

— Մի սրա՞ն նայիր։ Աղջի՛, ուրեմն մի օտարի համար էլ չկա՞մ... Հարազատ մարդ...

— Նայած մայր, նայած օտար։ Հիմա կարդասա, ի՞նչ ես ուզում ինձանից։

— Ո՞նց թե։ Բա էսպես ոտի վրա խոսել կլինի՞։ Լսիր, մի յարաթից հետո Կարոյի հետ գալիս ենք օրդերն ստանալու։ Արտերդ ասում է, որ թույլ չի տա քրոջը քաղաքում մենակ ապրի, հասկացա՞ր։ Եթե չես ուզում դյուղ գալ, կարող ես իր հետ ապրել...

— Ձեր այդ պլանները կպահեք ձեզ համար,— շնչահեղձ լինելով խոսեց Մարիամը՝ համոզված միաժամանակ, որ դա իրենց վերջին զրույցը կարող էր լինել։— Այդ բնակարանում, որ ասվիս են ինձ, ապրելու եմ ամուսնուս և երեխայիս հետ։ Ես ամուսնանում եմ...

— Ամա՞ն։ Թաղա լիպո ես ճարե՞լ... Ուրեմն երեխա ես ունեցել ու թաքցրել ես...

— Հա՛, հա՛, ունեցե՛լ եմ։ Արդեն չո՛ր տարեկան է։

— Վա՛յ, էս ինչ զուլում էր... Դրա համար փախար մարդիդ մոտի՞ց... Ուրեմն ճիշտ են ասում, որ սիրած ես ունեցել...

— Հա՛, ունեցե՛լ եմ։ Դու ինձ վաղուց ես թաղել, ես չկա՛մ, ձեր աղջիկը մեռե՛լ է, կամուրջից գցել է իրեն ու մեռել... Ես տիկին Ադրինեի հոգևոր զավակն եմ, Աննայի քույրը... Գնա ու այդպես էլ ասա տանը...

— Վա՛յ, աստված, էս ինչեր եմ լսում։

— Մ՛յ, դա լավ է։ Դու աստծուն դիմիր։ Մենք աստծուն գտել ենք ու ամուր կպել նրա փեշերից՝ համոզված, որ նա միշտ լուծելու մեր խառնած հարցերը։ Նա՛ պիտի լսի, ձեռք մեկնի, նեղ վիճակից հանի առանց հատուցման։ Դե ասա թող լսի, եթե չի տեսել...

— Մարիա՛մ, լսիր ինչ եմ ասում, հավատա՛։ Եթե չանես ինչ որ ասեցի, Կարոյի ձեռքից չես պրծնի։

— Դու էլ գնա և տղայիդ ասա, որ ես ամուսնացել եմ և ընտանիքիս հետ փոխադրվելու եմ ոչ թե մեկ, այլ երկու սենյականոց մեր բնակարանը, լսեցի՞ր...

Մարիամն իրեն բռնեց այն բանում, որ տեսնում էր իրեն կորցրած մոր տգեղությունը։ Սոսկալի էր։

— Մարիա՛մ, աղաչում եմ, գլխիդ փորձանք մի բեր, մերդ եմ, ես քեզ վատը չեմ ուզում... Կարոյին ճանաչում ես, նա ամեն ինչ կանի... Ինչի՞ ես ուզում գնա բանտերում փտի...

— Թող փտի, եթե դրան է արժանի։— Ինչքան էլ ծա-

ծուկ հանդուրժողականությամբ էր թրծվել Մարիամը, զարձյալ չդիմացավ ներքին պայթյունին, որ պիտի լիներ կյանքում գոնե մեկ անգամ։— Մայրը հավասար աչքով է նայում իր բոլոր զավակներին։ Իսկ հիմա գնա և տուն կառուցիր փոքր տղայիդ համար, քանի որ երկհարկանի վիթխարի մենատունը քիչ է երկու ընտանիքին։ Մնաս բարո՛վ։

Եվ Մարիամը պոկվեց տեղից։

— Մարիա՛մ, սպասի՛ր...

Միևնույն է, Մարիամը գնում էր այլևս երբեք ետ չնայելու որոշումով։ Քայլում էր մոլորված՝ առաջին բոպեներին չիմանալով ուր գնալը... Բայց ինչու, ինչո՞ւ վատություն են ուզում անել հենց ամենամոտ հարազատները, ո՞ր մեղքի համար... Ինչքա՞ն էր տևելու այդ հետապնդումը...

Շուկայում չկարողացավ որոշել, թե որ մրգից ինչքան էր գնելու։ Թանկ ու էժան չհարցնելով գնեց այնքան, մինչև տեսավ, որ պայուսակն արդեն լցվել է։ Սակայն չգիտեր, թե այդտեղից ինչո՞վ էր հասնելու Սասունենց տուն։ Ամենահարմարը տաքսին էր։

Իր առջև Սասունի տան դուռը տեսնելով՝ ուզեց սեղմել զանգը, երբ կրնկի վրա արագ բացվեց այն։ Գլխի թեթև ցնցումով Մարիամը փորձեց ցրել քիչ առաջվա զրույցի հետքերը ու ներս մտավ։ Մտավ խայտուն մի ընթացքով՝ իրեն չմատնելու համար։

Ներսում արդեն երեսին զգաց այն անարատ օդն ու տրամադրությունը, որով լցված էր այդ փոքրիկ բնակարանը։

— Ուշացա՞։

— Սպասում էինք,— հարազատի ձայնով խոստովանեց տանտերը։ Նրա ողջույնի մեջ բարություն, սիրալիրություն ու անհամբերություն կար։ Հաջորդ վայրկյանին Սասունը ցուցամատը շրթունքներին՝ տարավ։— Մ՚սս, հենց նոր քնեց... Ամպիցիլին սրսկեցի, թոքերի բորբոքումը կանխելու համար... Հենց քեզ տեսնի, կառողջանա, հավատացնում եմ...

Երեխայից ավելի հայրն էր ուրախացել։

— Ոնց որ շփոթված ես երևում, Մարիամ... Ուշադրություն հետդ չես բերել։ Որևէ բա՞ն է պատահել։ Կարո՞ղ է վրադ խոսել են շուտ դուրս գալու համար։

— Ով կարող է նանարի համար խոսել... Ուղղակի ան-

հանգիստ էի,— ուրեմն Սասունը անմիջապես նկատում է մարդու հոգեվիճակը։ Պիտի շուտ տալ խոսակցության նյութը։ Հապա, կկարողանա՞։— Ասում ես՝ ոչինչ չի՞ կերել։— Նրանք արդեն խոհանոցում էին։— Մի թաս տուր, միրգը լվանամ։ Ասենք ինքս արդեն գիտեմ անհրաժեշտ իրերի տեղը։ Ամառը ցույց է տվել։

— Ինձ նայիր, Մարիամ։ Երեսիդ վրա մի խավ եմ նկատում, պիտի մաքրեմ։— Եվ Սասունն ափով կարծես մաքրեց Մարիամի երեսը։— Չէ՛, չեղա՛վ, ինչ-որ բանից մտահոգված ես... Այս ինչո՞ւ ես այսքան միրգ գնել... Չասացի՞ ոչինչ հարկավոր չի... Անընդհատ դուրս էի նայում...

— Երեխայի համար եմ բերել,— ինքն էլ իր ձեռքը երեսին տարավ՝ կարծես զգալու մեկ ուրիշի ձեռքի հետքը։

— Հանկարծ ու չգայիր... Գիտե՞ս, Մարիամ, քո մեջ ամենից շատ ինչն եմ հավանել. ինքնանվիրումդ... Հետո, հետո ինձ թվում է, թե քո մեջ անհատնում զգացմունքներ կան... Այսքան տխուր աչքեր իմ կյանքում դեռ չեմ տեսել... Դանիելի հետ անընդհատ դուրս էինք նայում...

Հայացքը չկտրելով Մարիամից՝ Սասունը սրբիչով չորացնում էր ընտիր ջիղն ու դասավորում սկահակի մեջ։

— Իսկ ինչո՞ւ երեկ չշանդահարեցիր,— հարազատի իրավունքով զգոհեց Մարիամը։

— Գիտեի, որ հերթապահում ես, մտածեցի, որ հիվանդների մոտ կլինես... Բայց ի՞նչ դժվար բան է սպասելը...

— Երեխան ի՞նչ է ուտելու,— հիմնականին անցավ Մարիամը, որպեսզի Սասունը շատ չտանջվի։

— Բաղրիջան եմ խորովել։ Դա է շատ սիրում... Չզարմանաս, եթե ասեմ, որ Նանարից անհամբեր է՛ս կի...

Առնականորեն ծիծաղեց Սասունը վերջին բառից անհարմար զգալով ու դրա նման էլ մի բան ավելացրեց.

— Քեզ ամեն օր ենք սպասում...

Մարիամի անջատված ձեռքերն իրենց գործն էին անում, սիրտն էլ իր համար դժվարություններ էր հաղթահարում։ Իսկ աչքերը... Ամեն ինչ մշուշվում էր աչքերի առաջ։ Նրան դեռ ոչ ոք այդպես չէր սպասել, ոչ ոքի համար այդքան ցանկալի չէր եղել նրա ներկայությունը։

— Զարմանում եմ, թե երեխան ո՞նց միանգամից կապ-վեց քեզ ու լուծեց բոլոր խրթին հարցերը...

— Ինչ գեղեցիկ դասավորեցիր, Սասուն։ Մնում է նկարիչ լինել ու մի սքանչելի նատյուրմորտ ստեղծել։

Մրգով զարդարված սկահակը սենյակ տարան։ Բազմոցին խաղաղ քնած էր երեխան։ Դալուկ թշիկներին թեթև վարդագույն էր մնացել։ Մարիամը հակվեց ու զգուշորեն համբուրեց ճակատը.

— Ջերմությունն իջել է։

Սասունն իր նման չէր։ Փոքրացել էր մի տասը տարով ու լցիտեր ինչպես խոստովաներ իր սերը։

— Իսկապե՞ս իջնում է։— Նա հայր էր և որպես հայր ինքն էլ հակվեց երեխայի վրա։ Նրա շունչը հասնում էր Մարիամին, արդեն մտերմիկ շունչը։ Մազերը հաճելիորեն քքսվում էին Մարիամի երեսին։ Երիտասարդը մի ձեռքը երեխայի ճակատին տարավ, մյուսը, իբր անհրաժեշտաբար, դրեց Մարիամի դաստակին։— Իջել է... Ոտքդ բարի է մեր տանը, Մարիամ։ Դու բարի ես, փորձել եմ, գիտե՞ս։ Երբ տեսնում եմ երազում, ամբողջ օրս լավ է անցնում։ Դրա համար ուզում եմ ամեն գիշեր տեսնել։

Մարիամը չասաց, որ Սասունի երեսն էլ իր համար է բարի։ Դա էլ մի ուրիշ անգամ։

— Ասում են՝ մարդկանց լավն ու վատը, չարն ու բարին անմիջապես զգում են երեխաները, մեկ էլ՝ շները։ Երկուսն էլ անսխալ են զգում, քանի որ երկուսն էլ կանխակալ կարծիք կամ շահ չունեն։

— Եթե Նանարն ուրիշ կնոջ հանդիպեր, ես կարծում եմ, նրան էլ այսպես կընդուներ... Նա այնքա՞ն շատ է սպասել...

— Հանդիպել է ու չի ընդունել... Ես գոհ եմ իմ Նանարից... Պատկերացրու, ինձ էլ եմ վստահել նրան։

Երեխայի մասին, նրա անունից խոսելով՝ Սասունը լավ էր ազատվում բազում խոստովանություններից։

— Հիմա մենք միասին կճաշենք։ Ամեն ինչ պատրաստել եմ։ Երանի՞ այն օրը, երբ միասին կպատրաստենք... Կամ դու կսարքես ինձ...

— Մենք գործը միասին ենք վերջացնում։ Բայց ես կարող եմ եփել, մաքրել նաև երեկոները։ Տիկին Աղրինեից շատ բան եմ սովորել։

Ե՞րբ պիտի լիներ այս խոսակցությունը. մի քանի օրվա՞ց, թե՞ հետո։ Հավանորեն յուրաքանչյուր խոսակցություն, ինչպես ծնունդը, ինչպես արագիլի բույն հյուսելը տեղի է ունենում ճիշտ ժամանակին։

— Կճաշենք երեխայից հետո։

— Երբ երեխան հիվանդանում է, Մարիամ, ու ես վրան հակված՝ շնչառությանն եմ հետևում, մտածում եմ աշխարհի մայրերի մասին. հապա նրա՞նք ինչ են ապրում մինչև երեխայի ապաքինվելը,— շշուկով շարունակում էր Սասունը։— Ինչ լավ է, որ ես մայր չեմ։ Ես լէի դիմանա...

— Ինչ կարևոր է՝ մայր ես, թե՝ հայր։ Կարևորը ծնող լինելն է։ Դու երկուսին էլ փոխարինում ես։

— Ես ուզում եմ, որ այդ ծանր զգացումը մեր միջև բաժանենք։

— Այլ կերպ էլ չի կարող լինել։ Ես բախտավոր եմ, Սասուն, որ հանդիպել եմ ձեզ։ Գնանք խոհանոց, թող երեխան քնի։ Քունն ամենաբուժիչն է։

Նրանք ելան ու անմիջապես էլ լսվեց Նանարի ձայնը.

— Մամա՜... մամա՜, եկե՞լ ես... Արի՜ ինձ մոտ...

Մարիամն արագ մոտեցավ, կռացավ, ափի մեջ առավ փոքրիկի դալուկ թաթիկները ու շրթունքներին տարավ.

— Նանա՜ր... բալի՜կս...

Սրա ոսկեղնիկ ու քնքուշ մռութը շատ էր նման հորը։

Նկատելով, որ Սասունը խոհանոց գնաց, Մարիամը սկսեց արագ-արագ համբուրել երեխայի թշիկները.

— Էլ ջերմություն չունես, Նանա՜ր...

Երեխայի արևատենչ մարմինը խարակվում էր աշնան վերջալույսի շողերի տակ։

— Սոված եմ...

— Վա՜յ, բալիկս։ Հիմա քո սիրած ճաշը կբերենք։ Հայրի՞կ, բե՛ր բաղրիջանը։

Մարիամի մեջ զավակասիրություն էր բորբոքվում։ Նա ինքն էլ էր զարմանում, որ այդքան ջախջախվելուց հետո դեռևս կարողանում էր այդպես սիրել։

Սասունն արագ ներս բերեց երեխայի ուտելիքը։

— Հենց գնաս, էլի կհիվանդանամ,— ասաց Նանարը՝ թաթիկներն օղակելով Մարիամի պարանոցի շուրջը։— Չե՛մ ուտի, ոչի՛նչ չեմ ուտի։

— Չեմ գնա, Նանար ջան, էլ ո՛չ մի տեղ չեմ գնա։

Մարիամն իբր միայն երեխային պատասխանեց։

Հայր ու զոտրիկ իրար նայեցին, ապա դարձան Մարիամին։

— Այո՛, ես մնում եմ այստեղ, ձեզ մոտ, մինչև միասին տեղափոխվենք նոր բնակարան։

Այս անգամ արդեն Նանարը հավատաց։

Եթե առաջ Մարիամի կյանքը եղել էր անհաջողության, հալածանքի ու հետապնդման մի շղթա, հիմա արդեն հասել էր ապրելու, վայելելու, ինչո՞ւ չէ, նաև վրեժի հատուցման շրջանը։ Վրեժ լուծել օրինավոր, նորմալ ապրելակերպով։

Մարիամն ափերով ծածկեց երեսը, որպեսզի հայր ու աղջիկ ծանր ապրումների կնիքը չտեսնեին այնտեղ։ Մասունը ձեռքերը դրեց Մարիամի ուսերին՝ տաք ու հաճելի ծանրություն պատճառելով նրան։ Ապա ձեռքերը ետ տարավ նրա երեսից ու թափանցող հայացքով նայեց երկար ու գրկին սեղմեց կնոջ պաշտպանության կարոտ մարմինը.

— Մարիա՛մ, ջա՛նս... Չես պատկերացնում երևի, թե որքան բախտավոր եմ...

— Ե՛ս էլ,— Մասունի տաք գրկում շշնջաց Մարիամը։

— Ե՛ս էլ,— ճչաց Նանարը։

Դժվար էր ասել, թե նրանցից որի՞ հոգին էր զգացմունքների համար առավել տարողունակ։

— Մասո՛ն, այսքան ջահել ու արդեն ոպիտակում ես,— մատները երիտասարդի մազերի մեջ խրելով ասաց Մարիամը։— Շա՛տ ես տառապել։

— Սոված եմ,— գժի պես գոռում էր Նանարը։

Մնողները հագցրին նրան ու մոտեցրին առատությամբ լցված սեղանին։ Միայն երեխան սկսեց ուտել, քանի որ «բախտավոր» բառի մեջ նա հասկանում էր նաև ուրախացնել ծնողներին, այսինքն՝ ուտել։

Մարիամը լուռ հետևում էր նաև Մասունին, որն իր արծ-

վատունգ, հրաբորբոք աչքերով նաև պատմում էր հրաշք նախնիների մասին։

— Ինչքան էլ անուրախ է եղել կյանքդ, Մարիամ, դարձյալ ինչ-որ հպարտ արժանապատվություն պահող երանգ ունի խոսքդ և զգուշություն է հուշում քեզ մոտեցողին։ Ա՛յ, հենց դա եմ սիրել մեր հանդիպման առաջին օրից։

Այլևս չխոսեցին։

Երկու մեծերը, որ այդ երեկո փոքր էին Նանարից, ագահաբար սնվում էին իրենց միջև ընկած հոգեկան անտակ աշխարհով։

Ուշ էր, երբ Մարիամը հեռախոսով խնդրեց Ադրինեին թույլ տալ իրեն այդտեղ մնալ, քանի որ խոստացել էր երեխային։

ՎԵՐՋԵՐԳ

Անցել էր մեկ տարի։ Նորից աշուն էր, Երևանյան ոսկեշունչ աշուն։

Կիրակի էր։ Անթիվ, անհամար ծնողներ, երեխաներին առած՝ լցվում էին մանկական զբոսայգի։ Սա բերնեբերան հասցված էր երեխաների համատարած ճողոպրմամբ։

Նանարի ձեռքերը բռնած՝ այդի մտան նաև Սասունն ու Մարիամը։ Վերջինիս բնավացքը վհեհորտ էր, զգույշ. նա պատրաստվում էր մայրանալ։

Սասունը արտակարգ ուշադիր էր նրա նկատմամբ, այս ու այն կողմ վազվզող գտարիկին էր հետևում նաև։

Մարիամի արմատակալած թախծի վրա պատվաստված երջանկության նորընձյուղը բողբոջել էր և ահա ուր-որ է ծաղկակալելու էր՝ թեկուզ աշուն էր։

Մինչ փոքրիկին կարուսել կնստեցներ Սասունը և ամեն պտույտի հետ ձեռքով կաներ նրան, անուշ հայացքով Մարիամը նրանց էր հետևում. արդյո՞ք իր զավակն էլ այսքան սիրելի կարող է դառնալ, որքան Նանարը, որը կարգավորել էր նաև իր կյանքը, գետի մյուս երեսին մնացած կյանքը։ Ինչ խոսք, կանցնեն տարիներ, կգտնվեն շար լեզուներ Նանարին ասելու համար, թե Մարիամը նրա ծնող մայրը չէ։ Երեխան նախ ապշած, ապա ցասումով կնայի այդ լուրը հաղորդողին ու կճչա աշխարհով մեկ.

— Լռե՛ք, չհամարձակվե՛ք վիրավորել իմ մայրիկին... Նա աշխարհի ամենալավ, ամենաբարի մայրիկն է...

Մարիամն անընդհատ ինքնապեղմամբ էր նայում իրեն. բան երևույթին աչքը տված է մարդուն, որպեսզի սա ամենից առաջ իր հոգին տեսնի։

Իմանալով, որ Մարիամն իրոք ամուսնացել է, այն էլ Ադրինեի գիտությամբ, ծնողներն ու եղբայրներն անիմաստ գտան նրա կյանքի մեջ մտնելը ու սկսեցին տուն կառուցել Կարոյի համար։

Թող կառուցե՛ն։ Քանզե՛լն է սարսափելի։

Ոսկեթել միջոցին բռնել էր զրոսայգին։

Հեռվից, կարուսելից Նանարը բոլորից բարձր էր ճչում.

— Մամա՛... մամա՛...

Շատ երեխաներ էին կանչում իրենց մայրերին, բայց դրանք սովորական, իրար նման բացականչություններ էին։

Ուրիշ էր Նանարի ձայնը, որը Մարիամը խլում էր շատերի միջից։ Նրա կանչի հետ մի ամբողջ, ո՞չ, երիք կյանք էր կապված։

Մարիամը սիրով նայում էր ամուսնական մատանուն հարևան այն պարզ ու ճաշակով մատանուն, որ չէր փոխի ամենամանկ ակնեղենի հետ. Ադրինեի նվիրածն էր, երբ Սասունի հետ տուն դարձան արձանագրվելուց։

— Երջանի՛կ լինեք, սիրելինե՛ր,— ասել էր Ադրինեն գրպանված՝ դնելով մատանին։

Նորապսակները սրդիական համբույրով էին պատասխանել իրենց բարերարին։

Մարիամը նորից հարված զգաց ներսում։ Շատ շուտով ծնվելու էր նրա և Սասունի զավակը։ Բարո՞վ գա։ Նրան սպասում են բազմաոլորտ ճանապարհ անցած ծնողները՝ բնավ չմատահոգվելով աղջի՞կ կլինի նա, թե՞ արու զավակ։

1986, ապրիլ-մայիս

ՆՈՎԵԼՆԵՐ

ԱՐՏԻՍՏԸ

1

— Ասում եք, հիացա՞ծ եք։
— Հատկապես Արսենյանի դերակատարումով։
— Մի՞թե այդքան հետաքրքիր է նա։
— Օ՜, չափազանց։
— Ուրեմն՝ վաղը պրեմիերա է։
— Ահա ազդագրերը։

Զրուցակիցները կանգ առան փողոցի խաչմերուկում։ Խոնավ թուղթը, ստանալով վրձնի վերջին հարվածը, ձուլվեց ցուցատախտակին։ Փակցնողը հեռացավ։ Նորանոր մարդիկ էին հավաքվում ազդի շուրջը, թատերասերներ, որոնք նրանից էլ արագ տարածում էին նոր ներկայացման լուրը։

Բայց այդ ամենը քիչ էր ուրախացնում իրեն՝ Արսենյանին։

Աչքերը հառած հիվանդի երեսին՝ նա անող տագնապով էր հետևում նրա խուլ տնքոցներին։ Հիվանդների ջերմությունը ստուգելուց հետո գլխավոր բժիշկը մոռնչալ վերջին մահճակալին։ Արսենյանը հարցական հայացքով նայեց նրան՝ ասես ցանկանալով միանգամից կռահել բժշկի վճիռը։

Հիվանդի դրությունը ծանր էր։ Նա մեծ ճիգով ցանկացավ վեր բարձրացնել գլուխը, բայց կարողացավ միայն անորոշ նայել շուրջը և նորից աչքերը փակեց։ Ձեռքը կախ ընկավ։ Արսենյանը բռնեց այն։ Որքա՞ն հաբաղաս էր իրեն այդ ձեռքը։ Քանի՞-քանի անգամ է այդ առնական ափերի մեջ Արսենյանը զգացել իր ձեռքի սեղմումը։ Այժմ դրանք մոմի տեսք էին առել։ Որքա՞ն անճանաչելի, օտար էին թվում դրանք հիմա։ Կարծես առաջին անգամ էր տեսնում։

— Ես այստեղ եմ, Սուրեն, ի՞նչ ես ցանկանում,— զգույշ հարցրեց նա։— Ուր-որ է՝ ձերոնք կգան, հեռագրել եմ...

Հիվանդը չպատասխանեց, թվաց լսեց։ Միայն շրթունքի անկյունը վեր ձգեց։

Լռությունը կրկին խզեց գլխավոր բժիշկը։

— Ընկեր Արսենյան, գուցե կանցնեիք հարևան սենյակը, մի փոքր կհանգստանայիք։ Հերթապահ քույրն այստեղ կմնա։

— Չե՜մ կարող։

— Կես գիշերից անց է արդեն, իսկ դուք վաղը պրեմիերա ունեք։

Արսենյանը ջղաձգաբար տրորեց բունքերը։

— Չե՜մ կարող, հավատացեք...

— Մենք կհոգանք, վստահ եղեք։

Արսենյանի հայացքը չէր հեռանում հիվանդի կիսաբաց աչքերից։ Նրան թվում էր, թե ընկերոջ շնչառությունը սկսում է ծանրանալ։ Ո՜չ, նա չի կարող այդ վիճակում թողնել ու հեռանալ...

Ժամանակը, անասելի դանդաղ, բայց անցնում էր։

Հիվանդասենյակին կից փոքր կաբինետում Արսենյանը դեռ շարունակում էր ետ ու առաջ քայլել։ Մտքերը նրան տարել էին ետ։ Ահա նա տեսնում է իրեն աշակերտական պայուսակը մեջքին, տղաների հետ խաղալիս։ Նրանց մեջ է և Սուրենը՝ չարաճճի, կատակասեր։ Նա հիշում է, թե ինչպես մի անգամ, տարված ձնագնդով, ուշացան դասից և ուսուցիչը ներս չթողեց։ Նրանք վախենում էին տուն վերադառնալ, բայց և ինչքա՞ն լավ էր դրսում, չնայած բոլորովին սառել էին։ Որքա՞ն էին մտերիմ, ինչպիսի՞ օրեր են անցկացրել միասին...

Հեռվում, հորիզոնի վրա թրթռում էին լույսի առաջին շողերը։

Մոխրամանը նորից լցվեց ծխախոտի մնացորդներով։ Նա բացեց լուսամուտը։ Բացվել էր արշալույսը։ Ամպերի թեթև քուլաները, նոր ծագող արեգակի շողերի տակ երանգներ առնելով, անցնում էին անաղմուկ, անտարբեր։ Ուշացած ամպի մի կտոր գնում էր նույն ուղղով, ասես հետապնդելով՝ ուզում էր հասնել մյուսներին։ Արսենյանը հայացքը թեքեց՝ վեր

բարձրացնելով աջ հոնքը։ Հերթապահ տրամվային հետևեցին մյուսները, և քաղաքն սկսեց արթնանալ։

Ծանր մտքերը նորից կծկեցին նրան բազկաթոռի մեջ։ Շոշափեց ծնոտը։ Դիմացի պատի վրա խաղում էր արեգակի առաջին ճառագայթներից հետապնդված նուրբ մի ստվեր, որը գնալով գորշանում էր՝ ստվերագծելով Արսենյանի առնական ու համաչափ կիսադեմը։ Երկար ժամանակ համարյա անշարժ թվացող այդ ուրվագիծը ընդոստ վեր բարձրացավ։ Սթափվելով՝ Արսենյանը ցանկացավ մտնել հիվանդի սենյակը, երբ դեմն ելավ բժիշկը։

— Ինչպե՞ս է դրությունը,— անհամբեր հարցրեց Արսենյանը։

— Չե՛մ ծածկի, դրությունը մնում է ծանր։

— Մի՞թե ծնողները չեն հասնի,— ավելի տագնապեց Արսենյանը։

— Եթե դիմանա սիրտը, այն ժամանակ...

— Կհաղթահարի՞ ճգնաժամը...

— Պիտի որ հաղթահարի։ Բայց անհրաժեշտ է, որպեսզի դուք հանգստանաք։ Ամբողջ գիշեր ոտքի վրա եք եղել։

Ուշացած ամպի գորշ ծվենը սահեց վեր, և սենյակը կորցրեց իր նախկին պայծառությունը։

2

Հոգնած սպասումից՝ հանդիսականները շրջում էին ճեմասրահում և դիտում դերասանների դիմանկարները։ Շատերն էին սկսել անհանգստանալ. երրորդ զանգն ուշանում էր։

Արտակարգ անհանգստություն էր տիրում կուլիսներում։ Բոլորի դեմքերին սպասումի ու վախի արտահայտություն կար։

— Տիգրա՜ն Բորիսիչ, ահա չորրորդ անգամ եմ զանգահարում, սակայն հեռախոսը չի պատասխանում,— գլխավոր ռեժիսորի կաբինետն ընկավ շնչակտուր եղած ռեժիսոր-ադմինիստրատորը։

— Մի՞թե տանը չէ. գուցե որևէ դժբախտությո՞ւն է պատահել։

Ադմինիստրատորը չիմանալով ինչ պատասխանել՝ վեր ձգեց ուսերը։

— Բայց չէ՞ որ այսօր պրեմիերա է, առանց նրան չի կարող ներկայացում գնալ,— զայրացած շարունակում էր գլխավոր ռեժիսորը։ Նա կտրուկ շրջվեց դեպի պատը. ժամը ութն անց էր 17 րոպե։ Նա ոտքի ելավ.

Անմիջապե՛ս մեքենայով առն գնացեք։

Հատարակությունը ևս սկսել էր հետևել ժամացույցին։

Մի քանի լրագրողներ հավաքված էին դերասանական մուտքի առջև։ Նրանց խոսակցության ընդհանուր տոնից տպավորվում էին հաջորդ օրվա իրենց դրվատանքներով լի հոդվածները։ Ճանապարհ տալով անվերջ եկ ու մուտ անող աշխատակիցներին, նրանք քաշվեցին պատուհանի մոտ։ Մեկը ևս բաշեց վարագույրը. դրսում անթափանց խավար էր։

Հեղգելով մութը՝ կայծակը շրջապատը լուսավորեց։ Անձրևի միաձույլ կաթիլները հատելով իրար՝ թափվում էին անցորդների գլխին՝ շտապեցնելով նրանց։

— Սպասե՛ք մի փոքր, մեքենա կանչենք, նայեք, սասսիկ անձրև է,— խնդրում էր բժիշկն Արսենյանին։

— Չե՛մ կարող, ուշ է արդեն...

Նա ինքն էլ չիմացավ, թե ինչպես հագավ վերարկուն, ծածկեց գլխարկը և դուրս ելավ։ Անձրևի հորդառատ առվակները կտրում էին նրա ճանապարհը։ Քամին ետ էր շպրտել վերարկուի փեշերը, ծռել գլխարկի եզրերը, անձրևի շիթերով ուժգնությամբ ծեծում էր դեմքը։

Նա մի վայրկյան կանգ առավ՝ հենվելով մգացած պատին։ Ընկերը չէր հեռանում մտքից։ «Ո՛չ, չե՛մ կարող խաղալ»,— շշնջաց նա՝ ջղաձիգ աջ ու ձախ թեքելով գլուխը։ Պատին փակցված ազգը պոկվել էր կիսով չափ և դողում էր անձրևի տակ։ Նա վրա պրծավ, ուղղեց այն և կարդաց. «Պրեմիերա... Արսենյան»։ Հիմա, ուրեմն, էրեն են սպասում...

Քայլերը փոխվել էին վազքի։ Ահա և մյուս ազգը, սրն, ասես, հիշեցնում էր. «Ուշացա՜ր...»։ Նա վազում էր, չնկատելով, թե ինչպես էր թրջում իր կողքից անցնող մարդկանց։

Քամին շռինդով պատին խփեց դուռը։ Նա ներս ընկավ, առանց շուրջը նայելու, խառնված քայլերով անցավ առաջ և ծածկվեց դերասանական մուտքի ետևը։ Հետաքրքրվողների հայացքը մնաց ուղեգորգին դարձված թաց ոտնահետքերին։

— Այս ի՞նչ վիճակի մեջ էր Արսենյանը,— նկատեց մի տիկին, խնամքով ուղղելով դեկոլտեի ծալը։— Գուցե հետաձգվի՞ ներկայացումը։

Իրարանցումն ուժեղացավ կուլիսներում։

— Եկա՛վ...

— Եկա՞վ...

Արսենյանը մի կողմ նետեց վերարկուն։ Ժիլետն ամբողջովին թաց էր։

— Լևոն Ներսեսիչ, ի՞նչ է պատահել,— մոտեցավ ռեժիսոր-ադմինիստրատորը,— ժամանակից 20 րոպե անցել է արդեն։

— Ինձ ոչինչ չի՛ պատահել, խնդրում եմ օգնել հագնվելու և անմիջապես կանչեք գրիմյորին։

Ոչ ոքի չէր տեսնում Արսենյանը, մեքենաբար հագնում էր այն, ինչ տալիս էին։

— Խնդրում եմ սկսե՛լ ներկայացումը, ես իմ մուտքին կհասնեմ։

Արդեն ուղղելով փողկապը՝ նա նստեց Հայելու մեջ երևվում էր թարմ վշտի ակոսներով ծածկված իր դեմքը։ Վերցնելով ֆոնը՝ արագ ու վարժ նա ծածկեց այդ բոլորը։ «Մի՞թե վերջացավ... Ո՛չ, չի՛ կարող պատահել...»։

— Լևոն Ներսեսիչ, եթե վատ եք զգում, ես կհայտնեմ գլխավոր ռեժիսորին,— կրկնում էր ռեժիսոր-ադմինիստրատորը։

Արսենյանը պղտոր հայացքով նրան դարձավ, ապա մատների թեթևակի շարժումով հարթեց գրիմը։

— Խնդրում եմ չխանգարել,— զուսպ նկատեց նա ու վեր կացավ։ Ադմինիստրատորի առջև կանգնած էր երիտասարդ մի բժիշկ, ինքնավստահության արտահայտությունը դեմքին։ Վիրահատությունից վերադառնալիս նա այդպիսին պետք է լինի։

— Լևո՛ն Ներսեսիչ, ինձ ասացին, որ վատ եք զգում,— ներս մտնելով՝ ասաց գլխավոր ռեժիսորը։— Կարող եմ հետաձգել ներկայացումը։

— Ո՛չ, Տիգրան Բորիսիչ, ես արդեն պատրաստ եմ, ուշադրություն մի դարձրեք։

Արսենյանը նստեց, զույգ ձեռքերով բռնեց աթոռի կողերը։ Մի այն մատները չէին հնազանդվում։

— Գուցե ծանր դեպք է պատահել, ասացե՛ք... Լսո՞ւմ եք,— չէր հանդուրժում գլխավոր ռեժիսորը։ Նա նայեց դահլիճ մեջ խմբվածներին՝ նրանց հայացքում կարդալու պատասխանը։— Ո՛չ, ավելի լավ է հետաձգել, քան տապալել ներկայացումը։

Եվ նա արագ ելավ գրիմանոցից։

Արսենյանը բացեց մատները։ Աթոռն աղմուկով ետ գնաց։

— Տիգրա՛ն Բորիսիչ, խնդրո՛ւմ եմ... Ես պատրա՛ստ եմ,— ռեժիսորին հասնելով թախանձեց Արսենյանը։— Ես խաղո՛ւմ եմ... Ես կխաղա՛մ։ Սկսե՛ք ներկայացումը։

«Ո՛չ, չի՛ կարելի տապալել ներկայացումը... Պե՛տք է խաղամ»,— կուլիսներում, մուտքից առաջ մտածում էր Արսենյանը։

Երկարատև ծափահարությունը կտրեց նրան իր մտածումներից։ Զգալով գահլիճի շունչը՝ նա, ինչպես միշտ, կինավարագույրներում թողեց իր խառը, անհանգիստ մտածումները։ Ներկայացումը մտավ հոնի մեջ։

Կիսավարագույրների մեջ հավաքվածները, ինչպես և խաղընկերները, հետևում էին Արսենյանի խաղի յուրաքանչյուր մանրամասնին։ Ամեն ինչ ընթանում էր նորմալ։ Կարճ ժամանակից նրանք մոռացան տագնապը և տարվեցին արտիստի ստեղծած խորունկ ու հմայիչ կերպարով։

Այլ կերպ էր ընկալում Արսենյանը։ Նա, որի համար բեմ մտնելուց հետո գաղարում էին գոյություն ունենալ բեմական պայմանականությունները, որ բեմից դուրս ոչ ոքի և ոչինչ չէր տեսնում,— հիմա իրեն բռնում էր այն բանում, որ նկատում էր և՛ առաջին շարքում նստածներին, և՛ կուլիսներում հավաքվածներին, և՛ պատուհանից երևացող ծաղկած խնձորենին՝ իր կեղծ, օսլայած տերևներով։ Բայց և այնպես նա շարունակում էր խաղալ...

Դա մի հուզիչ պոեմ էր խորհրդային մարդու մասին։

Երիտասարդ, տաղանդավոր մի բժիշկ կատարում է բարդ մի վիրահատություն։ Աշխատանքի ընթացքում նա ծանոթանում է հիվանդի դստեր հետ, որ նույն հիվանդանոցի գլխավոր

բժշկի նշանածն է, և նրանք սիրահարվում են։ Հիվանդը մեռնում է։ Այդ մասին բոլորը գիտեն, բացի աղջկանից։ Նա չի կասկածում, որ բժիշկը կփրկի իր հորը։ Ահա նրանք մենակ են, և հերոսուհին չի կարողանում թաքցնել իր զգացումները։

«— Իսկ այն ծաղիկները, որ դուք հավաքեցիք ինձ համար անտառում, դեռ չեն թառամել»,— լսում է Արսենյանը դեռասանուհու խոսքը։ Եվ նրա մանկական հիշողությունները քաղցր, անմոռանալի տեսարաններ են արթնացնում նաև իր մեջ՝ կապված... ընկերոջ հետ։ Այդ ե՞րբ էր, ե՞րբ էր, որ նրանք միասին թափառում էին անտառում...

«— Ես պառկած էի խոտի վրա...»

...Այդպես էլ նա էր սիրում պառկել խոտի վրա, իր հետ միասին, և՝ շառաչոտել... Ինչի՞ մասին էր խոսում։ Այն ժամանակ թվում էր, թե ընկերը միշտ իր հետ պետք է լիներ, որ իրենք կարող են ամեն անգամ այդպիսի զբոսանք կատարել...

Եվ մինչ աղջիկը երգում էր, Արսենյանն ավելի ու ավելի էր հեռանում նրան հասկանալուց։

«— Հենց որ հայրս առողջանա... այն ժամանակ մենք... Նա կապրի, այնպես չէ՞։ Դու լսո՞ւմ ես...»

Արսենյանը նայում և չէր հասկանում նրա հարցը։ Դեռասանուհու համար պարզ էր, որ նրա մտքերն ուրիշ տեղ էին։

«— Դու լսո՞ւմ ես»— կրկնում էր նա՝ ցանկանալով ուշքի բերել Արսենյանին։

«Մի՞թե կապրի...»,— անսպասելի և խորհրդավոր դուրս թռավ Արսենյանի բերնից... «Մի՞թե կապրի»,— կրկնում էր նա՝ բնավ չտեսնելով դեռասանուհու դեմքի զարմացած արտահայտությունը։ «Մի՞թե կապրի»,— շարունակում էր կրկնել նա՝ սարսափած գլխի ընկնելով, որ այլևս ընդունակ չէ ուրիշ որևէ բան արտասանելու։

— Կապրի՞... Նա կապրի՞,— իզուր տեղը հիշեցնում էր հոգված հուշարարը։

Այս ամենը, բարեբախտաբար, տեղի ունեցավ այնպես արագ ու կիսաձայն, որ հասարակությունից քչերը, այն էլ առաջին շարքերում նստածներից ոմանք միայն, հարցական հայացքով նայեցին իրար։

Անմխիթարական էր թերևս ռեժիսորի վիճակը. սեղմված

կոլիսներին, նա տրորում էր ձեռքերը, կրծոտում շրթունքները։

Անմիջապես ներս մտավ աղջկա նշանածը, և, երբ Արսենյանը ուշքի գալով, միանգամայն զգաստ, ավելց իր պատասխանը,— բեմի աշխատողների համար ներկայացումը նորից իր հունով շարունակվեց։

Հասկանալով նրանց մտերմությունը՝ դիրեկտորը չի կարողանում զսպել իրեն և բաց է անում գաղտնիքը. իզուր է նա արդյունքի հիացած վիրաբույժով, նրա հայրը մեռած է։

...Ահա և վիրաբույժը մենակ է։ Ներքին դողով նա վերցնում է սեղանին դրված գանգը. նայում է նրկար և ասես իր դիմաց պարզ տեսնում է մահը, մահվան դեմքը։ Խոսքերը դարձ են գալիս ահավոր ճիգով, բայց հաստատ.

«— Միշտ չի հաջողվում մեզ կատեցնել քո սատանությունը, հավերժական ծիծաղ... դու կանգնեցնում ես սրտերը, երբ նրանք լի են հրաբորբոք հույզերով... Ո՞վ է քեզ իրավունք տվել ժամանակից առաջ մեռցնել քո շնչով մարդու երջանկությունը։ Ես քեզ պայքարի՛ եմ կոչել... Այսօր դաժանորեն հարձակեցիր դու։ Իսկ վաղը ո՞վ կհաղթի, ո՞վ։ Դո՞ւ, թե՞ ես...»

Հանդիսականները մոռացել էին իրենց։ Նրանք չէին զգում բեմը։ Այդ պահին նրանք տեսնում էին միայն մի գիտնականի, որ կարող է ամեն ինչ անել, որ կարող է նույնիսկ հաղթել մահին։

«Այո, պե՛տք է հաղթել, բայց ինչպե՞ս»,— մտնելով հարցասենյակ, մտածում էր Արսենյանը։ Ո՞րն է այժմ նրա անելիքը։ Նոր փորձություն է սպասում հերոսին, բայց ոչ իրեն՝ դերակատարին։ Չնայած ծանր ապրումներին, հերոսի առջև խնդիր է դրվում վիրահատել ժողովրդական կոմիսարին, փրկել նրա կյանքը։ Նա բեմ է մտնում միայն նրա համար, որպեսզի հայտնի վիրահատման արդյունքը։ Դերասանի համար մեկ հատիկ ֆրազն արտասանելը առանձնակի զվարթություն չի ներկայացնում։ Արսենյանը կարող է մինչև այդ տեսարանի մոտենալը հանդստանալ գրիմանոցում և սակայն, չնայած դրան, նա շարունակում էր ապրել այնպիսի լարվածությամբ, որպես թե փորձությունն իրեն է սպասում, վիրահատումը պետք է կատարեր ինքը։ Ընդմիջմանը

նա նույնիսկ կոպտեց մեկին, երբ սա ցանկացավ ինչ-որ բան հարցնել։

Ոչ պակաս հուզված էր նաև ռեժիսորը։ Նրա ջղային քայլերի տակ անհանգիստ ճռճռում էր հատակը։ Ի՞նչը կարող էր արտիստին այդքան հուզել, որոշ տեսարաններ նա տանում էր ցրված, որոշ տեսարաններ՝ ծայրահեղ լարված։ Երբեք այդ վիճակում չէր տեսել փորձված արտիստին։ Պետք էր հետևել հաջորդ տեսարանին։ Ռեժիսորի քայլերն ուղղվեցին դեպի դուռը, երբ հեռախոսի զանգը ետ պահեց նրան։

— Լսո՛ւմ եմ... այո, թատրոնից է... Հայտնեմ Արսենյանի՞ն... Ի՞նչ եք ասում... Անչափ շնորհակալ եմ, հենց հիմա՛...

«Ահա թե ինչն էր պատճառը»,—ինքն իրեն կրկնում էր ռեժիսորը։

Աստիճանները վազում էին նրա ոտքերի տակից։

Արսենյանը լարված սպասում էր իր մուտքին։ Ակամա աջ ձեռքը գնում էր դեպի կուրծքը, որի տակ սիրտն իր ներկայությունն էր զգալ տալիս։

Թեմում և դահլիճում խորհրդավոր լռություն էր։ Բոլորի հայացքն ուղղվեց դեպի այն կողմը, որտեղից պիտի հայտնվեր բժիշկը։ Հենց այն է, ռեժիսորն արդեն մոտենում էր Արսենյանին, երբ սա հանդիսավոր խաղաղությամբ բեմ մտավ։ Դահլիճում զսպված մի շշուկ անցավ և շրջապատը լռեց։ Ահա և բժիշկը. որքա՜ն հմայիչ է նա այժմ իր սպիտակ արտահագուստով։ Դանդաղ նա հանում է ռետինե ձեռնոցները, ետ է քաշում դիմակը։ Հայացքը կանգ է առնում մի պահ։ Ոմանք նետվում են դեպի նա, մյուսները քարանում սպասողական լռության մեջ։

«— Դե՛...»։

Անհանգիստ էր միայն ռեժիսորը։ Ոտքի թաթերի վրա նա կուլիսից կուլիս էր անցնում, աշխատում էր տեսնել Արսենյանին, որսալ նրա հայացքը... Սակայն այդ ժամանակ այլևս ի՞նչ կարող էր անել։

— «Ժողովրդական կոմիսարի կյանքը փրկված է»,— լսվում է Արսենյանի խոսքը և նա տապալվում է աստիճանների վրա։

— Ի՞նչ բնական ընկավ,— ակամա բացականչեց ռեժիսորը։

Ահա դեպի բժիշկն է նետվում սիրած աղջիկը. նա այժմ ավելի է սիրում...

«— Պլատո՛ն... Ո՞վ կա այստեղ ,եկե՛ք, շո՛ւտ, Պլատո՛ն... Կամֆորա՛... շո՛ւտ...»։

Վարագույրի ետևում անսովոր շփոթություն էր սկսվել. կարծես դեռ շարունակվում էր պատկերը։ Դերակատարներին չէր հասնում դահլիճի որոտալից ծափահարությունը։

— Ընկե՛ր Արսենյան... շո՛ւտ... կա՛մֆորա,— բացականչում էր դերասանուհին։

— Ի՞նչ է պատահել...

— Ուշաթափվել է...

— Արսենյա՞նը...

Ամբողջ խումբը միանգամից հավաքվեց բեմ, բայց Արսենյանն արդեն տեղափոխվել էր զարդասենյակ։

— Լեո՛ն Ներսեսիչ... Լսո՞ւմ եք,— Արսենյանի ձեռքերը արտրելով, անկապ խոսում էր ռեժիսորը։— Հենց այս բոպեին պանդահարեցին հիվանդանոցից... Ձեր ընկերոջ կյանքը փրկված է... Դուք լսո՞ւմ եք... Փրկված է նա...

Արտիստը նայում և ոչինչ չէր հասկանում։ Նրան թվում էր, թե այդպես էլ պետք է լինի, պետք է որ ապրի ընկերը, երբ ինքը հաղթել է փորձությունը, խաղացել է՝ գտնելով իր մեջ արտաքսվոր մի ուժ։

Եվս մի երկու բոպե, և բոլորը հանգստացել էին։

Չէր հանգստանում միայն դահլիճը։

1948, ապրիլ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

1

— Իրո՞ք ես կտեսնեմ նրան։

— Հավատացեք, որ նաև կսիրեք։

Մեքենան սլանում էր Մոսկվայի փողոցներով։ Հարցնո-

ղը, որ մոտ քառասնամյա մի կին էր, ձեռքի թաշկինակով կրկին մաքրեց մեքենայի ապակու գոլորշին ու նայեց դուրս։ Նրա դեմքը մտազբաղ էր ու տխուր։

Ձմեռ էր։ Զյունախառն քամին գալարվելով՝ խփում էր ապակիներին, ծածկում դրսի պատկերները։ Նրա առջև բացվում էր տխուր հիշողությունների մի ամբողջ աշխարհ։ Այո՛, այն ժամանակ էլ էր ձմեռ, խիստ սառնամանիք և այդպիսի ձմեռ երբեք չէր տեսել կյանքում։

Կինը դեմքը հպեց սառած ապակուն։ Ամեն կերպ ջանում էր ազատվել հիշողություններից։

Երեք երիտասարդներ, որոնք նստած էին նույն մեքենայում, ուշադիր հետևում էին կնոջ դեմքի յուրաքանչյուր արտահայտությանը։

Մեքենան կանգ առավ։ Երիտասարդները արագ դուրս եկան և օգնեցին նրան ևս դուրս գալ։

Չնայած մոսկովյան սառնամանիքին, թատրոնի առջև խոնվել էին հարյուրավոր մարդիկ։ Ամենից մոտ գտնվող խմբի մեջ մի շշուկ անցավ.

— Ո՞վ էր այդ հետաքրքիր կինը։

— Տիկին Կոշևա՛յան։ Ես նրան ճանաչեցի անմիջապես, նկարի՛ց։

Ես էլ էի կարծում, որ նրան չէին կարող չհրավիրել «Երիտասարդ գվարդիայի» պրեմիերային։

Կինը երիտասարդների օգնությամբ բարձրանում էր աստիճաններով։

Մինչև դահլիճ մտնելը տիկին Կոշևայան, ասես ժամանակ չէր ունեցել հաշիվ տալու իրեն, թե ինչու էր եկել։ Բավական է, որ նա այսօր բեմի վրա տեսնելու է իր Օլեգին։ Չէ՞ որ նա հենց այդ է նրազել այն օրից, երբ ստացվեց առաջին նամակը «Երիտասարդ գվարդիայի» բեմադրության մասին։

Նրան էին մոտենում նորանոր երիտասարդներ, հարգանքով համբուրում էին ձեռքերը, որոնց մասին զոհված պատանին այնքան լավ հիշողություններ էր ունեցել։

Դահլիճը լեփ-լեցուն էր։ Բոլորի դեմքերին արտասովոր սպասման արտահայտություն կար, որն ավելի ուժեղացավ, երբ նկատեցին եկվորին։ Հետո այդ լարված սպասումը ներս խուժեց կուլիսները։ Այնտեղ ինչ-որ իրարանցում սկսվեց։

— Դիմիտրի Իվանիչ, եկա՛վ,— գլուխը հարդասենյակից ներս խցկեց ակնոցավոր մի ծերունի։

— Կոշևա՛յան,— անհանգիստ կանգնեց Օլեգ Կոշևոյի դերակատարը։ Նա անհնազանդ մատներով սեղմեց կեղծամի բերանը։— Որտե՞ղ է նստած։

Ներսունին բացատրեց։ Նրա սուր աչքն անմիջապես նկատեց կարճ ժամանակում անուն վաստակած արտիստի հուզմունքը.

— Դիմիտրի Իվանիչ, ես ձեզ երբեք այսպես չեմ տեսել։ Հանգստացե՛ք։

Նա ուշադիր զննեց արտիստի զգեստը, ուղղեց գոտկատեղը և, պտտվելով նրա շուրջը, կանգ առավ։ Նրա առջև երեսունն անց տղամարդու փոխարեն կանգնած էր 17—18 տարեկան մի պատանի։

— Սիրելի՛ Կուզմիչ, իսկապես ասած՝ երբեք այսպիսի դյուտատիանատվություն չեմ զգացել։ Առաջին պրեմիերային ավելի հանգիստ էի և առհասարակ, այսօր ուրիշ զգացում եմ ապրում։ Վախենում եմ, որ այդ կնոջ ներկայությունը կաշկանդի ինձ... Թվում է, թե այսօր խաղալու եմ միայն նրա համար։

Գրիմի պարագաները դարակում տեղավորելուց հետո նա ավելացրեց.

— Ես ուզում եմ դահլիճ վարագույրի եռանից տեսնել նրան։

Եվ արտիստը մոտեցավ թավշե ծանր վարագույրին։ Կճանաչի՞ արդյոք այն կնոջը, որի որդու դերը պետք է կատարեր։ Այնտեղ, որտեղ ուղղված էր արտիստի հայացքը, հավաքվել էին մի խումբ երիտասարդներ։ «Հավանաբար նրանց մեջ է»,— մտածեց արտիստը։

— Այստեղից լավ է երևում,— օգնում էր ծերունին՝ ավելի հարմար տեղ գտնելով։

— Նա՛ է, նա՛,— տիկին Կոշևայային նկատելով՝ հուզված շշնջաց Դիմիտրի Իվանիչը։— Անմիջապես ճանաչեցի։ Միայն նա՛ կարող է այդպիսին լինել... Մի անջնջելի վիշտ կա նրա դեմքին։ Բայց դուցե այդ ես եմ պատկերացնում... Նայի՛ր, Կուզմիչ, որքա՜ն հրաշալի ձեռքեր ունի, ճիշտ այդպես էլ երևակայում էի...

Հպված վարագույրին՝ արտիստը խոսում էր անկապ,

մտացրիվ. հուզմունքը նկատելիորեն խանգարում էր նրան և չէր լսում ռադիո-ազդարարը։

— Վարագույրը բացվում է, Դիմիտրի Իվանիչ,— հարգանքով կրկնում էր ծերունին։— Ձեզ խնդրում են պատրաստվել մուտքին։

Ահա տեղավորվեցին և երիտասարդները։ Արտիստը պարզ տեսնում է իր հերոսի մորը... Հետաքրքիր է, ինչպիսի՞ տպավորություն կթողնի նրա վրա իր խաղը, այո, միայն նրա... Քիչ հետո նա պետք է կատարի այն մարդու դերը, որին մբռնքով ճանաչում են այստեղ հավաքվածները։ Բոլորին է հարազատ նա, և յուրաքանչյուրը նրանցից իր համար ունի իր Օլեգ Կոշևոյը։ Նրանք չեն տեսել, բայց ճանաչում են, սիրում... Իսկ մա՞յրը...

Դահլիճը մթնեց։ Նա մղվեց արտիստն այդ ազդանշանից և զգույշ մոտեցավ իր մուտքին։ Ուղղվեցին բոլորը։ Տեղում ուղղվեց և տիկին Կոշևայան։

2

Ի՞նչ էր մտածում այդ պահին նա. ինչ կարող էր մտածել, եթե ոչ բոպի առաջ տեսնել իր Օլեգին։ Նրա մեջ որդուն տեսնելու ցանկությունն այնքան ուժեղացավ, որ չէր լսում այլևս ոչինչ, չէր տեսնում ոչ մեկին։ Նա որդուն փնտրում էր ամենուրեք, նույնիսկ մինչև վարագույրի բացվելը։ Սակայն ինչո՞ւ է նա իրեն խաբում. կլինի՞ մեկը, որ նույնիսկ հիշեցնի իր Օլեգին... Տիկին Կոշևայան չէր զգում դահլիճի խորհրդավոր լռությունը, չէր նկատել անգամ, որ վազուց բացվել էր վարագույրը, և երկու ընկերուհիները հիշում էին իրենց անցյալ խաղաղ ու երջանիկ կյանքը։

«— Բայց որքան լավ էինք ապրում մենք, Ուլյա»,— լճի ափին, անբաժան ընկերուհու ծնկներին հենված, խոսում էր հուսահատված Վալյան։

«— Եվ որքան լավ կարող էին ապրել մարդիկ աշխարհում, եթե միայն ցանկանային, եթե միայն հասկանային»։

Կոշևայային սթափեցրեց այն աղջկա ծանոթ, երաժշտական ձայնը, որին այնքան համակրում էր Օլեգը։ Եթե նրանց վիճակվեր դեռ երկար ապրել... Ինչո՞ւ մեր երազանքները մնացին անկատար...

Ահա և մյուս աղջիկները։ Ջուր են ցողում միմյանց վրա, կատակում, իսկ Ուլյանան հրաշալի է իր սպիտակ շուշանով, բայց և որքա՜ն տխուր է նա... Ռումբերի պայթյունը փոխում է ամեն ինչ, ամենքին։ Նրանց շուրթերին սառած է մնում անավարտ ծիծաղը, և նրանք լռիկ դուրս են վազում տարբեր կողմերով։

Ցնցվեց Կոշևայան, զգաց, որ նույնն ապրեց և դահլիճը. նա սկսեց խռովահույզ հետևել էվակուացիային։ Մթնեց բեմը։ Այո, ճիշտ այդպիսի մի օր էլ մթնեց ամեն ինչ, երբ գերմանացիները խուժեցին Կրասնոդոն...

Մափահարությունը, որ պոռթկաց հանկարծակի, ներվայնացրեց տիկին Կոշևայային։ Ի՞նչ ծափահարելու ժամանակ է... Ահա մի կողմից մյուսն են ձգվում լուսարձակները, ուժեղ լույսի խուրձերով լուսավորում են մեկ դիմացի բլուրները, մեկ ամբոխը, ապա անսպասելի դուրս գալով բեմից՝ կանգ են առնում բեմառաջի վրա՝ իրենց մեջ առնելով ճերմակ վերնաշապիկով, ճամպրուկը մեջքին մի պատանու։

Մշուշապատվեցին տիկին Կոշևայայի աչքերը։ Նա ձգվեց՝ ավելի պարզ տեսնելու համար։ Նրան թվաց, թե այդ իր աչքին է երևում, որ դա մի երազ է... Ձեռքը գնաց դեպի կուրծը... Նա չէր լսում ոչինչ։

Մինչ կսթափվեր Կոշևայան, պատանին արդեն դուրս էր եկել բեմից։ Նա խոսե՞լ էր իր ընկերների հետ, այդ չհիշեց մայրը։ Նա միայն այնպիսի հայացքով նայեց իրեն շրջապատողներին, կարծես ուզում էր հարցնել. «Իրո՞ք նա նման էր իմ դավակին»։

3

Բեմը ներկայացնում է Կոշևոյի բնակարանը, որտեղ հավաքվում էին պատանու մտերիմները։ Այսօր բոլորը կարծես միանգամից ինչ-որ վճռական են դարձել. մտածում են նրանք, մտահոգվում ընդհանուրի համար։ Պետք է ուժեղ հարված հասցնել թշնամուն և կապ պահպանել մարզկոմի բարտուղար Պրոցենկոյի հետ։ Եվ այդ կոմերիտականների կազմակերպիչը իր Օլեգն է։ Արդյոք, դրանից շա՞տ առաջ էր, որ արցունքն աչքերին, ծնկները քերծված ներս էր ընկնում

Օլեգը, և մայրը համբուրելով՝ բուժում էր, իսկ մանկիկը, մոռացած ցավը, ժպտում էր դեռ չցամաքած արցունքի միջից... Իսկ ա՜յժմ... Ո՞չ, այդ դեպքից կարծես մի քանի օր անց այդպես նկատելիորեն փոխվեց պատանին։ Մոռացած իր ծնկների ցավը, նա մտածում է՝ ինչպե՞ս բուժել հազարավոր մարդկանց վերքերը...

Ծանոթ տագնապ է ապրում տիկին Կոշևայան. չէ՞ որ կարող են բռնել այդ անփորձ, այդ տաքարյուն պատանիներին։

«— Զգո՛ւյշ եղիր, զավակս»— կրկնում է մայրը բեմում, պտտվելով Օլեգի շուրջը։

Երբեք չէր պատահել, որ փորձված արտիստն այդչափ մոռանար իրեն. հատկապես մոր հետ կապված տեսարանները նա տանում էր չափազանց անկեղծ, հուզումնալից։ Այնպես էր խոսում մոր հետ, կարծես իր դիմաց դերասանուհու փոխարեն, կեղծ կոճղի վրա նստած էր տիկին Կոշևայան։ Արտակարգ հավատով նա մոր ձեռքերը քսում էր իր դեմքին՝ քնքուշ կարոտով...

«— Որքա՜ն լավ է զգում մարդ իրեն, երբ մայր ունի։ Որքան եմ սիրում քո ձեռքերը և ինչքա՜ն բան են արել սրանք...»,— խոսում էր արտիստը՝ չտեսնելով դերասանուհու ո՛չ դեմքը, ո՛չ գրիմը, ո՛չ լցված աչքերը. նա իր դիմաց պարզ տեսնում էր ա՜յն կնոջը, որ նստած դահլիճում՝ մաքրում ու մաքրում էր արցունքները, և թեև նա պատասխանում էր իրեն ուշ, բայց ամեն ինչ լավ էր հասկանում Օլեգը...

«— Տղա՜ս, որքա՜ն բան փոխվեց քո կյանքում, իսկ չէ՞ որ դու դեռ երեխա ես։ Ես հասկանում եմ, որ այս հավաքույթները հասարակ հանդիպումներ չեն։ Միշտ, ամեն տեղ մի՛ վախենա, եղիր ուժե՛ղ մինչև վերջին շունչդ»։

Եղավ մի պահ, երբ Օլեգի և տիկին Կոշևայայի հայացքները հանդիպեցին իրար։ Մոռացվեցին բեմական բոլոր պայմանականությունները։ Նրանք այդ րոպեին այնպե՞ս գտան իրար, ինչպես կգտնեին հարազատ մայր ու որդի։ Արտիստն զգում էր, որ ժամանակն է թողնելու բեմը, բայց այդ հայացքն այնպես էր կաշկանդել իրեն, որ նա ուժ չէր գտնում իր մեջ որևէ շարժում անելու, թեև զգում էր, որ բոլորն իրեն

են սպասում... Շփոթ քայլերով նա մտավ գրիմանոց, փակեց դուռը և մնաց պատին հենված...

— Ես գտա՛, գտա՛ նրանց, ի՛մ Օլեգին, ի՛մ մորը...

Մափահարությունը սթափեցրեց տիկին Կոշևայային։ Նա արագ դուրս ելավ։

— Դուք հավանեցի՞ք դերակատարին,— լսվեց մի ձայն։

Նա շրջվեց ու զարմացած նայեց հարցնողին։

— Հավանե՞լ,— ինքն էլ չիմանալով ինչու կրկնեց հարցը։ Ապա, ասես ինքն իրեն հանգստացնելու համար, առանց հայացքը կտրելու դերասանական մուտքից՝ շշնջաց.

— Ես միայն կուզենայի երկա՞ր տեսնել նրան...

4

Որքան շատ էր դիտում ներկայացումը տիկին Կոշևայան, այնքան ավելի էր խորանում առաջին տպավորությունը։

Ահա վտանգ է սպառնում երիտասարդ գվարդիականներին։ Նրանք հարկադրված են ցրվել, և մայրը ճանապարհում է իր որդուն։ Բայց ինչո՞ւ են նրանք այդպես հեշտ բաժանվում, ինչո՞ւ է մայրը բաց թողնում նրան իր գրկից, երբ այդ նրանց վերջի՞ն հրաժեշտն է, ամենի՞ց վերջինը...

«— Եթե որևէ բան պատահի, և եթե նրանք ասեն, որ ես, կամ տատդ, կամ հարազատներից որևէ մեկը նրանց բա՞ն է ասել, մի՛ հավատա և լսի՛ր։ Մենք քեզ երբվո՛ւմ ենք, լսո՞ւմ ես»։

Նա չէր հիշում, հենց այդպե՞ս ասաց այն ժամանակ, թե ոչ, բայց դա չէր կարևորը։ Նա գիտեր հաստատ, որ այդպես կասեր և այժմ, եթե նա՝ իր որդին կենդանի լիներ։

Նա կրկին տարվեց ներկայացումով։ Երանի՞, երանի՞ թե մեկ անգամ էլ տեսներ իր Օլեգին, մի վերջի՞ն անգամ... թեկուզ բեմի վրա...

Ահա և պատանին. նա խոշտանգված է, տանջված, բայց էլի որքան գեղեցիկ է, որքան ուժեղ։

«— Ես մեղավոր չեմ, որ իմ կյանքի ուղին այսքան կարճ եղավ... Բայց ես երջանիկ եմ, որ չեմ սողացել... Ես պայքարել եմ։ Մայրիկս միշտ ասում էր՝ Արծվի՛կս... Ես չե՛մ խաբի նրա հավատն ու ընկերներիս վստահությունը... Թող իմ ուղին լինի այնքա՜ն մաքուր, ինչպես իմ կյանքը...»։

Այդ այնպիսի մի պահ էր, երբ տիկին Կոշևայան բոլորովին մոռացած ամեն ինչ՝ բեմ, դահլիճ, արտասվում էր սրբատաճմլիկ։ Եռևի շարքերում նստածները նկատելով նրա ցնցվող ուսերը՝ լուռ սեղմում էին իրենց բռունցքները։ Նրանք չէին համարձակվում խախտել պատանիների հերոսական տրամադրությունը։

5

Տիկին Կոշևայան զգաստացավ այն ժամանակ միայն, երբ զգաց, որ իրեն բարձրացնում են։ Հանդիսականները ոտքի կանգնած ծափահարում էին։ Բեմի վրա, իր դիմաց կանգնել էին բոլոր գվարդիականները։ Հավաքվածների մեջ նա անմիջապես գտավ Օլեգին... Նա ցնծաց, երբ տեսավ, որ Օլեգը ողջ է... Անսպասելի, անբացատրելի ուրախությունը ողողեց նրա սիրտը, և նա նորից կորցրեց իրեն, չզգաց, թե ինչպես տարան իրեն բեմ, ինչպես ողջունեց բոլորին... Զգաց միայն, որ իր տաք արցունքներով ողողում է Օլեգի դերակատարի գրիմով ծածկված երեսը...

Ցյունը խաղաղություն էր բերում մոսկովյան դիշերին։ Լայն պողոտաներով դանդաղ ընթանում էր ավտոմոբիլան։ Շրջապատված երիտասարդներով՝ տիկին Կոշևայան այնպես լավ էր զգում իրեն, ասես որդու հետ ունեցած տեսակցությունից էր դառնում տուն։

1948, հոկտեմբեր

ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

1.

Լսելով իր ազգանունը, միայն Մերին ուղղվեց տեղում. լսարանի դահերի մեջ կանգնած էր բարձրահասակ, պատկառելի արտաքինով դասատիրակուհին։ Ճերմակ մազերը, որ միշտ հավաքած կարելի էր տեսնել, ավելի լրջություն էին տալիս նրա դեմքին։ Գլխի ծանր զուսպ շարժումով նա ներս հրավիրեց իր սանին։ Վերջինս իջեցնելով հարգալից հայացքը, անցավ նրա առջևից։

Ամերիկական կոլեջներից մեկում ավարտական կուրսը հանձնում էր իր վերջին քննությունը։ Մենակ չէր միայն Մերին. զբաղված էին համարյա բոլոր նստարանները։ Յուրաքանչյուր ուսանողուհու առջև դրված էին մաքուր թերթիկներ։ Պետք էր աշխատանք գրել համաշխարհային գրականության դասընթացի հեղինակի մասին։

Ուշ գարնանային աղմկալից մի օր էր։ Կարծես, որպես հակադրություն դրսի աշխարհի, ամբիոնի մոտ ուղիղ նըստել էր ծեր կառավարչուհին։ Մերին թվաց, թե նրա բարակ բերանն ավելի էր սրվել ու երկարաձգվել առանց այն էլ ցամաքած դեմքը։ Դասախոսական կազմի այն թեթև ուշադիր հայացքը, որ նետվեց Մերիի վրա, կռահել էր տալիս, որ քննողները վստահ էին նրա ուժերին։

Վերցնելով թերթիկը՝ նա մնաց տեղում կանգնած. ի՞նչ պետք է գրեր... Նայեց ընկերուհիներին. կենտրոնացած ու լարված՝ նրանք գրում էին, մոռացած անգամ շրջապատը... Ինչի՞ մասին էին գրում... Ո՞ւմ մասին պետք է գրեր ինքը, որպեսզի գոհ մնար հայրը, ամենաթանկագին մարդն իր համար աշխարհում։

Առավոտյան լույսի առաջին շողերը հաղիվ էին ներս թափանցել, երբ զգույշ քայլերով իրեն մոտեցավ հայրը։ Համբուրեց իր ճակատը. «Հրեշտակս,— աղջկա համար փոխված տոնով ասաց նա,— այսօր հանձնում ես քո վերջին քննությունը։ Դու հասունացել ես, և ես չեմ ուզում հիշեցնել այնպիսի բաների մասին, որոնց կարիքը չես զգում այլևս։ Միայն այս կասեմ. եղիր ինքնուրույն, մի՛ կրկնիր ոչ ոքի, ոչինչ թող չբռնանա քո մտքին...»։

Այո, Մերին երբեք չի դավաճանի իրեն։

— Դե՞,— լսվեց մի չոր ձայն։

Կառավարչուհին էր, որ ձեռքի երկար ձողով ցույց էր տալիս աղջկան դիմացի խոշոր ժամացույցը։ Շրջելով դեմքը, Մերին նստեց ազատ նստարանին։

Ո՞ւմ մասին պետք է գրեր... Դրլակոթը դրած լիքը շրթունքներին՝ մտածում էր Մերին։ Մտքերն ավելի էին կկոցել նրա առանց այն էլ ոչ խոշոր, բայց արտահայտիչ աչքերը... Կուցե կամացուկ հարցներ մեկին... «եղիր ինքնուրո՞ւյն»,— կրկին հիշեց հոր վերջին խոսքը և մոռացած շրջապատը՝

մոքով մտավ նրա աշխատասենյակը։ Ո՞ւմ դիմանկարներն էին կախված պատին. չգրե՞լ արդյոք զրանցից որևէ մեկի մասին։ Բայց հենց նրանց մասին են գրում այստեղ հավաքվածները։ Թողնելով հաջորդ նկարները, նա մտովի կանգ առավ հոր դրասեղանի առաջ, որի վրա միշտ կարելի էր տեսնել շագանակագույն կազմով մի գիրք։ Շրջելով կազմը՝ հայացքը կանգ առավ այն բառերի վրա, որոնք արդեն անգիր գիտեր։ Քանի՞-քանի անգամ էր կարդացել հայրը։ Թվում է, թե հենց այժմ էլ Մերին կարդում է անծանոթ լեզվով արված այն մակագրությունը՝ «Էլբայի վրա տեղի ունեցած մեր հանդիպման ապիով. 1945 թ. մայիսի 9»։ Վերևում խոշոր տառերով ապված էր նույն լեզվով՝ Պուշկին...։

Ինչպիսի՞ ուրախություն ապրեց այն ժամանակ տասնըհինգամյա Մերին, երբ ռազմաճակատից վերադարձավ հայրը...

«— Այժմ մենք լավ բարիկամ ունենք այնտեղ,— հենց առաջին զրույցի ժամանակ ասաց հայրը— Վասիլի Լվովիչ է կոչվում նա։ Այս գիրքը նվիրեց ինձ մեր հանդիպման օրը։ Երանի՞ մեկ անգամ գոնե լինենք Ռուսաստանում, դատրիկս, դու չգիտես, թե որքա՞ն խիզախ ու անձնվեր են նրանք»։

Այդ ժամանակ էր, որ աղջիկը մոռացավ այն սառապանքները, որ կրել էր հոր բացակայության ժամանակ։ Նա մոռացավ հարցնել անգամ, թե ինչո՞ւ վերջին ամիսներին ոչինչ չէր գրում։ Բավական էր, որ սիրելի հայրը ողջ և առողջ վերադարձել էր տուն։

«— Կարդա՛ և սովորիր Պուշկինին»,— հաճախ կրկնում էր հայրը ու ձայնագրում իր համար կարծես նոր միայն հայտնագործված պոետի բանաստեղծությունները։

Հուզված պահերին Մերին խաղազվում էր՝ թերթելով այդ գիրքը։ Երկար նա նայում էր դանգրահեր բանաստեղծին, մի՞թե այդպիսին է ուսը,— մտածում էր աղջիկը և ուսումնասիրում բանաստեղծի կյանքը, նրա կենսագրությունը։

«Ի՞նչ եմ երկար մտածում»,— հանկարծ ուշքի եկավ աղջիկը, առաջ քաշեց թերթիկը և վերնագրեց. «Ալեքսանդր Պուշկին»։

Նկատելով միսս Մերիի վճռական շարժումը, հանգստացած խոր շունչ քաշեց ալիհեր գաստիարակչուհին՝ նորից թաշկինակով մաքրելով ճերմակ ճակատը։ Նա նոր միայն անցավ հաջորդ նստարաններին։

Գրում ու գրում էր Մերին՝ չնայելով ո՛չ մտերիմ ընկերուհուն, որ ջղայնորեն տրտրում էր ձեռքերը, ո՛չ նրանց, որ ավարտելով շարադրությունը, ոտքի թաթերի վրա դուրս էին գալիս լսարանից։ Նա մոռացել էր նույնիսկ վերակացուի մեռած ժպիտը, որ այնպես հավերժորեն սառած էր մնացել նեղ շրթներին։

Ինչպե՞ս կմոռանար հայրն այս պարբերությունը։ Եվ կարծես հոր հավանությունն առնելով, ոգևորված Մերին վստահորեն գրեց.

«Համաշխարհային գրականության մեջ Պուշկինը գասվում է Շեքսպիրի, Գյոթեի, Բալզակի շարքը»։

— Ավարտեցի՞ք,— ընդունելով միսս Մերիից շարադրությունը, խաղաղությամբ հարցրեց դաստիարակչուհին։

Աղջիկը պատասխանեց դրական շարժումով ու դուրս եկավ կալեջից։

2

— Այնպես լա՞վ ստացվեց, հայրի՛կ,— ընկնելով հոր գիրկը, համբույրի միջից բացականչեց Մերին։

— Իսկ ո՞ւմ մասին գրեցիր,— նյութանիկ ժպիտով, ապշած աչքերին նայելով հարցրեց հայրը։

— Պո՞ւշկինի։

— Ի՞նչ,— ժպիտը միանգամից կորցրեց հայրը։

— Պո՞ւշկինի,— վնգաց աղջկա ձայնն այնքան ուժեղ, որ նրանից երբեք չէր լսել հայրը։

Խոսքն անարձագանք մնաց։

— Չե՞ս հավատում, կամ դուցե գոհ չե՞ս,— հոր շփոթությունը նկատելով, հարցրեց Մերին։ Նա բաց չէր թողնում իր ձեռքերը, որ ետևից փաթաթել էր հոր պարանոցին։— Չե՞ս հավատում...

— Ո՛չ, ինչո՞ւ... Լավ է, մինչև իսկ շա՛տ լավ է,— շեղված հանգստությամբ վրա բերեց հայրը։

Եվ այնուամենայնիվ, աղջկա համար օտարոտի մի ժպիտ

երևաց երաժշտի դեմքին. հավանական է՝ Մերիին չտխրեցնելու համար նա նորից հարց տվեց.

— Ուրեմն, հաջո՞ղ ես գրել։

— Իմ կարծիքով՝ շատ հաջող։ Հուսով եմ, որ ընտրածս թեման ամենաօրիգինալը կլինի,— կատակեց աղջիկը՝ փոխելով ուսանողական համազգեստը— Ի՞նչ ես կարծում, հայրիկս, գուցե և հանկարծակիի՞ գան... Դու չե՞ս լսում։

— Ինչպե՞ս։

Աղջիկը կրկնեց հարցը։

— Այո... Իսկ ե՞րբ ես ստանալու ավարտականդ։

— Մեկ շաբաթից,— ապագա հաճույքից զվարթացած՝ պատասխանեց Մերին և երգելով անցավ իր սենյակը։

«Ինչպե՞ս կընդունի հանձնաժողովը»,— մտահոգված կըրկնում էր երաժիշտը։

Այդ պահին նրա հիշողության մեջ կենդանացավ մի դեպք.

Ոչ ուշ անցյալում էր, որ խորհրդային միությունից պատգամավորներ եկան Ամերիկա։ Գիտության, արվեստի մարդիկ էին, հենց այդ հանճարեղ բանաստեղծի ժառանգները։ Ի՞նչ վերաբերմունք ցույց տվեց Ամերիկյան կառավարությունը. «Քսանչորս ժամում ազատել Ամերիկան»... Եթե պատգամավորների հետ այդպես վարվեց կառավարությունը, հապա ինչպե՞ս կվարվի կոլեջը Մերիի հետ։

Ուրիշ դեպքում գուցե ցավ զգար երաժիշտը, բայց այս անգամ չնկատելով համարյա՝ մի կողմ նետեց մազերը բոլորովին պոկված աղեղը...

Նրա միակ երջանկությունը աղջիկն էր, նրա ապագան։

Այդ դիշեր նա կրկին հիշեց ռուսներին, հիշեց Վասիլիին, այն կենսախինդ ու քաջ զինվորականին։

Մոտենում էր լուսաբացը։ Պառկած անկողնում, նա բացել էր գրքի կազմը և երկար նայում էր մեծ բանաստեղծի խոսուն աչքերին... Նրա մտքում կրկնվում էին անվերջ հետևյալ տողերը՝

Ո՛չ, անվախեան եմ ես։ Հոգիս նվիրական երգով։
Իմ ամյունից երկար կապրի և կըժբնա անեղծ,
Եվ իմ հուշակը չի հանգչի, որքան լուսնի ներքո
Կապրի թեկուզ մի բանաստեղծ։

Եվ ես երկար կապրեմ սիրով ժողովրդի սրտում,
Քանի որ քնարն իմ արթնացրել է զգացմունքներ բարի,
Եվ իմ դաժան դարում երգել եմ ազատություն
Եվ գութ՝ հանուն ընկածների։

«Անպայմա՛ն ճիշտ է արել Մերին... Նա վաղվել է այնպես, ինչպես ես եմ սովորեցրել։ Չէ՞ որ ես եմ նրան այդպես դաստիարակել...»։

2

Դասախոսական կազմը, որ վերակացուի առաջնորդությամբ մոտեցավ կանաչ մահուդով ծածկված սեղանին, լուսցրեց շրջապատը։ Դահլիճ էին հավաքվել ավարտական կուրսի աղջիկները՝ իրենց ծնողների հետ։ Այդ օրն ամեն մի երևույթ հանդիսավոր էր։

Հակառակ հորը՝ չափազանց լավ էր տրամադրված Մերին. նա չէր զգում անգամ, որ հայրն իր բոլոր հարցերին պատասխանում էր ցրված ու անուշադիր։ Ինչպե՞ս կարելի էր մի վերջին անգամ չծիծաղել վերակացուի վրա. նրա մեռած մպիտն ավելի կծու էր դարձել այդ օրը...

Ներվայնորեն ճակատը շփեց երաժիշտը, հայացքն ընկավ կառավարչուհու սեղմված շուրթերին։

Անվանացուցակը կես էր եղել արդեն։

Խեղդվող լացի մի ձայն կտրեց երաժշտին մտածումներից։

Առանց ձեռքը ճակատից հեռացնելու, նա կողքանց նայեց ձայնի կողմը։ Մերին գուրգուրում, մխիթարում էր ընկերուհիներից մեկին, որն ստացել էր ցածր գնահատական։ Հայրը շրջեց դեմքը։ Նրան թվաց, թե այդ Մերիի վշտի նախաբանն էր։ Ինչպե՞ս ոչինչ չէր կռահում աղջիկը, նա, որ հիմա ամեն կերպ աշխատում էր հանգստացնել ընկերուհուն...

— Ջեկսո՛ն Մերի...

Երաժշտի դեմքի արտահայտությունը լիովին վերադարձավ։ Միայն թե այդտեղ չլիներ Մերին,— մտածում էր հայրը։

— Ընդհանուր գրականությունից ցածր գնահատական ստանալու պատճառով դուք զրկվում եք առաջին կարգի

ավարտական ստանալուց,— սկսեց վերակացուն— Ես կարդում եմ, մյուս առարկաների գնահատականները։

Մերին թեքվեց դեպի հայրը, սակայն վերջինս չէր նայում իր կողմը. երևի չէր ցանկանում տեսնել անսպասելի հարվածից փոխված աղջկա դեմքը... Մի տեսակ սպասողական վիճակում էր նա... Ահա ուր-որ է՝ կլսի Մերիի փղձկոցը...

Կառավարչուհու կապտավուն շուրթերից կռահում էր երաժիշտը, որ նա դեռ շարունակում էր կարդալ։

Ոչինչ չէր մտածում երաժիշտը, ոչինչ չէր լսում։ Նկատելով, որ բոլորը դուրս են ելնում դահլիճից, նա նոր միայն կռահեց, որ ավարտված է ամեն հանդիսավորություն։

— Միսիս Հարդի,— մենակ մնալով, կառավարչուհուն դիմեց երաժիշտը— Ինչո՞վ բացատրել այս... Չէ՞ որ Մերին եղել է առաջադեմ ուսանողուհիներից մեկը։

— Ես էլ եմ ցավում Մերիի համար,— սկսեց կառավարչուհին մեռած ժպիտով— Կարող եմ ասել, որ շատ լավ լեզու և ոճ ունի ձեր դուստրը։ Բայց ահա թե բանն ինչ է...

Դուռը ծածկելով, սկսեց միջանցքում ետ ու առաջ անել Մերին։ Ի՞նչ երկար տևեց խոսակցությունը։

Վերջապես տեսնելով հորը, որ անսովոր խաղաղությամբ դուրս էր գալիս լսարանից, աղջիկն ընդառաջեց նրան։

Ավելի խորը քաշելով գլխարկն աչքերին, երաժիշտը կնապրկած աղջկան, դուրս ելավ կոլեջից։ Նրա ականջներում դեռ հնչում էին կառավարչուհու խոսքերը. «Ընտանեկան դաստիարակությունից է գալիս այդ...»։ Եվ միանգամից բացվելով՝ նա սկսեց պատմել աղջկան կատարվածը, ավելի հաստատուն դարձնելով քայլերը։ Դիմացից եկող բազմությունը ճեղքելով, երբեմն խախտելով անցման կանոնները, նրանք քայլում էին առաջ։

— Բայց ես ոչի՛նչ չեմ հասկանում,— նորից ու նորից հարցնում էր աղջիկը։

— Սիրելի՛ս, Ամերիկայում սկսել են կատարվել բաներ, որոնք մենք գժվարանում ենք հասկանալ— Եվ երաժիշտը վեր բարձրացրեց գլուխը՝ կուրծքն առաջ մղելով— Այնուամենայնիվ, ես անչա՛փ գոհ եմ քեզնից, ի՛մ հրեշտակ։ Երբե՛ք այսպիսի բարձր գնահատական դու դեռ չես ստացել... Սա քո հաստատության իսկակա՛ն քննությունն էր։

1949, ապրիլ

ՀԻՆԳՈՎ ԶՐՈ

1

Դատավորի սուլիչը կապիտան Անդրեյին կտրեց ծանր մտածումներից։ Անցնելով դաշտի կենտրոնը՝ կամքի գերադույն ուժով նա աշխատեց նախապատրաստել իրեն խաղն սկսելու։ Նրա ձախ աչքի վերին կոպը ավելի ցածր էր, քան մյուսը և այնպիսի տպավորություն էր գործում, թե նա այդ աչքով վատ էր տեսնում,— այսօր ավելի նկատելի էր դարձել այդ աչքի փոքրությունը։ Մազակալած, բրոնզագույն դեմքը ցույց էր տալիս, որ սաստիկ հոգնած էր։ Բոլորովին անակնկալ նա զգաց իր ոտքերի առջև խայտաբղետ գնդակը և հարվածեց։ Սպորտային իր կյանքի ընթացքում դուցե առաջին անգամ էր, որ վրիպելով հարվածը, մնաց անտարբեր։

Շրջապատում շարունակվում էր խուլ աղմուկը։ Հասարակությունն անհամբեր սպասում էր. իրո՞ք պետք է սկսվեր այն խաղը, որի մասին լսում ու չէին հավատում նրանք։ Կապիտանն առաջ անցավ։ Ո՛չ, պետք էր հայտնել տղաներին. նա իրավունք չուներ անտեղյակ պահել իր տասն ընկերներին։ Դուցե նրանց մեջ գտնվեր մեկը, որը կգժվարանար խաղալ այդպիսի պայմանով...

Անդրեյն արագ շրջվեց դեպի ձախ պաշտպանը։ Վերջինս կանգնել էր բռունցքները սեղմած, հայացքը շեշտակի։ Նրա մազակալած դեմքի վրա նկատելի էին դարձել դուրս ընկած այտոսկրերը։ «Ահա թե նախ ո՛ւմ է պետք է հայտնել»,— ընկերոջ խիստ արտահայտությունը հասկանալով՝ մտածեց Անդրեյը։

«Ինչո՞ւ է կապիտանը գնդակն ինձ մոտեցնում,— զարմացավ Կոստյան։— Մի՞թե մենք իսկապես պետք է խաղանք... Բայց ի՞նչ հույս կա, որ չենք պարտվի խայտառակ կերպով... Չէ՞ որ բոլորս հյուծված ենք ու անուժ, չէ՞ որ

ստիպված ենք եկել այստեղ»։ Նրան նույնիսկ թվաց, թե կապիտանը հաշտվել է արդեն այդ մտքի հետ և խաղում է գոհունակությամբ։ Այդ արդեն չափազանց էր։

— Քեզ դո՞ւր է գալիս քո վարքը,— կատաղած դեպի կապիտանը նետվեց ձախ պաշտպանը։— Չե՛մ ուզում հավատալ, թե դու դավաճան ես...

Ապշած Անդրեյը չհաստրեց պատասխանել. հակառակորդի հարվածը ստիպեց նրանց հեռանալ միմյանցից։ Վազելով՝ նա շարունակում էր մտածել ոչ թե գնդակի, այլ Կոստայի ցասումնալից պոռթկումի մասին։ Թվում էր, թե նա ոչինչ չէր գտնի ասելու, եթե նույնիսկ կողքին կանգնած լիներ ընկերը։ Մի՞թե այդպես են մտածում իր մասին... Եվ մի պահ, մինչև կհասներ գնդակին, նա հիշեց նախորդ օրվա դեպքը, իր հանդիպումը գերմանական օրեր լեյտենանտի հետ։

...Երկուսուկես ամիս էր անցել այն օրից, ինչ գերմանացիները գրավել էին Կիևը։ Անդրեյը տղաներից ոչ մեկի մասին որևէ լուր չուներ. նա գիտեր միայն, որ կարող ձեռքերին առավոտից մինչև կեսգիշեր տանում էին քաղաքից դուրս աշխատեցնելու։

— Վազը ձեր թիմով պետք է խաղաք գերմանական ամենաանվանի զինվորական թիմի հետ... Բնակչությանը հարկավոր է զբաղեցնել,— ասել էր օրեր լեյտենանտը։

— Իսկ որտե՞ղ են իմ ընկերները,— ներքին ուրախությունը հաղիվ զսպելով՝ հարցրեց Անդրեյը։

— Քառասունութերորդ լագերում։ Մենք նրանց հետ խոսել ենք առանձին-առանձին։

Ուրեմն նա կարող է հանդիպել, տեսնել նրանց,— պատասխանի փոխարեն մտածում էր Անդրեյը։

Հետո նա հիշում էր, թե ինչպես ներս բերին համարյա բոլոր տղաներին։ Անդրեյը ցանկացավ մոտենալ, գրկել նրանց, բայց մնաց տեղում։ Հաղիվ կարողացավ պահել հուզմունքը, երբ նկատեց տղաների զգալիորեն փոխված դեմքերի թարմ խոշտանգումները։ «Ահա թե ինչպես են խոսել»,— մտածեց նա։ Տղաների շեշտակի ու խիստ հայացքներից կռահեց, որ նրանք մերժել են գերմանացիների առաջարկը։

— Ո՛չ, ես չեմ կարող, նրանք սաստիկ հյուծված են,— ասաց Անդրեյը, երբ տղաներին դուրս էին տարել արդեն։— Քիր թիմը ուժեղ է, իսկ մենք երկու ամսից ավելի է՝ չենք մարզվել... Մենք անմիջապես կպարտվենք։

Խոսում էր Անդրեյը՝ շարունակ նայելով այն դռանը, որտեղից դուրս տարան ընկերներին։

— Մենք հենց այդ էլ ուզում ենք։ Ո՛չ մի գնդակ չպետք է անցնի մեր դարպասով, հակառակ դեպքում գա շատ ծանր կնստի ձեզ վրա։

— Այսի՞նքն,— աչքերը կկոցեց Անդրեյը։

— Այնտեղ շարված կլինեն գերմանական ավտոմատները...

— Հասկացա. հիմա կարող եմ տալ համաձայնություն։ Մենք կխաղանք։

Հետո ի՞նչ ասացին, ո՞ւր տարան,— ոչինչ չէր հիշում. հիշում էր, որ ամբողջ գիշեր չկարողացավ քնել։ «Ուրեմն սրանք ուզում են ստորացնել մեզ... Ո՛չ, այդ չի՛ հաջողվի»։ Սակայն այս ամենն ինչպե՞ս հասկացնել տղաներին...

Դեպի ոտները վազող գնդակը կտրեց նրան հիշողություններից, և նա իրեն նորից գտավ Կոստայի մոտ։

— Պետք է պաշտպանե՛նք մեր պատիվը,— հազիվ կարողացավ ասել կապիտանը և անցավ։

Մի պահ Կոստյան սառած մնաց. ի՞նչ էր նշանակում այդ։ Ի՞նչ պատվի մասին կարող է խոսք լինել, երբ իրենք հարկադրված են խաղում, երբ չկամած՝ խաղն արդեն տանում է արված... Մի՞թե Անդրեյը որոշել է շպարտվել։ Ինչպե՞ս կցանկանար նա այդ բոպեին դուրս գալ խաղից, խոսել նրա հետ...

Սառցվեց մի դրություն, երբ գերմանացիների խմբի մեջ ընկան Անդրեյը և Կոստյան։ Նրանց ոտքերը խառնվել էին միմյանց, յուրաքանչյուրը ցանկանում էր ինքը դուրս բերել գնդակը։ Շփվում են նրանք իրար, բայց նայել չեն կարողանում. միգուցե գնդակը փախցնեն։ Բայց ահա Անդրեյը նայում է, մի վայրկյան միայն նայում Կոստայի աչքերին և նրանք միասին սկսում են վազել գնդակի նոսկից։

Երբ նրանք բաժանվեցին իրարից, Կոստյայի դեմքի արտահայտությունը փոխվել էր։

Մյուս տղաները խաղում, բայց չէին հասկանում միմյանց. ոչինչ պարզ չէր նրանց համար։

2

Ոչինչ պարզ չէր և հանդիսականների համար։

Առավոտյան, երբ Կիևի բնակիչները խռովահույզ անցնում էին գեղատեսիլ ու երկարաձիգ Կրեշչատնի պողոտայով, աջ ու ձախ փակցված տեսան աշքի ընկնող ազդագրեր, որոնցից իմացվում էր, որ հաջորդ օրը ստադիոնում տեղի էր ունենալու ֆուտբոլային խաղ գերմանական զինվորական թիմի և Կիևի «Դինամոյի» միջև։ Կիևցիներից շատերը խեղդեցին իրենց հուզմունքը։ Ոմանք չէին հավատում դրան, մյուսներն ամոթից այրվում էին, մտածելով, թե իրենց այնքան սիրված թիմը կստորանա, կընդունի այդ խաղը։ Ո՞ւմ համար պարզ չէր, թե ինչպես կվերջանար այն։ Եվ սակայն հետաքրքրությունը հաղթեց։ Երկու ամսից ավելի էր, ինչ միանգամից անհայտացել էին իրենց ֆուտբոլիստները։ Ի՞նչ եղան նրանք։ Ոմանք հավատացնում էին, որ անպայման էվակուացվել են, ոմանք ցավով նախազգում, թե գիշերը տարած կլինեն քաղաքից դուրս ու գնդակահարած։ Համենայն դեպս, ոչ ոք լավ բան չէր մտածում. չէ՞ որ այդ շաբաթների ընթացքում նրանք արդեն ամեն ինչ զգացել էին իրենց կաշվի վրա։

Երբ վերջապես տղաներն իջան մեքենաներից, ժողովուրդը, հակառակ սովորության, ծափահարությամբ չէր, որ դիմավորեց նրանց։

Միանգամից շրջվեց բնակչության տրամադրությունը։ Խուլ աղմուկ էր տիրում ամենուրեք։

— Չէի կարծում, թե մերոնք կհամաձայնեն խաղալ,— անհանգստացած՝ հեռուն էր նայում մեկը։

— Գուցե ստիպել են, տեսեք ինչպես են քայլում,— նկատեց մյուսը՝ ցույց տալով օրորվող տղաներին։

— Հետաքրքիր է, ինչպես կտանեն մերոնք,— անհանգստանում էր հարևանը։

— Երանի՞ հրաժարվեին...

— Նայե՛ք, Անդրեյը կարծես ինչ-որ բան է ուզում ասել Վոլոդյային,— ցույց էր տալիս մեկն իր ընկերոջը։

Իրոք, Վոլոդյան ու Անդրեյը վազում էին, բայց ոչ այնքան գնդակը վերցնելու, որքան իրար մի բան ասելու համար։

— Վոլո՛դյա, համաձա՞յն ես մեռնել, բայց ոչ մի գնդակ չփչել,— առանձնանալով աջ պաշտպանի հետ՝ վրա ավեց կապիտանը։

— Դա քի՞չ է, մենք պետք է հաղթե՛նք,— լսելի ասաց Վոլոդյան ու գլխի մի հրաշալի հարվածով գնդակը դուրս բերեց շրջապատումից։ Ու հենց այդ պահին նրա ոտքերը, որ նոր էին բացվել, միանգամից թուլացան. նա նոր միայն հասկացավ, որ ժողովուրդը դավաճան է համարում իրենց, այլապես այդ հարվածը երբեք այդպիսի ճնշող լռությամբ չէր ընդունի։

Պետք էր սկսել գրոհը և հաղթել,— այս էր արդեն խմբի շատերի որոշումը։

3

Արծվային հայացքով նկատելով հեռվում դրված ավտոմատները՝ Կոստյան մի պահ կանգ առավ։ Մեռնե՞լ, իսկ ինչո՞ւ։ Թերևս հանդիսականների հոծ բազմության մեջ է նաև իր մայրը։ Գուցե նրան ստիպել են գալ ու տեսնել, թե ինչպես է պարտվում իր տղան... Պարտվե՞լ... Այդ երբե՛ք չի լինի, նա թույլ չի՛ տա ամոթով հիշել իրեն...

Ահա Անդրեյը մոտենում է աջ կիսապաշտպանին։ Բայց մի՞թե նա ուժ ունի խաղալու, նա, որ նախորդ օրն այնքան ծեծվեց խաղին մասնակցելու համաձայնություն չտալու համար...

Մինչ նոր, վճռական զգացումը տեղ կբռներ տղաների մեջ, քրտինքի մեջ կորած Անդրեյը թույլ չէր տալիս որևէ մեկի ձեռքն անցնելու գնդակը. նրան չէր շփոթեցնում նույնիսկ հասարակության մեջ ծնունդ առնող զայրույթը։ Ավելի

կարևոր միտք էր զբաղեցնում կապիտանին. իր որոշումը հայտնել մինչև իսկ դարպասապահին։

Այդ վայրկյանին նրա հոնքամիջի երակը լարվեց. չմնալ-վե՞ց ինքը՝ թողնելով նույն դարպասապահին. մի՞թե այդ նիհար, բարձրահասակ պատանին կկարողանա պահել հակառակորդի կենտրոնական հարձակվողի ասես արկի հարվածը, որ այնպես սրընթաց է գալիս իր վրա։ Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հայտնել երիտասարդին մեռնելու որոշումը։

— Սո՛ւրով, կարո՞ղ ես կյանքովդ պաշտպանել մեր դարպասը,— վերջապես նրան հասնելով՝ բացականչեց Անդրեյը՝ արագ կարելով գնդակի ընթացքը։

Սուրովը, որ վերջին պահին զարմացած ու վախեցած էր հետևում իր կապիտանին, լսելով նրա անսպասելի խոսքը, կանգ առավ դարպասի մեջտեղը։ Շրջված Անդրեյը իր եռեվում լսեց նրա խոսքը, որ հնչեց իրեն երդում.

— Պատվո՛վ կպաշտպանեմ։

Մինչ Սուրովը կուլ կտար հուզումը, ոտքի մի ուժեղ հարված գետին գլորեց նրան։

— Դատավո՛ր... դատավո՛ր,— լսվում էր հասարակության միջից։

Իտալացի դատավորը, որ իր հողագույն, մեռելային դեմքով, փայտային քայլերով այս ու այն կողմ էր հայտնվում, բավարարվեց միայն կանաչ աչքերը աջից ձախ շրջելով։ Խաղը շարունակվեց առանց տուգանքի։

Գերմանացիները կոպիտ ու վայրենի աղաղակներ էին բարձրացնում։ Ձայները տարածվում էին ողջ խողաղաշտով մեկ, հասնում Անդրեյին, բորբոքում նրա վազքը, հասնում մինչև իսկ գետնին տարածված, ցավից դեմքը ծամածռած Սուրովին։ Այդ ձայներն այնպես խորն էին վիրավորում նրան, որ մոռացած ցավը, նա աշխատում էր հաստատ կանգնել ոտքերի վրա։ Նրա աչքերը վառվում էին վրիժով, պատանու համար գուցե առաջին խորթ զգացումով...

— Թեկուզ կյանքի գնով,— անսպասելի և կիսատ Անդրեյին շշնջաց մեկը։

Այդ իր խմբի վերջին տղան էր, որին Անդրեյը դեռ չէր հաջողել հայտնել խաղի պայմանը։ Մոլեգին մի ցասումով

նա կարողացավ հասնել այդ տղային, խլել նրա ոտքերի տակից գնդակը և նույնիսկ սեղմել թևը։

Հասարակությունը սկսել էր անհանգստանալ։

— Խաղի առաջին կեսն անցել է արդեն...

— Գուցե մերոնք ժամանակ են շահում։

— Այսպիսի անհաջող խաղ երբեք չէր եղել...։

— Մերոնց հոգնեցնում են, որպեսզի կարողանան երկրորդ խաղին գրոհել։

— Եթե որոշել են խաղալ, ապա պետք է հաղթե՛ն,— բարկացած խոսում էր մի աղջիկ։

— Այդ ի՞նչ եք դառել, զավակնե՛ր...

Մի կին էր, որ սև գլխաշորով մաքրում էր աչքերը։

— Հանկարծ պարտվեն,— անհանգստացած ձեռքերն էր արորում մի պատանի, դիմելով ինքն էլ չիմանալով թե ում։

— Այդ երբե՛ք չի լինի,— ղգաստացած գլուխը բարձրացրեց արտասվող կինը։— Այդ չի՛ լինի... Տեսնո՞ւմ եք ավտոմատները... Մերոնք խաղում են կյանքի գնով, իսկ այդպիսի խաղը երբեք չի կարելի տանուլ տալ...

Կինը չկարողացավ շարունակել. զգացվում էր, որ նրա համար սաստիկ ծանր էր խաղացողներից որևէ մեկի մահվան մասին մտածելը։

— Խփի՛ր, Անդրե՛յ,— լսվեց մի ուժեղ ձայն։

Կարծես դա մի ազդանշան էր աղմների համար։ Նրանք արդեն բռնել էին հասարակությանը, նրա հարազատ հնացող շունչը։

Գերմանացիներին կարգադրված էր առաջին խաղի վերջում, երբ կինցիները բավականաչափ հոգնած կլինեին, ուղարկել առնվազն երկու գնդակ։ Ահա և շուրջկալել են նրանք մեր դարպասը։ Համարձակ առաջ է գալիս գերմանացիների աջ պաշտպանը, հմուտ մի վարպետ։ Ուր-որ է՝ գնդակը կմոտենա դարպասին։

Դեռևս հեռվից լավ նախապատրաստված կոմբինացիան հասնում էր իր ավարտին։ Հանկարծ, շատերի համար անսպասելի, Կոստյան ճեղքեց հակառակորդի խումբը և գնդակն առած՝ վազեց դեպի հակառակորդի դարպասը։ Անմիջապես խումբը հետևեց նրան։ Կոստյան ավելի էր արագաց-

նում վազքը։ Աղմկում է հասարակությունը... Կոստյան լսում է իր ետևից եկող հևասպառ վազքը։ Ավելանում է հետապընդողների թիվը։ Ահա ուր-որ է կհասնեն և գնդակը ետ կդարձնեն նույն ընթացքով, բայց մոտ է և դարպասը... Կարծես գետինը ետ է վազում նրա ոտքերի տակից։ Ուրախությունից կորվում է նրա շունչը։ Բոլորովին մոտ է դարպասը, և ինքն էլ խաղից դուրս չէ։ Նա գիտե, թե ինչ է նշանակում իր այդ հարվածը։ Անդրեյն ասաց՝ կյանքի գնով։ Բայց չէ՞ որ իր հետ է և ժողովուրդը... Մի պահ կանգ է առնում նա, ետև է տանում աջ ոտքը և ամբողջ թափով գնդակն ուղղում դեպի թշնամու ցանցը...

Իրո՞ք գնդակն ընկավ ցանցը,— նա չտեսավ... Շփոթված նա նայում էր շուրջը։ Ողջ հասարակությունը հանդիսավոր կերպով ոտքի էր կանգնած... Մոռացած դրությունը, մի վայրկյանում Կոստյային են շրջապատում իր ընկերները և գրկում, համբուրում են երախտագիտությամբ, համբուրում իրենց, գուցե և հանդիսականների փոխարեն։

4

Հանդիսականները նոր միայն գտան իրենց տղաներին։ Նրանք հիմա հասկացան, թե յուրաքանչյուր գնդակ ուր է տանում իրենց խաղացողներին։ Այնուամենայնիվ, նրանք գտնում էին, որ պե՞տք էր հաղթել։

Գերմանացիների գրոյի կողքին կախվեց մեկ թվանշանը։ Սակայն ժողովրդի միջից եղան շատերը, որոնք ժամանակ չգտան նայելու այդ թվանշանին։

— Դատավո՞ր... դատավո՞ր...,— գոռում էին այս ու այն կողմից։

Կոստյան աշխատում, սակայն չէր կարողանում ոտքի կանգնել։ Ձեռքը տարավ դեպի աջ ծունկը, մատների մեջ զգաց ոսկրի կտորներ։ Նա նայում էր ժողովրդի առաջ մրցված դեմքերին և զգում, որ տաք հեղուկ է լցվում իր բերանը։ Ահա գնդակը գալիս է դեպի իրեն։ Մի՞թե չպետք է կարողանա կտրել ճանապարհը, մի՞թե հակառակորդը պետք է հավասարեցնի հաշիվը։ Ոչ թե սովորական հակառակորդը, այլ՝ թշնամին։ Գնդակը բերում է նրանց կենտրոնական հարձակվողը։ Կոստյան վազուց էր հասկացել, որ դա ամենավտանգավոր խաղացողն էր գերմանացիների խմբում։ Օրորվելով ոտքի ելավ Կոստյան և մինչ կա... տեր ամբողջ իրանով նետվել դեպի գնդակը, կարծես տակից հրված՝ տապալվեց դետին։ Մեծ ճիգով նա թեքեց գլուխը՝ տեսնելու համար դարպասը։ Գոհունակության, թե շնորհակալության նման մի բան ծռեց նրա արյունոտ բերանը, երբ լցված աչքերով հազիվ նշմարեց Սուրովին, որ այնպես հաջող բռնեց գնդակը։ «Որքա՞ն լավն ես, Սո՛ւրով»,— կցանկանար ասել նա, սակայն գլուխը կապարի ծանրությա՞մբ ընկավ հողին։ Միայն ականջների խշշոցն էր զգում, ծանր, խուլ խշշոցը... Նա չէր լսում նույնիսկ իր անունը, որ տալիս էին հանդիսականները։ Բայց կուզեր վեր կենալ, նայել ընկերներին, մարդկանց, մո՞ւրը... Վերջին անգամ երևացին հարազատները այնպես մշուշոտ, երազի նման...

Հուզմունքն ալիքվեց ծայրից-ծայր։ Հասարակությունը մի մարդու պես ոտքի ելավ։ Նրանց մեջ բարձր կանգնել էր սպիտակահեր մի կին։ Քամին մի կողմ էր շպրտել նրա սև գլխաշորը և ետ մղել մազերը։ Նրա հայացքը դամված էր ընկած մարմնին... Դժվար էր ասել, որևէ բան տեսնո՞ւմ էր նա, տեսնո՞ւմ էր այն հևասպառ քաջքուռությունը, որ պտտվում էր ընկածի շուրջը... Կնոջ հայացքը դեռ, երկար ժամանակ դամվել էր այնտեղ, չնայած ընկածին տեղափոխել էին արդեն...

Եղբը գնալով շիկանում էր։

Ահա դեպի Սուրովն է թռչում գնդակը, նրա ետևից հակառակորդի կենտրոնական հարձակվողը։ Սուրովի ողջ մարմինը պրկվում է լարված աղեղի նման։ Հարվածն ուժեղ է, և գնդակի հետ մեկտեղ ընկնում է և Սուրովը։ Նա գրկել է գընդակը և սարսափած հայացքով նայում շուրջը. «Չե՞մ տա»— կարծես ասում են նրա աչքերը։

Կապիտանը կանգ առավ. միանգամից ասես նրա դեմքի բրոնզը գորշանում է, ձախ աչքը լայնանում, դառնում է մյուսին հավասար։ Հոնքամիջի երակը կապտավուն ուռուցքով տնքում է ծանր ու զարկում մեկ, երկու, երեք...

— Պահի՛ր գնդակը, Անդրե՛յ,— բղավում է մի պատանի անզուսպ ձայնով։

Իրոք, գնդակը սուրում է դեպի դարպասը։ Զայրույթից մոնչում է կապիտանը, նետվում դեպի դարպասը. ուշ է։ Բայց ահա երջանկության մի ճիչ է դուրս թռչում բոլորի բերանից։ Գնդակը դիպչում է դարպասի առջև ընկած Սուրովին և նա գալիս։ Ահա ճարպիկ շարժումով Անդրեյը թռչում է, գնդակին առած՝ վազում առաջ։ Նա տեսնում է միայն գնդակը։ Ուրոր է, կկտրեն իր առջևը, ետևից եկող հնոցն ուժեղանում է. դա հակառակորդի կենտրոնական հարձակվողն է անշուշտ, որ շնչում է իր քունքին։ Առանց երկար մտածելու և առանց կանգ առնելու, մոտ երեսունհինգ մետրից Անդրեյը հարվածում է և... գնդակը հայտնվում է ցանցի մեջ։

Խաղի երկրորդ կեսն իր վախճանին էր մոտենում։ Թշնամու նույն անիմաստ զրոյի կողքին կանգնել էր արդեն պատկառելի մի թիվ։ Կրակված էին հանդիսականները, բայց ավելի ևս խորհրդային ֆուտբոլիստները։ Կիևի դինամոյականները իրենց երկարամյա խաղի ընթացքում երբեք այդքան չէին սիրել իրենց գնդակը... Նրանք կցանկանային, որ այդ խաղը երկարեր, ուրիշ էլ ինչո՞վ կարող էին անգեն վիճակում կռվել մեկ ու կես ժամ, բարոյապես հաղթել, թեև... թեև քիչ հետո չէին տեսնելու իրենց հարազատ երկիրը, իրենց հարազատներին...

Այս արտակարգ խաղն ավարտվեց հինգով զրո։

Գնդակն անուշադիր ընկած մնաց փոշու մեջ՝ թշնամու ցանցում։

5

Ոչ ոք չէր համարձակվում խոսել լռությունը։ Պատմությունը հուզել էր բոլորին, մինչև իսկ իրեն՝ պատմողին։

— Հետո՞,— հարցրեց մեկն անվստահ՝ կարծես լցանկանալով լսել տխուր վերջաբանը։— Ի՞նչ եղան մեր տղաները։

— Նրանց նույն գիշեր տարան քաղաքից դուրս...

Պատմողը նորից լռեց։ Նկատելով ունկնդիրների լարված հետաքրքրությունը՝ նա ուրախ ելավ.

— Ընկան նրանք՝ պաշտպանելով ոչ միայն խորհրդային սպորտի, այլև խորհրդային ժողովրդի պատիվը։

— Իսկ հիմա ո՞ւմ հետ է խաղում Երևանի «Դինամոն»։

— Այժմ մերոնք խաղում են ընկած հերոսների փոխարինողների հետ, որոնց հաջողվել էր էվակուացնել։

Պատմությունն ունկնդրող երիտասարդներն առաջին անգամ էր, որ լսեցին դատավորի սուլիչը։

Խաղն սկսված էր արդեն։

1949, հուլիս

ՏԱՍՆՈՒԹ ԿԱՐԱՏԱՆՈՑ ՔԱՐԸ

Իր շքեղ մենատանը, բազմամարդ գերդաստանի աչքի առջև վերջին օրերն է ապրում Սապֆիրը։ Որդիները չեն գնում աշխատանքի։ Նստած ընդարձակ դահլիճում՝ ծխում են ու լսում։ Հայրը հասկանում է նրանց վիճակը։ Նա ավելի հանդիստ կփակեր աչքերը, եթե իմանար, որ տանեցիներից գոնե մեկը չի մտահոգվում իր մեռնելուց հետո թողնվելիքի շուրջը։ Սապֆիրը լավ է ճանաչում ոչ միայն իր որդիներին ու աղջիկներին, հարսներին ու կնոջը, այլև բոլոր նրանց, ովքեր տեղեկանալով իր անբուժելի հիվանդության մասին՝ այլևս ոտք չեն դնում այդ տունը։

Վարպետ Սապֆիրը այժմ ընդամենը երկու շաբաթվա կյանք է խնդրում աստծուց, որպեսզի բոլորին անխախտ ցույց տա իր ով լինելը։ Նա վաղուց է մտածել այդ անել, սակայն մինչև էլ հետաձգել է, չպատկերացնելով հենց այն հիվանդությունը, որն այժմ բռնել է կոկորդից ու անկողնուն գամել։ Սկզբում շնչարգելություն զգաց, հետո՝ թուլություն։ Իսկ երբ բժիշկների խորհրդով ենթարկվեց մանրազնին ուսումնասիրության, այլևս անկարող էին բուժել։ Մտածելու ու խորհելու ժամանակ չմնաց։ Խորհում է հիմա՝ մեջքն իրար վրա դարսված բարձերին, գունատվող ու հալվող ձեռքերը վիլոմակի վառվռուն երեսի վրա թողած, հայացքն անորոշության մեջ։

Իր կյանքն է շուռումուռ տալիս ակնավաճառ վարպետը, որին Սապֆիր մականունը կպցրեցին ծանոթներն այն ժամանակ, երբ նա նույնիսկ սովորական աչքով կարողանում էր ջոկել ադամանդի տեսակներն ու կարատները, և անտարակելի էր լինում նրա խոսքը։

Նա առանձին կիրք ուներ սապֆիրի նկատմամբ։ Գուցե դրա՞ համար էին այդ անունը կպցրել։

Հետո կինն էլ սկսեց Սապֆիր կոչել։ Այդպես էին դիմում նրան զավակները, իսկ Թոնիկը, որ այդ օրերին, հավանորեն տատի պատվերով, քիչ է երևում, կանչում է «Սապֆիր պապ»։

Դրսում ամպրոպ է, կարկուտ։

Թոնիկը բակ է ելել ու զարմացած նայում է շեղակի սեղացող կարկուտին։ Առաջին անգամ է այդքան ճերմակ գնդիկներ տեսնում։ Կլոր հատիկները զարկվում են գետնին ու ցատկտում աղայի շուրջը։ Սա այդպիսի հատիկներ տեսել է միայն իր պապի սեղանին։ Պապը զգուշորեն շոշափում էր դրանք, պահում սեղանի լույսի տակ, ետ ու առաջ տանում, հետո դնում մի կողմ։ Երեխան երկարել էր ձեռքը մի հատ վերցնելու, պապը խփել էր ձեռքին ու դուրս արել։

Հիմա երկնքից ինչքա՞ն հատիկներ են թափվում...

Երեխան գիտե, որ պապը հիվանդ է, տանեցիները ոտքի թաթերի վրա են ներս ու դուրս անում։ Չեն ծիծաղում։ Նույնիսկ իր փոքրիկ քույրիկը լաց չի լինում։

Թոնիկը որոշում է ուրախացնել պապին։ Խոհանոց է վազում, առնում է մի թաս ու վերադառնալով՝ սկսում է ճերմակ գնդիկներ հավաքել։ Ճիշտ է, սրանք թաց են ու սառը, բայց էլի նման են պապի սիրած գնդիկներին։

— Սապֆի՛ր պապ, տես ինչ եմ բերել քեզ համար։

Եվ թասը մոտեցնում է պապին։ Սա համարյա ոչինչ չտեսնող հայացքով նայում է ամանին, նայում է էլի, լայնացնում է բիբերը՝ մշուշը ցնջելու։

— Որտեղի՞ց վերցրիր,— մարող սպառնալիքով հարցնում է պապը։

— Բակում այնքա՞ն կա։ Ուզո՞ւմ ես՝ էլի բերեմ։

— Բակո՞ւմ,— ոչինչ չհասկանալով՝ մրմնջում է հիվանդը ցամաք շրթունքներով։

Քանի օր է երազն ու իրականությունը խառնվել են՝ կասկածի տակ առնելով վարպետ Սապֆիրի աչքի փորձը։

— Քո գնդիկներից են,— ավելացնում է երեխան։— են որ դու շարում ես սեղանին։

Ցամաք ձեռքը դողդողալով գնում է դեպի ամանը, մատ-

ները շոշափում են փոքրացող թաց հատիկները։ Ժպտում է թոնիկին քարերի հոլակավոր վարպետը. դեռ ոչ ոք այդպես չի խաբել իրեն. փոքրիկն ուզում է կարկուտը մարգարիտի տեղ անցկացնել։

Ի՞արկե, եղել են գոհարավաճառներ, որ փորձել են խաբել Սապֆիրին, բայց իսկույն էլ փոխել են որոշումը՝ զգաստանալով խարվելու վտանգից։ Ուրիշ կերպ վրեժ չեն լուծում ակնավաճառները։

— Գնա՞մ էլի բերեմ։

— Գնա։

Ժպիտը դեմքին է մնացել, թասի մեջ՝ ձեռքերը։

Իսկ վարպետ Սապֆիրը շատերին է խաբել։

Ինչ եղել է, վաղուց է եղել։ Եկավ ամենափորձված ակնավաճառներից մեկը Սապֆիրի մոտ, զգուշորեն ծոցագրպանից հանեց փոքրիկ տուփն ու երկյուղով դրեց նրա սեղանին։ Վարպետն առավ քարը, մի ակնթարթում ոռոգան տարբերից աղամանդից և անտարբեր ձևանալով՝ ետ հրեց։ Հուսահատված հաճախորդը սպասում էր։ Վարպետն անտարբեր՝ ուրիշ խոսակցություն բաց արեց՝ այդ բոպեներին ավելի դցելով քարի գինը։ Խեղճացավ հաճախորդը՝ ինքն էլ կարծես կասկածելով դրա արժեքի վրա։

— Խոսի՛ր, Սապֆիր, ի՞նչ կասես... Երկրի-երկիր եմ ման ածել... էլ չե՞մ կարող...

— Գինդ ասա։

Ու հանդիսատ շարունակեց մոտը եղած քարը հղկել։

Մարդն ասաց գինը։

Մաղրական ժպիտ հայտնվեց վարպետի իրար ոչ նման աչքերում։ Կեռ ու խոշոր քիթը ասես ուզում էր ներդաշնակել այդ աչքերին։ Գունատ ու ցամաք շրթունքները սեղմվեցին հիացական բացականչություն խեղդելով իրենց մեջ։

Եվ էլի իջավ արժեքը։

Հաճախորդն արագ թվարկեց հայտնի ակնավաճառներին, նրանց առաջարկած գումարը։

— Տար նրանց տուր։ Շատ լավ գին են դրել։ Ես իմ ունեցածը չգիտեմ ինչ անեմ։ Դու, ի՞նչ է, ուզում ես սա ազամանդի տե՞ղ անցկացնել։— Նա խոշորացույցը մոտեցրեց

ադամանդին։— Մի տաշվածքին նայիր, կարդին ճերմակություն էլ չունի, ո՞ւր է սրա թափանցիկությունը։

Վարպետը սպիտակ թղթի վրա դրեց քարն ու մատեցրեց տիրոջը։

— Ճիշտ է, տասներկու կարատանոց է, բայց ո՞ւր է սրա 57 տաշվածքը։ Խելո՞ք, դու ոչ առաջինն ես, ոչ էլ վերջինն ես լինելու։ Էս մատներն ադամանդ շոշափելով են մաշվել։

Հետո հուսահատված հաճախորդը վերցրեց իր առաջարկած գնի կեսն ու հեռացավ։

Իսկ Սապֆիրն ամբողջ օրը չպոկվեց քարից։ Եթե մեկը, որևէ մեկն այդ օրը հետևեր նրան, հետևեր նրա յուրաքանչյուր դիմագծին, հանճարեղ դերասան պիտի կարծեր։ Հաճախորդի հեռանալուց հետո, փակելով դուռը, նա, խոր շունչ առնելով հեռացրեց այն մշուշը, որով սովոր էր քողարկել իրեն՝ չմատնելու համար ներքին հրճվանքը։ Հենց այդ հրճվանքը հոգուց ելավ վեր, հետ տարավ այտերի խոր կնճիռները, մաշկը ձգվեց, հազիվ նկատելի դողոցով աչ հոնքը հասցրեց ճակատին։ Երկնագույն աչքերը բացվեցին առավել, արցունքի աղբյուրներից ինչ-որ փայլ ցայտեց ու իրար նման դարձրեց կապույտ աչքերը։ Խոնավ փայլ առան հարթ շրթունքները, ծնոտը լարվեց, ճիպոտի նման լարվեցին և ճակատին մեկնված կնճիռները։ Այդպիսին էր ակնագործի դեմքը, երբ խոշոր, վարդագույն ադամանդը հեռ էր տարել ու նայում էր հեռվից, ներս ընկած արևի խրձի մեջ շուռումուռ տալով քարը... Հետո նա քաշվեց դեպի սավերը։ Մանրը դողով հավաքվեցին աչքի կոպերը՝ ասես թռչող ցոլքերը մի կերպ պահելու համար։ Խորացան այտերի կնճիռները, շրթունքները սեղմվեցին, քթարմատի ակոսները սկսեցին զարկել՝ այդ հազվադյուտ պահին ռիթմ տալով։ Չէ՞, կշտանալ չկար Սապֆիրին։ Նա քարից հոտ քաշեց, շնչեց միայն իրեն հայտնի արբեցնող բույրը, հետո քարի աննման ողորկը դդաց այտին, շրթներին, աչքերին...

Ամբողջ գիշեր նա չքնեց. խաբել էր ակնավաճառին։ Ո՞չ ոքի չասաց, որ ձեռքն էր ընկել վարդագույն ադամանդ, մի քար, որ քիչ ակնավաճառների է հաջողվել տեսնել։

Մի քանի օրից Սապֆիրը մեկնեց արտասահման, եռակի գնով վաճառեց քարը։ Վաճառեց այնպիսի մարդու, որը քա-

քեր հավաքում էր որպես արժեք ու շատ հեռու էր այդպիսի գանձի անբռնելի հաճույքն ղգալուց։

Միայն այդ ավել փողով Սապֆիրն իր շքեղ տունը կառուցեց քաղաքի վերին թաղում։ Այդպիսի տուն շատ քիչ կար այդ թաղամասում, քանի որ միայն Սապֆիրն էր, որ կապ ուներ բազմաթիվ երկրների հմուտ ակնավաճառների հետ։

Երբեմն Սապֆիրը բակ կելներ ու կհիանար դեմը փռված լույսերով, որոնք եթե ո՛չ ադամանդի, գոնե զմրուխտի փայլ էին արձակում։ Իսկ երկի՞նքը... Թող համարձակվեր որևէ մեկն ասելու, թե ադամանդ չէր շաղ եկել այնտեղ։ Օ՜, եթե Սապֆիրը կարողանար մեկ-մեկ ձեռքն առնել, շոշափել, նայել մատիկից, լույսի տակ, սավերի մեջ... Գուցե և մի օր երկարել էր ձեռքը, բայց հետ էր գնացել երկինքը... Աստղերն արդեն ճշմարիտ ադամանդի խաղ ունեն, միայն թե մարդկային ձեռքը չհասնի...

Վարպետի համար ադամանդ է ամեն անհասանելի։

Վաթսուն տարի անընդմեջ նա կյանքը կապել է թանկագին քարերի հետ և էլի երազանքը մնացել է ադամանդը։ Բայց ինչո՞ւ են իրեն Սապֆիր անվանում... Թերևս աչքի գույնի ու փայլի համար... Նրան այդ անունով են ճանաչում ոչ միայն ակնավաճառները։ Եթե վաղը մեռնի, հավանորեն չրարդում այդպես էլ գրեն... Թող այդպես լինի։ Սապֆիրը չի հիշում, թե մայրն իրեն ինչ անունով է կանչել տուն...

— Սապֆի՛ր պապ, էլի՛ բերեցի։

Փոքրիկը հասկանում է, որ բավականություն է պատճառում պապին ու բերում է։

Մարգարիտն էլ գեղեցիկ քար է, միայն խոսել չգիտե,— կարկուտի նոր հատիկները մատների մեջ մաշելով՝ մտածում է վարպետը։ Շա՜տ ազնիվ նյութ է, ափսոս մեռնող է։ Մեռնում է մարգարիտը, քանի որ միակ քարն է բնության մեջ, որ ապրում է, շնչում։ Նա ապրում է այնքան, ինչքան միջահասակ մարդու կյանքն է տևում։ Մեռնում է չշնչելու դեպքում։ Մարգարիտից չհասկացողները թաքցնում են պահարանում, անօդ տարածության մեջ, և մի օր էլ սկսում է խամրել քարը, սևանալ ու... մեռնել։

Մարգարիտը միայն մի՛ տեղ ունի, որպեսզի ապրի, գեղեցկանա, գեղեցկացնի, կնոջ պարանոցը։

Այդպիսի մի չքնաղ պարանոցի Սապֆիրը կապել է մարգարտաշար։

Այդ էլ է պատմություն դարձել վարպետի համար, որովհետև այդ կնոջը միայն այդ օրն է հանդիպել։ Միակ շռայլությունը, որ նա թույլ է տվել իրեն ամբողջ կյանքում և ամբողջ կյանքում էլ այդպիսի շքեղ պարանոց նա չի տեսել։

Սապֆիրին առաջին անգամ փորձել է խաբել մի հրեա մարգարտավաճառ՝ կեղծը բնականի տեղ անցկացնելու մտադրությամբ։ Ուրի՞շ է Սապֆիրի հոտառությունը։ Կռահել է ինչ-որ, ծանր ու թեթև է արել ու կոտրել հատիկներից մեկը, ապա հարձակվել է մարգարտավաճառի վրա, օձիքից բռնած քաշել սենյակի խորքը.

— Գլուխդ էլ կփշրեմ այս հատիկի պես, եթե չբացես գաղտնիքը։ Քո մարգարիտը ոչ իսկական կեղծ է, ոչ էլ մաքուր բնական։

Վախեցել է հրեան Սապֆիրի վառվող աչքերից և շունչը տեղը բերելով՝ պատմել, որ այդ գաղտնիքը ճապոնացիների ձեռքին է։

— Այնպես որ սա կիսաբնական է համարվում և պակաս արժեք չունի,— իրեն կարգի բերելով խոսքն ավարտել է հրեան ու հեռացել։

Դրանից հետո Սապֆիրին ոչ ոք չի մտածել խաբել։

— Պա՛պ, էլի՛ բերեցի,— շարունակում է երեխան՝ ամենակեղծ մարգարիտները գնելով վարպետի առջև։

— Բավակա՛ն է,— սառած մատները իր քաշելով՝ խրոպոտ ասում է ծերունին։

Ա՜յ, այսպիսի մատներով հեշտությամբ կարող է խաբվել։ Չէ՞, մեռնելուց առաջ նա պետք է ամեն ինչի բնականը տեսնի։

Իհարկե, խոսքը միայն թանկարժեք քարերին է վերաբերում, այն, որ չափվում է կարատով։ Սապֆիրի աշխարհը քարն է, քարերի փառքը կազմող ադամանդը։

Այդպես էլ չհաջողվեց Սապֆիրին տասներկու կարատանոցից խոշոր քար շոշափել։ Նա գիտե, որ աշխարհի ամենամեծ ադամանդը անգլիական Վիկտորիա թագուհու թագի վրա է գտնվում. 560 կարատանոց ակ։ Խենթանալ կարելի է դրա շքեղությունից։ Ա՜խ, մի անգամ միայն Սապֆիրը կարողա-

նար տեսնել, ափի մեջ առնել այդ քարը, էլ մահ չէր լինի նրա համար։

Նա լսել է, որ 98 կարատանոց մի քար էլ իշխան Օլովն է տվել Եկատերինա թագուհուն՝ նրա սիրտը նվաճելու համար։ Գուցե և նվաճել է։ Այդպիսի քարով ինչ՞ը չի կարելի անել։

Սապֆիրը գիտե նաև ընտանիքներ, որոնք հալածվել, երկրե-երկիր են թափառել, կյանքը են կորցրել այդպիսի քարի համար։

Հենված բարձերին, խամրող հայացքով սպասում է վարչերը։ Քունքերում ադամանդի կրակներ են վառվում։ Մարգարիտի միլիոնավոր հատիկներ են փայլփլում շուրջը, ասես բանկանալով սթափեցնել վարպետին։

«Կե՛ղծ են, կե՛ղծ են,— մրմնջում է նա։— Չե՛ք խաբի... Դրանց մեջ կյանք կա՞... Նայեմ... օդի մեջ չես պահել, սրիկա՛, օ՛դ է հարկավոր մարգարիտին... Հապա ո՞ւր ես այդքան թանկ տալիս... Օ՛դ տուր, մա՛ռդ...»։

Կինը պատուհանն է բացում և հեռանում թաթերի վրա՝ ներս թողնելով սակավացող կարկուտի շառաչը։ Սապֆիրն է պատվիրել. ոչ ոքի ներս չթողնել։ Նույնիսկ բժիշկ հարկավոր չէ։ Նա չի ուզում որևէ դատարկ բանի վրա ժամանակ կորցնել։ Հարկավոր է վայելել սեփական մտածումները...

Երբեմն նա նայում է վարագույրներին. ծալվածքներում, փոթերի արանքը սապֆիրի կապույտ ցոլքեր կան։ Բայց, ցնորամենայնիվ, ինչո՞ւ են իրեն Սապֆիր անունը կպցրել, երբ աշխարհում բարձրագույնն ադամանդն է...

Շարժվում են հարսները, որդիները, կինը։ Բոլորն էլ սավերներ են դառել ու անհետանում են սավերների պես։ Չէ՞, նրանք անպայման թողնելիքն են մեջ-մեջ անում։

Սապֆիրը կատաղում է մահվան դեմ։

Ինչ-որ քչփչոց է լսվում դռան հետևում։ Հետո կնոջ խիստ ձայնն է լսվում.

— Նա ծանր է։

Ո՜չ, ադամանդի կարծրություն ոչ մի նյութ չունի։ Նրանով են տաշում և՛ ադամանդը, և՛ մյուս բոլոր թանկարժեք քարերը...

— Ես նրան անպայման պետք է տեսնեմ,— համառում է

ադամարդու ձայնը։— Իմացա, որ հիվանդ է, եկել եմ տեսնելու Թեկուզ վերջին բոպեին՝ պիտի հանդիպեմ։ Նա ի՞նձ է սպասում։

Սապֆիրի ականջին ծանոթ է գալիս ձայնը, թեև լսել է տասնյակ տարիներ առաջ...

— Ե՞րբ։

— Մի՛շտ։ Բան եմ բերել։

— Բայց նա ոչինչ չի հասկանա,— պնդում է կինը։

— Բերածիցս կհասկանա...

Եվ մարդը ներս է մտնում, առաջանում է ու կանգնում մահճակալի առջև։ Դեմքը չի ջոկվում։

— Սապֆի՛ր, բա՛ց աչքերդ... Այնպիսի՛ ադամանդ եմ բերել, որի նմանը չես տեսել կյանքում։

Վարպետն ավելի է լարում տեսողությունը։ Տանջվելիները հավաքվում են ու կիսաշրջան բռնում։

Մի ձեռք է առաջանում։ Երկու մատների մեջ մի խոշոր ադամանդ է կայծկլտում։ Սապֆիրը կկոցում է արցունքոտվող աչքերը, բացում է ավելի։ Քարը մոտենում է առավել։ Բաց երկնագույն ցոլքերը խուտուտ են բերում հիվանդի ոչ միայն աչքերը, այլև քիմքը, քներակները։ Կենդանությանն շունչ է գալիս քարից։

— Տասնութ կարատանոց է,— հազիվ արտաբերում է վարպետը։

Նա չի էլ նայում քարի տիրոջը։ Ի՞նչ կարևոր է, թե ով է բերողը։

— Ճի՛շտ որոշեցիր, Սապֆիր, տասնութ կարատանոց է ու նոր եմ բերել Երուսաղեմից։

— Թող մի լա՛վ նայեմ,— և դողդոջ ձեռքն առաջ է երկարում. քարն առնում է մատների մեջ։— Ճիշտ տասնո՛ւթ կարատանոց է... Ի՞նչ գեղեցկություն։

Առաջին անգամ քարերի հոչակավոր վարպետը չի կարողանում անտարբեր ձևանալ, ետ մղել ադամանդը... Դրա ժամանակը չէ, թռչում են բոպեները։ Կթռչի և այդ քարը... Նա նայում է կլանված, կենդանացող, վառվող աչքերով։ Ասես կրակի կտոր դարձած՝ քարը մատների ծայրից անցնում է արյան մեջ, լցվում սիրտը։ Ինչ-որ այրոց է զգում կոկորդում, խանգարվում է շնչառությունը... Հարազատները կամ-

կամած նրան են հետևում։ Իսկ սա, ամեն ինչ մոռացած, մոռացած նույնիսկ դարանամուտ մահը, տնտղում է քարը հմայված, տանում է հեռու, շուռումուռ տալիս, մոտեցնում է դիմքին, քսում այրվող շրթունքներին, շնչում է, կիսափակում է աչքերը ու վայելում՝ քարի ներկայությունը։ Հետո առաջ է հակվում, լայն բացում է աչքերն ասես ջանալով գոնե մի քանի բոպեով հետաձգել մահը՝ ադամանդը անսխալ որոշելու համար։

— Ա՛ռնս վկա, ադամանդ է հիսունյոթ տաշվածքով, այն էլ տասնութ կարատանոց,— շշնջում է վարպետը։— Ես սպասո՛ւմ էի սրան... Ամբո՛ղջ կյանքում եմ սպասել... Մի տեսնք, թե ի՞նչ տաշվածք ունի... Վաճառո՞ւմ ես...

— Վաճառում եմ։

Մերձավորները վախով հետևում են վարպետին. մի՞թե ուզում է գնել... Հավանորեն, որովհետև Սապֆիրի դեմքը շողում է ոգևորությունից, երեսից անհետանում է մահվան խավը ու կենդանություն է առնում այն...

Կինն անհանգիստ շարժում է անում. ի՞նչ է լինելու հիմա...

— Դի՛նդ ասա։

Ասում է։

Առաջի՛ն անգամ չի սակարկում վարպետը։

— Տալի՛ս եմ։ Ա՛յ կին, բեր սապֆիրն տուփը... Ինչքա՞ն եմ սպասել սրան... Հիմա արդեն էլ չե՛մ մեռնի... Կի՛ն, շո՛ւտ արա...

Կինը շփոթված՝ շուրջն է նայում, աղերսող հայացքը պահում է ամուսնու վրա։ Նա գիտե, որ վարպետն ինչ-որ խոշոր գումար է առանձնացրել, բայց ո՞ւմ է բաժին դառնալու, մինչև հիմա չեն որոշել։ Եվ հիմա այդ քարը...

— Չես տեսնո՞ւմ, զառանցում է։ Վերցրո՛ւ քարդ ու գնա,— դուսպ բարկությամբ ասում է կինը՝ հայացքն ակնավաճառին։— Ասում եմ՝ վերցրու ու գնա՛։

— Չեմ զառանցում, կի՛ն։ Ես հիմա կարող եմ անգիր ասել իմ թողած կտակը։ Բեր սապֆիրն տուփը... Ես այնտեղ եմ պահել այս քարի գինը...

Նա չի խոստովանում, բայց մտքում ասում է, որ քանի՞-քանիսին է խաբել, որպեսզի ճիշտ վճարի ա՛յս քարի արժեքը։

— Սրա մեջ կյա՞նք կա... Քանիսի կյանքի դիմաց են այսպիսի ագամանդով վճարել պետությունները...

Շարժվում են նաև որդիները։ Իսկ Սապֆիրն իրենն է շարունակում։ Ամբողջ կյանքում նա կարդին չի զրույցել հարազատների հետ։ Նրա զրույցը, հարց-պատասխանը եղել է քարերի հետ։ Իսկ հիմա ուզում է մարդկանց հետ խոսել, կարո՞ղ են արդելել...

— Գրիբոեդովի կյանքի դիմաց պարսից շահը այսպիսի մի քար է տվել ռուսական ցարին, որպեսզի լռեցնի նրան... Տվել է, մտքով չանցկացնելով, որ ցարը մտադիր էլ չի եղել բողոքելու։ Եվ հաշիվը դրանով էլ փակվել է... Ի՞նչ ես կանգնել, կի՛ն, ուզում եմ ապրե՛լ... Եվ ո՞վ չի ուզում ապրել... Բե՛ր սապֆիրն տուփը...

Մահամերձի կամքն օրենք է։ Վախն ու ակնածանքն ստիպում են ներկաներին ենթարկվել։ Կինը դժվարությամբ է հարևան սենյակից բերում սապֆիրով ակնապատված տուփը։ Վարպետը փնտրում է բարձի տակ և մի շատ փոքր բանալի հանում։ Դողդողացող ձեռքերով բացում է տուփը և նույն դողդոջ մատներով սկսում է հաշվել գումարը։

— Մ՛որդ, շա՛տ ես տալիս,— չդիմանալով այլևս՝ ազերսանքով հանդիմանում է կինը։

— Կյանքի համար շատ չկա՛։ Վերցրո՛ւ, եղբայր, շնորհակա՛լ եմ։ Հանգստացրիր...

Ակնավաճառն առնում է գումարն ու ասում.

— Հիշո՞ւմ ես վարդագույն ագամանդը, նրա փոխարեն եմ բերել։ Ես էլ ամբողջ կյանքում այսօրվան եմ սպասել... Երկա՛ր ապրես, Սապֆիր...

Բոլորը դառնացած ու ներքին ցասումով են հետևում հեռացողին։ Վարպետին ուշ է հասնում ակնավաճառի խոսքը։ Հասնում է այն ժամանակ, երբ այլևս ոչինչ չէր կարելի անել... Ոչինչ չէր կարող ասել...

Երբ շրջվում են տանեցիները, մնում են սառած. աչքերը լայն բացած՝ վարպետ Սապֆիրը նայում է փակ բռանը։ Հիմա արդեն նրա աչքերը փայլում են անկենդան քարի պես։ Նա այլևս անընդունակ է ասելու, որ քարերի հուշակավոր վարպետի ափի մեջ առաջին անգամ կամաց-կամաց սառչում է կենդ ագամանդը, ինչպես թոռան բերած կարկուտի հատիկները, որոնք չեն չափվում որևէ կարատով։

ՏԱՆՁԵՆՈՒ ՈՍՏԸ

Վաղուց չէի հանդիպել բարեկամիս, հանրահայտ մարդաբան Միխայիլ Միխայիլովիչ Գերասիմովին։ Նրա հետ լաբիրինթոսանց հետաքրքիր էին անցնում զրույցները։ Ամեն հանդիպելիս նոր գործ էի տեսնում ձեռքին։ Աշխատասենյակը շատ ավելի արձանագործի արվեստանոցի էր նման։ Պատվանդանների վրա մարմնավորվում, ասես կենդանություն էին առնում դարեր առաջ մեռած գնացածների գանգերը։ Պրոֆեսորը երկար զրուցում էր ձեռն առած գանգի հետ, հարցեր էր տալիս։ Նրանք, այդ գանգերի տերերը, պատմում էին իրենց հաղթական ճակատամարտերի, հոգեկան ընդվզումների ու տառապանքների, հզոր կամքի ու համառության մասին, որոնցով նվաճել էին իշխանություն ու համբավ դրացի երկրների համար... Եվ բոլոր այդ պատմություններն իրենց կնիքն էին դնում դեմքի այս կամ այն հատվածի վրա, մկանների կծկումներ առաջացնում, սեղմում էին շրթունքները, ծնոտն էին դարձնում հաստատուն, քունքերը սեղմում էին երկու կողմերից, ճակատի լայնքով լարված կնճիռներ ձգում, հայացքը դարձնում համարձակ ու սեհռուն... Եվ այդպես դառնում էին Լենկ-Թեմուր, Մանամախ, Իվան Ահեղ...

Միխայիլ Միխայիլովիչը մեզ ընդունում էր ճաշասենյակում, որը միաժամանակ իր աշխատասենյակն էր։ Պատին կպցրած բաց դարակների վրա շարված էին լինում վերականգնված ամենատարբեր գանգեր։ Սեղանի մի անկյունում կավի շաղախն էր, կողքին՝ գործիքներ և չբացահայտված, անհայտ գանգեր։

Երբեմն հարևան սենյակից այդտեղ էր խուժում Թոռնիկը և մատը մեկնելով մի գեղեցիկ գլխի՝ կրկնում էր.

— Սի՛լլերը, Սի՛լլերը։

Պրոֆեսորն իր դարակում պահում էր նաև գերմանացի մեծ գրողի՝ Շիլլերի դիմակի կրկնօրինակը։

Երբ այցելում էի, Միխայիլ Միխայիլովիչը ինքն էր սիրով թեյ մատուցում։

Երբեք դուստր ունեին Գերասիմովները, որոնք ապրում էին ծնողների մոտ՝ ոչնչացնելով երբորդ սենյակը։

Վերջին անգամ պրոֆեսորին այցելեցի երեք տարի առաջ։ Մեծ ընդմիջումից հետո։ Սովորականից տխուր ու թառամած էր այդ օրը. չէր ծիծաղում, չէր սրամտում։ Առաջացած տարիքին վերագրեցի։ Նեղ աչքերի մեջ չկար նախկին չարաճճի արտահայտությունը։

Մինչև թեյը սեղանին կդրվեր, մոտեցա պատից կախված դարակներին. ի՞նչ նոր գործեր էր ավելացրել պրոֆեսորը եղածների վրա։ Ցմռռանամ ասել, որ աշխատանքից դուրս ժամերին նա սիրում էր փայտից գեղեցիկ արձանիկներ քանդակել։

Այս անգամ ուշադրությունս գրավեց փղոսկրի նման ողորկ ու թեթև ճերմակ տանձենուց քանդակած դեռատի մի աղջիկ։ Գործն անավարտ էր։ Մաքուր փայտի վրա՝ կրծքին մի փոսիկ կար բացված։

— Ինչո՞ւ են գնդակահարել այս աղջկան, այն էլ ուղիղ սրտին,— կատակով հարցրեցի ես։

Պրոֆեսորը հավանորեն չլսեց հարցս. թեյ լցնելով էր զբաղված։ Նստեցինք։ Զրույցը չէր ստացվում։ Ոտքի ելա։ Աղջիկները հավաքվեցին։

— Իսկ ո՞ւր է Անտոնինան,— հարցրեցի ես՝ աղջիկների մեջ չտեսնելով նրան, որ ապրում էր այդ տանը փոքր հասակից՝ ծնողներին կորցնելու հետևանքով։ Չորս տարի առաջ մի կատարյալ գեղեցկուհի էր դարձել Անտոնինան։— Չլինի՞ արդեն գնացել է։

Աղջիկները հայացքները փախցրեցին հորից։ Սա այնպես նայեց շուրջը, ասես պիտի ցույց տար, թե որտեղ է Անտոնինան։

— Նստի՛ր, բարեկամս,— ասաց նա՝ ցույց տալով իմ աթոռը և ինքն էլ նստեց։— Քո հարցին հնարավոր չէ մի բառով պատասխանել։

Տանտիրուհիներն աննկատ քաշվեցին հարևան սենյակը։ Պրոֆեսորը ետ հրեց բաժակն այնպես, ասես դա կարող էր նեղություն պատճառել իրեն։ Հաղաց։ Գիրուկ մարմինը հարմարեցրեց աթոռին։ Շունչ առավ։

— Ես գիտեի, որ հարցնելու էիր Անտոնինայից։ Ինչպե՞ս կարելի է չնկատել նրա բացակայությունը։ Այնքա՞ն էր գեղեցկացել, որ վախով էինք նայում վրան. ահա ուր-որ

կհայտնվի մի փեսացու և կտանի մեր Անտոնինային։ Բոլորն էլ համոզված էին, որ մեր շորրորդ դուստրն է նա։ Հաճախ էի մտածում քանդակել նրան, քանի չէին տարել. բարեձև մարմին ուներ, համաչափ, դասական։ Բայց մեկ էլ ներքին ինչոր վախ ունեի. եթե քանդակեմ, իսկույն կարող են նրան բաժանել մեզնից։ Ու հետաձգում էի։

Նա հլավ տեղից, մի երկու անգամ ետ ու առաջ արեց անկյունից-անկյուն, փափլիկ ափերը տրորեց ու կանգնեց սեղանի առջև։ Տխուր ժպիտ երևաց երկարուկ ու նեղ աչքերում։

— Մի օր էլ տուն եկավ արտակարգ ուրախ, համբուրեց բոլորիս. հասկացա հայրական զգացումով՝ գալիս էր ժամադրությունից։ Այդ գիշեր արդեն հաստատ որոշեցի քանդակել նրան։ Եվ հաջորդ օրը, աշխատանքից հետո սկսեցի։ Նախօրոք, հենց այդ նպատակով, տանձենու մի հիանալի կտոր էի ճարել, այնպիսի կտոր, որի վրա անգամ մի բիծ չկար. առողջ էր, մաքուր ինչպես Անտոնինայի մարմինը։

Գործն արագ էր առաջ գնում։ Փայտը տաշվում էր հոյակապ։ Աշխատեցի այնքան, մինչև ես էլ հոգնեցի, ինքն էլ։

— Այսօր այսքանն էլ բավական է,— ասացի։— Առավոտյան էլ կուրծքը կհղկեմ և վերջ։

Անտոնինան նայեց քանդակին երկար, հմայված։

— Ինչ գեղեցի՛կ է, Միխայիլ Միխայիլովիչ։ Ուղղակի ստեղծագործել եք։

— Ամեն ինչն է բնության մեջ ստեղծագործված, աղջիկս։ Իսկ նա չէր հանգստանում և հարցեր էր տալիս.

— Որտե՞ղ եք դնելու իմ արձանիկը։

— Միայն Շիլլերի կողքը։ Դու պակաս գեղեցիկ չես։

— Ուրեմն մեռած-գնացածների կողքի՞ն պիտի լինեմ,— կատակով շրթունքներն ուռեցրեց նա։

— Ինձ համար նրանք ողջ են։

— Ձե՛զ համար...

— Ճանաչողների համար։

Իսկ ես արձանիկից չէի ուզում բաժանվել։ Անընդհատ կրկնում էի.

— Ի՜նչ հիանալի փայտ է, Անտոնինա, հազվագյուտ մաքրություն ունի։

Չգիտեմ, գիշերվա ո՞ր պահն էր, երբ արթնացանք մեծ աղջկա տագնապալից ճչոցից.

— Վե՛ր կացեք, Անտոնինան շա՛տ վատ է, հարկավոր է շտապ օգնություն կանչել։

Անմիջապես վազեցինք նրա մոտ։ Տե՛ր աստված, ինչ էր կատարվում խեղճ աղջկա հետ. շնչահեղձ էր լինում, դեմքը ծածկված էր սառը քրտինքով։ Զանգահարեցինք շտապ օգնություն։ Անտոնինան չէր կարողանում պատասխանել հարցերիս. ի՞նչ էր պատահել, որտե՞ղն էր ցավում, թունավորվա՞ծ է, ի՞նչ է կերել քնելուց առաջ... Այնքա՜ն բարձր էր տրամադրությունն ինձնից բաժանվելիս...

Շտապ օգնության մեքենան նրան խիստ հիվանդանոց փոխադրեց՝ նախօրոք վերցնելով մեր հեռախոսի համարը։

Պրոֆեսորը մի կում թեյ խմեց։ Զգում էի, որ նրա համար չափազանց դժվար էր խոսքը շարունակելը, բայց առավել դժվարը հիմա լռելն էր։

Նա ելավ տեղից, բացեց վերնաշապկի վերին կոճակը։ Թաշկինակով մաքրեց ճակատը։ Այլևս ինձ չէր նայում, ինձ չէր տեսնում։ Թերևս մտովի այն պահի մեջ էր, ուր տեղի էին ունենում դեպքերը։ Նորից նստեց։

— Մինչև լույս չհանգստացա։ Տամարա Սերգեևնան աղջիկների հետ փակվել էր այն սենյակում և աշխատում էր խեղդել տագնապը։ Ես քայլում էի՝ ականջս հեռախոսին։ Ժամանակը սպանելու համար ձեռքս առա անավարտ արձանիկը։ Միևնույն է, չէի քնելու։ Ախր ես կանխազգում էի, որ եթե քանդակեմ Անտոնինային, պիտի բաժանվենք նրանից... Բայց հիմա էլ ցանկացա ավարտել արձանիկը։ Չէ՞ր կարելի կիսատ թողնել։ Եթե կիսատ մնա, Անտոնինան կարող է չվերադառնալ...

Դա ի՞նչ սնահավատություն էր, չգիտեմ։ Եվ սկսեցի ամենայն բարեխղճությամբ շարունակել գործս։ Արդյոք, կավարտե՞մ մինչև գանգը։ Եվ կուրծքը հարթելիս հանկարծ մի մուգ շրջանակ նկատեցի ձախ կողմում։ Սկսեցի քերել այդ շրջանակը։ Սակայն անհայտանալու փոխարեն ավելի էր մգանում։ Հետո գլխի ընկա, որ կրծքի այն մասում, ուր սիրտը պիտի լիներ, փոքրիկ ոստ կար,— նա գնաց ու բերեց դարակում դրված անավարտ արձանիկը— ես այնպիսի՞ զգուշությամբ սկսեցի հանել ոստը, ինչպես միայն սրտի վիրահատությունը կարելի է անել։ Հանեցի ոստը և տեղը ահա այս անցքը մնաց, որ փչացրեց արձանիկը։ Հենց այդ բոպեին էլ լսվեց հեռախոսի զանգը։ Ցնցվեցի ողջ մարմնով։ Վախեցա մոտենալ։ Լսափողը վերցրեց Տամարա Սերգեևնան։

— Հիվանդանոցի՞ց է,— հազիվ մրմնջաց նա, հետո լսեց ինչ-որ ու ընկավ աթոռին։

Ամեն ինչ պարզ էր։ Տամարա Սերգեևնան հազիվ զսպած իրեն՝ մոտեցավ ինձ, նայեց ձեռքիս արձանիկին ու փղձկաց.

— Սա ի՞նչ բան է, Մի՛շինկա... Անտոնինան... Անտոնինան սրտից...

Պրոֆեսորը ծածկեց դեմքը։ Մի քանի բոպե նա կուլ էր տալիս հուզումը։ Ապա հեռացրեց ձեռքերն ու շեշտակի դաբձով ինձ.

— Դե՛, բարեկամս, ի՞նչ կասեք սրան, ի՞նչ կանվանեք այս բոլորը. զուգադիպությո՞ւն... Այսպիսի զուգադիպություն հնարավո՞ր է բնության մեջ... Լռում եք, չէ՞։ Ես մարդաբան եմ և իմ գիտության մեջ չկա՛ այդ հարցի պատասխանը։

Ես հեռացա խորապես ընկճված։

Երկու տարի անց մահացավ պրոֆեսորը։

Այսօր էլ նրա աշխարհահռչակ գործերի կողքին պահպանվում է Անտոնինայի արձանիկը, որի կրծքին մի անձնատկերտ փոսիկ կա, ոստի փոսիկը։

11. 8. 73
Սևան

ՄԻ՞ԹԵ ԻՆՁ ՉԵՍ ՀԻՇՈՒՄ, ԴՍՏՐԻԿՍ...

Մանկապարտեզում անհրաժեշտ կարգադրություններ անելուց հետո նոր էի կաբինետ մտել, երբ դուռը թակեցին։ Ներս հրավիրեցի։ Շեմքում հայտնվեց երեսունն անց, բարձրահասակ, հազվագյուտ հետաքրքիր դեմք-դիմագծով մի տղամարդ, որ բռնել էր ձեռքը հավանորեն վեց տարեկան աղջկա։ Հոր կրկնությունն էր կարծես. փարթամ էր, հարուստ ու սև

մազերը երկար հյուսեր էին արված, հագել էր ճաշակով։

— Ներեցե՛ք,— ասաց աղամարդը։ Ես աֆոռ առաջարկեցի։— Մենք Թբիլիսիից նոր ենք Երևան տեղափոխվել։ Ապրում ենք այստեղից երկու շենք ցած։ Աշխատում եմ օդանավակայանում. օդաչու եմ։ Խնդրում եմ դստրիկիս ընդունել նախադպրոցականների խմբում։ Գիտեմ նաև, որ տեղ չունեք... Խնդրում եմ։

Չափազանց կիրթ առոգանությամբ էր խոսում։ Մեզ համար միշտ էլ հաճելի է եղել այդպիսի ընտանիքի և առանձնապես այդպիսի երեխայի հետ շփվել։

— Կարո՞ղ եք վաղը փաստաթուղթ բերել ձեր և ձեր կնոջ աշխատավայրից վարձի համար։

— Ես կին չունեմ,— զուսպ պատասխանեց նա՝ մոտ քաշելով երեխային։

— Ներեցեք... Այն ժամանակ ձեր աշխատավայրից։ Հենց վաղն էլ երեխային կարող եք մանկապարտեզ բերել։ Միայն դո՞ւք եք տանել-բերելո՞ւ։

— Միայն՝ ես։ Եվ ընդհանրապես ուրիշ ոչ ոքի չվստահեք, խնդրում եմ։

— Անունդ ի՞նչ է, բալիկս։

— Կարինեկ,— քնքուշ ասաց աղջիկը՝ չքնաղ աչիկները հազիվ բարձրացնելով։

— Կարինե Տիգրանի Մովսիսյան,— լրացրեց հայրը՝ ուղղելով դստրիկի ժապավենը։ Հետո հազիվ նկատելի ժպիտով շնորհակալություն հայտնեց, ու գնացին։

Երկար ժամանակ աչքիս առջև էին հիանալի երեխան, հայրը՝ իր բարեկիրթ վերաբերմունքով, որպիսիք այնքան էլ շատ չեն հանդիպում մեր միջավայրում։ Ի՞նչ դիպվածով կարող էր կնոջը կորցրած լինել։ Ո՞վ գիտե բնության չար կատակները...

Ամիսներ անցան։ Ամեն առավոտ հայրը, երեխայի ձեռքը բռնած, բերում էր մանկապարտեզ։ Միշտ էլ զեղեցիկ ու կոկիկ էր հագնված լինում Կարինեն, երկար մազերը խնամքով հյուսված ու կապված էր լինում արդուկած ժապավենով։ Հայրը միշտ սառուցում էր նրա թաշկինակը, գոգնոցը, համբուրում էր դստրիկին ու աշխատանքի մեկնում։ Մի բան էր

միայն պակասում փոքրիկին. անհոգությունը, անզուսպ ծիծաղը։ Մյուսների պես չէր վազվզում։ Աչքերում հեռու-հեռավոր թախիծ էր նշմարվում։ Խելացի էր Կարինեն ու ինքնամփոփ։ Հաճախ անջատվում էր ընկերներից, քաշվում էր փողոց նայող պատուհաններից մեկի մոտ ու երկար ժամանակ ոչինչ չտեսնող հայացքը թողնում դրսում։ Զրույցների ու խաղերի ժամանակ իմանում էինք, որ հայրն ամեն քնելիս հեքիաթներ է կարդում նրա համար, շաբաթ կամ կիրակի տիկնիկային թատրոն կամ զբոսայգի է տանում։ Հաճախ նրա դաստիարակությունն օրինակ էինք բերում ժողովների ժամանակ։ Բոլորս հատուկ հարգանք ունեինք Տիգրան Մովսիսյանի նկատմամբ։

Դարուն էր։ Սաղկել, փթթել էր մանկապարտեզի բակը։ Երեխաների ազատ խաղերն անց էինք կացնում հենց պարանգում։ Դաստիարակչուհիներին հավաքած շուրջ՝ հանձնարարություններ էի տալիս, երբ բոլորս, ասես ինչ-որ ներքին մղումով, շրջվեցինք դեպի փողոց տանող ռոնուղին և մի պահ մնացինք կարկամած. հրաշք գեղեցկության տեր մի երիտասարդ կին էր գալիս մեր կողմը։ Բարձրահասակ էր, նրբակազմ, հպարտ կեցվածքով։ Սանրվածքը մոդային էր։ Նուրբ մաշկ ուներ ու սրա ֆոնի վրա թարթիչները սև թավշին էին խփում։ Հագնված էր մուգ կերպասե շոր, որն ընդգծում էր մարմնի բարեձևությունը։ Ակամա շշնջացի.

— Կարինեի մայրն է...

Մոտեցավ մեզ անհամարձակ և հարցրեց այնպիսի քնքուշ ձայնով, ասես շարունակությունը երդ պիտի լիներ.

— Ներեցեք, ո՞վ է մանկապարտեզի վարիչը։

Ես ոտքի ելա։ Կաբինետ մտանք։ Նա հուզված էր և կարծես դժվարանում էր սկսել խոսքը։ Պայուսակը բացեց ու մի դրություն մեկնեց ինձ. մեր վերադասից էր. առաջարկում էին Կարինե Մովսիսյանին տալ մորը՝ Նատա Մովսիսյանին։

Դրությունը ես գարձրի.

— Կներեք, այդ բանը ես չեմ կարող անել։ Խնդրում եմ հիշտ հասկանալ ինձ։ Ես գնահատում եմ մայրական զգացումը, բայց այդպիսի բան երբեք չեմ անի։

Խոնավ աչքերն ապշանք արտահայտեցին։ Նա այդպես էլ էր չքնաղ ու չափազանց նման Կարինեին։

— Ինչպե՞ս, դուք հրաժարվում եք ձեր վերագասի կարգադրությունը կատարե՞լ։

— Ներեցեք, տիկին, երեխային վերաբերող հարցերը կարգադրությամբ չեն լուծվում։ Այո՛, հենց այդպես։ Երբ խնդիրը վերաբերում է երեխային, ես առաջնությունը տալիս եմ իմ զգացումին, իմ իրավունքին որպես մանկավարժ։

— Բայց ես պահանջում եմ ի՛մ հարազատ երեխային։

Դրա ձայնն այլևս չէր հնազանդվում։

— Միևնույն է, ոչինչ չեմ կարող անել։ Կարինեն հայր ունի, նա է ամեն օր տանում և բերում։ Զգուշացրել է նաև, որ երեխային ոչ ոքի չվստահենք։

— Բայց ես ոչ թե ուրիշ որևէ մեկն եմ, այլ երեխայի մա՛յրը, ինչպե՞ս չեք հասկանում։— Գեղեցիկ աչքերն այլևս անզոր էին պահելու արցունքները։ Նա հանեց թաշկինակը ու աչքերին սեղմեց, հետո նարը ու կիրթ շարժումով չորացրեց նաև հագիվ նկատելի աղվամազ բեղիկները։ Ամեն կերպ դեռևս չանում էր զսպել իրեն։— Հինգ ամիս է չեմ տեսել Կարինկային... Հինգ ամիս փնտրել եմ նրան... Հինգ ամիս է կորցրել եմ քան ու հանգիստ... Բաժանվելուց հետո առնել երեխային և այսպես դռդռնի փախչել քաղաքից... Ի՞նչ իրավունքով։— Նա այլևս ուժ չուներ պահելու արցունքները։— Խնդրո՛ւմ եմ, դուք էլ մայր եք, հասկացեք իմ վիճակը... Միևնույն է, ես չեմ կարող հեռանալ առանց Կարինկային տեսնելու...

Նա նստեց։ Ջուր տվեցին։ Կանչեցի դաստիարակչուհուն.

— Զանգահարեք օդանավակայան, Տիգրան Մովսիսյանին խնդրեք, ասացեք, թող հենց հիմա մանկապարտեզ գա... Դուք էլ մեզ հասկացեք, տիկին, առանց հոր համաձայնության, մենք ոչինչ չենք կարող անել։ Իրավո՛ւնք չունենք։ Երեխա է, երեխայի հոգեկան աշխարհ... Մի անզգույշ քայլ և հավերժորեն չենք կարող ուղղել այդ շարաբաստիկ սխալը...

Դաստիարակչուհին ուզում էր դուրս գալ, երբ մի տաքսի անախորժ արգելակով կանգնեց իմ պատուհանի տակ։ Ապա հեռապատ ու սարսափած ներս ընկավ ինքը՝ Տիգրան Մովսիսյանը։ Տեսնելով կնոջը, շունչ առավ ու ներողություն խնդրեց առանց նախազգուշացնելու ներս խուժելու համար։

— Ես իմացա, որ այստեղ կլինես,— հազիվ արտաբերեց նա։

Դրա համար էլ շտապեցիր խանգարելու,— ամուսնուց էլ ավելի շրջելով՝ ասաց կինը։— Ո՞ւր է Կարինկան, ինչո՞ւ ես փնտրել... Դու հասկանո՞ւմ ես, թե ինչ ես արել...

— Իսկ երբ ավելորդ քայլ էիր թույլ տալիս, չէի՞ր մտածում նրա մասին,— սառը առնով հարցրեց ամուսինը, ապա լրջանալ էլ ավելացրեց, տեսնելով, որ մենակ չենք։— Բայց այդ մասին հարմար չէ այստեղ խոսել...

Մինչ նրանք, ըստ երևույթին, իրենց վերջին վեճն էին անում, չկարողանալով՝ միշտ զսպանակած պահելով զգացմունքները, մենք միայն մի բանի մասին էինք մտածում. «Ինչպիսի՞ համապատասխան դույզ, տե՛ր աստված, ինչպե՞ս են կարողացել բաժանվել, երբ հաղվագյուտ բան է այդպիսի հանդիպումը...»։

— Բոլոր դեպքերում դու իրավունք չունես ինձ զրկելու երեխային տեսնելու հնարավորությունից,— շարունակում էր կինը։— Ես գիտեմ, որ նրան շատ լավ ես խնամում, աշխատում ես ամեն ինչ անել նրա համար, բայց առանց մայր կարո՞ղ է երջանիկ լինել որևէ երեխա... Դա դաժանություն է քո կողմից, անմարդկային վերաբերմունք... Խոստովանում եմ, երբեք այսպիսին չեմ պատկերացրել քեզ... Ամբողջ օրն աչքիս առջև է...

Կինն ամեն աչքերը մաքրելիս շրջում էր երեսը։

Ամուսինը լսում էր սառը՝ չշարժելով դեմքի որևէ մկան։

— Շատ լավ,— վերջապես ասաց նա։— Ես հիմա կբերեմ երեխային։ Եթե նա ճանաչի և ընդունի քեզ, կարող ես հանդիպել, երբ ցանկանաս, իսկ եթե ոչ մի վերաբերմունք ցույց չտա, ահա այս մարդկանց մոտ խոստանո՞ւմ ես այլևս չհանդիպել նրան։

Անսովոր պայմանը լսելով՝ կինն անդորրացած նայեց մեզ, ապա գլխով հավանություն տվեց։ Ամուսինը դուրս եկավ։ Կինը տագնապած՝ չգիտեր ինչպես պահեր իրեն, ո՞ր կողմ նայեր։ Միանգամայն անհարմար վիճակ էր ստեղծվել նաև մեզ համար. հիմա արդեն հնարավոր չէր հեռանալ։

Ահա և բացվեց դուռը։ Հոր ձեռքից բռնած՝ ներս մտավ

Կարինեն։ Նա կարգին չնայեց էլ մորը, ասես չնկատեց նրան։ Հոր նման սառն արտահայտությամբ հայացքը դարձրեց կողմ և ասաց։ Մայրն անվստահ առաջ դրեց քայլը. կարո՞ղ էր դեռ ինը չպահել նրան...

— Կա՛րինկա,— հազիվ արտաբերեց մայրը կարոտի, վախի այն զգացումով, ասես իսկապես երեխան կարող էր չճանաչել մորը։ Նա ձեռքերն առաջ պարզած՝ նորից ասաց։— Կա՛րինկա, բալի՛կս...

Թվաց, թե երեխան խլացել էր։ Քար անտարբերությամբ նա շարունակում էր թեքած պահել հայացքը։ Հայրը բռնեց նրա թևը և կռանալով հարցրեց.

— Կարինե, ո՞վ է այս կինը, ճանաչո՞ւմ ես։— Երեխան տարուբերեց գլուխը։— Կուզենայի՞ր նրա մոտ գնալ...

Կինը սարսափած նայում էր երեխային։ Սա նորից տարուբերեց գլուխը առանց մոր կողմը նայելու։

Ամուսինն ինքնագոհ շունչ առավ ու նայեց մեզ։

Կնոջ ծնոտը դողում էր։

— Ինչպե՞ս թե,— կարկամած ու անզոր շշնջաց նա՝ ձեռքը կոկորդին տանելով։ Ապա միանգամայն անսպասելի առաջանալով՝ ծնկեց երեխայի առջև։— Մի՞թե իսկապես ինձ չես հիշում, զատրիկս... Կա՛րինկա, չէ՞ որ ես եմ քեզ պահել ու մեծացրել, խնամել եմ, լողացրել... Մոռացե՞լ ես իմ սովորեցրած ոտանավորները... Հիշո՞ւմ ես, քնելուց առաջ միշտ գալիս էիր իմ անկողինը, կատակում էինք...

Նա խոսում էր ցրված, խեղդվելով։ Ձեռքերն առաջ էր մղել, բայց չէր համարձակվում դրկել երեխային։ Հպարտ հասակը երկուտակվել էր դուտրիկի առջև, իսկ սա շարունակում էր կողմ նայել իր քար հայացքով, ինչպես այդ պահին հայրն էր նայում։ Նրանք այնքա՞ն նման էիր իրար...

Հանկարծ կինը փաթաթվեց երեխայի ոտքերին, սկսեց երեսը քսել աստիկներին, փեշերին...

— Ինչպե՞ս չես հիշում քո մայրիկին, դա հնարավոր բան չէ... Նայի՛ր, քո սիրած շորն եմ հագել... Ամեն առավոտ համբույրով էի արթնացնում քեզ...— Նա բարձրացրեց արցունքով հեղեղված դեմքը, նայեց դստեր անտարբեր թվացող երեսին, ապա միանգամայն հուսալքված, ամեն թանկագին բան կորցրածի խեղճությամբ դարձավ մեզ, որ այլևս չէինք

կարող մեր հուզումը պահել, ինչպես և մեր զայրույթը հոր և աղջկա նկատմամբ։— Սա ի՞նչ բան է, մարդի՛կ... հնարավո՞ր բան է չհիշել մորը, որը վեց տարի շարունակ գրկում է պահել երեխային և ընդամենը հինգ ամիս չի տեսել նրան... Սա ահավո՞ր է...

Եվ նա հենց երեխայի մոտ ծնկած, ափերի մեջ առնելով երեսը՝ ազատություն տվեց հեկեկանքին։

Մանր ցնցվում էին նաև երեխայի շրթունքները։ Հետո նա կարուկ շրջվեց մոր կողմը.

— Մա՛մա,— այնպիսի ահավոր ձայնով ճչաց երեխան ու մնկելով փաթաթվեց մորը, որը հայրը չփորձեց էլ ետ պահել նրանից։— Մա՛մոչկա... աղավնյակը՛ս... Ների՛ր, ների՛ր... այլևս չե՛մ կարող... Ես... ես քեզ սպասե՛լ եմ... սպասել եմ ամեն օր... իմ քա՛ղցր մայրիկ...

Եվ ինչպե՞ս էին համբուրվում։ Ինչքա՞ն կարոտ կար նրանց ողջագուրման մեջ։

Ամուսինը շրջեց երեսը՝ հուզումը թաքցնելու համար։ Հետո նա մոտեցավ, բարձրացրեց կնոջն ու երեխային։ Ջուր տվեց նրանց։

— Խնդրում եմ ներել մեզ այս տեսարանի համար,— ասաց նա։— Հիմա մենք տուն կգնանք և մեր հարցերն այնտեղ կլուծենք։

Երեխան ամուր կպել էր մորը ու անընդհատ ու անընդհատ նրա ձեռքերն էր համբուրում։ Նա չէր համարձակվում հորը նայել։ Ինչպե՞ս նայել, երբ չէր կարողացել մինչև վերջ կատարել նրա հանձնարարությունը...

Նրանք դուրս եկան՝ երկար ժամանակ մեզ թողնելով սաստիկ հուզված վիճակում։

Կարինեն այլևս մանկապարտեզ չեկավ։ Մտածում էինք, որ Թրիլիսի կարող էին վերադարձած լինել։

Սեպտեմբերի մեկն էր։ Հանկարծ նկատեցի նրանց, որ դպիս էին դիմացից։ Ամուսիններով բռնել էին Կարինեի ձեռքերը։ Պայուսակը հոր մոտ էր։ Նրան դպրոց էին տանում։ Երեխան անսովոր բարձր տոնով ինչ-որ հարցեր էր տալիս, ծիծաղում էր այնպես, որպես ոչ մի անգամ մեզ մոտ եղած ամիսներին։ Զդիտեմ, իմ ժպիտը նկատե՞ց երեխան։ Մի պահ միայն ետ շրջվեց, նայեց ինձ, ու անցան։

Հեռվից երկար ժամանակ ինձ էր հասնում երեխայի անհոգ ու պոռթկուն ճռվողյունը, որը հեշտ ճանապարհով չէր վերադառնում։

16. 8. 1973
Սևան

ՄԻ ԳԱՎԱՌ ՍՈՒՐՃ

Յոթ-ութ օր է, ինչ Սրբուհի մայրիկը կարվել է աշխարհից, մարդկանցից։ Ո՞չ, ավելի մեծ աշխարհ է ընկել, ավելի շատ մարդիկ կան այդ աշխարհում, բայց նա մենակ է։ Որդին ու հարսն առավոտ վաղ, բարեբախտաբար գնում են գործի, թոռները՝ նույնպես։ Ինքը մենակ է, բոլորովին մենակ։ Երկրից բերած լուսանկարները չեն կարողանում փոխարինել կենդանի անձերի։ Նրանց հարց տրվում է, սակայն ոչ մի պատասխան չի ստացվում։

Շատ ուշ գլխի ընկավ Սրբուհի մայրիկը, որ իր արարքները զարմանալիորեն միօրինակ են՝ պարզ, կարճ, հեշտ. վերելակով իջնել ցած՝ խանութներ, գնումներ կատարել, վերելակով սրընթաց տուն հասնել, երկու ժամում ոչ միայն ճաշ պատրաստել, այլև ընդարձակ բնակարանը հավաքելով այդ բոլորը, ո՞վ զարմանք, առանց բարևելու և առանց արձագանքելու որևէ մեկի բարևի։ Եվ մնալ մենակ, չորս պատերի մեջ մենակ։

Երևանից բերած մի քանի գրքերն ամոթով էր խոստովանում, որ շատ անգամ է կարդացել։ Նախորդ տարիներին որդու սովորեցրած անգլերեն բանուկ արտահայտություններն ու բառակապակցությունները (իր համար հավերժորեն անհասկանալի), որոնցով դիմում էր նախ և առաջ վաճառողներին, կենցաղությունից զուրկ արտահայտություններ էին թվում։ Իր կյանքի վաթսունհինգ տարիների ընթացքում Սրբուհին բնավ չէր խոսել իրեն պատրաստ մատուցված ֆրազներով։

Դարձյալ ժամանակից շատ է եփվում ճաշը։

Ուշքի գալով՝ նա պահարանից հանում է սեփական ձեռքով քաղած ու չորացրած խառը կանաչու տոպրակը, բացում է բերանը ու խո՜ր շունչ քաշում. տաք բուրմունքը լցվում է հնոցը, խոտացնում ռունդները։ Աչքերը լցվում են։ Արաբկիրում այդպիսի բան չէր զգում. իրենց պարտեզի կանաչին է։ Հիմա երկյուղով է բացում տոպրակը, կարոտով շնչում, շընչում է արբեցնող բուրմունքը։ Արաբկիրի բուրմունքը, իրենց տա՜ն բուրմունքը...

Քանի՜ տարի շարչրկվեցին այդ տան վրա։ Առաջիններից էին, որ ներգաղթեցին Հայաստան։ Ծանր տարիներ էին։ Ամուսինը, փա՜ռք աստծո, ուժի ու բազկի տեր։ Կանգնեց Երևանի վերևում գտնվող անմարդաբնակ, քար ու քառով ծածկված չոլում ու ասաց. «Հոս պիտի շինեմ իմ վերջին տունը»։

Ուրիշ արաբկիրցիներ էլ հայտնվեցին։ Կամաց-կամաց թաղ ու թաղամաս դարձավ Նոր Արաբկիրը։ Հարևանները շատ գտան միմյանց։ Այդ հարևաններով էլ հաշտ ու խաղաղ ապրեցին երեսուն տարի։ Ապրեցին հարազատների նման։ Ա՜խ, հարևաններ...

Սրբուհին ամենից առաջ նրա՜նց համար է տանջվում։ Ամեն օր նրանց մոտ է, նրանց հետ։ Մերձավորներին հնարավոր չէր ամեն օր հանդիպել։ Ամեն օր դրացիների երեսն էին տեսնում, նրանց էին ձեռք մեկնում, ու հարկ եղած պարագայում՝ նրանք էին օգնություն առաջարկում։

Ամուսինը նախորդ տարի մահացավ։ Առողջ տղամարդ էր։ Ամեն օր պարտեզ էր ելնում, ջուր կապում մարգերի վրա, բարի լույս ասում հարևաններին, խորհրդակցում էր իր անելիքի մասին։ Ամբողջ կյանքում էր կառուցել։ Կարծում էր, ո՜չ, համոզված էր, որ Արաբկիրինը վերջին տունն էր լինելու։ Սակայն երբ իմացավ, որ հարսը երկու ոտքը դրել է մի մաշիկի մեջ ու համոզում է ամուսնուն գնալ Ամերիկա, ժորժն էլ չի կարողանում դիմադրել, խեղճ մարդը փոխվեց, թիկունքահան եղավ, ամփոփվեց իր մեջ։ Հասկացավ, որ այլևս չի կարող հակառակը համոզել որդուն։ Հալվեց մարդը, անկողին ընկավ։ Ամաչում էր հարևաններից, չէր ուզում հանդիպել նրանց...

— Ինձ թաղի՛ր, տղաս, հետո գնա,— մի անգամ միայն խնդրեց հայրը։

Այդպես էլ եղավ։

Մի հատիկ տղա էր ժորժը, մայրը չէր կարող առանձին ապրել։

Ամեն օր մի նորություն էր գալիս հարսի քրոջից, որ ավելի վաղ էր տեղափոխվել Ամերիկա։ Միշտ գրում էին իրենց ապրելակերպի, ունեցած-չունեցածի, ճամփորդությունների մասին։ Իհարկե, հարսը չորս եղբայր, ծնողներ ուներ Երևանում, բայց որոշել էր գնալ։ Տղային հանեց ինստիտուտի չորրորդ կուրսից, աղջկան՝ իններորդ դասարանից, իրերը ցրիվ տվեցին այս ու այն կողմ։ Տուն-տեղ թողնելու նախօրյակին Աստղիկը չէր կարողանում բաժանվել դասագրքերից։ Սրանց հետ էլ քնեց երեխան։ Առավոտյան հավաքվեցին նաև թոռան դասընկերները, սկսեցին մի անգամ էլ համոզել, որ չգնա, որ հետո ծանր կլինի նրա համար օտար աշխարհում, որ իրենք էլ չեն պատկերացնում դասարանն առանց Ճվլվան. Աստղիկի... Բայց ուրդեն ուշ էր։ Մայրը կատակով դիտեց, թե Աստղիկն Ամերիկայում էլ ընկերուհիներ կգտնի, իսկ այստեղի ընկերներին միշտ էլ նամակներ կարող է գրել։

Իհարկե, թոռնիկն իր ոչ մի նամակով չհայտնեց, որ ծնողների ու եղբոր հետ ինքն էլ է նույն սրճարանում ամաններ լվանում, մաքրում մինչև ուշ երեկո։ Զգրեց նաև, որ այլևս խոսք չէր կարող լինել կրթությունը շարունակելու մասին... Ինչ սովորել, երբ իր դասախոս հայրն էր կարկանդակ պատրաստում...

Հետո Սրբուհին չի մոռանում, թե ինչպես շեմքը թողնելուց առաջ ժորժը ոնց էր համբուրում տան պատերը, թե ինչպես դուրս գալով՝ հարևաններից դժվարությամբ պոկվեց ու հեռացավ՝ թաշկինակն աչքերին սեղմած...

Մի պտղունց չորացած կանաչի է գցում ճաշի մեջ ու կապում տոպրակի բերանը։ Արաբկիրում ոչ միայն շատ էր օգտագործում կանաչին, այլև հարևաններին էլ էր բաժին հանում, այնքան որ շատ էր ցանում ամուսինը... Սրբուհին ռեհանի, սամիթի, մաղադանոսի, համեմի սերմեր է բերել։ Գարնանը մեծ տաշտ է սարքելու ու փոքրիկ բանջարանոց է դարձնելու իր համար, նշխար-բանջարանոց։ Բայց կկանաչի՞ մի բնակարանում, ուր համարյա արև չի ընկնում...

Հուշիկ մոտենում է պատուհանին ու աշխատում ցած նայել։ Հետու փողոցում մարդիկ մժեղների չափ են երևում, ավտոմոբիլները՝ խաղալիքների։ Գետին չկա շենքի տակ, ասես օդի մեջ է կախված ու մի օր երկինք է վերանալու այդ վիթխարի կառույցը, որտեղ ամբողջ Արաբկիրի բնակիչները կարող են տեղավորվել։ Մարդիկ կան, հարևանություն չկա։

Հարսի քույրն ու փեսան մի երկու անգամ եկան-գնացին ու ամեն ինչ վերջացավ։ Ուրիշ հարազատներ էլ կային, բայց հնարավո՞ր էր նրանց հանդիպել... Բոլորը կրակված-վառված փող կուտակելով են մտահոգված...

Միջանցքում ձայն լսվեց։ Սրբուհին արագ մոտեցավ ու դրսի դռան աչքից նայեց դիմացը։ Մի քանի անգամ տեսել էր դիմացի հարևանուհուն, որ սպիտակահեր, կիրթ արտաքինով մի կին էր։ Հայտնի չէր, թե ում հետ էր ապրում։ Այդ օրն, ըստ երևույթին, մաքրությամբ էր զբաղված, քանի որ հաճախ էր գուռը բացուխուփ անում, փալաս փոշուս թափ տալիս։ Հիմա հոգնած է երևի։

Վերջին օրերին Սրբուհին հաճախ է մտածում այդ կնոջ մասին, ո՞վ է, ի՞նչ ազգից (թեև այդտեղ բոլորն էլ իրենց ամերիկացի են համարում), ո՞վ ունի, հիվանդանալիս ո՞վ է խնամում... Գուցե նա՞ էլ է հարևանի կարոտ, թերևս նրա ականջնե՞րն էլ են խլացել լռությունից... Սրբուհին չի պատկերացնում, որ հնարավոր է ապրել առանց հարևանի, որ կարող են օրեր, շաբաթներ անցնել, և ինքը պետք չգա որևէ մեկի։

Հանկարծ նա այն եզրակացության է գալիս, որ այդքան շատ մարդիկ, որ այդպես շտապով ու ինքնամոռաց անցնում են իրար կողքից, գալիս են գեմ-դիմաց, միմյանց չեն տեսնում, ընդհարվելու դեպքում էլ չեն նկատում իրար։ Կարող է նրանց մեջ հարազատներ էլ գտնվեն, այնուամենայնիվ չեն տեսնում իրար։

Նա իրեն նորից գտավ պահարանի առջև։ Որքան էլ հետևում էր իրեն, որպեսզի ճաշը ժամանակին պատրաստեր, եփում էր շատ շուտ։

Կրկին պատուհանին մոտեցավ։ Եվ շտապող մարդկանց նայելով, նրանց մասին մտածելով, հանկարծ հիշեց նախորդ գարնանն իրենց պարտեզում անսպասելի հայտնված այն թռչուններին, որոնց կարմրալանջ են կոչում։ Նրանք երկուսն

էին։ Թույնը հյուսում էին երկուսով։ Հիմա նա շատ լավ է հիշում այն տագնապալից արագությունը, որով հյուսում էին բույնը։ Սրբուհին հոգոց հանեց. ինչո՞ւ այն ժամանակ ավելի ուշադիր չէր հետևում այդ թռչուններին։ Իսկ գուցե իրենց անմեղ ճողոպրյունով նրանք հենց այն օջախի մասին էին խոսում, որից այն կողմ ոչինչ չի պատկերացվում... Օջա՞խ... Իսկ դա ի՞նչ է, թռչունը նո՞ւյնպես գաղափար ունի այդ բանի մասին։ Ինչո՞ւ նրանք հենց այնտեղ էին հյուսում՝ իրենց պարտեզում, ճիշտ իրենց պարտեզում և ոչ թե հարևանի...

Նա իրեն բռնեց այն բանում, որ կանաչին դեռ չի զցել ճաշի մեջ։ Իսկ եթե զցե՞լ է արդեն... Խառնեց կերակուրը։ Եթե իսկապես զցել է, չի էլ կարող նկատել, այնքան քիչ է լինում դցածը։

Եվ նույն վայրկյանին էլ շարունակեց տեսնել օդում կարմիր ցոլք արձակող թռչուններին։ Ո՞րն էր դրանցից արուն և որը՝ էգը։ Իսկապես, ո՞րն էր դրանցից կերակրում ձագուկներին։ Իր տպավորությամբ՝ շքեղը, նա՛, որ արու պետք է լիներ...

Տոպրակը դրեց տեղը։

Հետո ամբողջովին իր հիշողությունների հետ էր։

Իսկ ի՞նչ եղան ձագուկները։ Սրբուհին երբեք չի մոռանա այն հակաբնական արարքը։ Օ՜, այդ ծանր պահը։ Սովորականի պես հայտնվեցին արու և էգ կարմրալանջերը։ Ինչպես միշտ, այդ օրը ձագուկները սպասում էին ուտելիքի։ Բայց, ո՞վ զարմանք, ծնողները չմոտեցան նրանց։ Սրբուհին հիմա է հիշում, որ ոչինչ էլ չկար նրանց կոուցներին։ Իր տպավորությամբ նրանք թռան տարբեր ուղղություններով։ Ընդմի՞շտ։ Այո՛, ընդմիշտ։ Իսկ ձագուկնե՞րը։ Այն հեռավոր ընազդով, որի սկիզբը չի հայտնաբերված, ձագուկներից մեկն օրորվելով ցատկեց մոտակա ճյուղին, ապա նետվեց անդունդը և... հայտնաբերեց իրեն օդում թռչելիս։ Քիչ հետո, մեկը մյուսի հետևից բոլոր հինգ ձագուկները ճախրում էին օդում։ Հետո նրանք, Սրբուհու պատկերացմամբ, հալվեցին վերջալույսի շողերի մեջ՝ սուրալով միանգամայն տարբեր ուղղություններով, հավերժորեն իրար չտեսնելու համար։

Նա հասել էր լուսամուտին։ Այն, ինչ որ նրա մեջ մարդկային էր, առաջ եկավ։ Այդպես են վարվում թռչունները. գնում են և կորցնում հայրենիք, կորցնում են միմյանց...

Թևերը կրծքին խաչած՝ Սրբուհին մոտենում է դրսի դռանը և նորից նայում է դուրս։ Սանդղահարթակում դարձյալ դրկից հարևանուհին է շարունակում գործը։ Նրա դեմքը հոգնած է, շարժումները՝ ծանր։ Ա՜յ, եթե մի գավաթ սուրճ խմի, կթարմանա։

Սրբուհին ետ է քաշվում։ Իսկ եթե իրո՞ք ինքը սուրճ պատրաստի ու տանի նրան, միասին խմեն։ Առիթ կլինի, կծանոթանան, հարկ լինի, Սրբուհին կհասնի, կօգնի նրան։

Մինչ սուրճը կրակին կդրվեր, հիշողությունների հորձանքը նրան շպրտում է մի ուրիշ աշխարհ, որից ամենից ավելի էր զգուշանում. իր թոռնիկի՝ Ասպիկի աշխարհն էր։

Տատապելով անքնությամբ՝ Սրբուհին ակամա հետևում էր տանեցիներին։ Մինչ հարսի շնչառությունը խալտող էր ու մաքուր, թոռնիկինը, որին նա հատուկ էր հետևում գիշերվա մեծ մասը, շատ էր անհանգիստ։ Մի քանի գիշեր էր հարկավոր, որպեսզի Սրբուհին հավատիանա, որ երեխան միանգամայն առողջ է և քնի մեջ տալիս է ընդամենը իր դասընկերուհիների անունները։ Սրբուհին սարսափով գիտակցեց, որ իր թոռնիկը շուտով չէ, որ պիտի պոկվի նրանցից, ինչպես չեն պոկվում մանկությունից բնավ...

Պատրաստի սուրճը կողմ դրեց։ Սանդղահարթակ ելնելով՝ նա սեղմեց դիմացի դռան զանգը, շեմքում հայտնված կնոջ դեմքի արտահայտությունն ասում էր, որ նա առհասարակ որևէ զանգի չէր սպասում։ Բայց Սրբուհին իսկույն էլ խոստովանեց, որ նա արտակարգ դեպքերի պետք է լիներ, եթե վրայից վերանար հոգնությունը։

— Ի՞նչ եք ուզում։

Զայնի չորությունն էլ հավանորեն հենց այդ հոգնությունից էր գալիս։ Թերևս այդ չորությունն էր, որ շփոթեցրեց Սրբուհուն՝ հիշողությունից տանելով նրա խմացած ու չիմացած անգլերենը։

Քիչ առաջ հայտնված կնոջ դիմակը կարծես թե կենդանություն առավ. իսկ գուցե ուզում է ճանաչել, թե ով է ինքը...

Վերջապես սթափվելով՝ Սրբուհին անգլերենով ասաց.

— Ես ձեր հարևանուհի... Դուք հոգնած... Ես ուզեմ սուրճ խմել...

Անտարակույս իր անզգերեն անհասկանալի մնաց։ Սրբուհին ժպիտով կրկնեց խոսքը։ Հարևանուհին վեր ձգեց ուսերն ու շրջվելու շարժում արեց։ Սրբուհին նա դարձավ բերելու սուրճը։

Ի՞նչ զգացմունքով նա լցրեց գավաթները և դրեց սկուտեղի վրա։ Պատկերացնելով այն հաճույքը, որ պիտի զգա անծանոթ հարևանուհին այն թխվածքից, որով ինքը համբավ էր ձեռք բերել իրենց թաղում,— նաև երկու կտոր փախլավա ավելացրեց։

Սրբուհին ապշեց՝ դիմացի դուռը փակ գտնելով։ Անպայման ինքն իրեն էր ծածկվել։ Եվ մինչ կկռահեր, թե ինչ է կատարվել և կորոշեր անելիքը, վերելակից մի ոստիկան դուրս ելավ։ Հազիվ նկատելի ժպիտով նա էլ սեղմեց հարևանուհու զանգը։ Սրբուհին գլխի շարժումով շնորհակալություն հայտնեց։ Շեմքում նույն կինն էր՝ չփոխված արտահայտությամբ։

— Ի՞նչ է պատահել, տիկին։

— Հարցրեք այս կնոջը. ի՞նչ է ուզում ինձնից։

Ամենայն հավանականությամբ հարևանուհին չէր նկատել սկուտեղի պարունակությունը։

— Ի՞նչ եք ուզում, տիկին։

Սրբուհին շփոթված մերթ կնոջն էր նայում, մերթ՝ ոստիկանին. մի՞թե իսկապես չէին հասկանում իրեն։

— Ես ուզում եմ սուրճ հյուրասիրել։

— Ինչո՞ւ։

— Նա

Հարևանուհու սառն արտա[illegible]ությունը վկայում էր, որ Սրբուհին անգլերեն դարձյալ ճիշտ չէր արտահայտվում։

— Իսկ դուք ճանաչո՞ւմ եք իրեն,— հարցրեց ոստիկանը։

— Նա իմ հարևանն է...

Սրբուհին նկատեց, որ գավաթներից թափթփվում է սուրճը. ափսո՜ս...

— Ներեցե՛ք, դուք որտեղի՞ց եք եկել,— ինչ-որ գլխի բռնելով՝ հարցրեց ոստիկանը։

— Խորհրդային Միությունից...

Պնակները կեղտոտվում էին սուրճից։

— Իսկ ի՞նչ ազգության եք պատկանում։

Հարևանուհին արդեն ներս էր մտել՝ ետևից ծածկելով դուռը։ Սրբուհին հիմա մտածում էր միայն սկուտեղը ձեռքից վայր չգցելու մասին։

— Ես հայ եմ...

— Ա՜խ, Արմե՛նիայից,— թեթև ժպիտով արձագանքեց ոստիկանը։— Ի միջի այլոց, դուք շատ տարօրինակ սովորություններ եք բերել ձեզ հետ— Սրբուհին հասել էր իրենց դռանը։ Նա այլևս չէր տեսնում հաղթանդամ ոստիկանին, որը, հավանորեն Սրբուհուն հանգստացնելու համար, ձեռքը տարավ կիսատված գավաթներից մեկին։— Կարելի՞ է, տիկին։

— Օ՜, իհարկե,— մրմնջաց Սրբուհին՝ փշրված ժպիտով։

Ոստիկանը մի կումով դատարկեց գավաթը, ապա ձեռքը գրպանը տանելով՝ ինչ-որ մանրադրամ հանեց ու շատ քաշաքավարի դրեց սկուտեղի վրա և երկու մատները գլխարկին տարավ.

— Ներեցե՛ք տիկին, այստեղ՝ ամերիկացիները կարգ ու կանոն հարգող մարդիկ են և կարիք չկա,— նա հայացքով ցույց տվեց դիմացի դուռը։— Իսկ սուրճը համեղ էր, շնորհակալություն։

Եվ նա ծածկվեց վերելակի խցիկում։

Սանդղահարթակը դարձավ անմարդաբնակ։ Ոտքերը Սրբուհուն քարշ տվեցին ներս, սկուտեղը մի կերպ հասցվեց սեղանին։ Բացակա քայլերը ի վերջո նրան մոտեցրին պատուհանին։ Միևնույն է, դուրսը պղտորվում էր, ու հեռու փողոցում հնարավոր չէր շենքից դուրս եկող ոստիկանին տարբերել մյուս անցորդներից։ Նրանք բոլորն էլ ամերիկացիներ են, կարգ ու կանոնը հարգող մարդիկ... Հետո դրսի մշուշն այնքան շատացավ, մինչև որ ցածի անծանոթ մարդիկ, որ գլխակորույս շտապում էին տարբեր ուղղություններով, փոխակերպվեցին կարմրալանջերի, որոնք չգիտեն իրենց ուր գնալը, որոնք թողել են իրենց հյուսած բույնը...

Իսկ սեղանի վրա վաղուց սառչում էր անհասցե մնացած մի գավաթ սուրճը։

1977 թ.

Սիրվարդ Մեսրոպյանի հիշատակին

Այն օրը, երբ իմացա, որ համերգների ենք գնալու Ֆրանսիա և ելույթներ ենք ունենալու նաև Մարսելում, հիշեցի մեր դրկից հարևանին, որ տասնվեց տարի առաջ տեղափոխվել էր այդ քաղաքը։

Փոխարի պատճառով կորել էին Ժիրայրի նախ ձախ, ապա աջ ոտքը։ Ցավալին այն էր, որ թե՛ Ժիրայրը և թե նրա կինը՝ Մարին պարողներ էին մեր երգի-պարի անսամբլում և հիմա խեղճ երիտասարդը ապրելու էր առանց ոտքերի։

Հաճախ էինք գնում Ժիրայրին տեսության. առաջվա նման կատակում էինք, երգում, որպեսզի քիչ ժամանակ թողնենք նրան իր դժբախտության շուրջը մտածելու։ Ի՜նչ հզոր հոգի ուներ երեսնամյա այդ տղամարդը։ Ատլետիկ ուսերը, ուժեղ ու մարզված թևերը ասես ամեն րոպե վկայում էին նույնքան անկուն հոգու մասին։

Ժիրայրի անդամահատությունից հետո ավելի հաճախ էինք հավաքվում նրանց տանը՝ բաց չթողնելով ամենաչնչին առիթը։ Ժիրայրը նստում էր բազմոցին՝ բարձերին հենվելով, ծնկներին մի շալ էր գցում՝ ծածկելու համար մնացած դատարկությունը, ձայնակցում էր Մարիին ու ծափ զարկում, երբ որևէ մեկս ելնում էր պարելու։ Ամենից հաճախ պարում էր, իհարկե, Թերեզը, նրանց չորս տարեկան դստրիկը։

Մի անգամ վերջապես մեզ այցելեցին նրանք, առաջին անգամ վիրահատումից հետո։ Տեսնելով առաջինը ներս մտնող Ժիրայրին, բոլորս վեր թռանք ուրախությունից՝ մի պահ չպատկերացնելով, որ նա քայլում էր փայտե ոտքերով։ Ըստ երևույթին տանը շատ էր վարժություն արել, քանի որ անծանոթը հազիվ թե նկատեր նրա քայլերի անսովորությունը։

Առհասարակ, Ժիրայրը երբեք թույլ չէր տալիս խղճահարությամբ վերաբերվել իրեն։ Դա հասկանում էին նաև աշխատանքային ընկերները, այդ պատճառով էլ, երբ գալիս

էին տեսության, ոչ մի անգամ այդ մասին չէին խոսում։

Հենց այդ առաջին այցելության օրն էլ ամուսինս մի երաժշտություն միացրեց։ Իրար նայեցինք։ Մեկ էլ, բոլորիս համար անսպասելի, տեղից ելավ Ժիրայրը և ձեռքերը տարածած՝ սկսեց պարել։ Սկզբում բոլորս միանգամից վախեցած՝ երկարեցինք ձեռքերս, ասես ընկնելու պահին պատրաստ նրան բռնելու, սակայն Մարին հայացքով հասկացրեց չանհանգստանալ։ Իսկ Ժիրայրը, երևի չնկատելով մեր շարժումը, ժպտում էր ճիշտ այն երեխայի նման, որն առաջին քայլերն է անում առանց մոր օգնության, սակայն նրա հրկիզող հայացքի տակ։ Նրա ժպիտի ետևում, այնուամենայնիվ, վախի զգացում կար։

Շուտով Ժիրայրին այլ աշխատանք տվեցին նույն անսամբլում, քանի որ չէր կարող տանը նստած մնալ։

Ինքնաթիռում արդեն համարյա չէի մոռանում նրանց։ Աղջիկս վերջին րոպեին մի տիկնիկ դրեց ճամպրուկս.

— Սա էլ Թերեզին։

Շիծաղեցի.

— Տասնվեց տարի առաջ էր Թերեզը հինգ տարեկան։

— Իսկապես,— կարծես տխրեց աղջիկս։— Դե լա՛վ, երևի ամուսնացած կլինի։ Նրա երեխային կնվիրես։

— Եթե հաջողվի գտնել նրանց։

Միայն առաջին տարիներին էին գրում։ Եթե վերջում գրված չլինեին Մարիի կամ Ժիրայրի անունները, չէինք հավատա, թե մեր ճանաչած ամուսիններն էին այդ նամակների հեղինակները։ Դրանց մեջ չկային մեղ ծանոթ ջերմությունն ու զվարթությունը։ Արդյո՞ք նրանց երգուպարի մեջ չէին այդ զգացումները, որոնք բացակայելով նամակներից՝ անհետացել էին իսպառ...

Չեմ մոռանում այն երկուշաբթի օրերը, երբ փոքրիկ չուններով՝ ժամը ուղիղ մեկին Մարին գալիս էր ինձ հետ սուրճ խմելու։

— Ընդմիջում է արդեն,— ասում էր ու բազմում։

Երկու կանանցով, անշտապ սուրճը վայելելուց հետո հանդիսավոր կերպով շրջում էինք մեր գավաթները, մի քիչ էլ զրուցում։ Ոչ մեկս էլ չէինք հասկանում մրուրի մեջ հայտնված կենդանիների ու թռչունների պատկերների նշանա-

կութիւնը։ Բայց ինչե՞ր չէինք գուշակում, տեր աստված... Եվ ոչ մի անգամ չէինք խոստովանում, որ մեր մեկնութիւնները շատ ավելի ցանկութիւն էին, քան՝ գուշակում։

— Մարի՛, ճանապարհ ունեք, այս ո՞ւր եք գնում։

— Երևի՝ Ֆրանսիա,— ծիծաղում էր Մարին, ապա լըռելով հարցնում,— իսկ բա՞ց է այդ ճանապարհը։

— Բա՛ց է, բա՛ց։

Սակայն Մարիի ծիծաղը կամաց-կամաց փոխվում էր դժուշավորութեան։

— Բայց դու էլ ճանապարհ ունես,— իր հերթին հարցնում էր Մարին։

— Երևի համերգների ենք մեկնելու։

Հետո, ասես հենց այնպես, Մարին հետաքրքրվում էր, թե արտասանած հայրենասիրական բանաստեղծութիւններն ինչպե՞ս են ունկնդրում սփյուռքահայերը։

— Ես չե՛մ դիմանա,— ասում էր Մարին և արագ հեռանում՝ ցույց չտալու համար հուզումը։

Մի օր էլ անսպասելի իմացանք, որ նրանք իսկապես պատրաստվում են տեղափոխվել Ֆրանսիա, և որ Մարիի ծնողների հրավերը ստացվել է արդեն։

Այնուհետև սկսեցինք ուշ-ուշ հանդիպել։ Երբեմն Մարին հապճեպով պատասխանում էր բարևիս ու ավելացնում.

— Կաթը կրակին եմ թողել, կներե՛ս...

Մենք լուռ սպասում էինք։

Վերջապես մի օր էլ ամուսիններով այցելեցին մեզ, ասկայն ո՛չ երգելու, ո՛չ պարելու համար։ Պարզապես չէին կարող մեկնել առանց հրաժեշտ տալու։

— Մարիի ծնողները մենակ են այնտեղ,— մի կերպ ասաց Ժիրայրը։

— Համոզված ենք, որ պիտի ծանր լինի մեզ համար,— մրմնջաց Մարին։

— Ուրեմն սրանից հետո երկուշաբթի օրերին մենակ եմ սուրճ խմելու,— այսքանն էլ ես ասացի։

— Եկանք ներողություն խնդրելու,— ոտքի ելնելով գրույցը փակեց Ժիրայրը։— Հարևաններ չէ, հարազատնե՞ր ենք եղել։

— Նամակ կգրեք, որպեսզի տեղյակ լինենք ձեր վիճակից,— այս էլ ամուսինս ասաց։

— Հարկավ,— մեզ գրկելով՝ մրմնջացին նրանք ու հեռացան։

Այդ երեկո ոչ մեկս չէինք փորձում խորանալ գրույցի մեջ։ Մեր ներսում էր հարց-պատասխան գնում ամբողջ կիրակի։ Հարցերը շատ էին, պատասխանները՝ քիչ ու անհամոզիչ։

2

Փարիզում շատ հետաքրքիր անցան մեր համերգները։ Մեզ Մարսել էր ուղեկցելու պարոն Ճանիկյանը։

— Այնտեղի բոլո՞ր հայերին ենք ճանաչում,— ճանապարհին հետաքրքրվեցի ես։

— Այդպես պիտի ենթադրվի։ Բարեկա՞մ ունեք հոն։

— Մեր գրկից հարևաններն են տասնվեց տարի առաջ տեղափոխվել։ Ամուսիններ են, մի դստրիկ ունեն։ Շատ եմ փափագում տեսնել։ Գուցե հասցեն փոխվել է, քանի որ վաղուց է, ինչ տեղեկություն չունենք։

— Է՞, ովքե՞ր են, նայինք։

Ասացի։

— Ի՞նչ ուրախ մարդիկ էին, պարոն Ճանիկյան։ Երգն ու ծիծաղը անպակաս ունեին։

— Ուրա՞խ,— ապշեց մեզ ուղեկցողը։— Սակայն միշտ հակառակ տպավորություն ստացած ենք։ Առաջին օրվանից մը տեսած չունենք տնոնց երեսներուն։

— Գուցե ուրիշի՞ մասին ես ասում։

— Ի՞նչ կըսես։ Ան Ժիրայրը չէ՞, որ դույգ տարերը...

— Այդպես է։ Յոթ տարվա հարևաններ ենք եղել։ Շատ եմ ուզում հանդիպել։

— Աղեկ։ Տեղ հասնելուն պես կկարգադրենք այդ հարցը։ Մարին հոյակապ սոպրանո է։ Մեր երգչախմբի մեջ նմանը չկար։

— Չկա՞ր... Իսկ հիմա՞...

— Տասը տարեն ետքը թողուց։

Հասանք հավաքատեղին։ Պարոն Ճանիկյանը մտավ սենյակներից մեկը։ Սիրտս անհանգիստ էր։

— Տիկի՛ն Անուշ, տիկի՛ն Անուշ,— հանկարծ լսվեց պարոն Ճանիկյանի ձայնը— Հեռախոսի՛ն մոտեցեք, պարոն Ժիրայրը կապասե։

Թոցրեցի լսափողն ու խփեցի ականջիս.

— Ժիրա՛յր, դո՞ւ ես... Անո՛ւշն եմ, Անո՛ւշը, Երևանի՛ց... ձեր հարևա՞նը...

— Անո՛ւշ, ջա՛նս, մեր տո՛ւն եկուր, կաղաչե՛մ... Կարոտցե՛ր եմ... շա՛տ եմ կարոտցեր... եկո՛ւր...

Ցած դնելով լսափողը՝ թախանձում եմ Ճանիկյանին ժամառաջ տանել ինձ հարևանիս մոտ։ Նա մտքում հաշիվներ է անում՝ բաց ու խուփ անելով բարակ մատները։

— Եթե հենց հիմա գնանք, հինգ վայրկյանն ավելի չեք կրնա մնալ հոն։ Փոխարենը կպայմանավորվենք նորեն հանդիպելու։

— Համաձայն եմ հինգ վայրկյանին։

Մեքենան սլանում է հայելու ողորկությամբ խճուղիով։ Երկու կողմերում էլված խաղողի անսահման այգիներն են՝ կարմրավուն, սակավահող թմբերով։

— Բերքահավաքին ժամանակ Թունիսեն ու Սալանյաչեն կուգան հոս աշխատելու։ Լավ էլ կվարձատրվեն։

Հարցեր չեմ տալիս. հիմա ոչինչ չի հետաքրքրում ինձ։

Վերջապես մեքենան կանգ է առնում խաշմերուկում սպասող մի տարեց մարդու ձեռքի թափահարումից։

— Ահա՛ և ձեր Ժիրայրը,— ասում է պարոն Ճանիկյանը։

Դուրս եմ թռչում մեքենայից ու նետվում այն մարդու տարածած ձեռքերի մեջ, որի միայն աչքերից եմ ենթադրում, թե Ժիրայրը պիտի լինի։

— Տիկին Անո՛ւշ... բո՛ւյրս... աղվո՛ր բս...

Կերկեր ասում է նա մազերիս մեջ։

Ես չեմ ասում.

— Ժիրա՛յր, եղբա՛յրս, ինչքա՞ն ես ծերացել...

— Ջղիմացա, եկա հոս դիմավորելու։ Դե՛, նե՛ր բերթանք, Մարին կգա ուր-որ է...

Մտնում ենք փառահեղ ու ընդարձակ մի բնակարան։ Ամենուրեք ծաղիկներ-ծաղիկներ։ Մի ծաղկամանի մեջ էլ՝ ուհանի թուփ։

— Երևանից ենք հետներս բերել,— հայացքիս պատասխանում է Ժիրայրը։ Ինչպե՞ս է, լա՞վ տուն է, հավնեցա՞ր...

— Հոյակապ է։ Իսկ Թերե՞զն ինչպես է։ Հիմա անպայման գեղեցկուհի է դարձել։

— Այո՛։ Մի ֆրանսիացի երիտասարդի հետ է ամուսնացել ու տեղափոխվել Շվեյցարիա։ Հարուստ կապրին. երեք հարիանի մենատուն, պարտեզ, մեքենա... Նայի՛ր, Անուշ բույրս, իրենց պատկերն է, որ օրերս են ուղարկել։

Պատից կախված է մի գունավոր ու գեղեցիկ լուսանկար։ Թերեզն իրոք շատ գեղեցիկ է։ Միայն աչք-հոնքն են հայկական։ Մնացյալը՝ սանրվածքը, արդուզարդը, կողքի չքնաղ մանկիկը ուրիշ են, շատ նման մյուս կողմը նստած չենարդմենին։ Թերեզի հայացքն անգամ ուրիշ է թվում...

— Հաճա՞խ եք հանդիպում,— նկարից կտրվելով հարցնում եմ ես։

— Ավա՛ղ... Սակայն Թերեզս օգնում է մեզ... Ֆրանսերեն նամակներ է գրում... Ամեն շաբաթ-կիրակի գնում են հարևան երկրները զբոսանքի...

Վախենում եմ այլ հարցեր տալ։ Ո՞վ գիտե, մեկ էլ հանկարծ Ժիրայրի հզոր թևերը, որ միշտ պարելիս եմ տեսել, գնան դեպի երեսը, ափերի տակից այլևս ոչինչ չկարողանա արտասանել... Եվ ասում է.

— Այստեղ գալու օրից այլևս չենք պարել։ Որանի՞ այն օրերուն... Դե նստի՛ր, քո՛ւյրս...

— Չէ՛, Ժիրայր ջան, ուշանում եմ, ընկերներս սպասում են...

— Ջա՞ն... ի՞նչ աղվոր բառ է։ Թողինք Երևանում։ Ուշանո՞ւմ ես... Մարին որ գա, կխենթանա...

— Այսօր երեկոյան ժամը ութին համերգ ունենք։ Կգաք միասին, հետո երկար կզրուցենք։

Ժիրայրն անօգնական ինձ է նայում.

— Մեր տանը հիմա ո՞վ է ապրում։

— Սիբիրյից նոր եկողներ են։

— Մեղմեն խելացի են։

3

Լեփ-լեցուն դահլիճում, բեմից հարևաններիս եմ փընտրում։ Առջևի շարքից մեկը թաշկինակն է թափահարում։ Մարին է, մե՛ր Մարին, մեր ուրախ ու նաղանի Մարին, որ չնչին առիթից ծիծաղում էր արտասվելու չափ։ Կարծես թե ժպտում է. կիսաբաց բերանից եմ ենթադրում։ Իսկ աչքերը, ասավա՞ծ իմ, այդպիսի տխուր աչքեր չեմ տեսել ոչ մի տեղ... Մի՞թե այդ աչքերն են այդպես ծերացրել ու փոքրացրել նրան...

Ես բանաստեղծություններ եմ կարդում և հիշում եմ Մարիի հարցը, թե արտասահմանում ինչպե՞ս են ինձ լսում հայերը, երբ հայրենասիրական բանաստեղծություններ եմ կարդում։ «Ես չե՛մ դիմանա»,— ակամայից հնչում է նրա խոսքը։

Եվ չի դիմանում. թաշկինակն այլևս չի հեռանում նրա աչքերից։

Երբ վերջապես, ծափերի ուղեկցությամբ իջնում եմ բեմից, նստվում ենք միմյանց գիրկ։

— Ինչո՞ւ եկար, Անո՛ւշս, ինչո՞ւ տակնուվրա արեցիր հոգիս,— և համբուրում է երեսս, մազերս, ձեռքերս։— Այս ի՞նչ անուշ բուրմունք է ունեցել հայրենիք ասածդ... Ինչո՞ւ եկար, ինչո՞ւ եկար...

— Բայց ո՞ւր է ժիրայրը...

— Ան բնավ չէր դիմանա, Անո՛ւշս։ Ալ չկա՛ գիտցածդ ժիրայրը։ Եկած օրից պատյանավորվել է։ Երկուսով ենք այս մեծ աշխարհում։ Մնողներս վաղուց չկան։ Ամեն օր Երևանի մասին ենք խոսում... Մեր բոլոր երազները ձեզի հետ են... Երեկ արթնացավ, Մարի՛, կրսե, Անուշենց տանը կգտնվե՞ինք... Երբ տուն դարձա, ըսավ, տեսա՞ր երազս ինչպես կատարվեց. մեր Անուշն է եկել Երևանից... Գլուխս կորսնցուցի...

4.

Ինքնաթիռն ուղղություն էր վերցրել Փարիզ—Մոսկվա։ Ոչ ճանապարհին նրանց մասին էի մտածում, նրանց, որ ամենատրախ մարդիկն էին ու հիմա ռեհանի մի թուփ են

պահպանում ծաղկամանի մեջ ու հայրենիքի կարոտն են ուզում առնել նրանից։ Ականջներիս մեջ է Մարիի պատասխանն իմ այն հարցի, թե ինչո՞ւ չեկավ Ժիրայրը.

— Անուշին ըսա, որ ոտքերս հայրենիքիս մեջ թողած եմ, ալ ինչպե՞ս պիտի քալեմ...

18. 10. 80

ՅՈՒՐԱՆԻ ԱՌԱՋ

Գուրգենն ու Մարիեն նոր էին իջնում ինքնաթիռից, երբ պիմավորողների միջից լսվեց փոքրիկ Սուսանի ձայնը.

— Մամա՛, կահույքդ ստացել ե՞նք...

Մարիեն ահաբեկված ասաց.

— Զմոտենա՞ս, կկոտրվի...

Այն կինը, որի գիրկն էր ուզում նստվել երեխան, հանկիսավորությամբ, իր պահելակերպով անճանաչելի էր դարձել։ Փոքրիկը մի պահ շփոթված՝ մնաց տեղում, ասես հավատիանալու, թե իրո՞ք այդ եզրավոր գլխարկի տակ իր մայրիկի կեղեցիկ կերպարանքն էր։ Այն գիրկը, որ ուրիշ ժամանակ լայն բացված էր լինում իր համար, թեև հազվադեպ, այժմ իրավունքով զբաղեցնում էր մի տուփ։ Այո՛, մի սովորական տուփ, և ոչ թե ուրիշ մի երեխա... Ի՞նչ թանկագին բան կարող էր լինել այդ տուփում, որին մայրն այդպես երկյուղած էր գրկել...

Սուսանը թեքվեց հորը համբուրելու, սակայն մի ավելի մեծ տուփ էլ նա էր կրծքին սեղմել։

— Լսեցի՞ր, Գուրգեն, երազս կատարվեց՝ կահույքս եկել է։ Իսկ ո՞ւր է պապիկդ, Սուսան։

— Այստե՛ղ եմ, Մարիեն,— առաջացավ Վարդազարը, որ ապրկան ու փեսային դիմավորելու էր եկել մյուս երկու զբաղարների ու չորս որդիների հետ, որոնք, ինչպես Վարդազարն էր

ամեն բաժակ բարձրացնելիս ասում, իր ամենամեծ հարստությունն են։

Մինչ սպասարանում բոլորը զբաղված էին հրատապ հարցապատասխաններով, Սուսանը ճարպկորեն մի համբույր հասցրեց մոր ձեռքերին, որոնք անսովոր սառը թվացին։

— Պապա՛, իսկապե՞ս կահույքս եկել է։

— Արդեն չորս օր է։

— Հո չե՞ք բացել։

— Արկղներով դռնից ներս չէին մտնում։

— Հարևանները տեսա՞ն։

— Դիմացինը մի անգամ գլուխը դուրս հանեց։

— Եվ ոչ մի վերաբերմունք, չէ՞։ Հիմի տրաքված կլինեն։

Վերջապես հարահոս ժապավենի վրա սկսեցին սահել ճամպրուկները։ Գուրգենի համար անսպասելի, անուն ու անուն ածագերը իսկույն հափշտակեցին ամենախոշոր ճամպրուկները։ Ինչպե՞ս ճանաչեցին։

Մեքենաները շարժվեցին այն ժամանակ, երբ ամեն ինչ դասավորվել էր ծայրահեղ զգուշությամբ։

Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում աղջնակի վրա, որ ոչ մի կերպ չէր կարողանում մի ժպիտ կորզել մորից, որին չէր տեսել ամբողջ երեք շաբաթ։ Մեքենայում իշխում էր մեծերի տիրական գրույցը։

— Դե ասա՛, աղջիկս, ի՞նչ կար արտասահմանում, ի՞նչ տեսար, ինչպե՞ս ժամանակ անցկացրիք։

— Է՛լ մի ասա, պապ ջան, խանութները տրաքում են։ Ես էլ անց որ թևերս կապված։ Եթե քո տված ապարանջանն ու կոնյակները չլինեին, հա՛, մեկ էլ սուրճը, կխելագարվեի։ Իսկ մամայի տված մատանին ուղղակի փրկեց ինձ... Խոսում եմ, ճիշտ է, բայց ուշք ու միտքս «Գանգայիս» հետ է... Ե՞րբ պիտի տեսնեմ...

Մեքենայի կտրուկ շրջադարձից երեխան քիչ մնաց ընկներ տուփի վրա, որ այդպես էլ մնացել էր մոր գրկում։

— Չես կարողանո՞ւմ կարգին նստել,— օտար մի ձայնով սաստեց մայրը— Չես տեսնո՞ւմ՝ ձեռքիս բան կա։

Ու թեև Գուրգենն իրեն քաշեց երեխային, միևնույն է, փորրիկն արագ-արագ կրծոտում էր շրթունքները՝ արցունքները զսպելու համար։

Մեքենաները կանգնեցին բակում՝ նախօրոք շեշտված ազդանշաններ տալով։ Պատշգամբներում պետք է որ մարդիկ հայտնվեին։ Առանց շուրջը նայելու, անբաժան տուփը գրկին, առաջինը Մարինեն մտավ մուտքից։ Ապա, ասես արքայական մի շքախումբ ետևից, նա բարձրանում էր աստիճաններով նորահայտ մի շեշտ դնելով ընթացքի մեջ, որը պիտի որ նկատեին սանդղահարթակի հարևանուհիները։ Բայց, դռան առջև կանգնած էր միայն... սկեսուրը։

Ճերմակահեր, բյուրաձև թախիծն աչքերում թաքցրած, բաց դռան կողքին կանգնել էր Սաթենիկը։ Նրա բարեգութ հայացքը հարգանք էր առաջացնում դիտողի մեջ։ Ընդառաջելով հարսին՝ թևերը տարածեց նրան գիրկն առնելու, սակայն...

— Մա՛մա, ես՝ ինքս...

Իր սերը կրճատ ցույց տվեց հարսը՝ պատրաստի մի այնպիսի ժպիտ պարգևելով սկեսրոջը՝ հպանցիկ մի համբույր տալով այտին, որ հարյուր գրկախառնություն պիտի արժեներ։ Եվ դարձյալ Սաթենիկի հայացքի բոցը անմիջապես էլ մարեց հարսի սառցե նայվածքից։

Ասենք, համատեղ կյանքի տասնհինգ տարիների միջոցում Սաթենիկը համարյա չէր տեսել Մարինեին ինքնարուխ ծիծաղելիս։ Երբեմն սկեսուրը ձեռքի այնպիսի մի շարժում էր անում՝ ասես հարսի երեսից ձգտելով հեռացնել այն քողը, որ խանգարում էր իրեն ավելի լավ ճանաչելու նրա դեմքը, որը նույնն է, թե հոգին։ Ու տարին տարվա վրա հանելուկային էր դառնում Մարինեն տանեցիների համար։ Թափանցիկության հասնող նրա երեսին միշտ հեգնասիրական այնպիսի մի ժպիտ էր հայտնվում, հատկապես սեփական կարծիք հայտնելու ժամանակ, որ Սաթենիկը զինաթափ էր լինում։ Նա չէր էլ փորձում հակառակվել հարսին։ Իսկ ծիծաղի նկատմամբ Մարինեն շատ զգույշ էր, քանի որ անլրջություն էր համարում ամեն առիթով ծիծաղելը։

Մինչ կսթափվեր Սաթենիկը, սանդղահարթակում լսվեց խնամի Վարդազարի հաղթական ողջույնը.

— Աչքներս լո՞ւյս, խնամի Սաթենիկ, զավակներս տնփորձանք տեղ հասան։

— Աչքալույսով մնաք։ Համեցե՞ք։

Շատ ժամանակ պետք չէր, որպեսզի Մարինեն հասկանար, որ իր զրույցները հարազատների հետ զուր չէին անցել. բոլոր իրերը ճիշտ այնտեղ էին դրվել, որտեղ ինքն էր միշտ պատկերացրել մտերիմների ներկայությամբ։

Ահա և սկսվեց տուփերն ու ճամպրուկները խնամքով բացելու ծիսակատարությունը։

— Երեխանե՛ր, դուք հեռու կանգնեք, ա՛յ, այնտեղ, դռան մոտ,— բազմապահանջ մի երանգով կարգադրեց Մարինեն։— Էս սենյակներն էլ էնքան փոքր են։ Հանկարծ չմոտենա՛ք,— տեղներում չորացած երեխաներին մի անգամ էլ սաստեց Մարինեն ու սկսեց իր ձեռքերով մեկիկ-մեկիկ արևիրես հանել բյուրեղապակե նավակները, ծաղկամանները, սկահակներն ու բաժակները։— Սերվանդիս դարակները միանգամից կլցվեն։ Սա էլ «Մադոննաս», Գուրգեն ջան, կօգտագործեմ մենակ պետիդ հյուր կանչելիս։ Մի նայեք ի՞նչ ապրանք է։ Մենք էլ կասենք, թե ապրում ենք։ Ախ, պապ ջան, որ տեսնեիր ինչե՞ր կային, ինչե՞ր։ Գուրգե՞ն, ի՞նչ ես շվարել, գոնե այս թղթերը հավաքի։ Չլինի՞ թե չես հավատում, որ սաղսալամաթ տեղ ենք հասցրել։ Մամա ջան, ասա կարգին քնե՞լ եմ, հանգստացե՞լ։ Թե սրանցից մեզ մոտ էլ վաճառեին, թեկուզ մեկին երկու կոտայի ու կառնեի, կլցնեի տունս...

Այդ բնակարանը ստացել էր Սաթենիկը՝ հանձնելով նախկին մի սենյականոցը։ Մինչև այդ կահույքը բերելը, ամբողջ տուն ու տեղը Սաթենիկն էր դրել մեծ զոհաբերություններով, սակայն ոչ մի անգամ մաքով չէր անցկացրել առօրյա խոսակցության ժամանակ ասել՝ «տունս», «ամանեղենս», «թրխվածքս»։ Բայց ահա այս նորածեփ տիրուհին միայն այդպես է խոսում այն էլ ծանոթների հետ, հեռախոսով՝ «տունս ռեմոնտ եմ անում», «խմորս լավ է ստացվել», «կահույքս պիտի փոխեմ» և այլն։ Այս հանգամանքը սաստիկ ազդում

էր Սաթենիկի վրա ոչ թե եղածն իրենը համարելու, այլ այդ պարագան ուրիշների ներկայությամբ շեշտելու համար։

— Տեսնո՞ւմ ես, խնամի, ինչեր է անում հարսդ։ Մի առա՛ջ եկ, ուրախացիր,— ոգևորված բացականչեց Վարդազարը՝ ոտքերը լայն ու ամուր դրած շեմի երկու կողմերում։

— Դասավորեմ, հետո, պապ ջան,— ներողամտաբար կոնդեց Մարինեն։

Գուրգենը ներս ու դուրս էր անում՝ ասես տեղ չգտնելով իր համար։ Ավելորդ ու անխուսափելի վեճի դռները փակելու համար նա չէր հեռանում տանից։

— Իսկ Դրեզդենի պատկերասրահը մտա՞ք, բալիկ ջան,— հարցրեց Սաթենիկը՝ ավելի շատ հարսի ամենախոս ձեռքերին, քան դրանց մեջ հայտնվող իրերին նայելով։

— Որ գնայի, մամ ջան, էսքան բան ո՞վ կառներ։ Չլինի Գուրգենը։— Հեգնախառն չծնված ծիծաղը տեղը գիջեց դրժգոհությանը։— Ամբողջ օրը խանութից-խանութ եմ վազել։

— Ափսո՞ս,— ցավով մրմնջաց սկեսուրը՝ ասես հիմա միայն նկատելով, որ Մարինեն տեղից-տեղ էր անցնում արմանկները կողերին սեղմած։

Սկեսուրը մտավ խոհանոց նախաճաշ պատրաստելու։

Մատենալով զաղջախին՝ առաջին պահ չէր կարողանում անելիքը որոշել։ Ինչո՞ւ էր մտածում Սաթենիկը հարևանի դատերը՝ ստսիկ-փուսիկ Մարինեին հարս բերելուց առաջ...

Գերհամեստ ընտանիք էր մսավաճառ Վարդազարի օջախը, իրենք իրենց համար ապրող։ Ոչ ոք ձայները չէր լսում։ Անդադար-զնող աղջիկ էր Մարինեն, գեղեցիկ, աստվածառաք, խոսելիս ձայնը հաղիվ էր լսվում, երբ որևէ առիթով գալիս էր Սաթենիկին օգնելու։ Ճիշտ է, սահմանափակ, հետամնաց էին նրանք իրենց մտածելակերպով, բայց Մարինեն իր երևույթով հրեշտակի տպավորություն էր գործում։ Դպրոցն էլ միրտկներով ավարտելը Սաթենիկը բացատրում էր ծնողների անտարբերությամբ կամ գերզբաղվածությամբ։ Հե՞շտ էր յոլի երեխա պահելը։ Եվ Վարդազարը հասցնում էր։ Ա՛յ, եթե Սաթենիկին հարս գա Մարինեն, կպարապի ինքը նրա հետ, կմղի ընթերցանության, կմշակի նիստ ու կացը, կիոթի նրա

խոսելաձևն ու վարվեցողությունը։ Ի՞նչ է, Սաթենիկը բարձրագույն կրթություն ո՞ւնի, որ աշխատանքի, տուն պահելու հետ աշխարհով մեկ գիրք է կարդացել։ Եվ հետո կոտիկի Մարինեին կրթությունը շարունակել։ Թե չէ նա կճնշվի՝ տեսնելով, որ ամուսինը դիսերտացիա է պաշտպանելու, իսկ ինքը... Ոչի՞նչ, թեկուզ հեռակայի։

Սաթենիկը կոչած էր մնացել Մարինեին հարս ուզելու մտքին նաև այն բանի համար, որ նա քույրեր ու եղբայրներ ուներ, որոնք հարստություն կտեսնեին իր մի հատիկ Դուրգենի հետ... Աչքը ազան ինչքան կարծր ու սկզբունքային է գիտության մեջ, այնքան անգործունյա է կյանքում, գազափար իսկ չունի, թե ինչն ինչպես են ձեռք բերում, իր աշխատավարձը բավական է քիչ թե շատ նորմալ ապրելու համար։ Ռոմանտիկ, գրքերով ու գիտությամբ սնված-մեծացած երիտասարդը բավակա՞ն է քիչ թե շատ նորմալ ապրելու համար։ Դատարակել, քանի որ չէր հանդիպել այդ ուրիշ կիրպին։ Իսկ ահա Մարինեն կարծես թե ուրիշ էր, այլ տեսանկյունով էր մոտենում կյանքին,— ինչքան որ Սաթենիկն էր գուշակել իրենց կարճ-կարճ զրույցներից։

Եվ որքան համոզվելուց հետո Սաթենիկը տուն էր բերել Մարինեին։ Դուրգենի համար հաճելի էր Մարինեի ներկայությունը և այնքան խրված իր գիտելիքների մեջ՝ նա չէր էլ հասցրել նկատել այն օրիորդին, որի հետ կարող էր պատկերացնել իրենց համատեղ կյանքը։

Մարինեն շուշացրեց սառը ջուր լցնել Սաթենիկի այն երազանքների վրա, որ կապված էին հարսին գրականությանը կապելու հետ։ Նրա տուն բերած առաջին գեղարվեստական գիրքն այդպես էլ չբացեց հարսը՝ դատապարտելով դրան վերջինը լինելու բախտին։

— Ուզո՞ւմ ես, բալիկ ջան, դու կարիր, ես բարձրաձայն կարդամ քեզ համար,— մանկավարժորեն զգույշ առաջարկեց Սաթենիկը։

— Մամ ջան, լսելուց գլուխս ցավում է,— սուսիկ-փուսիկ թնկթնկաց Մարինեն ու աչքից կորցրեց գիրքը։

Սաթենիկը վարանոտ ու փշրված ետ էր կանգնել իր երազանքից։

Դրանով էլ ավարտվել էր Մարինեի ուսումնառությունը։

— Հիմի ո՞ր կրթվածն է կարգին տուն պահում որ,— մի անգամ ասել էր Մարինեն, երբ սկեսուրը ցանկացել էր հարսին ինքնակրթության ավազանը մտցնել։— Հայրս որ չլինի, Դուրգենը զոկտոր էլ դառնա, չենք կարող կարգին ապրել...

Այս խոսքից հետո Սաթենիկն անիմաստ էր գտել ավելի նյութի շուրջ լեզու թրջել։

Մարինեի ասածը լոկ խոսք չէր. նա իր որձաքարի հիմքն ուներ։ Բավականին ժամանակ էր, ինչ մասավաճառ Վարդապարն ամեն առիթով օգնում էր ամուսնացած աղջիկներին։ Այդ հանգամանքը ոչ միայն վիրավորում, այլև նվաստացնում, խեղճացնում էր ինչպես Դուրգենին, այնպես էլ՝ մորը։

Հետո Մարինեն աշխատանքի անցավ տհասների այն դպրոցում որպես դասատարակ, որտեղ եղբայրներից մեկը տընտեսավար էր աշխատում։ Քշախոս, բերանը փակ Մարինեն երբեմն հյուրերի ներկայությամբ, հարմար պահի թույլ դրժգոհությամբ սիրում էր ասել.

— Հիմա մանկավարժներիս գործը շատ ծանր է...

Իսկ այժմ, երեի ամբողջ կյանքում առաջին անգամ, ինչպե՞ս էր խոսում, ծիծաղում՝ ցուցադրելով գնումները։

— Հիշո՞ւմ ես, Դուրգին, «Մագոննաս» առնելիս ոնց էինք ուշանալու գնացքից... Ինչե՞ր եմ քաշել, պապ ջան, ինչի՞ր, չեր պատկերացնի։ Դե, առաջին անգամն էի արտասահման բնկնում։ Հաշորդի ժամանակ արդեն գիտեմ իմ անելիքը։ Ջոբս կկրա նիհարել եմ։

— Դու պիտի մի քիչ նիհարես, Մար ջան,— քնքշանքով նկատեց ավագ քույրը։

— Իսկական իմ զավակն ես, բալաս։ Տանդ համար կյանքդ էլ չես խնայում։ Ամռանը կգնաք ծովափ, կհանգստանաս։ Փեսա ջան, էս ինչի՞ ունքդ չի բացվում։ Էլի ահագին լան եք բերել տարածներիդ համեմատությամբ։

— Որովհետև մամայի պատվիրները չենք կատարել,— հայտարարեց Մարինեն ու ցուցադրական մի պատառիկ մեղավորություն կպցրեց երեսին։

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, էս ի՞նչ եմ լսում,— այնպես բար-

կացավ Վարդաղարը, ինչպես փոքրիկի վրա են բարկանում հյուրերի ներկայությամբ— Իսկապե՞ս ոչինչ չեք բերել խնամուս համար։

— Բա էս բոլորն ո՞ւմն են։ Սրա՞նց մասին չի խոսքը, պապ ջան։ Ոչ մի թանգարան կամ տեսարժան վայր չենք կարողացել գնալ։ Մամա ջան, մյուս անգամ Գուրգենին մենակ կուղարկեմ, թող գնա, ուր կցանկանաս։ Գուրգե՞ն, գնա դրբոսում ծխի, խեղդվեցինք ծխից,— ու նա ձեռքի թափահարումով իրենից հեռացրեց ծուխը— Պապա ջան, ախր Գուրգենը կյանքից հիչ բան չի հասկանում։ Հենց գրասեղանից հեռանում է, աշխարհը մթնում է գլխին։ Գալու օրը կպել է, թե վերջին կոպեկները հուշանվերների եմ տալու։ Ջթողեցի։ Ախր ո՞ւմ են պետք դրանք։ Փոխարենը այ թե ինչ առա։

Եվ նա բյուրեղապակե մի փոքրիկ սկահակ բարձրացրեց։ Սա ադամանդի պես շողշողաց վերջալույսի շողերի մեջ։

— Ինչ սիրո՞ւն է,— ձայնեցին քույրերը։

— Ես դրա մեծն ունեմ,— դիտեց միջնեկ քույրը։

— Ապրե՛ս, աղջիկս...

Նրանց բոլորի հայացքները համաբնույթ էին, միմյանց տակետակ հասկացող։

Սաթենիկը չէր կարողանում ներկա գտնվել այդ տեսարանին։ Լավ է, նախաճաշ պատրաստելու առիթով հաճախ խոհանոց էր մտնում։ Հիմա նա մտածում էր այն մասին, թե ինչու, երբ հարսը որևէ բան էր պատմում, ինքը դժվարությամբ էր լսում. ուղղակի ձանձրանում էր։ Առաջ կարծում էր, թե դա գալիս էր նրա ձայնի միօրինակությունից։ Շատ հետո գլխի ընկավ, որ պատմելիք նյութն էր անհետաքրքիր իր համար...

— Հա՛, որտե՞ղ եմ դրել զալի բանալին,— հանկարծ հիշեց Մարինեն՝ ներս մտնող ամուսնուն նայելով։

Գուրգենն ապշած դարձավ կնոջը.

— Այս սենյակը երբե՞ք բանալի չի ունեցել... Հետո ինչի՞ դ է պետք բանալին...

— Խելո՞ք, գնալուց առաջ եմ պատվիրել։ Սպասի՛ր, հիշեցի,— և ննջարան մտնելով՝ վերադարձավ մի բանալի ձեռքին— Դա՛, հիմա հանգիստ կարող եմ լինել։

Կնոջ վերջին արարքից ու խոսքից ամուսնու երեսին շաղրվանի պես արյուն խփեց.

— Բայց ինչի՞ դ է պետք փակը։

— Ինչիս է պե՞տք,— ձեռքերը կողերին կանթեց Մարինեն՝ ագրեսիվ հայացքը մեխելով ամուսնու աչքերի մեջ։— Չգիտե՞ս, որ գործը վերջացնելուց հետո մաման մտնում է խոհանոց ու գիրք կարդում ճաշ եփելիս։ Մեկ էլ տեսար երեխաները ներս լցվեցին, նստեցին դիվանին, ապակիներին ձեռք տվեցին...

— Մարինե՛, ուշքի՛ եկ,— զուսպ նկատեց Գուրգենը։

— Ես գիտեմ՝ ինչ եմ անում. փակ պե՛տք է,— առարկություն չվերցնող տոնով եզրափակեց կինը։

Մինչ երեխաները դեռևս չգործած զանցանքներից մեղավոր սվազվել էին պատին ու ակամա հետևում էին իրերի մեջ ամեն ինչ մոռացած մորը, Սաթենիկը նորից մտավ խոհանոց։ Ինչ-որ անհասկանալի, անըմբռնելի մի բան էր կատարվում այդ տանը, որից միայն վատ բան կարելի էր կանխագուշակել։ Նա նկատել էր, որ Մարինեն դաշնամուրի վրայից վերցրել էր իրենց գործարանից նվեր ստացած պղնձյա սափորը ու տեղը նոր բերած սկահակներից մեկը դրել։ Իսկ ո՞ւր էր սափորը, որի վրա ամենաշերմ խոսքերն էին փորագրել աշխատանքային ընկերները։ Քառասուն տարի նույն գործարանում էր աշխատել Սաթենիկը որպես գործերի կառավարիչ և ահա քանի տարի էր, ինչ կենսաթոշակի էր անցել։ Այդ բոլոր տարիների ամփոփումը պղնձե սափորն էր, որին ամեն առավոտ, իրերի փոշին առնելիս, գորովանքով նայում էր Սաթենիկը...

Միևնույն է, սկեսուրը ոչինչ չի ասի Մարինեին, քանի որ գիտեր, թե այդ ընտանիքի խաղաղությունը մասամբ որտեղից էր գալիս. Սաթենիկի լռությունից։

Երբ նա նորից երևաց հյուրասենյակում, Սմբատն ուզեց գնալ հարևան սենյակը։

— Սպասի՛ր, էդ ո՞ւր,— մի ակնթարթում որդու ձեռքը բռնեց Մարինեն, որի հարաշարժ հայացքից, առանձնապես այդ օրը ոչինչ չէր վրիպում։

— Պայուսակս եմ ուզում վերցնել,— մեղավոր կմկմաց տղան։

— Դաս սովորելդ հիմի՞ բռնեց։ Մյուս անգամ պայուսակդ

այս կողմերը չբերես։ Սուսանի խաղալիքների արկղն էլ վերցրու։ Երկու ամիս է դպրոցական է, դեռ ձեռք չի քաշել տիկնիկներից։

Գուրգենը նոր էր նկատում, որ իր կնոջ աչքերը կրակվառիչի փայլ են արձակում։ Մինչև հիմա դրանք ապակու նման սառը տպավորություն են թողել իրենց վրա...

Սուսանը, որ քանի անգամ պատրաստվում էր մորը դիմելու, թե իր համար կոշիկ բերե՞լ է, հայացքը դարձրեց հորը։ Երեխային այնպես էր թվում, թե հայրն էլ է առեղծվածով նայում նորահայտ իրերին, որոնք հաղթանակ տարած զինվորների նման շարվել էին իրար կողքի՝ գրավելով բոլոր տեղերը ու անկենդան շողշողուն հայացքներով սաստում էին ներկաներին ձեռք չտալ իրենց...

— Մարինե՛, իսկ եթե դաշնամուրը տանենք ննջարան... Ախր այստեղ բոլորովին շարժվելու տեղ չկա,— անսպասելի առաջարկեց Գուրգենը։

— Մաղալու մարդ ես. կլռես-կլռես, մեկ էլ էնպիսի՛ բան կասես, որ կապշեմ։ Ուրեմն ես դաշնամուր եմ առել, որ տանեմ ննջարա՞նը խոթեմ։ Ո՞վ է տեսել էդպիսի բան։

— Բայց առած օրից սրա ծածկոցի կոճակները ոչ մի անգամ չեն բացվել,— փորձեց արդարանալ ամուսինը։

— Ի՞նչ անեմ, որ բախտս չբերեց, երեխաներս անպետք գուրս եկան, լսողություն չունեն։ Բայց միևնույն է, հենց մի կերպ այս բոլորը կարգավորեմ, դաստատու եմ վարձելու։ Պատկերացնո՞ւմ եք, իմ երեխաները չնվագեն, խելագարվել կարելի է։

— Քո երեխաներն անպայման պետք է նվագեն,— սպասվելիք վեճը հետաձգեց ամուսինը։— Բայց ես խոսում եմ այս սենյակում տեղ չլինելու մասին։ Ես գիտեմ, որ մանողին ննջարանն էլ ես ցույց տալու։ Ուրեմն, ի՞նչ նշանակություն ունի, թե որտեղ է դրված դաշնամուրը։

— Ես գիտեմ, թե դու ինչ ես ուզում ասել, Գուրգեն ջան, բայց հիմի դրա ժամանակը չունեմ...

Գուրգենը տարուբերեց գլուխը. ինչո՞ւ էր Մարինեն ավելի ու ավելի մանվածապատ դառնում։ Ինչքի նկատմամբ նրա պաշտամունքն անհամատեղելի էր դեմքի փափուկ, ոչ չար

արտահայտությանը։ Մարինեն վերջերս էր այդպիսին դառել։ Ներսից եկող արամադրությունը, որ արդյունք էր նոր ձևավորվող բնավորության, գեռևս համապատասխան տեսք չէր տվել այդ երեսին... Այժմ, իրերը, կահույքը, սրանց դասավորելը, Մարինեի ներաշխարհը ձգտում էին մի ոճի բերել, ամբողջանալ, մի էություն կրելով իրենց մեջ։

Գուրգենը տեսնում էր, որ ինքն ու մայրը շատ բան էին կորցնում ինչպես բոլոր ծայրահեղ բարիները, և որ իրենք՝ ամբողջ ընտանիքն այրվելու էին Մարինեի խառնաբանում...

— Հա՛, լավ հիշեցի, Գուրգեն ջան. հենց այս շաբաթ տուն ես հրավիրում քո շեֆին կնոջ հետ միասին։— Մի բոպի պարապ մնացին Մարինեի ձեռքերը։— Ասենք, նա ի՞նչ շեֆ է, որ Քո դիրեկտորին կկանչես, այդ դոկտոր Սաֆարյանին։ Թող գան ու տեսնեն, թե ինչ տուն ու տեղ ունես։ Հիշո՞ւմ ես դրանց տունը։— Մարինեն վեր բարձրացրեց շրթունքի վերին ճոթը, որից քիթը մի քիչ ծռվեց։— Մարդ էլ հրավիրում են։ Կարծեմ՝ կինն էլ դասախոս է, չէ՞։ Քեզ նման՝ էս աշխարհից չեն։ Լավ եք իրար գալու։ Բա դա դասախոսի տո՞ւն էր։ Սիծաղս հազիվ էի պահում։ Մեր դիմացինն էլ է դասախոս, էն էլ հեռակա բաժնում։ Բայց տեսնում եմ դրանց ապրուստը... Իսկ քո պրոֆեսորի տանը բացի փտած գրքերից ոչինչ չտեսար։ Պապ ջան, գոնե գրքերի պահարաններ ունենային... Բա այդ տունը մտնող ուսանողն էլ կհարգի՞ դրանց... Գուրգե՞ն, էլի գնո՞ւմ ես։ Դուրը չի գալիս ճիշտ խոսքը... Վերցրու էս բոլոր ցելոֆոններն ու կահույքը ծածկիր։

Գուրգենը դեռևս շարունակում էր ենթարկվել։

Հեշտանիստ գահավորանքները, պահարանները, սեղանը,— բոլորը մտան թափանցիկ քողի տակ ու պահեցին շնչները։ Մի երկու ժամից ՝քրտնելու էին դրանց տակ...

— Թարս-թարս մի՛ նայիր, հենց իմանամ մարդ է գալու, կհավաքեմ։ Ապրանքը պիտի պահել իմանալ, ջանս։

Չգիտես որտեղից կապույտ մի մսաճանճ հայտնվեց ու սկսեց ճանճահոտ ցրել տնով մեկ։ Բոլորը հարձակվեցին ու դուրս արին փոքրիկ գուժկանին։

Վարդազարն արդեն չթաքցրած հպարտությամբ էր լսում

աղջկան՝ երբեմն այնպես նայելով Սաթենիկին, որպես թե ասելիս լիներ՝ տեսնո՞ւմ ես ինչ հարս ես ձեռք բերել։ Գլխիդ վրա պիտի պահես այս աղջկան։

Վարդապարը տիպիկ ուտող-խմողի տեսք ուներ։ Խոշոր դիմագծերով, առատարյուն նրա երեսից այն տպավորությունն էր ստացվում, թե դրա տերը, ճիշտ է, լավ էլ ուտում է, բայց երբեք չի կշտանում։ Լայնափ ձեռքով հաճախ ազալում էր ճաղատը, երկու մատերով բերնակողերը մաքրում, ասես նոր էր ելել խաշի սեղանից ջերմուկ խմելու պահանջով։

— Մարինե, չե՞ք ճաշում,— առաջանալով հարցրեց Սաթենիկը։— Որտե՞ղ գցեմ սեղանը։ Նախաճաշի ժամը վաղուց է անցել։

— Միա՛յն խոհանոցում,— որպես ի վերուստ եկած որոշում՝ հայտարարեց հարսը։

— Բայց խոհանոցի սեղանը...

— Շատ էլ լա՛վ սեղան է։ Ճիշտ է, ոտները մի քիչ կարճ են, բայց դրան հարմար աթոռներ եմ ճարել մեր մոտի մանկապարտեզից։ Պապ ջան, քո բերած նարդու սեղանն է...

Սաթենիկը տարակուսանքով հեռացրեց հայացքը. որտեղի՞ց այդ ջահել կնոջ մեջ այդքան հնարամտություն։

— Բայց նա փոքր չի՞, աղջիկս։

— Ի՞նչ անենք, պապ ջան, հո քեֆ չե՞նք անում։ Մենք՝ մենք ենք, կհարմարվենք։ Հեչ չլինի, հերթով կնստենք, չէ՞ քույրիկ ջան,— ձրի բարություն էր բաժանում Մարինեն։ Նա այն փերեզակի նման ժպտաց, որին հաջողվում է թեկուզ մի քանի կոպեկով խաբել գնորդին։

Մարինեի քույրերն ու եղբայրները հրաժարվեցին ուտելուց, պատճառաբանելով, թե նոր են վեր կացել սեղանից։

Սաթենիկը չգիտեր անելիքը ու կողմ էր քաշվել գլխահակ՝ ստվերոտված խնամիների կողմից։ Նրան առաջին անգամ այնպես թվաց, թե գանգի մեջ եռացող ուղեղը պատապատ է զարկվում։ Թերևս այդ պատճառով էր տարտամորեն հետևում հարսի միատոն, միօրինակ, իրեն բնավ չհետաքրքրող խոսքին։ Այդ բոլորին կարելի էր դիմանալ։ Ի՞նչ ասել այն կասկածամտության մասին, որ արմատակալում

էր Մարինեի մեջ։ Եվ որտեղից-որտեղ աշխարհի խելոքներին կարդացած Սաթենիկը հանկարծ հիշեց Սենեկային, որ իր «Հաղագս տիեզերական իշխանության» գրքույկում կասկածի տակ է առնում ամեն ինչի գոյությունը և ուզում է ապացուցել, որ մարդ արարածը տեսնում է այն, ինչ կա իր ներսում, իսկ իրենից դուրս ենթադրություն է միայն։

Մարինեն ոչ ոքի չէր հավատում։ Սաթենիկը շատ անգամ էր նկատել, որ որևէ բանի մասին պատմելիս ինքն ստիպված էր լինում երդումով հաստատել դրա իսկությունը, քանի որ հարսը, եթե խոսքով էլ չէր հայտնում իր կասկածը, ապա հայացքը կասկած էր արտահայտում աներկբայորեն։ Շագանակագույն, նախկին թավշե աչքերի կոպերը կկոցվում էին, մի հոնքը թերահավատորեն միտում էր դեպի վեր։ Իսկ երբ մի անգամ Սաթենիկը պարզորոշ վիրավորանքով հարցրեց, թե ինչու չի հավատում իր խոսքին, Մարինեն չհապաղեց.

— Ես ո՛չ ոքի չեմ հավատում, մամ ջան, մի վիրավորվիր։

— Ինչպե՞ս թե,— կարկամեց սկեսուրը։— Իսկ քո ծնողների՞։

— Նրա՛նց էլ չեմ հավատում,— սառը ժպիտով Մարինեն ցանկացավ մխիթարել սկեսրոջը։

— Իսկ ո՞ւմ ես հավատում, աղջի՛կս...

— Ո՛չ ոքի, մամ ջան, ես ինձ էլ չեմ հավատում։

— Բայց դա սարսափելի է,— արագ-արագ օդ կուլ տվեց Սաթենիկը՝ վախենալով նայել երիտասարդ կնոջը։— Ինչպե՞ս ես ապրում առանց հավատալու... Կամ ո՞վ է փշրել քո հավատը մարդու նկատմամբ...

— Չգիտեմ, չե՛մ հիշում, երևի՝ ոչ ոքի։ Ուզզակի ոչ ոքի չեմ հավատում և ոչ մի բանի չեմ հավատում...

Ոչինչ չէր մնում Սաթենիկին անել, քան ափով փակել բերանն ու հեռանալ։ Նա ամբողջ օրը, շաբաթներ շարունակ մտածում էր հարսի հոգում կատարվածի շուրջը... Արդյո՞ք սահմանափակությունից չէր ծնվել այդ կասկածամտությունը, անվստահությունը շրջապատում եղածների նկատմամբ... Հետո սրտի ցավով եզրակացնում էր, որ հարսը հիվանդ է մշանջենական կասկածամտությամբ։ Առողջ մար-

դը չի կարող այդպես դատել։ Ու Սաթենիկը կամաց-կամաց աշխատում էր համակերպվել այդ արատին։ Նա մխիթարում էր իրեն այն բանով, որ Մարինեն այլևս ոչ մի չբացահայտված գիծ չուներ։

Բայց ահա, համատեղ կյանքի տասնհինգերորդ տարվա վերջին ժամերին այնպիսի անակնկալի առջև կանգնեցրեց հարսն իրեն, որ մոլորված Սաթենիկը կորցրել էր գլուխը։ Եվ ահավորն այն էր, որ երիտասարդ կնոջ ընչաքաղցությունը, որի սաղմերը նկատվում էին, սակայն այդպես փարթամորեն չէին պտղակալել, նրա հարազատներից ոչ մեկը չէր նկատում։

Վալիդոլի մի հաբ լեզվի տակ դնելով՝ նա մտավ իր ու թոռների ննջարանը։ Նա հիմա միայն որդու մասին էր մտածում։

Իսկ խոհանոցում աշխատում էին մի կերպ խցկվել ով ինչպես կարող էր։ Պարզվեց, որ Սմբատիկը շատ էր բոյ քաշել և չէր կարողանում երկուտակված սրունքները ցածրատոտ սեղանի տակ մտցնել։

— Չգիտեմ, թե ո՞ւմ է քաշել այս տղան,— դժգոհեց Մարինեն։— Մի սրա բոյին նայեք. ամեն օր երկարո՞ւմ ես, ա՛յ տղա։ Լսի՛ր, ավելի լավ է գնա պատուհանի գոգին ճաշիր։ Հա՛, հա՛, ամանդ վերցրու, գնա՛։

Շեմքում հայտնված Սաթենիկը տարուբերեց գլուխը. միջամտել, կնշանակեր վեճի դուռ բացել, որի համար անհրաժեշտ ցինամթերք չուներ ինքը։

Ափսեն տանելիս Սմբատիկն անզգուշաբար ճաշի մի մասը թափեց արմունկի տակ կծկված քրոջ գլխին։

— Ա՛յ, գլուխս,— ճչաց երեխան՝ ավելի կծկվելով։

— Խեղճ երեխային վառեցիր, գեսի՞նը մանես,— վրա պրծավ Մարինեն։— Այ դմբո, չես կարողանո՞ւմ կարգին շարժվել։ Թո՛ւհ, շորս կեղտոտեցիր, թաղեմ քեզ։— Քույրերից մեկը փալասով սկսեց մաքրել շորը։— Չեմ հասկանում, թե ուրիշ ընտանիքներ ո՞նց են ամբողջ օրը խոհանոցում անցկացնում։ Սաղ արտասահմանը խոհանոցում է ճաշում։ Անդաստիարակ երեխաներ եք, ուրիշ ոչինչ։ Մի ամիս գլխներիդ չեմ լինում, լրիվ վայրենի եք դառնում...

Սաթենիկը նորից կրծոտեց շրթունքները վիրավորանքը խեղդելու համար։

— Երեխան ի՞նչ մեղք ունի,— դուսպ դիտեց Գուրգենը։— Իսկ քո ասած խոհանոցները շորս-հինգ սրա չափ են։

— Պաշտպանի՛ր, պաշտպանի՛ր, լեզու դիր բերանները։ Մոռացե՞լ ես մեր հին տունը, խոհանոց էլ չունեինք...

Խոսքը մի երեսուն տարի առաջ գործարանից Սաթենիկի ստացած ընդհանուր հարմարություններով մի սենյականոց բնակարանին էր վերաբերում։

— Հիմի երեք սենյականոց բնակարանում էլ շարժվել չենք կարողանում։ Վայրենի՛ են, ուրիշ ոչինչ։

Առանց այն էլ Մարինեն ցուրտ խոսելաձև ուներ, ցուրտ նայվածք, ու ձայնի ելևէջներից էլ ասես սառցե լուլաներ էին կախված։

Սաթենիկը գրկեց սեփական թևերը, որոնց վրայից կարծես մրջյուններ էին վազվզում։ Նա իր վեհանձն մեկուսացմամբ անձեռնմխելի էր դարձրել իրեն։

— Հեռացի՛ր, բոյդ չտեսնեմ,— չէր հանդստանում Մարինեն։

Տղան դուրս ելավ առանց ճաշին ձեռք տալու։

— Թող սոված մնա, որ հասկանա։

Սուսանը մազերի յուղը մաքրելուց հետո գնաց եղբոր կանից։

— Ուշադրություն մի՛ դարձրեք դրանց վրա, պապ ջան։ Պետք չի տրամադրություն փչացնել։— Մարինեն լուսամուտից հանկարծ նկատեց մեքենայից իջնող հարևանուհուն։— Պա՛հ, պա՛հ, պա՛հ, Ռոզա՞ն եկավ։ Մի դրա քայլվածքին նայեք, պահվածքին նայեք, ասես աշխարհի տերը լինի,— հայացքը դրսից չկտրելով, խոսքը հարևանուհուն ուղղեց Մարինեն։— Շատ էլ լավ ես անում, տիկին Ռոզա, քո՛ զարն է եկել։ Հա՛, գիտե՞ք ինչ է արել այդ Ռոզան։ Ամուսինը հենց բազայի պետ դարձավ, սկսեց պահանջներ դնել նրա առաջ։ Ամեն ինչ ուզելուց հետո ամբողջ բնակարանի կահույքը փոխելու հարցն առաջ քաշեց։ Բայց ի՞նչ անի ամուսինը, ճիշտ է, բազայի պետ է, բայց ընդամենը երկու շաբաթվա։ Կինը կարգադրում է մի երկու օր աշխատանքի չգնալ։ Հարցնում ինքը կարող է պատասխանել, որ հիվանդ է։ Դեռ ոչինչ

չկռահելով՝ ամուսինը պառկում է։ Հաջորդ օրը, տեղեկանալով շեֆի հիվանդության մասին, իրար հետևից գալիս են ենթակաները։ Գալիս են տեսության ու դուրս գալուց առաջ մի բան խոթում հիվանդի բարձի տակ։ Երեկոյան բարձը կոշտանում է ու բարձրանում։ Երբ Ռոզան հաշվում է հավաքված գումարը, պարզվում է, որ մի քանի կահույք կարելի է գնել։ Երեք օրից հետո ամուսինը գնում է աշխատանքի։ Ա՛յ կի՜ն, ա՛յ թե ինչից է գալիս դրա բթերի վրա շարդրտվելով քսյլիկը...

— Դե լա՛վ, Մարինե ջան, դու էլ քո ուզածին հասել,— ժպիտով վրա բերեց հայրը։

— Հա՜, բայց ի՞նչ ձևով, ո՞ւմ ձեռքերով, մինչև ե՞րբ,— բարիպատեհ վայրկյան կորզելով, երկար ժամանակվա երազածը մի կրճատ խոսքով ասաց Մարինեն։

Հանկարծ հակադրվելու, վիճելու, սեփական կարծիք հայտնելու խիստ կարիք զգաց երիտասարդ տիրուհին։

Դուրգենն արագորեն բացեց խոհանոցի օդանցքը, արձակեց վերնաշապկի վերին կոճակն ու բաճկոնը հանեց։ Երբ եկավ խոհանոցից, քաթանի պես գունատ էր։

— Լա՛վ, աղջիկս, հանգստացի՛ր։ Ի՞նչ նշանակություն ունի, թե ում ձեռքերով։ Երկուսդ էլ իմ զավակներն եք...

— Է՛, պապ ջան, բայց գնահատող չ՛կ է պետք...

Ամպրոպ եղավ, սակայն հետաձգվեց կարկտահարությունը։

— Վա՛յ, մամ ջան, արի նստի,— խոսքը փոխելու, թե իրոք սկեսրոջը շոյելու համար առաջարկեց Մարինեն։

— Դուք հանգիստ ճաշեք, ես կերել եմ։

Եվ խոհանոցի նեղվածությունը լընդգծելու համար Սաթենիկը միջանցք եկավ։

— Պապա՛, Սաքո՛, այստե՛ղ նստեք։ Ես հիմի կբերեմ Եվրոպա ճանապարհորդած «Արարատ» կոնյակս ու մի կարգին կուրախանանք։

Այդ պահին այնքա՜ն երջանիկ էր Մարինեն, որպիսին չէր եղել նույնիսկ նշանադրության օրը։

— Հենց այսօրվա համար է մնացել կոնյակը,— այնպիսի խորհրդավորությամբ կրկնեց Մարինեն, ասես այդ գաղտնիքը միայն իր մերձավորներին կարող էր վստահել։

Ամանը մնացել էին միջանցքում։ Հենց սրանց միջով էլ հանդիսավոր մի ընթացքով եկավ Մարինեն, հաղթական ձևով՝ օտար երկրներ շրջագայած կոնյակի շիշը ձեռքին։ Խոհանոցի պահարանից էլ հանեց հատարակ ապակե բաժակները։ Վարդազարը դրանք լցնելուց հետո, վերցնելով իրենը՝ ոտքի ելավ չգիտես անհարմար վիճակից դուրս գալու, թե՞ խոսքին հանդիսավոր երանգ տալու համար։

— Լեռն, Սաքո, Հենրիկ, Լիպո, վերցրեք բաժակները,— անհանդգնելիության չափ զվարթ տոնով առաջարկեց Մարինեն։

— Լիպարիտը դեկի վրա է,— կանխեց հայրը։

— Ոչինչ, ես կխմեմ,— անակնկալ հայտարարեց Մարինեն։— Այսօր կարելի է խմել, չէ՞, պապ ջան։ Այսօր ուզում եմ խմել։

Եթե հնարավոր լիներ երկրաչափական ձևերով պատկերել Մարինեի այդ օրվա խոսքն ու ձեռքերի շարժումները, ապա դրանք բոլորը սուր անկյուններ պիտի ունենային, զիգզագներ, կտրուկ շրջադարձեր։ Կարդին ուժ էր հարկավոր կլորացնելու այդ անկյունները։

Սաթենիկը նորից խոհանոց եկավ։ Հնար ունենար, երբեք չէր գա, մինչև վերջանար այդ մղձավանջային երազը, բայց վախենում էր անտարբերություն, անքաղաքավարություն ընկալվեր իր պահելակերպը։ Բայց, միևնույն է, սեփական տունը միանգամից խորթացել, այլակերպվել, ուրիշ էր դարձել։

— Դե, բալիկ ջան, բարով եք եկել, բարով վայելեք ամեն ինչ,— ասաց Վարդազարը՝ բաժակը բարձրացնելով։— Տեր ասուած, դու զավակներիս պահապան։ Խնամի Սաթենիկ, ասումից-ասում մենք վանեցի ենք, բայց իմ Մարինեն բոլորից անցավ՝ ինչպես տեսնում եմ։ Ապրես, աղջիկս, միշտ այսպես անարար, նամուսով, հարգանքով լինես, բարձր պահես ամուսնուդ ու սկեսուրիդ պատիվը։

— Պապ ջան, աչքիս լույսի պես կպահեմ, կխնամեմ քո նվիրած կահույքը։ Կոտլետ վերցրեք։ Մաման ձեր սիրած հաշն է եփել։ Ձեռքս բռնեք վեր կենամ,— ճախարակի թելի պես միալար խոսում էր միշտ բերանը փակ Մարինեն։

Մարինեն դանդաղ մտավ լողասենյակ լվացվելու։ Մինչև այժմ լապրած մի հաճույք էր վայելում նա։ Հանկարծ մի շատ մտերիմի կարիք զգաց, թեև տունը լիքն էր հարազատներով։ Սիրտն ուրիշ զգացումից էր ուզում։ Գլուխը թեթև տաքանում էր։ Առաջին անգամ էր կոնյակ խմում, այն էլ հարյուր գրամ միանգամից։

Հետո նա մտավ ննջարան, ուր ոսկեզույս էր թափվում ներս լայնափեղկ պատուհանից։ Նայեց մահճակալներին, զգեստապահարանին։ Տե՛ր աստված, մի՞թե սրանք այսպիսի շքեղ փայլ ունեին և առաջին բոպեներին։ Մարինեն մոտեցավ ավելի. թվում էր, թե պահարանի դռնից իրեն էր նայում նկատելի գեղեցիկ, իր հասունացումն ապրող, ինքնագոհ արտահայտությամբ, թափանցիկ մաշկով մի կին, որ պետք է Մարինեն լիներ։ Եվ ո՞վ կասեր, թե այդ կեցվածքը մի իշխանուհու չէր։ «Այս բոլորն ի՞մն են, ի՞մ սեփականը, ինձ համար ձեռք բերվածը, ի՞նձ արժանի, ինչպես սիրում է ասել հայրս»։

Աղնիվ ըմպելիքը թափանցում էր տիրաբար նրա ողջ էությունը՝ թեթևացնելով նրա կշիռը, ավելի փայլ հաղորդելով շագանակագույն աչքերին, ներկված, սակայն վարդագույն շրթունքներին։ Այտերը, որ այդպես էլ ոչ մի շպար չէին տեսել, ծիծաղում էին, բոցկլտում։ Իրենք իրենց կիսարացվում էին վայելք ապրող կրակված շրթունքները...

Մութի ծայրն անսպասելի կանգ առավ այն որոշման վրա, թե ամուսինն արժանի չէր իրեն։ Ո՞ւր էր այն մեկը, որ պիտի գնահատեր այս անարատ գեղեցկությունը։ Ո՛չ, Մարինեին շատ ավելի գործնական, բերող, վայելող ամուսին էր հարկավոր...

Մի պահ Մարինեն չկարողացավ հաշիվ տալ իրեն, թե իր ետևում ո՞ր պահարանն է արտացոլում իր պատկերը։ Ամեն ինչ գերազանցել էր կնոջ սպասելիքները։ Ու վերջին մտքի մեջ չխորանալու համար նա հյուրասենյակ մտավ։ Հանկարծ նա մտածեց սկեսուր-մայրիկի մասին, որն անձնական կյանքում երջանիկ չլինելով՝ այդքան լավատես էր մնացել։ Քսանհինգ տարեկանից նստել էր առանց ամուսնու, պահել, կրթություն էր տվել միակ զավակին, տասնյակ տարիներ գրասենյակային մի սովորական աշխատող

լինելով։ Բացի համեստ աշխատավարձից ուրիշ ոչ մի եկամուտ չի ունեցել։ Եվ դարձյալ աչքը կուշտ է, ամեն ինչի նայում է վերևից ու ոչ մի նախանձի զգացում չունի ուրիշների ունեցվածքի նկատմամբ։ Դե, դրանք էլ երևի ուրիշ ձուլվածքի են,— շատ ավելի իրեն էր ուզում արդարացնել Մարինեն։ Ախր էլ ի՞նչ կին, եթե իրեն չի ուզում շրջապատել այն ամենով, ինչը հենց-իրենց համար է ստեղծված...

Ինչ խոսք, եթե Մարինեն համոզված չլիներ Գուրգենի մեծ ապագա ունենալու հարցում, որը լի ու լի բավարարելու էր իր նյութական պահանջները, երբեք չէր ամուսնանա նրա հետ։ Բայց ի՞նչ ստացվեց. թեկնածուական դիսերտացիայի պաշտպանությունը չնչին չափով ավելացրեց աշխատավարձը, ու Մարինեին մնաց միայն ամուսնու կոչումով մի թեթև հպարտանալը։ Նյութականի բարելավումը մնաց մասամբաձև հոր վրա։ Եվ ինչքան բերում էր հայրը, այնքան անհամարձակ ու ստորացված էին զգում իրենց մայրը ու որդին։ Ինչքան էլ վերջիններս ընդդիմանում էին, խնդրում, որ նման բան չանի խնամի Վարդազարը, փորձում էին նույնիսկ ետ տալ բերածը, Մարինեն այնպիսի սուգ էր բարձրացնում, որ Սաթենիկը ստիպված նահանջում էր բարեկամությունը չխաթարելու համար։

Հետևանքն այս բոլորի լինում էր այն, որ Մարինեն տարի առ տարի ավելի հաստատուն էր կանգնում հոր կառուցած պատվանդանի վրա, որին մնում էր երկրպագել։

Մի խոսքով, անել վիճակ էր ստեղծվում Սաթենիկի ու Գուրգենի համար։

Մարինեն ծածկեց ճաշասենյակի դուռը՝ իրեն շրջապատից անջատելու համար։ Այնտեղ՝ խոհանոցում հավանորեն յուրաքանչյուրն իր զբույցն էր տանում։ Գուրգենը երևի բակում ծխում է։

Մարինեն կանգնել էր բյուրեղապակե այն զամբյուղի առջև, որ ամբողջ ճանապարհին իր գրկում էր պահել։ Հիմա սրա նրբաքանդակ տաշվածքների մեջ ճառագայթում էին իր մաղերը, աչքերը, շրթունքները, փոսիկով ծնոտը, ամեն ինչ։

Ավելորդ էր այլևս, որ նա ջանք թափեր հսկելու իրեն. ապակե այս զարդերի և ոչ ամանների (քանի որ Մարինեն

դրանք չէր դնելու սեղանին), այլ զարդերի շողերի մեջ նա որոնում էր իր դեմքը, որով քիչ առաջ հիացած էր։ Բյուրեղապակու կախարդական կտրվածքները ստեղծել էին երբեմնի կանացի դեմքի այնպիսի՛ աղավաղում, որ այլ պայմաններում սարսափ կարող էր պատճառել։

Արդեն գինով Մարինեն հայտնաբերեց, որ ինքը շարունակում է լուռ ծիծաղել։ Անհասցե ծիծաղ։ Կանացի բնատուր այն զգոնությունը, որ նա թերել էր հայրական տնից, մի ակնթարթ փայլատակումով հիշեցրեց նրան, որ դա կարող էր հետևանք լինել գինովության։ Բայց հաջորդ վայրկյանին էլ այն տեղի տվեց. բյուրեղապակե զամբյուղի վրայի կինը, որ իհարկե, Մարինեն պետք է լիներ, համառորեն ու դաժանորեն շարունակում էր ծամածռել, այլանդակել իր դեմքը։

— Ի՞նչ է պատահել, Մարինե,— տագնապած հարցրեց սկեսուրը դոների միջից, որը թերևս վաղուց էր հետևում։

— Օ՛յ... ոչի՛նչ, ոչի՛նչ, կանցնի, մամ ջան... Ես ուրախ եմ, ազնիվ խոսք, ուրախ եմ։

Խնամիներին ճանապարհելուց հետո, թոռների հետ առանձնացած Սաթենիկը չէր կարողանում քնել։ Հառաչում էր, մի կողքից մյուսն էր շրջվում։ Մի ծանր, շատ ծանր բան էր կատարվում նրա հոգում։ Այդպիսի զգացում ունենում են երևի աշխարհում ամենաթանկ բան կորցրած մարդիկ։

Վալերիանի շնչեց։ Գիրք վերցրեց կարդալու, չկարողացավ։

Ննջարանում, երեսով դեպի պատը, աչքերը չէր կարողանում փակել նաև Գուրգենը. նա հանձնվում էր նոր ծագած ու տանջալի մտքերին. կկարողանա՞ այսուհետև ապրել իրերի տիրական իշխանության տակ, իրեր, որոնց առջև հավանորեն ամեն րոպե աղոթելու է Մարինեն, ինչպես խորանի առաջ։ Ի՞նչ է կատարվում այդ կնոջ հետ։ Հենց սրա՞ հետ է ապրել ամբողջ տասնհինգ տարի... Անհավատալի է, սակայն այդպես էլ ոչ ոքի մտքով չանցավ հարցնել իրենց, թե ինչ են տեսել եվրոպական այդ երկրներում։ Գուրգենը լավ գիտեր, թե մյուս սենյակում ինչու էր վառ մնացել լույսը...

— Գուրգե՞ն, ինչո՞ւ չես քնում,— հեռու-հեռուներից մի օտար ձայն հարցրեց.— Փա՛ռք աստծո, ամեն ինչ լավ հասցրինք, ոչինչ չկոտրվեց։ Դե, խոսի՛ր։

— Իսկ ինձ թվում է, որ մի շատ թանկագին բան կոտրվեց այսօր մեր տանը,— տխուր արձագանքեց ամուսինը։

— Ի՞նչ կոտրվեց,— սարսափահար տեղից վեր թռավ Մարինեն ու շուրջը նայեց։— Ասա՛, ի՞նչ կոտրվեց...

— Սի՛րտս, Մարինե, սի՛րտս կոտրվեց։

Ափերով բերանը փակելով՝ Մարինեն երկար ծիծաղում էր ամուսնու խոսքի վրա։

1986 թ.

ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿԸ

Ես վաղուց էի սպասում, որ մի օր ինձ զրույցի պիտի հրավիրի իմ հինգի «Ա» դասարանի գերազանցիկ Դանիելյան Արմենի մայրը։ Սպասում էի, թեև ամեն քառորդի պարտաճանաչ կերպով ժողովի էր գալիս այդ [ծնողը՝ առանձնապես չոգևորվելով այն գովեստներից, որ տեղում էի իր զավակի հասցեին։ Լսում էր շատ սովորական արտահայտությամբ, առնում էր թերթիկը ու հեռանում։ Իսկ ես սպասում էի մեկ ուրիշ հանդիպման՝ չհամարձակվելով ինձ մտահոգող հարցի շուրջ կայանալիք զրույցի նախաձեռնությունն ինձ վրա վերցնել։ Ո՞վ գիտե, ինչ անհայտներ են մտահոգում այդ ընտանիքին։ Որքանո՞վ է հարմար մատը դնել ուրիշի ցավոտ վերքի վրա։

Եվ ահա մի օր վերջապես հեռախոսով ինձ իրենց տուն է հրավիրում Արմենի մայրը։ Այցելում եմ դպրոցում հերթապահելուց հետո, հետաճաշին։

Երբ ներս մտա, զարմացա՝ այդտեղ տեսնելով նաև մեր թաղային բժշկուհուն, որ տարակուսած նայում էր տանտի-

բուհում։ Մի՞թե Արմենը հիվանդ է։ Դասի ժամանակ ոչ մի նման բան չէի նկատել։

— Իսկապե՞ս առողջ է երեխան,— աշխատելով ձայնին հանգիստ տոն տալ, անվստահ հարցնում էր մայրը։

— Միանգամայն առողջ,— շեղակի հայացքը ապակեպատ դռնից այն կողմ տանելով՝ ցածրաձայն պատասխանեց բժշկուհին— Ահա բոլոր անալիզները։ Ինքներդ էլ գիտեք, որ Արմենը հազվադեպ հիվանդացող երեխաներից է։ Դուք այնպիսի՞ ռեժիմով եք պահում նրան...

Բժշկուհին շարժում արեց գարնանային վերարկուն վերցնելու, սակայն նրան տարօրինակ թվաց մոր անհանգստացնող տարակույսը. մի՞թե ինքն իրավացի չէ...

— Հավատացեք, ձեր որդին բացարձակապես առողջ է։

— Հապա ինչո՞վ կարող եք բացատրել նրա անտարբերությունն ուսելիքի նկատմամբ,— հառաչանքով խոսքն արտաշնչեց մայրը։ Ապա հուսահատ մի տոնով ավելացրեց— Ասենք՝ ամեն ինչի նկատմամբ է երեխան անտարբեր։ Դուք պատկերացնո՞ւմ եք, ընկեր Սահակյան, որ բացի դասերից ուրիշ ոչինչ չի հետաքրքրում նրան։ Մի կարգին հեռուստացույց էլ չի նայում, չի իջնում բակ ընկերների հետ խաղալու...

Հայացքով նա իր ասելիքն ինձ էր ուզում ապավինել։

— Ի՞նչ անքաղաքավարի եմ, ներեցե՛ք,— ձեռքիցս առնելով տետրերի տրցակը՝ առաջարկեց վերարկուս հանել։— Հավանորեն ես չկարողանամ ձեզ շուտ բաց թողնել։ Գնանք հյուրասենյակ։ Դո՛ւք էլ եկեք, բժշկուհի։ Չէ՞ որ խոսքը ողջույնս հոգու և մարմնի մասին է լինելու։ Համեցե՛ք— նա տետրերը դրեց դաշնամուրի վրա, որը միակ շքեղությունն էր այդ տանը։— Նստե՛ք։ Նա մեզ չի կարող խանգարել, երբ իր սենյակում է, այն էլ դրասեղանի առջև...

Համեստ կահավորանքը, մաքրությունն ու կոկիկությունը հարգանք էր առաջացնում տանտիրոջ նկատմամբ։

— Նստեցե՛ք, խնդրեմ։

— Արմենի անտարբերության զգացումը շրջապատի նկատմամբ ես վաղուց եմ նկատել, թեև բացի «5» գնահատականից ուրիշ ոչինչ չի ստացել մինչև հիմա։ Չեմ թաքցնում, ես միշտ էլ ուզեցել եմ, սակայն չեմ համարձակվել հարցնել իմանալու համար, թե նա տանն է՞լ է ինքնամփոփ, հեռու մնում խաղերից։ Պատկերացրեք, ֆիզկուլտուրայի դասերին մասնակցում է շատ ավելի պարտքի զգացումից, քան՝ սիրուց։ Ավելացնեմ նաև, որ Արմենը միակն է, որ ոչ մի դիտողության չի արժանանում, բայց դա ինձ չի ուրախացնում...

— Իսկ դասամիջոցներին վազվզո՞ւմ է, քաշքշո՞ւմ սրան-նրան...

Նրա անհամբեր հայացքը պատասխան էր սպասում։

— Ո՛չ։ Եթե հերթապահը դուրս չանի, բոլոր դասամիջոցներին կմնա դասարանում։ Գիտե՞ք ինչ, երբեմն նկատել եմ, որ ընթերցանության ժամերին ինչ-որ գրում է։ Եվ այնքա՜ն խորասուզված է լինում գրելիքի մեջ, որ երբ մոտենում եմ, ցնցվում է ու թաքցնում այն։ Համոզված եմ, որ գրելու համար է վերջում միայնակ նստում։

— Օ՞ֆ, չգիտե՛մ, չգիտե՛մ,— հառաչելով տեղից ելավ մայրը։— Ի՞նչ ասեմ։

Անպատասխան հարցերի օղակը գնալով սեղմվում էր նրա շուրջը։ Նրա թափառող հայացքը տեղ չէր գտնում սենյակում։

— Ձեք պատկերացնի, թե ի՞նչ աշխույժ, ի՞նչ ուրախ երեխա էր, երբ նոր էր գնում մանկապարտեզ։ Նույնիսկ կարգին լաց լինել էլ չգիտեր... Բայց թե ե՞րբ եմ լսել նրա վերջին սրտաբուխ ծիծաղը, չեմ կարող ասել...

— Բայց ի՞նչ կարող է պատահած լինել,— անհամբեր հարցրեց բժշկուհին։— Երեխան կատարյալ առողջ է, գեղեցիկ, ոչ ոք չի վիրավորում, շրջապատված է գուրգուրանքով, ինչպես տեսնում եմ...

Մայրը կանգնեց սեղանի մոտ, ինչ որ որոշում հանելով, ագուցեց ու քանդեց մատները, երեսից դեն նետեց իջած մազերը։

— Դե, ի՞նչ թաքցնեմ, երբ հենց դրա համար եմ հրավիրել ձեզ, բարեկամներս։ Ուզում եմ պարզել, թե ձեր երկուսից որի՞ հիվանդն է իմ որդին։ Ո՞վ կարող է բուժել նրան, թեև... Ընկեր Սահակյան, ասացիք, որ հաճախ ինչ-որ գրում է Արմենը, ու երբ դուք մոտեցել եք...

— Այնպե՞ս է ցնցվել ու թաքցրել գրածը, որ ես հարմար չեմ գտել վերցնել գրածը...

— Շնորհակալ եմ, որ չեք պահանջել,— չոր արցունք կուլ տալով դժվարությամբ ասաց մայրը։— Նա այդպես սկսել է գրել, երբ նոր-նոր էր տառեր սովորել... Նա ամեն օր է գրում, իհարկե, դասերը պատրաստելուց հետո։

— Ինչպե՞ս չէի կռահում, գուցե ստեղծագործո՞ւմ է,— գլուտ արածի պես վրա բերեցի ես։— Ախր նա այնքա՞ն կարդացած աշակերտ է...

— Երանի՜ թե ոտանավորներ գրեր,— ախորժալուր ձայնով հառաչեց մայրը ու նստեց։ Ոչ ոք չէր ուզում հանելուկային լռության երկարատևությունը։ Այդ լռության մեջ այնպես էր թվում, թե մայրը շատ ավելի հետևում էր կըրծքում եղած տրոփյունին, որն արձակում է ոչ թե սիրտը, այլ ինչ-որ սարք, որը կարող է հենց այդպիսի պահի էլ կանգ առնել...

— Դե՞,— չհամբերելով՝ լռությունը փշրեցի ես։

— Արմենս ամեն օր նամակ է գրում իր հորը.. Այո՛, այո՛, իր հարազատ հորը, որ վաղուց թողել-հեռացել է՝ հեռը տանելով երեխայիս ուրախ մանկությունը...

Բժշկուհին թառամեց միանգամից։ Ես վախեցա հայացքս բարձրացնել։

Մայրը ելավ ու սկսեց քայլել սենյակում։ Այնպես էր թվում, թե ահա ուր-որ է նա պիտի վերանար՝ մեզ մոռ թողնելով իր ուրվագծերը, այնքան որ միանգամից էր լիցքաթափվել։ Երբ բարձրացրի հայացքս, նոր նկատեցի, որ նրա աչքերը նոր ջրված մանուշակի փայլ ունեին։

— Իսկ հա՞յրը...

— Ո՛չ մի պատասխան։ Նա ետ է ուղարկում նամակները փակ վիճակում...

— Եվ երեխան շարունակում է գրե՞լ,— ձեռքը կոկորդին տանելով՝ դժվարությամբ հարցրեց բժշկուհին։

Մայրը գլխով արեց՝ երեսը շրջելով։ Հավանորեն նա ձգտում էր ետ ուղարկել լճացած արցունքները։

— Ափսո՞ս... Այսպիսի երեխա ունենալ և...

Ուրիշ ի՞նչ կարող էի ասել, ինչո՞վ կարող էի սփոփել փշրված մոր սիրտը...

— Ամուսինները կարող են չհասկանալ իրար, անհնարին դառնել համատեղ կյանքը, բայց այդ բոլորն ի՞նչ կապ ունի երեխայի հետ,— կանացի արժանապատվությունը պահած՝ սկսեց խոսել մայրը։— Շատ ու շատ հայրերի գիտեմ, որոնք ոչ մի առնչություն չունենալով նախկին կնոջ հետ՝ հորից կարոտ չեն պահում երեխային։ Նրանք հաճախ են հանդիպում, միասին զբոսանքի են գնում, կինո, տիկնիկային թատրոն, համերգ, փոքրիկ նվերներ են գնում... Մի խոսքով, ամեն ինչ են անում մի մարդու համար, որն ամենաանմեղն է այդ բաժանության մեջ։ Չէ՞ որ երեխայի պատճառով չեն բաժանվում ծնողները... Բայց ահա այս մարդը...

— Նա մարդ չէ՛,— չհամբերելով՝ խիստ նեռեցի ես։

— Իրավացի եք։

— Երբ առաջին դասին երեխաների միջոցով տեղեկանում էի ծնողների զբաղմունքի մասին, ինչքան հիշում եմ, Արմենն ասաց, որ հայրը գերասան է ու հաճախ գտնվում է շրջագայության մեջ։

— Նա հիմա էլ նույնը կպատասխանի... Ես եմ այդպես հավատացրել։— Նա նորից ելավ, նորից սկսեց դեգերել սենյակում ու կրկին մոտեցավ սեղանին։— Ո՞վ գիտե, գուցե հավատո՞ւմ է դրան... Համենայն դեպս, վաղուց է, ինչ նա ոչինչ չի հարցնում հոր մասին... Այո, շատ վաղուց է, ինչ չի տալիս նրա անունը, և դա անհանգստացնում է ինձ... Նա միայն քնելուց առաջ գրում է... Ո՛չ, երբեմն նաև երազում կանչում է նրան...

Հանկարծ նկատելով աթոռի թիկնակին նետված երեխայի բաճկոնը՝ նա արագ վերցրեց ու դուրս տարավ, ասես դա կենդանի արարած լիներ ու կարող էր խանգարել մեր զրույցին։

— Թույլ տվեք մի գավաթ սուրճ հյուրասիրել..

— Ո՛չ, ո՛չ, մի ուրիշ անգամ,— կանխեցի ես։— Դրա ժամանակը չէ։

Դրսում, կիսախավարի մեջ ակացիայի կաթնաբույր թերթիկներն էին անձրևում։ Մոտակայքում գտնվող եկեղեցու զանգերի զողանջները աղավնիների նման թառում էին

ծառերի կատարներին, տանիքներին։ Մանրանիստ լռությունը զրույց էր աղերսում։

— Եվ ի՞նչ է գրում երեխան,— հայացքը խորքի դռանը՝ կամացուկ հարցրեց բժշկուհին։

— Մի՛ անհանգստացեք։ Երբ նա գրում է, ոչինչ չի լսում,— մատները տենդագին կերպով տրորելով ասաց մայրը։

Լարվածությունից նա այնպես էր սեղմել շրթունքները, որ սրանք սպիտակել էին՝ քամելով իրենց միջից արյան վերջին կաթիլը։

— Համարյա միշտ նույն նամակներն է գրում։ Երբ հետ են գալիս, ես զգուշորեն բացում եմ, կարդում ու գնում պատասխանը։ Իր նամակների պատասխանին է սպասում։

— Եվ ոչ իրե՞ն,— ակամա հարցրեցի, թեև աշխատում էի խնայել նրանց գաղտնիքները, չհանել, չշոշափել դրանք։

— Հորը հանդիպելու հույսը վաղուց է կորցրել։ Երբ երկրորդ դասարանում էր, խնդրում էր գալ ու տեսնել դրոշմանիշների իր հավաքածուն։ Հետո փոխեց նամակների բովանդակությունները։ Շատ եմ մտածել հոր փոխարեն ինքս պատասխանել, սակայն վախեցել եմ բռնվելուց. չէ՞ որ յուրաքանչյուր պատասխանի հետ երեխան մեծ հույսեր կարող էր փայփայել... Վերջերս ելույթ ունեցավ հեռուստացույցով, երեխաների համար։ Արմենս նայում էր կլանված, շունչը պահած, ասես ուզում էր հավաստիանալ իսկապե՞ս հայրն է։ Հետո վազեց, ալբոմից հանեց նկարը ու սկսեց համեմատել։ Համոզվեց, որ հայրն է ու մինչև վերջ չհեռացավ էկրանից։ Հաստատ գիտեմ, որ նրա խոսքին չէր հետևում։ Այդ երեկո երեխան նամակ գրեց առանձին ոգևորությամբ, բա՛յց... Դե՛, հայրը վաղուց է ամուսնացել. ունի ընտանիք, երեխա... Հարազատներից մեկին ասել է, թե չի հանդիպում Արմենին, որպեսզի չերկփեղկվի նրա դաստիարակությունը։ Մինչդեռ ես ճշմարիտը գիտեմ. նա չի հանդիպում, որպեսզի տղայի նկատմամբ ծնողական ոչ մի զգացում չառաջանա, որպեսզի կարիք չզգա նրան հանդիպելու, որպեսզի առհասարակ մտքից հանի, թե գոյություն ունի այդ երեխան...

Բժշկուհին նորից նայեց ապակեպատ դռան այն կողմը։

— Ա՛խ, դուք չեք պատկերացնում, թե ինչ ստիպանի է կենտրոնանում, երբ գրում է,— դռանը մոտեցավ մայրը։ Նրա դեմքին թախծոտ ապշանք կար։ Պապակ աչքերում չորացած արցունքներ— Հապա նայեք։

Եվ մոտենալով դաշնամուրին, բացեց կափարիչը, մի քանի արագավազ ակկորդներ վերցրեց, հետո ինչ-որ աշխույժ եղանակ նվագեց, որը նորմալ տրամադրությամբ նվագելու դեպքում ուրախ պիտի ենթադրվեր։ Նվագեց էլի, էլի, ապա հուսահատ ետ ընկավ թիկնակին ու բարկացկոտ ասաց.

— Տեսա՞ք, որ ոչինչ չլսեց,— նա մոտեցավ դռանը ու այն կողմ նայեց։— Նայեք, տեսնք, որ գրում է...

Ուղեկցուհուս մի ընթացքով մայրը ետ եկավ։ Մենք մոտեցանք դռանը։ Լուսամփոփի առջև, հակված գրասեղանին երեխան գրում էր։

— Ինչպե՞ս չէի կռահում,— խռովահույզ տանջվում էի ես։

— Այլևս ինչ կարող եմ անել,— ելքի մոլորումն էր տեսնում մայրը։— Ամբողջ օրն աշխատում եմ և գոհ եմ, որ քիչ ենք հանդիպում, թե չէ ի՞նչ եմ պատասխանելու նրա յուրաքանչյուր թեկուզ և անմեղ հարցերին։ Առաջ երբեմն բակ էր իջնում, խաղում էր երեխաների հետ, բայց հենց որևէ մեկին կանչում կամ մոտենում էր հայրը, Արմենս փախչում էր, թեև գողունի հայացքով շարունակում էր հետևել նրանց...

— Իսկ ես չգիտեի,— ոչինչ չունենալով ասելու, մեքենաբար կրկնում էի ես։

— Դուք կարծում եք՝ ես համոզված չէի՞ Արմենիս առողջությամբ։ Ուղղակի հեռավոր մի հույս էի փայփայում. ո՞վ գիտե, գուցե որևէ հիվանդության հետևանքո՞վ է այսքան մելանխոլիկ, ինքն իր մեջ ամփոփված դարձել։— Նա ետ եկավ ու գառնացած ավելացրեց։— Հիմա արդեն, բժշկուհի, դուք չեք կարող որևէ դեղատոմս առաջարկել երեխային, որն ամեն օր անպատասխան նամակներ է գրում հորը...

Իսկ ես նման էի այն աշակերտուհուն, որին անպատկերացնելի խնդիր են առաջարկում և պահանջում են անպայ-

ման լուծել։ Հայացքս պահել էի տեսարակների տրցակին, որի մեջ իր սովորական տեղն ուներ Դանիելյան Ալմենի տետրը, սովորական մի տետր, ինչպես մյուսները։

✓ Այս, ըստ երևույթին խնդիրներ կան, որոնց ուսուցչուհին էլ չի կարողանում պատասխանել, ու կյանքը «Զ» է նշանակում նրան։

— Ներեցեք, ես հիմա կբերեմ Արեմենիս վերջին նամակը։— Մայրը դուրս եկավ ու քիչ հետո վերադարձավ մի ծրար ձեռքին։— Խնդրեմ, կարող եք կարդալ։

Ես երկյուղած բացեցի ծրարը ու բժշկուհու հետ սկսեցինք կարդալ.

«Սիրելի՛ հայրիկ,

Քեզ նամակ եմ գրում այն օրերից, երբ տառեր սովորեցի։ Իսկ տառեր, իմ խնդրանքով, մայրիկս է սովորեցրել դպրոց գնալուց դեռևս երկու տարի առաջ։ Դժվարությամբ իմացա հասցեդ ու սկսեցի գրել։ Քանի տարի է՝ գրում եմ, ոչ մի անգամ պատասխան չստանալով։

Մինչև վերջերս հայրն ինձ համար ընդհանուր հասկացություն էր։ Ես տեսնում էի, որ իմ ընկերները հայր ունեն, ու այդ հայրերը ամեն օր գալիս էին մանկապարտեզ երեխաներին տանելու։ Երբ այդ հայրերը գրկում, համբուրում էին ընկերներիս, ես խսկույն հեռանում էի ու նախանձով երկար ժամանակ նայում նրանց ձեռքերն ամուր բռնած հայրերին։

Բայց երբ առաջին անգամ, սրանից չորս ամիս առաջ հեռուստացույցով հանկարծ տեսա քեզ, զարմացա իրական։ Մի փոքր աղջիկ էիր նստեցրել կողքիդ ու սիրուն-սիրուն հեքիաթ էիր պատմում նրա ու բոլոր երեխաների համար։ Ես նախանձում էի այդ աղջկան։ Իսկ երբ մի օր էլ մեր փողոցում տեսա երկուսիդ միասին քայլելիս, հասկացա, որ այդ երեխան քո աղջիկն է։ Ես սկսեցի հետապնդել ձեզ։ Դու այնքա՜ն անտարբեր անցար մեր կամարամուտքի առջևից, կարծես չէիր էլ հիշում, թե այդ բակում մի երեխա էլ է ապրում, որ ամեն օր սպասում է քեզ ուղարկած նամակների պատասխանին։

Դուք իջաք ստորգետնյա անցումը ու երեխայի պահանջով մտաք խաղալիքների խանութը։ Նա, քո երեխան, մատն

ուղղեց ամենամեծ տիկնիկի վրա։ Դու վերցրեցիր այն, կանգնեցրիր գետնին։ Տիկնիկը նաև քայլում էր։ Դու ուրախանում էիր երեխայի ուրախությամբ։ Հետո գնեցիր այդ տիկնիկը, համբուրեցիր երեխային ու հեռացաք։ Ես կանգնած էի ուղիղ ձեր առջև, նայում էի երեսիդ, բայց դու տարված էիր իմ քույրիկով ու չնկատեցիր ինձ։ Ես երկար ժամանակ նայում էի ձեր ետևից։ Երեխան ինչ-որ բան ասաց և դու բարձր ծիծաղեցիր։

Այդ օրը ես ոչ տուն էի ուզում մտնել, ոչ փողոցում մնալ, ոչ էլ որևէ ծանոթի հանդիպել։

Ամբողջ գիշեր դու էիր աչքիս առջև, քո աղջիկը։ Դուք դանդաղ հեռանում էիք, իսկ ականջիս մեջ մնացել էր քո հարազատ ծիծաղը։

Գիտե՞ս, հայրիկ, իմ ընկերներից Կարենն էլ հայր չունի։ Նրա հայրը մահացել է ավտովթարից։ Ես միշտ խղճացել եմ նրան։ Բայց հետո հասկացա, որ իմ վիճակը ավելի ծանր է։ Ես սաստիկ ամաչեցի նրան խղճալուս համար։ Չէ՞ որ դու ապրում ես մեր քաղաքում, բոլոր երեխաների համար հեքիաթներ ես պատմում, իսկ ինձ չես տեսել տասը տարուց ավելի։

Հայրիկ, ես էլ քո մասին եմ հեքիաթներ հորինում իմ ընկերների մոտ։ Չգիտեմ, նրանք հավատո՞ւմ են իմ պատմություններին, թե՞ այդպես են ձևացնում։

Այս նամակը գրում եմ հեռուստացույցով մի գիտահանրամատչելի ֆիլմ նայելուց հետո։ Ցուցադրում էին հյուսիսարևնակ պինգվիններին։

Զուն ածելուց հետո մայր պինգվինները երկու ամսով լվել էին շատ հեռու։ Զուն պահում էին հայր պինգվինները իրենց տոտիկների մեջ։ Ուր էլ գնում էին, թեև մեծ զգվարությամբ, նրանք իրենց հետ տանում էին և ձվերը։ Հետո ճուտեր դուրս եկան ձվերից։ Հայր պինգվինները հիմա էլ ձագուկներին էին պահում իրենց տոտիկների վրա։ Քայլելիս երբեմն կանգ էին առնում հայրերը և ձագուկներին կերակրում էին թռչնի կաթով։ Հանկարծ այնպես պատահեց, որ ձագուկներից մեկը դուրս պրծավ հոր ոտքերի միջից։ Նույն վայրկյանին ազմուկով վրա թափվեցին հարյուրավոր հայր պինգվիններ այդ ձագուկին որդեգրելու համար։ Բայց

հայրը կրուցով բոլորին ետ մղեց՝ իր ձագուկին առնելով սեփական ոտքերի մեջ։

Երկար ժամանակ ես չէի սթափվում. ուրեմն կենդանիների մե՞ջ էլ այդքան հզոր է հայրական զգացումը։

Ահա այս նկարը սարսափեց ինձ մտածել նաև իմ հոր մասին ու գրել գուցե վերջին նամակս։

Եթե այս նամակս էլ անպատասխան մնա, երդվում եմ, որ էլ երբեք չեմ գրի։ Ես կխնդրեմ մայրիկիս ուրիշ դպրոց տեղափոխել ինձ, որպեսզի կարողանամ գոնե Կարենի նման պատասխանել ինձ ուղված հարցերին հոր մասին։ Ինձ տալի՞ս ես այդ իրավունքը։ Քո Արմենս։

Ոչ մեկս չէր համարձակվում խախտել այդ ահավոր լռությունը։

Դուրս գալուց առաջ նորից նայեցինք ապակեպատ դռան մյուս կողմը։ Փոքրիկ լուսամփոփի տակ, գլուխը հակած սեղանին նստել էր մի հրաշք երեխա և ուզում էր լուծել աշխարհի ամենաբարդ խնդիրը։ Լույսն ընկել էր նրա նկարեն հակատին։ Թարթիչները երկու մուգ կամարներ էին նետել այտերին, կամարներ, որոնք հավանորեն հազիվ էին պահում ծով տխրությունը։ Տղայի ձեռքը շարժվում էր դանդաղ, անվստահ։ Նա այնպես խորասուզված էր նայում տողերին, ասես գրածն այլևս չէր հասկանում։

Զրույցն ավարտված էր։ Ավարտվել էր առանց որևէ եզրահանգման։ Մենք չէինք կարողանում շարժվել, քանի որ երեխան դեռ գրում էր։ Ի՞նչ էր մտածում այդ փոքր մարդն այն մեծ, անհասկանալի աշխարհի մասին, որին կոչում են հայր։

Բայց ահա նա թողեց գրիչը, ոտքի ելավ, անորոշ հայացքը հածեց շուրջը, տարուբերեց գլուխը, ասես գոտեպնդելով ինչ-որ որոշում։ Նայեց գրածին, ապա ձեռքն առավ այն մեծ վճիռ հանածի հաստատակամությամբ, վճիռ, որ գալիս է երկար տարիների տառապանքից հետո միայն, պատռեց գրածը, պատռեց էլի, էլի։ Հետո մոտեցավ ուլայն բացեց պատուհանը, դուրս նետեց ձեռքում եղած թղթի մանր կտորտանքները ու երկար ժամանակ նայեց հեռացող պատասխանիներին։ Ապա անմիջապես վրա բերեց փեղկերը՝

ասես վախենալով, թե քամին կարող էր հանկարծ մի պատառիկ ներս գցել։

Երբ շրջվեց երեխան՝ հենվելով լուսամուտին, անճանաչելի էր դարձել. հասունացել էր ասես մի քանի տարով ու այնպես էր թվում, որ այլևս ոչինչ չէր կարող տառապանք պատճառել նրան։

Ձեռքս դրեցի մոր ցնցվող ուսին.

— Հանգստացեք, սիրելիս, ձեր երեխան փրկված է։ Նա չի գրի այլևս, եթե մինչևիսկ պատասխան ստանա։

Նոյեմբեր, 1985

ԳԵՂԵՑԻԿ ՏԻԿԻՆԸ

Տարիներ առաջ Հանգստանում էի Արզնիի առողջարաններից մեկում։ Ինձ տեղավորել էին երկու մահճակալանոց մի համարում։

Չորրորդ օրը այցելեց գլխավոր բժիշկը, հարցրեց որպիսությունս ու ավելացրեց.

— Չե՞ք առարկի, եթե ձեզ մոտ տեղավորենք մի հահիլի տիկնոջ։

Նրա հայացքի պոչը սահեց հարևան անկողնու վրայով։

— Ավելի լավ, միասին հետաքրքիր կանցնի ժամանակը։

— Շնորհակալ եմ,— զգացված վրա բերեց գլխավոր բժիշկը։— Մանավանդ կիրթ կին է, հայ գրականության մասնագետ...

— Ուրախ եմ։ Կնշանակի գոհ պիտի լինենք հանդիպելուց։

Հաջորդ օրը, երբ մտա սրտաբանի մոտ, վերջինս աշխուժորեն դարձավ ինձ.

— Այսօր-վաղը մի գեղեցիկ տիկին է գալու մեր առողջարանը։ Ձեր սենյակում է մնալու։

— Ուրախ եմ, արդեն գիտեմ։

Երրորդ օրը հանքային ջրերի սրահում ասացին.

— Իմացա՞ք, որ շուտով մի գեղեցիկ տիկին է գալու ձեզ մոտ։

— Լսել եմ։ Ուրախ եմ։

Չորրորդ օրը նույն լուրը հաղորդեցին լողասրահում, ապա թերասիտը ոգևորված հայտնեց գեղեցիկ տիկնոջ գալուստի մասին։

Զարմանալի էր, որ բոլոր բժիշկներն ու սանիտարները գիտեին, թե ով էր գալու և որտեղ էր տեղավորվելու։

Հետո հավաքարարներն ասացին այդ մասին։ Բայց գեղեցիկ տիկինը դեռևս չէր երևում։

Վերջապես սենյակ մտավ տնտեսուհին ու աշխուժորեն փոխեց հարևան անկողնու սպիտակեղենը, որ անսովոր ճերմակ էր ու խնամքով արդուկված։

— Մի շատ սիրուն կին է գալու,— հպարտությամբ ասաց նա։ Հեռվից նայեց հարդարված անկողնուն, հավանեց երևի ու դնաց։

Հինգերորդ օրը, երբ նախաճաշից հետո պառկել էի հանգստանալու (այդպես էր պատվիրել բժիշկը), դուռը թակեցին։ Պատասխանիս վրա ներս մտավ հաղթանդամ մի երիտասարդ՝ երկու բավականին խոշոր ճամպրուկներով։

— Ներեցե՛ք,— ասաց։

Ճամպրուկները դրեց հարևան մահճակալի առջև ու գնաց։

Մի քանի րոպե հետո նորից թակեցին դուռը։ Այս անգամ հայտնվեց հիսունի շուրջ, գիրությանը հակված մի կին, երկու խոշոր փաթեթներ ձեռքին։

— Այստե՞ղ է հանգստանալու Նելլին,— հարցրեց՝ շատ լավ իմանալով, որ իրոք այդտեղ էր հանգստանալու նա, ում մասին ահա քանի օր շարունակ խոսում էին բոլոր կաբինետներում և բոլոր բուժաշխատողները։

Առանց պատասխանի սպասելու նա ձեռքի փաթեթները դրեց պահարանին, պատրաստի ժպիտով ներողություն խնդրեց ու գնաց՝ ետևից զգուշորեն ծածկելով դուռը։

Մեկ ժամ էր անցել երևի, երբ դուռը նորից թակեցին։

— Խնդրե՛մ։

Դուռը լայն բացվեց և տնտեսուհու ուղեկցությամբ, հանդիսավոր ընթացքով ներս մտավ մի իսկապես գեղեցկուհի՝ թեթև մի ժպիտ թևին գցած։ Տնտեսուհին նորից էնչ-որ փաթեթներ դրեց պահարանիկի վրա.

— Ջանի՛կս, լավ կհանգստանաս...

Այնպես թվաց, թե դուրս գալուց առաջ նա նույնիսկ պլուխ խոնարհեց։ Չթվաց, այլ գլուխը հենց այդպես խոնարհած էլ ծածկվեց դռան ետևում։ Նա միայն բարձրաձայն շասաց, թե այդպիսի կնոջ մնում է միայն երիրպալել։

Կարմրավուն ներկված ու մոդայիկ հարդարված հարեվանուհուս մազերը հուրհրատում էին արևի շողերի տակ։ Սրանց հարևանությամբ այնպիսի՞ մի լույս ճակատ էր ծածգրվում, որպիսին միայն Ռաֆայելի վրձինը կարող էր ստեղծել։ Հապա վեր խոյացող ու ձեռք չտված հոնքերը, առավել մանկական էին դարձնում ոչ խոշոր, սակայն կենդանի, հրաշք աչքերը։ Երբ լիաշուրթ բարևեց, ոսկե պարկուճներ նկատեցի բերնակողերում։ Անպիտան բնությունը միայն առամներ բաշխելիս ուշադիր չէր եղել նրա նկատմամբ։ Սակայն փափուկ ծնոտը, թավշե այտերի փոսիկները ի չիք էին դարձնում այդ պակասը։ Երկար ու ողորկ պարանոցից մի ոսկե շղթա էր իջնում մինչև գոտկատեղը, որից կախված լանջազարդի շրջանակը շողշողում էր ադամանդե քարերից։ Նույն զարդանախշերը կրում էին ադամանդե ականջօղերը, որոնք երևի այրվելիս պիտի լիներին՝ հպվելով քնքուշ ականջաբլթակներին։ Երկարուկ մի սքանչելի մատանի էր զարդարվում մոմակերտ այն մատների հարևանությամբ, որպիսին Լեոնարդոն երկար պիտի փընտրած լիներ՝ Մոնոնա Լիզային նվիրելու համար։

— Ես ձեզ ճանաչում եմ,— ժպիտով ու անմիջական ասաց նա՝ ժպիտը մահճակալին նետելով։— Երբ իմացա, որ դո՛ւք եք այստեղ հանգստանում, զանգահարեցի մոտ ընկերուհուս։ Նա մոտիկից է ճանաչում ձեր շրջապատի մարդկանց և այնքա՜ն ոգևորված խոսեց ձեր մասին, որ ես որոշեցի անպայման գալ, թեկուզ այս սենյակում մենակ չմնալու պայմանով։

Չգիտեմ, թե ինչպես ձեռքում հայտնվեց ականավոր, բայց վաղամեռիկ մի գրականագետի եռամատոր ժողովա-

ծուն։ Համոզվեցի, որ հետաքրքիր էր լինելու մեր համատեղ հանդիպումը։

— Գիտե՞ք, որ հինգ տարի շարունակ ես հանդստացել եմ այս սենյակում և այդ մահճակալին։

Ես ուզեցի ինչ-որ ասել, սակայն նա մեծահոգաբար կանչեց.

— Ոչի՛նչ, մի նեղվեք, եթե ձեզ համար հաճելի է պատրաստամբի դռան մոտ քնել, կարող եք։ Միայն դուռն ամուր ծածկեք։ Ես սոսկալի վախենում եմ միջանցիկ քամուց։

Նա բացել էր ճամպրուկներից մեկը և հանո՛ւմ-հանում էր մեկը մյուսից գեղեցիկ ու թանկարժեք շրջազգեստները և կախիչին հագցնելով՝ տեղավորում էր երեք դռնանի ընդարձակ զգեստապահարանում։

— Իսկ որտե՞ղ են ձեր հագուստները,— անկեղծ նկատեց նա և շուրջը նայելով՝ հայացքը հազիվ կպցրեց աթոռի թիկնակին նետված իմ երկու-երեք համեստ շրջազգեստներին։— Ա՛խ, ներեցե՛ք, ձեր աշխարհն ուրի՛շ է, դուք մրցա՛ք մարդ եք և այսպիսի բաներ դժվար հետաքրքրեն ձեզ։ Իսկ սրանք իմ թուլությունն են... Ես կի՛ն եմ...

Վերջին բառն այնպիսի մի քնքշանքով արտաբերեց, որ ես զգուշացա. կարո՞ղ է ինձ տղամարդու տեղ է դնում։

— Ինձ Նելլի Բաղդասարովնա՛ են ասում, այսինքն՝ այն դպրոցում, որտեղ դասավանդում եմ։ Ես աշխատում եմ ռուսական դպրոցում։ Մտերիմներս ուղղակի Նելլի են ասում։ Դուք էլ այդպես դիմեք, ի վերջո անհարմար է, դուք էլ հո ինձ հայրանունով չե՞ք դիմելու։

Դա արդեն մեծ շնորհ էր նրա կողմից։

Նա շարունակում էր հանել շրջազգեստները, անցկացնել հեռը բերած կախիչներից, թափահարել, մի հայացք գցել վրան, ապա կախել պահարանում։ Հավանորեն նա գիտում էր նաև իմ հայացքով։

Նելլիի կազմվածքը բարեձև էր, սլացիկ, քայլքը՝ ճոճուն։ Երբ մի քիչ հեռացավ, նկատեցի, որ ոտքերն էլ արժանի չէին տիրոջը, սակայն արտասահմանյան ընտիր կոշիկները ծածկում էին այդ թերությունը։ Մի խոսքով, մտովի ես էլ անցա նրան փառաբանողների կողմը։

— Ես կարող էի ավելի շուտ գալ, բայց ամուսնուս հետ Մոսկվայում էի, պրոֆեսոր-ակադեմիկոս Վինոգրադովի մոտ։— Տեսնելով անփոփոխ արտահայտությունս՝ ավելացրեց։— Նա՛, որ Կրեմլի հիվանդանոցում է աշխատում։ Հետո ուրիշ տիպաղոսներ ու կոչումներ ավելացրեց։— Չեմ կարծում, որ նրա մասին լսած չլինեք։

Ես ասացի.

— Կներեք, առիթ չեմ ունեցել այդ պրոֆեսոր-ակադեմիկոսին հանդիպելու։

— Բայց անպայմա՞ն լսած կլինեք,— պնդեց նա։— Միությանն առաջին դեմքն է նեղոպատոլոգների մեջ...

— Հավատում եմ, բայց չեմ լսել։

— Հասկանալի է,— ինձ արդարացնելու համար ելք էր փնտրում նա։— Դուք չեք տառապում այն ահավոր գլխացավով, ինչով ես՝ ահա քանի տարի շարունակ։

Պահարանում կախված զգեստները նա սեղմեց՝ հաջորդներին տեղ տալու համար։ Եվ բոլորն ընտիր, ճաշակով, արտասահմանյան, որոնցից քիչ է պատահում խանութներում։

— Ուրախությամբ այս բոլոր խալաթներս կտայի, միայն թե ձեր առողջությունն ունենայի,— ասաց նա՝ անցնելով մյուս ճամպրուկին։

Սրանք կոշիկներն էին։ Եվ ի՜նչ կոշիկներ...

— Սրանք էլ կտայի։ Բոլորը մոդայից անցած են։ Իսկ դուք ի՞նչ հիվանդություն ունեք,— հանկարծ ուշքի եկավ նա։

— Ոչ մի։ Սխալ ախտորոշում է եղել, ես էլ որոշեցի հանգստանալ։

— Իսկապե՞ս ոչ մի հիվանդություն չունեք,— ապշեց նա։

— Ո՛չ մի։

— Ինչ եք ասո՞ւմ։ Այդ տարիքում և ոչ մի հիվանդությո՞ւն։ Բացառիկ երևույթ է։ Դե իհարկե, առանց այս փալաս փուլուսի էլ դուք երջանիկ կլինեք...

Եթե նա մի քիչ էլ խորանար՝ իր անձը մի քանի վայրկյան մոռանալով, և համոզվեր, որ իրոք ոչ մի հիվանդություն չունեմ, անպայման կարտասվեր։ Բարեբախտաբար

հաջորդ բոպեին արդեն անցել էր ակադեմիկոս պրոֆեսորին, որին բախտ չէի ունեցել ծանոթ լինելու։

— Իմ կարծիքով ակադեմիկոս Վինոգրադովը ճիշտ ՝ընդհանոգեց։— Նա շարունակում էր կոշիկները զույգ-զույգ շարել ցածի դարակում։— Այս անպետքները բերել եմ այստեղ մաշելու։ Զզվել եմ արդեն...

Ես չասացի, թե քանի օրում հազիվ թե մաշվեին բերածները, եթե նույնիսկ հասցներ դրանք մեկական անգամ հագնել։

— Հետո Լենինգրադ գնացինք և գիտե՞ք ո՞ւմ մոտ, պրոֆեսոր Կապլանի։ Նրան արդեն չեք կարող չճանաչել։

— Չեմ ճանաչում։

— Իսկապե՞ս,— նրա ձայնի մեջ թաքցրած հիասթափում կար։— Ա՛խ, դուք առո՞ղջ եք... Ինչպե՞ս եմ նախանձում, բարի՛ նախանձով, իհարկե։

Նա քնքշորեն ճակատից հետ տարավ անհնազանդ մի մազափունջ։ Ետ տարավ սիրելով։

— Անհարմար եմ զգում այս կոշիկները հագնել, բայց հո չե՞մ թափելու, բոլորովին նոր են։

Նա արհամարհանքով նայեց մեկը մյուսից նորը ու մոդայիկ կոշիկներին, որ խոռված շարվել էին իրար կողքի՝ դատավճռին սպասող հանցագործների նման։

Հազիվ մեկ բոպե դադար տված՝ շարունակեց դյուտ արածի ոգևորությամբ։

— Եվ գիտե՞ք ինչ ասաց պրոֆեսոր Կապլանը, որ՝ մոտ ընկնելու համար ամիսներ առաջ են հերթագրվում. «գերհոգնա՞ծ եք»։ Ես կարծում եմ, որ նա ճիշտ է։ Նոր լաբորատորիան ենք ստացել քաղաքի ուղիղ կենտրոնում։ Դե գիտեք, թե հիմա ինչպիսի բնակարաններ են շահագործման հանձնում։ Միայն քարերը թողեցինք։ Թե ի՞նչ ենք քաշել այս վեց ամսվա ընթացքում, աստծուն է հայտնի։ Միայն տասնչորս տեսակի վարպետներ եկան։ Դուներն էլ փոխեցինք. բոլորը դուրից են, էլ չեմ խոսում պարկետի մասին։ Ուղղակի զորգեր հյուսեցին վարպետները մանրատախտակներից։ Չես ուզում ոտքդ վրան դնել։ Երանի՞ մի անգամ երևում հանդիպեիք, և ես մեջ մոտ տանեի ձեզ։ Կտեսնեիք, թե ի՞նչ ճաշակ ունի ամուսինս։ Միայն լոզասենյակը որ

մանեք, չեք ցանկանա դուրս գալ. իտալական սալիկներն այնպիսի նուրբ գունավորում ունեն, որ թվում է, թե ծովի ալյակների մեջ եք գտնվում։ Հապա գեղի՞նը, լոզաթա՞սը, նիկելե ձողիկնե՞րը, ամբողջ պատը բռնող հայելի՞ն... Մի-մի խենթանալու բան է։ Պատկերացրեք, օրը երկու-երեք անգամ ջուրն եմ մտնում։ Հենց ամուսինս տուն է գալիս ու ինձ սենյակներում չի գտնում, իսկույն գլխի է ընկնում և ծեծում է բաղնիքի դուռը. «Զկնի՞կ, ոսկե՞ ձկնիկ...»։

Ոչ մի կերպ հնարավոր չէր նրան ընդհատել. նա տարերքի մեջ էր։ Խոսում էր, պատմում, հրճվում, հպարտանում, զմայլվում, հետո, երբ հիշում էր, ձեռքը ճակատին էր տանում.

— Ա՛խ, այս գլխացավը...

Մտավ լոզասենյակ։ Ուրախացա. հիմա «Ոսկե ձկնիկը» յուրը կմտնի և ես կփակեմ աչքերս։ Միայն այս ձևով կվերջակետեմ նրա խոսքը։

Չհուսցրի աչքերս փակել. առջևս հայտնվեց երկնագույն շղարշի մեջ ամփոփված մի ջրահարս՝ ժամանակակից սանրվածքով։ Փրփուր պենուարի տակից ձյունաճերմակ նայլոնե շապիկն իջնում էր մինչև հատակը։ Լայն թեղանիքները հրեշտակի տեսք էին տալիս նրան։ Մեր ո՞ր նորապսակ հարսը չէր նախանձի քառասնամյա այդ կնոջը։ Մի բոպե նա վայելեց իմ հիացական հայացքը, մատիկներով մի կողմ նետեց վերմակի ծայրը և խրվեց ճերմակ անկողնու մեջ։ Նա անիրական կղառնար, եթե հանկարծ պահարանիկի վրայից ձեռքը չառներ վաղամեռիկ գրականագետի դիրքը և պլուխը չնետեր բարձին։

— Ինչ տեսաք, բոլորը չեկի խանութից եմ գնել,— ի միջի այլոց նետեց նա՝ վայելելով այդ մենաշնորհը։— Միա՛յն չեկի խանութից։ Իսկ ամուսինս, եթե իմանա թեկուզ չեկի խանութում իր առած կոստյումից մի հատ էլ կա, չի՛ հագնի։ Մենք շատ զգայուն ենք այդ կողմից։

Ես այլևս չէի հավատում նրա գլխացավին։

— Իսկ հյուրասենյա՞կը... ամբողջ պատը պենալովկա կպցրեցին ու բրոնզ սրսկեցին։ Անկյուններում այնպիսի սյուներ են պատկերված, որ մտնողին մի վիթխարի դահլիճի տպավորություն է թողնում ընդարձակ հյուրասենյա-

կը... Հետո... հետո... հետո... Դուք պատկերացնո՞ւմ եք,— չգիտեմ ո՞ր խոսքի պատասխանին էր սպասում նա։

Վերջապես, որպեսզի որևէ կերպ արձագանքած լինեմ, հարցրեցի, թե քանի՞ կիլոգրամ պերլովկա է գնացել հյուրասենյակի պատերը ծածկելու համար։

— Չո՞րս կիլոգրամ,— ցնծագին պատասխանեց նա։

Քիչ էր, թե շատ, չհասկացա։ Ես միայն տարուբերեցի գլուխս։

— Այդ գրքում նաև շոպագրված հոդվածներ կան,— իսկույն միջոց որսացի իմ խոսքն ասելու։

— Այո՞։ Կկարդամ։

Բայց անմիջապես էլ անդրադարձավ դժվար հասանելի ակադեմիկոսներին իր չախտորոշված հիվանդությանը (ինչո՞ւ ինձ թվաց, թե նա դրանով էլ էր երջանիկ) հագուստանոցն, այն մուշտակներին, որոնք կարող է նույնիսկ բոան մեջ տեղավորել։ Նրա խոսքն ընդհատեց ամենափրկիչ ճաշի զանգը։ Ո՛չ, նա չէր կարող ընդհատել.

— Գլխավոր բժշկին խնդրել եմ, որպեսզի ձեր սեղանից օգտվեմ։ Դե, գիտեք, թե՛ նաև ինչ մակարդակի մարդիկ են բուժվում այստեղ։ Դեմ չե՞ք։

Ա՛խ, նա ուզում էր նաև մակարդակից էլ օգտվել։ Ի՞նչ կարող էի անել։

Դուրս ելանք սնյակից։ Նա անմիջապես թևանցուկ արեց ինձ։

— Այստեղ գալուց առաջ տեղեկացա, թե դուք որ սեղանից եք օգտվում։ Հետո հանդիպեցի բոլոր բժիշկներին։ Նրանք այնպես սպասում էին ինձ։ Իմ Գոգան շատ ուշադիր է նրանց նկատմամբ. սանիտարից սկսած մինչև գլխավոր բժիշկը...

Երբ մոտեցանք սեղանին, տեսա, որ մեկին տեղափոխել էին այլ տեղ։ Մյուս երկուսն ախորժակով ուտում էին։

Լիքը ափսեները դրվեցին մեր առջև։ Գեղեցիկ տիկինը գդալով խառնեց կերակուրը, անվստահ նայեց, ապա գդալը ոչ թե բերանին, այլ քթին մոտեցրեց ու ետ հրեց ափսեն.

— Տեսնենք, թե սրանց երկրորդն ինչ է։

Մեր սեղանակիցներն ավելի ախորժակով շարունակեցին ուտելը։

Երկրորդն էլ պատառաքաղով քշփորեց, կոմպոտը հաղիվ շրթունքներին մոտեցրած՝ կողմ դրեց։ Սպասեց, մինչև ես ավարտեցի։ «Մի՞թե քաղցած է մնալու»,— մտածեցի։

— Ի միջի այլոց, նրանց ներկայությամբ չուզեցի կանխել ձեզ,— դուրս գալիս նորից թևանցուկ լինելով՝ կամացուկ ասաց նա։— Մարդ էլ սրանց հույսին մնա՞։ Գոգաս վարորդի մի՛ջոցով, նա՛, որ ճամպրուկներս բերեց, ամեն ոք ուտելիք է հասցնում։ Եթե առաջարկեմ գալ գլխավոր բժշկի կաբինետը, չե՞ք մերժի։ Դիտե՞ք, մենք մենակ չենք լինի, մյուս բժշկուհիներն էլ են գալիս,— ճոլսզում էր նա երջանիկ։— Դո՛ւք էլ որ գաք, շատ հետաքրքիր կանցնի ժամանակը։

Ես հրաժարվեցի, ասելով, որ չեմ խորշում այդտեղի կերակուրներից։

— Մի քիչ այս պարտեզում չզբոսնե՞նք,— հարցրեց նա՝ մամացույցին նայելով։— Մի քսան րոպեից մեքենան կգա։

Հիմա էլ խոսում էր իր ունեցած մարգահատակ բյուրեղապակե ծաղկամանների ու սկահակների, միջակ ունակությունների տեր զավակների մասին, որոնց Գոգան անպայման պիտի տեղավորեր Համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։

— Իսկ նրանք ցանկանո՞ւմ են իրավաբան դառնալ։

— Նրանք ոչի՞նչ չեն ցանկանում դառնալ։ Ա՛յ, այստեղ լախտտ չի բերել։ Ի՞նչ կրթություն,— ասում են նրանք, եթե կարելի է առանց կրթության էլ լավ ապրել։ Բայց, ինչո՞ւ, երբ Գոգաս բաղաբի ճանաչված գատախաղներից է, ինչո՞ւ նրանք առանց բարձրագույն կրթության մնան։

Չգիտեմ որ խոսքից հետո նկատելով ծառերի վերին հարկերի շարժվող տերևները, ափերով ականջները ծածկեց ու վազեց ներս.

— Քամի սկսվեց, վախենում եմ գլխացավս բռնի։

Այդ պահին մի խումբ ուսուցչուհիներ մոտեցան ու ծանոթացան ինձ։

— Դա ո՞ր մինիստրի երկրորդ կինն է,— անմիջապես

հարցրեց կապուտաչ մի տիկին՝ ակնարկելով փախչող գեղեցկուհուն։

— Իսկ ինչո՞ւ երկրորդ,— զարմացա ես։

— Դե, առաջինի ժամանակ հազիվ հասցնում են մինիստր դառնալ, մինչ կինը երեխաներին է պահում, խնամում է ամուսնուն, քաշում է տան հոգսը և մնում է նույնը։ Հետո մինիստր ամուսինը սթափվում է և տեսնում, որ իրենք այլևս համապատասխան չեն։ Նա արդեն ընտրում է ավելի երիտասարդ ու գեղեցիկ, ժամանակակից մի կնոջ։

Այդ պարագան մտքովս չէր անցել։

— Եվ երկրորդի հետ համապատասխա՞ն են դառնում։

— Որոշ փոխզիջումներով։

Ծիծաղեցինք ու խրվեցինք զրույցի մեջ։

Երեք օրվա ընթացքում անընդմեջ լսեցի հարևանուհուս հիշած ակադեմիկոսների, ափի մեջ տեղավորվող մուշտակների, փալաս-փուլուսներն առողջարանում մաշելու, տան վերանորոգման, միջակ ընդունակությունների տեր զավակների մասին, որոնց, այնուամենայնիվ, Գոգան պիտի տեղավորի իրավաբանական ֆակուլտետում... Երեք օրվա միջոցում ոչ մի անգամ չրացեց միշտ ձեռքերում չարչրկվող գրականագիտական գիրքը։

Եվ ես սկսեցի խուսափել։

Չորրորդ օրը, երբ ուսուցչուհիների հետ զբոսնելուց վերադարձա սենյակ, Նելլի Բաղդասարովնային գտա բարձի վրա ընկած արտասվելիս։

— Ի՞նչ է պատահել։

Նա արտասվաթոր աչքերն ինձ հառեց.

— Դուք փախչում եք ինձնից։ Հենց մոտենում եմ, հեռանում եք։ Իսկ ընկերուհիս ասում էր, թե իմ ժամանակը շատ հետաքրքիր կանցնի ձեզ հետ...

— Ձե՛ր ժամանակը։ Իսկ ի՞մ,— միանգամից որոշեցի անկեղծանալ։— Այս քանի օրվա ընթացքում ինչքան ցանկացա գրականության աշխարհը տանել ձեզ, ինձ քաշեցիք ձեր լողասենյակը, որի մեջ ծփում են ալիքները։ Խեղդեցիք այդ ծովի մեջ, հոգիս հանեցիք ձեր բժիշկներով ու սխալ ախտորոշումներով, ձեր մուշտակներով ու գորգի նման շարված մանրատախտակ հատակով, ձեր վարորդով, որ

ամեն օր ճաշի հետ միասին բերում է թարմ սպիտակեղեն ու ներքնազգեստներ...

Կիսաթնքված բարձին, նայում էր ինձ անճանաչելի դարձած. չկային այտերի փոսիկները, աչքերի փայլը, մոմակերտ մատներն իրար էին ագուցվել, որից սպիտակել էին հոդերը։

— Խոսում եք մաքուր, ազնիվ ապրելու մասին, այդ խոսքերով էլ դաստիարակում եք ձեր աշակերտներին, միշտ ձեր Գոգային եք մեջ բերում որպես անկաշառ իրավաբանի։ Ասացեք խնդրեմ, ձեր ծանոթ ո՞ր ակադեմիկոսն է այդքան շռայլաբար ապրում, թեև նրա աշխատավարձը մի քանի անգամ բարձր է ձեր Գոգայի և ձեր աշխատավարձից, թեև նա միանգամայն իրավունք ունի լավ ապրելու։ Ուզում եք, որ ես հավատամ, թե այս բոլորը ձեռք եք բերել առանց կաշառքի՞...

— Դե... դե Գոգան վերցնում է, ճիշտ է, բայց չափավո՞ր,— ակամա կմկմաց նա, ասես գատարանում լիներ։

— Չափավո՞ր։ Իսկ ո՞րն է ձեր չափավորը... Ձեր բերանով երեկ ասացիք, որ դուք աշխատանքի եք գնում ոչ թե աշխատավարձի կամ երեխաներին ինչ-որ բան սովորեցնելու, թեև նրանք ոչինչ էլ չունեն ձեզանից սովորելու, այլ ամեն օր նոր հագուստներով երևալու անցորդներին, ծանոթներին ու անծանոթներին զարմացնելու... Բավա՞լ է, թույլ տվեք ազատվել այս մղձավանջից...

— Ներեցե՛ք, ձեր աշխարհն ուրի՞շ է, դուք...

Ես արդեն դրսում էի։

Նույն օրը երեկոյան Գոգայի մեքենան եկավ ու տարավ գեղեցիկ տիկնոջը, որն այդպես էլ չհասցրեց հետը բերածների գոնե մի մասը հագնել։

Ամիսներ հետո նրան հանդիպեցի մի կնոջ հետ։ Ուզեցի մայթս թեքել, բայց նա ինքը մոտեցավ ու ջերմորեն ողջագուրվեց.

— Ջանի՞կս, թանկագի՞նս... ծանոթացի՛ր, Նոնա... Նա է, որի մասին քեզ արդեն պատմել եմ, որի հետ մենք անմման ժամանակ ենք անցկացրել Արզնիում... Օ՜, ի՞նչ օրեր էին...

Նրանից բաժանվեցի միանգամայն կարկամած։

Տարիներ են անցել։ Ըստ տեղեկությունների՝ գեղեցիկ տիկինը շաբունակում է զուգված, ճեմելով դպրոց գնալ։ Իսկ դավակնե՞րը։ Հանկարծ ու իրավաբաններ դարձած լինեն ու սկսեն չափ ու կշեռք անել իրենց անծանոթ մարդկանց կյանքի գնալիք ճանապարհները։

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

ՄԵԾ ԳՐՈՂԻ ՄՈՏ

1939 թվական։

Ինկո Ապոր անվան գրադարանի աշխատակցուհին արդեն դժվարանում է գիրք ընտրել ինձ համար։ Ինչքան էլ վայրիվերո՝ դարձյալ կարդում եմ ըստ հեղինակների։ Բանավոր դասերս պատրաստում եմ մեծ մասամբ դասամիջոցներին, գրավորները վերջացնելուց հետո հարձակվում եմ գրքերի վրա։ Առանձնապես հաճույքով եմ կարդում եվրոպական գրողների արևմտահայերեն թարգմանությունները։ Պարզ է՝ գերակշռող մասը արկածային երկն է։

Եվ ահա գալիս է մի ժամանակ (հավանորեն դա էլ տարիքի անցման շրջան է համարվում), երբ ես էլ եմ սկսում գրել։ Ինչ խոսք, իմ մտքով էլ չի անցնում գրող դառնալու կամ տպագրվելու գաղափարը։ Գրողն ինձ համար կիսաստեղված է, անիրական, անսովոր։

Գրածիս սիրային պատմության դեպքերն իրենց դրամատիկ սյուժեով տեղի են ունենում Ամերիկայում։ Սա էլ արկածային դրականության շնորհքը։

Ամեն օր, դասերից հետո գրում եմ, ինչ խելքիս է գալիս, առավոտյան դասամիջոցներին ընկերուհիներիս մոտ կարդալու համար։ Կարդում եմ ոգևորված, արտիստական տոգանությամբ, սահուն։ Չեմ կասկածում, որ իմ կարդալու շնորհիվ է նաև գրածս սքանչելի ենթադրվում։

Ինչպէ, լսում են լարված և սպասում հաջորդ հատվածին այնպես, ինչպես ամենալարված տեղում ընդհատված արկածային ֆիլմի հաջորդ սերիային են այսօր սպասում երեխաները։

Երբ, ի վերջո, հերոսներս հասնում են իրենց նպատակին, ով մեռնելու է, մեռնում է, ապրում է նա, ով պետք է ապրի, հաղթում է բարին ու չարն էլ կործանվում է, ընկերուհիներս միակամ գալիս են այն եզրակացության, որ հանցագործություն կլինի մեր կողմից, եթե թույլ տանք այդ «հանճարեղ» գործը մոռացության, անհայտության մեջ մնա։ Անհրաժեշտ է, առանց ուշացնելու, այն ցույց տալ իսկական մի գրողի, որպեսզի սա իմ տեղը որոշի խորհրդահայ գրականության պատմության մեջ։ Ինչքան էլ համարձակ է որոշումը, դարձյալ համառորեն կպչում ենք դրանից։

Իններորդ դասարանում եմ, ունենք մեր գրական խմբակը, որին հետևում են Պետական համալսարանի լեզվագրական ֆակուլտետի երրորդ կուրսից Էմանուել Պիվազյանը և չորրորդ կուրսից Խաժակ Գյուլնազարյանը։ Նրանց միջոցով հանդիպում ենք ունեցել Հովհաննես Շիրազի հետ։

Մեր որոշումն ընդունվում է նաև գրական խմբակում։

Բայց ո՞ր գրողի մոտ գնալ, երբ նրանց փողոցում պատահաբար տեսնելն իսկ երևույթ է մեզ համար։ Ո՞ւմ կարող ենք համարձակ դիմել և օգտակար խորհուրդներ լսել, երբ դասագրքում զետեղված, բազմիցս տպագրված անկենդան ֆոտոնկարներն ու երկերի անունները քիչ հուսադրող բան են ասում մեզ։

Բայց էլի ձեռքներս դասագրքին ենք տանում ու թերթոտում այն։

Նույն ոչինչ չասող նկարներն են, ոչինչ չասող թվային չոր տվյալները։

Մինչև կորոշենք, թե ում մոտ գնալ, ընկերուհիներիցս մեկը ծափ է դարկում.

— Գտա՛, գտա՛։ Մայրս Թիֆլիսում Հովնանյան դպրոցում է սովորել։ Դերենիկ Դեմիրճյանը ռուսաց լեզու է դասավանդել։ Մայրս լավ է սովորել, և ուսուցիչը շատ է սիրել նրան։ Կգնանք և կասենք, որ մայրս կարդացել է սա, շատ է հավանել և խնդրում է, որ դուք էլ կարդաք և ձեր կարծիքը հայտնեք։

Առաջարկությունն ընդունում եմ դժկամ, քանի որ Դեմիրճյանի ոչ արտաքինն է հուսադրող, ոչ էլ, մանավանդ, այն երեք պատմվածքները, որ տեղ են գտել մեր դասագրքում։ Մենք ուզղակի ստիպված էինք կարդում «Նիգյարը», «Ռաշիդը», «Ընկերները»։

Ի՞նչ կարող էինք անել, երբ ուրիշ ելք չկար։ Համաձայնվում եմ նաև այն հանգամանքը նկատի ունենալով, որ Դեմիրճյանը մի երևելի գրող լինելով՝ խստապահանջ չի լինի իմ նկատմամբ։

Վերցնում եմ չորս ընդհանուր տետրերս, լցված աշակերտական մի շնչով գրված լգիտեմ ինչով, և ընկերուհուս հետ գնում-կանգնում ենք գրողի դռան առաջ։ Աբովյան փողոցից քիչ ներս ընկած 20Կ-ի շենքի առաջին հարկում էր ապրում նա։ Ընկերուհիս ծեծում է դուռը։

Շեմքում հայտնվում է ինքը՝ գրողը, միայն թե ճազատ գլխին մի թասակ դրած։ Կարծես հենց դասագրքից է մեզ նայում իր մանր ու հետախուզող աչքերով։ Նույն չորուկ, այտոսկրերը ցից դեմքը՝ երկարամազ հոնքերով, ներս ընկած այտերով, սեղմված շրթունքներով։ Ջոլավոր երկար խալաթի փեշերը հավաքելով՝ նայում է մեզ առանց ժպիտի.

— Ի՞նչ եք ուզում...

Այդ տոնն էլ բավական է, որպեսզի կորցնեմ ոտքերիս տակի հողը։ Նկատելով անմխիթար վիճակս՝ ընկերուհիս կրակահերթի նման վրա է տալիս.

— Ընկեր Դեմիրճյան, իմ մայրը սովորել է Թիֆլիսի Հովնանյան դպրոցում, դուք ռուսաց լեզու եք դասավանդել, իմ մայրը լավ է սովորել, դուք նրան շատ եք սիրել, իմ մայրիկը կարդացել է ընկերուհուս գրածը, շատ է հավանել և խնդրում է, որպեսզի դուք էլ կարդաք սա (նա մատով ցույց է տալիս կրծքիս սեղմված չորս հաստափոր տետրերս) և հայտնեք ձեր կարծիքը...

Աչքերը կկոցած՝ գրողն սպասում է, մինչև կավարտվի խոսքերի կրակահերթը, մինչև ընկերուհիս շունչ կառնի երևի էլի ինչ-որ բաներ ասելու,— նա ձեռքով կանգ առի նշան է անում։ Դժվարանում եմ ասել, թե նա ինչ է հասկանում ընկերուհուս մի շնչով ասված խոսքից, բայց հավանորեն «Թիֆլիս», «Հովնանյան դպրոց», «ռուսաց լեզու» բառերն ինչ-որ բան են հաղցնում նրա մտքին, որ նա նույն ձեռքով ներս հրավիրելու նշան է անում.

— Նե՛րս եկեք, տեսնեմ ի՞նչ եք ուզում, այստեղ փչում է...

Դեռ հոսանքից էլ վախենում էր։

Երկար ու դատարկ միջանցքով մտնում ենք հյուրասենյակ-ննջարան-աշխատասենյակը։

— Ի՞նչ ես գրել,— առնում է տատրերս, մի տեսակ հուսահատված վրան նայում ու նստում մահճակալին, հենց անկողնու վրա։— Զարմանալի ժողովուրդ ենք հայերս, ամեն ուսն մի գրող ունի։

Երբ կարդաց № 1 տետրիս երեսին նախշատառ գրված «Էդուարդ և Ժաննա» խորագիրը, դեմքն այնպես թթվեցրեց, ասես քացախ խմեցրին։ Մի երկու բոպե եկեղեցական լռություն մեջ մնալուց հետո (որի միջոցում հազիվ զսպեցի ինձ, որպեսզի չխլեմ տետրերս ու չհեռանամ) հաղիվ մրմնջաց.

— Լա՛վ, թող մնան։ Կգաք մի շարաթից։

Դուրս ելանք հիասթափված։

— Իզուր եկանք,— ճանապարհին ասաց ընկերուհիս։

— Իսկական «նիգյարի» հեղինակն է,— լրացրի ես՝ չդիտեմ ինչը նկատի առնելով։— Ստիպված պիտի գանք, տետրերը հո չե՞նք թողնելու։

Տասը օրից կրկին թակում ենք գրողի դուռը։ Դարձյալ բացում է ինքը։ Մեզ տեսնելով՝ ավելի է մռայլվում. ուրեմն կարդացել էր... Հազիվ ենք դիմանում նրա ծանրահայաց նայվածքին։ Այնուամենայնիվ ասում է՝ մի կողմ քաշվելով.

— Նե՛րս եկեք։

Նույն սենյակը։ Նույն միակ մահճակալին էլ նստում է։ Սարթ դեմքին կենդանություն ավողը տենդափայլ աչքերն են։ Մնացել ենք կանգնած։ Չեմ հիշում՝ հրավիրե՞ց մեզ նստելու։ Նրա դեմքին անվերադարձ հիասթափություն է մնացել։

— Լսիր,— վերջապես դիմում է ինձ։— Դու բացի Երևանից էլի որտե՞ղ ես եղել։

— Ոչ մի տեղ,— ինչքան էլ զա-մացած՝ վստահ պատասխանում եմ ես։

— Բա դու Ամերիկայի մասին ի՞նչ գիտես, որ ամբողջ գործողությունը տեղափոխել ես այնտեղ։

Զգում եմ, որ գրողը ջախջախելու է ինձ անմնացորդ։ Արդիավոր է միայն դիմանալ։ Դիմանալ, իհարկե, հնարավոր է, եթե ինձնով հիացած ընկերուհիս այդտեղ չլիներ։

— Դու կարծում ես, որ անունն էդուարդ գրեցիր, հերոսդ ամերիկացի՞ դարձավ։ Ախր սա մեր Հակոբն է իր պատաքինով, բնավորությամբ, սովորույթով, խոսելաձևով, իր բառամթերքով...

Երանի՞, երանի՞ ընկերուհիս ներկա չլիներ։ Հարապատները միշտ էլ նկատել են, որ շնչին վիրավորանքի դեպքում անգամ լաց եմ լինում։ Ինչի՞ն։ Իսկ սա՞։ Ինչպե՞ս էի դիմանալու դեռևս սպասվելիք դիտողություններին։ Գոնե մի քիչ փափուկ խոսի, մի քիչ ժպտով, թեկուզ սարքովի ժպտով։ Չէ՞, այնպես է բռնկվել, կարծես ընկերը լինեմ կամ մի երեսուն տարվա գրող...

— Այս քո Ժաննան էլ մեր Սիրանույշն է,— շարունակում է գրողը՝ հյուսիի չափ անգամ չիդճալով ինձ։ Ասենք՝ խրդհալն ավելի նվաստացուցիչ կլիներ։— Այս քո նկարագրած պետը մեր Զանգուն է, քո այս Կուկու կզզին՝ մեր Սնանա կզզին...

Ես մտածում եմ միայն լաց չլինելու մասին։ Անիծված արցունքները հավաքվել են ու գունդ դառել կոկորդիս մեջ, չեմ կարողանում նույնիսկ թուքս կուլ տալ։ Դրան էլ կդիմանայի, միայն թե աչքերս չլցվեին։ Ի՞նչ անեմ, ինչպե՞ս թաքցնեմ վիրավորանքս։ Բայց այդ խոսքերը լսողը կարո՞ղ է չվիրավորվել՝ այն էլ ուրիշի ներկայությամբ ասված... Չէ՞, պետք է ցույց տալ, որ այդ խոսքերը ոչ մի արժեք չունեն ինձ համար...

— Այդ բոլորը ոչինչ,— շարունակում է գրողը՝ երբեմն նայելով ծնկներին մոռացած գունատ ձեռքերին։— Ինչ ուզում ես գրիր, բայց ինչպիսի՞ լեզվով ես գրել։ Սա խայտառակություն է։ Դպրոցում ձեզ ինչպե՞ս են լեզու սովորեցնում... Չեմ կասկածում, որ սա դեռ արտագրել ես...

Ուզում եմ զոռալով հասկացնել, որ ո՞չ, ո՞չ մի անգամ էլ չեմ արտագրել, որ կարդացել եմ ընդամենը մեկ անգամ, այն էլ ընկերուհիներիս մոտ... Ի՞նչ խոսեի, ինչպե՞ս խո-

սեի, երբ ծնոտս այնպես է սկսել գողալ, կարծես մեջն էլեկտրական հոսանք կա։ Ջեմ համարձակվում ընկերուհուս նայել, որ հիմա պատժված այն ծնոտի նման է կանգնել, որի երեխան ուսուցչի ամենահասարակ հարցերին չի կարողանում պատասխանել... Իսկ ինքն ինչքա՞ն վստահ էր իմ գիտելիքների վրա... Ոչինչ չեմ հասկանում։ Ախր մեր պատարանում, մաթեմատիկական առարկաների մասին չեմ խոսում, հումանիտար առարկաներից միշտ էլ ուշքի եմ ընկել որպես լավ աշակերտ...

— Գրածը մի քանի անգամ պետք է արտագրել,— շարունակում է գրողը— Դուք գիտե՞ք, որ Լև Տոլստոյն իր «Պատերազմ և խաղաղություն» վեպն արտագրել է ինն անգամ, իսկ «Աննա Կարենինան»՝ տասնմեկ անգամ...

Մի վայրկյանում լսելիքս անջատում եմ նրա ձայնից։ Ջէ՛, ես հիմա սրան այնպե՞ս վարկաբեկեմ, որ... որ...

Ա՛խ, Իգա, Իգա, ինչո՞ւ լսեցի քեզ։ Ախր ամեն անգամ, երբ տեսնում եմ այս մարդուն Աբովյանով իջնելիս, ամառվա շոգին անգամ աշնանային վերարկուն ձախ թևին գցած, աջով հիվանդ ոտային թեանցուկ, բոլորովին էլ հաճելի տպավորություն չէր թողնում վրաս։ Սպիտակ կոստյում էր հագնում, սպիտակ կոշիկներ, եղրավոր գլխարկ էր դնում, միևնույն է, ես հիացած չեմ եղել սրանով։ Ա՛յ, Միքայել Մանվելյանն ուրիշ է։ Նա էլ է ամառը սպիտակ կոստյում հագնում, եղրավոր գլխարկ դնում, ձեռնափայտն էլ արագությամբ է շարժում ընթացքի հետ, ու երեխաներով երկարաժամանակ նայում ենք նրա նեռից։ Կամ Թոմիովենցը... Ափսո՛ս, որ նա այլևս չկա։ Նա որ գարա էր դալիս գիմացի մուտքից, ոչ ոք չէր կարողանում անտարբեր մնալ բարձրահասակ, ալեխառն հարթ մազերը հետ տված, երկնագույն արտահայտիչ աչքերով, կիրթ արտաքինով այդ մարդու։ Նկատմամբ։ Բա նրա «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» գի՞րքը... Կամ Ստեփան Զորյանը...

Իսկ սրան նայում ես ու չես հավատում, որ ինչ-որ ժամանակ երիտասարդ է եղել...

Թող հիմա ինչքան ուզում է խոսի, միևնույն է, չեմ լսիլ։

Գոռոզ գիրք եմ ընդունել և նայում եմ տան իրերին։ Մի

Պրանց շիֆոնիերկայի՞ն նայեք։ Մենք էլ ունենք ճիշտ այսպիսին, բայց մերի ապակին կոտրված չէ գոնե։ Բա սրա տատրակ դրասեղա՞նը, վրան անկանոն դասավորված գրքեր, թափթփված թղթեր, թանաքամանը՝ ճանճը մեջը (սա արդեն ինքս եմ հորինում), էտաժերկա՞ն... մի գրքի պահարան էլ չունի, պատից կախված առանց տուփի ջութա՞կը, տեսեք-տեսեք՝ նվագում եմ (ես հետո եմ իմանում, որ գրողն իսկապես, ամեն առավոտ նվագելով է արթնացնում փիանոյ աղային)։ Մի սրանց ճաշի հասարակ սեղանի՞ն նայեք, կողքերին շարված աթոռների՞ն։ Հաստատ մերի նման ճռճռում են։ Առանց նիկելի երկաթե հասարակ մահճակա՞լը, մեջտեղը փոս, ինքն էլ մեջը նստած։ Մի... մի...

Մինչև էլի իրեր կգտնեմ ծաղրելու համար, մեկ էլ բարձր շիֆոնիերկայի (զգեստապահարանի) պլիտին նստած մի փաշա կատու եմ նկատում. սև ու երկար մազերով, գոնչս պլխով մի կատու, որ խուշոր աչքերը հառել է վրաս։ Նայում եմ ուշադիր։ Անտարակույս իմ ոչ բարի հայացքին չդիմանալուց է, որ նա այնպիսի փափուկ թռիչք է կատարում, ասես մեջտեղից անհերևույթ պարաշյուտ կապված լինի։ Իր վագրիկի ընթացքով գնում է նա ու կուչուռում տիրոջ ծնկներին։ Առանց սրա վրա նայելու գրողն իր ցամաք մատները խրում է մազերի մեջ ու գանգալ, իր խոսքի տեմպի հետ համընթաց, քորում մեջքը։ Հաճույքից կատուն փակում է աչքերը։

Միևնույն է, ես ոչինչ չեմ լսում, ականջս անջատել եմ նրանից։ Բայց նա իր խոսքն է շարունակում երևի գարձյալ իմ փնթի լեզվի մասին։ Նա ճիշտ այն տպավորությունն է թողնում, ինչ ձայնն անջատած, սակայն պատկերը թողած հեռատացույցի էկրանից խոսող հազորդավարը։

Ահա մի ուրիշ կատու էլ, որ հարևան սենյակից փափուկ թաթերով մեզ մոտ է գալիս։ Իսկ երբորդը նստել է լուսամատագոգին ու կարծես ապակու մեջ մի բան է նկատել։ Հետաքրքիր է, ինչ կզգա այդ կենդանին, եթե հայելու մեջ տեսնի իրեն...

— Ի՞նչ ես ուշադրությունդ կատուներին տվել,— հանկարծ ինձ է հասնում գրողի զայրացած ձայնը։ Այլևս միայն ուսուցիչը կարող է բարկանալ ցրված աշակերտի վրա։— Ես բան եմ ասում, իսկ սա...։— Հետո միանգամից

փոխում է տոնը ու շատ լուրջ հարցնում։— Լսի՛ր, գայրոցն ավարտելուց հետո ի՞նչ ես մտածում դառնալ։

— Դերասանուհի՛,— հպարտ ու ինքնավստահ պատասխանում եմ ես, որի տակ գրողը պիտի հասկանար.

«Ես խնդրում եմ այդ ձևով չխոսեք ինձ հետ։ Հիմա ես կգ՛համ, և մենք ոչինչ չենք հանդիպի։ Այդ գործն էլ գրել եմ ոչ թե տպագրվելու, այլ պատմությանն ուրիշներին էլ տեղյակ պահելու համար։ Թե չէ, ես իմ ապագան արդեն որոշել եմ, և ձեր այդ դիտողություններն էլ ոչ մի արժեք չունեն ինձ համար...»։

— Դե կգնաս, ու քո դերասանությունը կանես,— հենց այդպես անխնա էլ պատասխանում է գրողը։— Իզուր չորս օր զրկվեցի քնից...։

— Թող քնեի՛ք,— վրա եմ տալիս ես՝ լացիս դարպասներն ամուր փակած։— Ինչո՞ւ չէիք քնում, ես ի՞նչ մեղավոր եմ...

— Բա այս հիմարությունն ո՞վ կարդար։

— Թող չկարդայի՛ք,— ես էլ իմ ուժն եմ ուզում ցույց տալ, այն էլ ընկերուհուս մոտ։— Թող կիսատ թողնեիք...

— Բա կարողանո՞ւմ էի ընդհատել,— այս էլ բարկացած ասաց, սակայն փոքր ու թափանցող աչքերում ծաղրի, թե՞ ժպիտի նման մի բան իրազեկելով։— Սպասի՛ր, մի՛ գնա։ Ախր կարդին պատմելանև ունես։ Հա՛, հա՛, ընթերցողին բռնել գիտես. մի դեպքը հետևում է մյուսին, մի արկածը՝ հաջորդին։ Հետո, պատկերացրու, հոգեբանություն էլ կա դրածիդ մեջ։ Խարակտերներ էլ են նշմարվում։ Երկխոսություններն էլ բնական են ստացվում... Բայց, միևնույն է, չգրե՛ս, չփորձե՛ս այս լեզվով գրել... Տաղանդը դեռևս հանձնարարություն է,— առարկություն չվերցնող տոնով խոսքը եզրափակեց նա։

— Չե՛մ էլ գրի,— որպես վիրավորանք՝ նեղանում եմ ես ու վերցնում տետրերս։

Հանձնում ենք դասը։

— Ո՞չ, կգրե՛ս միայն այն ժամանակ, երբ այլևս չես կարող չգրել,— արդեն դրսում, որպես վերջին պատվիրան նեղանում է իմ հեռից։

— Շնորհակա՛լ եմ,— բաց զայրույթով, սակայն ցածրաձայն պատասխանում եմ ես։

Դուռը ծածկվում է։ Մի պահ կանգ եմ առնում ու նայում ընկերուհուս, որ կրծոտում է շրթունքները հավանորեն լացը պահելու համար։ Երկուսս էլ մի մխիթարիչ խոսքի ենք սպասում։

— Պարզ չէ՞, որ քեզ նախանձեց,— պայթում է ընկերուհուս խոսքը։

Բնական է, որ ես չեմ առարկում։

Շուրջ ութ տարի է պահանջվում, որպեսզի կարդամ նոր լույս տեսած «Վարդանանքը» և համոզվեմ, որ գրողը ոչ թե խոսքով, այլ ապտակով պիտի դուրս վռնդեր ինձ լեզվի կատեգորիայի հարցում բախտավոր անտեղյակության մեջ գտնվելուս համար։ Ինչպե՞ս էի թույլ տվել իմ փնթի, անսիստեմ, պիսագրագետ լեզվով գրված չորս հաստափոր ատրերով խախտել մի մարդու հանգիստ, որը լեզվաշինարար էր, արձակի մեջ ճշմարիտ բանաստեղծ, որի համար լուռն իսկապես մի աշխարհ էր։

Հինգ տարի էր, ինչ որպես դերասանուհի աշխատում էի Սունդուկյանի անվան թատրոնում և բախտի բերումով եղիսեի դերն էի կատարում Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պիեսում և վայելում էի այն լեզուն, որը արյունակից էր «Վարդանանքին»։ Նոր էի պատկերացնում, թե գրողն ինչ հաճույք էր ապրել այդ երկերը ստեղծելիս։ Հիմա միայն ծայրից-ծայր կարդացի նրա բոլոր պատմվածքներն ու պիեսները։ Ապշեցի, թե այն երեք պատմվածքները, որոնց այլևս ոչ մի տեղ չհանդիպեցի, որոնք կարող էին նաև չլինել ու ոչինչ չպակասեցնել հեղինակից, ո՞վ էր գտել ու տեղադրել գաղտագրքում։ Ես անիծում եմ այդ մարդուն։

Դեմիրճյանը դարձավ իմ ուսուցիչը։

1950 թվականին, երբ արդեն մի տասնյակի չափ նովելներ էի հրատարակել, ամուսինս ասաց, որ Դեմիրճյանը կարդացել է դրանք և ցանկություն է հայտնել մոտիկից ծանոթանալ ինձ։

Համաձայնվում եմ, նկատի ունենալով, որ գրողը երբեք չի՝ հիշի ինձ, և հետո տպագրված գործերս այլևս չէին

տառապում այն հիվանդությամբ, որի համար գրողը զուրս էր եկել հավասարակշռությունից։

Գրողն ընդունեց մեզ ջերմ, հայտնեց միանգամայն բարենպատակ կարծիք իմ գործերի մասին։

— Միայն չշտապես և երկար աշխատիր գրածիդ վրա,— ասաց նա։

Այդ տարիներին գրականագիտության մեջ արդեն խորացող ընկերուհիս՝ Ալմաստ Զաքարյանը և ես հաճախ էինք այցելում գրողին, մեր մանր-մունր գործերով օգնում նրան։ Դեմիրճյանը վերանայում էր «Վարդանանքը» երկրորդ հրատարակության համար։ Թղթի սակավ տարի էր, ու նա գրում էր ձեռքն ընկած պատառիկների վրա։ Սև մատիտով էր գրում և իրար պոչից կպցնում գրանք տաեղով, գնդասեղով։ Մենք այդ թղթերն ազատում էինք մետաղյա կապանքներից, մկրատով էջի տեսք էինք տալիս տարբեր ձևերի ու որակի թղթերին, սոսնձում էինք կտորները, դարսում իրար վրա, որոնք և ուղարկվում էին տպարան։

Այժմ Դեմիրճյանը շատ ավելի ջահել ու հաճելի էր երևում, քան տասը տարի առաջ. մարդամոտ էր, բարի, հումորով։ Երբեմն խուլ հազը տանջում էր նրան։ Հաճախ շաքարաջուր էր խմում, ասելով, որ դա օգնում է հիշողությանը։

Նրա մոտ մեկ-մեկ գալիս էր Վարպետը։ Քիչ էին խոսում, ընդմիջումն ու դադարն ավելի երկար էին տևում, քան՝ զրույցը։ Գույն այդ դադարը երկուսի համար ավելի իմաստալից էր։ Երկուսն էլ ճարտարախոս չէին։ Երկուսն էլ ինքն կամազում էին ու թերես այդ էին նկատում, որ թերեմ ժպտալով էին տանում իրենց երկխոսությունը։

Չեմ հիշում, թե Դեմիրճյանի ծննդյան որ տարեդարձն էր, երբ այցելեցին Խաչատրյանն ու տիկինը։ Սեղանի շուրջ զրույցով հասան այնտեղ, երբ Վարպետն ասաց.

— Երբ որևէ գերասան է մեռնում, զգուշանում են մյուս գերասաններից։ Երբ մահանում է մի գրող, վախով սպասում են մյուս գրողները, կարծես մահը քարտեզով է շարժվում։

Երբ լույս տեսավ Դեմիրճյանի «Վարդանանքը» երկրորդ հատորը մի դրքում ամփոփված, առաջին օրինակներից մեկը վրա հեղինակը գրեց. «Միրելի նորածիլ տաղանդավոր Անահիտին, սրտագին նվեր հեղինակից, 27.8.51 թ.»։

Այդ վեպը դարձավ իմ դասագիրքը։ Իմ կամերտոնը։ Բան երևույթին գրողն անկեղծ էր մակագրել, այլապես մի բանի ամիս առաջ չէր երաշխավորի ինձ (Նարիրի Զարյանի և Ստեփան Զորյանի հետ միասին) գրողների միության մեջ ընդունվելու համար։ Չէ՞ որ այդ ժամանակ ես տպագրել էի ընդամենը մի լղարիկ ժողովածու և մի փիպակ ամսագրում՝ «Ոսկե վազերի մեջ» խորագրով, որը և դարձավ հանդեսաան վեպի առաջին գլուխ։

Հիշածս գրողներն այն տիեզերական հոգիներն էին, որ պատաբաց էին ընդունում շնորհալի երիտասարդ ստեղծագործողներին իրենց շարքերը։

Չեմ մոռանում, երբ Դեմիրճյանի դաղաղը զրված էր ֆիլարմոնիայի փոքր դահլիճում, Խաչատրյանը նստել էր ընկերոջ գլխավերևը ու ափերի մեջ օրորելով երևսը՝ հեկեկալով կրկնում էր.

— Էս ի՞նչ արեցիր, Դերենիկ, որբացրիր ինձ, հարազատս...

Այդպես էին մեծերը. մեկի կորուստը մյուսի որբացումն էր ընկալվում։

Հավե՞րժ փառ նրանց հիշատակին։

ՊԵՐԻԿԼԵՍՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Սամեն Գուլակյան

Միջահասակ էր, ճեղմակմորթ, մոխրագույնին խփող դարուստ աչքեր ուներ, [illegible] հմայիչ էին պատանում մարդ թարթիչների հարևանությամբ և առանձնապես մպատալիս, որն ամենքան էլ հաճախ չէր պատահում։ Ազնվական էր ողջ արտաքինը չդիտես այն բանի՞ շնորհիվ, որ ամեն օր սպիտակ էր դալիս աշխատանքի, թե՞ նրանով, որ ամեն օր [illegible] վերնաշապիկի հետ այնպիսի փազկապ էր կրում, որը [illegible] յամի հետ ներդաշնակ էր լինում։ Ընդգծված, բայց ոչ

սապատավոր էր քիթը, համաչափ շրթունքները կամային ծնոտի հետ համախոս ուժեղ բնավորություն էին շեշտում։ Լայնացող ճակատից ետ էին նահանջում նոսրացող մուգ շագանակագույն միշտ սանրված հարթ մազերը։ Քայլելիս ոտնաթաթերը մի քիչ դեպի ներս էր դնում, որը չէր խախտում հաստատուն ընթացքը։

Ամեն օր ճիշտ ժամը 10-ն անց 55-ին ուղղվում էր դեպի մեծ փորձասենյակ՝ աջ ձեռքին օրվա փորձվելիք պիեսը։ Դեռևս հեռվից նկատելով գլխավոր ռեժիսորին, որևէ սրամիտ խոսքից պայթած ծիծաղն անավարտ էր մնում։ Ու երկար միջանցքում միայն նրա ոտնաձայնն էր արձագանքվում։ Նրա ներկայությամբ իրենց անմիջապես հավաքում էին բեմի հասարակ բանվորից մինչև ժողովրդական արտիստը՝ նրա գլխի շարժումով արտահայտված բարևին պատասխանելու համար։

Մտնելով փորձասենյակ, ուր արդեն պատրաստ էին լինում անհրաժեշտ ռեկվիզիտն ու իրերը, Արմեն Գուլակյանը փոքրիկ սեղանին էր դնում հետը բերած պիեսն ու բացում պահանջվող էջը։ Զախ՝ դատարկ էջերը նախօրոք լցված էին լինում տանը պատրաստած միզանսցենների գծագրով։ Զափազանց պրակտիկ ուշիմություն ուներ ամեն ինչի նկատմամբ, միշտ աչալուրջ էր՝ վայրկյանական հայացքն անգամ հետախուզող։

Ամբողջ փորձի ընթացքում հազվադեպ էր փոփոխում տանը պատկերացրած միզանսցենները։ Նա այն ստեղծագործողների թվին էր պատկանում, որոնք թղթին են հանձնում մտքում արդեն պատրաստին։ Նրա սկզբունքն էր համարվանորեն՝ ուղղել մտքի ուժը ամենաբարձրի վրա. միայն այդ դեպքում է միտքը գործում իր լրիվ բեռնվածությամբ։

Արմեն Գուլակյանն անխառն, ձուլածո բնավորություն էր։ Բնածին ինքնահաստատումով հարգանք էր ստեղծում իր նկատմամբ։

Երկու հակադիր խառնվածքներ էին Արմեն Գուլակյանն ու Վարդան Աճեմյանը։ Վերջինս շատ ավելի պարզ հարաբերությունների մեջ էր արտիստների հետ, կատակում էր փորձի միջոցում մեկ էլ ցատկում էր բազկաթոռից, ցերեկ կատարի փոխարեն ավելի հասկանալիկը կատարում՝ երբեմն

պրոտեսկի հասցնելով այն, տեսարանը փոփոխում էր մի քանի անգամ, նույն վայրկյանին հանպատրաստի գյուտեր անում, ապա նորից ցատկում բազկաթոռի մեջ՝ մի ոտքը ծալելով տակին, չգիտես որտեղից ձեռքն առած հացի մի-չոկի մի կտոր տրորելով՝ գնդիկներ սարքում և կրակում ցանկացած կողմը։

Երկուսի բեմադրություններն էլ ստացվում էին գաղափարական, ինքնատիպ։ Նրանք աշխարհ էին եկել իրենց բեմադրվելիք պիեսների հետ միասին։ Թերևս դրա շնորհիվ էր, որ պատերազմի ու եռապատերազմի ծանր տարիներին, երբ քաղաքը խրված էր յուսաթողությունի խավարի մեջ, երբ մարդիկ հազար ու մի անակնկալ վշտեր ունեին, նույնիսկ ամենապլակատային ներկայացումների ժամանակ դահլիճը լցված էր լինում հանդիսականներով։

Գուլակյանը բարձր ու նորը ճաշակ էր հանդես բերում նաև ներկայացման ձևավորման, հագուստի, երաժշտության ընտրության հարցում՝ զրուցելով նկարչի, երաժշտի հետ։ Ամեն ինչի մասին նա այնպես էր խորհում, խոսում և կատարում, որպես թե դրանք իր կյանքի վերջին պահերն են։ Նա ազատ էր յուրաքանչյուր բոպեի նկատմամբ։ Նա ուժեղ էր ոչ այնքան իր մտահղացումներով, որքան դրանք կատարելու ունակությամբ։

Նա արտակարգ սրամիտ էր։

Սակայն արվեստագետի կողքին հավասար ուժով նրա մեջ խտացված էր կազմակերպիչ ղեկավարը, որպիսին, ավաղ, հազվադեպ է պատահում արվեստագետների մեջ։ Նա իր հավաք, ճիշտ, պահանջկոտ բնավորությամբ հաճախ ճնշում էր բոլորին։ Առանց վարանելու կարող եմ ասել, որ իր վեց տասնյակից ավելի տարիների ընթացքում Սունդուկյանի տնվան թատրոնն այդպիսի գլխավոր ռեժիսոր չի ունեցել։ Այստեղ է, որ պիտի հիշել Պլատոնի այն խոսքը, թե երանյալ են այն պետությունները, որտեղ հրամայում են փիլիսոփաները կամ տիրակալները փիլիսոփայում են։ Թատրոնն էլ իր տեսակի մեջ է մի պետություն, որն ապրեց իր Պերիկլեսյան ժամանակաշրջանը՝ 1941—1950-ականներին։

Ինչ խոսք, այստեղ վճռական դերը դերասանական այն

հզոր հավաքականի մեջ էր նաև, ուր շքեղորեն, իրենց տաղանդի ողջ կարողությամբ փայլատակում էին Հասմիկը, Հրաչյա Ներսիսյանը, Օլգա Գուլազյանը, Վաղարշ Վաղարշյանը, Ավետ Ավետիսյանը, Գուրգեն Ջանիբեկյանը և էլի շատ տաղանդներ, որոնցից յուրաքանչյուրը շուք ու փառք կարող էր բերել ուզած մայրաքաղաքի բեմին։ Էլ չեմ խոսում այնպիսի մի տիտանի մասին, ինչպիսին Վահրամ Փափազյանն էր, որը քայլող մի լեգենդ էր նույնիսկ ժամանակակիցների համար։ Սրանք թատրոնի ոգին էին, հենասյունը ու տրամպլինը։ Սրանց առկայությամբ մնացածները հանդես էին դալիս իրենց եղած ու չեղած կարողության ողջ լրիվությամբ, քանի որ փոխվում էր շափվելու շափանիշը, մակարդակը։

Անտարակույս այսպիսի մի ժամանակաշրջան է ապրել Ռուսաստանը 19-րդ դարում ռուսական դասական երաժշտության ասպարեզում, ուր կոմպոզիտորներին իր շուրջն էր հավաքում հռչակավոր երաժշտագետ Ստասովը։

Իր օրինակելի պահելակերպով Արմեն Գուլակյանը փակում էր ամեն տիպի ասեկոսեների դռներ։ Բոլորը դպոն էին, ուշադիր և պատասխանատվության բարձր զգացումով լցված։

Բոլոր ներկայացումներին, մասնավորապես իր բեմադրած, Գուլակյանը պարտադիր կարգով ներկա էր լինում։ Աչքից չէր վրիպում յուրաքանչյուր ամենաչնչին սայթաքումն անգամ։ Նրա ներկայությունը զգալիորեն ազդում էր ներկայացման մակարդակի վրա։ Նա այն մագնիսն էր, որի ուղղությամբ ձգվում էր բոլորի ուշադրությունը։ Իր օթյակից նա կարող էր նկատել, թե որ դերակատարը (թեկուզ մասնակցական տեսարանին մասնակցողը) դրմի տակից ֆոն չի օգտագործել, կամ ով է իր կյանքի կոշիկներով բեմ ելել՝ թեկուզ ամենաերկար հագուստն է կրել այդ ժամանակ։

Բոլոր ներկայացումները հանձնելիս Արմեն Կարապետի հետ նույն օթյակում նստում էր Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանը։

Գուլակյանն նաև այն ղեկավարներից էր, որոնք, չգիտես ինչ ճանապարհներով, կարողանում էին իմանալ յուրաքանչյուրի ոչ միայն կարծիքը, այլև մտածումներն իրենց

մասին և ըստ այդմ էլ իրենց վերաբերմունքն էին կարգավորում նրա նկատմամբ։

Եվ այնուամենայնիվ, այդ հեռատես, փորձառու արվեստագետը մի թերություն ուներ, որն աղարտում էր նրա լիարժեքությունը, նա սուբյեկտիվ էր։ Այստեղ Գյոթեն կասեր. «...մարդկանց մեջ իշխող սուբյեկտիվ տարրը նրանց մշակույթյան մեջ է առաջնորդում»։ Նա կարող էր ամենամիջակ ընդունակություն ունեցող դերասանին կամ դերասանուհուն, առաջ տանելու միտումով, նույն սալոնում հանձնարարել բոլոր ներկայացումների գլխավոր դերերը։ Նա կարող էր ժամեր շարունակ այդ նորաթուխի հետ փակվել իր տանձնասենյակում և պարապել, ջանք թափել, միայն թե փայլեր այդ ջահելը։ Նույնիսկ կարող էր հուշել (Ներես թատերագիրն ինքն էլ կռահում էր գլխավոր ռեժիսորի ցանկությունը) ամենադվասահական տիրույթներով փառաբանել այդ դերասանին։

Ապշել կարելի էր, թե ծնյալ այդ արվեստագետն ինչպե՞ս էր մեկից ավելի անգամ այդ սխալը թույլ տալիս իրեն, երբ իր իսկ աչքի առաջ այնպես էին փայլատակում այդ կեղծ տաղանդներն ու մարում, ինչպես հրթիռի կրակները՝ նախքան կհասնեն դեռևին։ Շատերն էին նկատում այդ, բայց ո՞վ էր այն գլխից ձեռք քաշածը, որ կարող էր բարձրաձայն մատնել այդ մասին։ Ասածու մասին տաճարում չեն վիճում։

Ստուդիայում երկու տարի նա դերասանի վարպետություն ավանդեց։ Գրողական իմ կյանքի համար դա իսկապես դպրոց էր։ Նրանից սովորեցի երկի կտորի, հատվածի վրա առանձին աշխատելու կուլտուրան։ Երբ ստեղծագործողը կարողանում է հասնել այն բանին, որ յուրաքանչյուր կտոր ունենում է իր սկիզբը, զարգացումը և վերջը, նշանակում է նա չի կարող ցածր մակարդակի գործ տալ։ Գեղարվեստական երկի մեջ ոչ մի անտեղի մանրամասն չկա։ Այս դեպքում է Պլուտարքոսն ասել. «Արվեստագետի համար ամենադժվարը սկսվում է այն ժամանակ, երբ կավի մշակումը հասնում է եղունգներին»։

Գուլակյանը բառեր տալով՝ հանձնարարում էր փոքրիկ պատմություններ գրել, որտեղ կարևոր դեր պիտի ունենա-

յին այդ բառերը։ Նման հանձնարարություններով նա աշխատում էր որոշել յուրաքանչյուր սանի մտավոր, լեզվական, երևակայության, ոճի, մտածելակերպի, հնարամտության սահմանները։ Մինչև վերջ էլ չկարողացա հասկանալ, թե ինչու Արմեն Կարպիչն ամբողջ թատրոնում միայն ինձ էր ազգանունով դիմում։ Ինձ բնավ հաճելի չէր այդ հանգամանքը, քանի որ որոշ պաշտոնականություն էի նկատում այդտեղ։

1945 թվականի մայիսի 9-ի առավոտյան, երբ հավաքվեցինք թատրոնում, Գուլակյանն ուսանողներիս հրավիրեց իր մեծ առանձնասենյակն ու թղթով փաթաթված թխվածքաբլիթ դրեց սեղանին։

— Վերցրե՛ք,— ժպիտով ասաց նա։— Համեցեք։ Այսօր ամենաերջանիկ օրն է մեզ համար։

Քաշվելով, անհամարձակ՝ յուրաքանչյուրս մեկական թխվածքաբլիթ վերցրինք, որի համը վաղուց էինք մոռացել։

Այդ օրը նա անճանաչելի էր դարձել իր մարդամոտությամբ, բարեհամբույր ժպիտով, որի կարիքը մենք շատ էինք զգում։

Չեմ մոռանում նաև այն օրը, երբ, չգիտեմ ինչ ուսելիքի հետ, սխտոր էի կերել։

Փոքր աշխատասենյակում նստած վեց ուսանողներով, սպասում էինք Արմեն Կարպիչին։ Երբ նա ներս մտավ, ակնթարթաբար կենտրոնացավ ու խիստ հարցրեց.

— Ո՞վ է սխտոր կերել։

Մեղավոր հայացքս իրեն հառեցի։

— Գնա վերջում նստիր։

Գնացի։

Քիչ հետո.

— Սեկոյան, գնա բաց պատուհանը և նստիր մոտը։

Գնացի և բացելով պատուհանը՝ նստեցի մոտը։

Սակայն, ինչպես երևում էր, չէր կարողանում ազատվել սխտորի հոտից։

— Երեսդ գարձրու պատուհանի կողմը,— ասաց նա՝ հազիվ պահելով ծիծաղը։

Ելա տեղից։

Ինչքան էլ թանկ էր ինձ համար նրա դասը, ասացի.

— Գնում եմ։

— Գնա, ուրիշ ճար չկա։

Դուրս ելա հանցավոր քայլերով։ Հաստատ գիտեի, որ իմ ետևից մի լավ ծիծաղելու էր։ Այնուհետև ոչ միայն մինչև ավարտելուս օրը, այլև մինչև թատրոնը թողնելը ես ոչ մի անգամ սխտոր չօգտագործեցի։

Պահեր էին լինում, երբ զեկավարն այնքա՜ն ջերմ էր դառնում, այնքա՜ն լավ էր ծիծաղում, որ երանի էինք տալիս նրան միշտ այդպես տեսնելու համար։

Բայց հնարավո՞ր էր։ Նա զեկավար էր, այն էլ ամենատարբեր խարակտերներից կազմված մի վիթխարի կոլեկտիվի։ Ով գիտե կյանքի բարդությունը. թերևս նա ներքին ինչ-որ զոհաբերությա՞մբ էր իրեն այդքան խստություն պատվաստել, որի շնորհիվ էլ զեկավարը զեկավար էր, կոլեկտիվն էլ՝ կոլեկտիվ։

Նա առանձնապես գուրգուրանքով, որդիական քնքշությամբ էր վարվում Հասմիկի հետ, ասես զգալով, որ մեծ դերասանուհին իր կյանքի մայրամուտն էր ապրում։

Այդ ժամանակ էր, որ մայրս անհույս պառկած էր քաղաքի դիսպանսերում՝ թոքերի սուր վարակիչ հիվանդությամբ։ Եկել էր այն պահը նաև, երբ ես մինչև իսկ մտահոգվում էի, թե ինչպես եմ հուղարկավորելու նրան, եթե վաղագույնը պատահի։ Չէ՞ որ ոչ ոք չունեի մի պառավ տատից բացի։

Չգիտեմ, թե այդ հոգեվիճակին ինչպե՞ս էր կանխագուշակել Գուլակյանը, որ վարիչի միջոցով հայտնել էր ինձ, թե ինձ մտահոգող հոգսը թատրոնն իր վրա է վերցնում։

Երբ նախավերջին անգամ այցելեցի մորս ու տեսա նրան խուզված գլխով, արցունքներս հազիվ պահեցի. եթե լաց լինեի, մայրս չէր դիմանա։

— Բալի՜կս,— գլխաշորին նայելով, խեղդվելով ասաց մայրս։ Նա մեծ դժվարությամբ էր խոսում մինչև վերջ քրքրված թոքերի պատճառով։— Վաղն ինձ տեղափոխելու են ասանսերորդ պալատ։

— Ինչո՞ւ,— չհասկացա ես։

— Այնտեղ տեղափոխում են մի քանի օրվա կյանք ունեցողներին,— դեղապույլ ճիգով իրեն պահած՝ շարունակեց

մայրս։— Ինչդրում եմ չկորցնես քեզ։ Դու ուզո՞ւմ ես, որ-
պեսզի հետագայում ինձ հիշող լինի։ Այդ հիշողը միայն զո՞ւ
ես լինելու, զո՞ւ ես իմ հիշատակը...

Չէ՞ որ նա մինչև վերջին օրերն էլ աշխատում էր նույն
հիվանդանոցում որպես բուժքույր, գիտեր, թե երբ, որ հի-
վանդին, որ պալատն են տանում։ Հետո նա խոր շունչ առավ
ու մի տեսակ հանգավոր տոնով ավելացրեց.

— Մի բան պիտի խնդրեմ, չնայած գիտեմ, որ դու սե-
կարող ես տանել...

— Մա՛մ,— ուզեցի կանխել խոսքի շարունակությու-
նը, որի տակ մի սարսափելի բան էի գուշակում։

— Լսի՛ր, բալիկս, խնդրո՛ւմ եմ լաց չլինես։ Ինձ որևէ
ձևով տա՛ր այստեղից... Հետո, իհարկե... Չեմ ուզում
պրակտիկան նոնների ձեռքն ընկնել...

Եվ նա փախցրեց հայացքը հավանորեն դեմքիս վրա իր
խոսքի տպավորությունը չտեսնելու համար։

Նա սպասում էր իմ խոսքին և ես չէի կարող չասել։

— Մա՛մ ջան, ընկեր Գուլակյանը խոստացել է... Նրանք
օգնելու են։ Ես քեզ այստեղ չեմ թողնի...

Մինչև հիմա չեմ կարողանում ուշքի գալ, թե ինչպե՞ս
ասացի այդ խոսքը։ Մեկ էլ ե՞րբ և ո՞վ է մահամերձ ծնողին
մխիթարել այն բանով, թե ինքն ի վիճակի կարող է լինել
նրա մարմնը հողին հանձնելու...

— Շնորհակա՛լ եմ, բալի՛կս, ցա՛վդ տանեմ... Ի՞մ
կյանքս...

Հիմա սպասելս չկարողացավ պահել արցունքները։

Մի շաբաթից հետո թատրոնի բակում, շրջկված տախ-
տակներից բրեմի բանվորները անշուք մի դագաղ էին սար-
քում մոբս համար։ Եվ ընդամենը մի բեռնատարով, հաղիվ
տասը հոգ[illegible]վ մոբս հասցրեցինք կենտրոնական գերեզմանա-
տունը։ Իմ ուսերին դրեցի դագաղի մի մասը, իմ ձեռքով
թաղեցի մ[illegible]րս... Քառասունհինգ տարեկան, կյանքից ոչինչ
չհասկացա[illegible] այդ դժբախտ կնոջը...

Դա այ[illegible] ժամանակ էր, երբ ամերիկյան մարդասիրին քսան
հարյուր գ[illegible]մամ հացի կտորի և մի կոնֆետի համար անգամ
ժողովրդա[illegible]ան արտիստները երեկոները թատրոն էին գա-
լիս։

Զրանա՞ն այդ օրերը։

1948 թվականին, երբ առաջին անգամ ռադիոյով կար-
դացի իմ «Բարձր պարգև» նովելը, հաջորդ օրը Գուլակյանն
ասաց, որ ինքը վազուց է նկատել իմ գրողական ձիրքը։ Իսկ
կարդալիս հարկավոր չէ բոլոր բառերը շեշտել, թեև գրողի
համար յուրաքանչյուր բառն էլ կարևոր է։ Այդ դեպքում
ընթերցումը ստացվում է մոնոտոն՝ իրար խառնելով կարևոր
ու անկարևոր բառերն ու մտքերը։ Հետագայում ես ուշադրու-
թյուն դարձրեցի այդ հանգամանքի վրա։

Այնուհետև, երբ սկսեցի պարբերաբար ասպարդվել, և
Դյուղների միությանն էլ ինձ դրվատաց
ընդունեց, միաժամանակ թատրոնի միջավայրն էլ խիստ
նեղ էր գալիս ինձ, որոշեցի թողնել այն։ Ի՞նչ է այն դերա-
սանի վիճակը, երբ իր ստեղծագործական ողջ ճակատագիրը
կախված է ընդամենը մի ռեժիսորից, ինչքան էլ բարյացա-
կամ լինի նա քո նկատմամբ։

Եվ 1949 թ. սեպտեմբերի մեկին դիմում ներկայացրի
թատրոնից ազատվելու համար։

Ժամանակները փոխվեցին։ Այնպիսի վիճակ ստեղծվեց,
երբ Արմեն Գուլակյանն այլևս չէր կարող այդ կոլեկտիվում
աշխատել։

Քանի որ նշանը դեռևս թատրոնում էր՝ որպես գրական
բաժնի վարիչ, մի երեկո գնացի ներկա լինելու ինչ-որ ժո-
ղովի։

Չեմ մոռանում այն դերասաններին, որոնք մեղադրում
էին Գուլակյանին ինչ-ինչ բաներում։ Եվ ամենից բաց խո-
սում էին նրանք, ում նկատմամբ, անկախ իր բնավորությու-
նից, շատ ջերմ վերաբերմունք էր ցույց տալիս գլխավոր
ռեժիսորը։ Վերջին տարիներին, իր ոչ հաղորդասեր բնա-
վորության պատճառով, այդ հզոր մարդը մենակ էր մնացել։

Եվ գարձյալ շատ արտիստներ իրենց վերելքով պարտա-
կան են Արմեն Գուլակյանին։

Հիշում եմ նաև, որ մեծ արվեստագետի մենակյաց տա-
րիներին միայն մեկն էր ուշադիր ու հոգատար նրա նկատ-
մամբ. դա իր նախկին սան, արդեն ռեժիսորական ճանա-
պարհ եկած Ֆրունզե Գովսեփյանն էր։

Եթե Գուլակյանն էլի դիմանար և նորից նորմալ պայ-

մանները ստեղծվեին նրա աշխատանքի համար, չեմ տարակուսում, որ նա ընդվզումներով լի իր ապրումները ևս կօգտագործեր ստեղծագործության համար։ Նա դրամատիկական կերպար էր, իր ժամանակի իսկական ծնունդը։

Ուզում եմ ակնարկս ավարտել Մարտրի հետևյալ խոսքերով, որը կարծես ասված է ականավոր ռեժիսոր Արմեն Գուլակյանի համար.

«Մարդն այն է, ինչ ինքն է իրեն դարձնում»։

ԵՐԿՈՒ ՄԵԾԵՐԸ

(Հր. Ներսիսյան, Վ. Աճեմյան)

Գարուն էր։ Ապրում էինք Աբովյանի և Աղայանի անկյունում գտնվող մի տնակում։ Հարուստ էր տնակը միայն մեծ ու հիանալի մարդկանցով, որ հաճախ էին լինում մեզ մոտ։

Եվ ահա օրերից մեկն է, երբ ոչ խաղ եմ դրել, ոչ՝ հարիսա, ուստի և չեմ սպասում որևէ մեկի։ Սովորական վաղ գարնան առավոտ է։ Հանկարծ ներս է մտնում Նշանը՝ թևանցուկ արած Հրաչյա Ներսիսյանին։ Երկուսով էլ հասցրել են դինովնալ, սակայն ա՛յդ չէ ինձ զարմացնողը. ամուսինս մյուս ձեռքում կրծքին կպցրած պահել է գինով լի երեք շիշ։ Հետո՞, հետո ի՞նչ է սպասում մեզ, երբ գատարկված կլինեն այդ շշերը։ Ահա թե որն է մտահոգողը։

Ներսիսյանի տրամադրությունը խառնաշփոթ է։

— Սիրելի՛ բարեկամս, մենք եկանք,— հենց շեմքից, ձեռքը դլխից վեր տանելով՝ ողջունում է վարպետը։

Եվ ի՞նչ նշանակություն ունի, թե ինչ տրամադրությամբ է եկել նա. միայն թե գա, միայն թե երկար նստի։ Չէ՞ որ ամեն տեսակ տրամադրության մեջ էլ նրա զրույցի թեման մնում է միշտ և միայն արվեստը։

Առաջին պահ մեջս տանտիրուհին է արթնանում. ինչո՞վ հյուրասիրել, որ և՛ հաճելի լինի, և՛ ավելի չգինովնան այս մարդիկ։

— Հայ կա՞։

Եվ այդ հարցնում է մի մարդ, որի համար եթե աշխարհում մի բան կա, որ չի հիշում՝ հացն է։ Երբ հացի կողքին մաժիկ եմ դնում, հետո՝ խաշած ձու և մանավանդ՝ դաղձ, հյուրս ուրախացած ձեռքերն է շփում.

— Հրաշալի՛ է, սիրելիս. ո՛չ մի ռեստորանի և ոչ մի խոստիկ այս համը չի կարող ունենալ։

Ու անմիջապես ծալապատիկ նստում է թախտին, նշանին մի կողքը քաշում, ինձ մյուս։ Նայում է իր անհման ծով աչքերով, ժպտում է՝ այտերին խորացնելով այն երկու ակոսները, որոնք երեխա ժամանակ փոսիկներ պիտի եղած լինեին։ Ասված դրանք էլ էր նրան տվել հմայքն ավելացնելու համար։

— Գիշերս տանը կարդացի «Լիր արքայի» երկրորդ գործողությունը,— հենց այսպես էլ սկսում է զրույցը։ Նրա ի՞նչ պետքն է, թե զրույցի սկիզբը որտեղ է թողել։ Նրա բոլոր զրույցներն էլ ինչ-որ մի մեծ զրույցի սկիզբ են եղել։ Դրամատուրգի ոճ ուներ. զրույցի ընթացքում էին բացվում պատմվածքի անհայտները։— Եղբա՛յր պատվական, այս ի՞նչ դև է Շեքսպիր ասածդ։

Եվ սա նա ասում է այն ժամանակ, երբ սանդուկյանցիներն ավարտել էին պիեսի փորձերը սեպտեմբի շուրջը (որը տեսած պետք է լիներ առնվազն երկու ամիս և ռեժիսորն արդեն միզանսցենների էր անցել։ Աչքերս շոռած նրան եմ նայում։

— Վա՛յ, անասելիս,— բացականչում է Նշանը։

— Լսե՛ք, այդքան ապուշի տեղ մի դրեք ինձ։ Պիեսը կարդացել եմ շատ անգամ, սակայն ո՛չ այս աչքերով, ո՛չ որպես Լիրի ապագա դերակատարի,— բացատրում է նա՝ լոպաշի մեջ ժաժիկ ու դաղձ դնելով։ Ասում են՝ աչքերը հոգու հայելին են։ Եթե սա մի երջանիկ բացառություն լիներ, ապա այդ բացառությունը Հրաչյա Ներսիսյանի համար կլիներ։ Նայում եմ բարակ ու քիչ դողացող մատներին։— Իսկ երեկ որ չտեսա՞ Փավլոգին փորձելիս, հաճույքից ու վախից կոպացի։ Նայում էի ու մտածում. այս հսկա ու հանճարեղ արտիստից հետո ինչպե՞ս եմ համարձակվելու խաղալ նույն դերը...

Ծխախոտ է վառում։ Տարիների ընթացքում պլանակները ոչ մի դեղին են դարձրել աջ ցուցամատն ու միջնամատը։

Եվ խոսում է, խոսում Փափազյանի մասին սկսնակ դերասանի հիացմունքով՝ իրեն միանգամայն մոռացած։

— Բայց, ինչքան մեզ է հայտնի, առաջին կազմում դո՛ւք եք խաղալու,— շեմբերելով՝ ընդմիջում եմ նրան։— Փափազյանը չէ՞ որ փոխարինելու է ձեզ։ Ինչպե՞ս է, որ փորձերը նա է տանում, ինչպե՞ս է, որ դուք ընդամենը երեկ եք եղել փորձին։

Նա մի գավաթ դինի է խմում, փնչացնում է, ուզում է երգել իր այնքան սիրած «Սանտա Լուչիան», բայց չի կարողանում խուսափել իմ սպասողական հայացքից։

— Սիրելիներս (ը-ն միշտ մի քիչ կոշտ էր արտասանում), իմացեք, որ չհաշված այն պատասխանները, որ ունեմ այդ մեծ արտիստի նկատմամբ, նաև կյանքով եմ պարտական նրան։ Այո՛, այո՛, կյանքով։ Բայց այդ մասին հետո։ Երբ մի օր Փափազին ասացի, թե տարիներ ի վեր երազել եմ Լիր խաղալ, սակայն չեմ համարձակվել որևէ տեղ ասել այդ մասին, մտածելով, թե կարող են չընդառաջել, Փափազի դեմքը փոխվեց, աչքերը փայլատակեցին, արյունը խփեց երեսովը, անհանգիստ շարժում արեց ու բռնեց ձեռքս.

— Լսի՛ր, բարեկամս, իսկ եթե ես այդ բանն անեմ և կանե՛մ, քանի որ թատրոնը նյութական ծանր վիճակում է, նրան մո՛ւտք է հարկավոր։ Եթե անեմ այդ բանը, «Լիրը» խաղացանկի մեջ մտնի, թույլ կտա՞ս առաջին ներկայացումը ես տանեմ։

Ուրախությունից կորցրեցի ինձ, փաթաթվեցի նրան.

— Իսկ ուրիշ ի՞նչ խոսք կարող է լինել։ Իհարկե, միայն թե գնդից հետո ես պիտի բեմ ելնեմ, գնդի՛ց հետո։

Հանկարծ մռայլվեց.

— Այդ քո ցանկությունն է, Հրաչյա։ Բայց թատրոնն առաջին կազմում քե՛զ կարող է ընտրել, քանի որ դո՛ւ նրա տեղի հիմնական ուժը։ Կարող է մտածել, թե ես ուզած օրս կմեկնեմ Երևանից...

Մտքի մեջ ընկա։ Հետաքրքիր էր Փափազը։ Հանկարծ փայլատակեց երեսակայությունս.

— Կանե՛մ, Փափազ, ամե՛ն ինչ կանեմ, որպեսզի դու խաղաս առաջին ներկայացումներին։ Միայն թե ծրագրի մեջ մտնի այդ պիեսը, միայն թե ե՛ս էլ խաղամ այդ դերը։

Բաժակը դատարկելուց հետո նա այն հայացքով նայեց մեզ, ասես ուզում էր ստուգել, թե էլի ինչքան կարող է մեզ լարված պահել։

— Ես խոստացա նաև այլ բանի համար։ Քիչ առաջ ասացի, չէ՞, որ եթե հիմա կամ և ստեղծագործում եմ, Փափազի շնորհիվ է։ Այն օրերին, երբ Թուրքիայում ամեն բան կարող էինք ոչնչացվել, հաճախ հանդիպում եմ Փափազին։ «Ինչո՞ւմ ես,— ասում է,— հենց վաղն անձնագիր հանեմ ու մի երկու հոգով փախչենք այստեղից»։ Ապշած նրան նայում՝ իհարկե, ուզում եմ, եվ խսկապես, երբեմն օրից ճարպարենք այս կողմ՝ Բեսարաբիայուտան, նրա ձեռք բերած անձնագրերով։ Այն ժամանակ էլ նա ամենակարող էր, եղբայր պատվական։

— Բայց ես, այնուամենայնիվ, չեմ պատկերացնում, թե ինչ ի՞նչ կարող եր անել, որպեսզի նա տանի առաջին ներկայացումները,— Թատրոնի ներքին կյանքին ծանոթ լինելով՝ չեմ հանդգնանում ես։

Հիմա էլ ժպտում է իրր խորամանկ, բայց իսկապես բարի, բախտավոր մի ժպտով, ժպիտ, որ կարող է ունենալ միայն տվողը, նվիրողը, գոհարերողը։

— Փորձերին չեմ գնում։ Մինչև երեկ չեմ գնացել։— Ջաղաքի երեխայի խոստովանությունն։ Ինքն էլ է ասում իր գլուխով։— Ականջոմս է բնկել նույնիսկ, թե իրր Հրաչյան խմելու է տվել իրեն ու բեմին մատների ազանքով է նայում, որ ինձ հետաքրքիր իրր բեմը հենց այնպե՞ս։ - Այս ասելիս ցավ է երևում նրա աչքերում։ Փնչացնում է այդ օտար արտիստուհիանն իրենից թոթափելու համար։— Թող ասեն։ Իսկական արտիստն այդպես չի կարող մտածել իմ մասին։ Մի անգամ թատրոնում Վարդանն ուղղակի բռնեց ինձ ու մի կողմ քաշեց.

- Լսի՛ր, Հրաչյա, վերջապես ի՞նչ ես մտածում, ինչո՞ւ ես գալիս փորձերին։ Եթե չես ուզում այդ դերը խաղալ, կգտնվեցնեմ ուրիշներին։

- Ինչու Փափազը չի գալի՞։

Գալիս է և նույնիսկ պատրաստ է արդեն։ Բայց ինձ պե՞տք ես հարկավոր, պրեմիերան տանելու ես դո՞ւ։

Ինչպես մեղանչի այդ մարդու ճշմարիտ ու տեղին բռնաբ-

կած դայրույթը։ Ինչպե՞ս ասեի, որ հենց դրա համար եմ փախչում թատրոնից... խոստացա ներկայանալ հաջորդ փորձերին և... դարձյալ չգնացի։ Պարզ է, որ շատերն են բորբոքվում, ընկերներս իրավացիորեն վախենում են, որ իսկապես կարող են դադարեցվել փորձերը։ Երևի Աշոտը բռնեց օձիքիցս և տարավ ուղիղ փորձասենյակ.

— Նստի՛ր ու հետևիր, բավակա՛ն է։

Նստեցի պատժված երեխայի պես։ Եվ սկսվեց փորձը, բարեկամներս։ Դուք պետք է տեսնեիք, թե ինչպե՞ս էր փորձում այդ սրիկա՞ն, այդ դե՞ը, այդ հանճա՞րը։ Նրա արտասանած յուրաքանչյուր բառ թափանցում էր հոգուս մեջ։ Բայց, խոստովանում եմ, ամենից ավելի վախն էր գամել ինձ աթոռին։ Մինչ այդ Լիրն ինձ համար գրավիչ, հետաքրքիր, դրամատիկ մի կերպար էր։ Փորձի ընթացքում կամաց-կամաց միս ու արյուն էր դառնում, դառնում էր մարդ, բնավորություն։ Ես նայում էի դերին, որ հազար հայացքով հմայում, դյութում, ինձ բեմ էր կանչում։ Կպել էի աթոռին, մտովի պարանով փաթաթում էի ինձ դրան, որ հանկարծ չմոռանամ խոստումս ու չելնեմ տեղիցս, չառաջանամ ու չասեմ. «Կորդե՛լիա, աղջի՛կս...»։— Նրա աչքերն իսկապես ծով էին այդ պահին, լիքը ծով, ափեափ զարկվող։ Ծխախոտ վառեց, խուսափեց մեր հայացքից։— Ընդմիջմանը տուն փախա։ Ամբողջ գիշեր այդ տեսարանն էի կարդում։ Ինչքան կարդում էի, այնքան Լիրը հարազատանում էր, հանդիմանում էր ինձ, որ իրեն մոռացած՝ փակվել եմ տանը... Հետո իրոք սպառնալիք կար փորձերը դադարեցնելու։ Լուսապեմին համոզվեցի, որ կխաղամ այդ դերը, լա՛վ կխաղամ, նույնիսկ Փափալյանից հետո կխաղամ, հավատացե՛ք, և ի՛մ Լիրը կխաղամ... Հետո իրավունք չունեմ կորցնելու այդ դերը...

Շրերը դատարկ էին ու մոռացված։

Ապշած նայում էի մեծ արտիստին։ Հարցրեց ժամն ու ելավ տեղից։ Ելավ միանգամայն լրջացած ու վճռական։ Առաջին անգամ էի տեսնում դինու հակառակ ազդեցությունը։ Երբ այն մեծ արվեստագետն է ընդունում՝ խոսելով այն թեմայի շուրջ, որով ապրում է, շնչում։ Բակ ելավ իրեն հատուկ սահուն քայլերով, ձեռքերն ազատած ետևը, գլուխը բարձր

ուսերն ուռեցնելով։ Փողոց մտավ հարստացած հայացքն ուղղած առաջ։

Նա գնում էր մասնակցելու «Լիրի» փորձերին։

Ժամանակ անցավ։ Վերջապես եկավ ներկայացումը։ Նշանելու օրը։ Լիրի դերում հանդես էր գալու Հրաչյան։

Ցերեկվա ժամը 12-ն էր։ Գիտեի, որ ուշացել եմ փակ դիտումից։ Հենց ներսիայանն էլ հրավիրել էր ինձ։

Մինչ այդով կվազեի թատրոնի կողմը, շքամուտքը բացվեց ու դուրս նետվեց ինքը՝ Հրաչյան, միանգամայն այլակերպված, թափառուն հայացքն ասես ինչ-որ մեկին, թե՞ ինչ-որ բան որոնելով։ Գրիմը կիսահան էր և առաջին պահ իսենթացած Լիրի տպավորություն առա նրանից, այնպիսի խենթի, որպիսին միայն արտիստի հանճարը կարող է ստեղծել։ Ամեն դույն կար երեսի վրա վազելինի հետ խառնած։ Նա արագ առաջանում էր՝ ուսերեն ընդունելի հայհոյանք ուղղելով ինչ-որ մեկին։ Նրա ետևից վազելով հասավ Օրի Բունիաթյանը.

— Հրաչյա՛, կանգնի՛ր, Հրաչյա՛։ Լսի՛ր, նա միամիտ ասաց... Չհասկացավ... Այդպես չի՛ կարելի, Հրաչյա, սպասի՛ր...

Արտիստը ձեռքն այնպես թափ տվեց, ասես ուզում էր իրենից պոկել հետապնդողին։ Նա սուրում էր առաջ՝ Լիոն արևի մեջ խրած։

Ես կանգնեցի դեմն ու բռնեցի ձեռքը.

— Հրա՛չ Ներսեսիչ, ի՞նչ է պատահել...

— Գնա՛նք, սիրելիս, հեռանանք այստեղից,— կույլ թևերս բռնելով պահանջելու նման խնդրեց նա՝ ասես իր փրկիչին դիմելով։ Այնպես էր թվում, որ եթե այդ պահին չկատարեիր պահանջը, իսկապես պիտի խենթանար անհուսալիությունից։— Գնա՛նք մի տեղ, մի անկյուն, այստեղից հեռու...

Բունիաթյանը ձեռքով հասկացրեց մենակ չթողնել արտիստին ու ետ դարձավ։

Հրաչյայի մոլորուն հայացքը դեռևս հասցե չէր գտնում։ Քայլեցինք դեպի այգու խորքը, ուր մի փոքր տաղավար կար։

— Հենց այստեղ էլ նստենք... Ես ուզում եմ խոսել, թե չէ կուշտիմ...

Այնպիսի անուժությամբ էր լցվել նա, որ չէի պատկերացնում, թե վերջապես կարող է գտնել իրեն։

Նստեցինք տաղավարում։ Մխախոտ հանեց ու անհանգիստ մատներով վառեց գլանակը։ Երիտասարդ մատուցողն իսկույն մոտեցավ մեզ։

— Երկու շիշ «Ջերմուկ»,— գլանակն իրենց մեջ պահող երկու մատները վեր անկեց նա։

Հետո օդ հավաքեց այտերի մեջ ու դուրս փչեց ծխի հետ միասին։ Ես ընկավ աթոռին, նույնիսկ թվաց, թե ուզում է ժպտալ։

— Այսպես, ուրեմն, եղբայր պատվական...

Սա հենց այն խոսքն էր, որը հումորի շղարշով պիտի ծածկեր մինչև իսկ ամենադրամատիկ պատմությունը։ Հիմա արտիստն այնքան էր խաղաղվել, որ կարող էր պատմել, բայց ոչ այնքան, որ չպատմեր։

— Եթե հիմա չասեմ, այլևս երբեք ու ոչ ոքի չեմ ասի, քանի որ այդ մարդուն, այդ դևին երկրպագում եմ։ Դու գիտես, իհարկե, թե խոսքն ում մասին է (առաջին անգամ նա չուզեց մեծ արտիստի անունը տալ)... Օ՜, ես ասել եմ, որ նրան շատ եմ պարտական։ Նա վախեցնելու չափ մեծ է...

Մխախոտի մոխիրը ցուցամատի թեթև թմրկահարումով նետեց հասարակ ամանի մեջ, ժպտաց այնպես, ինչպես հեղեղում անձրևից հետո մաքրված երկինքը կարող է ժպտալ և այնպես նայեց, որպես թե ասելիս լիներ. «Տես նո՞ւմ ես, եղբայր պատվական, թե մարդն ինչ վիճակի մեջ կարող է ընկնել»։ Հետո փնչաց, թե մենք սրանից էլ դուրս կգանք, մի թող ասելիքս ասեմ... Այդ պահին անգամ ինձ այնպես թվաց, թե ծխախոտի կապույտ ծխի մեջ նա կարող էր եթերային պատկերներ տեսնել։ Զգայուն ռունգներս շնչում էին նոր խուզած գազոնի կաթնաբույրը։ Ես չէի կարողանում հայացքս պոկել նրա մաքրվող, ինքնահավատակնարկից։

Եթե ինքն էլ չխոստովաներ, բոլորս էլ տեսնում էինք նրա սերը, ակնածանքը, հիացումը, որ ուներ մեծ արտիստի նկատմամբ։ Քանի՞-քանի անգամ եմ նկատել զրուցակիցներն այն գերասանների, որ ցուցադրվում էին նրա խաղի միջոցում։ Խոսքս թատրոնի առաջին կարգի գերասաններին է վերաբերում, որոնք չէին կարողանում անտարբեր մնալ Փափազյանի խաղի նկատմամբ։

Մեկը կար, որ հետևողական կերպով ուղղակի բացակայում էր նրա ներկայացումներից։ Իսկ ո՞վ չէր նկատում դա և ո՞վ կհամաձակվեր խոսել այդ մասին։ Ի՞նչ կարող ենք ասել, չէ՞ որ Տոլստոյը չէր հավանում Շեքսպիրին, Նիցշեն՝ Վագներին, Մաքս Նորդաուն՝ Մետերլինկին, Պիսարևը՝ Պուշկինին, Շոպենհաուերը՝ Հեգելին։

Կար մեկը, որ նրա բոլոր ներկայացումներն էր ուշադիր դիտում, քաղաքավարի ծափահարում էր։ Նա այնքան կիրթ էր ու ինքնատիրապետող, որ անտակտություն կհամարեր զուրս մնալ ընդհանուրի օվացիայից։ Կամ գուցե ձեռքե՞րը չէին ենթարկվում կամքին։ Գուցե այդ պահին Սերվանտեսի այն միտքն էր հիշում, թե ոչինչ մեզ այնքան էժան չի նստում և այնքան թանկ չի գնահատվում, որքան քաջալերությունը։ Ինչևէ, նրան չեմ անվանի արտիստի շարք դասացած որևէ ասուլիսի մասնակցելիս։

Մեկը կար, որ դիտելու ընթացքում չէր կարողանում զսպել իրեն, հանգիստ մնալ տեղում։ Շարժվում էր անընդհատ, գոմռում էր վանդակն ընկած առյուծի նման։ Նիկանում էր այնքան, մինչև նախքան վարագույրը՝ զուրս էր շպրտում իրեն դահլիճից։ Դա ի՞նչ զգացում էր, սեր ասված, որ ճնշում էր արտիստական ողջ տաղանդը, թույլ չէր տալիս գոնե առերես ծածկելու նրա նկատմամբ ունեցած կրքոտությունը։ Ինչևէ, նրա դրսևորումն լուռ ադամանդում էր. «Ինչո՞ւ ե՛ս չեմ քո փոխարեն...»։

Երկրորդ կարգի գերասանները սոսկ դիտող էին՝ առանց փվելու հավակնության ու հասարակության հետ ծափահարում էին մոլուցքով, «բռա՛վո» գոռում ու վերջում ոգևորված դեգերում արտիստի հարդասենյակի բոլորը։

Ահա ճիշտ սրանց պես էր իրեն պահում Հրաչյա Ներսիսյանը։ Ո՞չ, նա դա չէր ցուցադրում, այդ հանգամանքն ավելորդ էր նրա էությանը։ Ուղղակի նա այդպիսին էր լինում՝ երբեք չմտածելով սեփական տաղանդը։ Նստում

էր առաջին շարքերում ու հմայված հետևում գործողությանը. ցնցող տեսարաններում առաջինն էր լաց լինում՝ ուշադրություն չդարձնելով թափվող արցունքներին և առանձին էր ծափահարում՝ ձեռքերը երկարած դեպի բեմ։ Նա, ինչն էր ծափահարում՝ ձեռքերը երկարած դեպի բեմ։ Նա, որին ստեղծելիս բնությունն ասես իրեն էր ցանկացել տեսնել,— ինչպես Հայնեն է ասում Գյոթեի մասին։

Հրաչյա Ներսիսյանը պաշտում էր Վահրամ Փափազյանին։

— Սիրելի՛ս, չէ՞ որ մենք երկուսով պայմանավորվել էինք, որ «Լիրի» առաջին ներկայացումներն ինքը տաներ։ Ահա հենց այդ պատճառով էլ շարունակում էի ներկայանալ փորձերին,— արտիստն արդեն խաղաղվել էր, սակայն այլևս չէր կարող չշարունակել այն պատմությունը, որի համար առանձնացել էինք։— Եվ ահա մի օր էլ, եղբայր պատվական, իր մոտ կանչեց ինձ Արմեն Կարապետը։ Երեսը գունատված, իր մոտ կանչեց ինձ Արմեն Կարապետը։ Երեսը գունատված, շրթունքները սեղմվել էին. նշանակում է զայրույթը գագաթնակետին էր հասել։ «Հրաչյա՛, կամ որ մենք քեզ վրա ենք հիմնվում, որ գո՛ւ պիտի տանես կարգին փորձերին կմասնակցես, կամ... կամ դիմում տուր պրեմիերան, ինչպես հայտագրերում տրված է, ուրեմն այլևս ասելիք չունեմ։ Դու գիտե՞ս, որ արդեն նրա գնալու մասին են խոսում... Եվ կգնա՞... Իսկ հետո՞, հետո ի՞նչ ենք անելու...»։

Ես հո չէի՞ կարող ասել, որ խոստացել եմ։ Իսկապես, ո՞նց էի նայելու այդ մարդու երեսին, եթե ներկայանայի փորձերին... Արմենի ճակատը հարթվել էր, ականջները՝ ես գնացել ու ձգված երեսով էլ ասաց.

— Ուշքի՛ եկ, Հրաչյա...

— Նա՛ պիտի տանի պրեմիերան,— պնդեցի ես՝ ձեռքս երկարած։— Թո՛ղթ տուր։

— Դրի՛ր դիմումդ,— արդեն իրեն կորցրած՝ մոլորած նա՝ ասես չհավատալով լսածին։

Գրեցի։ Կանչեց քարտուղարուհուն, կարգադրեց պատին փակցնել մի հրաման՝ Հրաչյա Ներսիսյանին ազատել թատրոնից համաձայն իր դիմումի։

Վեր կացա ու հեռացա սենյակից։ Մինչև տուն կհասնեի, լուրն արդեն տարածվել էր քաղաքով մեկ։ Եվ սկսեցին ինձ մոտ գալ դերասաններ, ռեժիսորներ, թատերասերներ, ծանոթ ու անծանոթ մարդիկ՝ համոզելու, որ ես վերադառնամ մայր թատրոն։

Եկավ նաև Վարդանը։

— Ա՛յ մարդ, այս ի՞նչ արեցիր,— սկսեց նա՝ քայլելով սենյակում՝ ձեռքերը գրպանները դրած,— Երեխա՛ ես, ի՞նչ ես։ Եթե քո մասին չես մտածում, մտածիր ժողովրդի մասին։ Խայտառակում ես թատրոնը։ Ճիշտ է, մեծ մարդն է մեծ հիմարություն անում, բայց սա բոլորովին անելու բան չէ։ Դիտես, չէ՞, որ առանց դոտացիայի ենք աշխատում։ Դու չլինես, այդ ներկայացումը չի գնա, մարդիկ էլ աշխատավարձ չեն ստանա, հանդիսատեսներն այդ ներկայացմանն են սպասում։ Իմացա՞ր, որ Արմենը դադարեցրել է «Լիրի» փորձերը։ Հիմա ոչ քեզ, ոչ՝ նրան։ Խնդրում եմ, Հրաչյա, արի քարը փեշիդ թափիր ու վերադարձիր, գիտեմ, որ առաջնությունը նրան ես ուզում տալ, բայց... Լուրջ արտիստ ես, թատրոնի հիմնասյուներից, ախր ո՞նց կլինի...

— Լա՛վ,— ասացի,— գնա, կմտածեմ։ Ի՞նչ մտածեմ, երբ իսկապես անհեթեթություն է արածս։ Ա՛յ, հենց սրա համար է Գյոթեն ասել, թե չի կարելի երիտասարդական մոլորությունները հասցնել մինչև ծերություն, որովհետև ծերությունն էլ իր սեփական մոլորություններն է բերում։ Չի կարելի մի խոսքման համար մի ամբողջ կոլեկտիվի հետ խաղալ։ Մարդիկ երկու ամիս աշխատավարձ չեն ստացել, իսկ ես... Դե, եթե Վահրամն այդքան չի հասկանում, մեղքն իրեն։ Եվ վերադարձա, սիրելիս ու սկսեցի փորձել։ Եվ ինչպե՞ս էի փորձում՝ հաստատ իմանալով, որ մեր հոդեբանական մենամարտն անխուսափելի է։ Ինչ մեղքս թաքցնեմ, Փափազի ներկայությունը սկզբում շատ էր կաշկանդում ինձ։ Հետո մոռացա և՛ նրան, և՛ խոսքում, և՛ ինձ։ Փորձում էի մի տեսակ կատաղած, եղած ու չեղած տաղանդի ողջ լրիվությամբ։ Վերջին փորձերից մեկն ավարտելուց հետո, երբ բորբոքված նայեցի Փափազի կողմը՝ թողածս տպավորությունը նրա դեմքին կարդալու համար, թեաթափ եղա. աթոռը, որի վրա միշտ նստում էր նա,

դատարկ էր։ Ջարդվեցի հոգով, նրան կորցնելու սարսափից ջարդվեցի։ Ախր ինչպե՞ս է պատահում, երբ մեծ արտիստը երբեմն... երկար ժամանակ խուսափում էի նրանից,— նա ծխեց ու նայից հեռու՝ ասես բռնելու համար ընդհատված ու փախած մտքի թելը— Լա՛վ, այդ մասին հետո... Գանք հասնենք այսօրվան։ Պարզ է, որ ես պիտի հանձնեմ ներկայացումը։ Նստած գրիմանոցում հարդարվում եմ ու աչքիս տակով հետևում դռանս առջևով ետ ու առաջ անող Փափազին։ Ինչո՞ւ է այդպես մոլորվել... Գուցե բա՞ն ունի ասելու... Ինչպե՞ս եմ խաղալու, երբ այդքան տակնուվրա է եղել նրա հոգին։ Մեղավորությունից մեռնում եմ։ Վերջապես սկսվեց ներկայացումը։ Բեմ մտնելու հետ տեսնում եմ նրան ներվային քայլերով կուլիսներում ետ-առաջ անելիս։ «Հրաչյա՛, ուշքի եկ,— կշտամբում եմ ինձ։— Որոշիչ րոպեներ են, էլ ո՞ւր մնաց տագանդդ, եթե չես կարողանում կենտրոնանալ... Լսի՛ր, պատվի հարց է»։ Ու ինչքան շնորհք ունեմ, ծախսեցի նախ նրանից անջատվելու վրա։ Հետո խստատ մոռացա նրան ու հավատորեն լավ ստացվեց տեսարանը, որ ծափահարությունից հետո, երբ հարդասենյակ մտա, առջևս Փափազին տեսա ինձ անծանոթ մի կերպարանքով։ «Այս մարդուն իմն է»,— ծնոտիս կպցրած մարդուքը ցույց տալով՝ մոլտաց նա։

Կայծակի հարվածը հազիվ թե այդպես ցնցեր ինձ։ Աչքերս մթնեցին։ Մի վայրկյանում պոկեցի մարդուքս ու շպրտեցի նրան, մի շարժումով մաքրեցի գրիմս ու դուրս թռա՝ նախքան մարդիկ ուշքի կգային։ Օրին ներկա էր այս բոլորին ու նա էլ վազեց իմ ետևից։ Ահա այսպիսի բաներ, եղբայր պատվական։

Այդ պահին միայն զառնություն ու ցավ կար նրա դեմքին։ Մի բոպե լռեց՝ ասես ճիգով խեղդելու համար ներսում կուտակված վիրավորանքը։ Բարակ, ծայրերը դեղնած մատները վիշտ էին մանրում իրար շփվելով։

— Բա հիմա ի՞նչ են անում,— վերջապես հարցրեցի ես։

— Երևի նա է շարունակում,— հիմա արդեն փիլիսոփայական խաղաղությամբ պատասխանեց նա։— Հո կիսատ չե՞ն թողնի ներկայացումը։ Մի-մի հատ չխմե՞նք,— բա-

ժակները «Ջերմուկ» լցնելով՝ ժպիտով ասաց նա։ Հոգին պատարկվել էր նաև այդ անմեղ ըմպելիքի առկայությամբ։— Շնորհակալ եմ այս հանդիպումից։ Թե չէ ո՞ւմ մոտ կարող էի այսպես հանգստանալ։ Ամեն մարդ չի հասկանա կատարվածը ու գուցե ոմանք էլ վատ մտածեն նրա մասին։ Իմացիր, որ նա մեծ արտիստ է, ու պատմածս ոչ մի բանով ստվեր չի գցում նրա վրա։ Հանգստացա, աղջիկս։

Նա ափով այնպես մաքրեց բերանը, ասես վրդովմունքի մնացորդներից էր ուզում ազատել այն։ Հիմա նրա կապույտ աչքերը խենթացնող փափկություն ունեին։ Ոչինչ չէր մնացել բիչ առաջ կատարվածից։

Այդ պահին մի ֆոտո-նկարիչ հայտնվեց՝ արտիստից թույլտվություն խնդրելով նկարել մեզ։

Իհարկի, պրեմիերան տարավ Ներսիսյանը։

Հետագայում Փափազյանի հետ ուրիշներն էլ խաղացին այդ դերը, սակայն ոչ մեկը չհասավ նրա կատարելությանը։ Այդպես Հրաչյային չկարողացան գերազանցել նաև Պրոտասովի և Մեք Գրեգորի դերերում։

Ամեն անգամ պատահականորեն արված մեր ֆոտոնկարին նայելիս աչքիս առջև է կանգնում իր մեծությամբ արտիստը իր անսովոր պատմությամբ։ Երևի առանց այդ պատմության Հրաչյան լիարժեք չէր լինի որպես Հրաչյա Ներսիսյան։

ԲՈՒՂԱՐԻՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Հրաչյան անփույթ ու անտարբեր էր առանձնապես անձնական հագուստի նկատմամբ։ Վերարկուն կամ կոստյումը գնում էին կամ ստիպում էին գնել տնեցիները՝ կինը, զուտարը, որդիները։ Եվ միշտ մի կոստյում էր ունենում։

Եվ ահա մի օր էլ, հերթական նոր կոստյումը հագին, դալիս է մեզ մոտ։ Հեռախոսով հայտնել էինք, որ խաչ անենք։

— Առավոտ կանուխ Բուլղարիա եմ մեկնում,— բարևի հետ ասաց նա, որպես թե արդարանալիս լիներ նոր կոստյում հագնելու համար։ Մի տեսակ անհարմար էր զգում նոր հագուստով երևալ մարդկանց։— Դինաս է տուել...

Այդպես էլ կուահում էինք։ Նա զորվանրով, անսահման սիրով էր խոսում առանձնապես գաներ մասին։

Նստեց։ Հաճույքով էր մեզ մոտ գալիս. ստիպելով ուտեցնում էի և հետո, խաղաղվում էր, հանգստանում։ Այդ օրը նա խոսում էր ինչ-որ նկարահանման մասին, որտեղ ինքը վագելով պիտի բարձրանար հյուրանոցի չորրորդ հարկ։ Հետո ասաց, որ շատ է վախենում արտաքսման մեկնելուց. կկարողանա՞ արդարացնել այն հույսերը, որ այնտեղի թատերասերներն ունեին իր նկատմամբ։ Խոսեց էլի-էլի ու հոգնեց միանգամից։ Առաջարկեցի սենյակ մտնել (մեր միակ փոքր սենյակը, ուր ընդամենը մի մահճակալ ու մի թախտ էր դրված, մի սեղան, երկու աթոռ, մի պահարանիկ, վրան՝ ռադիոընդունիչ) ու հանգստանալ։

Նշանն էլ միացավ նրան՝ թե իր քունն էլ է տանում։ Ներս անցան։

— Շորերո՞վ պառկեմ, թե՞ հանվեմ,— տղայի պես անմիջական հարցրեց Հրաչյան։ Հասկացա, որ նա շատ ավելի մտահոգվում է անկողնու, քան իր նոր կոստյումը տրորվելու մասին։

— Հանվեք, որ հանգիստ քնեք։

— Մահճակալի՞ն։

— Ինչպե՞ս ցանկանում եք,— Նշանն արդեն գրավել էր թախտը։— Հենց այստեղ, իմ անկողնում։

— Փառավո՞ր է,— ասաց նա ու սկսեց հանվել։

Ես պատշգամբ ելա՝ ծածկելով դուռը։ Անցա տնտեսական գործերիս։ Ակամա հիշեցի մի դիպված՝ գարձյալ խաշի հետ կապված։

Տարիներ առաջ էր։ Խաշի էինք հրավիրել Հրաչյային, Ջանիբեկյանին, Դիգիին և Ռուբեն Կարապետյանին։

Երբ առավոտ վաղ ետ տարա կաթսայի կափարիչը, աչքերիս չհավատացի. խաշի գույնն այնքան մուգ էր, որ սևին էր տալիս, իսկը ածուխի ջուր։ Ինչ անեմ։ Ըստ երևույթին պղնձե կաթսայից էր այդպես ստացվել։ Հուսահատությունից գլուխս կորցրեցի։ Հենց այդ րոպեին էլ առաջինը ներս մտավ Հրաչյան։

— Բարի լո՞ւյս։ Ի՞նչ է պատահել, ամպոտ եք երևում։

Դժվարությամբ պատմեցի կատարվածը։

— Ստիպված պիտի հետաձգենք հյուրասիրությունը,— ասացի ես։— Այս խաշը սեղանին դնելու բան չի։

— Ի՞նչ ես ասում,— բարկացած բացականչեց արտիստը։— Հապա վերցրու կափարիչը։ Ոչի՞նչ էլ չի պատահել, տրամադրություն մի գցիր։ Դիտե՞ք ինչ անենք,— հանկարծ գլուխս արեց նա։— Եկեք լավաշը փրթենք ու լցնենք ահա այս թասի մեջ։ Հենց գան, գու խաշը լցրու, իհարկե մեջրով մեկ դարձած, վրան էլ լավաշն ավելացրու։ Ոչ ոք գլխի չի ընկնի, հավատացնում եմ...

Բայց ինչպե՞ս ասեի, որ հենց իրենից էի անհարմար զգում։ Սակայն այնքան սրտաբաց ու հարազատավարվի, առաջարկեց ու նշանն էլ իսկույն միացավ նրան, որ հենց այդպես էլ վարվեցի։ Ուտելիս ոչ ոք ձայն չհանեց։ Ինչ ձայն հանեին, երբ ամեն պատառ բերանը դնելիս Հրաչյան հիացած կրկնում էր.

— Էս ի՞նչ լավ խաշ ես գրել, սիրելիս։ Չեմ կասկածում, որ շուտով ոչ մի մրցակից քեզ չի գիմանա...

— Անահի՞տ,— հիշողություններից ինձ կտրեց Հրաչյայի ձայնը։ Ներս մտա։— Սիրելիս, լիմոնով թեյ կարո՞ղ ես տալ։ Ներիր, ուզում եմ թեյը խմելուց հետո վեր կենալ։

Խմեց անկողնում։ Խմեց վայելելով։

Քիչ հետո.

— Անահի՞տ, սիրելիս, կարելի՞ է,— ներս մտա. տարատն էր կոճկում։— Սա անպիտան անդրավարտիքս լայն է գալիս վրաս։ Ի՞նչ պատահեց։ Ներիր, անուշս, մի նայիր, տես ետևում ձգելու հարմարանքներ չունի՞։

Սենյակը կիսախավար էր, քանի որ միակ դուռ-պատուհանը նայում էր ապակեպատ պատշգամբին։ Անցա Հրաչյայի ետևն ու սկսեցի տաբատի վրա ձգելու հարմարանքներ գտնել։ Չգիտի ինչքան կարող էի։

— Սա էլ քեզ արտաքսմանյան անդրավարտիք։ Հազիվ մի քանի ժամ եմ հագել, և ահա, խնդրեմ, թուլացել են կապերը։

Այդ պահին, այդ տաբատի մեջ հատկապես նա շատ նիհար էր երևում։

— Չէ՛, երևի չընկնի,— ստուգելուց հետո ասաց նա։ Շնորհակալություն հայտնեց, համբուրեց քնած Նշանին, շեմքին հասնելով՝ իր մաքուր, երեխայական շրթունքները հազիվ ճակատիս կպցրեց։— Առավոտ կանուխ, առաջին ինքնաթիռին պիտի հասնեմ։

Եվ գնաց։

Շարունակեցի գործս։

Կես ժամ հազիվ էր անցել, երբ ծեծեցին պատշգամբի դուռը։ Դիանան էր, Հրաչյայի դուստրը՝ մի փաթեթ ձեռքին։ Դեմքն անհանգիստ էր, ձայնը՝ դուսպ.

— Անահիտ, հայրիկս ձեզ մո՞տ էր քիչ առաջ։

— Այո։

— Այս ո՞ւմ անդրավարտիքն է հագել։

Եվ նա բացեց փաթեթը։ Նայեցի լույսի տակ, ապշեցի.

— Վա՛յ, Նշանինն է։

Նա ինձ չասաց, բայց երևի մտածեց, թե ինչ կին եմ ես, որ ամուսնուս տաբատը չեմ տարբերել իր հոր տաբատից (դեռ չգիտեր, որ ես եմ ձգձգել)։ Ես էլ չբացատրեցի, թե ինչպես էր ստացվել, չասացի, որ Նշանն էլ ընդամենը այդ մեկն ուներ։ Եվ եթե հանկարծ Դիանան շնկատեր հոր վրայի անսովոր փոթերով տաբատը, նա հենց այդպես էլ մեկնելու էր արտասահման։ Իսկ Նշանը... Նա էլ հավանորեն այնքան պետք է մնար անկողնում, մինչև խանութից-խանութ վազելով՝ իր չափսի մի տաբատ գտնի...

Հրաչյայի համար աշխարհն արվեստ էր, բնություն, երաժշտություն, տրամադրություն, բազում տրամադրություններ, որոնք ոչնչով չէին կապվում հագուստի հետ։

ՀՐԱԺՇՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նախասենյակում Դիանան դիմավորեց մեզ։ Հուզված էր, շփոթված, նույնիսկ խոնավ էին կապույտ աչքերը։ Այնպես թվաց, թե չէր ուզում ընդունել մեզ։

— Հայրիկս սաստիկ զայրացած է,— մատները ճմլելով ասաց նա։ Հետո ներողություն խնդրող հայացքով մեզ նայեց։— Չգիտեմ, լա՞վ կլինի ներս մտնեք, թե՞...

— Մենք հետո կանցնենք, բալիկ ջան,— Դիանայի վիճակը թեթևացնելու համար խսկույն վրա բերեց Նշանը։— Իսկ ինքն ինչպե՞ս է...

— Ոչի՛նչ... Կարևորը՝ ցավեր չունի։ Ինչ-որ մեկն էր եկել։ Չգիտեմ ինչ խոսեցին, որ հայրիկս գոռաց ու դուրս արեց նրան... Այնպես անհարմար էր...

—Հանգստացե՛ք, օտարներ չենք, մենք հետո էլ կարող ենք գալ։

— Ո՛չ, ո՛չ, մի գնացեք,— դռանը մոտենալով՝ խնդրեց աղջիկը։— Գուցե ձեզ տեսնելով հանգստանա...

Անելանելի վիճակ։ Նշանը կամացուկ բացեց հյուրասենյակի դուռը։ Ներս նայեցինք։ Զոլավոր, թերի կարված, երկար խալաթը հագին՝ Հրաչյան ջղային բաց ու խուփ էր անում մատները, գլուխն էր թափահարում.

— Իդիո՛տ, նախա՛լ, յա տեբյա պակաժո՛ւ...

Այդքանն էլ բավական էր. երբ ծայրահեղորեն հուզված էր լինում, զայրույթն արտահայտում էր ռուսերեն և եթե հայհոյում էր, որը հապշտապ կարող էր պատահել, դարձյալ ռուսերեն, այն էլ հենց այդ բառերով։ Չէր նայում դռան կողմը։ Նշանը կիսով ներս մտավ։ Հրաչյան կտրուկ բարձրացրեց գլուխը, նայեց լայն բացված աչքերով՝ ասես պատրաստ նույնիսկ ծեծելով դուրս շպրտել նրան, ում ուղղում էր իր անմեղ հայհոյանքները։ Նշանը ոտքը ետ քաշեց, սակայն Հրաչյան ընկալելով տեսածը, ակնթարթում փոխեց հայացքն ու ձեռքերն առաջ երկարեց.

— Նշա՞ն, սիրելի՛ս... Նե՛րս եկեք, սիրաս պայթո՞ւմ է... Ի՞նչ լավ է, որ եկել եք...

Գրկեց մեզ։ Համբուրվեցինք։ Դիանան, որ մի վայրկյան դռների մեջ էր մնացել, հեռացավ հավանորեն խաղաղված։

— Այս ի՞նչ ապուշ մարդիկ կան եղեր այս աշխարհում,— ցասման մնացորդներից ցանկանալով ազատվել՝ ասաց Հրաչյան։— Գնանք պատշգամբ, իմ սիրած տեղը։

Եվ մեր ձեռքից բռնած՝ տարավ պողոտային նայող պատշգամբը։ Ինձ նստեցրեց ուղղակի դռների մեջ, մեջքով

գեղի տեղակը, ապա վախեցած նայեց ներս ու կամացուկ գոգնոցով երեսին.

— Թերապևտ ունե՞ս։

Մի գլանակ վերցրեց։ Վառեցի նաև։ Նոր հասկացա, թե ինչու շեմքում նստեցրեց ինձ։ Հրաչյան պաշտում էր դրսևորը, ակնածում նաև, և այդ ակնածանքը հասցրել էր երկյուղածության։ Բժիշկներն արգելել էին ծխել, և հիմա մտերիմ մարդ գտնելով՝ վստահում էր փոքր, թերևս վերջին գաղտնիքը։ Մի կում ծուխ ներս քաշեց, ապա գլանակին անմիջապես վերադարձրեց ինձ, որպեսզի Դիանայի հայտնվելու դեպքում ե՛ս շարունակ գլանակը։ Նա վախենում էր մատնել իրեն։ Զարմանալի, ապշեցուցիչ արտիստ էր Հրաչյան։ Այդքան մեծ վարպետ լինելով բեմում, ինչպե՞ս չէր կարողանում ամենափոքր, ընչին, էպիզոդիկ մի դեր խաղալ կյանքում։ Իհարկե, նա բեմում էլ չէր խաղում, այլ դառնում էր ճշմարիտ այն մարդը, երբ սիրած կնոջն է խեղդում, դառնում է պաշտելի աղջկա ինքնասպանության պատճառը, տպրում էր խոր, անմնացորդ, իսկապես, միրջին անգամ, ասես այդ դերակատարումից հետո այլևս չէինք տեսնելու նրան։ Թերևս այդ էր պատճառը, որ քար կտրած, շունչը պահած դահլիճը սահմռկումով էր հետևում նրա յուրաքանչյուր շարժումին, յուրաքանչյուր բառին...

Մի կում էլ ծխեց։ Դեմքն ուռած էր։ Սքանչելի, վճիտ աչքերը, որոնք անթիվ, անհամար արտահայտություններ էին կրել՝ միշտ մաքուր մնալով, պղտորվում էին այժմ։ Հաճախ մաքրում էր թաշկինակով։ Չէի կարողանում այդ աչքերին նայել։ Գիտեինք, որ այդ մեր վերջին այցն է, որ հաշվված են նրա օրերը, բայց Հրաչյան մինչև վերջ ի՛ր աչքերով պետք է նայեր աշխարհին... Ահա այդ էր ճմլում հոգիս։

— Եղբա՛յր, սա բժիշկները խեղթեր են, ոչինչ չեն հասկնար,— խոսում էր նա արդեն հանդգնացած։— Մեկ ասում են՝ թեթև տակ խոլ կա։ Ֆչո՛ց, ո՛չ մի խոլ էլ չկա։ Երեկ էլ թե՝ թոքերս են հիվանդ, և ամբողջ օրը սա անպիտ ջերմաչափը թեթև տակ են դրած։ Է՛, որ թոքերս հիվանդ լինեն, չպիտի՞ հազամ, տաքություն չպիտի՞ ունենամ։ Ահա նայեք,— այս ասելով նա հանեց ջերմաչափը։—

նայե՛ք։— Տվեց ինձ։— 37,2 ասիճան չէ՞։ Տեսնո՞ւմ եք, որ ոչինչ էլ չկա։ Միայն թուլություն կա վրաս։

Միամի՛տ, երեխա՛, քաղցկեղի հերթական զոհ, ինչպես ես հասկանում, որ հենց այդ ջերմությունն էլ ախտորոշում է քո հիվանդությունը։

— Հիմա գառնանք այն հարցին, եղբայր պատվական, թե ինչու էի քիչ առաջ այնպես զայրացել,— այնուամենայնիվ, իր թեմայից չկարողացավ պոկվել արտիստը։— Մի ապուշը կա։ Տղամա՛րդ է։ Ինքն էլ չգիտեմ թատերագետ է, գրականագետ, թե՝ երաժշտ։ Վե՛րջը։ Մի անգամ բռնեց փողոցում, ծնկեց առջևս. «Վարպե՛տ, ես ձեզ պաշտո՛ւմ եմ, ձեր մասին գրելո՛ւ եմ...»։ Նայում եմ վրան սարսափած։

— Վե՛ր կաց, ա՛յ մարդ, պաշտամունքդ քեզի՛ պահե, մեզ են նայում,— բարկացա վրան։— Կի՞ն եմ, ինչ է, որ ծնկել ես առջևս՝ ձեռքս կհամբուրես։ Հազիվ ելավ։ Պընդերեսությամբ ինձ ուղեկցեց մինչև մեր տուն։ Թույլ չտվեցի վերև բարձրանալ։ Ա՞յս ինչ խայտառակություն է։ Ամբողջ երեկոս փչացավ։ Այդ էլ չէինք տեսել։ Այսօր նորեն եկավ։ Պարոնյանի ափերուն պես ծնկեց հատակին, ձեռքս խլեց համբուրելու. «Ինձ համար ուրիշ մեծություն չկա, գուք ա՞ստղ եք» և էլի ուրիշ հիմար խոսքեր։ Թո՛ւհ, գարշելիին մեկը, տղամարդու ձեռք համբուրե՞ս որն է։ Մի քամնելի տեսարան։ Խայտառակություն։ Մարդու երեսին էլ այդպիսի խոսքե՞ր ասվի։ Դրա անամոթությանը նայեք ,ասում է ու չի ելնում տեղից։ Ցդիմացա, պոռացի.

— Դո՛ւրս կորսվի, թշվառական, դուն ինձ ինչի՞ տեղ ես դրել։ Եկել, չոքել ես առջևս, ձեռքս կհամբուրես, անպատկա՛ռ, ես կի՞ն եմ, ինչ է։ Դուրս քո պաշտամունքին հետ։ Ալ չտեսնե՛մ երեսդ... Դինաս չլիներ, գլուխը պիտի ջարդեի։ Հազիվ փախավ։ Թշվառականին մեկը, ասո՛ւր Դրա՞ն նայեք, ա՞ստղ ալ դառանք... Սուկին սին... Անասո՛ւն... Հանդգնացեք, ալ երբեք սա կողմերը չի՛ երևա... Արյունը գլխովս տվեց... Հայ տղամարդն ա՞լ այդքան քամնելի լինի... Այս էլ չէինք տեսել, այս էլ տեսանք, վա՛յ, Արիստոդոս ագա, վա՛յ...

Հանգստացել էր. վերջին արտահայտությունն էր վկայում։ Նայեց պողատային։

— Ի՜նչ լավ է կյանքը... Ինչո՞ւ ենք այսքան սիրում, երբ վատագ է կախվում նրա գլխին,— ասաց առանց հառաչանքի։ Ոչ մի տրտունջ։ Փոխարենը՝ մի կում ծուխ կով տվեց։— Մնացորդը գե՛ն նետիր, Դինաս չիմանա։ Շնորհակալ եմ, այս էլ հերիք էր։ Կարգին հանգստացրիք։ Միայն շո՛ւտ-շուտ եկեք, որ չզգամ, թե ինչ ծանր բան է տնային բանտարկություն ասածդ...

Ժպտաց իր խոսքի վրա, ժպտաց մեծահոգաբար, որպեսզի հեռանանք առանց տխրելու։ Ուղեկցեց մինչև դուռը, ժպտաց նորից ու կտրուկ շրջվեց, որպեսզի մեզ հետ միայն իր ժպիտը տանենք։

Մի քանի օրից հետո տասնյակ հազարավոր երկրպագուների հետ մեծ արտիստին և առավել մեծ մարդուն ուղեկցում էինք այնտեղ, որտեղ իրենց անմահությունն էին սկսել Հրաչյայի նման հայորդիները։

ԱՆՀԱՍԱՆԵԼԻՆ

(Վ. Փափազյան)

Հավանորեն 14—15 տարեկան էի, երբ առաջին անգամ տեսա Վահրամ Փափազյանին Կորբագոյի դերում։ Ոչինչ չեմ հիշում ռուսական թատրոնի շենքում կայացած ինչ-որ խմբի հետ վարպետի տված այդ ներկայացումից, բացի հերոսի մահվան պատկերից։ Արտիստի խոսքով ասած՝ սահմոկած գահլիճն ափ ի բերան հետևում էր մահաբեր ջղաձգումներին, շարշարանքներին։ Ոչ մի կերպ չէի պատկերացնում, թե դա սոսկ դերակատարում էր։ Թեև ոչ մի անգամ ներկա չեմ եղել իսկական հոգեվարքի, այնուամենայնիվ համոզված էի, որ թույնից մեռնողն այդպես պիտի կապտի, ձեռքերը ջղաձգումից պիտի մագիլների փոխվեն ու դրանց մեջ խեղդվի կծիկ դարձած սփոռոցը։ Հիմա ուր-որ է կծածկվի վարագույրը ու արտիստի անշնչացած մարմինը անմիջապես կհեռացնեն բեմից։

Եվ չնայած օվացիան չդիտեմ, թե քանի անգամ բեմ

հրավիրեց հազիվ ոտքի վրա մնացող, մահվան շորշոփը դեմքս երեսին արտիստին, միևնույն է, ես մեռած էի պատկերացնում նրան։

Այնուհետև, ինչքան մեր տանը խոսք էր գնում արտիստի մասին, տեսնում էի նրան բեմում ջղագար թավալգլոր լինելիս, իսկ ականջներիս մեջ լսվում էր նրա օրհասական խոխոջը։

Ուրիշ դերերում չէի պատկերացնում, թեև մեր այրոմը հաճախ բացելիս երկար ու հիացումով դիտում էի պատը զարդարող Թոմեոյի սլացիկ, բարեձև ոտքերը, հրեշտակի նման գեղեցիկ գլուխը, ոչ պակաս հմայիչ Արծվիկին էի նայում՝ աջ ձեռքը հովանի դարձրած ճակատին, նաև կյանքի նկարն էր մնում ձեռքերիս մեջ՝ եղրավոր գլխարկով։

Տարիներ անցան։ Փափազյանն ինձ համար անիրական հեքիաթ էր մնում՝ նախորդ դարերին պատկանող։

Ո՜չ, նա մեր ժամանակակիցը չէր, և ես երբեք չէի տեսնելու նրա իրական պատկերը։

Եվ ահա 1946 թվականը։ Սունդուկյանի անվան թատրոնը (որտեղ արդեն աշխատում էի որպես դերասանուհի) հեռագիր է ստանում արտիստի ժամանման վերաբերյալ. Օթելլո և Համլետ է խաղալու մեր կոլեկտիվի հետ երկուական ներկայացումներով։

Մի՞թե իսկապես տեսնելու եմ նրան, այն էլ նույն բեմում. մի ներկայացման մեջ որպես պլյուսի էի երևալու, մյուսում՝ պալատական։ Ինչպե՞ս, նրան տեսնելու էի շատ մոտիկից։

Թատրոնի օդը լցված էր Վահրամ Փափազյանի շուրջ տարվող լուրերով՝ հավանական ու անհավանական պատմություններով հագեցած։ Բոլորն էլ խոսում են երկյուղածորեն ու ակնածանքով՝ նույնիսկ նրա բացակայությամբ։ Արված պատմություններն էլ լեգենդ էին ինձ համար, ու չունչս կտրվում էր անհամբերությունից։

Սպասումով շրջացել էր ամբողջ թատրոնը։

Օրվա փորձից հետո ասեն եմ գնում Աբովյանով։ Տաք զարուն էր կարծեմ։

Հայացքս ակամա կտրում է փողոցն ու հասնում գիմացի

մայթը, Շահումյանի արձանից քիչ վերև և կանգ առնում... Հենց այդ այգամերձ նեղլիկ մայթով իջնում է նա, որի նմանը ոչ մի տեղ ու երբեք չեմ տեսել։

Բաց մոխրագույն ընտիր կոստյումի մեջ է այդքան անիրական երևում, թե՞ ձախ թևին անփութորեն նետված դարձանային վերարկուից է այդ ապավորությունն ստացվում։

Միայն քառասուն տարի հետո հասկացա, թե ինչո՞ւ էր վարպետի հագուստն արտակարգ ապավորվում, մանավանդ երբ կարդացի նրա բազմիցս ընթերցած «Հետադարձ հայացքի» հետևյալ տողերը. «Զգեստը չէ, որ գեղեցկացնում է հագնողին, այլ զգեստն իր վրա կրելու բնածին գիտությունը։ Հագնողի բնածին շնորհքն է միայն, որ արժեքավորում է ամենահամեստ զգեստի կտորն անգամ»։

Սքանչելի ճակատից ալեխառն, քիչ թեքությամբ ետ գնացող մազերն ուղղակի զարդարում էին հիսունն անց այդ տղամարդու դասական-նորեն ճշգրիտ ու արտահայտիչ դիմագծերը։ Եվ քանի որ ոչ ոք այնպես չի կարող նկարագրել մեծ արտիստի արտաքինը, ինչպես ինքը՝ հեղինակը, ապա մի փոքր մեջբերումից հետո խոստանում եմ շաղավաղել ստեղծածը.

«Հնուց, շատ հնուց մնացել են անխախտ, անփոփոխ, անսասան, մուգ կամար, գրեթե իրար կպած հոնքերի տակից շատ հեռուներից նայող և առասպելական հին ժամանակներից խոսող երկու խոշոր աչքեր, որոնց մեջտեղից իջնող քիթը տաշել է մի քիչ Հելլադան, Բյուզանդիոնը մի քիչ նրբացրել, իսկ արևմուտքը բարեհաճել է դգայուն և շարժուն ռունկներով նրան իմաստավորել։

... Դեմքը շրջապատող ձվաձև գիծը վերջանում է կամակոր բոլորակ մի կզակով, և այս բոլորի վրա նստած է մի գրավիչ հարակ ընդարձակ մի տարածություն, նուշնքան ծավալուն, որքան դեմքի մնացած մասը, որին, հակառակ ահավոր փոթորիկների, մշտնջենական մատաղանջությունների, ծանրախոհ մաքերի, ինչպես և ահավոր հիասթափումների, ոչ մի կնճիռ չի ակոսել...»։

Այս մեջբերումն արեցի, որպեսզի կարողանամ առավել թարմացնել արտաքին նկարագիրն այն մարդու, որի մոտից

Արովյանով անցնող ոչ մեկը չէր կարողանում անտարբեր հեռանալ։

Սակայն զարմանալի թող չթվա, եթե ասեմ, որ արտաքինից ավելի ինձ ապշեցրել էր նրա քայլվածքը։ Այո՛, տղամարդու քայլվածքը։ Դա սովորական քայլ չէր, մի տեղից մյուսը գնալ չէր։ Նա այնպես էր քայլափոխ անում, առանց կրունկները գետնին մեխելու, ասես ոչ միայն վայելում էր սեփական ընթացքը, այլև զողունի սովորեցնում էր անցորդներին, թե ինչպես պիտի քայլել, քանզի միայն մարդուն է տրված այդ շնորհը։ Նա անցնում էր գլխի բարձրագիր պահվածքով, հեռու հորիզոններ դիտելու համար ստեղծված նրա հայացքն ընկալում էր ոչ թե առանձին անցորդների, այլ փողոցն իր վերջով, իր եզած-չեզածով։ Ես տեսա, որ փողոցը նրա համար բեմի շարունակություն էր միայն։

Ավելորդ է ասել, որ անմիջապես ճանաչեցի արտիստին։

Հետո տեսա նրան մի քանի օր թատրոնի ճեմասրահում դերասան-դերասանուհիների հետ բազմոցին նստած զրուցելիս։ Խոսքի արանքում երբեմն հանձնախմբություններ էր հասցեագրում երիտասարդ կանանց թույլատրելի սահմաններում։ Այնպես էր թվում, թե դիմացինին հասցնում էր հանաչել նաև նրա վրա թողած իր խոսքի ապավորությամբ։

Մենք նայում էինք հեռվից։ Երիտասարդներիս համար նա մնում էր անհասանելի, մնում էր կիսասավաշ։ Եվ եթե մարդն աղոթում է, ապա այդպիսի համակրանքի մեծության առջև պիտի աղոթի։

Վերջապես սկսվեց «Օթելլոն»։ Իհարկե, նախօրոք ամբողջ ներկայացման միզանսցենները նա հարմարեցրել էր իրեն և դերակատարներին էլ թելադրում էր իր առաջարկությունները։

Միանգամայն այլ Օթելլո էր ինչպես իր արտաքինով, ձայնով, վարպետությամբ, այնպես էլ կերպարի իր մեկնաբանությամբ։

Մի ամբողջ դպրոց սովորողի համար։

Հիշում եմ, մի առիթով թատերագետ Սարգիս Մելիքսեթյանն ասաց.

— Ո՞րն է Ադամյանի Համլետի գաղտնիքը, ինչով է գերել հանդիսականին, ինչու մեզ համար մնացել է այդ

դերում չգերազանցված։ Ի՞նչ է արել արտիստը Շեքսպիրի տեքստը իր ողջ խորությամբ տեղ հասցնելուց բացի։ Տարիներ շարունակ մտածելուց հետո ի վերջո եկա այն եզրակացության, որ դրա գաղտնիքը նաև պատգամների մեջ է եղել, պատգամները լցնելու մեջ։

Այդ մասին էի մտածում Փափազյանի Օթելլոն դիտելու ընթացքում։ Ես ոչ մի պատգամ չտեսա նրա մոտ, քանի որ դրանք ավելի խոսուն էին ու իմաստալից, քան ինքը՝ տեքստը։ Բեմ մտնելուն պես անհերևույթ սանձերով իր վրա բևեռած էր պահում բոլոր մասնակիցների ուշադրությունը, իրենով էր պայմանավորում նրանց խաղը, վերաբերմունքը, էլ չեմ ասում դահլիճի ակնդետ ուշադրության մասին, որ անհնար էր պոկել նրանից, եթե նա բեմում էր գտնվում։ Իր հարափոփոխ դիմախաղով նա տրամադրում, ոգևորում էր խաղընկերներին, մղում առավել խոր թափանցելու իրենց կերպարի մեջ։ Փափազյանը դառնում էր կամերտոն ողջ ներկայացման համար, փոխվում էին չափանիշները, ընդհանուր մակարդակն անսովոր բարձրանում էր։

Ողջ սենատի տեսարանում Փափազյան-Օթելլոյի հառաչանքով, ամենախոս ձեռքերի լայն շարժումներով, անհատնում դիմախաղով կարելի էր ընկալել մյուսների խոսքի ուժն ու խորությունը։ Ոչ մի վայրկյան հնարավոր չէր տեսնել նրան անտարբեր կեցվածքով։ Մեծ մասամբ դահլիճին էր դառնում երեք քառորդով՝ հավասարաչափ մնալով ուրիշների հոմանպատասխան ալայիկ դերերին, քանի որ հրաշալի մարմնակրթանք ուներ։ Դեմքը բազմակերպարանք էր՝ անթվարկելի արտահայտություններով հագեցած։

Երբ ավարտվեց սենատի տեսարանը, և դահլիճի պատերը պայթում էին ծափերից, ընդմիջմանը շատերս մտովի նրա հետ էինք, հետևում էինք, թե ինչպես էր պարտության մատնում տաճկական նավերը։

Երկու վարագույրների միջև ընկած «բաց» տարածության մասին ահա թե ինչ է գրել վարպետը.

«Մտեստրոյից (Նովելլիից) սովորեցի նաև գործողության ընթացքում, բան պիեսի պահանջի, բեմից բացակայելիս անգամ, լինել միշտ բեմում, հանդիսատեսին պահել միշտ հարատև և հարաճուն հմայքի տակ, կապելով նրա ուշադրությունը՝ տանել նրան քեզ հետ կուլիսների ետև և տարիպել անհամբեր անձկությամբ սպասել քո մուտքին։ Որոնեցի և գտա այն անհրաժեշտ միջոցները, բեմական ելքն ու մուտքն այնպես շաղկապելու, որ յուրաքանչյուր մուտք լինի կատարված ելքի տրամաբանական գարգացումը։ Առանց այդ ընդունակության խաղը կլինի անջատ կտորներից կազմված մի պատվեր և ոչ թե մի ամբողջական, միաձույլ արվեստի գործ»։

Կարող եմ ձեռքս խղճիս դրած ասել, որ արտիստի բոլոր ներկայացումների ընդմիջումներն ի չիք էին դառնում հասարակության համար, քանի որ նա չէր բաժանվում հերոսից։

Հարյուր տարի էլ անցնի, հնարավոր չէ մոռանալ նրա թաշկինակի տեսարանը։ Շեքսպիրը մի քանի տող է հատկացրել դրան, բայց ո՞ւր է հասցնում արտիստն այդ տեքստը իր խաղով։ Ինչքա՜ն ապրումներ է արտահայտում խանդից կուրացած հալեպցին աչքերի արյունածոր արտահայտությունից մինչև երջանկությունից շողարձակող աչքերի միջև ընկած պահի մեջ։ Ո՞վ կարող է մոռանալ այն կտորը, երբ գլխացավի պատրվակով Օթելլոն թաշկինակ է պահանջում, ու Դեզդեմոնան տալիս է այն։ Օթելլոն խենթացած է բախտավորությունից՝ կարծելով, թե թաշկինակն իր նվիրածն է։ Ի՞նչ երջանկություն է համակում նրան. ուրեմն իր կինն առաքինի է, անբիծ, սրբություն... Եվ Օթելլոն չի համարձակվում գիրկն առնել նրան։ Առաջին պահ շրթունքներով խրվում է կնոջ ոսկեթել ծամերի մեջ ու շնչում տաք, արբեցնող, անարատ բուրմունքը։ Ապա երկու ափերը Դեզդեմոնայից երկու-երեք սանտիմետր հեռու պահած՝ անհպում շոշափելով՝ գլխից մինչև ոտքերը տանում է դրանք, ասես դրանով նույնպես հավասարանալու նրա մարդության մեջ...

Իսկ երբ նկատում է, որ այն իր նվիրած թաշկինակը չէ և Դեզդեմոնան պատասխանում է, թե հիմա մտոք չէ, Օթելլոն մի այնպիսի վարպետ շարժումով է նրան բեմի մի ծայրից մյուսը շպրտում, որ մենք վախենանք, թե դերասանու-

հին, եթե ոտք ու ձեռք չի էլ կոտրել, ապա նա հաղիվ ոտքի ելնի (չէ՞ որ Ռուզաննա Վարդանյանը շատ կարճատես էր)։ Որքա՞ն եղավ մեր ուրախությունը, երբ գերասանուհին ճապուկ մի շարժումով ոչ միայն ոտքի հլավ, այլև չխաթարված սահուն ընթացքով գնաց հակառակ կողմը՝ ըստ Փափազյանի դրած միդանսցենի։ Դժվար է ասել, այդ բոլորը նկատե՞ց արտիստը, բանի որ նա տրեզերաշունչ բռնկման մեջ էր։

Այդպիսի զասական ավարտվածության էր հասցնում նա յուրաքանչյուր պառուզա, բա՛ռ, տո՛զ, տեսարա՛ն, ամբողջ ներկայացումը ներառյալ։ Նա հանգիստ կերպով կարող էր կրկնել Իրենի խոսքը. «Ես տեսնում եմ իմ հերոսի վերարկուի վերջին կոճակն անգամ»։

Փափազյանի ստեղծած յուրաքանչյուր կերպար ոչ միայն իր արտաքինն ուներ, այլև իր սեփական քայլվածքը, պահելաձևը, ձայնը, շարժումները, գլխի դիրքը, կանգնելու շեշտը, հայացքը։

Իր գիտունությամբ և զարգացումությամբ նա շատ բարձր էր իր շրջապատից։

Նա սիրով է հիշում իր ուսուցիչներից նաև Գոցիին, որից «...սովորեցի ծիծաղել, պատկերացնելով այդ մարդկային երևույթը իր ամենահարուստ գամմայով, ամենաերջանիկ քահ-քահից մինչև ջղագար խելագարի սահմռկեցուցիչ ծիծաղ-աղաղակը։ ...Մարդկային ձեռքը ըստ էության նույնքան պերճախոս է, որքան լեզուն. ես մատների կամ ձեռքի շարժումներով սովորեցի գրսևորել մարդու ներաշխարհը, բեմի վրա, ըստ պահանջման, բարձրահասակ, միջակ կամ ցածրահասակ երևալը՝ ոգնաշարի և սրունքների որոշ և անկատելի դիրքավորումով...»։

Մի խոսքով, արտիստը դառնում էր այն մարդը, որի մաշկի տակ մտնում էր ինքը։

Ես բախտավոր եմ նրան տեսնելուս համար։

Ես համոզվեցի, որ ասլանի ու քրտնաջան աշխատանքի զուգավորումից է ծնվում հանճարը։

ՀԱՄԼԵՏԸ ԵՎ ԽԱՉԸ

1949 թվականն։

Նախքան զրիմանոց կմանեն հարգարվելու, այդուն նայող արտիստական մուտքի առջև գրված նստարաններին են նստում օրվա ներկայացման մասնակիցներն ու զրուցում են տարբեր հարցերի շուրջ։

Օդը ցուրտ է։ Մոտենում է նաև Փափազյանը, որ քիչ հետո պիտի հարգարվի Համլետի համար։ Եվ քանի որ երկու ժամ կա մինչև առաջին վարագույրը, կարող է մի բանի բոպե նստել գործընկերների մոտ։

Հանկարծ նշանը հարցնում է.

— Վահրամ Կամերովիչ, դուք առավոտները, տանից դուրս գալուց առաջ, նախաճաշո՞ւմ եք։

Մի վայրկյան անսպասելի հարցի վրա կենտրոնանալով՝ պատասխանում է.

— Իհա՛րկե։

— Կարո՞ղ եք առավոտյան մեզ մոտ գալ,— ոգևորվում է Նշանը։— Անահիտը լավ խաշ է դրել։

Նորից արտիստը կենտրոնանում է ասելիքի վրա՝ ակնարկը մեխած Նշանի աչքերի մեջ.

— Հետաքրքիր է։ Կմտածեմ։

Եվ ներս անցավ։

Դահլիճում, ինչպես միշտ, կանդնելու տեղ անգամ չկար։ Նշանի հետ մտնում եմ կուլիսները, ավելի մոտիկից ըմբռնելու ներկայացումը։ Նայում ենք կլանված, մոռացած ամեն ինչ՝ հանախ միմյանց ձեռք սեղմելով ու քշիլալով.

— Ի՜նչ իշխան է, իսկական թագավորանդ...

Իսկապես, եթե անտեսենք տարիքը, որ մենք, մոտ լինելու պատճառով, ավելի որոշ ենք տեսնում, ամեն ինչով է Փափազյանն իշխան։

Բեմական ներկայացումից հետո այն տեսարանն է գնում, երբ Համլետը մոր պահանջով եկել է բացատրություն տալու իր արարքի համար։ Նրանց երկխոսությունը հասել է սուսերամարտի։ Կլանված հետևում ենք Համլետին, որ ձախ ծունկը հատակին հպած՝ երկու ձեռքերը երկարել է թագուհուն.

— Դե՛, մայր իմ, ի՞նչ կա։

— Համլե՛տ, դու հորդ խիստ վշտացրել ես։

Համլետը գրկում է այն գահավորակը, որի մեջ նստել է մայր թագուհին ու ամենն խոսքի հետ մի քիչ հրում է դեպի մեր կուլիսները։ Թագուհու դերակատարն Անիկ Մկրտումյանն է, որի ծավալուն մարմինն այնքան էլ հեշտ չպիտի լիներ Համլետի համար շարժել, այն էլ գահավորակով։ Դերասանուհին այնպես է ենթարկվել Փափազյան Համլետին, ինչպես բոլոր դերակատարները։

— Վա՛հ, այս ի՞նչ է, Համլետ,— հուսահատ գոչում է թագուհին։

— Վա՛հ, այս ի՞նչ է, մայր իմ,— որպես իրոնիկ արձագանք վրա է բերում Համլետը։

— Չե՞ս ճանաչում ինձ,— հուսահատ թառանչում է թագուհին։

— Ինչո՞ւ չէ, շատ լավ եմ ճանաչում,— գահավորակն էլի է հրում Համլետը։ Նա այլակերպված է, հիմա արդեն իսկական խենթի տեսք ունի։ Հրավառ բառերն ասես քուրայից են ժայթքում։ Հիպնոսացված է ողջ դահլիճը, դարձել է մի շունչ, մի հոգի։

— Դուք թագուհին չե՞ք, դուք ձեր ամուսնու եղբոր կինը չե՞ք,

Եվ ոչ բարով մայրս չե՞ք...

Համլետի աչքերն այլևս անդոր են արցունքը պահելու։ Նրա շիկացած վիշտն ասես արցունքի հետ թափվում է հատակին։

— Եթե այդպես է, մարդիկ կկանչեմ՝ քեզ խելքի բերեն,— սվաղված գահավորակի թիկնակին, արդեն գլուխը կորցրած՝ բացականչում է թագուհին։ Նա վախից չոված աչքերը փախցնում է որդու հեղեղված աչքերից։

— Ո՛չ, ո՛չ, նայի՛ր և նայի՛ր աչքերիս ու չշարժվես,— թախանձելով պահանջում է Համլետն իրեն բոլորովին մոռացած։ Նա մի վայրկյան միայն հայացքը բարձրացնում է մեզ վրա։ Սպասում ենք հետագա արարքին, հետագա խոսքին, երբ գահավորակը կպել է արդեն կուլիսին։

— Առավոտյան գալիս եմ խաշի,— արագ նետում է մեզ ու իսկույն էլ գառնում ոչինչ չհասկացած թագուհուն։

— Չփորձե՞ս գնալ մինչև դիմացդ հայելի դնեմ, որի մեջ տեսնես հոգուդ ներքինը...

Նրա պոռթկումի անչափելիությունը պատեպատ է զարկվում։

Մենք կարկամած իրար ենք նայում՝ շատ հետո լսածներս ծանր ու թեթև անելու համար։

Ա՛յ քեզ վարպետություն, ա՛յ քեզ կերպարի մեջ թափանցել, նույնանալ այնքան, որ ոչինչ չխանգարի հաջորդ խոսքը պահանջված կրքով ու եղանակով ասելու համար։

Մեզ ուժ չուներ սթափեցնելու մինչև իսկ դահլիճից լսվող որոտալից ծափահարությունը։

ՄԵԾ ԱՐՏԻՍՏԻ ՄԱՆՐ ԽԱՂԻՐԸ

1965 թվականի ապրիլի վերջ։ Մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ ողջ մայրաքաղաքն է եփվում։ Ամենուրեք խոսում են ցեղասպանության մասին։ Ովքեր առաջին անգամ են լսում այդ մասին, մի քանի օրում հասցնում են ինչ-որ բաներ կարդալ, տեղեկություններ հավաքել։ Համենայն դեպս, բորբոքվել է հայ ժողովրդի հայրենասիրությունը, բորբոքվել է տեղին ու ժամանակին։

Վահրամ Փափազյանը ցանկություն էր հայտնել, որպեսզի նշանը խմբագրի իր «Վիր արքա» աշխատանքը։

Իմանալով, որ վարպետը տանն է, երկուսով գնում ենք ձեռագիրը վերցնելու։

Դուռը բացեց ինքը։ Ո՛չ, հետո պիտի հուսահատված համոզվեինք, որ այո՛, դուռը բացողը ինքը՝ Վահրամ Փափազյանն էր։

Օթելլոյի հագուստով էր։ Նրերուն քայլերով ու կորամեջը անցավ ոչ մեծ հյուրասենյակը և նստեց սեղանի առջև՝ ձեր ու գունատ ձեռքը մոռանալով սեղանին։ Կարծես զգում էր, որ ինքը ինքը չէր ու ամաչելով զրանից՝ հայացքը չէր բարձրացնում։ Մեզ չէր նայում նաև այն պատճառով, որ ինքը բացակայում էր՝ գնացել էր սեփական մտքերի հետևից։ Դեղնականաչավուն երանգ առած այտերը կախվել էին երկու կողմերից։ Բերանը պիտի դառնահամ լիներ, ինչպես վկա-

յում էին ցամաք շրթունքները։ Գեղեցիկ մազերի մնացորդներն այլևս կարողություն չունեին ծածկելու երբեմնի հրաշք գլուխը։ Ամենաահավորը, սակայն, աչքերն էին, որոնց այդ պահի արտահայտությունը ոչ մի դերակատարման ժամանակ չէինք տեսել. տխուր էին ծովի չափ։ Ոչինչ չէին նկատում մի ժամանակ բոցկլտացող աչքերը...

Ճիշտ այդ պատկերի համար է կարծես Միքելանջելոն ասել. «Մեր օրերում, երբ ամենից ավելի գեղեցկությունն է գնահատվում, ես կյանքում կքայլեմ ահազարհուր կերպարանքով»։

Այս պարագայում, սակայն, սարսափելին ոչ այնքան արտիստի այս աստիճանի կերպարանափոխությունն էր, որքան հուսահատության ծայրին հասած ընկճվածությունը։ կարծես իր բոլոր նախորդների վիշտն ու ցավն իր վրա էր կրում։

Նա չսպասեց, որպեսզի մենք հարցնենք իր որպիսությունը. հավանորեն մեր դեմքի վրա արդեն կարդացել էր ինչ պետքն էր։

— Սա գի՜րքը, սա գի՜րքը,— դատարկ դահլիճում արձագանքվող ձայնով ասաց նա՝ ձեռքը երկարելով սեղանին դրված մեծածավալ, շքեղ հրատարակությամբ լույս տեսած մի գրքի։ Սրա փայլուն կազմի վրա նկարված Մայր Հայաստանը վերից վար կիսված էր երկու գույների՝ նարինջ կարմիրի և սևի։ Ցածում խոշորատառ գրված էր «Եղեռնապատում»։— Չորս օր է՝ քուն ու դադար չունեմ. ծայրից-ծայր նայեցի, կարդացի... Չորս օր է թափառում եմ Արևմտյան Հայաստանի վիլայեթներով, այրվող շեներով՝ քայլս չկտրելով տեղահանված երեխաների ու կանանց թափորից։ Անցա ավազների ու փոշիների միջով, նրանց հետ սրախողխող եղա, աղջիկների հետ նփրատը նետվեցի, որն արդեն խեղդվում էր, շնչասպառ լինում գիակներից... Օգնեցե՛ք ինձ, ե՛տ առեք հիշողությունս... Ջրկեցե՛ք ինձ հիշողությունից...

Նրա դառնաղի արցունքներն անարգել իջնում էին քթի երկու կողմերից...

— Եվ ո՞վ ասաց, թե նահատակվածները պատկանում են մեռած ժամանակին... Նրանք հավերժական են, քանի կա մարդկային հիշողությունը... Այն ժամանակ երանի էին տալիս այն օրերին, երբ մարդիկ կարողանում էին հասցնել իրենց բոլոր հանգուցյալներին թաղել...

Ինձ թվում էր, որ եթե ուշադիր նայեմ շուրջս, տանտիրոջ գիշերների լացի ծվենները կհանեմ անկյուններից։

Նա իսկապես տակետակ հուսահատության մեջ էր։ Բոլոր տառապանքների հետքերն աչքերի մեջ էին։ Կնճիռները մինչև հատակը թախիծով էին լցված։

Ուրիշ ժամանակ տիկին Անահիտը սուրճով էր հյուրասիրում, որը միշտ չափից մի քիչ ավելի էր խարակված լինում։ Հիմա ոչ կինը կար, ոչ՝ սուրճը։ Մենակ էր վարպետը և չէր մտածում այլևս արվեստից խոսելու։ Կարծես ծննդավայրից հեռանալուց հետո, ստեղծագործական վաթսուն տարիների ընթացքում, երկաթե դարպասներով էր փակել Ագրիականը՝ իրեն անմնացորդ կերպով արվեստին նվիրաբերելու համար։ Հիմա խորտակվել էր այդ դուռը, ու ինքը շվար կանգնել էր Բոսֆորի շեմին, վախենում էր ոտքն առաջ դնել...

Նա մատներն այնպես զգույշ մոտեցրեց քներակներին, ասես ուզում էր հանգստացնել դրանց տրոփյունը։

— Կարելի՞ է նայել,— հարցրեցի՝ գրքին մոտենալով։

— Նայի՛ր, աղջիկս, նայի՛ր և տես, թե ինչպես է խոշտանգվել, արյունաքամ եղել մի ամբողջ ժողովուրդ...

Նա չասաց, բայց մենք հասկացանք, որ ինքը սկսել էր արդեն մաս-մաս մեռնել։

— Թույլ կտա՞ք մի երեք օրով վերցնել այս գիրքը,— խնդրեցի ես։

— Տա՛ր, տա՛ր, սիրելիս, թե չէ կխելագարվեմ... Երանի՜ խաղաղվեի աներազ մի քնով...

Նա ձգտում էր ազատվել իրենից՝ փրկելով իրեն... Հասկանալի է, որ նա կամովին չէր հանձնվել թախծին, տխրությանը, մանավանդ մենակությունից եկող անձկությանը։ Միաժամանակ նա այնպիսի շփոթված հուսահատություն էր ապրում, ասես խորհում էր իր ժողովրդին մնացած պարտքերը մարելու մասին։ Նա, որ տվել էր հարյուրապատիկը այն էլ ոչ միայն իր, այլև շատ ու շատ ժողովուրդների՝ այն էլ վերադիր տոկոսներով։ Այո՛, Միքելանջելոյի փոխա-

բեն նա՝ պիտի ասեր իր մայրամուտին. վա՛յ ինձ, վա՛յ, իմ ամբողջ անցյալ կյանքում չեմ գտնում մեկ օր, որ ինձ պատկանելիս լինի... Ահա թե ինչու իր վերջին գիշերներին նա ուղեկցված պիտի լիներ տառապանքներով։

Ո՞չ, հաղիվ թե նա այդ մասին մտահոգվեր, քանզի նրա ականջներում շատ ավելի գոռացել էր մի ուրիշ հանճար՝ Բեթհովենն անունով. «Հանուն քո արվեստի զոհաբերիր, զոհաբերիր միշտ կենցաղային ամեն ինչ։ Աստված վեր է ամենից»։ Հակառակ պարագայում այդպես շոնդալից հաղթանակով չէր նվաճի աշխարհի լավագույն բեմերը։

Միշտ էլ այդպես է եղել. մահվան անխուսափելիությունն է գեղեցկացնում, արժեքավորում կյանքը։

Եվ այդպես, նրան թողնելով տարամերժ ապրումների ու մտքերի մեջ, առնելով այդ գիրքն ու «Լիր արքան» դուրս եկանք։

Հաճախ էինք անդրադառնում այն մտքին, թե ժամանակ ու վիշտ ասած ամենազորն այդ ի՞նչ ավերածություն կարող են անել մինչև իսկ այնպիսի մի գեղեցկության մեջ, որպիսին նա էր։ Արդյո՞ք նա շատ էր մտածում մահվան մասին։ «Յոթանասունհինգ տարեկան մարդը չի կարող երբեմն մահվան մասին չմտածել,— գրում է Գյոթեն այդ հասակում։— Սակայն այդ միտքն ինձ բոլորովին չի անհանգստացնում, որովհետև ես հաստատ համոզված եմ, որ մեր հոգին իր բնույթով անխորտակ մի էություն է, հավերժությունից հավերժություն դոյատևող ինչ-որ մի բան։ Նա նման է արևին, և միայն մեր երկրային աչքերին է թվում, թե նա մայր է մտնում, իրականում երբեք մայր չի մտնում, այլ շարունակում է անընդհատ լուսավորել»։ Այսպես կարող է գրել հանճարը մի ժողովրդի, որին ոչ թե կոտորել են, այլ նրա անարժան զավակներն են հետագայում կրկնել նույն ցեղասպանությունը։ Իհարկե, մենք շատ բնական կարող ենք համարել արտիստի հարց-պատասխանը մահվան հետ, հիշելով նաև հռոմեական առածը, թե «Մահվանից չվախեցողը մարդ չէ, ինչպես չվախեցնող մահը մահ չէ»։

Ինչևէ, արևը շարունակում է իր անվերջանալի երթը, ինչ էլ մտածեն նրա մասին։

Եկավ ամառը։

Նշանը պատրաստվում էր Սևան մեկնել, ինչպես միշտ՝ հուլիս և օգոստոս ամիսներն այնտեղ անցկացնելու համար։ Դուրս գալուց առաջ խնդրեց կապվել Վարպետի հետ։

— Վահրամ Կամերովիչ, Անահիտն է, Նշանի կինը (նա մի քանի Անահիտ բարեկամ ուներ), բարև ձեզ։ Նշանը Սևան գնալուց առաջ խնդրեց իմանալ՝ ինքը կարո՞ղ է վերադառնալ պայմանագիրն ստորագրելու ձեր «Լիրը» խմբագրելու վերաբերյալ։

— Այո՛, իհարկե,— վստահ ասաց նա։ Զայնն առույգ էր։ Ուրախացա։— Երեկ ես հենց Կարո Վարդանյանի մոտ էի (հրատարակչության նախկին դիրեկտորի)։ Զրուցեցինք երկար, խոսեցինք և «Լիրի» մասին, ասացի, որ Նշանը շատ հարմար է խմբագրի համար։

— Եվ ի՞նչ ասաց։

— Համաձայնեց։

— Ուրեմն, կարո՞ղ եմ Նշանին նա կանչել ստորագրելու համար։

— Անկասկած։ Նրան սպասում են հրատարակչությունում։

— Շատ լավ։ Նա համարյա ավարտել է աշխատանքը։ Հենց հիմա կզանգահարեմ՝ թող գա։

Դռների մեջ կանգնած Նշանը սպասում էր մեր զրույցի ավարտին։

— Դե՛, ես նախ գնամ հրատարակչություն։ Գիրքը հեռս եմ վերցնում։ Ուզում եմ մեջբերումները բոլորը Մասեհյանի թարգմանությունից դնել։

— Սպասի՛ր մի րոպե,— չգիտեմ ինչու՝ կանխեցի նա։— Սպասիր մի Վարդանյանի հետ էլ խոսեմ, որպեսզի զուր չլինի գնալդ։

— Դե՛ որ խոսել է արդեն։

— Ոչի՛նչ, թյուրիմացություն չլինի, գուցե հետո պիտի գնաս։— Ես հավաքեցի դիրեկտորի համարը։— Ներեցեք, Նշան Մուրադյանը կարո՞ղ է գալ և ստորագրել Փափազյանի «Լիրը» խմբագրելու համար։

— Ի՞նչ ստորագրել,— անսեղյակի նման հարցրեց Վարդանյանը։

— Պայմանագիրը... Փափազյանի «Լիրը» խմբագրելու...

— Բայց Նշանն ի՞նչ գործ ունի այդտեղ։ Մենք մեր խմբագիրն ունենք։

— Չե՛մ հասկանում,— տարակուսեցի ես։ Ներս մտնելով՝ Նշանը ծածկեց դուռը։— Երեկ Վահրամ Կամերովիչը ձեզ մոտ չի եղե՞լ։

— Եղել է։

— Չե՞ք զրուցել։

— Զրուցել ենք, բայց «Լիրի» մասին ոչ մի խոսք չի եղել։

— Նա չի՞ ասել, որ ցանկանում է, որպեսզի Նշանը խմբագրի։

— Ո՛չ, չի՛ ասել, այդ մասին խոսք չի՛ եղել...

— Ուրեմն՝ կներեք։

Եվ կախեցի լսափողը։ Կարկամած Նշանը չգիտեր անելիքը։

Ես նորից հավաքեցի Փափազյանի համարը։

— Անհարմար է, Անահիտ, հարկավոր չէ՛,— ուզեց արգելել Նշանը։

— Ո՛չ մի անհարմար։ Ես ուզում եմ թյուրիմացությունը պարզել։ Վահրամ Կամերովիչ, նորից Անահիտն է...

— Լսո՛ւմ եմ, սիրելիս։

— Գիտե՞ք ինչ, ես հենց նոր կապվեցի Վարդանյանի հետ։ Նա ասաց, որ դուք երեկ եղել եք իր մոտ, զրուցել եք, բայց ոչ մի խոսք չի եղել «Լիրի» մասին։

— Ճի՛շտ է ասում,— գոնե ինձ թվաց, թե նա հանգիստ պատասխանեց։

— Ինչպե՞ս թե... Բայց դուք ասացիք...

— Ների՛ր, սիրելիս, ես հենց վազը կգնամ և կհարթեմ ամեն ինչ։ Ես քեզ կգանգահարեմ, նոր միայն Նշանին կկանչեմ։ Խնդրում եմ՝ ներիր...

Լսափողը ցած դրեցի մի տեսակ փշրված։

Երբ այս մասին պատմեցի Ռուբեն Զարյանին, քանի որ նա էր Փափազյանի անունից խնդրել Նշանին, նա տխուր կախեց գլուխը.

— Ինչքա՞ն իր նման է... Զարմանալի մարդ է։ Երբեմն այնպիսի մանր բաներ է թույլ տալիս իրեն, որ չճանաչող-

Վերը կամ չար բերաններն անմիջապես կարող են բամբասանք սարքել։ Իսկ նման մարդիկ քիչ չեն...

Բայց ես, մանավանդ հիմա, չեմ մեղադրում Վարպետին. նա համոզված է եղել, որ միևչև ես Նշանին հետ կկանչեմ, ինքն իսկապես լուծած կլինի այդ հարցը։

Իհարկե, Նշանը և՛ խմբագիր ձևակերպվեց, և՛ ինքն էլ հրաժարվեց, քանի որ հրատարակչության աշխատակիցը կտրականապես հրաժարվեց թարգմանությունը Մասեհյանից բերել։ Նա մեջբերումները կատարեց Փափազյանի թարգմանությունից։

Այնուամենայնիվ, այդ մանրուքներն ամպի այն ծվեններն են, որոնք եթե նույնիսկ չեն գեղեցկացնում Արարատի պատկերը, սակայն ամբողջականացնում են լեռն իր վսեմությամբ։

Նա նաև կենդանի մարդ էր։

ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ

(Օլգա Գուլազյան)

Առաջին անգամ նրան տեսա «Խաթարալա» ներկայացումը սկսվելուց երկու ժամ առաջ։ Ո՛չ, ես չիմացա, չկռահեցի, որ դեպի թատրոն տանող ծառուղիով գնացողը, որ միջինից էլ ցածր հասակ ուներ, ալեխառն ու հարթ մազերը, որ հարդարված էին դեռևս 30-ական թվականների կարճ կտրվածքով, որ անշպար դեմքի վրա միայն նեղ շրթունքները հագիվ ներկած կինը, որի մոխրագույն շրջազգեստն իջել էր ծնկներից էլ շատ ցած, որ կիսակրունկ կոշիկներով անսեթևեթ քայլվածքով կինը ոչ թե բեմի շարքային մի աշխատող էր, այլ հանրապետության ժողովրդական արտիստուհի Օլգա Գուլազյանը։

Այդպես էլ, առանց շուրջը նայելու, մտադրաղ ու ինքնամփոփ՝ նա թատրոնի շենքը մտավ ետնամուտքից, վեր կալով աստիճաններով ու ծածկվեց այն դռան ետևում, որի

վրա գրված էր «ՀԱՍՄԻԿ, ԳՈՒԼԱԶՅԱՆ, Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ»։

Այո՛, թատրոնական թվականներին երեք մեծություններ օգտվում էին ընդամենը մի փոքրիկ հարդասենյակից։

Մի քանի րոպե հետո, երբ դեռ ոչ ոք թատրոն չէր եկել, երեսաց Ավետ Ավետիսյանը հավասարակշիռ, ինքնահաստատող ընթացքով ու ծածկվեց իր գրիմանոցում։

Այն ժամանակ ճշմարիտ արտիստները ժամեր առաջ էին առանձնանում, որպեսզի ամբողջ հարդարվելու միջոցում ավելի խորունկ թափանցեին խաղացվելիք կերպարի մեջ, որպեսզի ամեն անգամ նորովի ներկայացնեին կերպարը՝ իրենք էլ հարստանային նրանով։

Հարդարվելը նրանց համար ստեղծագործական աշխատանք էր, մի ամբողջ ծիսակատարություն։

Հետո, մոտ երկու ժամ անց, առաջին վարագույրը բացվելուց մի յոթ-ութ րոպե առաջ երեք դերասանուհիների հարդասենյակից դուրս եկավ, ոչ, դուրս չեկավ, այլ նետվեց դուրս Բիֆիզեցու շրեզ տարազով, հովանոցը ձեռքին պտտեցնելով մի երջանիկ գեղեցկուհի։ Ինչպես երևում էր, գալիս էր հեռու տեղից։ Ո՞ւմ էր հանդիպել ճանապարհին, ո՞ր երիտասարդի մոլոր հայացքն էր տանում իր թիկունքին, ո՞ւմ հաճոյախոսությունն էր այրում նրա ականջները, որ այդպես աճապարում էր։

Մտնելով կուլիսները՝ նա սկսեց ետ ու առաջ թռչել կիսավարագույրների մեջ՝ մի ձեռքը չիբուխային, լսելիքը՝ բեմին Թոդած։ Երբեմն այնպիսի վախվորած հայացքով էր նա նայում, ասես կարող էին գեռևս հետապնդել իրեն... Ա՜խ, այս գեղեցկությունը, որ պատիժ է երիտասարդ կնոջ համար... Հետո շիկացավ, շիկացավ այնքան (ինչպես կարապը թոչելուց առաջ), մինչև ստեղծվեց այնպիսի մի պահ, երբ այլևս անհնար էր կուլիսներում մնալ ու կիսավազքով նետվեց բեմ ու... Ա՜յս ինչ է, հիմա էլ ա՜յս երիտասարդն է ուզում կտրել իր ճանապարհը...

— Ներեցե՛ք,— իրոք մոտենում է ֆրանտ մի երիտասարդ։— Մի՛ վախեցեք, խնդրում եմ... Կարելի՞ է հրամանք իմանալ՝ Մարտիրոսյանցի տունը ո՞րն է այստեղ։

— Մեր քաղաքումը Մարտիրոսյանցի տուն չկա,— շփոթված պատասխանում է դեռատի կինը։

Հաճույքն ու վախը մոլորեցնում են տանից հազվադեպ դուրս եկած կնոջը։ Եվ զարմալալ շրթունքներին բողբոջած ժպիտը՝ համեմված վախով, արբեցնում են երիտասարդին։ Այնքա՞ն թարմ է այդ նազելին, այնքա՞ն կենսաթրթիռ, ասես բիչ առաջ է լոգանք ընդունել՝ վայելելով սեփական գեղեցկությունը։

Նա խայտուն մի ընթացքով վազում է ու Զամբախովի տանը հասնելով՝ քաշում է զանգի թելը։

— Ո՞ր կողմը հարցնեմ, չե՞ք իմանում արդյոք։

Երիտասարդն իրոք հմայված է տեսածով ու չգիտե իր հաջորդ հարցը։ Գեղեցկուհին վայելում է անծանոթի շփոթմունքը և այնուհանդերձ.

— Ա՜խ, ասատուծ, ասում եմ վուր չեմ դիտի. ի՞նչ եք կամենում ինձմեն...

Վախն արդեն իշխում է հաճույքին, ու նա թափահարում է զանգի թելը։

— Ինչ վախեցա, քա՜... Աբա թե բաց անին։

Երբ Մարքրիտը բացում է դուռը, Նատալյան այնպես է խուժում ներս, որ պատկերացնում ես արդեն, թե ինչ ճոխ գույներով է նա դժբախտ բարեկամուհուն նկարագրելու իր հետ պատահածը...

Հանդիսատեսը հենց նման մի տեսարան է ըմբոշխնում, երբ խորամանկ ու հեռատես, հաշվենկատ ու գործնական Զամբախովն է սարքովի ժպիտով, ավելի սարքովի քնքշանքով հարցուփորձ անում Նատալյային։ Նա ուղղակի աղջնակի տեղ է դնում բարեկամուհուն այն պահին, երբ խնձոր է տալիս նրա ձեռքը։

Ահա և հարմար վիճակը։ Ու Նատալյա-Գուլազյանն ինչպե՞ս է խաղում խնձոր ուտելու, պատմելու տեսարանը։ Նա և՛ վայելում է հյութալի պտուղը, և՛ արտնքում խոսում է, խուսափում, ամաչում, սեթևեթում, ծիծաղում։ Դա ի՞նչ արծաթահնչյուն ծիծաղ էր, որ վարակում էր ամբողջ դահլիճը, ձայն, որ չծերացավ, որ տառնյակ տարիներ հենց այդպես էլ մնաց ունկնդիրների լսելիքում...

Ո՞չ, այդ Նատալյան ոչ մի կապ չուներ երևկոյան իմ տեսած այն տարեց կնոջ հետ, որ անցնում էր ծառուղիով ու

չգիտես անձնական կյանքում երբևիցե ապրե՞լ էր նման երջանիկ մի պահ...

Երիտասարդ էի ու շատ էի նրազում խամփերի խաղալ այդ նույն ներկայացման մեջ։ Այդ ի՞նչ անսամբլ էր, տեր աստված. Գուլաղյան, Ավետիսյան, Գաբրիելյան, Պարոնիկյան, Ստեփանյան։ Իսկ խամփերու դերով, թեև հաղվագեպ, հանդես էր գալիս այնպիսի անփոխարինելի մի մեծություն, որպիսին Հասմիկն էր. ճշմարիտ վարպետ բառիս իսկական իմաստով։ Ու նրազանքս մնում էր իր սահմաններում դաբանակալ։ Սակայն, քանի որ Հասմիկը հոգնում էր, ու նրան գուրգուրանքով էին վերաբերվում, խնայողաբար էին բեմ թողնում, այդ դերն իր տեսակի մեջ յուրօրինակ կատարում էր Անիկ Մկրտումյանը։

Եվ մի օր հանկարծ...

— Գուլակյանի մոտ,— միջանցքում ինձ մոտեցավ տեխնիկական ռեժիսորը։

«Գուլակյանի մոտ»։ Սիրտս ահ ընկավ։ Այդպես ներքին անհանգստություն կամ վախ էին ապրում սկսնակից մինչև ժողովրդական արտիստը, երբ իր մոտ էր կանչում թատրոնի գլխավոր ռեժիսոր Արմեն Գուլակյանը։ Արժանի կոլեկտիվին՝ արժանի ղեկավար։

Երբ ներս մտա, Արմեն Կարապետն ինչ-որ գրում էր։

— Կարո՞ղ ես երկու օրում խամփերու դերը պատրաստել,— թափանցող հայացքն աչքերիս մեջ՝ հարցրեց նա։

Դիմումն անսպասելի էր, պատասխանս՝ մոլորյալ։

— Անիկը շրջան է մեկնել ընտրությունների կապակցությամբ։ Ազգագրերը վաղուց կան, տոմսերը վաճառված են։

Ուզում եմ հաստատական պատասխան տալ, բայց վախենում եմ ինքնավստահության մեջ մեղադրվել։

— Կարծում եմ՝ տակից դուրս կգաս։ Քո դերն է։ Եթե հավանեցի, կմտնես հիմնական կազմի մեջ։ Տեքստն անդիր սովորելուց առաջ կարդա Գուլակյանի մոտ։ Վաղն էլ Ավետը միգանսցիներին կծանոթացնի։ Դե՛, գնա, ցերեկային փորձից ազատվում ես։ Դերը Լյովայից վերցրու։

Դուրս ելա քրտնած՝ այդպես էլ ոչ մի բառ չարտասանելով։

Տեքստը մի քիչ գետնի։ Գնացի Գուլաղյանի մոտ։ Տերյան փողոցի վրա գտնվող դերասանական շենքի առաջին հարկում էր ապրում նա։ Ինձ համար անչափ հետաքրքիր էին հյուրասենյակի պատերին փակցված դերասանուհու տարբեր տարիներին խաղացած դերերի նկարները։ Կահավորանքը համեստագույնից չէր անցնում. երկաթե հասարակ մահճակալ, գրասեղան՝ վրան գրքեր ու թղթեր, վենական աթոռներ քառակուսի սեղանի շուրջ շարված, գդեստապահարան... Այս բոլորը հյուրասենյակում։

— Արա՛ կարդա տեսնեմ,— թերահավատ ինձ դարձավ դերասանուհին։

Այդ բոպեին նա ոչնչով նման չէր արտիստուհու Հակոտակը, ներդաշնակ էր իր տան եղած-չեղածին, հոգաթափելով քայլվածքի մեջ ոչ մի կոկիկություն, հագուստը հասարակ, ձեռքերը՝ տնտեսուհու, որ օրվա մեծ մասը խոհանոցում է անցկացնում...

— Լսո՛ւմ եմ,— սթափեցրեց ինձ տանտիրուհին։

Սկսեցի կարդալ։ Ընդհատեց։

— Կարդացածիդ մեջ չես,— ասաց նա մայրաբար։— Գիտե՞ս որտեղից է գալիս խամփերին։ Այդ օրը մի ամուսնություն է դրատել, որի համար մեծ գումար է վաստակել։ Է՛, ի՞նչ անենք, թե սուտ է խոսել, թաքցրել է աղջկա արատները, որ հիմար փեսացուին էլ իմաստուն է ներկայացրել և հազար ու մի խարդախություններով գլուխ է բերել այդ գործը։ Մի կին է նա, որ ուզած բոպեին կարող է արցունքներով լաց լինել, կարող է առիթը բաց չթողնել ու գավաճանել հարազատին, կարող է սուտ երդվել, տեսարան սարքել, միայն թե փող դուրս գա դրանից։ Ա՛յ թե ով է խամփերին։ Արա՛, դե սկսիր...

Երբ ավարտեցի տեքստը, մի երկու բառի շնչատարություն շտկեց ու մաքրեց աչքերը։ Ապշեցի։ Ի՞նչ հուզվելու տեղ կար։ Շունչս պահած՝ նրան նայեցի։

— Ապրե՛ս, աղջիկս,— ձեռքն ուսիս դրեց նա։— Մինչև հիմա կարծում էի, թե մեր սերնդից հետո մոռացվելու է Սունդուկյանը... Շա՛տ ապրես, լավ մուտք է։ Նորի՛ց կարդա։

Հիշում եմ, որ նա այդ օրը երկար խոսեց ներշնչման ուժի

մասին։ Ասաց, որ ներշնչմամբ կարելի է ամեն ինչի հասնել, ամեն ինչ ստեղծել։

— Խարակտերնի դերասանուհու ստեղծագործական կյանքն անհամեմատ երկար է մյուս ամպլուաներով արտիստների կյանքից։ Ես սկզբում սուբյեկտ էի, հետո՝ դրամատիկ, հիմի՝ խարակտերնի...

Նա էլի խոսեց, խոսելով ոգևորվեց այնքան, մինչև սովորական տանտիրուհուց վերափոխվեց արտիստուհու, և ես հավատացի, որ օրեր առաջ նրա Նատալյայով էր հիացած ողջ դահլիճը... Ես համոզվեցի նաև, որ միայն մեծ հոգիները կարող են մեծ արվեստագետ լինել. նրանք վախ չունեն ու հարազատի նման են ողջունում իրենց փոխարինող երիտասարդների մուտքը։

Գուլազյանը կարողանում էր իրեն անջատել շրջապատից, մեկուսացնել հանուն արվեստի։ Նրա նմանների համար է Բալզակն ասել. «Իսկական բանաստեղծը ուղիղ ճամփից դուրս չի գա... Նույնիսկ ծաղիկ քաղելու համար»։ Գուլազյանն իր աշխատասիրությամբ նոր մեկանց հաստատում էր ֆրանսիական նկարիչ Դեգայի այն խոսքը, թե՝ եթե դու հարյուր հազար ֆրանկի վարպետություն ունես, դներ ևս հինգ սուի։ Գուլազյանն անձնական կյանք չուներ, նրա անձնականը թատրոնն էր ու արվեստը և նա ու թատրոնը այն զույգ նշի հատիկներն էին, որ տեղավորված էին նույն կեղևում։

Ես մտա «Խաթաբալայի» հիմնական կազմի մեջ, ու առաջինը ողջունեց այդ օրն անկողնուց թատրոն եկած Հասմիկը։ Ահա թե ինչ մարդիկ էին նրանք։

Սքանչելի ու յուրօրինակ մի անսամբլ էր նաև «Եգոր Բուլըչովը և ուրիշները» ներկայացման մասնակիցների խումբը։ Ամենաերկրորդական դերակատարումն էլ դասական էր, անփոխարինելի։ Այստեղ Գուլազյանը կատարում էր կյանքով ու ընկալումներով հզոր Բուլըչովի կնոջ՝ ձանձրալի, հիմարության աստիճանի միամիտ, անհետաքրքիր Քսենյայի դերը։ Ի՜նչ հոգեմաշ միապաղաղ էր այդ կինը, և ինչ հաճույքով էիր լսում կատվի մլավոց հիշեցնող նրա ձայնը, մոնոտոն, անկիրք, անսիրտ այդ ձայնը։ Անատոլի ինչպես էր պայթյուններով ծիծաղում ու անմիջապես էլ ո՜նց էր

լրջանում, երբ իր վրա նետված էր տեսնում ամուսնու մոայլ ու արհամարհալից հայացքը։ Լրջանում էր ու ապուշային հայացքը փախցնում նրանից։ Հանդիսականը հասկանում էր, արդարացնում Բուլըչով Վաղարշյանի ողբերգությունը այդպիսի կնոջ ամուսինը լինելու համար և չէին մեղադրում նրա ձեռքի շախով հարվածը Գլաֆիրայի հետույքին։ Գուլազյան-Քսենյան ոչ միայն իր կերպարն էր մատուցում լիարժեքորեն, բերնեբերան հարստացած, ձայնային անթվարկելի ելևէջներով, երանգներով ու նրբերանգներով, այլև այդ ամենով օգնում էր իր հետ առնչվող կերպարների բացահայտմանը։

Եվ ահա շատ ու շատ աննման դերերից հետո «Մառերը կանգնած են մեռնում» ներկայացման մեջ Տատիկի փայլուն դերակատարումը։

Թերևս քիչ արտիստների է բախտ վիճակվել կյանքի մայրամուտին այդպիսի ժայթքում ունենալ (գրականության մեջ այդպիսի պոռթկում էր Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանքը», որը նոր լույս սփռեց դրողի ողջ ստեղծագործական վաստակի վրա)։ Թվում է, թե արդեն սպառվել է արվեստագետը, և նրա պորտրեն լիարժեք է դարձնում ապրած ստեղծագործական ճանապարհը։ Նայե՛ք, հազիվ է քայլում նա, քիչ ծանոթների է նկատում, պետք է օգնել սանդուղքները բարձրանալիս, կարծես անտարբեր է ամեն ինչի նկատմամբ, ունկնդրելիս էլ ձեռքն ականջի ետևն է տանում... Բայց ո՜չ, թատրոն տանող ճանապարհը նա միանգամայն այլ ընթացքով է կարում, ուշադիր դիտելիս մինչև իսկ զբաղանակ կարող են նկատել նրա ոտքերի տակ, իսկ երբ կուլիսներին է մոտենում, այլևս ոչ թե արտիստի, այլ խաղացվելիք կերպարի սիրտն է այդպես բաբախում նրա կրծքի տակ։ Ձայնն էլ իրենը չէ, այլ այն մեկինը, որի հոգու մեջ է մխրճվել արտիստը...

Գուլազյանի Տատիկը ցնցեց ողջ թատերասեր հասարակայնությանը։ Այդ մասին գրեցին թե՛ միութենական և թե՛ հանրապետական թերթերն ու ամսագրերը։ Նրանք միաբերան հաստատեցին, որ Տատիկը արտիստուհու երկրորդ երիտասարդությունը եղավ։ Այդ դերը մի հզոր ակորդ հանդի-

ռացավ յոթանասունը վաղուց բոլորած դերասանուհու ստեղծագործական կյանքի համար։ Տեղին է հիշել Գյոթեի խոսքը. «... առանձնահատուկ շնորհներով օժտված մարդիկ իրենց ծերության տարիներին անգամ միշտ յուրահատուկ բեղմնավորության թարմ շրջաններ են ունենում. թվում է նրանց մեջ ժամանակ առ ժամանակ անցողիկ երիտասարդացում է տեղի ունենում, և դա այն է, ինչ ես կրկնվող հասունություն եմ կոչում»։ Գուլազյանի նմանների համար է Բալզակն ավելացրել, թե մշտական աշխատանքը նույնքան արվեստի օրենք է, որքան և կյանքի օրենքը։

Տատիկից հետո մտածում էինք, որ ավարտվեց մեծ դերասանուհու ստեղծագործական կյանքը, և նա փակված իր տանը՝ սպասում է։

Սպասո՞ւմ է։ Ինչի՞ կարող է սպասել ութսունը ճանապարհած արտիստուհին։

Եվ ահա յոթության այդ ժամանակ էլ խնդրում են ինձ մի ակնարկ գրել նրա մասին։ Գրել այն ժամանակ, երբ նրա ստեղծագործությունը պատմությո՞ւն է այլևս։ Անհնարին է։ Անտակտություն չէ՞ ողջ արտիստի անցած-գնացածի մասին գրել։ Այո՛, ճակատագիրը սիրում է ողբերգական ձևերի մեջ պարուրել հենց մեծ մարդկանց կյանքը։ Ինչ լավ է ասել Ստեֆան Ցվայգը, թե ով իր զրույցը վարում է երկնակամարի հետ, նա չպիտի երկյուղի կայծակներից ու ճակատագրի անխուսափելիությունից։

Ու ես ձմեռային մի շատ սովորական օր ծեծում եմ Գուլազյանի տան դուռը։ Այս անգամ արդեն Գեղարվեստական ինստիտուտին հարևան շենքի առաջին հարկի դուռը։

Հողաթափերի քստքստոց է մոտենում դռանը։ Մի կերկեր ձայն է հարցնում.

— Ո՞վ է...

Ասում եմ։ Իսկ հիշո՞ւմ է։

Դուռը բացում է այն ժամանակ, երբ ճեղքից նայելով հավաստիանում է, որ հարցնողը կին է, այն էլ կարծես ծանոթ էկրպարանքով։

Մտնում եմ, բարևում ու թևաթափ լինում։ Վախենում եմ առաջանալ։ Նայում եմ առջևս կանգնած, վանդակավոր շալն ուսերին, ցածրահասակ պառավին ու... փնտրում եմ նրան, ում համար եկել եմ։ Ո՞չ, նա չկա՞։ Իմ առջև կանգնածը միայն նրա ստվերն է։ Իսկ սա նայում է ոտքերիս։

— Այդ փալասների վրայով առաջացիր,— ասում է նա մարող ձայնով։

Հասկանում եմ, մաքրող չունի։

Կանգնում եմ քառակուսի փալասների վրա, կախում վերարկուս ու նորից նրան նայում. տեսքը տարտամ է ամպոտ եղանակի ստվերի նման։ Ինչ-որ դառնություն ու ափսոսանք է արտահայտում դալուկ դեմքը։ Արդյո՞ք անհրաժեշտ էր իմ գալը, հարկ կա՞ր տեսնելու ճերմակ ու թափված մազերի բարակ հյուսերն ուսերին թողած, բամբակյա հասարակ գուլպաներով ու մեծ-մեծ հողաթափերով այս կնոջը, որը, հավատացե՛ք, ազնի՛վ խոսք, մեծ արտիստուհի է եղել։ Իսկ հիմա, մենակությունից երևի իր այս հագուստների, այս հին կահույքի, անկողնու հետ է զրուցում, վիճում, հիշում իր անցած փառքի մասին... Ո՞վ գիտե, հիմա ի՞նքն է իր մտքերին տանում, թե՞ մտքերն են իրենց ետևից քարշ տալիս նրան...

Ըստ երևույթին մի դառնատենչ հանդիպում էր սպասում ինձ։

— Ինչպե՞ս եք, Օլգա Նիկոլաևնա,— մի բան ասելու համար հարցնում եմ ես՝ երբեք չցանկանալով լսել պատասխանը։

Ախր ինչպե՞ս ես հարցնում, չգիտե՞ս, չե՞ս տեսնում, թե ինչպես է։ Եկել ես ծաղրելո՞ւ մարդուն։ Հայհոյում եմ ինձ ստորացումից ընկճված ու մտնում ննջարան։

— Է՛,— սքանչելի ձայնի մնացորդով կերկեր ու հեգնախառն հառաչում է նա։ Հետո ելնում, մտնում է անկողին ու ծվարում ծածկոցի տակ։

Նույն անկողինն է, նույն մահճակալը, նույն հին, շատ հին կահույքը։ Միայն տանտերն է փոխվել ու հասել նրանց։ Ինչո՞ւ եկա, ի՞նչ ենք խոսելու նա կկարողանա՞ պատասխանել թեկուզ ամենասովորական հարցերիս։

— Խելագարվում եմ հեռախոսային զանգերից,— անուժ բողոքում է նա։— Քաղաքի բոլոր փչացած հեռախոսների զանգերն իմի միջով են անցնում։

— Ինչպե՞ս թե։

— Այդպես,— անճիգ բարկությամբ շարունակում է նա։ Ես ուրախ եմ. թող խոսի՛, բողոքի՛, թող լա՛ց լինի, հառաչի, միայն թե չլռի։— Այո, օրը հարյուր զանգ է լինում և ոչ ոք ինձ չի ուզում... Օտար-օտար մարդիկ...

Սիրտս ճմլվում է. երանի՜ չխոսեր. իսկ ես, ես որևէ անգամ զանգահարե՞լ եմ այս կնոջը...

— Բոլորիս հեռախոսներն են նույն վիճակում։ Անընդհատ սխալվում են։

Նայում եմ ու տեսնում, որ դերասանուհին արկար չի սպասելու իր մայրամուտին։

— Նստի՛ր,— կողքի աթոռն է առաջարկում։

Կիսապառկած է, ծնկները հավաքած կրծքին։ Բամբակե ծածկոցի տակ շատ փոքր է երևում։ Ինձ թվաց, թե այդ պահին նա մի նոր տխրություն պարգևեց իրեն, նվիրեց այն չափով, որ կարողանա արտիստական զգացումով պատկերացնել, թե ինչպիսին կարող է լինել ինքն այդ ժամանակ։ Այդպես է արդեն մեծ արվեստագետը. կարող է լիաբուռն ծիծաղելուն, ինքնամոռաց արտասվելուն, քանզի իր մեջ նստած արտիստն այդ պահին ուսումնասիրում է իրեն։

— Դե ասա, ինչո՞ւ ես եկել։

Մաշված ու գունատ ձեռքը մնացել է ծածկոցի վրա, ասես պոկված տիրոջից, քանի որ տերը հոգնաբեռ է, ինքն իր մեջ ամփոփված։

— Եկել եմ ձեր մասին գրելու,— չեմ կարողանում որևէ բան հորինել ու ելնելով՝ սկսում եմ պատին կախված ֆոտոնկարները դիտել, որպեսզի հաջորդ ասելիքս պատրաստեմ։ Փոխարենը մտածում եմ, որ այս հնացած, երևի անցյալ դարից մնացած իրերը քնում են տանտիրուհու հետ ու մի օր էլ չեն արթնանալու տիրոջից առաջ։— Այս սքանչելի դերակատարումների մասին եմ գրելու...

— Է՜, մեռնելուց հետո ե՞ք հիշում,— ձայնն ափի մեջ հանգցրեց նա։

Աստվա՜ծ իմ, մի՞թե սա իրեն արդեն մեռած է համարում...

Ճգնավորի անկողին ուներ ու ճգնավորի սնունդ էր ընդունում հավանորեն։ Վախենալու չափ գունատ էր, երևի

հաճախակի ջերմից՝ ցոմաքած շրթունքներ։ Անցյալ տարվա կյանքն այժմ գոգամեջ էր առել ու նայում էր ինձ։ Արդյո՞ք սա հենց այն բարի պառավը չէ, որ ասում է, թե ի՞նչ անհանգիստ վատ եղանակ է։ Ավելի լավ է, որ լինի վատ եղանակ, քան թե ոչ մի եղանակ չլինի...

— Ի՞նչ պիտի գրես իմ մասին։ Երեք տարի է տանից դուրս չեմ եկել։ [illegible] դուց ամփոփած են ձեռքերս, ձա՜յնս... Գիտե՞ս, [illegible] էի իմ ձայնը ու ինչքա՞ն էի կարոտել նրան... [illegible] սկսել եմ, որ եկար, ողջ ապրածս հիմարվել է ահա[illegible]

[illegible] Հեռուս[illegible] ավելց գլուխը։

[illegible] Դու [illegible]՞ եկա, ինչպե՞ս եմ դուրս գալու այստեղից, ինչպե՞ս... [illegible] նայելու այս կնոջ աչքերին, մագաղաթյա այս դեմքին, որն իր վերջնողին է սպասում...

— Հիշո՞ւմ եք իմ մի հոդվածը ձեր Տատիկի մասին,— այս ճանապարհով եմ ուզում շունչ տալ նրան։

— Ա՜, Տատի՜կը,— երանելի արձագանքում է նա։ Վերհիշում ժպիտի մեջ կարոտի մեծ զգացում է ընկալվում, կարոտ իր արվեստի՞, թե՞ ընդհանրապես մարդու նկատմամբ։ Հանկարծ կախված գլուխը բարձրացնում է ու շեշտակի նայում է ինձ։— Իսկ դու նայի՞լ ես «Բրուտի ամբոցը»։

— Չեմ նայել... Ներեցեք...

— Բա էլ ո՞ւր ես եկել։

Հավատացեք, ես տեսա, թե ինչպես աչքերից թախիծը կնճիռ առուներով իջավ բերնակողերը ու դարձավ վիրավորանք, բարկություն։

— Ինչո՞ւ ես եկել, ի՞նչ պիտի գրես իմ մասին, մարդիկ ինչպե՞ս են ճանաչելու ինձ առանց այդ պառավի... Ես կիսա՞տ կլինեմ...

Եվ նա մի կողմ նետեց ծածկոցը, նստեց, ծերունական ոտքերը հոնքեցին գետնին չհասած։ Չոր ձեռքերը ծնկներին դրեց ու խուզարկու հայացքը հառեց անորոշությանը։

— Օ՜, դա ուրի՞շ գեր էր...

Ձայնի մեջ կենդանության երանգներ են հայտնվում։ Նա շտկվեց տեղում, սկսեց այլափոխվել, կնճիռների խորությունը սակավացավ, բարակ ու կլորավուն հոնքերի օգ-

նուիյամբ սկսեցին փայլ առնել աչքերը։ Տիրոջից անջատված ձեռքերն ու ոտքերն ավյունով իրար ձայն տվեցին, միացան մարմնին, կենդանություն առան...

— Ինչպե՞ս էի խաղում, տե՞ր աստված, ինչպե՞ս էի խաղում...

Ձեռքերն արդեն իրար [illegible] ոչոնում։ Գտա՞ն։ Ազուցվեցին ամուր, երևի ցավեցնելու չափ ամուր [illegible] հողաթափերն էին փնտրում։ Գտա՞ն։ Թաթերն [illegible] ցին հատակի ամրությունն ու կանգնեցին։

— Տղայիս դերը կատարում էր Ջան[illegible] արկաղ [illegible] խաղում. կոպիտ, անտաշ, վայրենի, նաև [illegible] տա[illegible]վան... Իսկ ես կիսացնդա՞ծ, խե՞ղճ, հալածվա՞ [illegible] ապատի՞վ, անօգնակա՞ն...

Մի երկու քայլ առաջացավ, մահճակալին շպրտեց ուսերի շալը, սենյակի կիսախավարից մեկեն պոկվեց նրա գունատ ու ողորմելի, անպատվված կերպարանքը, որը ոչ մի ծանոթություն չուներ քիչ առաջվա անկողնում կուչ եկած պառավի հետ։

— Իսկ հիմար տղաս կարծում է, թե իշխանական ծագում ունի...

Նա ծիծաղեց՝ ձեռքերն առաջ մղած։ Ինչքա՞ն դառնություն ու վիրավորանք կար այդ ծիծաղի մեջ։ Ո՞չ, Քսենյայի ծիծաղի հետ ոչ մի ընդհանրություն չուներ այդ քրքիջը։ Դա արտիստուհու պահեստում եղած անձեռնմխելի ծիծաղներից մեկն էր, որ սարսուռով պատեց ինձ...

— Եվ ինչպե՞ս է ստորացնում ինձ, պառավի՞ս... Ամբողջ օրն աչքս ուսելիքի վրա է և ուտում եմ, ուտում ու չեմ հագենում։ Այնպես եմ ուսելիքին վրա ընկնում, ինչպես շունն իր ակնկալած ոսկորին...

Իսկապես, այդ բոպեին այնպիսի սովալլուկ կերպարանք ուներ ու այնպիսի երերուն քայլվածքով ետ ընկրկեց, ասես հենման կետ էր որոնում ու աչքիդ առաջ պիտի վայր ընկներ փայտի կտորի պես... Ես երկարեցի ձեռքիս նրան բռնելու, բայց նա հեռացավ։ Նա բացակայում էր այդտեղից ու առաջ կարկառած ձեռքերն ասես իր ամբարտավան որդուն էին որոնում ծվատելու համար...

— Գիտե՞ս, մի անգամ, ներկայացման ընդմիջմանն ինչ

նիկոլոգ ստացա մի հանդիսատեսից,— հանկարծ դարձավ ինձ իր փակագիծ խոսքով։— Օլգա Նիկոլաևնա, թանկագին, ես չեմ կարող նայել ձեր սովամահ կերպարանքին։ Եվ պիտանի, որ ամբողջ ներկայացման ընթացքում ձեր կերածն ընդամենը կե՞ս խնձոր է։ Ասածս սիրուն, աղաչում եմ, այդ ներկայացումից մեկ օր առաջ ասացեք, և ես ձեզ համար ամենահամեղ ուտելիքները կբերեմ։ Ահա իմ հեռախոսը։ Ես բախտավո՞[illegible] հասե՞լ էի իմ նպատակին...

Հետո նա [illegible] թռավեց ինձնից, իր տնից, իր ոտքերից [illegible] ցասման կծիկ, ծիծաղեց անարդարության վրա.

— Դու ոչ միայն իշխանից չես սիրում, այլև ապօրինի զավակ ես,— ճչաց նա, հիստերիկ քրքիջ բարձրացրեց, խոշոռանդեց երեսը, վազեց մի ծայրից մյուսը, բռնեց երեկայած որդու օձիքն ու սկսեց թափահարել։— Ապո՞ւշ, ո՞ւր ես ելիր ցցել... Տխմա՞ր... Դու ապօրինի՞ ծնունդ... Դու խառնածի՞ն...

Հիմա արդեն նրա խաղին մասնակցում էին մարմնի բոլոր մասերը, մեռած, թե կենդանի։ Երբեմն այնպես էր թափահարում ձեռքերը, ասես աշխատում էր պաշտպանվել խայթող կրետների պարսից։ Հետո հայտնվեց լուսամուտից ներս ընկած ձմեռային մայրամուտի շողերի մեջ, հենց այդտեղ էլ անիրական թվաց։ Բայց ահա նորից գոռաց սիլտ պոյթելու չափ ուժեղ, մոլուցքով.

— Ապօրինի՞ ծնունդ...

Հետո հարբածի քայլերով, ձեռքերը տարածած [illegible] մահճակալին, ափերի մեջ առնելով երեսը՝ ընկավ բարձին ու դառը, դառը հեկեկաց։ Ես սպասում էի շունչս պահած։ Նա գլուխը բարձրացրեց այն ժամանակ միայն, երբ մի վիթխարի դահլիճի հասարակության հետ միասին (իր և իմ երևակայությամբ) ե՛ս էլ ծափահարեցի։

Նա ոտքի հլավ միանգամայն անճանաչելի դարձած. նա դառնում էր Օլգա Գուլագյան, առանց վերջին տարիների ու սրերի, առանց մի քառորդ ժամ առաջ եղած պառավի... Ես հավատացի, որ նա դեռ կարող է ոչ միայն ապրել, այլև՝ խաղալ։ Ես միայն զարմանում էի, թե ինչպե՞ս էր, որ այդ հրաշք արվեստագետը դեռևս գոյություն ունի և ապրում է

նույն ժամանակահատվածում, ինչպես ես, նա, բոլորը...

Ափսոս, որ ես մենակ տեսա այդ աստեղային բոպենները։ Այս պահի համար է ֆրանսիացի նկարիչ Միլլեն ասել. «Արվեստը ճակատամարտ է, արվեստի մեջ չպետք է խնայել սեփական մորթին։ Ես կգերադասեի ոչինչ չասել, քան արտահայտվել ոչ ուժեղ կերպով»։

Եվ տեսածս Օլգա Գուլազյանի վերջին ներկայացումն էր։

— Եթե այսօր էլ ինձ հրավիրեն, կգնամ Թատրոն,— ասաց նա մեղավոր ժպիտով։

«Մեծ մարդիկ մետեորներ են, որ իրենք իրենց այրելով՝ աշխարհն են լուսավորում»,— ասել է Նապոլեոնը։

— Բա ասում էիք՝ մեռնում եմ,— կատակեցի ես։

— Է՛, անպիտա՜ն, մի՞թե չգիտես, որ արտիստը կարող է նույնիսկ հարություն առնել, երբ սիրած կերպարներից մեկը պետք է վերարտադրի...

Նա թուլանում էր բոպե առ բոպե։ Ժպիտի մի փշրանք մոլորվել էր կնճիռների մեջ։ Հետո շրթունքներն այնպես հավաքեց, ասես ուզում էր հասկացնել, թե այլևս ոչինչ չունի ասելու։ Ես ելա շուտ հեռանալու, քանի դեռ մարմնի մասերը չէին լքել տիրոջը, չէր մոխրացել նա ինքը սեփական բոցերն շնչից։

Ձմռան քամին ուժ չուներ սթափեցնելու ինձ։

Նրան չհրավիրեցին Թատրոն։

Նրան տարան Թատրոն, քանի որ մահվան իրավունքն ամեն մի աշխարհ եկած մարդու բնածին իրավունքն է։

Հազարավոր երկրպագուներ նրան ուղեկցեցին այնտեղ, որտեղ սպասում էին իր հին բարեկամները, որոնք հավանորեն ունեցել էին իրենց վերջին դերակատարումն առանց հանդիսատեսի, որոնք ունեցել էին ևս իրենց աստեղային բոպենները։

ԳՈՒՐԳԵՆ ՋԱՆԻԲԵԿՅԱՆ

1. ԿՈՒՐՏԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Ավագ սերնդի մեջ Գուրգեն Ջանիբեկյանը առանձնանում էր իր հասակակիցներից նրանով, որ շատ ավելի երիտասարդ դերասանների հետ էր շփվում, ապրում էր նրանց արտիստական ճակատագրով, շահագրգռված էր, որպեսզի նրանք էլ պատասխանատու դերերով հանդես գային։ Այդ էլ էր պատճառ դառնում, որպեսզի ամբան արձակուրդներին, հանրապետության սահմաններում շրջագայելիս, մեծ մասամբ իր հետ էր վերցնում երիտասարդ դերասան-դերասանուհիներին։

Ինչքան էլ հանդես էր գալիս ամենատարբեր կերպարներով և լավ էր խաղում, դարձյալ նրա փառքի պսակը մնաց Գրիգոր աղան։

Թեև պատերազմը նոր էր ավարտվել, այնուամենայնիվ ժողովուրդը զեռևս հոգեկան սնունդին էր ապավինել, թատրոնի դահլիճը մեջտեղ էլ լիքն էր լինում հանդիսատեսով։

«Օթելլոյի» հերթական ներկայացումներից մեկն էր։ Ջանիբեկյանը, ինչպես Օթելլոյի, այնպես էլ իր մյուս դերերի վրա էր հարձակվում ներքին պաթոսով, էներգիայով, տեմիջակառուցվածքով և, որ կարևոր է, անմեղ բարիությամբ։ Ես շատ ավելի գլանված էի լսում նրան երգելիս։ Ի՞նչ լավ էր երգում Աշոտ Սաթյանի, Սայաթ-Նովայի, հայկական ժողովրդական երգերը։ Անձանձրույթ կարող էիր ժամեր շարունակ լսել։ Երբեմն էլ թզթի կտորով կամ մի սանրով պտեղան գործիքների ձայներ հանելով՝ ձայնակցում էր իրենց։ Բնավորության այս խառնվածքը վիպասում էր նրա բարի, անխարդախ, բռնկուն, գվարթ լինելը։

Այս ի մեջի այլոց։

Ուրեմն, «Օթելլոն» գնում էր իր հախուռն ընթացքով։ Սակայն Ջանիբեկյան-Օթելլոյին ինչ-որ բան էր խանգարում, նույնիսկ նեղվությունացնում։ Մանավանդ զգաստարներին երբեմն ահարկու հայացք էր նետում առաջին շարքում նստած մի երիտասարդ ազամարդու վրա։

Պարզվում է, որ ներկայացումը սկսվելու պահից այդ

երիտասարդ հանդիսականը շոփով անընդհատ ատամներն է քշփորում ու շրթունքներով աշխատում է ազատվել կերակրի մնացորդներից՝ ճստճստացնելով։ Ի՞նչ իմանաս, թե որտեղ է կուշտ կերել-խմել ու հիմա էլ եկել է հոգեկան հաճույք ստանալու։ Եվ ամեն պատուգայի սրա շրթունքների ճստճստոցն է հասնում ոչ միայն շուրջը նստածներին, որոնք չեն համարձակվում որևէ դիտողություն անել, այլև Օթելլոյին է հասնում այդ անախորժ, բնավ ժամանակին չլինող ձայնը։ Երևում էր, որ այդ կուշտ ջահելը միտքը շատ ավելի կենտրոնացրել էր իր ատամները մաքրելու, քան ներկայացմանը հետևելու վրա։

Եվ ահա այն տեսարանն է վերջապես, որտեղ քար լռության մեջ Օթելլոն խոսում է ճրագը հանգցնելու մասին։

Համատարած լռության մեջ, ասես դատարկ քարանձավում, պարզ ու որոշ Օթելլոյին է հասնում այդ ուղղակենցաղային ձայնը։

Այլևս չդիմանալով, Ջանիբեկյանը, Օթելլոյի գրիմով ու հանդերձանքով, կեռ դաշույնը հանած, հզոր քայլերով գալիս է բեմառաջը, ահարկու աչքերը մեխում է կուշտ հանդիսատեսի բերանին։

— Դո՛ւրս, անբարտավա՛ն,— գոռում է նա՝ դաշույնը բարձրացրած։— Դո՛ւրս կորի, թե չէ փորդ կթափեմ...

Անակնկալի եկած երիտասարդը մի ճիչ է արձակում, սարսափած ձեռքերը թափահարելով նախ կպչում է աթոռի թիկնակին, ապա համոզվելով, որ Օթելլոն այդ պոռթկումով անպայման կսպանի իրեն, ելնում է ու դուրս փախչում՝ պապանձված, ոչինչ չհասկացած դահլիճից։

Ո՞վ գիտե, գուցե Ջանիբեկյան-Օթելլոն իրոք կարող էր դաշունահար անել ամբողջ ներկայացման ընթացքում իր չղերը սղոցողին... Ոչ ոք չի կարող որոշել արվեստագետի բռնկման սահմանները...

Ինչևէ, պոռթկած աղմուկն իսկույն էլ խլանում է և հոգով խաղաղված արտիստը շարունակում է իր դերակատարումը։

2. ՓՈՂՈՑԱՅԻՆ ԿԱՏՈՒՆ

Այդ օրը Դուրգեն Ջանիբեկյանը Համլետ էր խաղում։ Վերջին տեսարանն էր։ Կլավդիոսի դերում Վավիկ Վարդանյանն էր։ Ի դեպ, և՛ Վավիկ Տիգրանիչը, և՛ Դավիթ Մալյանը ատում էին այդ դերը ու խաղում էին ստիպված։ Բայց մի անգամ Կլավդիոսի հարդարանքով Դավիթ Մալյանը, մուտքից առաջ, դրուցում էր շուրջը հավաքված երիտասարդների հետ։ Նրա տրամադրությունը մինչև իսկ բարձր էր։

— Այնքան ուրախ եմ, որ այսօր ես եմ խաղում,— ժպիտով ասաց նա։

— Բայց դուք ամեն անգամ զզվանքով եք մոտենում այդ դերին,— հիշեցի ես։

— Ուրախ եմ, քանի որ հայորդ ներկայացմանը Վավիկն է խաղալու,— պատասխանեց արտիստը։

Այնուհետև, հավանորեն այդ հանգամանքը հաշվի առնելով Մալյանը Կլավդիոս էր խաղում բարձր տրամադրությամբ։

Այդ օրը, որը երբեք չի կորչի իմ հիշողությունից, Կլավդիոս էր խաղում Վավիկ Վարդանյանը։

Եվ ահա նախավերջին այն բոպիներն են, երբ Համլետը, տեսնելով օրորվող մորը, աղաղակում է.

— Բայց թագուհու հետ ի՞նչ է պատահել։

— Ոչինչ, նվաղեց արյուն տեսնելով,— ուզում է ուշադրությունը շեղել Կլավդիոսը։

Բայց թագուհին պարզ ու որոշ արտասանում է.

— Ո՛չ, ըմպելիքը, այն ըմպելիքը, օ՜, քաղցրիկ Համլետ, Այն ըմպելիքը թունավորված է...

Եվ մեռնում է թագուհին։

Ու երբ Լաերտը բացում է գաղտնիքը և ավարտում խոսքը՝

— ... այս բոլորը թագավորն արավ։

Ջանիբեկյան-Համլետը գոռաց.

— ... ուրեմն ո՞վ թույն, կատարիր գործդ։

Եվ բեմի ձախ անկյունից ուզեց վազել հակառակ կողմը, որտեղ շփոթահար թագավորն ուզում էր փախչել, հանկարծ, որտեղից-որտեղ, ինչ հրաշքով մի շիկածամ, բնձոտ կատու

հայտնվեց Համլետի ոտքերի արանքը։ Մի վայրկյան իրար խառնվեցին մազաթափ կատուն ու իշխանի ոտքերը։ Ի վերջո, մեծ ճկունությամբ Համլետը ցատկեց անսպասելիությունից խուճապահար կենդանու վրայից, հասավ փախուստը դանդաղեցրած Կլավդիոսին ու սուսերը խրեց նրա թիկունքը։

Թե ինչպես անհայտացավ կատուն, ոչ ոք չիմացավ։

Գլխավոր ռեժիսոր Արմեն Գուլակյանը, որ պարտադիր կերպով հետևում էր բոլոր ներկայացումներին դիրեկտորական օթյակից, վարագույրը հազիվ իջած՝ ներքին հեռախոսով իր մոտ կանչեց տեխնիկական ռեժիսորին։ Գույնը գցած Լևոն Ազարյանը վազեց վեր։ Սրան հետևեց Ջանիբեկյանը, որ դեռ կարգին չէր սթափվել կատարվածից։

— Լսի՛ր, դա ի՞նչ կատու էր, որտեղի՞ց բեմ մտավ,— խիստ հարցնում է Գուլակյանը։

— Ի՞նչ իմանամ, Արմեն Կարպիչ,— ուզում է արդարանալ իրեն կորցրած ռեժիսորը։— Երևի զանգակը բաց է եղել...

Բեմի ետնմուտքը բացվում էր Կարմիր բանակի փողոցի վրա, որն այն տարիներին այնքան էլ չէր փայլում իր մաքրությամբ։

— Իսկ դարպասն ինչո՞ւ չեք փակում, որ փողոցային կատուները բեմ են լցվում,— շարունակում է թատրոնի տնօրենը՝ չգիտես լո՞ւրջ, թե՞ լրջության տեսքով։— Այն էլ Համլետի պալատում...

— Ախր շատ քոսոտ էր, ազբանոցից նոր դուրս եկած,— ավելացնում է Ջանիբեկյանը։— Ա՛յ, եթե Վանա մի փաշա՝ կատու լիներ, ժողովուրդը կմտածեր, թե պալատական կատու էր...

Եվ համատեղ ու սրտաբուխ ծիծաղը հարթում է ակամա առաջացած անլուրջ իրադրությունը։

3. ԳՆՉՈՒՀՈՒ ԿԻՍԱԾԻՐՋԱԶԳԵՍՏԸ

Ջանիբեկյանը բեմադրել էր Օստրովսկու «Անտիտոր» և ամեն ներկայացման գալիս էր ու կուլիսներից հետևում գործողությանը։

Երիտասարդ դերասան-դերասանուհիներս հանդես էինք գալիս վերջին տեսարանում որպես գնչուներ։ Բեմի հետնամասում անցք կար, տակը՝ աստիճան։ Սրանով բարձրանում էինք, իբր ձորից ենք բարձրանում և անցքից մտնում էինք բեմ, երգով, ծիծաղով, ծնծղաները խաղացնելով հեռանում էինք տեսադաշտից։

Առաջինը ես էի մտնում բեմ, ուրեմն ես էի աստիճանի վերին հարկում։ Ինձնից հետո Սիրուշն էր (ստուդիայի համակուրսեցի), որը մի քիչ ավելի համարձակ էր պահում իրեն այն տեսակետից, որ չէր էլ մտածում, թե անկարգության դեպքում որևէ դիտողության կարժանանա։ Ահա այդ աղջիկը, իմ բեմ մտնելուց առաջ սկսեց քաշքշել լայն կիսաշրջազգեստս՝ շփոթության մատնելու ինձ։ Վերջապես, մուտքիս պահին, ոտքի մի հարվածով ետ մղեցի նրան ու բեմ մտա։ Զեռքերս լայն տարածած ցանկացա երգել, երբ զգացի, որ միանգամից թեթևացա։ Երբ ցած նայեցի, քարացա տեղում. շրջազգեստս պարաշյուտի նման փռվել էր (կոճակն էր արձակվել)՝ ի ցույց դնելով կարճ շապիկիս տակից երևացող սրունքներս։ Ի՞նչ պիտի անեի. իսկույն հավաքեցի զգեստս, կոճկեցի, հարդարեցի ինձ, մի լավ էլ ծիծաղեցի, խփեցի ծնծղայով երգող գնչուի ուսին ու հեռացա բեմից։ Հասարակությունը համենայն դեպս այն ռեակցիան չտվեց, որպես թե անակնկալ դեպք էր կատարվածը։

Երբ կուլիսներ մտա, մեկն արագ բռնեց թևս։ Ջանիբեկյանն էր, որ ծիծաղից աչքերն էր մաքրում՝ կլորիկ փորը տմբտմբացնելով։

— Ա՛ղջի, էդ ի՞նչ լավ դուրս եկար վիճակից։ Չէ՞, սրանից հետո դու ոչ թե Անյա ես, այլ՝ Անահիտ։ Իմացա՞ր...

Եվ նա շարունակում էր սրտաբուխ ծիծաղել։

Այդպես էր Ջանիբեկյանը. ամեն երևույթի մեջ տեսնում էր նաև ծիծաղելին, հումորը։ Դա և՛ իրեն էր փրկում, և՛ մեզ։

Այդ օրից իմ անունը մնաց Անահիտ։

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՉԱՆԱԽՉԻՈՒՄ

1968 թվականի ապրիլի 30-ին, վերջնելով մեր յոթամյա դասընթացը՝ մեկնեցինք Չանախչի։ Գնացինք Նելլիի հետ՝ Պարույրի ծառայողական մեքենայով։ Ուղում էի ազատվել մայիսմեկյան հոգսերից (մանավանդ մայիսի մեկին լրանում էր Նշանի ծննդյան վաթսունամյակը, իսկ մենք չէինք ուզում նշել)։

Դեն նետելով ձեռքի բահը՝ Պարույրն ընդունեց մեզ գրկաբաց, ուրախ։

Նելլին պայուսակից գաթա հանեց։

— Վանիլին չեմ գցել,— ասաց նա։— Մաման ասում է՝ դուխու հոտ է գալիս։

Տունն անսովոր գեղեցիկ էր թե իր ճարտարապետական մատնդացմամբ, թե շինանյութով, որ կանաչին խփող պաքարներից էր։ Եվ տունը, և պարտեզը սարալանջին էին գրտնվում։ Խնձորենիներն ու տանձենիները սկսել էին ծաղկաթափվել։ Ինչքան հիշում եմ՝ ծառերը դեռևս պտուղ չէին տալիս։ Դեպի փողոց տանող ոտնուղու աջ կողմում ծաղկի գաղոններ էին ձգվում։ Ցածում մի փոքրիկ տաղավար կար՝ հանգստանալու, նարդի խաղալու համար։ Տան ետնամասում ավազան էր կառուցված պարտեզին ու թզաչափ խաղողի ոլդուն ջուր տալու, կիզիչ շոգերին լողավազան դառնալու համար։ Մի քանի օր առաջ էին այդին բացել, հիմա էլ էտոցն էին առել ու սկսել էին էաել հնից եկող հողագործի, այդեպանի զգոնությամբ։

Բոլորս խառնվեցինք գործին։ Լեռնային գարնանային արևից Պարույրն այնքան էր թխացել, որ ազատ կարող էր խառնվել հարավ-աֆրիկյան շաքարեղեգն հավաքողներին։ Ոչ խոշոր ու միշտ խոնավ ափերի մեջ կոշտուկներ էին առաջացել։

Հանգստի ժամին հիշեցինք 1952 թվականի մայիսի 2-ը, երբ մի խումբ գրողներով մեկնեցինք Գառնի-Գեղարդ քեֆ անելու։ Փոքր ավտոբուսի մեջ մի կերպ խցկվեցինք ու ճանապարհ ընկանք։ Նաիրի Զարյանն էր, Զարգանդ Դարյանը,

Սիլվա Կապուտիկյանը, Էմինը, Վահագն Դավթյանը, Ստեփան Ալաջաջյանը, Պարույրը, Սրբիդ Ավագյանը, Անժելա Ստեփանյանը (մյուսներին չեմ հիշում)։ Տանում էինք մի ոչխար, խորովածի համար առանձին միս, պղնձե մի վիթխարի կաթսա էի վերցրել տատիցս, շամփուր, կանաչեղեն, ուտելիք։

Ուրախ, սրամիտ, աշխույժ զրույցն օգնեց Գեղարդ շուտ հասնելուն։ Նաիրին վանքում երգեց իր հզոր կրծքային ձայնով։ Վատ եփված խորովածը կերանք թեթև տրտնջալով՝ վրայից խմելով գետում սառեցրած գինին։

Կեսօրին եկանք Գառնի։ Դմակով ոչխարը մորթեցին ու խոշոր կտորները լցրին կաթսայի մեջ՝ խաշլամայի համար և դրին կրակին։ Մինչև խաշլաման կեփվեր՝ Նշանը Պարույրին առաջարկեց միասին կոխ բռնել։ Այդ ժամանակ Պարույրը քսանութ տարեկան էր, Նշանը՝ բառասունչորս։ Պարույրը ծիծաղեց մեծահոգաբար.

— Չես դիմանա, Նշան ջան։

Նա վստահ էր իր ջահելությանն ու վարպետությանը։

— Դու չես դիմանա, անուշ բալա ջան,— ասաց Նշանը ներողամիտ ծիծաղելով։

Նա էլ իր մարզված մարմնին և ուժին էր վստահ։

Բոլորը հավաքվեցին՝ մի մեծ շրջան կազմելով։ Ջահել մարդագետին էր ոտքերի տակ։ Դիտողների գոռում-գոչյունի տակ, հմուտ ըմբիշների նման, նախօրոք դեն նետելով բաճկոններն ու վերնաշապիկները, խոյերի նման հասան իրար։ Մինչ Նշանը հզոր թևերը տարածած, ծանր ու փորձառու կառաջանար, նիհարկեկ, ճկուն Պարույրը մի վայրկյանում ցատկեց Նշանի վրա, աջ ոտքը խրեց նրա ոտքերի արանքն ու միանգամից ցած տապալեց հանդուգն ախոյանին։ Ներկաներն ուրախ աղաղակեցին.

— Կեցցես, Պարույր, նոր սերունդը հաղթեց...

— Ես ձեր ֆանդերից բան չեմ հասկանում,— ասաց Նշանն ամոթահար։

— Ցավդ տանեմ, միամիտ ախպերս,— Նշանին համբուրելով՝ ծիծաղեց Պարույրը։— Հիմա քո անմեղ ուժով ոչինչ չես կարող անել։ Ֆանտ է պետք, ջանս, ֆանտ։

Երկուսով էլ երկար տարիներ հիշում էին այդ չնախա-

տեսված վայրկյանական ըմբշամարտն իր անսպասելի հաղթանակով։

Մայրամուտին մի բեռնատար ճարեցինք (թե ինչ եղավ ավտոբուսը, չհասկացա) ու մեջը լցվելով՝ բռնեցինք Երևան բերող խճուղին։ Զգիտեմ, այն ժամանակ ճանապարհն էր շատ անբարեկարգ, թե՞ մասշտաբներն էին ուրիշ։ Երկու ժամից ավել տևեց, մինչև կմտնեինք քաղաք։ Եվ այս ամբողջ երկու ժամում Նաիրին և Զարզանդը, մերթ փոխն ի փոխ, մերթ միմյանց ձայնակցելով երգեցին անընդմեջ մեր միջնադարյան և ժողովրդական երգերը։ Յուրաքանչյուր երգ կատարում էին ստուգաբանված, ճշգրիտ, մինչև վերջ՝ պահպանելով ինչպես մեղեդու, այնպես էլ տեքստի անաղարտությունը։

Ահա այս օրը նաև հիշեցինք Պարույրենց պարտեզում. դեպք, որ կատարվել էր ուղիղ 16 տարի առաջ։

— Հայաստանի բոլոր խնձորներից պիտի ուզենամ իմ պարտեզում,— ասաց Պարույրը՝ խաղողի էտած մատերը հեռացնելով թաղերից։

Մայրը՝ փոքրիկ, կապուտաչ սիրունիկ Ազին (Անահիտը) սեղան էր պատրաստում դստեր՝ Երազիկի հետ։ Սա թարմ լավաշ բերեց։ Հայրը՝ սև բեղերով, դարձյալ սիրունատես մի տղամարդ, նստել էր պատի տակ ու ծխում էր։ Պարույրը ոչ մեկի նման չէր, միայն աչքերը հորն էին։

Պարույրը վերցրեց տնական գինով լցված լի բաժակն ու դարձավ ինձ.

— Քույրիկս, մի բան եմ խնդրում. այսպես միամիտ ու անմիջական էլ մնաս, մնաս մինչև վերջ, քանի որ հենց դա էլ քո մարդկային ու գրողական հմայքն է...

1959 թվականին, երբ Պարույրը Մոսկվայում էր, և ամենայն ուշադրությամբ կարդացել էր իմ «Ոսկե վազերի մեջ» վեպը, շատ էր հավանել և լավ խոսքերի հետ մի քանի գիտողություններ էլ էր արել լուսանցքում։ Նրա շնորհիվ (նաև Վիգեն Խեչումյանի) ես սովորեցի գրել ոչ թե ակնոցներ, այլ՝ ակնոց, ոչ թե անձեռնոցիկ, այլ՝ անձեռոցիկ, ոչ թե ղգացնել, հասկացնել տալ, այլ՝ զգալ տալ, հասկանալ տալ, ոչ թե գավաղան (սա ամենայն հայրապետն է օգտագործում), այլ՝ ձեռնափայտ, երբ խոսքը սովորական ձեռնափայտին է վերաբերում։ Նա ցույց տվեց մի ֆրազի կողքի նշանը՝ «Հում մթությունը աշխատում էր պարուրել նրանց առանձին-առանձին»։ Սա արդեն բանաստեղծական մտածողություն է,— ասաց նա։— Բառաշինություն։

Իսկ «Գարունը ձյան տակ» վեպի ձեռագիրը տպագրության հանձնելուց առաջ ավել էի իրեն կարդալու։ Կարդացել էր մատիտով և լուսանցքներում մեկ-մեկ հիացումի բառեր էր գրել։ Դիտողություններն արեց բանավոր։

Այս ձեռագիրը պահում եմ որպես մասունք՝ մնացած մեծ բանաստեղծից։

Մայիսի 3-ին միասին, բարձր տրամադրությամբ վերադարձանք քաղաք։

ԹԹՈՒՆ

1968 թվականի մարտի 13-ն էր։

Այս անգամ տխուր առիթով Պարույր Սևակն ու Վիգեն Խեչումյանը մեզ մոտ էին եկել... Նոր էինք հողին հանձնել լրագրող հարևանիս։

— Անո ջան, մի հատ թթու բեր,— խնդրելով պահանջեց Պարույրը։— Լսի՛ր, մի բոպե սպասիր։ Ես քո դեմ վրդովվել եմ. բա դա անելո՞ւ բան է, որ էդվարդ Թոփչյանին խնդրել ես, որ այդ մարդուն ոչ միայն գրողների տանից վերցնեն, այլև թաղեն պանթեոնում։ Բա դու չափի զգացում չունե՞ս։ Եթե նրան պանթեոնում թաղեն, բա ինձ ու Վիգենի՞ն ուր թաղեն...

Այնպես անկեղծ ու տեղին էր Պարույրի կիսողությունը, որ ես ամաչելով հաղիվ ասացի.

— Հարազատներն էին խնդրել, որ հաղորդեմ Թոփչյանին։

— Բան չունեմ ասելու, հանգուցյալը լավ մարդ էր, անշառ, բայց ի վերջո մի շարքային լրագրող չէ՞։ Ախր ամեն ինչի մեջ չափ պիտի լինի, չա՞ս։ Ես քեզ անկեղծ ասեմ, դրանից հետո ես իսկի չեմ էլ ցանկանա, որ ինձ այդ պանթեոնում թաղեն. ինչ անարժան մարդ ասես, որ չկան այդտեղ։ Ուզո՞ւմ ես ճիշտն իմանալ, իմ տան առաջ մի լավ ծիրանի կա, հենց դրա տակ էլ թող թաղեն ինձ՝ հայրենական անարատ հո՞ղ, օդը մաքո՞ւր, իմ հարազատ ծննդավայրում։

— Պարույր ջան,— դարձյալ միանգամայն անկեղծ վրա բերեց Վիգենը,— որ խնդրեմ չես թողնի՞, որ ինձ էլ կողքիդ թաղեն։

— Խնդրե՛մ, ախպեր ջան, թե չէ՝ պանթեո՞ն...

Ինչեէ։

Արծնապատված մի խոշոր թասով բերեցի իմ այն թթուն, որը հայտնի էր բոլոր նրանց, ովքեր ոտք էին դրել մեր օջախը։ Անկախ այն բանից, որ մենք այն ժամանակ հենց Պարույրենց ու Վիգենենց շենքի հինգերորդ հարկում էինք ապրում, թթուն այնքան սարթ ու թարմ էր մնացել, ասես ձմեռնամուտին սառը մառանից էինք հանել։

Պարույրի խոշոր աչքերը փայլեցին։ Հինգ տեսակ կանաչու հետ մաղադանոսով փաթաթված կանաչ լոբուց մի հատ հանեց ու շրխկոցով կծեց խոշոր առամներով։

— Էս ինչ մեռո՞ն է, քուրո ջան, էս ի՞նչ աստվածային բան է թթու ասածդ, որ դարերով հայը պահում է։ Չէ՞, իմաստուն է մեր ժողովուրդը՝ հենց թեկուզ այսպիսի թթու ուննենալու համար։ Ախր դուք չգիտեք, թե ինչքան վիտամին կա սրա մեջ։ Մի նայե՛ք, ամբողջ մի այգի է կուտակվել այստեղ. է՛լ տանձ, է՛լ գեղձ, կազամբ, պոմիդոր, լոբի, բամիա, պղպեղ, տոկոլակ, գազար, սխտոր, էլ չեմ ասում՝ քանի՞ տեսակ կանաչի...

Եվ նա դալար, կանաչությունը պահպանած լոբիները նախ հեռվից էր վայելում, ապա ուտում էր՝ էությամբ զգալով խառը թթվի անուշությունը։

Մենք էլ նրա վայելելն էինք վայելում։

— Երեխե՛ք ջան, էս թթուն տեսնելով՝ մի բան հիշեցի,— ավելի պայծառացավ ու ոգևորվեց Պարույրը։— Մի քեռեկին ունեմ (նա հենց այդպես էլ ասաց՝ քեռեկին), մեր Զանախչիում է ապրում։ Էս խեղճ կինը հանկարծ հիվանդացավ ու ամբողջ երեսուն տարի դիետի վրա մնաց։ Գյուղացի կին, կթանի, մսի, թթու-կծվի սովոր և ապրում էր տվորոգով։ Երիկամնե՞րն էին հիվանդ, չգիտեմ, թե լյարդը։ Չէ՛, լե՛մ հիշում։ Փաստն այն է, որ օրվա մեծ մասն այդ կինը պիտի տվորոգ ուտեր։ Ի՞նչ աներ, ենթարկվում էր, կյանքը քաղցր է։ Ապրում էր՝ աչքն արգելված ուտելիքներին։ Բոլորս էլ

գիտեինք, որ նրա օրերը հաշված են ու մի տեսակ խղճահարությամբ ու հոգատարությամբ էինք շրջապատել նրան։

Եվ ահա մի օր էլ զանգահարեցին գյուղից, թե հասի, քեռեկինդ մեռնում է։ Նստեցի մեքենա ու իրիկնապահին տեղ հասա։ Ուղիղ քեռուս տուն։ Ինչքան հարազատ ունեինք, հավաքվել էին դռան առաջ, միջանցքում, ճաշասենյակում։ Տղամարդիկ պլուխները կախ՝ ծխում էին։ Ուրեմն մահացել էր արդեն, ու չհասա։ Ինչքան էլ սիրում էինք նրան, էլի հաշտվել էինք մահվան հետ և վերջին ամիսներին էլ դրան էինք սպասում։ Գյուղացին շատ սարթ, ոեալ ու առողջ մտածողություն ունի. ինչո՞ւ տանջվի խեղճ կինը, երեսուն տարի տվորոգով ապրել կլինի՞, ոչ ուրախության սեղանից է օգտվում, ոչ աշխարհի բարիքից գազափար ունի։ Նրա բաժին կյանքն էլ այդքան է ու մեռնելուց հետո դռնե աչքն ուտելիքին չի մնա...

Երբ ներս մտա, հավաքվածները սասսակացրին լացն ու ղլիով խորքի սենյակի կիսաբաց դուռը ցույց տվեցին։ Հենց ահա իրար վրա դարսված հսկայական բարձերին հենված, սեղանանալի դարձած քեռեկնոջս, աչքերը փակ, կանաչին տվող շորացած ու ճաքճքած շրթունքները կիսաբաց, հասկացա, որ արդեն հոգու հետ է։

— Քեռեկի՞ն, քեռեկին ջա՞ն,— ողբ բարձրացրին մահճակալը շուրջկոպած կանայք։— Մի աչքդ բա՛ց, տես, թե ո՞վ է եկել, քո ազիզ Պարո՞ւյրն է եկել։ Մի անգամ դռնե աչքդ բա՛ց արա, անասուա՛ծ...

Քեռեկինս հազիվ թե լսելիս լիներ նրանց աղաչանքը, կամ լսելուց հետո արդյո՞ք կկարողանար բացել աչքերը. թարթիչներն ասես սոսնձած լինեին կոնատ այտերին։

Մոտեցա, շոյեցի արդեն կրծքին դարսված սառն ու ցամաք ձեռքերը։

— Ա՛յ մարդիկ, մի էս բարձերը հանեք, թող հանգիստ պառկի,— արցունքներս մաքրելով պահանջեցի ես։

Մեկը ձեռքով ու աչքերով հասկացրեց, թե՝ մեռնելուց հետո, պետք չէ անհանգստացնել։ Ախր չէր էլ շնչում։ Երկար ինարտեցի, մինչև մատնիրիս տակ հեռու-հեռավոր, հազիվ տրբփացող զարկերն զգացի։

— Քեռեկի՜ն, ազի՛զ ջան, մեր քա՜ղցր հարս, մեր համով-հոտով քեռեկին, Պարույրիդ էլ չես ուզում տեսնե՞լ... Անո՜ւշ ջան, ամբողջ կյանքում աչքդ ուրիշների կերածին մնաց։ Ոչինչ չհասկացար, անբա՜խտ բալա։ Ա՛յ խեղճ ու կրակ, գոնե հիմի ասա, թե սիրտդ ինչ է ուզում, ասա՛, քարի տակից էլ լինի, կբերենք... Դու մեզ համար ոչ թե հարս, աղջի՜կ ես եղել... Մի խո՜սք ասա, անխի՜ղճ...

Բոլորս արցունքները խեղդելով նայում էինք մահամերձին։ Մի պահ ինձ այնպես թվաց, թե նրա ճաքճքած շրթունքներն ինչ-որ բան են ուզում ասել, սակայն չորացած լեզուն չէր կարողանում շարժել։

— Դե խոսի՛, ազի՛զ հարս, մի բա՜ն ուզի,— շարունակում էին կանայք՝ շատ լավ իմանալով, որ նա ոչինչ չէր կարող ուզել։— Ի՞նչ բերենք...

Ես նկատեցի, որ հիվանդի ցամաք լեզուն ատամներին մոտեցավ։ Ականջս մոտեցրի բերանին՝ նախօրոք հարցնելով.

— Ի՞նչ կուզես, քեռեկին, ասա՛...

— Թթու,— մի կերպ լսողությանս հասավ նրա ձայնը։

— Ա՛յ ժողովուրդ, քեռեկինս թթո՛ւ ուզեց,— գոռացի ես։— Աղնի՛վ խոսք, թթու է ուզում քեռեկինս... Հա՞, քեռեկին, թթու բերե՞նք...

Մեռնողի սոսնձված կոպերը թեթև ցնցվեցին՝ հավանորեն որպես հավանության նշան պիտի հասկացվեր։

— Շո՛ւտ արեք, թթո՛ւ բերեք,— միաբերան ձայնեցին այս ու այն կողմից։— Սաղ կյանքն աչքը թթվի ու կծվի վրա մնաց։ Բերե՛ք, շո՛ւտ բերեք, թող ուտի, դրանից հետո նոր...

Ու թեև չասացին մեռնել բառը, ներկաներն այդպես էլ հասկացան ու շմեղադրեցին ասողին։ Ի՞նչ մեղադրեն, մեկ է՝ մեռնելու է, գոնե ուտելուց հետո մեռնի...

Թթվով լիքը թասը բերին ու մոտեցրին քեռեկնոջս քթին։ Սա շնչից, էլի շնչից անմահական բուրմունքը առանց որևէ շարժում անելու Հեռացրին թասը։

— Էլի ի՞նչ կուզես, քեռեկին ջան,— սկսեցին խնդրել մոտը գտնվող կանայք՝ համարելով, որ հիվանդը թթուն արդեն վայելեց։— Ասա՛, ասա՛, էլի՞ ինչ կուզես...

Ինչքան կարողություն ուներ խոսելու համար հիվանդը,

հավաքեց ու ճաքճքած շրթունքներով մի կերպ արտաբերեց.

— Թթո՛ւ...

— Աղջի, ո՞ւր տարաք ամանը, քեռեկինը թթու է ուզում, մոտ բերեք թասը։

Եվ կանանցից մեկը մի թթու պղպեղ վերցրեց ու զգուշորեն քսեց մահամերձի շրթունքներին։ Սա լիզեց թթվահամ շրթունքները։ Մի անգամ էլ քսեցին։ Հիվանդը ոչնչով ցույց չէր տալիս իր կենդանությունը։

— Քեռեկին ջան, աչքդ թթվի վրա է մնացել։ Ազի՜զ ջան, բա հիմի՞ ինչ կուզես։ Մի անգամ գոնե աչքդ բաց արա, տես թե ո՞վ է եկել... Քո՜ւր ջան, երեք օր է՝ անշունչ պառկած ես, անբա՜խտ ջան, դե ասա՛, էլի՞ ինչ կուզես, որ բերենք, խոսի՜ր...

Այս անգամ հիվանդը շատ սրոշ, բոլորիս համար լսելի ասաց.

— Թթո՛ւ...

— Ա՛յ մարդիկ, դուք չեք տեսնո՞ւմ, որ քեռեկինս միայն թթու է ուզում,— այլևս չդիմացա ես։— Բերե՛ք թթուն։

Ու վերցնելով բիբարը, հեղբկցի և հյութն ուղղակի լցրեցի բերանը։ Նա ագահաբար կուլ տվեց ու շրթունքները կիսաբացելով՝ սպասեց։ Այս անգամ մի կիսահաս պոմիդոր վերցրի, ծակեցի և հյութը քամեցի պատրաստ բերանի մեջ։

— Էլի՛,— պահանջեց հիվանդը, երբ փորձեցի թասը հեռացնել։

Էլի տվեցի։ Հետո պոմիդորն սկսեց ուտել։ Կերավ այնքան, մինչև աչքերը մի կերպ բացեց, թեև հազիվ թե այդ պահին լրիվ բան կարողանար նշմարել։

— Բիբա՜ր,— լսվեց նրա ձայնը։

Հավաքվածները, որ լռվել-մնացել էին, լուռ էլ դրեցին գլխարկները ու իրար հրհրելով դուրս եկան՝ հավանորեն մտածելով, թե հիվանդը մի քանի ժամով հետաձգեց մահը։

Ես հեռացա նրանից, երբ արդեն ահագին թասի թթվի կեսը կերել էր։

— Շնորհակա՜լ եմ, Պարույր բալա,— դժվարությամբ, բայց պարզ ասաց հիվանդը։ Նա արդեն ջոկում էր ներկաներին։— Սրանից հետո թե մեռնեմ էլ, դարդ չեմ անի...

Քանի տարի է անցել այդ օրից։ Հիմա էլ, երբ գյուղ եմ

գնում ու քեռեկինս հեռվից նկատում է ինձ, գոռում է բարձրաձայն.

— Էհե՛յ, Պարո՛ւյրս է եկել, Պարո՛ւյրս...

Եվ նրա աղմկոտ ու բուռն ծիծաղն արձագանքում են Ջանախչին շրջապատող բլուրները։ Չէ՞, սա միայն թթու չի, երեխե՛ք, սա անմահակա՞ն սեռնդ է, որի զորությունն ինձ է հայտնի։

Այս հիշողությունս «Գրական թերթի» 1988 թվականի հունվարի 22-ին տպագրելու հաջորդ օրն իսկ խմբագրություն է մտնում երիտասարդ մի կին՝ ձեռքին մի փակ կաթսա։ Բարևում է ու կաթսան դնում սեղանին.

— Ձեզ համար տատս է ուղարկել։

Աշխատակիցները զարմացած իրար են նայում։

— Պարույր Սևակի քեռակինն իմ տատն է,— բացատրում է կինը։— 1958 թ. Պարույրի կերբրած թթվից հետո մինչև հիմա ապրում է տատս։ Հիմի 96 տարեկան է, ամեն ինչն էլ տեղը։ Ինչ ուզում՝ ուտում է։

Եվ նա բացում է կաթսան։

Ապշած աշխատակիցները խոսք չեն գտնում ասելու։

Նրանց միայն սթափեցնում է սենյակով մեկ լցվող թթվի անուշ բուրմունքը։

ՄՆԱՑԵՔ ԲԱՐՈՎ

1971 թվականի ամառնամուտի մի առավոտ էր։ Բակում հանդիպեցի Պարույրին՝ մի փոքրիկ համպրուկ ձեռքին։

— Վա՛յ, Ահո՛ջան, մնաս բարով, Մոսկվա եմ գնում,— ասաց ու համբուրեց։

— Ե՞րբ ես վերադառնալու,— հարցրեցի, մտածելով, թե գուցե երկար ժամանակով էր մեկնում։

— Երեք օրից վերադառնում եմ։

— Ա՛յ տղա, մենք նույն շենքում ենք ապրում և պատահում է՝ շաբաթներով չենք տեսնում իրար։ Երեք օրվա համար համբուրե՞ս որն է։

— Ի՞նչ անեմ, ե՞տ տամ համբույրս։ Սովորություն է, չա՞նս։ Հեռու եմ գնում, ո՞վ գիտե...

Եվ ծիծաղելով էլ գնաց։

Երբ մի օր էլ առավոտյան Պարույրի և Նելլիի հետ պատահած ահավոր վթարը լսեցինք, թվաց, թե երկիրը դուրս թռավ իր ուղեծրից։ Կարո՞ղ է հեռու-հեռավոր մի կանխազգացումով Պարույրն այս բաժանումն էր պատկերացրել, որ համբուրեց երեք օրվա բացակայության պատրվակով...

Մինչև այդ պատահարը նշանք և ես համոզված էինք, որ Պարույրի առաջին քսան մտերիմների մեջ անպայման մենք էլ ենք գտնվում։ Սակայն երբ գնացինք օպերայի շենքը հրաժեշտ տալու մեր հարազատներին, քար կտրեցինք. հրապարակում ոչ միայն կանգնելու տեղ չկար, այլև համարյա բոլորն էլ (հատկապես կանայք և աղջիկներ) ծաղիկներ ունեին և լաց էին լինում սրտակեղեք։

Պատվո պահակ կանգնած ժամանակ նայում էի մեծ բանաստեղծի ճակատի վիրակապին և լուռ խոսում էի հետը.

— Պարույր, ցա՞նս, ախր գու ե՞րբ հասցրիր այսքան բարեկամ ու երկրպագու ձեռք բերել։ Մի՞թե այդքան հեշտ է սիրելի դառնալ հարյուր հազարավոր մարդկանց։ Այս մարդիկ, որ դառնագի արցունքով են հրաժեշտ տալիս քեզ, գու նրանց հմայել ես նախ քո մարդկային նկարագրով։ Հետո միայն պետք է քեզ ընկալեն որպես խորունկ, ինքնատիպ, խիզախ, հայրենասեր ու փիլիսոփա բանաստեղծի։ Չեմ մոռանում այն օրը, երբ ասացիր. Մենք հահիճի մեջ ենք ու չենք հասկանում։ Վազուց փոխվել են աշխարհի արվեստի, գրականության չափանիշները, իսկ մենք նեյնիմներով ենք զբաղված։ Հետո ասացիր, որ մտածում ես մեծ եղեռնի մասին վեպ գրել։ Եվ կգրեիր, այն էլ ինչպե՞ս կգրեիր, եթե չափածս ջրվեժն իր հորձանուտի մեջ չառներ քեզ։ Ասա՛, հարազատս, ինչպե՞ս ես հանդիպել այսքան մարդկանց։ Եթե որևէ ձևով չես կարողացել օգնել, ապա մի մխիթարիչ խոսքով անպայման սփոփել ես շատերին, մի բարի խորհրդով ամոքել ես շատ խեղված հոգիների... Ասա՛, եղբայրս, այդ ինչպե՞ս մենք դարձանք ամենաշարքային երկրպագուներիդ։ Նայում եմ և ապշում. այս մարդիկ, որ արցունքախառն ծաղիկներ են դնում քո ոտքերի տակ, մի՞թե մեզանից ավելի են սիրել քեզ...

Հետո, շատ շատով պիտի մեծանար քո համախոհների

բանակը, երբ նրանց հոգին թափանցելու է Սևակ-բանաստեղծը նաև, երբ անթիվ անհամար շուրթերից լսելու են նմանը չունեցող քո տողերը, երբ մարդիկ որպես երդում են արտասանելու քո տողերը։

Ա՛յ, ա՛յդ ժամանակ միայն իրավունք կունենայիր ասելու մի ամբողջ նվաճված ժողովրդի.

— Մնացեք բարով։ Ես գնացի։

1988

ՆՐԿՈՒ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Ն. Մուրադյան)

Ա.

Զմեռ է։ Սառնամանիք։ Ողջ երկիրն է սառել։ Պատուհանի ապակիներն այնպես են եղյամել, որ դրսից ոչինչ չի երևում։ Կիսախավար սրահում հինգ երիտասարդ են կանգնել։ Համարյա հասակակիցներ են՝ 28—32 տարեկան։ Կանգնել են շրջանաձև, գլխիկոր։ Մեջտեղը՝ հենց հատակին ժամանակի մեծ բանաստեղծի դիմանկարն է՝ արված համբնդհանուր ճանաչում գտած նկարչի ձեռքով։ Հինգն էլ լարված են, զգուշավոր։ Նույնիսկ վախի զգացում կա նրանց հայացքներում։ Երիտասարդներից մեկը, որ քիչ առաջ պատից իջեցրել է դիմանկարը, թուխ է, դանգրահեր, ատլետիկ կազմվածքով։ Լայն ու խելացի ճակատին միավորվել են հոնքերը։ Ազնվական ձեռքերն ագուցվում ու արձակվում են համաչափորեն ինչպես սրտի զարկ։ Մյուսները, այնուամենայնիվ, նրա խոսքին են ապասում։

— Ես կարծում եմ՝ բարբարոսություն է այսպիսի գործ ոչնչացնելը,— արտաբերում է նա ու մի պահ այնքան պատանեկան է դառնում նրա արտահայտությունը, այնքա՛ն անզոր, որ մյուսներին թվում է, թե նա կարող է մինչև իսկ լաց լինել։

Գուցե իսկապես արցունքները խեղդելու համար է հեռանում ընկերներից։

— Բայց դուք ի՞նչ եք առաջարկում որպես արխիվի վարիչ, սիրելի Նշան,— ապշած հարցնում է մեկը՝ ուղղելով ակնոցը։— Հայտնի է, որ պետք է ոչնչացնել ժողովրդի թշնամիների ոչ միայն տպագրվածներն ու ձեռագրերը, այլև՝ նկարները։

Նշանը վերևից է նայում ցածրահասակ ընկերոջը ու չի ասում, թե ամեն մի երևիա է հասկանում դա։

Նա ասում է.

— Դուք հասկանո՞ւմ եք, որ սա չի կարելի վերացնել։

Մյուսները կարկամել են անսովոր տարակուսից. մի՞թե հնարավոր է վեճ բացել այնպիսի մի հարցի շուրջ, որը մեկ պատասխան ունի. կատարե՛լ։ Ապա կողքից նայում են դռանը. կարո՞ղ է որևէ մեկը դարանակալած՝ իրենց արտասոց խոսակցությանն է հետևում։

— Իսկ եթե վերադարձնենք հեղինակի՞ն,— վերջապես խոսում է անուշ դեմք-դիմագծով, ծիտիկի հավաք բերանով, թավշե հայացքով մյուսը։ Առաջարկությունը նա այնքան ցածրաձայն է անում, որ կողքին կանգնածները հազիվ են լսում։— Վերադարձնենք,՝ հեղինակը թող վարվի այնպես, ինչպես ինքը կցանկանա։

— Բայց սա մեր թանգարանի սեփականությունն է, սիրելի Արամ,— մոտենալով՝ վրդովվում է արխիվի վարիչը։ Լարվածությունն ավելի է ուժեղանում. բավական է թեկուզ այդ վեճն ի հայտ գա, որպեսզի հինգն էլ կասկածի տակ առնվեն։— Ես ոչինչ չեմ հասկանում, ազաներ։ Ենթադրենք իսպանական հռչակավոր նկարիչ Վելասկեսը նկարում է իր ժամանակի ականավոր մի գործչի։ Հետագայում պարզվում է, որ այդ մարդը մեծ ավազակ է եղել, ու կոխում են։ Մի՞թե որևէ մեկի մտքով կանցներ այրել Վելասկեսի աշխատանքը։

— Եվ ինչո՞ւ միայն Վելասկեսի,— հարցնում է թավշե հայացքովը։— Աշխարհի խոշորագույն պատկերասրահները լիքն են այդպիսի դիմանկարներով։

Արվեստի ու գրականության մարդիկ են և ճիշտ են գրանում դիտողությունը։ Բա՞յց...

— Իսկ դո՞ւք ինչ եք առաջարկում, դո՛ւք։

Հարցը նորից ուղղված է արխիվի վարիչին։ Սա նայում է հատակին դրված դիմանկարին. բանաստեղծի աչքերը վրձռականություն են արտահայտում, հզոր կամք, որի պակա-

սությունը հիմա զգում են հավաքվածները։ Չէ՞ որ նկարկանչներից դեռևս ոչ ոք չի կարող նրան վերագրել մեղադրանքը։ Սակայն այդպիսին կարող են համարել, ահա թե ինչն է թուլացնում նրանց վճռականությունը։

Վերևից ոտնաձայներ են լսվում. այդ մեկ ուրիշ հանձնաժողով է քայլում պատկերասրահով նույն միտքով։ Հիմա նրանք նույնպես դիտում, ջոկում և իջեցնում են դիմանկարներն այն ականավոր գործիչների, որոնք նույնպես կասկածի տակ են առնվել։ Շատ նկարներ պիտի իջեցնեն, և բոլորն էլ մեծահամբավ նկարչի ձեռքի գործ։

Ցածի սրահում մոլոր կանգնած հինգը մտածում են այժմ նկարչի մասին։

— Ասացե՛ք, սիրելի Նշան, ի՞նչ եք առաջարկում գո՛ւք,— իր հարցն է պնդում ակնոցավորը։

Անսպասելի պայծառանում է վարիչի թուխ դեմքը.

— Ես առաջարկում եմ այս նկարն իջեցնել նկուղ, որտեղ անպետք իրեր ու շարքից հանված հարյուրավոր նկարներ են փտում։ Մեզնից ոչ ոք չգիտե, թե ինչ կա այնտեղ։ Այո՛, այո՛, դա էլ ոչնչացում է։ Ես կտանեմ այնտեղ, իսկ մենք կստորագրենք ահա այս ակտը։

Ներկաներն իրար են նայում ապշած. ա՛յ քեզ գյուտ։

Ստորագրում են։ Վարիչը լրագրով փաթաթում է դիմանկարը, թելով խաչկապ տալիս ու արագ իջնում նկուղ։

Նույն գիշեր թանգարանի բակում անսովոր խարույկ է բարձրանում. հսկող հայացքների տակ այրվում, մոխրանում են հոչակավոր նկարչի տասներեք գլուխգործոցները։

Բ

Անցնում են տարիներ։ Թվում է, թե նախորդ տարիների ձմեռն է շարունակվում։ Դարձյալ եղյամով են ծածկվել ապակիները։ Միանգամայն խավար է այն նկուղը, որտեղ զգուշորեն ինչ-որ բան են փնտրում երկու հոգի։ Առջևից գնում է արխիվի նախկին վարիչը՝ Նշան Մուրադյանը, ետևից՝ ջահել մի կին, հարթ մազերն ագուցած գլխի ետևը։

— Ես կարծում եմ, ավելի խորքը պիտի տարած լինեմ,— ասում է Նշանը՝ մոտենալով օդանցք հիշեցնող պատուհանին։— Ահա այստե՛ղ է։— Եվ նա հանում է պատի վերջին նկարի ետևում խցկած, լրագրով փաթաթած նկարը։— Սա՛ է, Պարգևուհի։— Նա քանդում է խաչկապը, հեռացնում շրջացած ու փոշոտ լրագիրը։ Կինը չի հավատում աչքերին։— Այո՛, Սարյանի աշխատանքն է։

— Նրա՞նն է,— օդ կուլ տալով արտաբերում է Պարգևուհին։

— Դե, լսի՛ր, հարազատս։ Քանի որ հիմա դու ես արխիվի վարիչը, քեզ եմ հանձնում այս աշխատանքը առանց որևէ դրության։ Պահիր աչքիդ լույսի պես ու այս մասին ոչ ոքի ոչ մի խոսք։

Նա նորից լրագրի մեջ է առնում դիմանկարն ու տեղը դնում։

— Վստա՛հ եղիր, Նշան ջան։

— Միայն թե չփչանա։

Երկուսով թողնում են նկուղը այլևս ոչ մի բառ չփոխանակելով։

Գ

Շաբաթներ շարունակ քանը փախչում է Պարգևուհու աչքերից. իսկապես, ի՞նչ անել, որ նկարը չփչանա և չերևա մարդկանց։

Ժամանակ է անցնում։ Պարգևուհին ուզում է իր ուրախությանը մասնակից դարձնել շատ վստահելի մեկի բոլոր վստահելիների մեջ։

Եվ մի օր արխիվ է մտնում իր համալսարանական ընկերներից մեկը՝ նկարչի ավագ որդին, որ դարձյալ թանգարանի աշխատակիցներից էր։

— Սարի՛կ, գուցե փակի՛ր,— պահանջում է Պարգևուհին։— Բանալի՛վ։

— Ինչո՞ւ,— զարմանում է ընկերը։

— Պետք է։ Լսի՛ր, եթե մի գաղտնիք հայտնեմ, խոստանո՞ւմ ես ոչ ոքի չասել, նույնիսկ հայրիկիդ։

— Խոստանում եմ։

— Խոստանալը քիչ է։ Երդվի՛ր։

— Երդվում եմ,— ոչինչ չկռահելով՝ ակամա երդվում է ընկերը։

— Իսկ երազում խոսո՞ւմ ես։

— Ոչ։

— Ավելի լավ։ Դու գիտե՞ս, որ հայրիկիդ «Զարենցը» կա,— ուղղակի ականջի մեջ շշնջում է արխիվի վարիչը։

Երիտասարդը շանթահարված՝ նա է ընկրկում.

— Անհնարի՛ն է։

— Նայի՛ր, այստեղ է,— զիմացի պատից կախված յուղաներկ բնանկարն է ցույց տալիս Պարգևուհին։

Ոչինչ չհասկացող հայացքը երիտասարդը նրան է ուղղում։

— Սպասի՛ր։

Կինը ելնում է սեղանին, իջեցնում է բնանկարը ու նաևից հանելով բանաստեղծի դիմանկարը՝ հենում է գրքերին։

— Նա՛ է,— մտքում ճչում է նկարչի որդին՝ ձեռքը բերանին տանելով։

Նա չի կարողանում հարցնել, թե այդ ինչպե՞ս է պահպանվել։

— Նշա՞նն է պահել,— շուտասելուկի պես վրա է տալիս Պարգևուհին և պատմում եղելությունը։

— Նա՛ է...

— Եթե գոնե քեզ չասեի, կպայթեի... Ո՞վ գիտե...

— Ա՛յ թե հնարամիտն ես եղել։ Դիր տեղը։ Այլևս ոչ մեկի որևէ խոսք։

— Երդվո՛ւմ եմ։

Դ

1956 թվականի այն առավոտն էր, երբ մարդիկ արթնացան անսովոր տրամադրությամբ։ Առանձնապես մտավորականները բարձրաձայն էին ողջունում ու շնորհավորում միմյանց։

— Վերջապե՛ս...

— Վերականգնվեցի՛ն մեր երևելիները...

— Բաֆֆի՛ն։

— Պատկանյա՛նը։

— Զարե՛նցը։

Երևանցիները դուրս էին թափվել Արովյան փողոց, միակ բացօթյա հավաքատեղին։ Խումբ-խումբ քայլողները կամ կանգնածները ձեռքերը վեր թափահարելով ողջունում էին իրար։ Ժպիտը թևատարած՝ փողոցից-փողոց էր թռչում։ Ոմանք նկատում էին Արովյանով իջնող տարեց այն մարդուն, որի ճերմակ մազերը երկու կողմերից իջել էին ճակատին։ Նա մտազբաղ էր ու սովորականից ավելի արագ էր քայլում։ Հավանորեն այդ պատճառով էլ պատասխանում էր միայն նրանց բարևին, ովքեր համարձակություն առած՝ հոտենում էին կամ բռնում ձեռքը, կամ՝ ողջագուրվում։

— Շնորհավորում ենք, վարպե՛տ...

Սերունին գլխով էր անում՝ երևի կարգին չհիշելով էլ մոտեցողներին ու շարունակում ճանապարհը։ Հասնելով գրական թանգարանին՝ շունչ առավ, նայեց դռանը, ապա դժվարությամբ հրելով այն՝ ներս մտավ։ Սրահը լի էր թանգարանի հին ու նոր աշխատակիցներով։ Նրանք ոգևորված կարծիքներ էին փոխանակում նախորդ օրը ռադիոյով կամ կենդանի լսած խոսքի շուրջը։

Տեսնելով նկարչին՝ անմիջապես շրջապատեցին նրան։ Մեկն խկույն աթոռ բերեց։

— Ինչպե՞ս է ձեր առողջությունը, Մարտիրոս Սերգեյիչ։ Լսեցի՞ք երեկվա ընտրողների առջև արտասանած ճառը։

— Լսեցի՛, լսեցի՛,— ոչ ուրախ վրա բերեց նկարիչը։

— Վերջապես կվերահրատարակեն նրանց։

— Շո՛ւնչ առանք...

— Այսօրվա սերունդը համարյա ոչինչ չգիտե նրանց մասին։

Նկարիչը տխուր էր, շա՛տ տխուր ու հոգիով արտարերեց։

— Եթե այսպես էր լինելու, ինչո՞ւ այրեցին իմ աշխատանքները։ Այդ մարդկանց էլ որտե՞ղ գտնեմ... Կամ եթե գտնեմ, կկարողանա՞մ նույն թափով վերարտադրել...

Հավաքվածները հենց այդ խոսքին էին սպասում, որի պատասխանը, ավա՜ղ, ոչ ոք չէր կարող տալ։

— Վարպե՛տ,— հանկարծ բացականչեց Պարգևուհին։ Նրան ոչ ոք այդքան համարձակ չէր տեսել։— Վարպետ, դուք գիտե՞ք, որ ձեր «Զարենցը» կա։

Նկարչին թվաց, թե սխալ լսեց։ Հետո մի իրոնիկ հայացք նետեց համեստ արտաքինով, գերհամեստ բնավորությամբ կնոջ վրա. խե՞նթ է այս կինը, թե՞ իրենց է խենթի տեղ դրել։

— Ազնի՛վ խոսք, վարպետ, կա՛ այդ նկարը։ Տարիներ առաջ եմ Սարիկին ցույց տվել...

— Երազի մեջ ես, աղջի՛կս...

Ոմանք զգուշավոր հայացքներ փոխանակեցին։

— Սպասե՛ք, հիմա կբերեմ։

Մինչ նա վազքով արխիվ կհասներ, ողջ թանգարանն իրար անցավ։ Սրահ թափվեցին նրանք, ովքեր լսացել էին վարպետի գալը ու վերջին հայտնությունը։

— Առում են Սարյանի «Զարթնցը» կա...

— Ո՞վ է առում։ Գժվե՛լ են, ինչ է...

— Պարգևուհի՛ն... Գնաց բերելու...

— Չի՛ կարող պատահել...

Հավաքվածները հանապարհ բացեցին նրա համար, որ մի բնանկար ձեռքին՝ առաջանում էր։

— Չի՛ կարող պատահել... Չի՛ կարող պատահել,— մեքենաբար կրկնում էր վարպետը՝ մտքում աղոթելով, որ պատահեր...

Նա ոտքի ելավ։ Պարգևուհին ձեռքինը դրեց սեղանին, սովոր շարժումով հեռացրեց մեխերը ու հանելով բնանկարի եռանում թարս կպցրած դիմանկարը՝ դրեց սեղանին։

— Վա՜հ...,— համառձակ մի թառանչ դուրս թռավ հավաքվածների կրծքից։

— Նա՛ է,— հազիվ արտարերեց վարպետը համբնդհանուր այդ թառանչի տակ։— Ի՞մն է...

Ու մատները զգուշորեն քսեց նկարին։

Մեկն արագ աթոռը մոտեցրեց նրան։ Վարպետն ուղղակի ընկավ աթոռին։

— Նա՛ է,— հաստատեց կողքինը՝ նույնպես ձեռքը քսելով կտավին, ասես հավաստիանալու համար, որ տեսածն իրողություն է։

— Ա՛յ քեզ հրա՜շք...

— Այս ո՞ր պլիից ձեռք քաշածն է արել,— վերջապես բեկ-բեկ ասաց վարպետը։— Աստվա՜ծ իմ, այս ո՞վ է տեսել...

— Սա մեր թանգարանի սեփականությունն է,— հիշեց մեկը։

— Այո՛։ Եվ այս պատին էլ կախված էր,— վրա բերեց հարևանը։

— Արխիվի վարիչը պիտի արած լինի, բայց այն ժամանակ...

— Բայց այն ժամանակ ո՞վ էր արխիվի վարիչը։

Լռություն։

— Նշա՛նը, վարպետ,— վստահ ասաց Պարգևուհին։— Նշան Մուրադյանը։

— Ճիշտ է,— միաձայն ասացին մի քանիսը։

— Նա հիմա մեզ մոտ չի աշխատում։

Պարգևուհին պատմեց կատարվածը։

Ոչ ոք չէր կարողանում հայացքը պոկել այն դիմանկարից, որ շուրջ քսան տարի պաշտպանվել էր մի շատ սովորական բնանկարի ետևում՝ սպասելով հարության։

— Նշանը հաճախ է մեզ մոտ գալիս,— իր մատները բարձրաձայն շարունակեց վարպետը։— Զրուցել ենք ամեն տեսակ հարցերի շուրջ... Եվ ոչ մի անգամ այդ մարդը չի ակնարկել այս մասին։— Նա ոտքի ելավ ու պնդորեն հայացքով շուրջը նայեց։— Ես անպայման պետք է տեսնեմ նրան։ Քիչնից նույնպես շնորհակալ եմ, ալչի՛կս, կեցցե՛ս...

Վարպետը հեռացավ այն ժամանակ միայն, երբ բանասեղծի դիմանկարը մարմվելուց հետո կախված էր ճիշտ իր նախկին տեղում։

Ե

Անցել էր երկու տարի։ Նշանը ուշ եկավ տուն։ Նկ. [illegible] բարձր տրամադրությամբ։

— Վերջապես այցելեցի վարպետին,— ասաց նա։— Գնացի ծննդյան օրը շնորհավորելու։ Ամեն անգամ Սարիկն ասում էր, որ հայրն ուզում է տեսնել ինձ, անհարմար էի զգում, հանկարծ ու հիշեցնի «Զարթնցի» պատմությունը...

— Զարմանալի մարդ ես...

— Եվ սկսեց նկարել։ Պահանջում էր, որ խոսեի։ Ես էլ նոր Նախիջևանը հիշեցի, Նալբանդյանին, Մարիետա Շահին-

յանին, նրանց, ովքեր իր հայրենակիցներն են։ Սկզբում ոչ իմ խոսքն էր ստացվում, ոչ էլ նրա աշխատանքը։ Բայց հետո երկուսս էլ ընկանք հունի մեջ։ Մի գորգ կախեց բազմոցի հետևը, փողկապս փոխեց... Ասաց, որ վաղը կավարտի։ Ի՞նչ ոգևորված էր նկարում։ Ասաց, որ վաղը կավարտի։ Եվ պատկերացրու, Չարենցի մասին ո՛չ մի խոսք։ Ի՞նչ նրբանկատն է...

Նշանն ուրախ էր երեխայի պես։ Նա ուղիղ հիսուն տարեկան էր։

Երկու շաբաթից նկարչական սալոնում բացվեց Սարյանի նոր աշխատանքների ցուցահանդեսը։ Այդտեղ էր և Նշանի դիմանկարը. հազվագյուտ հաջողված մի աշխատանք՝ արված մեկ շնչով, բուռն զգացումով։ Ներկաները, որ արվեստագետներ էին ու լավ էին հասկանում Սարյանին, միաբերան հաստատեցին, որ Նշանի դիմանկարը նրա վերջին շրջանի լավագույն գործերից է։

— Միրելի Նշան,— գործն ավարտելով ասել էր վարպետը,— այստեղ ես դրել եմ միտք, մեծահոգություն և բարություն։

Դուրս գալով ցուցահանդեսից՝ երկուսով որոշեցինք հետագայում մեր ձեռքն ընկած ավելի գումարով տուն բերել այդ նկարը։

Ավելի՞ գումար։

Անցնում էին տարիները, ու մեր որոշումը մնում էր անհասանելի մի երազանք։

2

Եղեռնի 50-ամյակի օրերն էին։

Հեռախոսի զանգ։ Վիլեն Մաթևոսյանն էր, Սարյանի երկրպագուն, սիրելին և քարտուղարը միաժամանակ։

— Նշանին եմ ուզում։

— Մեկնել է Ղափան՝ դասախոսությունների։

— Վա՜յ, ափսո՜ս...

— Ի՞նչ է պատահել։

— Ոչի՛նչ, ոչի՛նչ։— Բայց նա չէր ուզում լսափողը տեղը դնել։— Ե՞րբ կգա։

— Երևի մի հինգ օրից։

— Քեզ զանգահարո՞ւմ է։

— Ամեն օր։

— Դա՜... Իսկ դու գաղտնիք պահել գիտե՞ս։

Զգում եմ, որ հիմա նրա համար ամենագժվարը գաղտնիք պահելն էր։

— Կաշխատեմ։

— Շա՛տ լավ։ Նշանին ոչ մի խոսք այն մասին, ինչ քեզ ասելու եմ։ Երեկ Սարյանի մոտ էի։ Նկարներն էինք կարգավորում, սրա-նրա մասին էի հարցնում։ Հետո ասացի. վարպետ, այսքան մարդ եք նկարել ու հարյուր այսքան ձեզ են այցելել։ Եկել, զրուցել են, մասամբ բացահայտել իրենց։ Մինչև հիմա քանի՞ լավ մարդու եք հանդիպել, կարո՞ղ եք ասել։ Վարպետը ժպտաց ու բռնելով թևս՝ տարավ ու կանգնեցրեց Նշանի դիմանկարի առջև։— Վիլեն, լա՛վ նայիր այս մարդուն,— ասաց նա։— Եթե աշխարհում երկու հերոսական հոգիների եմ հանդիպել, մեկը Նշանն է։— Եվ նա պատմեց Չարենցի դիմանկարը թաքցնելու պատմությունը։ Հուզվեց սաստիկ։ Ես ցնցված էի նաև նրանով, որ մինչև հիմա Նշանն այդ մասին ոչ ոքի չէր պատմել։ Երբանի՞կ կին ես, բույրս երբ հանգստացել էինք, ես զարմացած հարցրեցի, թե ինչպե՞ս է հապա, որ այդ նկարը չի նվիրել Նշանին։ Նա պատասխանեց նրանով, թե Նշանի արարքն այնքա՞ն մեծ է, որ անհարմար է այդ ձևով շնորհակալություն հայտնել։ Ես պնդեցի, որ գոնե այդքանով պետք է հատուցել։ Նա խնդրեց, որ այդ դժվար պարտականությունն ինձ վրա վերցնեմ։ Հիմա ի՞նչ ենք անելու։ Այնքան անհամբեր եմ։

— Պետք է սպասենք, մինչև գա,— անսպասելի երջանկությունը մի կերպ խեղդելով՝ ասացի ես։

Հինգ օրից եկավ Նշանը։ Հինգ անքուն գիշեր անցկացրի։ Լույսը չբացված՝ սկսեցի խնդրել, որ սափրվի, քանի որ գնալու ենք Սարյանենց տուն։

— Իսկ ինչո՞ւ է կանչել։

— Չգիտեմ։ Վիլենի միջոցով է հայտնել։

— Գուցե ուզում է, որ Սարիկի մասին մի բան գրեմ,—

վարպետի վաղամեռիկ որդուն հիշեց Նշանը։— Իսկ եթե հիտաձգե՞նք։

— Հենց այսո՛ր է սպասում։

Ճիշտ ժամին հանդիպեցինք Վիլենին։ Հասանք Սարյանենց դարպասին։

— Ինքը գիտի՞ ինչի համար ենք եկել,— կամացուկ հարցրեց Վիլենը՝ սեղմելով զանգի կոճակը։ Ես բացասաբար շարժեցի գլուխս։— Հիմա ասե՞մ։

— Ո՛չ մի դեպքում,— կտրուկ մերժեցի ես։— Հինգ օր ու գիշեր դիմացել եմ, որ դու ոտքի վրա ասե՞ս։ Թող այսպես միամիտ էլ ներս մտնի։ Ամեն ինչ թող ստացվի բնականորեն։

Դուռը բացեց նկարչի կինը՝ Լուսյա Լազարևնան։ Տեսնելով Նշանին՝ ձեռքերը լայն տարածեց.

— Այս ո՞ւմ ենք տեսնում... Նշա՞ն ջան, սիրելի՞ս, ինչ լա՞վ ես արել, որ եկել ես, սպասում էինք։— Ապա դարձավ խորքի դռանը՝ ձայնը բարձրացնելով։— Մարտիրո՞ս, մի տես, թե ո՞վ է եկել, քո «Զարենցի» փրկի՞չն է եկել...

Ողջագուրվեց Նշանին, որ քրտնել էր ընդունելությունից։

Հայտնվեց Սարյանը ու բեկ-բեկ ձայնով բացականչեց.

— Նշան ջան... Թանկագի՞ն մարդ, սիրելի՞ս... Որքա՞ն ուրախ եմ այցելությանդ համար։ Վիլե՞ն, շնորհակալ եմ քեզանից...

Նստեցինք հյուրասենյակում դրված երկար սեղանի շուրջ։

Ըստ իրենց սովորության, խոշոր սեղանին ընտիր թրխվածք դրեցին, միրգ, սուրճ, նաև՝ խմիչք։ Երկուսուկես ժամ վարպետը խոսում էր եղեռնից, հայ ժողովրդի անցյալից ու տոկունությունից։ Երկուսուկես ժամ։ Եվ միայն նա էր խոսում։ Ուրիշ հյուրեր էլ եկան։ Հետո վարպետը ելավ տեղից ու գնաց դիմացի սենյակը։ Վիլենը հետևեց նրան։

— Մենք էլ վեր կենանք, անհարմար է,— կամացուկ ասաց Նշանը։— Հոգնեցրինք։

— Թող գան, հրաժեշտ տանք,— ասացի՝ լավ իմանալով, թե ուր է գնացել վարպետը։

Քիչ հետո Վիլենի հետ վերադարձավ նա՝ ձեռքին Նշանի դիմանկարը։

— Սիրելի Նշան,— ոտքի վրա ասաց նա։— Մեր երկիրը

հարուստ է հերոսներով։ Ճակնդեղ են հավաքում, հերոս են դառնում։ Կով են կթում, հերոս են դառնում։ Մարդ են սպանում, հերոս են դառնում։ Դրանք բոլորը ակամա հերոսներ են։ Եթե առաջինները շատ վաստակելու համար են հերոսանում, ապա վերջինը՝ ինքնապաշտպանության. եթե ինքը չսպանի, իրեն կսպանեն։ Իսկ այն արարքը, որ դո՛ւ ես կատարել, թանկագինս, վեր է հերոսությունից։ Դա մտածված հերոսություն է։ Այն օրերին, երբ զգուշանում էին կասկածի տակ առնված ամուսնու, եղբոր, հարազատի անունը տալ, դու քո կյա՛նքն ես դրել ընդամենը մի դիմանկար փրկելու համար։ Ես դեռ չգիտեմ, թե շուրջ քսան տարի ինչպես ես քնել, քանի անգամ ես վեր թռել դռան թակոցից...

— Մարտիրոս Սերգեյիչ,— շփոթված՝ կանխեց Նշանը՝ մաքրելով ճակատը։— Այդ նկարի դոյությամբ մենք պարտական ենք բոլոր նրանց, ովքեր գիտակ են եղել դրա գոյությանը, բայց լռել են...

— Այո՛, ճիշտ է, սիրելիս, բայց դո՛ւ ես առաջարկել՝ շատ լավ գիտակցելով հետևանքները։ Դու էիր պատասխան տալու որպես արխիվի վարիչ... Դո՛ւ ես հանձնել քեզ փոխարինողին... Ուրեմն ընդունիր այս փոքր նվերս, որ արել եմ սիրով, մեկ շնչով...

Եվ նա սեղանին դրեց այն դիմանկարը, որ իր մեջ կրում էր երկու դիմանկարի անսովոր պատմություն։ Ետևում մակագրված է. «ՍԻՐԵԼԻ ՆՇԱՆԻՆ՝ Ի ՆՇԱՆ ՆՐԱ ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ, 14/5, 65»։

4. 9. 82

ՀՈՒՍԻԿԸ

Շուրջ հիսուն տարի է անցել այն օրից, երբ 14—15 տարեկան, բոցկրակ մի աղջիկ էի, որի մշտական ճանապարհն Աբովյան փողոցն էր։ Թռչկոտելով, մայթեզրյա ծառերի ճյուղերը թաշելով, մուգի խոշոր տուֆե սալիկների կարերից ցատկելով գնում էի դպրոց, որ հարևան էր Լենինի անվան հրապարակին կամ էլ իջնում էի Ենկո-Ապոր անվան գրադարան։

Հենց այդ ճանապարհին էլ հաճախ էի նկատում փոքրամարմին, ամառ թե ձմեռ օդից ու արևից խունացած, անպայման վրայով մի քիչ մեծ կոստյումով 20—22-ամյա մի երիտասարդի։ Ես նրան էի նկատում հենց այն պատճառով, որ նա քայլելիս ձգտում էր աննկատ մնալ անցորդների հայացքից։ Թվում էր, թե նրա կիսամաշ կոշիկներն էլ պիտի մի քիչ մեծ լինեին ոտքերին ու անկրունկ, քանի որ քայլելիս տաբատի մաշված փողքերը մայթին էին քսվում։ Եթե ձեռքերը գրպաններում չէին, ապա բաճկոնի թևերն իջնում էին մինչև գաստակները՝ միայն մատները թողնելով դրսում։ Մի քիչ երկարուկ, ոչ հարուստ մազերով գլուխը միշտ թաքցնում էր լայն եկող բաճկոնի օձիքի մեջ՝ ինչքան հնարավոր է քիչ տեղ զբաղեցնելու համար այս մեծ աշխարհում։ Այնպես էր երևում, թե շուրջը եղող ձայներն ընկալում էր շատ ավելի պղտոր սպիտակուցներով անփայլ աչքերով, որոնք վախ ու զգուշավորություն էին արտահայտում։

Հիսուն տարի առաջ Երևանին ուրուշն տեսք էին տալիս ինչպես տափակ կտուր, կավածեփ, մեկ-երկու հարկանի տներն՝ իրենց բակերով, այնպես էլ ետնաշյա անխուսափելի ու խելագար քամին, որ փողու մեջ խեղդելով անցորդներին, դադար էր առնում կարճաշունչ փողոցներում, որոնց վերջը չէր երևում ոլորապտույտ լինելու հետևանքով։

Մեկ-երկու բարեկարգ փողոցներ կային, որոնց մեջ առանձնահատուկ տեղ էր բռնում Աբովյանը, որով վեր ու վար էին անում մայրաքաղաքի մտավորականությունը ու աչքի ընկնող երիտասարդությունը։

Երևանում շատերս էինք միմյանց ճանաչում, ուրախանում էինք որևէ ընտանիքի բախտավորությամբ, որևէ մեկի մահը խոր վիշտ էր պատճառում բոլորիս։ Եթե ազգականներ էլ չէինք, ապա մտերիմ էինք ազգական լինելու չափ։ Եթե չէինք բարևում ո՛չ ազգական, ո՛չ հարևան ու ո՛չ ընկեր լինելու պատճառով, ապա ամեն հանդիպելիս այնպիսի բարի հայացքով էինք նայում իրար, որի տակ հեշտ կարելի էր կարդալ.

— Ես քեզ լավ գիտեմ, ամեն որ տեսնում եմ Աբովյանում։

Մի խոսքով, փնտրվելիք մարդուն եթե ոչ իր տանը, ապա այդ փողոցում անպայման կարելի էր տեսնել։

Հիշում եմ Ֆլյիկ անունով (թե՞ ազգանունով) այն երկու գեղեցիկ եղբայրներին, որոնք նվագում էին մեր սիմֆոնիկ նվագախմբում և իրենց նման ինքնությունը հաստատած ջահելների հետ, հատկապես մայրամուտին, կանգնում էին միակ հանրախանութի առջևի ծառերի տակ։ Սիրում էին ու վերևից էին նայում մեզ նման նոր փեսրատիպվող աղջիկներին։

Այն ժամանակ միանդամայն այլ էին բարոյականության չափանիշները։ Օրինակ, մի աղջիկ կար, որ ջազում դաշնակահարուհի էր ու ներկում էր մազերը։ Այդ էլ բավական էր, որպեսզի տարիներ շարունակ մեր մեջ նա մնար որպես կասկածելի վարքագիծ ունեցող։

Աբովյան փողոցն ամբողջական չէր լինի, եթե սրևէ խաչմերուկից հանկարծ չհայտնվեր ծաղիկ ծախող Կարաբալան։ Ի՞նչ ազգի էր պատկանում, ե՞րբ էր հայտնվել Երևանում և ինչո՞ւ էր անունը Կարաբալա, դժվար է ասել։ Ծղոտահյուս եզրավոր գլխարկ էր կրում, կոպիտ կոշվից երկարաճիտ կոշիկներ ,մուգ վերնաշապկի վրա զոտի էր կապում, թևին էլ գցում էր ծակոտկեն մի զամբյուղ՝ երբեմն նույնիսկ մի փունջ մանուշակ ամփոփելով այնտեղ։ Ո՞չ, այդ փունջը պահում էր ձեռքում, որպեսզի աչքը կտրած ջահել մի օրիորդի նվիրի։

Հիշածս այս բոլոր մարդիկ՝ ներկայացրածս անշուք հնգնված երիտասարդի հետ միասին Երևանի Աբովյան փողոցի հատվածներն էին կարծես, քանի որ սրանք էին այդ փողոցին ոճ ու տեսք տալիս։

Այսօր ոչ մեկը չի մնացել նրանցից։ Գնացին այնպես բնականոն ու անաղմուկ, սակայն հոգի չանկռելով, ինչպես լուռ տառապանքով չթվեցին Աբովյանը փողոց սարքող մեկ-երկու հարկանի տները՝ իրենց տեղը դիջելով բազմահարկ, անազգանուն շենքերին։ Սրանք էլ իրենց սեղնի Աբովյանը սահեցնեցին։

Այդպես է քաղաքի օրենքը. ամեն կես դար իր քաղաքն ու քաղաքացին ունի։ Եթե հիշածս մարդկանցից մեկն ու մեկը տասնյակ տարիներ անց հրաշքով հայտնվի, պիտի

մելորվի իր սիրած Արովյանում՝ այդտեղ չգտնելով ոչ ճանաչած խաչմերուկները, ոչ էլ նրանց, որոնք ձևավորում էին իր կենսագրությունը։

Ինչպես Պատանը այն երիտասարդին, որին հանդիպեցի տարիներ անց։ Թեև նա այլևս երիտասարդ չէր, սակայն նույն ինքն էր՝ միայն ավելի թանձրացած իր էությամբ։ Նա արդեն երկու-երեք գրքի հեղինակ Հուսիկ Խանդամուրն էր։

Ամուսնու ցանկությամբ այցելեցինք Հուսիկին, որ ապրում էր Թումանյան փողոցի վրա գտնվող մի շենքում՝ զբաղեցնելով մի փոքր սենյակ։ Տան եղածը, որ հավանորեն տանտերն էր թողել, ճոճվող մի սեղան էր, երկու աթոռ դասական ձայնապնակներով ծանրաբեռնված, երկաթե մի մահճակալ, չգիտեմ ինչ գույնի ծածկոցը վրան։

Մի կես դար առաջ աղքատ տներ շատ կային Երևանում, բայց վաթսունական թվականի շեմին հազիվ թե նմանը գտնվեր։

Ձայնապնակներին նայելով՝ հիշեցի, որ սիմֆոնիկ համերգի օրերին նա հաճախ էր երևում Կուլտուրայի տան բոլորը։ Իսկ թե ինչպես էր ներս մտնում և որտեղ էր նստում համերգի ժամանակ, չեմ տեսել։ Ընդմիջումներին կամ մարդկանց, կամ իր կոշիկներին նայելով շրջում էր ճեմասրահում նաև Հուսիկը՝ միշտ նեղվելով, քաշվելով, հասարակությունից զուրս մնացած, ինչպես ձիասայլակը կարող է գնալ տրամվայի գծերի կողքից։

Ընդհանրապես, ամեն նրան հանդիպելիս, թվում էր, թե ուր-որ է կմոտենա մարդկանց և հազիվ լսելի կասի.

— Ներեցեք, որ ես էլ եմ ապրում։ Բայց, հավատացեք, ես ինձ այնպես կպահեմ, որ ոչ մեկից մեկ սանտիմետր անգամ տարածություն չեմ խլի, այնպես կշնչեմ, որ երբեք չի պակասի ձեր օդը...

Եվ այդպես էլ կար. մեծ մասամբ մարդկանցից հեռու էր մնում, շնչում էր ոչ ոքի չպատկանող օդից։

Ձափազանց քիչ էր խոսում Հուսիկը։ Խոսելիս շատ էր նմանվում ափ նետված ձկան. որևէ բան ասելուց առաջ մի քանի անգամ անձայն բացուխուփ էր անում բերանը, հետո լսվում էր ասվելիք բառի առաջին վանկը, որին միանում էր երկրորդը։ Խոսքը լարվում էր, մի քիչ էլ կռանում, որ-

պեսզի միանգամից քահրահով լցնի շրջապատը ասես ծածուկ ասված նրա սրամտությունից։ Եթե ասելիքի մեջ սրամիտ բան չլիներ, չէր խոսի։

Մեզ համար պարզվեց մի կարևոր գաղտնիք. Հուսիկն այդպես աննախանձելի կենցաղով ապրում է ու Լյվասանի նման հագնվում ոչ թե միջոցներ չունենալու, այլ իր իսկ ստեղծած զանազան նախապաշարումների հետևանքով, մի երևույթ, որը նրան երբեք չլքեց ու դարձավ լուրջ հիվանդություն։ Եվ քանի որ նաև գիրգայան էր, գրաբակիցներն էլ գիտեին այդ մասին, զգուշանում էին, լարվում՝ չլինի՞ հանկարծ որևէ անթույլատրելի բառ արտահայտեն, որը կապվելու էր մահ գաղափարի հետ։ Այդ տարօրինակությունն էր նրան ժամը 14—19-ը փակված պահում գրադարանում, որպեսզի, ասված ո՞չ անի, հանկարծ այլը չնկատի որևէ հուղարկավորողների։ Չէր նայում լրագրի չորրորդ էջը՝ մահազդի՝ չհանդիպելու համար։ Իր թշնամի 13 թվանշանը հետը արդեն բազմաթիվ ուրիշ թվեր էր քարշ տալիս։

— Հուսիկ, օրացույցից քանի՞ թիվ է մնացել քեզ համար,— մի անգամ կատակեցի ես։

— Շատ քիչ,— լուրջ պատասխանեց նա։

Ուրեմն, երբ մտանք նրա սենյակը, ներսում, շատ խորը թաքցրած մի ժպիտով ասաց.

— Տանտերս որոշել է վարձն ավելացնել։

— Ինչո՞ւ,— զարմացանք մենք։

— Չ... չգիտեմ՝ որտեղից է լսել, թե իբր Թումանյան փողոցը պիտի կոչվի պողոտա։

Դա 1958, թե՞ 1959 թվականին էր։ Ավելացնեմ, որ նա այդ տանն ապրում էր ընդամենը մեկ-երկու ամիս։

Տուն դառնալով ամբողջ երեկո խոսեցինք Հուսիկի, նրա ապրելակերպի, խանգարող հանգամանքների, միջոցների մասին։ Զարմացանք՝ իմանալով, որ նա դեռևս գրողների միության անդամ չէ, քանի որ մինչև հիմա չի գտել այն հաջող օրը, երբ կարելի էր դիմում ներկայացնել։ Պարզ չէ՝, թե ինչու բնակարան բաշխող հանձնաժողովը չէր կարող մտաբերել մի մարդու, որն իրավունք չի վերապահում դիմում գրել բնակարանի պահանջով։

Ինչո՞վ կարելի էր օգնել նրան։

Իմ միակ սենյակը, որ պատերազմից մի քանի տարի առաջ քեռիս էր կառուցել, 11 քմ էր, սրա առջևն էլ թվականին ինքս իմ ձեռքերով ապակեպատ պատշգամբ կառուցել, դեռ տակն էլ մի մեծ անդուկի չափ նկուղ թթվի տակառի համար։ Եվ քանի որ մենք բնակարանի ունեինք, որոշեցինք այդ տունը նվիրել Հուսիկին. բնակարանավարձ չէր տա։

Եվ ահա նրան հրավիրեցինք մեր տուն։ Ինչպես սեղանը գցեցի՝ երեք կտոր նոր թխած գաթա դնելով ա Տեսնելով, որ թխվածքին ձեռք չի տալիս, խնդրեցի մի անգամ։ Վերջապես կակազելով հասկացրեց, որ գաթա սուր անկյուններ ունեն, այդ պատճառով էլ չի կարող ։ Ես տարա սենյակ, դանակով կոկեցի, կերացրի սուր յունները, կլորացրի ու դրեցի նրա առաջ։ Հուսիկը շատ գիտ կերավ։

— Հուսիկ ջան,— սկսեցի ես,— այս տունը շատ տուն է։ Նշանի հետ 14 տարի (իրականում 13 էր) ապրե խաղաղ ու երջանիկ։ Հասցեն՝ Աղայան 4, բնակարանը Ս պես 4 է (իրականում 5 էր)։ Հենց բնակարան ստա կարող ես տեղափոխվել այստեղ։ Եթե դեմ չես, դիմում

Նա տարակուսեց, հետո զգացվեց՝ ասես շավա լսածին, ապա թե՝

— Բ... բայց վախենում եմ դ... դիմում գրելուց./

Հասկացա, նրան զույգ ամիս էր հարկավոր իր թվով։

— Դիմումը ես կգրեմ։ Բոլոր թվերն էլ քո ցանկա կլինեն։ Բայց դրանից առաջ դիմում պիտի տաս գրո միության մեջ ընդունվելու համար։

Մի խոսքով, երկու դիմումներն էլ ինքս գրեցի, զո հաջող ամսաթվեր շարելով տակը։

Շուտով բաշխելու էին բնակարանները։ Սկսեցի մ փայլեցնել իմ տունը՝ շատ լավ իմանալով, որ այլև մաքրվելու։ Ապակիները լվացի, վարագույրներն օս ու կախեցի, հատակը շողշողացրի՝ հասարակ ուղեղո փռելով վրան։ Թողեցի մեր միակ մահճակալը ամա անկողնով ու հասարակ ծածկոցով, սեղանը, աթոռներ ղեցիկ լուսամփոփը, մի քանի բաժակ ու ափսե, այ

տարի 1952 մը էի փորել հույս գոնե միշտ հասնեն երկու աները ուտել։ անկ- հան- խերով ենք ունչ- թանք, գրիր։ բալով զույգ ցածը ների ու զույգ

ծայրահեղորեն անհրաժեշտ է մենակյաց ապամարդու համար։ Եկավ Հուսիկը, այ Աեռքով երկարելի բանալին։ Նա տեղում մանրիկ շարժեց ուսերը ու այն ուսը դրած՝ ոչ ձեռքով վերցրեց բանալին։

Անցավ վեց ամիս։ Մի օր գնացի Հին Հարևաններիս ան սությանն։

— Ա՛յ Անահիտ ջան,— ասեմ ելավ լիազորը, որ մի պատկառելի տիկին էր։— Ձեր տանն ապրողի երեսը չեմ տես նում։ Մի երկու անգամ զգուշացրել եմ, որ գրանցվի։ Ի՞նչ պատասխանեց, չհասկացա։ Տարօրինակ մարդ է երևում...

— Ես այդ հարցը կկարգավորեմ, տիկին Ջավահիր։ Նա ամբողջ օրը գրադարանում պարապում է։

Հո չէի՞ ասի նրա սովորությունները։

Մյուս օրը գնացի հանրային գրադարան, գտա Հուսիկին, բացատրեցի, որ անպայման պիտի գրանցվի, այլապես անօրինական կացության իր այդտեղ ապրելը։

— ...Գ... գրանցվել չ...չեմ կարող,— խեղճացած պատասխանեց նա։— Ախր ես գուրս չեմ գրվել այն տնից, որտեղ ապրել եմ հինգ տարի առաջ։

Գործը լրջանում էր. ինչ մեր բարքերի փաստաթղթամոլությունը, ինչ Հուսիկի անփաստաթուղթ լինելը։

— Իսկ որտե՞ղ է այդ տունը։

— Պո... պոլիտեխնիկ ինստիտուտի նեռը... բ... բայց քանդած պիտի լինեն այդ տունը...

— Լսի՛ր, Հուսիկ, այսօր զույգ օր է, արի գնանք, գուցե գտնենք...

Մի կերպ համաձայնեց։ Կեսօր էր, արև։ Սկսեցինք քայլել։ Դա ոչ թե քայլել էր, այլ ոտքերի զանազան վարժություններ կատարել։ Ասֆալտի վրա ինքան ճաք կար (մեր ասֆալտն էլ ճաքերով է հարուստ) ու ստվեր, պիտի աջ ոտքով թռչեր։ Եթե հանկարծ ձախի հերթն էր գալիս ճեղքի կամ ստվերի մոտ, միացնում էր ոտքերը իրար, մանր-մունր վեր ու վար անում, իրը քայլում է, ապա աջ ոտքով ցատկում էր այն կողմ։ Բայց հարցը դրանով չէր ավարտվում։ Քանի որ ուշադիր հետևում էր նաև իմ քայլերին, ես էլ սկսեցի աջ ոտքն առաջ գցած ցատկոտելով, թռչելով կտրել ռուբիկոնը։ Ամեն ինչ անում էի այնպես, որ նա տեսնի, հավատանա,

որ օրը բարի է, մեր քայլը բարի է ու մենք էլ ջնում ենք բարի գործ կատարելու։

Եվ այսպես ցատկոտելով գատանք այն կիսաքանդ տունը, որի տիրուհին, ասես հրաշքով, մեզ տվեց տնային դրքույկը։ Նույն ընթացքով հասանք տնային կառավարչություն։ Այստեղ, սակայն, ոչ մի աջ ոտք չէր կարող դրությունը փրկել. Հուսիկի անձնագրի ժամկետն անցել էր երկու տարի։

Մեր Հուսիկը հրաժարվեց ամեն ինչից։ Նա պատրաստ էր մինչև իսկ տնից ձեռք քաշել, միայն թե չստանա այն նոր անձնագիրը, որի վերջին երկու թիվը կարող էին իր ցանկացածը չլինել։

Չեմ հիշում, թե քանի օր, քանի հոգու եմ մոտեցել ու բացատրել նրա տարօրինակությունները, մինչև որ կարողացել եմ զույգ թվով վերջացող անձնագիր ձեռք բերել նրա համար։ Գրանցումը կարծես թե պիտի իրականանար, բա՞յց... Հուսիկ խանդամուրը հինգ տարի չէր ներկայացել զինվորական հաշվառման։ Եվ ո՞ւմ մտքով էր անցել նրան զինվորական ծառայության համար պիտանիի գրքույկ տալ։

Ի՞նչ անեմ։ Չէր կարելի ետ դառնալ այդքան դժվարությամբ գնացած ճանապարհից։

Գնացի կինո «Մոսկվայի» հետևում գտնվող զինվորական կոմիսարիատ։ Բացատրեցի զինկոմին իրավիճակը։

— Պատկերացրեք, նա կարող է հաշվառման գալ միայն զույգ օրը, այն էլ եթե մինչև տեղ հասնելը որևէ անախորժ խոսք չասի։

— Բա ասում եք՝ գրող է,— զարմացավ զինկոմը։— Այդ ի՞նչ տեսակ գրող է։

— Բացառություն է։ Այդպես էլ է պատահում։

Երբ էլի մանրամասնություններ ասացի, զինկոմը հասկացավ, որ այդ մարդու հաշվառումը միայն ձևական բնույթ էր կրելու։

— Ե՞րբ է հարմար հանձնաժողովին կանչելու,— տեսնելով, որ արծում չկա հարցրեց զինկոմը։

— Այսօր հոկտեմբերի 13-ն է, նրա սարսափելի օրը։ Վաղը շատ հարմար է։

— Շատ լավ,— ընդառաջեց զինկոմը։— Առավոտյան ժամը 9-ին թող գա։

— Ո՞ւ։ Տասի՞ն։

— Թող լինի տասին։

Հենց այդտեղից էլ զանգահարեցի հանրային գրադարան՝ ընկերուհուս, որ շատ լավ գիտեր Հուսիկին։ Իսկ գրադարանին կապված ո՞ր ընթերցողը կամ աշխատակիցը չգիտեր Հուսիկին։

— Խնդրում եմ Հուսիկին հենց հիմա հայտնես, որ վաղը, հոկտեմբերի 14-ին, Սպանդարյան շրջանի զինկոմիսարիատի առաջ, ուղիղ ժամը 10-ին իրեն եմ սպասում։ Հանկարծ չուշանա, քանի որ միայն իր համար են գալու մարդիկ։

Հաջորդ առավոտ, ավտոբուսի դռնից կախված հասել եմ Լենինի պողոտա, այդտեղից վազել եմ Թումանյան փողոց ու ժամը տասից տաս պակաս կանգնել նշանակված տեղում։

Սպասում եմ տասը, քսան, երեսուն րոպի, Հուսիկ չկա։ Զինկոմն էլ մեկ-մեկ դուրս է գալիս շքամուտքից, տեսնում է, որ ես զայրույթից ու անհամբերությունից ձեռքերս կոտրատելով, աչքերս չռած շուրջս եմ նայում, լուռ ներս է մտնում։

Անցնում է մեկ ժամ։ Հուսիկը չկա։ Ներս եմ մտնում ու ներողություն խնդրելով զանգահարում ընկերուհուս.

— Լսի՞ր, դու երեկ Հուսիկին հայտնե՞լ ես այսօրվա մեր հանդիպման մասին։

— Իհարկե, հայտնել եմ։

— Բայց մինչև հիմա չկա։

— Քիչ առաջ տեսա ընթերցարանում, կարդում էր։ Մի բոպե սպասիր իրեն կանչեմ։— Քիչ հետո նորից ընկերուհիս վերցրեց լսափողը։— Լսի՞ր, չեկավ, քեզանից խիստ նեղոդել է։

— Ինչո՞ւ,— ապշեցի ես։

— Չէ՞ որ երեկ հոկտեմբերի 13-ն էր և դու այդ օրն ես հայտնել ձեր հանդիպման մասին։

— Վա՛յ, ես քո հերն եմ անիծել,— մոռանալով, թե որտեղ եմ գտնվում, զայրացած գոռում եմ ես ու ընկալուչը տեղը գցում։— Ներողություն եմ խնդրում, այդ մարդը չի գալու...

Եվ բացատրում եմ՝ թե ինչու լսում են ապշած, ապա սենյակը լցվում է քրքիջով։

Երկար ժամանակ ես խուսափում էի Հուսիկից՝ չհետաքրքրվելով նույնիսկ, թե ինչով վերջացավ գրանցման հարցը։ Իմացա տարիներ հետո, երբ մեր տունը քանդելու կապակցությամբ մի սենյականոց բնակարան էր ստացել Արովյան փողոցի նոր շենքերից մեկում։

Այնուհետև ինքն իրեն հաշտվեց վիճակին ու սկսեց գալ մեզ մոտ նոր տարին միասին դիմավորելու։ Ուրախանում էինք շատը նրա համար, որ համեղ կերակուրներ կարող էի հյուրասիրել այդ սակավապետ, ասես օդով ապրող մարդուն։ Բայց երբ գալիս էր, հասկացնում էր, որ ավելի լավ է անջատել հեռուստացույցը. ով գիտե, հանկարծ ու իր չընդունած կոմպոզիտորից որևէ երկ հաղորդեն։ Այնպիսի հանճարներ, ինչպիսիք Մոցարտն էր, Շոպենը, Չայկովսկին, նա պոկել էր իր հոգուց այն բանի համար, որ առաջինը գրել էր «Ռեքվիեմ», երկրորդը՝ «Թաղման քայլերգ», իսկ Չայկովսկին՝ «վեցերորդ սիմֆոնիան»։

Հասկանալով, որ իր ներկայությամբ չափազանց անհեատրքիր էին անցնում մեր տարեմուտի գիշերները, դադարից այցելել։ Երբ գուրս էր գալիս տանից, ոտքերն անպայման մաքրում էր փալասի վրա։ Հենց առաջին օրն ասաց, թե մենք քանի աստիճան ունենք, որոնք հաշվվել էր ամենայն բարեխղճությամբ։

Առանձնապես վերջին տարիներին մեծ մասամբ ապրում էր Ծաղկաձորի ստեղծագործական տանը։ Այդտեղ լուծվում էին նրա կենցաղային ու հանգստի բոլոր հարցերը. ժամանակին սնվում էր ու թափառում անտառներում։

1973 թվականին, երբ լույս տեսավ նրա «Լուրջ կատակ» ժողովածուն, մեկական օրինակ նվիրեց Նշանին և ինձ, Իմի վրա գրել էր. «Սիրով՝ նեղ ժամանակների բարեկամուհի Անահիտ Սեկոյանին»։

Երբ նրան մի անգամ դիտողություն արեցի, թե ինչո՞ւ չի հետևում իր հագուստ կապուստին, միշտ հնամաշ են շորերը, նա ասաց.

— Նախ իմ չափը չգիտեմ... Հետո վ... վախենում եմ գներին նայել, հանկարծ ու իմ չընդունած թիվը տեսնեմ, ամբողջ օրս կփչանա։ Իսկ եթե ամեն ինչ լավ է ստացվում, առնում եմ հագուստը ու մինչև տուն հասնելս որևէ սարսափելի խոսք եմ լսում, ուրեմն այդ շորն ինձ այլևս պետք չէ. փաթաթում եմ ու գնում փողոցը...

Եվ այդպես ապրում էր հնոտիների մեջ։

Մի օր էլ հանգստացողներից մեկն ինձ դիմեց.

— Էսի՞ր, Հուսիկը քեզնից չի նեղանում։ Որևէ ձևով կարո՞ղ ես հասկացնել, որ տաբատի հետևը պատռվել է, տակից էլ վարտիք չունի։ Երեխաներ կան, օտար մարդիկ...

Գնացի փողոց ու բռնեցի Թիու ջրից վերադարձող Հուսիկին։

— Հուսիկ, խնդրում եմ չնեղանաս։ Դու գիտես, որ հարգատի պես եմ քո հետ։ Այստեղ հաղարավոր երեխաներ կան, որոնք քեզ ճանաչում են որպես գրողի։— Նա սկսել էր կծկվել, ինչպես անում էր վատ բան լսելու կանխագուշակումից։— Տաբատդ պատռվել է։ Ո՞նց կարենք...

Հուսիկն ամոթից էլի փոքրացավ, հայացքը կախեց.

— Որ խնդրեմ, մուգ գույնի թել ու ասեղ չե՞ք ճարի։

Նա հատուկ չասաց՝ «սև» թել բառը։

Ճարեցի։ Վերցրեց ու սլացավ անտառ։

Երբ նկավ տաբատը մի կերպ քոնած, կանգնեցրի և ուշադիր նայեցի վրան։

— Հուսիկ ջան, ուզում եմ չափազ որոշել։ Լավ, հասկացա։ Հիմա կգնամ խանութ ու քեզ համար ներքնաշորեր կառնեմ։

— Այսօր չէ... վ... վաղը։ Խնդրում եմ, առնելուց հետո պահեք, մի հաջող օր կվերցնեմ։

Տեսա, որ ուզում է փող առաջարկել, կանխեցի։

Հաջորդ օրը գնացի խանութ և համապատասխան չափի մայկա, վարտիք ու կիսագուլպաներ գնեցի, որոնք մինչև հանգստի վերջին օրը մնացին բարձիս տակ, քանի որ Հուսիկը ոչ մի հաջող օր չէր գտնում դրանք վերցնելու։ Հետանալուց առաջ տարա ու փաթեթը դրեցի իր բարձի տակ։ Կարծեմ ինչ-որ ժամանակ գտել էր այդ օրն ու հագել։

Վերջին ամռանն էր։ Երկուսով Ծաղկաձորի ստեղծագործական տան բակում էինք, երբ մի երիտասարդ կին եկավ։ Հուսիկը ժպիտով ընդառաջեց, սեղմեց ձեռքը ու կողմ քաշվեց։

— Ո՞վ էր,... հարցրեցի, երբ կինը նեռս էր մտել։

— Ռուբիկ Կարապետյանի աղջիկը...

— Ի՞նչ ես ասում... Հաղա՜ր ափսոս, Ռուբենը լավ տղա էր...

— Ի՞նչ,— շանթահարվածի նման հազիվ արտաբերեց Հուսիկն ու կծկված՝ հեռացավ։

Վերադարձավ մի երկու ժամ հետո։ Ուզում էր խոսել, չէր կարողանում։

— Ինչո՞ւ այդպիսի բան ասացիք,— նա վախենում էր հենց առածս կրկնել։— Զգիտեի...

— Շատ վա՜տ է, որ չգիտեիր,— արդեն լուրջ հանդիմանեցի նրան։— Երկու տարի է քո սիրած մարդը չկա։ Հանդիպեցիր աղջկան։ Իսկ եթե հարցնեիր հորից, ավելի անհարմար վիճակի մեջ չէի՞ր ընկնելու...

Ոչ կարողանում էր հեռանալ, ոչ՝ խոսել։ Անընդհատ կծկվում էր՝ ասես հնարավոր գտնելով նաև վերանալը։

— Մի համապումարից մինչև մյուսը շուրջ քառասուն գրող է պակասում։ Բա մտքովդ չի անցնո՞ւմ իմանալ, թե ինչ եղան այդ մարդիկ, չէ՞ որ, ի վերջո, իմանում ես։ Հուսիկ ջան, չնեղանաս, ես դա էգոիզմին եմ վերագրում, որն անհարիր է քո էությանը։ Բայց որ դու փախչում ես այդ բոլորից, կամ էլ չիմանալու ես տալիս, որպեսզի չվշտանաս, փաստ է...

Նա լսում էր հայացքը կախ, կոշիկի քթով փայտի մի փոքր կտոր շուռումուռ տալով։ Մինչև վերջ լսեց լուռ, միայն երբեմն, որպես հավանություն գլխով էր անում։

Առհասարակ, նա զգում էր, որ իր մերժելի բառերն արտասանում եմ միամտաբար, դիտողություն անում եմ մաքուր սրտով, ցավելով։ Ահա թե ինչու քեն չէր պահում իմ նկատմամբ։ Նույնիսկ նույն երեկո մենք երկար խոսեցինք Նշանի ողբերգական կորստի մասին։

Ամեն Հուսիկին նայելիս մեծ եղեռնը ավելի որոշակի էի պատկերացնում. չէ՞ որ Հուսիկը եղեռնի փշրանքներից էր, որ պատահականորեն շրջում էր մեր բոլորը։ Այո՛, Հուսիկ խանդամուրը անպայման պետք է ծնված լիներ 1915-ին (ինչպես իրականում կար) և անունն էլ միայն Հուսիկ պիտի լիներ։

Ինչքան էլ ամբողջ կյանքում կծկվելով ուզում էր թաքնվել

մահվան ամենատես աչքից, միևնույն է, մահը այս դեպքում գողացավ նրան։

Համոզված եմ, որ Ծաղիկաձորում հանգստացող գրողները անպայման կայցելեն գերեզմանատուն ու մի հատիկ վայրի ծաղիկ կդնեն այն մարդու անշուք շիրմաքարին, որի վրա արցունք թափելու համար նրանը ոչ մի մարդ չէր թողել։

Այո, ինչքան էլ խեղճ էր նա, հանձին Հուսիկի Ծաղիկաձորի ստեղծագործական տունն իր դիմանկարից ինչ-որ բան կորցրեց։

Ահա թե ինչու հիշեցի մի հույն աղջիկա գերեզմանաքարին փորագրվածը.

«Մի՛ ծանրանար վրան, հո՞ղ, այնքա՞ն թեթև էր նա վրադ»։

1986, հունիս

ՑԱՆԿ

ՎԻՊԱԿՆԵՐ

Ով է մեղավոր . . . . . .
Լքված . Հայր Հայր. ներեցեք դրանք 5— 11

ՆՈՎԵԼՆԵՐ

Արտիստը 214
Անմոռանալի հանդիպում 223
Հաստնության քնությունը 230
Հինգով գրո 237
Տասնութ կարատանոց քարը 247
Տանձենու ոստը 257
Մի՞թե ինձ չես հիշում, դստրիկս 261
Մի գավաթ սուրճ 268
Ամենատրախ մարդիկ 276
Խորանի առաջ 283
Համբերության բաժակը 303
Գեղեցիկ տիկինը 313

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

Մեծ գրողի մոտ (Գ. Գեմիրճյան) 325
Պերիկլեսյան ժամանակաշրջան (Արմեն Գալակյան) . . . 335
Երկու մեծերը (Հրաչյա Ներսիսյան, Վարդան Աճեմյան) . . 344
Բուլգարիա մեկնելու նախօրյակին 355
Հրաժեշտի հանդիպում 358
Անհասանելին (Վ. Փափազյան) 362
Համբերը և խաշը 369
Կարապի երգը (Ս. Գալազյան) 377
Գուրգեն Ջանիբեկյան (Դուշը թատրոնում, Փոքրացյին կատուն) 39
Պարույր Սևակ (Զանախչիում, Թթուն, Մնացեք բարով) . . 396
Երկու դիմանկարի պատմություն (Ն. Մուրադյան) . . . 406
Հատիկը . . . 417

ISBN № 5—550—00246—9

Գրական գեղարվեստական հրատարակություն
ԱՆԱՀԻՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՍԵԿՈՅԱՆ
ՁԵՌԱԼ
Վիպակներ, նովելներ

Литературно-художественное издание
Анаит Вагаршаковна Секоян
Оттепель
Повести, новеллы
Ереван, издательство «Хорурдаин грох», 1989
(На армянском языке)

Խմբ. վարիչ՝ Հ. Ֆ. Կարեթիկյան
Խմբագիր՝ Ջ. Ա. Պետրոսյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջալեցկյան
Գեղ. խմբագիր՝ Ջ. Ե. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերջաուզող սրբագրիչ՝ Ն. Վ. Ավագյան

ИБ № 6426

Հանձնված է շարվածքի՝ 16.12.88 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 5.9.89 թ.։ ՎՖ 00122։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 22,68 պայմ. տպ. մամ., հրատ. 20,4 մամ.։ Տպաքանակ՝ 20 000։ Գաղափար՝ 2867։ Գինը՝ 1 ռ. 60 կոպ.։

Խմբագիր՝